ISSN 0135-0536

Պատմաբանասիրական հանդես

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

3

2022

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

Պատմաբանասիրական Հանդես

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

2022, 3 (221)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
PUBLISHING HOUSE «GITUTYUN» NAS RA

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN
2022

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

The journal has been published since 1958
Editor-founder M. G. Nersisyan

Խ մ բ ագ ր ակ ան խ ո ր հ ո ւ ր դ

Ն ա խ ա գ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գ լ խ ա վ ո ր խ մ բ ագ ի ր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գ լ խ ա վ ո ր խ մ բ ագ ր ի տ ե ղ ա կ ա լ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈՒԼՈՒԽԱՆՅԱՆ
Ա ն դ ա մ ն ե ր՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ),
ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵՔԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ,
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, БАРДАКЧЯН ГЕВОРГ (США),
ДЕВРИКЯН ВАРДАН, ЗЕКИЯН ЛЕВОН (Италия), КАТВАЛЯН ВИКТОР,
АСРАТЯН МУРАД, ОГАНИСЯН ГЕНРИК, ОГАНЕСЯН НИКОЛАЙ,
МУРАДЯН САМВЕЛ, ТЕР-ГЕВОНДЯН ВААН, ТЕРЯН АБРААМ (США),
ТОНАПЕТЯН АНАИТ (Франция)

Editorial Board

Chair: ASHOT MELKONYAN
Editor-in-Chief: ANUSHAVAN ZAKARYAN
Deputy Editor-in-Chief: AELITA DOLUKHANYAN
Members: ABRAHAMYAN LEVON, AVETISYAN PAVEL, BARDAKJIAN KEVORK (USA),
DEVRIKYAN VARDAN, ZEKIYAN LEVON (Italy), KATVALYAN VIKTOR,
HASRATYAN MURAD, HOVHANNISYAN HENRIK, HOVHANNISYAN NIKOLAY,
MURADYAN SAMVEL, TER-GHEVONDYAN VAHAN, TERIAN ABRAHAM (USA),
TONAPETYAN ANAHIT (France)

Պատմաբանասիրական հանդես, 2022
Историко-филологический журнал, 2022
Historical and Philological Journal, 2022

Հապավումը՝ ՊԲՀ
Аббревиатура – ИФЖ
Abbreviation: HPhJ

ՀՏԴ : 929:329.14 Մեհրաբյան + 947.925

Doi:10.54503/0135-0536-2022.3-3

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ (ԽԱՆԱՍՈՐԻ ՎԱՐԴԱՆ)*

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Ս. Մեհրաբյան, Շուշի, Վան, Սևքարեցի Սաքո, Խանասոր, Ս. Զավարյան, Կիլիկիա, Ռոստոմ, հայ-թաթարական բախումներ, Առաջին համաշխարհային պատերազմ, կամավորական շարժում, ցեղասպանություն, Ա. Մանուկյան, Երևան, Բաքու:

Նախաբան

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր Սարգիս (Սերգեյ) Մեհրաբյանը: Հասարակությանը նա հայտնի է Խանասորի Վարդան, Վարդան, Վահե Սյունի, իսկ երգերում՝ Շատախի առյուծ[1] անուններով:

Ս. Մեհրաբյանը ծնվել է 1867 թ. օգոստոսի 10-ին Շուշիում[2]: Սովորել է տեղի թեմական դպրոցում[3]: Ուսանելու տարիներին ընթերցել է ընդհատակում հրատարակվող համորատիպ թերթեր՝ «Նժդեհ», «Մունետիկ»[4], «Նոր-Սերունդ» և Մկրտիչ Փորթուգալյանի տպագիր «Արմենիա» պարբերականը, նաև՝ հայ գրողների, հատկապես՝ Րաֆֆու հայրենասիրական վեպերը, որոնք աստիճանաբար ձևավորել են նրա աշխարհայացքը:

1885 թ.՝ դպրոցն ավարտելուց հետո, Ս. Մեհրաբյանը մեկնում է Բաքու, որտեղ աշխատում է Ռոտշիլդ եղբայրներին պատկանող նավթավերամշակման ձեռնարկություններում: 1888 թ. զորակոչվում է ռուսական բանակ, ծառայում է Գորիում, Ալեքսանդրապոլում և, որպես թեմական դպրոցի շրջանավարտ, ծառայելու էր ոչ թե 4, այլ՝ 3 տարի[5]: Զինծառայող հայ ընկերների հետ այցելում են Անիի ավերակները, ուսումնասիրում պատմական հուշար-

---

** Ներկայացվել է 14. VII. 2022 թ., գրախոսվել է 18. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 3:

[2] Թոռնուհու՝ Իրինա Պոստոևայի վկայությամբ՝ Ս. Մեհրաբյանը ծնվել է Արցախի Ակերանի շրջանի Ղշլաղ (Ծաղկաշատ) գյուղում [«Ալիք» (Թեհրան), 05. X. 2017]:

[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 80 շրջ.:

[4] «Մունետիկ»–համորատիպ թերթ, հրատարակվել է Թիֆլիսում (1885):

[5] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 80 շրջ.:

ձաններն ու լուսանկարվում[6]: Իշխանությունները, տեղեկանալով հայ գինվորների անապասելի «հետաքրքրության» մասին, հետաքննություն են կատարում, սակայն որևէ հանցանք չեն գտնում: 1890 թ. Ս. Մեհրաբյանն իր չորս ընկերների հետ դասալքում են, և նա սեպտեմբերի 23-ին մասնակցում է Սարգիս Կուկունյանի արշավանքին: Դրա ձախողումից հետո գալիս է Երևան, տեղի ՀՅԴ ներկայացուցիչ Գեղեոն Ահարոնյանի օգնությամբ ստանում պարսկական անձնագիր, ապա հաստատվում է Սալմաստի Ղալասար գյուղում[7]: Հավանաբար, 1890 թ. անդամագրվում է ՀՅԴ-ին և ստանում Վարդան կուսակցական ծածկանունը[8]:

Ազատագրական գործունեության սկիզբը

Ատրպատականում Ս. Մեհրաբյանը, որտեղ, հավանաբար, ստանում է Վարդան ծածկանունը, ազատագրական գործունեությունը քողարկում է իբրև կրթական տեսուչ Երվանդ Թաղիանոսյանի[9] ծառա, Դերիկի վանահոր օգնական, հեծյալ պահակ, վանական կալվածքների կառավարչի օգնական[10], որոնք հնարավորություն են տալիս նրան առանց որևէ կասկածի շրջել հայկական գյուղերը և կատարել կուսակցության հանձնարարությունները:

1894 թ. սեպտեմբերին Վարդանը զինատար խմբի հետ անցնում է Երկիր՝ Վան, ապա վերադառնում է Պարսկաստան: 1895 թ. մայիսի 22-ին հայդուկներով Վարդանը Սալմաստից անցնում է Վան: Այդ ժամանակ Վասպուրականում սկսվել էին թուրք-քրդական հարձակումները հայերի վրա, ուստի կուսակցությունը հրահանգում է Վարդանին կազմակերպել հայ բնակչության ինքնապաշտպանությունը[11]: Հայդուկները բնակավայրերում կոչ են անում գյուղացիներին զենք գնել, կազմակերպվել, հակահարված տալ իրենց կողոպտող քրդերին, նախապատրաստվել համընդհանուր ապստամբության[12]:

Վանի հայ բնակչությանը չվտանգելու համար խումբը որոշում է թողնել քաղաքը: Վասպուրականում գործող խմբերին հայտնում են, որ տեղակայվեն Հայոց ձորում: Հասնելով Վարագա լեռ՝ հանդիպում են հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, վիրավոր Վազգենին (Տիգրան Տերոյան)[13], որին տեղափոխում են Շուշանց գյուղ[14]:

---

[6] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 81:*

[7] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 81:*

[8] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 3:*

[9] *Թաղիանոսյան Երվանդ (1864–1948) – մանկավարժ, հասարակական գործիչ, խմբագիր, թարգմանիչ:*

[10] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 3, Նիկոլ Դուման. 2021, 14:*

[11] *Սալմաստում հայդուկների ներկայությունը որոշ չափով զսպում էր քրդերին հայկական բնակավայրերի վրա հարձակումից (տե՛ս Գրանդեան. 1904, 77):*

[12] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 50:*

[13] *Պետոյի (Ավեքսանդր Պետրոսյան) մահից հետո Վազգենը գլխավորել է Վասպուրականի ազատագրական պայքարը: Ավելի մանրամասն տե՛ս Սահակեան. 1998, 22–27:*

[14] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 6:*

1896 թ. մայիսի 14–15-ը հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) հետ Վարդանը մասնակցում է Դերիկի վանքի կռվին[15]*: Օգոստոսին 8 հայդուկների հետ գալիս է Վան*[16]*, ղեկավարում է Շատախի ինքնապաշտպանությունը, իսկ սեպտեմբերին մասնակցում է Վանի մարտերին, այնուհետև՝ վերադառնում Ատրպատական: Սեպտեմբերի 30-ին Ատրպատականի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին ուղղված նամակում Ն. Դումանը տեղեկացնում է, որ Վարդանը հիվանդ է և գտնվում է Խոյում*[17]*:*

Ապաքինվելուց հետո Վարդանը հաստատվում է Թավրիզում, որտեղ ոչ միայն մանկավարժական, այլև մշակութային բուռն գործունեություն էին ծավալել հայ ուսուցիչները: Վարդանը հուշերում բարձր է գնահատում նրանց, հատկապես՝ երկու ուսուցչուհիների՝ հայ ազատագրական շարժման առաջին կին գործիչներից Սաթենիկ Օհանջանյանի[18] *և ՀՅԴ անդամ Մարիամ Մակարյանի*[19] *լուսավորչական աշխատանքները: Նա գրում է. «Նոքա (ուսուցիչները – Ռ. Ս.) սերտ կապ էին պահում ժողովրդի հետ, ներկայացումներ էին կազմակերպում, ժողովներ, երեկույթներ, … թավրիզեցի կանանց և օրիորդներին հրապարակ էին քաշում, ներկայացումներին մասնակցել տալիս: … Այս ուսուցիչները թողած Կովկասի բարձր աշխատավարձը, այդտեղ ստանում էին բավականին համեստ աշխատավարձ»*[20]*:*

Վերլուծելով 1890-ական թվականների մղված մարտերը՝ Վարդանն ու իր զինակիցները համոզված էին, որ արևմտահայությունը կկարողանա ազատագրվել օսմանյան լծից և Բուլղարիայի օրինակով հնարավորություն կունենա ազատություն ստանալ. «Մենք … մեր կյանքը ի սպաս դրինք հայ ժողովրդին, ամենամաքուր, անձնուրաց, կրթված, զոհաբերության ընդունակ լավագույն ընկերները, հայ ժողովրդի սերուցքը զոհաբերեցինք, զոհերի ահագին չարաներ երկրի զանազան մասերում»[21]*:*

Վան-Վասպուրականից վերադառնալով՝ Պարսկաստան, ապա հաստատվում է Բաքվում, աշխատանքի է անցնում «Կասպիական ընկերության»[22]

---

[15] *Ավելի մանրամասն տե՛ս Նիկոլ Դուման. 2021, 62–69:*

[16] *Նիկոլ Դուման. 2021, 69: Վանում դիմադրական կռիվների ավարտից հետո Վարդանը ձեռնամուխ է լինում գինվորական պատրաստականությունն ուսուցանել գավառներից եկած մոտ 50 հոգու (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 4):*

[17] *Նիկոլ Դուման. 2021, 71:*

[18] *Հովհ. Թումանյանի խոսքերով՝ «Նա (Սաթենիկ Օհանջանյանը – Ռ. Ս.) թանգ էր, որովհետև էն հազագիւտ անձնաւորութիւններից մէկն էր, որոնք աւելի շատ ուրիշների համար են ապրում» [«Հորիզոն» (Թիֆլիս), 04. X. 1915]:*

[19] *Օրիորդի մասին Վարդանը հետևյալ վկայությունն է թողել. «Մարոն ցածրահասակ, սիրունատես, թուխ դեմքով, քնքուշ կազմվածքով … քաղցրիկ, դուրեկան ձայնով, որի երգը հաճույքով էինք լսում» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 7 շրջ.):*

[20] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 82:*

[21] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 75:*

[22] «Կասպիական ընկերությունը» («Каспийское товарищество») *հիմնվել է 1886 թ. Պողոս, Հակոբ, Արշակ և Աբրահամ Ղուկասյանների կողմից: Գործել է մինչև 1917 թ.:*

նավթահանքում, որի կառավարիչն էր իր ընկեր Մաթեոսը: Բնակվում էր եղբոր մոտ, որը հանքային ջրերի գործարան ուներ[23]:

1898 թ. ապրիլ–հունիս ամիսներին, որպես Շատախի ներկայացուցիչ, Վարդանը մասնակցում է Թիֆլիսում կայացած ՀՅԴ II Ընդհանուր ժողովին: Որոշվում է նաև հայդուկային գործողություններով եվրոպայի ուշադրությունը հրավիրել արևմտահայերի դժնդակ դրության վրա և «անգութ եվրոպացիների գութը շարժել»[24]:

Բաքվից Վարդանը գալիս է Շուշի, որտեղ հայրենասիրական քարոզչական գործունեություն է ծավալում: Նրա ջանքերի շնորհիվ այդ աշխատանքներին մասնակցում են նույնիսկ շուշեցի մեծահարուստների կանայք, որոնք «պատրաստ էին ամեն տեսակ նյութական աջակցության»[25]: Նրանք գումար են հավաքում, ձիեր, հրացաններ են գնում ու նվիրում Վարդանին և նրա ընկերներին[26]: Վարդանի ելույթներից ոգևորված՝ շուշեցի մեծահարուստներից մեկի որդին՝ Մարգար Ժամհարյանը, ցանկություն է հայտնում անդամակցել հայդուկներին, սակայն հայրն արգելում է: Որդուն ուղարկում է Գերմանիա, ուր նա բժշկություն է ուսանում: Ցավոք, զոհվում է 1906 թ. հայ-թաթարական ընդհարումներից մեկի ժամանակ[27]:

Շուշիից հեռանալիս մեծահարուստների կանայք Վարդանին ոսկյա ժամացույց են նվիրում. վերջինս փորձում է հրաժարվել, սակայն՝ ապարդյուն: Նա վկայում է. «Այդ ժամացույցն էր Խանասորի արշավանքի ժ[ամանա]կ, մթության մեջ հարձակման ժամը ցույց տվողը»[28]:

Խուդափերինի կամրջով Վարդանը և Սևքարեցի Սաքոն Արցախից անցնում են Պարսկաստան: Մինչ այդ մի թուրքի միջոցով ունեցած զենքերը տեղափոխում են պարսկական տարածք: Առավել վտանգավոր էր, երբ անցնում էին Ղարադաղով[29]: Ճանապարհին նրանց է միանում Ղարադաղի հայ մելիքներից մեկը, որը մանրամասն ներկայացնում է տեղի հայության ինքնապաշտպանական կռիվների մասին:

Գալով Թավրիզ՝ ականատես են լինում, թե ինչ տենդագին արագությամբ է աշխատում տեղի «Խարիսխ» զինագործական արհեստանոցը: Վարդանը վկայում է, որ պարսկական իշխանությունները ոչ միայն տեղյակ էին զինագործական արհեստանոցի մասին, այլև այնտեղ էին ուղարկում իրենց բանակի սպառազինության մեջ գտնվող «Շասպո»[30] հրացանները, որոնք պետք է

---

[23] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 16:
[24] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 1 շրջ.:
[25] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 9 շրջ.:
[26] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 9 շրջ.:
[27] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 10:
[28] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 10 շրջ.:
[29] Ղարադաղ, Կարադաղ, Սիա-Կուհ (Հայկական լեռներ) խանություն Պարսկահայքում՝ Ուրմիա լճի և Արաքսի միջև: Միջնադարում վասպուրական աշխարհի գավառներից էր: Ավելի մանրամասն տե՛ս Հ ո վ ս ե փ յ ա ն. 2009, Ջ հ ա ն - գ ի ր յ ա ն. 2021:
[30] Ֆրանսիական միալիգք հրացան, որը Ֆրանսիայում սպառազինության մեջ է գտնվել 1866–1874 թթ.: Ֆրանս-պրուսական պատերազմից հետո (1870–1871 թթ.) 20 հազար միավոր վաճառվել է Պարսկաստանին:

«Հարմարացնեին ուրիշ փամփուշտի: Մերոնք այդ գործը վերցրին և հաջողությամբ վերափոխման էին ենթարկում»[31]:

Զենքն ու զինամթերքը վստահելի մարդկանց միջոցով տեղափոխվում է Սալմաստ: Գավառի գյուղերում երիտասարդներին ուսուցանում են զինվորական գործ: Այդ ժամանակ ՀՅԴ կենտրոնը գտնվում էր Ղալասար գյուղում[32]:

Խանասորի արշավանքը

1895–1896 թթ.՝ արևմտահայության կոտորածներից հետո, ինչպես նշում է Վարդանը, կուսակցության հետագա գործունեության վերաբերյալ երկու կարծիք կար: Առաջինը պաշտպանում էին արևմտահայերը, որոնք գտնում էին՝ երկրում անհրաժեշտ է ապստամբել, որը կստիպի միջամտել եվրոպական տերություններին՝ հօգուտ հայերի: Կուսակցության անդամների մյուս մասը, ընդհակառակը, գտնում էին՝ անհրաժեշտ է պատժել մազրիկ քրդական ցեղին՝ 1896 թ. ամռանը նահանջող վանեցիներին կոտորելու համար. դա կարող էր եվրոպացիների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա[33]: Ինչպես նշում է Վարդանը՝ «Կուսակցության կողմից որոշում կայացվեց մի մեծ արշավանք կազմակերպել դեպի Երկիր»[34]:

Սալմաստում սկսվում են արշավանքի նախապատրաստական աշխատանքները: Տարբեր վայրերից այստեղ են գալիս մեծ թվով հայդուկներ, որոնց կուտակումը հնարավոր չի լինում թաքցնել: Եվ թուրքական իշխանությունները, և՛ քրդերը հասկանում էին, որ հայերը ինչ-որ բան են նախաձեռնել, սակայն՝ ի՞նչ, այդպես էլ մնում է անհայտ: Վարդանը վերհիշում է. «Քրդերը մեզ լուր էին ուղարկում, թե ինչո՞ւ չեք գալիս, ինչո՞ւ եք ուշանում, չէ՞ որ մենք վող չունենք, զենք չունենք: Նոքա ակնարկում էին Վանից եկող (1896 թ. հունիսին նահանջած – Ռ. Ս.) երիտասարդության, որոնց կոտորեցին, թալանեցին, բոլոր զենքերը և մոտները գտնված ահագին ոսկիները վերցրին: Ուզում էին ասել, թե հիմա էլ եկեք, որ ձեզ կոտորենք և զենքերն ու ... փողերը վերցնենք»[35]:

Վարդանը տեղեկացնում է, որ Սալմաստում էր գտնվում Վազգենի՝ 40 հոգուց կազմված խումբը, որոնց թվում էր «որպես հասարակ և անփորձ զինվոր, ապագա Անդրանիկը»[36]:

Հուշերում Վարդանն ընդգծում է այն փաստը, որ Սալմաստի հայությունը ոչինչ չէր խնայում, հյուրընկալում և աջակցում էր հայդուկներին, միաժամանակ նշում է՝ սալմաստցիների կողմից երբեք մատնության դեպքեր չեն եղել[37]:

[31] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 62:*
[32] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 12 շրջ.:*
[33] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 1:*
[34] *ՀԱԱ ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 7: Խանասորի արշավանքի դեմ էին նշանավոր հայդուկները Իշխանը, Վարդանը, Վազգենը, Կարոն (տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 378):*
[35] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 1 շրջ.–2:*
[36] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 2 շրջ.:*
[37] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 43 և շրջ.:*

Խանասորի գործողության ղեկավար է ընտրվում Վարդանը, իսկ տեղակալ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Հովսեփ Իշխանը (Հովսեփ Արղության): Հայդուկների թիվը 275 էր, որից 25-ը՝ ձիավոր[38], 2 քահանա և 1 բժիշկ[39]: «Ձիավոր խմբի մեջ էր և ապագա Պարսկաստանի հեղափոխության[40] ժ[ամանա]կ դիկտատոր Եփրեմը[41], որը Պարսկաստանում ահագին դեր խաղաց»[42]: Արշավախմբին են միանում նաև մի խումբ արմենականներ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, արմենական Արմենակ Եկարյանի գլխավորությամբ, որոնք գնում էին Վան[43]:

Վաղօրոք պայմանավորվածություն կար, որ որևէ բռնություն չպետք է ցուցաբերեն քուրդ կանանց ու երեխաների նկատմամբ:

1896 թ. դեկտեմբերի 2-ին[44] տեղի է ունենում մի ցավալի դեպք, որին իր հուշերում Վարդանը հարկ է համարում անպայման անդրադառնալ: Բուռն սեր էր ծագել ուսուցչուհի Մ. Մակարյանի և գինագործ, հայ ազատագրական գործիչ, հայդուկ Արիստակես (Կարո) Զորյանի միջև, ով Ռոստոմի (Ստեփան Զորյան) կրտսեր եղբայրն էր: Վարդանի խոստովանությամբ՝ «Այդպիսի խելագար սեր ես չէի տեսել»[45]: Օրերորդը տեղյակ էր, որ Ա. Զորյանը մասնակցելու է արշավանքին, սակայն չէր կարող նրան ստիպել հրաժարվել մասնակցությունից: Վարդանի համոզմամբ, «եթե նա չլիներ ոչ զաղափարական աղջիկ, թերևս մտածեր, աշխատեր Արիսին խանգարել, ետ պահել երկիր անցնելու մտքից, կամ եթե հնարավոր լիներ, որ ինքն էլ գնար, ինքն էլ մասնակցեր այդ արշավին, բայց ինչքան էլ ցանկանար՝ ֆիզիկապես անկարող էր»[46]: Եվ որպեսզի արգելք չլինի սիրեցյալի մտադրությանը, Փայաջուկ գյուղում ինքնասպանություն է գործում: Սեղանին թողած գրությամբ բացատրում է ինքնասպանության պատճառը. «Ես չուզեցի քեզ խանգարել, այրել քո ետևից բոլոր նավերը, գնա քո սիրած գործի ետևից Արիս, Արիս, Արիս ...»[47]: Նկատենք, որ Ա. Զորյանը զոհվում է Խանասորի գործողության ժամանակ:

1897 թ. հուլիսի 24-ին Վարդանը գլխավորում է Խանասորի արշավանքը[48] մագրիկ քրդական ցեղի դեմ: Հուլիսի 27-ի վաղ առավոտյան սկսվում է գրոհը, սակայն, ցավոք, չի հաջողվում պատժել ցեղապետ Շարաֆին, որը կարողանում է թաքնվել ու փրկվել: Վարդանի հրամանով մարտիկները նահանջում են: Նրանց հետապնդում են մագրիկցիներին օգնության հասած քրդական

---

[38] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8:*

[39] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8 շրջ.:*

[40] *Նկատի ունի 1905–1911 թթ. Պարսկաստանում տեղի ունեցած հեղափոխությունը, որը երկիրը դարձրեց սահմանադրական միապետություն: Արդյունքում Պարսկաստանը բաժանվեց Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև (1907):*

[41] *Եփրեմ Դավթյան (Եփրեմ խան) – ազատագրական շարժման նշանավոր գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ:*

[42] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 8 շրջ.:*

[43] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 3 շրջ.:*

[44] *Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 378:*

[45] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 7:*

[46] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 8:*

[47] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 7, թ. 8 շրջ.:*

[48] *Ձ ի շ է ր. 1897, № 13, 106–108, Ձ ի շ է ր. 1897, № 14, 112–119:*

ուժերը: Վարդանի վկայությամբ՝ նահանջը չի կատարվում այնպես, ինչպես պլանավորել էին: Այնուամենայնիվ, հաջողվում է ազատվել հետապնդումից և հասնել Սալմաստ: Հայկական կողմից սպանվում է 19[49], քրդերի կողմից՝ չուրջ 300 հոգի[50]: Վարդանի գնահատմամբ՝ «Այդ արշավանքը ուժեղ տպավորություն գործեց քուրդ ցեղերի դեմ»[51]:

Արշավանքը նպատակ ուներ ոչ միայն վրեժխնդիր լինել մազրիկ ցեղից, այլև երկիր գենքի ներկրման ու հայդուկային խմբեր ուղարկելու համար ճանապարհ բացել. «Այս դեպքը ևս աստիճանաբար փոխում է քրդերի վերաբերմունքը հայերի նկատմամբ: Նրանք սկսում են օգնել հայ գինատարներին՝ կատարելով ուղեկցողի դեր (վալլաղ), լավ իմանալով, որ հակառակ դեպքում ոչ մեկին չի խնայի հայ վրիժառուի գնդակը»[52]:

Օսմանյան իշխանությունները, որոնք տեղյակ էին, որ հայդուկները եկել են Սալմաստից, պարսկական կառավարությունից պահանջում են իրենց հանձնել նրանց: Պարսիկները, իրենց հերթին, ստիպված են լինում տեղի տալ և խստացնել հայերի նկատմամբ բռնությունները: Հատկապես ծանր դրության մեջ ընկան հայ վաճառականները[53]:

Ստեղծված իրադրությունից դուրս գալու համար որոշվում է ընտրել չարիքի փոքրագույնը: Հայդուկների և ՀՅԴ-ի հետ որևէ առնչություն չունեցող մի քանի երիտասարդների հանձնում են պարսիկներին, որոնք էլ, նրանց փոխանցում են թուրքերին: Վարդանի վկայությամբ՝ «Բայց հետո իմացանք, որ նրանց առանձին վնաս չի հասել»[54]:

1897 թ. ամռանը մի քանի հայդուկի հետ Վարդանը գալիս է Երևան, ապա՝ Էջմիածին, որտեղ տեղեկանում են՝ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը ցանկանում է նրանց հետ հանդիպել: Հայդուկներին ներկայացնում են Վեհափառին: Նա հարցուփորձ է անում սահմանն անցնելու, ռուսական իշխանությունների վերաբերմունքի մասին, ապա ասում է. «Լսել եմ, գնացել եք մի քանի քուրդ եք սպանել, այժմ գնացեք հանգիստ մնացեք, բոժոժի որդի պես մտեք բոժոժի մեջ, հանգստացեք, տեսնենք [թե] գլուխներիս ի՞նչ է գալիս»[55]: Եվ երբ Վարդանը հակաճառում է՝ ասելով, թե մի քանի քուրդ չեն, այլ 300 հոգի, կաթողիկոսը ««Լռեե, լռեե»,– ասելով հարցը փակեց»[56]:

Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ 1898 թ. հետո «Վարդանը ճանաչված դեմք է Ատրպատականի շրջանին մեջ: Ան մեր ամենեն փորձառու հայդուկներեն մեկը կնկատվի: Քաջությունն ու խելացիությունը խտացված են իր մեջ»[57]: Այդ ժամանակից նա հասարակության հայտնի էր որպես Խանասորի Վարդան:

[49] *Զոհվածների ցուցակը տե՛ս «Դրօշակ» (Ժնև), 1897, № 11, 83:*
[50] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 12 շրջ.–13:*
[51] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 11, գ. 1, թ. 13:*
[52] *Հայոց պատմություն. 2010, հ. 3, 568:*
[53] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14:*
[54] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12:*
[55] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12 շրջ.:*
[56] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 8, թ. 12 շրջ.:*
[57] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 7:*

1898–1899 թթ. Վարդանը Թիֆլիսում էր, Կարսում, ապա՝ Բաքվում, որտեղ բնակվում էր եղբոր մոտ: Որպեսզի ռուսական իշխանությունների կողմից, որպես դասալիք, հետախուզման մեջ չգտնվի, որոշում է՝ «օգտվել խաղաղ դրությունից, ներկայանալ զինվորական իշխանության և մնացած ծառայությունը շարունակել»[58]: Ծառայությունը, ծանոթ սպայի միջոցով, 10 ամիս շարունակում է Դիլիջանում, ապա զորացրվում է[59]:

Հուշերի շարադրումը և հրատարակումը «Դրօշակ» պարբերականում

1897–1899 թթ. Վարդանն աշխատում է իր հուշերի վրա: Եվ, ինչպես ինքն է նշում, «Գրեցի սկզբից մինչ Խանասորի արշավանքը, մոտ 400 էջ»[60]: Հուշերի համառոտ տարբերակը սկսում են տպագրել «Դրօշակ»-ում[61], սակայն այդ ընթացքում Վարդանը շարունակում է աշխատել ձեռագրի վրա: Ուստի դիմում է խմբագրությանը՝ խնդրելով դադարեցնել տպագրությունը, քանի որ ինքը որոշ լրացումներ է կատարում: Իր խոստովանությամբ՝ «Ես էլ ժամանակ չունեցա ընդարձակվելու (լրացումներ կատարելու – Ռ. Ս.) և այնպես էլ հիշատակարանը կորավ, գնաց Կ. Պոլսում, իսկ իմ ձեռագրերը, որ գտնվում էր Բաքու, մեր տանը, կառավարությունը խուզարկելով վերցնում, տանում է»[62]: Վարդանը նշում է, որ հուշերի վրա աշխատել է 7 տարի[63]:

Խորհրդային տարիներին, հավանաբար, Վարդանը տեղյակ չէր, որ Սիմոն Վրացյանը «Հայրենիք» ամսագրում տպագրել էր նրա 1894–1896 թթ. ընդգրկող հուշերը[64]: 1936–1937 թթ.[65] Վարդանը դրանք սկսել էր շարադրել ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի առաջարկությամբ, որից կարելի է եզրակացնել՝ խորհրդային իշխանությունները տեղյակ էին «Հայրենիք»-ում հուշերի տպագրման մասին: Հավանաբար, Հայաստանում նախատեսվող հուշերի տպագրությունն այլ նպատակ ուներ: Կարելի է ենթադրել, որ Վարդանը չի «արդարացրել» նրանց հույսերը, ուստի հուշերը չեն տպագրվել. ավելին, դրանք կորել են: Բարեբախտաբար, պահպանվել են հուշերի սևագիր 12 տետրերը, որոնք գտնվում են Հայաստանի ազգային արխիվում[66]:

Ս. Վրացյանը՝ Վարդանի հուշերի հրատարակիչը, որոշ պարզաբանումներ է տալիս: Հուշերը գտնվել են ՀՅԴ դիվանում: Տետրի վրա եղել է հետևյալ

---

[58] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14:*

[59] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.:*

[60] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.:*

[61] *Հրատարակությունը կատարել է ՀՅԴ գործիչ, պատմաբան և փիլիսոփա Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան):*

[62] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 14 շրջ.–15:*

[63] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 15:*

[64] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 58–76, № 1, 85–115, № 2, էջ 124–140, № 3, 100–119:*

[65] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 2:*

[66] *Հուշերի վերնագիրն է՝ «Վարդանի հիշատակարանը. 1890 թ.–1918 թվերը: Գրի է առնված 1936–1937 թվերին Երևանում» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 2):*

մակագրությունը. «Արտագրէց Վահէ Սիւնի, 1901 թ. յուլիս 10»[67]: Ս. Վրացյանը նշում է, որ դրանք եղել են չորս ստվար տետրակներ[68]:

Ս. Վրացյանը դժգոհում է, որ «Հիշատակարանն» այնքան էլ հաջողված գործ չէ: Նրա արտահայտությամբ, «Գրիչը Վարդանի ձեռքին շատ յետ է մնում հրացանից: … գրում է այնպէս՝ ինչպէս կը գրէր ուսում չստացած մի գիւղացի, անվերջ կրկնութիւններով ու միեւնոյն կաղապրուած ոճով եւ արտայայտութիւններով»[69]: Այնուամենայնիվ, Ս. Վրացյանը ստիպված է եղել ընդունել, որ «Վարդանի գրուածքը, այսպէս ասած մի թանկագին քար է իր նախնական վիճակում»[70]: Այս վերջին արտահայտությունը վկայում է, որ Ս. Վրացյանը փորձել է ընթերցողին ցույց տալ իր կատարած խմբագրական աշխատանքի կարևորությունը: Կարծում ենք, որ նման բան անթույլատրելի էր մի մարդու նկատմամբ, ով 1890 թ. իրեն նետել էր ազատագրական պայքարի հորձանուտի մեջ՝ կյանքը բազմիցս ենթարկելով ծանր փորձությունների:

1903[71] թ. Բաքվում Վարդանի մոտ է գալիս Սիբիրսկի ազգանունով մի ռուս թղթակից, որը շատ էր հետաքրքրվում Հայկական հարցով, հայ ազատագրական պայքարով, և նրա խնդրանքով Վարդանը ներկայացնում է իր անցած ճանապարհը: Սիբիրսկին ամեն երեկո այցելում էր հայդուկին և խնամքով գրի առնում նրա հուշերը, սակայն, երբ Վարդանը տեղեկանում է մարտական ընկերոջ՝ հայ ազատագրական շարժման գործիչ, հայդուկ, ՀՅԴ անդամ Սևքարեցի Սաքոյի (Սարգիս Ծովանյան) մահվան մասին, հրաժարվում է թղթակցի հետ հետագա համագործակցությունից: Վարդանը և Սարգիսը մտերիմ ընկերներ էին. այդ մասին վկայում է Վարդանը. «Մենք շատ մտերիմ ընկերներ էինք … Սաքոն պայման էր դրել, ասում էր՝ «Վարդան, եթէ ես չուտ մեռնեմ դու կգաս ինձ թաղելու, թէ դու չուտ մեռնես՝ ես կգամ քեզ թաղելու»»[72]: Վերջինս ցավով է հիշում իրենց պայմանավորվածությունը, սակայն չի կարողանում կատարել խոստումը, քանի որ Սևքարեցի Սաքոն վարակիչ հիվանդության՝ խոլերայի զոհ էր[73]:

Կիլիկիայում գործունեություն ծավալելու նախադրյալները

1904 թ. փետրվար–մարտին Սոֆիայում կայացած ՀՅԴ III Ընդհանուր ժողովը վճռում է ակտիվացնել գործունեությունը Կիլիկիայում: Ժողովը հանձնարարում է հայ ազատագրական և քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիր անդամ Սիմոն Զավարյանին իրականացնել որոշումը, իսկ Վարդանին՝ աջակցել: Նրանք անցնելու էին Կիլիկիա, որպեսզի «զբաղին Լեռնավայրի (Կիլիկիայի – Ռ. Ս.) յեղափոխական կազմակերպութեամբ»[74]: Վարդանն առաջին հերթին ձեռնամուխ է լինում զենք և զինամթերք հայթայթելու գործին:

---

[67] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:*
[68] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:*
[69] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:*
[70] *Վ ր ա ց ե ա ն. 1936, № 12, 59:*
[71] *Հավանաբար 1908 թ.:*
[72] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 15 շրջ.:*
[73] С и б и р с к и й. 1916, № 16, 2–6; № 17, 3–6; № 18, 2–5; № 19, 8–11; № 20, 4–7; № 21, 4–8.
[74] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 178:*

Սկզբնական շրջանում գնում են 3 հրացան ու 2 ատրճանակ, որոնք տեղափոխում են Այնթապ[75]: Վարդանի համոզմամբ՝ Կիլիկիայում ազատագրական պայքարը կարող էր հաջողության հասնել միայն տեղացիների ակտիվ մասնակցությամբ, ուստի առաջնահերթ խնդիր էր համարում գտնել «ձեռնահաս թրքահայ գործիչ»[76]: Հայտնի է, որ ավելի վաղ՝ 1890-ական թվականների կեսերին, Կիլիկիայում են եղել հայ ազատագրական շարժման և ՀՅԴ գործիչներ Մկրտիչ Հատիկյանը, Հայկ Թիրաքյանը, Միքայել Տեր Մարտիրոսյանը (Մար)[77] և այլոք: Ավելի վաղ՝ 1890-ական թվականների սկզբներին գործունեություն են ծավալել հնչակյանները:

Առաջինը մեկնում է Ս. Զավարյանը, սակայն ոչ թե Կիլիկիա, այլ՝ Բեյրութ իրավիճակն ուսումնասիրելու համար: Որոշ ժամանակ անց նա Վարդանին տեղեկացնում է նրա ներկայության անհրաժեշտության մասին: 1904 թ. օգոստոսի 24-ին Վարդանը և հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Վռամյանը (Արշակ Վռամյան) ճանապարհվում են Կ. Պոլիս, ուր տեղ են հասնում օգոստոսի 31-ին, այստեղից էլ՝ ճանապարհվում Ժնև, ուր ժամանում են սեպտեմբերի 7-ին[78]:

«Դրօշակ»-ի խմբագրությունում Վարդանը ծանոթանում է Կիլիկիայից ստացված տեղեկություններին հետ, որոշ պատկերացում է կազմում անծանոթ վայրի մասին: Առավել մանրամասն տեղեկություններ է հայտնում Սարհատը, որին անվանում էին «Դոկտոր»[79]: Նա հայտնում է, որ Բեյրութում տեղի ունեցած ՀՅԴ ժողովում որոշվել է՝ հայթայթել մոտ 500 հրացան, փամփուշտ, ուժանակ և դրանք ուղարկել Կիլիկիա[80]: Այս գործի համար կուսակցությունը տրամադրել էր բավականին մեծ գումար՝ շուրջ 20 հազար ֆրանկ[81]: Վարդանը դեմ է լինում այդ ծրագրին՝ գտնելով, որ առաջին հերթին պետք է գնալ Կիլիկիա, ծանոթանալ իրադրությանը, որից հետո դիմել գործնական քայլերի: Նրա կարծիքը, սակայն, չի ընդունվում, ուստի ստիպված էր համաձայնվել 100 հրացան ու համապատասխան քանակությամբ փամփուշտ գնելու և Կիլիկիա ուղարկելու որոշմանը[82]:

1904 թ. հոկտեմբերի 20-ին Ռոստոմի, Հունանի[83], Վռամյանի և Սարհատի հետ ճանապարհվում են Փարիզ՝ զենք գնելու համար, որտեղ Վարդանը ծանո-

---

[75] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 222:*

[76] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, 255:*

[77] *Նրա մասին մանրամասն տե՛ս Գասպարյան, Սահակյան. 2015, 197–233:*

[78] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18:*

[79] *Այս անձնավորության մասին տեղեկությունները սակավ են: Հայտնի է, որ մասնակցել է ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին՝ որպես Լեռնավայրի (Կիլիկիա) պատգամավոր, որի լիազորությունները, սակայն, կասեցվել են ժողովի կողմից: Հավանաբար, պատճառը կուսակցության դրամի վատնելն է եղել (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1982, 18–19):*

[80] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18:*

[81] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18 շրջ.:*

[82] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18 շրջ.:*

[83] *Դավթյան Հունան (Հոնան, Նանոյան, 1865–1918), – ազատագրական շարժման գործիչ, մանկավարժ, ՀՅԴ տեսաբան, Ներսիսյան դպրոցի շրջանավարտ: Ուսանել է քաղաքագիտություն Ժնևի համալսարանում, խմբագրել՝ «Յառաջ» թերթը (1905–1906):*

թանում է "Pro Armenia" թերթի խմբագիր Պիեռ Քիյառի[84] հետ: Այստեղ տեղեկանում են, որ հրապենի գնման առավել նպաստավոր վայրը Հունաստանն է, ուստի հոկտեմբերի 27-ին Սարհատը և Վարդանը նավով մեկնում են այդտեղ[85]: Ամենքում հաջողվում է գնել «Գրա»[86] մարտական հրացաններ, մի քանի հազար փամփուշտ և զրանք լիցքավորելու գործիքներ[87]: Առավել բարդ էր զենքի ու զինամթերքի փոխադրության հարցը. Սարհատին հաջողվում է պայմանավորվել մի հույն մաքսանենգի հետ, որը գումարի դիմաց խոստանում է զրանք փոխադրել անհրաժեշտ վայր:

Ավելորդ ուշադրությունից զերծ մնալու համար՝ Վարդանը ձեռք է բերում պարսկահպատակի անձնագիր՝ ասորի Յովհաննա Յաղուբ անունով, որը, իբր, գորգերի վաճառական էր[88]: Վարդանի խոստովանությամբ՝ «երբեք լեզալ կերպով Տաճկաստան չեմ մտել և երբեք այնքան չեմ մտածել, ինչպես այժմ: Շարունակ մտածում եմ, թե հարցափորձի ժամանակ ինչ պատասխան պետք է տամ: Ես ինձ պատրաստում եմ, շարունակ կրկնում եմ, որ թավրիզեցի եմ, հորս անունը, մորս անունը, որ թաղեցի եմ և [այլ]ն, և [այլ]ն, իսկ որովհետև ասորերեն չգիտեմ, դորա համար էլ կասեմ «Փոքր ժամանակվանից հեռացել եմ» և [այլ]ն, և [այլ]ն»[89]:

Բեյրութում «Օրիենտալ» հյուրանոցում Վարդանին սպասելու էր Ս. Զավարյանը, սակայն, ինչպես պարզվում է, նա գտնվում էր Ադանայում: Որոշ ժամանակ անց Վարդանին հաջողվում է կապ հաստատել կուսակցական ընկերներից՝ տրապիզոնցի Սիմոն Շատիկյանի հետ: Վերջինս ներկայանում էր իտալացի Ջոնգոլի Վիտո անունով[90]:

Բեյրութում ծանոթանալով տեղի և, հատկապես, Կիլիկիայի իրադրության մասին՝ պարզվում է, որ ո՛չ Հալեպում, ո՛չ էլ Կիլիկիայում դաշնակցական կազմակերպություններ չկան, Վարդանի խոսքերով «Մարդիկ չկան, այլ կան բառեր, անուններ, ուրիշ ոչինչ»[91]: Նա հարկադրված է լինում այդ մասին ժամև հաղորդել:

Վարդանը մեկնում է Հալեպ, ճանապարհին լինում է Համա և Հոմս քաղաքներում, ծանոթանում իրադրությանը: Հալեպում կապ է հաստատում տեղի լուսանկարիչ Գրիգոր Մարյանի հետ: Այնուհետև անցնում է Քիլիս, ապա՝ Այնթապ, որտեղ ՀՅԴ ներկայացուցիչն էր Խաչատուր Սեյիսյանը՝ Ավոն: Այնթապը համարվում էր Դաշնակցության կենտրոնատեղին Կիլիկիայում, սակայն Վարդանի գնահատմամբ՝ «Ավոն պարապ մարդ էր, ոչնչով չէր պարապում և ապրում էր կազմակերպության փողով: Մի քանի ընկերներ ուներ, որոնք իրենցից ոչինչ չէին ներկայացնում»[92]:

---

[84] *Քիյառ Պիեռ (1864–1912) – ֆրանսիացի բանաստեղծ, հասարակական գործիչ: Հեղինակ է հայկական հարցի վերաբերյալ աշխատությունների:*

[85] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 19:*

[86] *Միալիցք մարտական հրացան, արտադրվել է Ֆրանսիայում (1874):*

[87] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 19 շրջ.:*

[88] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 22 և 22 շրջ.:*

[89] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 22 շրջ.:*

[90] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 24:*

[91] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 24 շրջ.:*

[92] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 28: Վարդանը նշում է, որ Ավոն ՀՅԴ ֆինանսական օժանդակությամբ բժշկական կրթություն ստացավ և սկսեց պախարակել կուսակցությանը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 30 շրջ.):*

Այնթապի կազմակերպությունը կուսակցությունից պահանջել էր մի քանի հարյուր հրացան: Դա արվել էր, հավանաբար, ազատագրական պայքարին միանալու իրենց «պատրաստակամությունը» ցուցադրելու համար: Տեղացիները չատ լավ հասկանում էին, թե որքան դժվար կլինի նման քանակությամբ զենք ու զինամթերք տեղափոխել Այնթապ:

Կազմակերպության պատրաստակամությունը ստուգելու համար Վարդանը դիմում է խորամանկության. այնթապցիներին հայտնում է, որ զենքի մի մասն արդեն քաղաքում է, ուստի անհրաժեշտ է դրանք տեղափոխել անվտանգ վայր: Նրա վկայությամբ՝ «Բոլորն էլ չչմած մնացին և ոչ մեկը կարողացավ մի որևէ քայլ անել այդ ուղղությամբ»[93]: Այս ամենը և այլ մանրամասներ իմանալուց հետո Վարդանը խոստովանում է. «Դորանց տեսնելով, վասպուրականցիք իմ աչքում չատ բարձրացան, կարոտել էի վանեցոց»[94]:

Այնուամենայնիվ, Վարդանը գտնում է, որ Կիլիկիայում հնարավոր է գործունեություն ծավալել՝ հաշվի առնելով նրա աշխարհագրական դիրքը: Հարմար է զենք, զինամթերք և մարտիկներ տեղափոխելու համար: Նրա կարծիքով՝ «Այստեղի մի հրացանի պայթյունը ավելի է լսելի և ուշադրության արժանի, քան Հայաստանի այնքան հերոսական կռիվները, որոնք անհայտության մեջ կորչում են»[95]:

Արցախի ինքնապաշտպանության ղեկավար

ՀՅԴ-ն, ամբողջովին կլանված լինելով Արևմտյան Հայաստանով, անուշադրության էր մատնել արևելահայության հետ կապված հիմնախնդիրները, հատկապես՝ ինքնապաշտպանության կազմակերպումը: Բոլորի համար անսպասելի էր 1905 թ. փետրվարին սկսած և աստիճանաբար ահագնացած հայ-թաթարական ընդհարումները[96], որոնց դրդողը ռուսական իշխանությունն էր: Անուշադրության էր մատնվել նման հնարավորությունը, երբ կար տեղեկություն, որ 1903 թ. վերջին «կառավարությունը հրաւիրել էր թուրք բէգերին օգնութեան հայերի դեմ, բայց վերջիններս հրաժարուել էին»[97]:

Այնուամենայնիվ, կառավարությունը չարունակում է սադրանքները, իշխանամետ մամուլը հակահայ հոդվածներով նախապատրաստում է ապագա հայ-թաթարական ընդհարումները՝ տպագրելով հերյուրանքներ և ապատեղեկատվություն[98]: Ռուսահպատակ կովկասյան մահմեդականներին ազակցում են Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հավատակիցներն ու ցեղակիցները[99]: Կովկասի կառավարչապետության, ապա փոխարքայության հայտ-

---

[93] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 28 շրջ.:*
[94] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 29 շրջ.:*
[95] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33:*
[96] *Դեռևս 1888 թ. հունվարի 5-ին՝ Սբ. Ծննդյան տոնի նախօրյակին, ումն Սուլթան բեկի կողմից Երևանի չուկայում սպանվում է երկու հայ: Սկսվում է իրարանցում, որի ընթացքում սպանվում են տասից ավելի հայեր ու թաթարներ: Մարդասպանին պատժելու փոխարեն՝ իշխանությունները տարբեր պատժաժամկետների՝ 4-ից 12 տարով, դատապարտում են հինգ հայերի (տե՛ս Ա.-Դ ո. 2013, 30–31):*
[97] *Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 303–304:*
[98] *Հայոց պատմություն. 2015, 19:*
[99] *Հայոց պատմություն. 2015, 20:*

յան ինքնապաշտպանությունը հիմնականում ստանձնում է ՀՅԴ-ն, որի «կազմակերպման կենտրոնական դեմքը Ռոստոմն էր»[100]: Վարդանը փաստում է հետևյալը. «Դաշնակցությունը որպես մարտական կուսակցություն, որպես հայ ժողովուրդի մարմնացած ժողովրդական, նորա պահանջների, ցանկությունների արտահայտիչը, հանդիսատեսի դերում լինել չէր կարող և ոչ մի խաղաղասիրական քարոզներ և ձեռնարկումներ անօգուտ էին, ուզեր, [թե] չուզեր պետք է անցներ չարժումը ղեկավարելու»[101]:

1905 թ. հուլիսին կուսակցությունը Վարդանին[102] նշանակում է «Ղարաբաղի՝ սկսած Գանձակի մոտից մինչև Մեղրիի շրջանի ընդհանուր ղեկավար»[103]: Նրա հետ Արցախ են գալիս հայ ազատագրական չարժման գործիչներ, ՀՅԴ անդամներ Մոռավը (Մարգար Ժամհարեան), Խեչոն (Խաչատուր Ամիրյան-Գևորգյան), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Սևքարեցի Սաքոն, Սեպուհը (Արշակ Ներսիսյան), Համազասպը (Համազասպ Սրվանձտյանց), Կոտոյի Հաջին (Հակոբ Կոտոյան) և ուրիշներ: Դիմադրությունը ղեկավարելու համար կազմակերպվում է Զինվորական մարմին:

Գալով Շուշի՝ Վարդանը կուսակցական ընկերների, տեղի աչքի ընկնող քաղաքացիների մասնակցությամբ մի քանի ժողովներ է գումարում, որտեղ առաջին հերթին ցուցում է տալիս խուսափել կռիվներից, սակայն նախապատրաստվել ինքնապաշտպանության: Նրա հրամանով Շուշին բաժանվում է մի քանի պաշտպանական շրջանների, նշանակվում են շրջանապետեր, որոնց պարտականություններն էին՝ դիրքերի ընտրությունը, կահավորումը, մարտիկների զինումը, պարենավորումը և այլն[104]:

Շուշիի[105] աննման նկարագրությունն է տվել Ա-Դոն, որի գնահատմամբ Արցախն իրենից բերդ է ներկայացնում, «ուր բազմած Շուշին, որպէս սրաթև արծիւը, մի առանձին հպարտութեամբ, իշխում է իր առաջ ճգւած տարածութիւնների վրա»[106]: Վարդանի գնահատմամբ էլ՝ «Ամբողջ Ղարաբաղի (Արցախի – Ռ. Ս.) սիրտը, կենտրոնը Շուշին էր, բոլորը աչքերը հառած քաղաքին էին նայում»[107]:

1905 թ. մայիսի 12-ին Նախիջևանում սկսվում է հայ-թաթարական ընդհարումը, որը, Ա-Դոյի գնահատմամբ, « ... ոչ թէ ընդհարում էր, այլ հարձակում, սպանութիւն, կողոպուտ, որը տարածվեց Նախիջևանի շրջանի բոլոր հայա-

---

[100] *Հայոց պատմութիւն. 2015, 21:*

[101] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33 շրջ.:*

[102] *Վարդանի թեկնածությունն առաջարկել էր Նիկոլ Դումանը (տե՛ս Գ և ո ր գ յ ա ն. 2010, 321): Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ «Վարդանը քիչ մը վարանոտ է, մինչ Նիկոլ Դումանը վճռական և արագ մտածող» (տե՛ս Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992, 7–8):*

[103] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 36 շրջ.: Ժողովի որոշման մեջ նրա պաշտոնը կոչվում էր «զինուորական լիազօր» (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304):*

[104] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 37:*

[105] *Շուշիի բնակչության թիվը 33 հազար էր, որից հայերը՝ 18 հազար, իսկ թաթարները՝ 14 հազար և այլ ազգություններ՝ 1 հազար (տե՛ս Ա-Դ օ. 1907, 148):*

[106] *Ա-Դ օ. 1907, 152:*

[107] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 13:*

բնակ գյուղերում»[108]: Նախիջևանը կարծես ազդանշան եղավ, որ հնարավոր է՝ բախումները տեղափոխվեն Սյունիք, ապա՝ Արցախ:

Շուշիում բախումներ հրահրելու խնդրում իր «սև» գործն է կատարում հետադիմական մամուլը՝ կանխամտածված ապատեղեկատվություն տպագրելով: 1905 թ. օգոստոսի 8-ին Բաքվի «Каспий» թերթում տպագրվում է Շուշիից ուղարկված սադրիչ հեռագիր, ուր ասվում էր. «Գիշերւայ ժամը 3-ին երեք հայեր մեծ կօշիկներով (ընդգծումը մերն է – Ռ. Ս.) և բրդոտ վախխանեբով, խէնջարներով կտոր կտոր արին մի լապտերավառ և փախան»[109]:

Վարդանը, կանխատեսելով հնարավոր բախման հնարավորությունը, օգոստոսի 10-ի նամակում, հավանաբար ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված, պահանջում է շտապ զենք և զինամթերք ուղարկել: Կազմակերպչական հրահանգներ են տրվում գավառներին. կազմակերպվում են պարեկային կամ շրջիկ խմբեր[110]: Եթե նման հարցերը համեմատաբար հեշտ են լուծվում, սակայն բաց էր մնում զենքի խնդիրը: Վարդանը հուշագրում է. «Մեր ժողովուրդը սովոր չէր զենքի, այդ զենքին սովոր էին թուրքերը: Եվ մեր զինման գործը անցնում էր ճնշման, բռնության տակ»[111]:

Օգոստոսի 16-ին Շուշիում բռնկվում է հայ-թաթարական ընդհարում: Վարդանը վկայում է. «Կռվում են տներում, բակերում չինված դիրքերից, կռիվը շարունակվում է գիշեր և ցերեկ»[112]: Թշնամուն օգնության էին եկել գավառաբնակները: Վարդանն արձանագրում է. «Սկզբնական շրջանում ես մեծ կարծիք ունեի քաղաքացիների քաջության, կռվի ընդունակության վրա, բայց կռվի ընթացքում տեսա, որ խաբված եմ եղել»[113]:

Քաղաքի ռուսական զորքը բաժանվել էր երկու մասի. թուրքերի շրջանում գտնվող զինվորներն ու սպաները կռվում էին նրանց կողմից, իսկ հայկական թաղում գտնվողները՝ հայերի կողմից: Վարդանը վկայում է այն հերոսական և անձնուրաց աշխատանքի մասին, որ կատարում էին աշակերտներն ու աշակերտուհիները՝ օգնելով ուտելիք պատրաստել՝ վիրավորներին խնամելով, տարրական բուժօգնություն ցուցաբերելով և փամփուշտներ լիցքավորելով[114]: Վիրավորներին ու հիվանդներին բուժելու և խնամելու համար գործում են սանիտարական խմբեր: Թաղապետերը կազմակերպում են զինվորական ճաշարաններ, որտեղից ուտելիք և ջուր էին տանում դիրքերում գտնվող մարտիկներին: Զինվորական մարմնի ու դիրքերի միջև կապը պահպանվում էր կապավորների կողմից: Հատուկ խմբերը փամփուշտ էին հասցնում մարտիկներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ փոխարինում նրանց: Հետախուզական խմբերը, տեղակայվելով Շուշիի մերձակա ձորերում, հսկում էին թշնամու տեղաշարժը և այլն[115]: Մարտերին մասնակցում են Շուշիի հնչակյան մաս-

---

[108] *Ա-Դ օ. 1907, 116:*
[109] *Ա-Դ օ. 1907, 147:*
[110] *Գևորգյան. 2010, 325:*
[111] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 37:*
[112] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 38 շրջ.:*
[113] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 39:*
[114] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 39:*
[115] *Գևորգյան. 2010, 364–365:*

նաճյուղի 12–16 մարտիկներ. Վարդանի գնահատմամբ՝ կռիվներում «քաջ են եղել»[116]:

Առաջին օրը սպանվում են չուրջ 20 հայեր և թաթարներ[117]: Վերջիններս հայերի տների վրա հարձակման նոր մարտավարություն էին ընտրել՝ հրդեհումներ են կատարում: Հակառակորդի օրինակով հայերը կազմակերպում են հրդեհաճիպների խմբեր, որտեղ ընդգրկվում են նույնիսկ 14 տարեկան պատանիները: Գործում են նաև բնակիչներից կազմված հրչեջների խմբեր, որոնք ունեին երկու հրչեջ մեքենա, տակառներով ջուր և համապատասխան գործիքներ:

Օգոստոսի 18-ին Աղդամից օգնության են գալիս մեծ թվով թաթարներ: Հայերը, փոխնահանգապետի հրամանը հարգելով, չեն կրակում, որից օգտվում են թաթարները և հարձակվում չուշեցիների վրա: Իշխանությունն առանց պաշտպանության է թողնում հայկական թաղամասը՝ հայտարարելով, որ հայերն իրենք պետք է հոգան իրենց պաշտպանությունը: Ա-Դոյի կարծիքով՝ «Այս կռվեցնելու ամենալաւ միջոցն էր և կառավարութեան ընդունած տակտիկան»[118]: Դրա վկայություններից մեկն էր պաշտոնական այն հայտարարությունը, որով հերքվում էր Շուշիում տեղի ունեցած բախումների մասին տեղեկատվությունը[119]:

Վարդանը, տեղեկանալով, որ հայկական թաղամասում գտնվող իրենց տներում մնացել են մի քանի թաթար ընտանիքներ, հրամայում է նրանց տեղափոխել հայերի տները և ապահովել նրանց անվտանգությունը[120]:

Մարտերից մեկի ժամանակ Վարդանի մոտ է գալիս չուշեցի մի արհեստավոր ու հայտնում՝ քաղաքային ակումբի այուները XIX դարի թնդանոթներ են, որոնք արտաքինից պատված են գալոփ, և առաջարկում է դրանք օգտագործել: Վարդանի վկայությամբ՝ «Թնդանոթը մի հսկայական բան էր, ահագին ծանրութեամբ, մոտ 100 փութ (1 փութը հավասար է 16 կգ – Ռ. Ս.)»[121]: Մեծ դժվարությամբ թնդանոթը տեղակայում են Հունոտի ձորի դիմաց գտնվող սարի գագաթին:

Օգոստոսի 20-ին հայերը գործածության մեջ են դնում հին, ողորկափող թնդանոթները, որոնց համազարկը, թեև ոչ մի վնաս չի պատճառում, սակայն այնպիսի դղրդյուն և ծուխ են բարձրացնում, որ «թուրքերը սպիտակ դրօշ բարձրացրին և հաշտութիւն խնդրեցին, որը և տեղի ունեցաւ նոյն օրը»[122]:

Օգոստոսի 22-ին կողմերը հաշտություն են կնքում, այնուհետև քննում են կորուստները: Այրվել էին հայերի հարյուրավոր տներ, այդ թվում՝ Մարիամյան դպրոցը, եկեղեցապատկան 20 խանութ և թատրոնը: Հայերից զոհվել են 100, իսկ թուրքերից՝ կրկնակի կամ եռակի թվով: Թշնամին ունեցել էր 30 հազարի, իսկ հայերը՝ 5 միլիոն ռուբլուց ավելի գույքային կորուստ[123]:

---

[116] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 305:*
[117] *Ա-Դ օ. 1907, 153:*
[118] *Ա-Դ օ. 1907, 155:*
[119] *Ա-Դ օ. 1907, 157:*
[120] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 41 շրջ.:*
[121] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 40 շրջ.:*
[122] *Ա-Դ օ. 1907, 156, ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 42:*
[123] *Ա-Դ օ. 1907, 156:*

1905 թ. Շուշիի հայ բնակչությունն այսքան ծանր կորուստներ էր ունեցել, քանի որ թաթարներին միացել էր նաև զորքը, որի «զազիր գործողություններն այնպիսի չափերի հասան, որ Շուշիի հայ կանայք ստիպված եղան մի ընդարձակ հեռագրով դիմել կայսրուհուն»[124]*:*

1906 թ. գարնանը Շուշի է գալիս Ռոստոմը: Նրա երկու ամսվա ներկայությունը դրական նշանակություն է ունենում: Ռոստոմը ոչ միայն ամրապնդում է ՀՅԴ կառույցները, այլև օժանդակում է լուծելու «ինքնապաշտպանության հետ կապված հույժ կարևոր մի շարք խնդիրներ: Նա Շուշիում գտնվող վարպետների, նրանց թվում հայ ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ Կոստի (Կոստանդին) Համբարձումյանի աջակցությամբ պատրաստում և փորձարկում է ռումբեր ու հրթիռներ»[125]*: Համատեղ ուժերով կարողանում են վերանորոգել կամ վերականգնել հին, ողորկափող թնդանոթները*[126]*:*

1906 թ. հուլիսի 12–22-ը Շուշիում տեղի ունեցավ հայ-թաթարական երկրորդ ընդհարումը: Հուլիսի 12-ի առավոտյան գտնվում է չուշեցի Սահակ Մխիթարյանցի դիակը: Զինվորականները գալիս են դեպքի վայր՝ հետաքննություն կատարելու նպատակով, սակայն թաթարները կրակ են բացում: Սկսում է փոխհրաձգություն: Այն բանից հետո, երբ թաթարների կրակից սպանվում է երկու զինվոր, զորքերի հրամանատար գեներալ Վ. Գոլոչեպովը[127] *հրամայում է հրետանակոծել թաթարական թաղամասը: Դրանից կատաղած թաթարները նշանառության տակ են վերցնում գեներալի տունն ու նրան մեղադրում, «որ իբր նա հայերի հետ միացած ոմբակոծում, կոտորում էր իրենց անխնայ»*[128]*:*

Հաշվի առնելով նախորդ տարվա ընդհարումների փորձը՝ թշնամին քայլեր է ձեռնարկում ամբողջությամբ շրջափակել քաղաքը՝ հայերին զրկելով պարենի մատակարարումից: Ի պատասխան՝ Ակներանի հայությունը ոչ միայն փակում է թուրքերի մատակարարման ճանապարհը, այլև ծանր հակահարված է հասցնում Աղդամից առաջացող հրոսակներին՝ զգալիորեն թեթևացնելով շուշեցիների դրությունը: Վարդանի վկայությամբ՝ «Ակներանը թուրքերի աչքի փուշն էր, այդտեղ շատ կռիվներ են եղել և (թաթարները – Ռ. Ս.) միշտ ջարդվել են»[129]*:*

---

[124] *Ա-Դ ո. 2013, 132: 1907 թ. ապրիլի 20-ին Վիեննայի ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին ներկայացրած հաշվետվությունում Վարդանը և Սևքարեցի Սաքոն հիմնականում դրական են գնահատում զորքի վերաբերմունքը: «Պիտի ասեմ, որ մեր կողմերում պետական զինուորների եւ սպաների համակրանքը ընդհանրապէս մեր կողմն է եղել» (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 92):*

[125] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 361:*

[126] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 361:*

[127] *Ա-Դոյի վկայությունից հետևում է, որ գեներալ Վ. Գոլոչեպովն անաչառ անձնավորության տպավորություն է թողնում. «Անաչառ ու անկեղծ պաշտօնեայ քաղաքական այդպիսի պայմաններում դժւար էր գտնել, բայց և այնպէս հայերը գոհ մնացին նրանից» (տե՛ս Ա-Դ օ. 1907, 162): Անհայտ պատճառով գեներալին հեռացնում են Շուշիից, սակայն հայերի խնդրանքով փոխարքան նրան 1906 թ. մայիսին կրկին ուղարկում է Շուշի (Ա-Դ օ. 1907, 163): Վ. Գոլոչեպովը սպանվել է 1906 թ. Թիֆլիսում թաթար ահաբեկչի կողմից:*

[128] *Ա-Դ օ. 1907, 164:*

[129] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 11:*

Հուլիսի 13-ին մարտերը շարունակվում են ավելի մեծ թափով, սակայն առանց զորքի միջամտության: Հատկապես համառ մարտեր են ծավալվում Քարինտակ և Ղայբալի հայկական գյուղերի շրջանում:

Հուլիսի 22-ին հաշտություն է կնքվում:

Կռիվների ընթացքում հայերն ունենում են 24 սպանված և 102 վիրավոր, իսկ թաթարները՝ կրկնակի ավելի: Հրդեհվում են 200-ից ավելի տներ, որոնց մեծ մասը պատկանում են թաթարներին[130]*:*

Ընդհանուր առմամբ, 1905 թ. բախումները ցույց տվեցին, որ հայերն անպատրաստ են եղել մարտական խոշոր գործողություններ վարելու[131]*: Իրադրությունը փոխվեց 1905 թ. վերջին, երբ հայ բնակչությունն որոշակի մարտական փորձ ձեռք բերեց, հայթայթեց անհրաժեշտ քանակությամբ զենք ու զինամթերք*[132]*, որից հետո ՀՅԴ կովկասյան ռայոնական ժողովը որոշում է 1905 թ. վերջին անցնել հարձակողական գործողությունների*[133]*: Երբ հայերը թաթարների նման սկսեցին վերաբերվել բնակչության և նրանց ունեցվածքի նկատմամբ, Վարդանի վկայությամբ, «թուրքերը սարսափահար եղան: ... Երբ նոցա ասում [ենք], թե դուք էլ եք նույն վերաբերմունքը ցույց տվել, նոքա (թաթարները – Ռ. Ս.) պատասխանել են, թե մենք տգետ ենք, դուք չպետք է անեք մեզ նման»*[134]*:*

Հավանաբար, 1906 թ. դեկտեմբերին, երբ Արցախում իրավիճակը համեմատաբար կայունացել էր, իշխանությունները, հորինելով, այսպես կոչված, «Դաշնակցության գործը», սկսում են հայ-թաթարական կռիվների մասնակիցների հետապնդումը և ձերբակալությունը. Վարդանը Շուշիից մեկնում է Թիֆլիս[135]*, ապա՝ Բաքու:*

Հարկ է նշել, որ Արցախի հայության ինքնապաշտպանությանը լուրջ վտանգ էին ներկայացնում ներքին թշնամիները[136]*: Դրանցից էին, օրինակ, Վարանդայի Քյաթուկ գյուղի բնակիչներ Հաթամ բեկն ու նրա եղբայր Շամիլը: Եղբայրների ազգադավ գործողություններին վերջ տալու համար Վարդանը հանդիպում է Հաթամ բեկին, փորձում է նրան համոզել, սակայն վերջինս մնում է անհողդող: Ի վերջո, Վարդանի հրամանով եղբայրները գնդակահարվում են իրենց գյուղում*[137]*:*

Մ. Վարանդյանի բնութագրմամբ էլ՝ «Վարդանը՝ մեղմ, փափուկ սրտի տէր, երբեմն փոքր-ինչ վարանոտ, անվճռական ... երբ նա ընդհանուր հրամանա-

---

[130] *Ա-Դ օ. 1907, 167:*

[131] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304:*

[132] *Շուչեցիները ունեին չուրջ 300 հրացան, ՀՅԴ-ն էլ կուտակել էր 200 հրացան և 250000 փամփուշտ (տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304):*

[133] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 304:*

[134] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 2–3:*

[135] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 28:*

[136] *Վերհիշենք Ռուբենի դիպուկ բնորոշումը. «Եթէ ազգութեան մէջ չլինին դաւաճաններ եւ մատնիչներ, իշխանութիւնը իր բոլոր միջոցներով անզօր կը դառնայ, նոյն իսկ իր գաղտնի ոստիկանութիւնը անպտուղ կը դառնայ» (տե՛ս Ռ ո ւ բ է ն. 1952, 96):*

[137] *Գ և ո ր գ յ ա ն. 2010, 345:*

տար էր Ղարաբաղի մէջ, ստէպ կը մերժեր ընկերներու յորդորները՝ ակն ընդ ականի օրէնքով գործել Թիւնամիի դէմ, վառել այս կամ այն թաթար գիւղը, ոչնչացնել խուժանը ...»[138]*: Համազասպը ևս դժգոհում էր Վարդանի մարտավարութիւնից. նա պահանջում էր նախահարձակ լինել ու ահաբեկել Թիւնամուն*[139]*:*

Նրանք չէին կարողանում ըմբռնել, որ «Զենքը թուրքի ձեռքին է, նոքա ավելի զինվորական են, քոչվոր, ղաչաղ, կռվող դուրս գար՝ թուրքերից կլիներ»[140]*: Այս հանգամանքը հաշվի չէր առնված:*

Մասնակցութիւնը Վիեննայի ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին և գործունեութիւնն արտասահմանում

1907 թ. ձմռան սկզբին Բաքվում Վարդանը տեղեկանում է, որ մասնակցելու է Վիեննայում կայանալիք ՀՅԴ IV Ընդհանուր ժողովին, ուր ժամանում է փետրվարի 25-ին:

Վիեննայի ժողովում՝ ապրիլի 20-ին հայ-թաթարական մարտերի մանրամասներին վերաբերող հաշվետվութիւնում[141]*, Վարդանն ու Սևքարեցի Սաքոն հետևյալ կերպ են ընութագրել Թիւնամուն. «Զգույշ լինենք, չհեգնենք մեր հակառակորդի ոյժը. նոքա աւելի զինուորական եւ աւելի տոկուն են քան մերոնք (հայը լակոտ է եւ չուտ յուսահատող, նոյնիսկ յաջողութեան դէպքերում): Զլինէր Դաշնակցութիւնը ասպարէզի վրայ, ղեկը իրա ձեռքը, թուրքերը հայերին կը ջարդէին»*[142]*:*

Հաշվետվության մեջ նրանք կարևոր առաջարկութիւն են նաև անում՝ անհրաժեշտ են համարում կատարել հողերի փոխանակում թաթարների հետ. «Որպէսզի հայկական գաւառները ընդմիշտ սերտ միանան իրար հետ ...»[143]*: Առաջարկը շատ տեղին էր, սակայն չիրականացավ:*

Վիեննայում Վարդանն այցելում է թանգարաններ, պատկերասրահներ և տեսարժան այլ վայրեր, նաև՝ Մխիթարյան միաբանութիւն: Ժողովն ավարտվելուց հետո Վարդանը մեկնում է Շվեյցարիա: Ժնևում ծանոթանում է ռուսական Սոցիալիստ-հեղափոխական (էսէռ), լեհական, մակեդոնական և այլ կուսակցութիւնների ու քաղաքական գործիչների հետ: Էսէռների հետ գաղտնի փորձարկում են ինքնաչեն ռումբեր, ընկերների հետ գնում են հրաձգարանում կրակելու: Մասնակցում է Շվեյցարիայում սովորող հայ ուսանողների հավաքներին, հուշերում, մասնավորապես, հիշատակում է Վազգեն և Զարուհի Տերոյանների կրտսեր եղբորը՝ Վարազդատին[144]*, որին գիտեր դեռևս*

---

[138] Գ և ո ր գ յ ա ն. 2010, 344:

[139] Գ և ո ր գ յ ա ն. 2010, 346:

[140] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 1:

[141] Շուշիում հայ-թաթարական մարտերի մանրամասնութիւնները տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, 91–93: Տե՛ս նաև Մ ա ն ո ւ կ յ ա ն. 2022, 284–295:

[142] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 394:

[143] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, 396:

[144] Տերոյան Վարազդատ (1887–1938) – ազատագրական, հասարակական, քաղաքական գործիչ, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ, ՀՅԴ անդամ: Ստալինյան բռնութիւնների զոհ:

Վանից: Ֆրիբուրգի գյուղատնտեսական ուսումնարանում Վարդանը որոշ ժամանակ ուսանում է պանրագործություն[145]:

1907 թ. մայիսի 31-ին Վարդանը կրկին Վիեննայում էր: Այստեղ ամուսնանում է իր տանտիրոջ դստեր՝ Ֆրանցեսկայի հետ: Կնոջ հայրն ազգությամբ հունգարացի էր, մայրը՝ գերմանուհի[146]:

1908 թ. Վարդանը վերադառնում է Ռուսաստան՝ Բաքու և հյուրընկալվում եղբայրների մոտ: Այդ ժամանակ մեծ թափով ընթանում են «Դաշնակցության գործով» ամբաստանված հայ գործիչների ձերբակալությունները: Ոստիկանությունը որոնում էր Վարդանին, ուստի նա ստիպված է լինում 1909 թ. գարնանը մեկնել արտասահման՝ Վիեննա: Ընտանիքի կեցությունը հոգալու նպատակով անցնում է Կ. Պոլիս, սակայն գրեթե առանց հանգստի և համապատասխան սննդի աշխատանքի հետևանքով նրա առողջությունը կտրուկ վատանում է: Ռոստոմի աջակցությամբ վերադառնում է Վիեննա, բժշկի խորհրդով մեկնում է ավստրիական առողջարաններից մեկը, որտեղ որոշ ժամանակ անց կազդուրվում է:

Ապաքինվելուց հետո Վարդանը մեկնում է Ժնև, որտեղ բնակվում է «Դրոշակ»-ի խմբագրությունում: Ներկա է լինում չվեյցարական բանակի զորախաղին. նրան զարմացնում է այն հանգամանքը, որ պահեստազորի զինծառայողների զենքը, զինամթերքն ու հանդերձանքը պահվում էր տանը, որպեսզի անհրաժեշտության դեպքում ժամանակ չկորցնեն զինվելու և հանդերձավորվելու համար:

1911 թ. սեպտեմբերին Վարդանը գալիս է Վիեննա, ապա կնոջ և որդու հետ ճանապարհվում է Կ. Պոլիս: Հոկտեմբերի վերջին կուսակցության հանձնարարությամբ մեկնում է Էրզրում (Կարին)[147], որտեղ համագործակցում է Ռոստոմի հետ, ապա 1912 թ. հունվարի վերջին[148] վերադառնում է Կ. Պոլիս: Մայիսից մինչև Առաջին աշխարհամարտը զբաղեցնում է Տրապիզոնի մոտ գտնվող Մանիսա (Մագնեսիա) քաղաքի ջուլհակագործական ֆաբրիկայի կառավարչի պաշտոնը: Այստեղ ծնվում է երկրորդ որդին: 1913 թ. հոկտեմբերի 24-ին Վարդանը Կ. Պոլսում տեղեկանում է Սիմոն Զավարյանի մահվան մասին, սակայն, ինչպես ինքն է գրում, միջազգային լարված դրությունը՝ Բալկանյան երկրորդ պատերազմը, հնարավորություն չի տալիս ներկա լինել թաղմանը:

Մասնակցությունը կամավորական շարժմանը

1914 թ. հուլիսի 19-ին՝ եվրոպական ռազմաթատերաբեմում պատերազմը սկսելուց հետո, կուսակցության պահանջով հոկտեմբերին Վարդանը վերադառնում է Կովկաս[149], քանի որ օրեցօր պարզ էր դառնում՝ Օսմանյան կայսրության հետ բախումն անխուսափելի է:

---

[145] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 37:*

[146] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 36: Տեր և տիկին Մեհրաբյաններն ունեցել են երեք երեխա՝ Վարդան, Ռուբեն և Մարգարիտա:*

[147] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 44:*

[148] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 47:*

[149] *Իշխանությունները թույլ են տալիս արտասահմանից վերադառնալ ՀՅԴ այն գործիչներին, որոնք հետապնդվում էին «Դաշնակցության գործով»: Նրանց թվում էր նաև Վարդանը:*

Իր հուշերում Վարդանը գրում է, որ ՀՅԴ Արևմտյան բյուրոն դեմ էր կամավորական շարժմանը, որի գրավոր կարծիքը գալով Թիֆլիս՝ նա հանձնում է Արևելյան բյուրոյին[150]: Ինքը ևս դեմ էր կամավորական շարժմանը, սակայն Թիֆլիսում տեսնելով բնակչության բազմահազարանոց ցույցերն ի պաշտպանություն Ռուսաստանի՝ փաստի առաջ է կանգնում և տալիս է իր համաձայնությունը[151]:

Հայ կամավորական շարժումը ղեկավարող կարգադրիչ մարմինը Վարդանին հանձնարարում է կազմավորել V կամավորական խումբը: Սարիղամիշյան ճակատամարտի օրերին Վարդանի խմբին ուղարկում են Ալեքսանդրապոլ, որտեղ կամավորները ջերմ ընդունելության են արժանանում քաղաքացիների կողմից: Սարիղամիշում թուրքերի պարտությունից հետո՝ 1915 թ. հունվարի 18-ին, խումբը վերադառնում է Երևան[152], տեղակայվում Նորքում: Վարդանի մոտ ծառայության է անցնում նաև Գարեգին Նժդեհը[153]: Վարդանին զարմացրել էր այն հանգամանքը, որ հայրենիքի ազատագրության համար զինվորագրել էին նույնիսկ հայ մեծահարուստների որդիները: Նա հատուկ ջերմությամբ է վերհիշում կամավորական, ուսանող Ռուբեն Շաթիրյանին, որը ցանկացած պայմաններում պահպանում էր ոգու արիությունը:

Շուտով ռուսական հրամանատարությունը որոշում է միավորել II, III և IV կամավորական խմբերը V-ի մեջ, որը ստանում է Արարատյան գունդ անվանումը: 1915 թ. ապրիլի 1-ին պաշտոնապես գունդը գլխավորում է Վարդանը:

Ապրիլի 15-ին Արարատյան գունդը սկսում է իր ռազմերթը[154] և միանում գեներալ Ալեքսեյ Նիկոլաևի Անդրկասպյան (Բայազետի ջոկատ) կազակային բրիգադին, որի կազմում էլ գործելու էր: Մի շարք հաջող մարտերից հետո Բայազետի ջոկատը դուրս է գալիս Վան տանող ճանապարհ, սակայն գեներալը հրաժարվում է առաջանալ՝ պատճառաբանելով, որ նման հրաման չունի: Հայ կամավորները և նրանց հրամանատարները տեղյակ էին, որ Վան-Վասպուրականն օրհասական պայքար է մղում թուրք-քրդական գերազանց ուժերի դեմ, ուստի ցանկանում էին օր առաջ հասնել Վան: Հակառակ գեներալ Ա. Նիկոլաևի ցանկության՝ կամավորական խմբերի հրամանատարները որո-

---

[150] *Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, անդրադառնալով ՀՅԴ մի շարք գործիչների կամավորական շարժմանը դեմ լինելուն, ապա միանալուն, փաստում է. «Այդ տակտիկան ճիշտ էր: Բայց ամեն ինչ ունի իր դիալեկտիկան, տրամաբանությունը: Եթե որոշումները հնանում են՝ այն պետք է փոխել» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1086, ց. 4, գ. 435, թ. 7):*

[151] *Գեներալ Թովմաս Նազարբեկյանը վկայում է, որ լինելով 1877–1878 թթ. ռուս-թուրքական և 1904–1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմների մասնակից՝ նման համերաշխության ականատես չէր եղել. «Ամենուրեք տեղի էին ունենում բնակչության տարբեր շերտերի ցույցեր» (տե՛ս Սահակյան. 2019, 271–272):*

[152] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 79:*

[153] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 72:*

[154] *Վարդանը հուշագրում է. «Ամբողջ Երևանը ոտքի վրա է: Բոլոր խանութները փակ են, ժողովուրդը կամավորական բանակը ճանապարհ է ձգում դեպի երկիր, որտեղ իրենց եղբայրները և քույրերը, իրենց նմանները տանջվում, կոտորվում են, գնան օգնության, իրենց մարդկային սրբազան պարտքը կատարելու» (տե՛ս ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 89):*

չում են առանց ռուսների չարժվել Վան: Բարեբախտաբար, թշնամին, տեղեկանալով Բայազետի ջոկատի ու Արարատյան զորախմբի մոտենալու մասին, դադարեցնում է Վանի պաշարումը և հեռանում: Վարդանն առանձնացնում է առաջապահ ջոկատ Խեչոյի հրամանատարությամբ, որը մայիսի 6-ին՝ առավոտյան ժամը 6-ին, մտնում է Վան: Կարճ ժամանակ անց քաղաք են հասնում մյուս խմբերը, ապա՝ Բայազետի ջոկատը:

Մայիսի 7-ին Վանի և ազատագրված գավառների ժամանակավոր կառավարիչ (նահանգապետ) է նշանակվում հայ ազատագրական շարժման ակտիվ գործիչ Արամ Մանուկյանը[155]: Վարդանի վկայությամբ, գեներալ Ա. Նիկոլաևը «հայտարարեց, որ հարկավոր է մի մարդ Վանի նահանգապետ նշանակել, ես առաջարկեցի Արամին, որը և ընդունվեց»[156]: Թվում էր՝ ռուսական իշխանություններն իրականացնում են իրենց խոստումը ինքնավար Արևմտյան Հայաստանի մասին, սակայն հուլիսյան հայտնի նահանջն ամեն ինչ ի դերև է հանում:

Վանի նահանջից հետո Վարդանը հասնում է Երևան, հավաքագրում է կամավորական նոր խումբ, որին հրամանատարությունը ուղարկում է Ջուլֆա: Այստեղ էլ տեղեկանում են կամավորական խմբերի լուծարման և հրաձգային գումարտակներ կազմավորելու հրամանի մասին: Խումբը Ջուլֆայից տեղափոխվում է Մարանդ. կամավորներին առաջարկում են շարունակել ծառայությունը հրաձգային գումարտակներում, իսկ հրամանատարական կազմին խոստանում են աշխարհազորային զորքերի սպայական կոչում: Վարդանը մերժում է առաջարկությունը և գեներալ Ցյոդոր Ջեռնոզուբովին հրաժարականը ներկայացնելով՝ զորացրվում է[157]: Որոշ ժամանակ բնակվում է Երևանում, ապա 1917 թ. ընտանիքի հետ տեղափոխվում է Բաքու՝ եղբայրների մոտ:

Բաքվի պաշտպանության մասնակիցը

Բոլշևիկների իշխանության անցնելուց հետո՝ 1917 թ. նոյեմբերի 2-ին, Բաքվի բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդը հայտարարել էր խորհրդային կառավարության կողմնակից: Ընտրվել էր գործադիր կոմիտե նշանավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ: Ստեղծվել էր տագնապալից իրավիճակ. մուսավաթականները կատաղի պայքար էին սկսել նորընտիր իշխանության դեմ, իսկ նրանց աջակցում և հրահրում էին թուրքերը:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի հանձնարարությամբ Բաքվում հայկական զինուժի կազմավորումը ստանձնում է գնդապետ Ս. Եղիազարյանը: Կազմավորվում են 2-րդ պահեստային գունդը և Համազասպի հրամանատարության տակ գործող կամավորական գումարտակը[158]: Բաքվի հայոց ազգային

---

[155] *Ավելի մանրամասն տե՛ս Ա ս ր յ ա ն. 2009:*
[156] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 10, թ. 2:*
[157] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 3:*
[158] *Հայոց պատմություն. 2010, հ. 4, 165:*

խորհրդի անդամներից էր Վարդանը[159]: «Հայ զորամասերն ունեին իրենց չտաբը, որը ղեկավարում էին Վարդանը և գնդապետներ Հարությունյանն ու Ղազարյանը»[160]:

1918 թ. սեպտեմբերի 15-ին՝ օսմանյան զորքերի կողմից Բաքուն գրավելուց առաջ[161], Վարդանը ընտանիքի հետ ապաստանում է Աստրախանում, որտեղի Չեկան (Արտակարգ հանձնաժողովը). նրան հանձնարարում է պարզել տարհանված Բաքվի 26 կոմիսարների գտնվելու վայրը[162]: Վարդանը «Պոսեյդոն» շոգենավով մեկնում է Պետրովսկ (Մախաչկալա). այստեղ տեղեկանում է կոմիսարների մահապատժի մասին և անցնում է Էնզելի, որտեղից էլ վերադառնում է Բաքու, ապա՝ Երևան[163]:

Կնոջ անժամանակ մահից հետո Վարդանը ամբողջությամբ կլանվում է ընտանիքի հոգսերով և զբաղվում է հողագործությամբ: Խանասորի Վարդանը մահացել է 1943 թ. հունվարի 2-ին Մոսկվայում[164]:

Եզրակացություն

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Սարգիս Մեհրաբյանը (Վարդան, Խանասորի Վարդան) բուռն կյանք ու գործունեություն է ունեցել: 1890 թ. Ս. Մեհրաբյանը ակտիվ մասնակցություն է ունենում հայդուկային շարժմանը. 1897 թ. գլխավորում է Խանասորի նշանավոր արշավանքը, 1905–1906 թթ. հայ-թուրքական կռիվների ժամանակ՝ Արցախի ինքնապաշտպանությունը: Առաջին աշխարհամարտի տարիներին նշանակվում է հայ կամավորական V դրուժինայի, ապա՝ Արարատյան V գնդի հրամանատար: 1918 թ. մասնակցում է Բաքվի պաշտպանության մարտերին:

Ռուբեն Սահակյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական ռազմաճակատ, կամավորական շարժում, Հայոց ցեղասպանություն, ինքնապաշտպանական մարտեր, հայկական ոստիկանության պատմություն: Հեղինակ է 10 գրքի, փաստաթղթերի նյութերի ժողովածուների և շուրջ 100 հոդվածի: rubensahakyan58@gmail.com

---

[159] *Ա-Դ ո. 2019, 554:*

[160] *Ա-Դ ո. 2019, 555–556:*

[161] *Բաքվի պաշտպանության մասին ավելի մանրամասն տե՛ս Հայոց պատմություն. 2010, հ. 4, 165–178, Մ ե փ ա ն յ ա ն. 2011, 360–436:*

[162] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 5:*

[163] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 12, թ. 5:*

[164] *Խանասորա Վարդանի Հիշատակարանը, 1992, 9:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դօ. 1907, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թ.) (փաստական, վիճակագրական, լուսաբանութիւններով), Երևան, տպարան Այվազեանց ու Նազարեանց, 464 էջ:

Ա-Դո. 2013, Ռուսական ցարերը և հայկական հարցը, առաջ. և ծանոթ. պ. գ. թ. Ռ. Գասպարյանի և պ. գ. թ. Ռ. Սահակյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 161 էջ:

Ա-Դո. 2019, Հայության երկունքը, հրատ. պատր.՝ Վ. Ղազախեցյան, Ռ. Գասպարյան, Ռ. Սահակյան, Հ. Սուքիասյան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 765 էջ:

«Ալիք» (Թիֆլիս), 19. VI. 1906, 25. VI. 1906, 29. VI. 1906:

«Ալիք» (Թեհրան), 05. X. 2017:

Ասրյան Ա. 2009, Արամ Մանուկյան: Կյանքը և գործունեությունը, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 114 էջ:

«Արև» (Բաքու), 15. VI. 1916:

Գասպարյան Ռ., Սահակյան Ռ. 2015, Մար-ի նորահայտ հուշերը. – «Վէմ» (Երևան), № 3, էջ 197–233:

Գևորգյան Հ. 2010, Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը, Երևան, «Լուսակն», 526 էջ:

Խանասորա Վարդանի Հիշատակարանը. 1992 (մշակումը և առաջաբանը Ս. Վրացյանի), կազմ. և խմբ.՝ Ա. Ռ. Մարտիրոսյան, Երևան, «Հայաստան», 189 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 402, ց. 2, գ. 1, 7, 8, 10, 12, ֆ. 1086, ց. 4, գ. 435:

Հայոց պատմություն. 2010, հ. 3, գիրք I: Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես և XIX դարի վերջ): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ», 704 էջ + 24 էջ ներդիր:

Հայոց պատմություն. 2010, հ. 4, գիրք I: Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.): Խմբագրակազմ՝ Վ. Ղազախեցյան և ուրիշ., Երևան, «Զանգակ – 97», 800 էջ + 24 էջ ներդիր:

Հայոց պատմություն. 2015, հ. 3, գիրք II: Նոր ժամանակաշրջան (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Երևան, «Զանգակ», 760 էջ + 32 էջ ներդիր:

Հովսեփյան Հ. 2009, Ղարադաղի հայերը. ազգագրական և բանահյուսական ժառանգություն, հ. I, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 502 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 04. X. 1915:

Մանուկյան Ա. 2022, Նիկոլ Աղբալյանը Շուշիի 1906 թ. հայ-թուրքական կռիվների ականատես. – ՊԲՀ, № 2, էջ 284–295:

Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան. 1950, 1890–1950, Բոստոն, «Հայրենիք»-ի տպարան, 636 էջ:

Նիկոլ Դուման. 2021, Նամականի, հրատարակութեան պատրաստութիւն եւ ծանօթագրութիւններ՝ Երուանդ Փամպուքեանի, Երևան, «Լուսակն», 336 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1982, Դ. հատոր, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեան, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 383 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 1985, Բ. հատոր, Բ. տպագրութիւն (յաւելուածով), հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեանը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 395 էջ:

Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. 2007, Գ. հատոր, Բ. տպագրութիւն, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց Հրաչ Տասնապետեանը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 357 էջ:

Ձհանգիրյան Ս. Մ. 2021, Սևասար-Ղարադաղ. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Անտարես», 400 էջ:

Ռուբէն. 1952, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատոր, Լոս Անճէլըս, Գալիֆ., «Հորիզոն» տպարան, 152 էջ:

Սահակեան Ռ. 1998, Վազգէն (Տիգրան Տէրոյեան). Նահատակութեան 100 ամեակի առթիւ. – «Դրօշակ» (Երևան), 26. III – 8. IV, էջ 22–27:

Սահակյան Ռ. 2019, Թովմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը.– «Վէմ» (Երևան), № 1, էջ 264–296:

Ստեփանյան Գ. 2011, Բաքու քաղաքի հայության պատմությունը: Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 651 էջ:

Վասպուրականի վերջին հերոսական կռիւերում ընկած քաջերը. – «Դրօշակ» (Ժնև), 1897, № 11, էջ 83:

Վրացեան Ս. 1936, Դէպքերը Վասպուրական աշխարհում (1894–1896), Վարդանի յիշատակարանը. – «Հայրենիք» (Պոսթըն), 1936, № 12, էջ 58–76, 1936, № 1, էջ 85–115, № 2, էջ 124–140, № 3, էջ 100–119:

Ֆիշէր Հ. 1897, № 12, Ֆէդայիների արիւնահեղ ճակատամարտը Խանասորի լեռնադաշտում. – «Դրօշակ» (Ժնև), էջ 96–99:

Ֆիշէր Հ. 1897, № 13, Հայոց մի յաղթութիւնը (մի եւրոպացու պատմած). – «Դրօշակ» (Ժնև), էջ 106–108:

Ֆիշէր Հ. 1897, № 14, Ֆէդայիների արիւնահեղ ճակատամարտը Խանասօրի լեռնադաշտում. – «Դրօշակ» (Ժնև), էջ 112–119:

Ֆիշէր Հ. 1897, № 16, Խանասօրի կռիվը. նահանջ (ձիաւորի յիշատակարանից). – «Դրօշակ» (Ժնև), էջ 134–136:

Ֆրանգեան Ե. 1904, Պարսկաստանի քիւրդերը. – «Մուրճ» (Թիֆլիս), № 6, էջ 76–84:

Сибирский. 1916, Васпуракан (Странички из прошлого Ванского вилайета). – «Армянский вестник» (Москва), № 16, с. 2–6; № 17, с. 3–6; № 18, с. 2–5; № 19, с. 8–11; № 20, с. 4–7; № 21, с. 4–8.

САРГИС МЕГРАБЯН (ХАНАСОРИ ВАРДАН)

РУБЕН СААКЯН

Р е з ю м е

Ключевые слова: С. Меграбян, Шуши, Ван, Севкареци Сако, Ханасор, С. Заварян, Киликия, Ростом, армяно-татарские столкновения, Первая мировая война, добровольческое движение, Геноцид, А. Манукян, Ереван, Баку.

Начиная с 1890 г. молодой арцахец Саргис Меграбян, который был также известен под именем Ханасори (Ханасорский) Вардан или просто Вардан, посвящает себя армянскому освободительному движению. Получив первое боевое крещение в походе Саргиса Кукуняна, он связывает свое будущее с движением армянских гайдуков.

В 1894–1896 гг. участвует в самообороне Вана-Васпуракана, ведет работы по организации групп сопротивления в армянских населенных пунктах. Апогеем гайдукской деятельности Вардана можно считать Ханасорскую экспедицию 1897 г. против курдского племени мазриков. Вернувшись на Кавказ – в Баку, он начинает писать свои воспоминания, которые охватывают события 1894–1896 гг. Они были опубликованы в газете «Дрошак». Как представитель Шатаха участвует во II Всеобщем съезде АРФД, состоявшемся в Тифлисе в апреле-июне 1898 г.

В 1904–1905 гг. по поручению партии, вместе с Симоном Заваряном отправляется в Киликию, чтобы на месте изучить ситуацию и оценить возможности распространения там освободительного движения.

С июля 1905 г. по декабрь 1906 г., во время армяно-татарских столкновений, Вардан возглавляет самооборону Арцаха и близлежащих армянских провинций.

В 1907 г. в Вене Вардан принимает участие в IV Всеобщем съезде АРФД, где вместе с Севкареци Сако представляет отчет об армяно-татарских столкновениях. В том же году он женится. 1911–1914 годы Вардан проводит за границей, но после начала Первой мировой войны, по требованию партии, возвращается на Кавказ, где начиналось ополченское-добровольческое движение. Вардан был против этого движения, однако всеобщее воодушевление заставляет его примкнуть к нему. Ему поручается организация Пятой ополченской бригады.

1 апреля 1915 г. по решению русского командования официально создается Пятый Араратский полк, в состав которого входят вторая, третья и четвертая добровольческие бригады. Командиром полка назначается Вардан. Полк в составе русской Закаспийской казачьей бригады принимает участие в ряде боевых операций, важнейшая из которых была связана с освобождением Вана. В результате внезапного отступления русской армии из Вана в июле 1915 г. добровольческие отряды были расформированы. В Ереване Вардан приступает к созданию новой бригады, затем отправляется в Иран, сначала в Джульфу, потом в Маранд. Здесь, узнав о расформировании добровольческих дружин, Вардан уходит в отставку и вместе с семьей переселяется в Баку.

В 1918 г. как член Бакинского армянского национального совета участвует в защите армянского населения города. При падении города успевает перевезти семью в Астрахань. Местная ВЧК (Всероссийская чрезвычайная комиссия) поручает ему содействовать спасению 26 Бакинских комиссаров. Прибыв в Петровск (Махачкала), Вардан узнает о казни комиссаров, затем возвращается в Ереван. Вардан уходит из жизни 2 января 1943 г. в Москве.

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

Рубен Саакян – д. и. н., заведующий отделом новой истории Института истории НАН РА, ведущий научный сотрудник. Научные интересы: российско-турецкий фронт Первой мировой войны, добровольческое движение, Геноцид армян, самооборонительные сражения, история армянской полиции. Автор 10 книг, сборников документальных материалов и около 100 статей. rubensahakyan58@gmail.com

SARGIS MEHRABIAN (KHANASORI VARDAN)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

Key words: Sargis Mehrabian, Shushi, Van, Sevkaretsi Sako, Khanasor, Simon Zavarian, Cilicia, Rostom, Armenian-Tatar clashes, First World War, volunteer movement, genocide, Aram Manukian, Baku, Yerevan.

A young man from Artsakh, Sargis Mehrabian, also known as Khanasori Vardan (Vardan of Khanasor) or simply Vardan, devoted himself to the Armenian Liberation Movement as early as 1890. Having received the baptism of fire in the campaign headed by Sargis Kukunian, he joined the Armenian Haiduk Movement.

From 1894 to 1896, he took part in the self-defense of Van-Vaspurakan and carried out work on organizing resistance groups in Armenian settlements. The Khanasor expedition of 1897 can be considered the apogee of Vardan's Haiduk activity against the Kurdish Mazrykan tribe. Having returned to the Caucasus – Baku, he started writing his memoirs, which cover the events through 1894 to 1896. They were published in the newspaper 'Droshak'. As a representative of Shatakh, he participated in the Second General Congress of the ARF (Dashnaktsutyun), held in Tiflis from April to June of 1898.

Through 1904 to 1905, together with Simon Zavarian, on behalf of the Dashnaktsutyun party, he went to Cilicia, in order to study the situation on the spot and assess the possibilities of spreading the liberation movement there.

From July 1905 to December 1906, during the Armenian-Tatar clashes, Vardan led the self-defense of Artsakh and the nearby Armenian provinces.

In 1907, in Vienna he took part in the Fourth General Congress of the ARFD, where Vardan, together with Sevkaretsi Sako, presented a report on the Armenian-Tatar clashes. He married in the same year. From 1911 to 1914, he spent working abroad, but after the outbreak of the First World War, at the request of the party, he returned to the Caucasus, where the militia-volunteer movement began. Vardan did not approve of this movement, but its wide popularity made him join it. He was entrusted with the organization of the Fifth Militia Brigade.

On April 1, 1915, by decision of the Russian command, the Fifth Ararat Regiment was officially founded, which included the second, third and fourth volunteer brigades. Vardan was appointed commander of the regiment. As part of the Russian Transcaspian Cossack Brigade, the regiment participated in a number of military operations, the most important of which was that of the liberation of Van. As a result of the sudden retreat of the Russian army from Van in July 1915, the volunteer detachments were disbanded. In Yerevan, Vardan started creating a new brigade. Next, he went to Iran, first to Julfa, then – Marand. Here, having learned about the disbandment of volunteer squads, Vardan resigned and moved to Baku with his family.

In 1918, as a member of the Baku Armenian National Council, he participated in the defense of the Armenian population of the city. When the city fell, he managed to transport his family to Astrakhan. The local VChK (All-Russian Extraordinary Commission) instructed him to assist with the rescue of 26 Baku commissars. Arriving in Petrovsk (Makhachkala) Vardan learned about the execution of the commissars, and he decided to return to Yerevan. Vardan passed away in Moscow on January 2, 1943.

Ruben Sahakyan – Doctor of Sciences in History, Head of the Department of Modern History of the NAS RA Institute of History, Leading Researcher. Scientific interests: Russian-Turkish Front of the First World War, volunteer movement, Armenian Genocide, self-defense battles, history of the Armenian police. Author of 10 monographs, collections of documents, around 100 articles. rubensahakyan58@gmail.com

ՀՏԴ : 929:947.925 Հովհաննիսյան

Doi:10.54503/0135-0536-2022.3-30

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ*

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ Ա. Հովհաննիսյան, հայ ժողովուրդ, Ռուսաստան, Իսրայել Օրի, կողմնորոշում, պատմագրություն, գնահատական, շրջադարձ, «Դրվագներ», Պետրոս Մեծ, Անգեղակոթ, Մյունխեն, ավարտաճառ, անկախություն, Հովանավոր, Մինաս վարդապետ, ուղեցույց:

Նախաբան

Հայոց պատմության ու պատմագրության առանցքային հիմնահարցերից են Հայաստանի և հայ ժողովրդի՝ պատմականորեն ձևավորված ռուսական քաղաքական կողմնորոշման, իսկ հետագայում դրա անմիջական տրամաբանական շարունակությունը հանդիսացող Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հարցերը. հարցեր, որոնք ավելի քան երեք դար է, ինչ գրավել են հայ հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ուշադրությունը: Հայտնի է, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը մեծապես կապվում է XVII դարավերջին և XVIII դարասկզբին հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրուս (1659–1711 թթ.)՝ բարդ ու հակասական, երբեմն էլ արկածալի ղրվաղներով հարուստ կյանքի ու քաղաքական գործունեության հետ: Սակայն մինչ օրս հայ պատմագրության մեջ հստակություն չկա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում, դրան տրված քաղաքական ու պատմագիտական գնահատականին: Նկատի ունենալով, որ հայ պատմագրության մեջ Ի. Օրուս կյանքի ու գործունեության և հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցերի քննության ու լուսաբանման հարցերում խոշոր ներդրում ունի հայ պատմագրության երախտավորներից պատմաբան, կուսակցական և պետական ականավոր գործիչ, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը (1887–1972 թթ.), ուստի հարկ ենք համարել ներկայացնել հիշյալ հարցերի շուրջ նրա պատմագիտական մեկնաբանություններն ու գնահատականները, մանավանդ որ մեր ժամանակների պատմաքաղաքական իրողությունների լույսի տակ հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումների և, մասնավորապես, ռուսական կողմնորոշման խնդիրը կարծես կրկին ստանում է արդիական հրատապություն ու նշանակություն:

Ա. Հովհաննիսյանի պատմագիտական դիտարկումները հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գնահատականի հարցում

Հայ պատմագրության մեջ Ի. Օրուս և հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման ավելի հաճախ բախտորոշ ու շրջադարձային որակվող

* *Ներկայացվել է 25. VII. 2022 թ., գրախոսվել է 28. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

այդ իրադարձության խորագիտակ հետազոտող Ա. Հովհաննիսյանի՝ պատմագիտական հարուստ ժառանգության մեջ առանձնանում է հայ ազատագրական մտքի պատմությանը նվիրված նրա երկհատոր մենագրությունը[1]:

Ամենից առաջ արձանագրենք, որ վաստակաշատ պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն անցել է գիտական ու պետական-կուսակցական գործունեության երկար ճանապարհ՝ XX դարասկզբից մինչև 1970-ականի սկիզբը: Ի. Օրու և դրա հետ կապված հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցերում ակադեմիկոսի պատմագիտական ժառանգության ուսումնասիրության ընթացքում, ըստ ժամանակային շրջափուլերի, կարելի է նկատել նրա մոտեցումների, մեկնաբանությունների ու գնահատականների որոշակի փոփոխություն: Ստացվել է այնպես, որ նա ապրել ու գործել է հասարակական-քաղաքական (ֆորմացիոն) առումով, փաստորեն, երկու դարաշրջանում՝ նախախորհրդային և խորհրդային: Ընդ որում, նախախորհրդային շրջանում նա ուսանել է նաև արտասահմանում՝ Գերմանիայում, և 1913 թ. հաջողությամբ պաշտպանել դոկտորական ավարտաճառ, իսկ խորհրդային շրջանում վարել է կուսակցական-պետական՝ ընդհուպ Հայկոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղարի (1922–1927 թթ.) ամենաբարձր պաշտոն, բայց և նման պաշտոնավարությունն ամենևին էլ երաշխիք չի եղել, որ նա չենթարկվեր 1930-ական թվականների քաղաքական անհիմն բռնաճնշումներին[2]:

Ա. Հովհաննիսյանի՝ նախախորհրդային և խորհրդային շրջանի աշխատությունների բովանդակության համեմատական ուսումնասիրությունն ակներև ցույց է տալիս, որ, ի մասնավորի, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման պատմագիտական գնահատականի հարցերում, կապված ժամանակաշրջանի ու հանգամանքների գաղափարաքաղաքական փոփոխությունների, խորհրդային-կուսակցական քաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրայի) և այլնի հետ, նրա երկարամյա՝ հինգ-վեց տասնամյակների գիտահետազոտական աշխատանքի ընթացքում, հասկանալի պատճառներով, մի չարք հարցադրումների մեկնաբանություններն ու գնահատականները գիտնականի մոտ կրել են վերարժևորումներ և փոփոխություններ:

Ըստ էության, Գերմանիայում ուսանած երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանը 1913 թ. Մյունխենում պաշտպանած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դոկտորական ավարտաճառում[3] և 1921 թ. էջմիածնում լույս ընծայած «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» գրքույկում[4] մի տեսակ վերապահությամբ ու կասկածանքով է խոսում 1699 թ. Անգեղակոթի ժողովում հայ մելիքների կողմից Ի. Օրուն տրված լիազորութ-

---

[1] Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1959:

[2] Մ ա ն ո ւ կ յ ա ն. 1999, 45:

[3] Նրա գերմաներեն ավարտաճառը թարգմանվել է հայերեն և հրատարակվել «Հովհաննիսյան ինստիտուտի» կողմից (տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016):

[4] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921: Նշենք, որ քննախույզ այդ աշխատության մասին գրախոսականով բարձր կարծիք է հայտնել «սպեցիֆիկ» Դ. Անանունը՝ միաժամանակ Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության խնդրում անճնապես որևէ երաշխիք չտեսնելով ո՛չ Եվրոպայից և ո՛չ էլ Ռուսաստանից: «Ո՞վ կարող է երաշխաւորել,– գրում է Դ. Անանունը,– թէ անվերապահօրէն նետուելով ռուսական քաղաքականութեան հունը, նոր յոսախաբութիւն չպիտի սպասէ մեր օրերի մելիքներին» (Ա ն ա ն ո ւ ն. 1921/1922, 256):

յամբ՝ Պետրոս Մեծին ուղղված, այսպես կոչված, «ճերմակ թղթի» իրավունքով լրացված դիմում-նամակների օրինականության և, ընդհանրապես, հայերի ռուսական կողմնորոշման (արևելյան) մասին: Եվ միանգամայն այլ ձևակերպում, միտք ու գնահատական ենք տեսնում արդեն 1955 թ. Խորհրդային Հայաստանում գործնականում նույն թեմայով պաշտպանած դոկտորական դիսերտացիայում, որը մենագրության ձևով, ինչպես նշվեց, լույս է տեսել նրա հանրահայտ ու արժեքավոր «Դրվագների» երկհատորյակում[5]: Այդտեղ ականավոր պատմաբանը խոսում է հայ ազատագրության լեգենդում ու քաղաքական մտքում XVIII դարի սկզբին դեպի Ռուսաստան հայերի կատարած դարակազմիկ շրջադարձի մասին, որի ժամանակ ռուսական պետությունը ներկայացվում է որպես «հայ քաղաքական մտքի հուսակայան»[6]: Մեկ այլ տեղ Ա. Հովհաննիսյանը դեպի Ռուսաստան Օրու դիմադարձը համարում է շրջադարձ «հայ ազատագրական մտքի պատմության մեջ»: Նրա բնորոշմամբ՝ «դոցվում էր հին մի դար և բացվում նորը»[7]: Իրոք, եզրահանգում, ըստ Ա. Հովհաննիսյանի՝ «Օրին առաջինն էր, որ մոսկովյան իր ծրագրով դուրս բերեց հայ ազատագրական շարժումն ու հայ դիվանագիտական բանագնացությունները կրոնաղավանաբանական հին փակուղուց» և այլն[8]: Դարձյալ «Դրվագների» պատկերմամբ՝ Ի. Օրու քաղաքական դեգերումներն, ի վերջո, «արևմտաեվրոպական դիվանագիտական մոլար չավիղներից տարավ դեպի Մոսկովյան պետության շիտակ ուղիները»[9]: Այդ նույն մտքերն ու դատողություններն են ձևակերպված նորահիմն «Պատմաբանասիրական հանդեսի» առաջին իսկ համարում զետեղված Ա. Հովհաննիսյանի՝ հայերի ռուսական կողմնորոշմանը նվիրված հոդվածում, որում հեղինակը XVIII դարասկզբի Ի. Օրու քաղաքական քայլը որակում է «Հայ ժողովրդի պատմության համար անկյունաքարային» և այլն[10]:

Կրկին համադրելով ու համեմատելով Ա. Հովհաննիսյանի աշխատություններում Ի. Օրու և նրա քարտուղար ու թարգմանիչ Մինաս վարդապետ Տիգրանյանի գործունեության ու հայ աշխարհիկ և հոգևոր շրջանակների՝ դեպի Ռուսաստանը հանդես բերած դիրքորոշումների պատկերը՝ կարելի է ակներև տեսնել, թե կեղաբյա միջակայքում մտքերի, դատողությունների ու գնահատականների ինչպիսի փոփոխություն է կատարվել նրա մոտ: Այսպես, հայ-ռուսական կողմնորոշմանը նվիրված «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատությունում երիտասարդ գիտնական Ա. Հովհաննիսյանը զարգացնում է այն միտքը, որ տակավին 1720-ական թվականները «ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունն չի սնել, այլև ուղեցույց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մեկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[11]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 1699 թ. Անգեղակոթի ժողովից, Ռուսաստանի գործուն միջամտության կամ օգնության դիմելու հարցում, Ի. Օրին և նրա

---

[5] *Տե՛ս Հովհաննիսյան. 1957, 8–9, Հովհաննիսյան. 1959, 415, 632:*
[6] *Տե՛ս Հովհաննիսյան. 1957, 91:*
[7] *Հովհաննիսյան. 1959, 415:*
[8] *Հովհաննիսյան. 1959, 632:*
[9] *Հովհաննիսյան. 1957, 8:*
[10] *Հովհաննիսյան. 1958, 65:*
[11] *Հովհաննիսյան. 1921, VI:*

քարտուղար Մինաս վարդապետը հանճնարարականներ չեն ունեցել, որպեսզի բանակցություններ վարեին Ռուսաստանի բարձր ղեկավար շրջանների հետ: Նրանց մոտ բացակայել է հայ մելիքների կողմից Ռուսաստանին դիմելու վավերական որևէ փաստաթուղթ, այլ խոսքով՝ մելիքները Ռուսաստանի օգնությանը դիմելու որևէ գրություն կամ անգամ բանավոր լիազորություն չեն տվել[12]: Այնուհետև նա հավելում էր. «Հայերի այսպէս կոչված «ռուսական օրիենտացիան» չօչափելի երևույթ չէր հայ կեանքում»[13]:

Այստեղից էլ, երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանի դիտարկմամբ, մեջտեղ է գալիս Օրու և Մինաս վարդապետի կողմից օգնության հարցով ռուսական ցարին ուղղվելիք գրություններ կեղծելու, հետին թվով գրելու կամ նախկինում կազմված գրությունները խմբագրելու հանգամանքը, որոնք էլ հիմք են տալիս կասկածելու դրանց արժանահավատությանը[14]: 1910–1920-ական թվականներին Ա. Հովհաննիսյան–պատմաբանը, հենվելով բանասեր և պատմաբան Կարապետ Եզյանի (1835–1905 թթ.) կազմած սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող արժեքավոր ժողովածուի վավերագրերի վրա[15], զարգացնում է այն միտքը, որ Ռուսաստանից ոչ միայն օգնություն չէր ակնկալվում, այլ ավելին՝ «կար ըստ երևոյթին ընդդիմադիր տրամադրութիւն՝ ուղղված հայերի քաղաքական բախտը Ռուսաստանի հետ կապելու մտքին»[16]: Օրու նկարագրությամբ՝ մի վավերագրում պատմվում է, որ «ռուսներն ատիթ են ունեցել հասկացնելու հայերին Հայաստանը գրաւելու նկատմամբ իրանց ունեցած դիտաւորութիւնը, և սակայն հայ մելիքները այդ լսել անգամ չեն կամեցել՝ երկյուղ կրելով, թէ այդ նաճուման հետևանքով հարկադրուած կարող են լինել փոխել իրանց դաւանանքը, ընդունել յունական հերձուածը»: Շարունակելով այս նույն միտքը հայ մելիքների մտայնությունները նկատի առնելով՝ Օրին հավաստիացրել է. «Հայերը կզերադասէին լինել անհաւատների ստրուկները, քան ապրել հունադաւանների տիրապետութեան ներքո (ընդգծումը մերն է– Ա. Հ.)»[17]: Այդ նույն հիմնավորմամբ Ա. Հովհաննիսյանը, Կ. Եզյանի վավերագիր ժողովածուից հղում անելով, նշում է, որ հայ մելիքները չեն ցանկացել, որ Ռուսաստանը (ցարը) ազատագրի հայերին, «քանզի վտանգ կար, որ դրանով իրենց կալարտադրվեր նաև հունական (ուղղափառ) հերձվածը»[18]: Մեկ այլ տեղ դարձյալ կրկնվում է այդ նույն միտքը՝ «ինչպես Օրին ինքն է ասում՝ հենց «հունական հերձվածն» է այն ուրվականը, որը հայերին ամենաշատն է հեռացնում Ռուսաստանից»[19]:

Վերն արված չարաղրանքում ակներև է դառնում հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում պատմաբան Ա. Հովհաննիսյանի տված գնահատականների կտրուկ փոփոխությունը. այն է՝ մեր կարծիքով, XX դարասկզբներին նրա տված գնահատականներն այդ հարցում, ժամանակաշրջանի ոգուն համահունչ, պատմագիտորեն ավելի հավասարա-

[12] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 53:*
[13] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 53:*
[14] *Յ ո վ հ ա ն ն ի ս ե ա ն. 1915, 775:*
[15] *Տե՛ս* Э з о в. 1898.
[16] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 53:*
[17] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 54:*
[18] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 249:*
[19] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 323:*

կչիռ, զուսպ ու հիմնավոր են, իսկ արդեն խորհրդային-կոմունիստական ժամանակաշրջանում՝ «Դրվագներում» և հոդված-հրապարակումներում, հասկանալի պատճառներով ռուսական-խորհրդային քաղաքական կողմնորոշումը քարոզչական նպատակներով ընդգծելու համար, այն ներկայացված է որպես պատմական բեկում ու շրջադարձ:

Այդպիսով, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի աշխատություններում, ըստ պատմական շրջափուլերի՝ նախախորհրդայինից մինչև խորհրդային ժամանակաշրջան, հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում տեղի է ունեցել գնահատականների վերարժևորումներ՝ օբյեկտիվ, անաչառ ու զուսպ գնահատականներից մինչև հասկանալիորեն՝ խորհրդային գաղափարաքաղաքական կոնյունկտուրայի ազդեցությամբ, թույլ է տրվել գիտական չափավորության շրջանակներից դուրս Ռուսաստանին միացման հարցերում հաճախ միակողմանիություն, չափազանցվածություն ու գերագնահատում:

Այդ ամենից բացի, գնահատանքի է արժանի Ա. Հովհաննիսյանի՝ գիտականորեն հիմնավոր ու համոզիչ դիտարկումն այն մասին, որ XVII–XVIII դարերում հայ ազատագրության գաղափարն ունեցել է սոցիալ-քաղաքական խոր արմատներ և պատմական ավանդույթի ուժով՝ գաղափարական նախադրյալներ: Այս կապակցությամբ նա իրավացիորեն մերժում է խորհրդային պատմագիտության որոշ շրջաններում տարածում ստացած, միակողմանի և իրականում գիտականությունից հեռու քարոզչական նպատակներ հետապնդող այն խոսույթը, թե, իբր, միջնադարում հայ ազատագրական միտքը կարող էր ունեցած լինել քաղաքական մեկ կողմնորոշում և հասկանալի է՝ մի կողմնորոշումասելով՝ ո՞ր պետությունը նկատի ունեին: Նա զարգացրեց այն միտքը, որ, ինչպես հայ ժողովրդի պատմության մեջ, ընդհանրապես, նույն կերպ և հայ ազատագրական շարժումներում, բնականաբար, առկա են եղել հասարակական-քաղաքական տարբեր հոսանքներ և ուղղություններ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնկրետ հանգամանքներով, պայմաններով ու պատմական դեպքերի զարգացումներով[20]: Հենց դրանով, օրինակ, կարելի է բացատրել XVII դարավերջի և XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման վառ ներկայացուցիչներից մեկի՝ Ի. Օրոս դիրքորոշման փոփոխությունը, այն է՝ Արևմուտքից (եվրոպականից) դեպի Ռուսաստան:

Այս առնչությամբ, մեր կարծիքով, այնքան էլ փաստարկված և հիմնավոր չէ Ա. Հովհաննիսյանի՝ 1913 թ. պաշտպանած դոկտորական ավարտաճառի՝ 2016 թ. թարգմանիչ-հրատարակիչ հեղինակային խմբի կողմից վերահրատարակված գրքի նախաբանում տրված այն մեկնաբանությունը, թե այդ պաշտպանության ժամանակ Ա. Հովհաննիսյանի ձեռքին եղել են հնացած տվյալներ և ամենից առաջ՝ «մելիքների անունից Օրիի գրած նամակների հարցում», որ արդեն «Դրվագներ»-ի երկհատորյակում նոր հայտնաբերված փաստական տվյալներով նա այդ «հարցը լուծել է»: Այնինչ, Ա. Հովհաննիսյանի ավարտաճառի գերմաներենից հայերեն թարգմանած և հրատարակության պատրաստած նույն հեղինակային խումբը վերահաստատում է, որ «Դրվագների» երկհատորյակն ամբողջությամբ կառուցված է այդ ավարտաճառի չարադրանքի ու բովանդակության հիման վրա[21]: Մեր համոզմամբ ևս, երկու

[20] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 485:*

[21] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 20:*

տեքստերի համեմատությունից պարզվում է՝ թե՛ 1913 թ. դոկտորական ավարտաճառում և թե՛ խորհրդային ժամանակաշրջանում՝ 1955 թ., դոկտորականը բովանդակող «Դրվագներում» հայ-ռուսական օրիենտացիայի հարցի շուրջ օգտագործված հիմնական սկզբնաղբյուրը հայցորդ Ա. Հովհաննիսյանի համար եղել է Կ. Եզյանի՝ արդեն հիշատակածս փաստաթղթերի հարուստ ժողովածուն: Իրազեկենք՝ մինչ Կ. Եզյանի կողմից այդ ժողովածուն լույս կընծայվեր, դրանից մի քանի տարի առաջ՝ 1894 թ., առաջին անգամ Մյունխենում լույս էր տեսել Ի. Օրուն նվիրված մի ուսումնասիրություն, որի հեղինակը պրոֆ. Կարլ Ֆ. Հայգելն էր: Ի դեպ, վերջինս իր տրված դրախոսությունեզրակացությունում դրական կարծիք է հայտնել 1913 թ. հունվարին հայցորդ Ա. Հովհաննիսյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացրած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դոկտորական ավարտաճառի մասին[22]*:*

Հարցի պատմագիտական գնահատականի առումով դարձյալ կարելի է ընդգծել, որ ավարտաճառի պաշտպանության ժամանակ երիտասարդ հայցորդ Ա. Հովհաննիսյանը, անդրադառնալով XVIII դարում պետրոսյան Ռուսաստանի տարածաշրջանում հետապնդած ռազմավարական շահերին ու նպատակներին, ապակուսակցական դիրքերից, անկողմնակալ, գիտականորեն հիմնավոր ու համոզիչ ներկայացրել է հետևյալ ձևակերպումը. «Ցարին, ում ակտիվ միջամտությունը հօգուտ հայկական շարժման այժմ դարձել է կարևոր, հետաքրքրում էր ոչ թե Հայաստանի ազատագրումը (ընդգծումը մերն է – Ա. Հ.), այլ Պարսկաստանում բուն ռուսական շահախնդրությունների ոլորտի՝ Կասպից ծովի առափնյա շրջանների նվաճումը: Հայերը նրան ընդամենը պետք է օգնեին տիրանալ այդ տարածքներին»[23]*: Բերված միտքը ևս հաստատում է, որ ժամանակին երիտասարդ պատմաբանը լուրջ վերապահություն է ունեցել հայերի հանդեպ Ռուսաստանի վարած քաղաքականության հարցում, ինչը հետագայում հաստատվեց: Մեր ժամանակներում ևս, Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային-պետական քաղաքական շահերի հաշվառման առումով հայ հանրությանը խորհելու տեղիք է տալիս:*

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցը

Հայ պատմագրության մեջ տարակարծություն կա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման ստույգ ժամանակի հարցում: Ա. Հովհաննիսյանն իր՝ վաղ նախախորհրդային աշխատություններում հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում նկատել է տալիս, որ մինչև XVII դարավերջերը հայ քաղաքական մտքում «ռուսական օրիենտացիան բանուկ ուղիներ չուներ տակավին»[24]*: Ավելին, պատմաբանը հայերի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում առաջ քաշեց այն համոզումը, որ նույնիսկ «մինչև 1720 թ. ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունը չի սնել, այլև ուղեցոյց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մէկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»*[25]*:*

---

[22] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 480–481:
[23] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 427:
[24] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, V:
[25] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, VI:

Հարկ է նշել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում Ա. Հովհաննիսյանի արտահայտած այդ մտքերը ժամանակին ոչ միանշանակ է ընդունվել խորհրդային պատմագիտության առանձին հեղինակների կողմից: Այսպես, հայ-ռուսական հարաբերությունների քաջագիտակ մասնագետ Վ. Ոսկանյանը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորումը համարում է XVII դ. երկրորդ կեսը[26]: Մինչդեռ Ա. Հովհաննիսյանը դրա սկզբնավորումը կապում է երկու հայ նշանավոր այրերի՝ Իսրայել Օրու և նրա քարտուղար Մինաս վարդապետ Տիգրանյանի գործունեության հետ: Ի դեպ, վերջինս արմատներով եղել է արևմտահայ (խարբերդցի), տիրապետել է մի շարք օտար լեզուների և շատ շրջագայել:

Դեռ դոկտորական ավարտաճառում Ա. Հովհաննիսյանը հայերի ռուսական կողմնորոշման հարցում արտահայտել է հետևյալը. «Առնվազն մինչև այժմ մենք չունենք որևէ տեղեկություն այն մասին, որ հայերը մինչև Իսրայել Օրիի ժամանակներն ինչ-ինչ քաղաքական ակնկալություններ են կապել Ռուսաստանի հետ»[27]: Այդ նույն միտքը հայրենիք վերադարձած պատմաբանը պնդել է Մայր Աթոռի «Արարատ» հանդեսում 1915 թ. տպագրած մի հրապարակման մեջ: Այդտեղ նա, համադրելով հիմնականում Կ. Եզյանի ժողովածուի կասկածանք առաջացնող մի քանի երերուն փաստերը, իսկ մյուս կողմից էլ՝ հաշվի առնելով XVII դարում հայ-ռուսական հարաբերությունների պատմության սակավ ու աղքատիկ պատկերը, հավանական չի համարել, թե Հակոբ Ջուղայեցի (1655–1680 թթ.) կաթողիկոսի ժամանակ հայերը լուրջ ակնկալություն ունեցած լինեին մոսկովյան թագավորությունից, և հաղիվ թե այն ժամանակ հայերը իրենց քաղաքական բախտը կապեին բացառապես Ռուսաստանի հետ[28]: Եվ հարկ է ընդգծել, որ կես դար անց պատմաբան Ա. Հովհաննիսյանը, հանդես բերելով սկզբունքայնություն, վերը բերված դատողությունը (միտքը) փոքր այլ ձևակերպմամբ, ըստ էության, վերահաստատել է «Դրվագներում», որ իրեն հայտնի չէ, և, առհասարակ, գոյություն չունի նման պատմական փաստ, թե մինչև XVIII դ. սկիզբը հայերը իրենց հույսը դրած լինեն բացառապես Մոսկովյան պետության վրա[29]: Նշանակում է՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցում Ա. Հովհաննիսյանի տեսակետը եղել է անփոփոխ (մնայուն), իսկ ժամանակագրական առումով դա համարվում է 1720-ական թվականները, երբ, ինչպես հայտնի է, 1722 թ. Պետրոս Մեծի Կասպիական արշավանքի հետ կապված Արցախ-Սյունիքում (Կասան) սկսվեց ազատագրական պայքարը Թուրք-պարսկական բռնապետությունների դեմ:

Օրու թույլ տված փաստաթղթային կեղծիքների բացահայտումն Ա. Հովհաննիսյանի կողմից

Հիշեցնենք, որ Ի. Օրին իր առջև դրված խնդիրը՝ Ռուսաստանի օգնությամբ հաջողացնելու համար, մինչև իսկ դիմել է պատմական իրողությունների և անգամ փաստաթղթերի կեղծման: Ընդ որում, նրա անունով կազմված նա-

[26] Ոսկանյան. 1948, 76, Ոսկանյան. 1957, 46:
[27] Հովհաննիսյան. 2016, 41:
[28] Յովհաննիսեան. 1915, 776:
[29] Հովհաննիսյան. 1957, 14:

մակների և գրությունների ձեռագրային հետազոտության արդյունքում Ա. Հովհաննիսյանը հանգել է այն հետևության, որ դրանք կազմված են անվարժ, և հիմքեր կան պնդելու, որ Օրին եղել է ընդամենը «թելադրող»[30]: Այսպես՝ 1701 թ. Պետրոս Մեծին ուղղված լատիներեն մի վավերագիր գրության մեջ նշվում է, որ Հայաստանի անկախության կորստից հետո՝ իրեն նախորդած երկուսուկես դարերի ընթացքում, Աղամի որդիները հույսով սպասել են «Մեսիայի գալստին», որ «Մոսկովյան օգոստափառ տնից պիտի գա մեծ մի իշխան և իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը»[31]:

Ստույգ ասած, Օրիի այդ գրության մեջ, իսկապես, տեղ է գտել պատմական իրողությանը չհամապատասխանող կեղծիքներ, և հասկանալի է, թե ինչո՞ւ: Օրինակ, որ Ռուսաց ցարից օգնության մասին արտահայտվելիս, նա ընդամենը կարող էր հենված լինել հնից եկած և միջնադարյան Հայաստանում, հատկապես՝ խաչակրաց արշավանքների շրջանում, հավելված, խմբագրված ու տարածում գտած, հեքիաթի նմանվող լեգենդ-դուշակությունների ու տեսիլքների վրա: Այդպիսիններից էր «Դաշանց թուղթ» կոչված լեգենդը[32]. իբրև IV դարի սկզբներին Հռոմի Կոստանդինոս 1-ին Մեծ կայսրի և Հայոց Տրդատ 3-րդ Մեծ թագավորի միջև, ըստ Ագաթանգեղոս պատմիչի, դաշինք է կնքվել՝ «Դաշինս կռէր ընդ նմա»[33]: Եվ, իբր, Ս. Կոստանդինոս 1-ին Մեծ կայսրը «մարգարեական» պատգամ է տվել, թե ապագայի իր սերունդների ձեռքով է լինելու հայոց թագավորության վերականգնումը: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը «Դաշանց թուղթը» համարում էր «հերյուրանք»[34]:

Այդ նույն խմաստով դարձյալ դրույթյուն ունի IV դարին վերագրվող մեկ ուրիշ՝ սբ. Ներսես Ա Մեծ Պարթևի (353–373) «Տեսիլքն» այն մասին՝ իբրև նա մահվան մահճում կանխագուշակել էր հայկական պետականության կործանումը, և, որ հայ ժողովուրդը հռոմեացիների կամ ֆրանկների[35] օգնության, երկար տարիներ անց պիտի ազատագրվի[36]: Ի հավելում վերն ասվածի՝ դրույթյուն ունի նաև Հովհաննես Կոզեռն վարդապետի (XI դար) «Կոզեռն» կոչված[37], դարձյալ հայ եկեղեցու հայրերից Ներսես I Պարթևին վերագրվող տեսիլքի ևս մի վերամբագրված տարբերակ, որում կրկին խոսվում է եվրոպական երկրների՝ ֆրանկների, հռոմեացիների, տևտոնների և այլ «խաչակիրների» կողմից ակնկալվող, Հայաստանի ազատագրման հեքիաթի նմանվող մարգարեության մասին և այլն:

Սբ. Ներսես Մեծի գուշակային կանխատեսմամբ՝ հայերի անմիաբանության պատճառով տեղի կունենա Հայաստանի քաղաքական քայքայում, և իրար

---

[30] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 31–32:*

[31] Э з о в. 1898, док. но. 36, 75.

[32] *Վավերագիր այդ նյութն առաջին անգամ տպագրվել է 1683 թ. Վենետիկում հայերեն, կա նաև դրա իտալերեն թարգմանությունը:*

[33] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 487–488:*

[34] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 74:*

[35] *«Ֆրանկ» անվան տակ պետք է հասկանալ լատին, տևտոն (գերման), մաջար (հունգար) և սլավոն (լեհ) լեզուներով խոսող բոլոր ժողովուրդներին (տե՛ս Ա ն ա ս յ ա ն. 1961, 214):*

[36] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 58–80, նաև՝ Ա ն ա ս յ ա ն. 1961, 52:*

[37] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 45, 197:*

կփոխհաջորդեն օտար տիրապետությունները՝ ներառյալ սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների ներխուժումները, մինչև որ, ի վերջո, կազատագրվի Եվրոպայի (քրիստոնյա մի հզոր թագավորի) կողմից, ու կվերականգնվի Հայոց թագավորությունը[38]*: Ինքնին հասկանալի է, որ IV դարում ապրած Ներսես I կաթողիկոսը չէր կարող նման բան գրել՝ ակնարկելով սելջուկների և մոնղոլների մասին: Իսկ եթե Ներսես Մեծը գուշակային բնույթի ինչ-որ բան գրել է, ապա ռազմաքաղաքական հանգամանքների բերումով դրանք ստեղծագործվել ու հավելվել են միջնադարում: Հայ պատմագրության երախտավոր Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860–1932) Ներսես Մեծի «Տեսիլքը» համարում է մի չինծու մարգարեություն՝ հորինված հոգևորականության ձեռքով, թե Արևմուտքը գալու է գենքով Հայաստանն ազատագրելու և Հայոց թագավորությունը վերականգնելու*[39]*: Մեկ այլ տեղ Լեոն Ներսես Մեծ Պարթևին վերագրված սույն մարգարեությունը համարում է հայ կղերական դիվանագիտության ստեղծագործություն. իբրև Քրիստոնյա Եվրոպայից է գալու Հայաստանի ազատությունը*[40]*:*

Եվ այն բանից հետո, երբ Հայաստանի ազատագրության հարցում XVIII դարասկզբին Ի. Օրին հանգամանքների բերումով քաղաքական դիմաշրջում կատարեց Արևմուտքից դեպի Ռուսաստան, բնականաբար, նա Ներսես Մեծի «Տեսիլքի» ոգով, իր քաղաքական նպատակադրումն իրագործելու և քրիստոնյա Հայաստանի ազատագրության գործը գլուխ բերելու համար, այս անգամ մեծ և զորեղ իշխանի անվան տակ, կոնկրետացրեց ու Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի փոխարեն անհրաժեշտաբար սկսեց հասկանալ Մոսկովյան մեծ իշխանին: Բայց դժվար չէ պատկերացնել, որ Ներսես Մեծի ժամանակ խոսք չէր կարող լինել ինչ-որ ռուսական երկրի ու առավել ևս՝ պետության մասին, քանզի հետներսիսյան մի քանի դարերում ընդամենը կարող էր խոսք լինել արևելաեվրոպական-սլավոնական և այլ տափաստանային ցեղերի ու ժողովուրդների մասին, որոնց հայ հանրույթը բնավ տեղյակ էլ չի եղել: Կարելի է պնդել, որ նշված «տեսիլքներում» ռուսական իշխանի կերպարը ստեղծագործել են հետագա գրիչները, իսկ ավելի ստույգ՝ հետո նաև Ի. Օրին ու իր գրագիր քարտուղար Մինաս վարդապետը: Հասկանալի է, որ Ա. Հովհաննիսյանը, հայագիտության մշակ Հ. Անասյանը, իսկ ավելի վաղ՝ վաստակաշատ պատմաբան Լեոն քննադատաբար ու երբեմն հեգնանքով են վերաբերել նման տեսիլք-գուշակություններին:

Կ. Եզյանի հրապարակած վավերագրերի, հայ-ռուսական հարաբերությունների նվիրված ու հետագայում լույս տեսած փաստաթղթերի ժողովածուների[41] *և այլ նյութերի քննական վերլուծությունների հիման վրա Ա. Հովհաննիսյանը ևս իր վաղ աշխատություններում գալիս է այն հիմնավոր եզրահանգման, որ հայ մելիքների ռուսական կողմնորոշմանը նպաստ բերելու համար Մինաս վարդապետը իր հերթին նույնպես երբեմն դիմել է վաստաթղթե-*

[38] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 43:*

[39] *Լ ե ո. 1934, 95:*

[40] *Լ ե ո. 1934, 114:*

[41] *Տե՛ս* Армяно-русские отношения в XVII веке (сб. док.). 1953; Армяно-русские отношения в первой трети XVIII века (сб. док.). 1964, т. 2, ч. 1; Армяно-русские отношения. 1967, т. 2; Армяно-русские отношения. 1978, т. 3.

րի կեղծման. դրանք նշել է հետին թվով, կամ էլ՝ հօգուտ ռուսական օրիենտացիայի խմբագրական փոփոխություններ ու լրացումներ կատարել. «Եվ իրօք,– հավելում է Ա. Հովհաննիսյանը,– վաւերական ճանաչւած աղբյուրներից և ոչ մէկը ԺԸ (XVIII դ. – Ա. Հ.) դարի սկզբներում չի վկայում ռուսական օրիենտացիայի ժողովրդականութեան մասին: Ռուսասիրական հակումներ արտայայտողներից հայերի մէջ այդ շրջանում աչքի էր ընկնում մի մարդ միայն՝ Գանձասարի կաթողիկոս Եսային»[42]:

Խոսելով հայերի ու Հայաստանի ռուսական կողմնորոշման հարցի մասին՝ պետք է փաստել, որ բացի Ա. Հովհաննիսյանից, դրան անդրադարձել են այդ շրջանի պատմության հարցերով զբաղվող խորհրդային ու ոչ խորհրդային մեծաթիվ պատմաբաններ, հայագետներ և ուրիշ այլ հետազոտողներ: Այսպես, հայագետ Հակոբ Անասյանը նույնպես գտնում է, որ XVII դ. այն շրջանն էր, երբ դեռ նոր էր «հող պատրաստվում հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման համար և միայն 18-րդ դարի սկզբներին է, որ Ռուսաստանը դարձավ հայերի ազատագրական հույսերի հիմնական խարիսխը»[43]: Խորհրդային շրջանի մեկ ուրիշ պատմաբան Մանվել Զուլալյանը ևս գտնում է, որ երկար դեգերումներից հետո «հայ ազատագրական միտքը հանգեց միակ ճիշտ եզրակացության՝ գտնելով, որ հայ ժողովրդի ազգային ազատագրումը հնարավոր է միայն մեծ ու հզոր Ռուսաստանի ռազմական աջակցությամբ»[44]: Հասկանալ կարելի է, որ խորհրդային պատմագրությունը գաղափարաքաղաքական առումով պարտավորված էր ցույց տալ, ընդգծել հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման դերն ու անանց նշանակությունը, քանզի այլ մեկնաբանության և գնահատականի պարագայում հետևելու էին գաղափարաքաղաքական մեղադրանքներ, խորհրդային կոմունիստական ժամանակաշրջանին բնորոշ անցանկալի հետևանքներով: Իսկ արդեն հետխորհրդային շրջանում պրոֆ. Վ. Դիլոյանը, խոսելով հայ ժողովրդի կողմնորոշման հարցի մասին, ընդգծում էր. «Կողմնորոշում չի նշանակում կուրորեն որևէ հզորի գիրկը նետվել»[45]: Տվյալ դեպքում, նա նկատի ուներ Ռուսաստանը:

Ինչ վերաբերում է վաստակաշատ պատմաբան Լեոյի կարծիքը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցում Օրու խաղացած դերակատարությանը, ապա նրա տված գնահատականը եղել է միանշանակ և ժամանակային առումով անփոփոխ: Նա չի գերագնահատել Օրու գործունեության ու ռուսական կողմնորոշման հարցում խաղացած վճռական դերակատարությունը: Մի առիթով նա չեչտում է, որ Օրիով է սկսվում «ռուսապաշտական շարժումը»[46]: Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե նա հավանություն էր տալիս նման ծայրահեղ ռուսասիրական դիրքորոշմանը:

«Հայոց պատմության» անկախության շրջանի ակադեմիական բազմահատորյակում ընդհանուր գնահատական տալով Ի. Օրիի արգասավոր գործու-

---

[42] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 56: Այստեղ խոսքը ռուսական կողմնորոշման ջատագով, Գանձասարի կամ Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի (1702–1728 թթ.) մասին է:

[43] Ա ն ա ս յ ա ն. 1961, 6:

[44] Զ ո ւ լ ա լ յ ա ն. 1980, 5:

[45] Դ ի լ ո յ ա ն. 1995, 18:

[46] Լ և ո. 1984, 117:

նեումյանը, բայց չնկատելով նրա կողմից առանձին դեպքերում, հանգամանքների բերումով թույլ տված չեղում-կեղծիքներին՝ մասնավորաբար կարդում ենք. «Իսրայել Օրու հայրենանվեր գործունեությունը 17-րդ դարավերջի–18-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական ոգորումների ամենանշանավոր դրվագներից է: Իսրայել Օրին կանխաղրեց հայ ազգային-ազատագրական պայքարում ռուսական կողմնորոշման, այսինքն՝ Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի գաղափարը, մշակեց Հայաստանի ազատագրության և հայկական պետականության վերականգնման քաղաքական ծրագիրը՝ ազգային-ազատագրական պայքարում շեշտը դնելով ներքին ապստամբական լայն շարժման վրա: Հայ ժողովրդի ներքին նախաճեռնությունը պետք է լիներ սեփական պետականության վերակերտման երաշխիքը: Իսրայել Օրու արծարծած ազատագրական գաղափարներն ուղենիշ դարձան հայ ազգային հետագա պայքարի համար և անուցեցին ազատագրական միտքը»[47]:

Այլ խոսքով, Օրու անձի ու գործի հետ է կապվում Հայաստանի քաղաքական ազատագրման խնդիրը, ուստի նա է համարվում հայ ժողովրդի՝ ռուսական կողմնորոշման սկզբնավորողը: Եվ այդ գաղափարի հիմնավոր պատմագիտական ձևակերպումը տվել է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը: Փաստավավերագիր նյութերի համադրական-քննական վերլուծություններով հիման վրա Ա. Հովհաննիսյանը, մեր կարծիքով ևս, իրավացիորեն մտահանգել է այն հետևության, որ «Ռուսական օրիենտացիան խմորւեց 1720-ական թվականների չուրջը, երբ նեղած պարսից դէմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքութեան մի խոշոր հատուած հարկադրւած եղաւ փարել ռուսների օգնութեանը և նրանցից փրկութիւն յուսալ»[48]: Եվ այդ գործում, իրրև առաջին նախակարապետեր, անշուշտ, իրենց անուրանալի ղերակատարությունն ունեցան Ի. Օրին և, մասամբ, Մինաս վարդապետը: Օրու կյանքի ու գործունեության վերաբերյալ Ա. Հովհաննիսյանի «Դրվագներում» և մյուս աշխատություններում առաջ քաշված մտքերն ու դատողությունները, կարելի է ասել, հիմնականում ուղեցույց են եղել խորհրդահայ և հետխորհրդային պատմագրության համար:

Բայց, այս ամենով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ, առհասարակ, այս կամ այն երկրի կամ պետության առջև ծառացած քաղաքական կողմնորոշումներին միակ հակակշիռը և հուսալի այլընտրանքն առաջին հերթին կարող է լինել սեփական ուժերին հավատալն ու ապավինելը: Այս կապակցությամբ տեղին է մտաբերել Մեծն Գ. Նժդեհի՝ քաղաքական բանաձևի նմանվող անկոտրում միտքն այն մասին, թե «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրայ»[49]:

Օտարի հետ քաղաքական հույսեր կապելը հղի է մեծ անհաջողություններով ու աղետներով, մյուս կողմից դա առաջ է բերում թերարժեքության բարդույթի սեփական ուժերի հանդեպ: Դա նաև գցում է սեփական զինուժի մարտունակությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ՝ դրան հետևող նաև դասալքություն, բարոյահոգեբանական առումով՝ զորքի և

[47] *Հայոց պատմություն. 2010, 27:*
[48] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 63:*
[49] *Ն ժ դ ե հ. 2006, 39:*

հասարակության մեջ անկումային ու պարտվողականության տրամադրություններ և այլն: Հայոց հազարամյա պատմությունից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Դրա վառ օրինակներից են 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և մեկ դար անց՝ 2020 թ., Արցախյան ձախողված պատերազմը:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրանքը՝ կարելի է եզրակացնել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման հարցում մենք հակված ենք ավելի հիմնավոր ու համոզիչ համարել Ա. Հովհաննիսյանի՝ նախկինում (1913–1921 թթ.) արտահայտած մոտեցումն ու տեսակետը, քանզի հետագայում՝ արդեն խորհրդային-կոմունիստական վարչակարգի պայմաններում, գործել է Ռուսաստանի փրկարար դերի և հայ-ռուսական դարավոր եղբայրության մասին գաղափարաքաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրային) քարոզչամեքենան, որից հասկանալիորեն չէր կարող խույս տալ ո՛չ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը և ո՛չ էլ մեկ այլ պատմաբան-հետազոտող:

Արդի իրողությունների, հայ-ռուսական հարաբերությունների լույսի տակ Օրու և Մինաս վարդապետի՝ հայ-ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում «Դրվագներում» տրված գնահատականը, անշուշտ, չափազանցություն է: Այն չափազանցություն է ոչ միայն Թույլ տրված առանձին կեղծիքներ անելու առումով, այլև նրանով, որ, ասենք՝ ինչպես կարելի է մեկ-երկու գործչի՝ անգամ ձեռքներին որևէ օրինական ու հիմնավոր փաստաթուղթ չունենալով, վարած բանակցությունների արդյունքով գնահատել, թե տեղի ունեցավ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման շրջադարձ, և որ, իբր, դրանով նոր դարագլուխ բացվեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Նման դատողությունները պատմական իրողություններից հեռու են և չի կարելի ընդունել որպես պատմական անվերապահ ճշմարտություն: Այս կապակցությամբ տեղին ու դիպուկ է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի պատմագիտական դիտարկումն այն մասին՝ մեզանում «Դեռևս հաղթահարված չէ այն կարծրատիպը, որ մեկ կամ մի քանի քաղաքական գործչի (ասենք՝ Ի. Օրու, Եսայի կաթողիկոսի – Ա. Հ.) գործելակերպով չի կարող ձևավորվել ամբողջ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը»[50]:

Այս ամենով հանդերձ, իհարկե, չի կարելի ժխտել նաև Ռուսաստանի քաղաքական շահերով թելադրված հետաքրքրությունը մեր տարածաշրջանում, ինչը օբյեկտիվորեն կարող էր իր նպաստը բերել հայերի ու Հայաստանի ազատագրական ձգտումներին: Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերների և իրողությունների լույսի տակ վերագնահատման ու վերարժևորման կարիք ունեն պատմական բնույթի շատ իրադարձություններ, այդ թվում՝ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման գնահատականի հարցը:

Կարելի է հասկանալ, որ այն ժամանակվա պայմաններում դա անհրաժեշտություն էր՝ կապված Ռուսաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական շահերի և Հայաստանի, Արևմուտքի երկրների համեմատ, աշխարհագրորեն Ռուսաստանին ավելի մոտ լինելու հանգամանքի հետ: Այս իմաստով, թերևս, միակ հիմնավոր, անբեկանելի և գնահատանքի արժանի եզրահանգումն այն, որ XVIII դարասկզբին դեպի Անդրկովկաս ու Հայաստան Ռու-

[50] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2021, 46:*

սաստանի նվաճողական ձգտումները, նկրտումները օբյեկտիվորեն համընկնում էին թուրք-պարսկական դժնդակ բռնակալական տիրապետությունից Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման բաղձանքներին: Սակայն այն ժամանակ տակավին պարզ չէր, թե արևելահայության՝ ռուսական հովանու տակ անցնելը քաղաքական առումով ի՞նչ կարող էր տալ, ինչի՞ կարող էր հանգեցնել: Բայցևայնպես, մեկ հարյուրամյակ անց՝ արդեն XIX դ. առաջին երեսնամյակին, Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միացման հետևանքով հայ ժողովրդի մի հատվածի համար ստեղծվեց անհամեմատ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ազգային-մշակութային ու հոգևոր ապահովություն ու հետագա առաջընթացի հնարավորություններ:

Եզրակացություն

Այսպիսով, հայ պատմագիտության երախտավոր, կուսակցական ու պետական ականավոր գործիչ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի՝ երկարամյա գիտահետազոտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջափուլի՝ նախախորհրդային և խորհրդային: Նրա պատմագիտական հետազոտությունների կարևոր ոլորտներից է եղել հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի լուսաբանումը, որոնք ամփոփված են պատմաբանի բարձրարժեք մենագրություններում: Խորհրդահայ պատմագրության մեջ, հասկանալի պատճառով, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում տրվել է չափազանցված գնահատական՝ ճակատագրական, բախտորոշ, բեկումնային, շրջադարձային և այլն: Պատմագիտական գնահատման առումով գիտականորեն ավելի հավասարակշռված ու հիմնավոր է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի նախախորհրդային շրջանի աշխատություններում առաջ քաշած տեսակետն ու գնահատականը, մասնավորապես՝ Ի. Օրու և նրա գործունեության հետ կապված հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման հարցերում: Նրա ձևակերպմամբ, հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորման մասին կարելի է խոսել սկսած 1720-ական թվականներից, երբ 1722 թ. Պետրոս Մեծի ձեռնարկած Կասպիական արշավանքի պայմաններում, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ակնկալությամբ (Հուլսով) տարված, տեղի ունեցավ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարը պարսկաթուրքական բռնատիրությունների դեմ: Այդ ամենի հետ, հարկ է արձանագրել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման երեք հարյուրամյա պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ դա միանշանակ չի եղել. այն իր հետևից բերել է ոգևորության պահեր, քաղաքական վայրիվերումներ, նաև հիասթափություններ և այլն:

Անցյալի պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ արդի պատմաքաղաքական իրողությունների և Հայաստանի ու հայ ժողովրդի առջև ծառացած լուրջ մարտահրավերների պայմաններում սեփական ժողովրդի և հայրենիքի անվտանգության ապահովման ու առաջընթացի երաշխիք չեն կարող լինել արտաքին կողմնորոշումները: Սեփական ազգային ներուժն ու կարողություններն են միակ հուսալի երաշխիքը հայ ժողովրդի և իր հայրենիքի անվտանգության ապահովման ու առաջընթացի համար:

Արարատ Հակոբյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի առաջին Հանրապետություն, հայ քաղաքական կուսակցությունների, ՀՀ պետաիրավական կառուցվածքի, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի հարցեր: Հեղինակ է 18 մենագրության, 12 անհատական կամ կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 100 հոդվածի: ararathakobyan47@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոս. 1983, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 700 էջ:

Անասյան Հ. 1961, 17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 443 էջ:

Դավիթ Անանուն. Աշ. Հովհաննիսեանի «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը».– «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» (Վաղարշապատ), 1921/1922, գիրք Ա և Բ, էջ 254–257:

Դիլոյան Վ. 1995, Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ. – «Պայքար» (Բեստոն), № 5–6, էջ 13–18:

Զուլալյան Մ. 1980, Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 425 էջ:

Լեո. 1934, Խոջայական կապիտալ, Յեր., Պետհրատ, 372 էջ:

Լեո. 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 592 էջ:

Հայոց պատմություն. 2010, հ. 3, գ. 1, Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ:

Հովհաննիսյան Ա. 1921, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 89 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 524 էջ, 1959, գ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 696 էջ:

Հովհաննիսյան Ա. 1958, Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից. – ՊԲՀ, № 1, էջ 65–109:

Հովհաննիսյան Ա. 2016, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, Երևան, «Ներքին գրոց» մատենաշար, 760 էջ:

Մանուկյան Ա. 1999, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Երևան, «Առերեսում»-Անի հրատ., 264 էջ:

Մելքոնյան Ա. 2021, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, «Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար», 489 էջ:

Նժդեհ Գ. 2006, Հատընտիր, Երևան, «Ամարաս» հրատ., 708 էջ:

Յովհաննիսեան Ա. 1915, Յակոբ Զուղայեցու մի գրութիւնը Ռուս արքունիքին. – «Արարատ» (էջմիածին), թիւ Թ–Ժ (սեպտեմբեր-հոկտեմբեր), էլեկտրաշարժ տպարան մայր Աթոռոյ, էջ 775–781:

Ոսկանյան Վ. 1948, Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում.– «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 1, էջ 76–89:

Ոսկանյան Վ. 1957, Հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի հարցը մինչսովետական պատմագրության մեջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ հաս. գիտ., № 3, էջ 46–59:

Армяно-русские отношения в XVII веке (сб. док.). 1953. Ереван, Изд. АН АрмССР, 286 с.; Армяно-русские отношения в первой трети XVIII века. 1964, т. 2. Ереван, ч. 1, Изд. АН Арм ССР 396 с.; Армяно-русские отношения. 1967, т. 2. Ереван, Изд. АН АрмССР, 420 с.; Армяно-русские отношения. 1978, т. 3. Ереван, Изд. АН АрмССР, 409 с.

Эзов Г. А. 1898, Сношения Петра Великого с армянским народом. Документы. СПб, Типогр. Импер. акад. наук, 675 с.

ИСТОРИОГРАФИЧЕСКАЯ ОЦЕНКА АКАДЕМИКА АШОТА ИОАННИСЯНА ВОПРОСОВ РУССКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯНСКОГО НАРОДА

АРАРАТ АКОПЯН

Р е з ю м е

Ключевые слова: А. Иоаннисян, армянский народ, Россия, Исраэль Ори, ориентация, историография, оценка, поворот, «Отрывки», Петр Великий, Ангехакот, Мюнхен, заключительная речь, независимость, покровитель, Минас вардапет, указатель.

Многолетнюю научно-исследовательскую деятельность заслуженного историка, выдающегося партийного и государственного деятеля, академика Ашота Иоаннисяна (1887–1972 гг.) можно разделить на два этапа: досоветский и советский. Одной из важных сфер его историографических исследований было освещение вековой освободительной борьбы армянского народа, что обобщено в его высокоценных монографиях. По понятным причинам в советской армянской историографии русской ориентации армянского народа давались преувеличенные оценки: судьбоносная, переломная, поворотная и т. п. С точки зрения исторической науки более взвешанными и обоснованными являются точка зрения и оценка А. Иоаннисяна, выдвинутые в его трудах досоветского периода, в частности, относительно вопросов формирования русской ориентации армянского народа, связанных с деятельностью Исраэля Ори (1659–1711 гг.). По его формулировке, о зарождении русской ориентации можно говорить начиная с 1720-х годов. В 1722 г., в условиях предпринятого Петром Великим Каспийского похода, в надежде освободить Армению с помощью России, произошла борьба Арцаха-Сюника против персидско-турецкой деспотии. Вместе с тем, следует констатировать, что опыт и уроки трехсотлетней истории русской ориентации армянского народа показывают, что эта ориентация не была однозначной,

она несла за собой мгновения воодушевления, политические шатания, а также разочарования.

В условиях современных историко-политических реалий и вставших перед армянским народом серьезнейших вызовов, опыт и уроки прошлого показывают, что внешние ориентации не могут быть гарантией безопасности и прогресса армянского народа и его родины. Только собственный национальный потенциал и возможности могут быть надежной гарантией обеспечения безопасности и прогрессивного развития армянского народа и Армении.

Арарат Акопян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: Первая Республика Армения, армянские политические партии, государственно-правовая структура РА, турецко-армянская война 1920 г., Московский и Карсский договоры 1921 г., советские политические репрессии, армянская периодическая печать. Автор 18 монографий, 12 авторских и коллективных пособий, учебно-методического труда и более 100 статей.
ararathakobyan47@gmail.com

HISTORIOGRAPHICAL ASSESSMENT BY ACADEMICIAN ASHOT IOANNISYAN ON THE ISSUES OF THE RUSSIAN ORIENTATION OF THE ARMENIAN PEOPLE

ARARAT HAKOBYAN

Summary

Key words: A. Ioannisyan, Armenian people, Russia, Israel Ori, orientation, historiography, assessment, turning point, "Excerpts", Peter the Great, Ankeghakot, Munich, closing speech, independence, protector, Minas vardapet, indicator.

Long-term scientific and research activity of the distinguished historian and preeminent party and government leader academician Ashot Ionnisyan (1887-1972), can be divided into two stages: pre-Soviet and Soviet. One of the important areas of his historical and scientific researches was the coverage of centuries old liberation struggle of the Armenian people that is summarized in his valuable monographs. For obvious reasons, the Soviet Armenian historiography gave an exaggerated assessment to the Russian orientation of the Armenian people, such as fateful, critical, turning point, etc. From the point of view of historical science, A. Ioannisyan's opinion and assessment put forward in his works of the pre-Soviet period appear to be more balanced and reasonable, particularly, on the issues of the Russian orientation of the Armenian people in connecttion with the activities of Israel Ori (1659-1711). On his formulation, the

Փիլիսոփայական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

origin of the Russian orientation dates back to the beginning of the 1720s. In 1722, during the Caspian campaign undertaken by Peter the Great, in the hope to liberate Armenia with the help of Russia, Artsakh and Syunik started their struggle against the Persian-Turkish tyranny. At the same time, it should be stated that experience and lessons of the three hundred year history of the Russian orientation of the Armenian people suggests that this orientation was not unambiguous; it carried moments of inspiration, political wobbles as well as disappointments.

In the context of contemporary historical and political realities and the most serious challenges facing the Armenian people, the experience and lessons of the past show that foreign orientations cannot be guarantee of security and progress of the Armenia people and their homeland. Only our own national capacities and capabilities can be reliable guarantee of security and progressive development of the Armenian people and Armenia.

Ararat Hakobyan – Doctor of Historical Sciences, Proffessor, Leading Researcher at the Department of the New History of the Institute of History of NAS of RA. Scientific interests: The First Republic of Armenia, Armenian political parties, state-legal structure of RA, Turkish-Armenian war in1920, Moscow and Kars Treaties of 1921, Soviet political repressions, Armenian periodical press. Author of 18 monographs, 12 authorial and collective manuals and educational-methodical works, more than 100 articles.
ararathakobyan47@gmail.com

ՀՏԴ՝ 314.1 (479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-47

ԷԹՆԻԿ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ 1926 Թ. ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ (Խորհրդային Հայաստանի օրինակով)*

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ համամիութենական մարդահամար, հիմնական ազգություններ, ինքնության որոշարկում, պատասխանները, թուրքեր, աղբեջանցիներ, Կենտրոնական վիճակագրական վարչություն, Աղբաբա, Զանգեզուր:

Նախաբան

Հայտնի է, որ մարդահամարը պետության կամ որոշակի տարածքի բնակչության վերաբերյալ առաջնային տեղեկատվության ստացման հավաստի աղբյուր է: Այն հստակ ժամանակահատվածում տեղեկության ստացման և միասնական մեթոդով մշակման գիտականորեն կազմակերպված գործընթաց է[1], որը հնարավորություն է տալիս ճշգրիտ պատկերացում կազմել բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, էթնոլեզվական պատկերի, դրագիտության աստիճանի, զբաղվածության և այլնի մասին: Ժամանակակից իմաստով՝ մարդահամարներ անցկացվել են XVIII դարի վերջից: Դրանց անցկացումը, տվյալների ստացումը և մշակումն իրականացվել է մեծ դժվարությամբ:

Թեև գոյություն ունեն ժողովրդագրական որոշակի տվյալներ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել XIX դարում Արևելյան Հայաստանի բնակչության թվաքանակի և էթնիկ պատկերի վերաբերյալ, սակայն առաջին անգամ այդտեղ բնակչության շրջանում մարդահամար անցկացվեց 1897 թ. ռուսական համակայսերական առաջին և միակ մարդահամարի շրջանակներում: Նախորդ տասնամյակներում անցկացվել էին միայն տեղական-երկրամասային նշանակություն ունեցող հաշվառումներ, որոնք աչքի էին ընկնում թերի ու մակերեսային տեղեկատվությամբ և հեռու էին իրական մարդահամար լինելուց: Ստեղծվում էին նաև տեղեկատվական-նկարագրողական բնույթ ունեցող աշխատություններ, որոնք նպատակ ունեին հեշտացնելու կայսրության նորանվաճ երկրամասերի յուրացումը[2]: Նման հաշվառումները եթե անգամ հաղորդեին բնակչության ճշգրիտ թվական տվյալներ, սակայն մերօրյա պատկերացմամբ էթնիկ որոշարկման սկզբունքները դրանցում անհստակ էին: Ասած էթնիկ տարաբաժանումը հաճախ կատարվում էր զուտ

* *Ներկայացվել է 21. VI. 2022 թ.: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի քրիստոնյա արևելքի բաժնի ասպիրանտ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. դ. Ա. Հակոբյանը (03. IX. 2022 թ.): Ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Антонова. 2014, 21.

[2] *Տե՛ս* Евецкий. 1835, 27–51.

կրոնական և լեզվական հիմքերով: Սա հետևանք էր Ռուսական կայսրությունում տիրապետող ուղղափառ քրիստոնեական աշխարհայացքի, որից բխում էր կրոնադավանական ինքնագիտակցությամբ էթնիկ դասակարգումը: Միայն 1886 թ. Անդրկովկասի վերաբերյալ վիճակագրական տվյալներ պարունակող ամփոփագրում գոյություն ունեն առանձնացված ազգություններ (հիմնականում՝ մեծաքանակ)[3]: Սակայն 1897 թ. Համակայսերական մարդահամարի ժամանակ հաշվառված բնակչության խմբավորումը կրկին կատարվեց և՛ կրոնական, և՛ լեզվական հիմքով, բայց ոչ էթնիկ ինքնագիտակցությունը հաշվի առնելով[4]: Մարդահամարի անձնական թերթիկում մայրենի լեզվի վերաբերյալ հարցը նպատակ ուներ որոշարկել հենց էթնիկ պատկանելությունը[5]: Սակայն մայրենի լեզուն կամ կրոնն արձանագրելն ամենևին բավական չէին բնակչության էթնիկ պատկերը ճշգրիտ կամ ճշմարտանման վերարտադրելու համար: Էթնիկության որոշարկման խնդիրներ ժառանգեց նաև Խորհրդային Միությունն իր գոյության առաջին տարիներին:

Էթնիկ դասակարգման հիմնական սկզբունքները

1926 թ. Համամիութենական մարդահամարը, ըստ էության, երկրորդ խոշոր մարդահամարն էր, որն անցկացրեց խորհրդային իշխանությունը: Առաջին մարդահամարն անց էր կացվել 1920 թ. օգոստոսի 28-ի՝ Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ «Բնակչության մասնագիտական և գյուղատնտեսական մարդահամարի անցկացման մասին՝ արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառմամբ» դեկրետով[6]: Այս մարդահամարի անձնական թերթիկի 4-րդ հարցը վերաբերում էր ազգային ինքնությանը՝ «Ի՞նչ ազգության է պատկանում» և «Մայրենի լեզուն»[7]: Սակայն դեռ ընթանում էր քաղաքացիական պատերազմը, և խորհրդայնացման գործընթացն ավարտված չէր ոչ միայն Ռուսաստանում, այլև Անդրկովկասում[8]: 1923 թ., երբ արդեն կազմավորվել էր ԽՍՀՄ-ը, անցկացվեց քաղաքային մարդահամար, որն ուներ զերազանցապես բնակչության զբաղվածության պատկերի վեր-

---

[3] *Տե՛ս* Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893.

[4] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и сословий. 1905, 46–52, *նաև՝* Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6–7.

[5] *Տե՛ս* Население России в XX веке. 2000, 16; *նաև՝* Hirsch. 2005, 41.

[6] Данные Всероссийской демографической переписи населения 28 августа 1920 года. 1923, *նաև՝* Воробьев. 1938, 11.

[7] Воробьев. 1938, 14.

[8] *1920 թ. օգոստոսի դրությամբ Անդրկովկասի երեք երկրներից խորհրդայնացված էր միայն Ադրբեջանը՝ 1920 թ. ապրիլին, Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. դեկտեմբերին, իսկ Վրաստանինը՝ 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին: Ուստի Հայաստանին վերաբերվող տվյալներ այս մարդահամարից գոյություն չունեն:*

հանման ու արդյունաբերական ձեռնարկությունների հաշվառման նպատակ, և դրանում ազգային հարցը չէր շոշափվում[9]*:*

Փաստորեն, առաջին անգամ մանրամասն մշակված և հստակ մեթոդաբանություն ունեցող մարդահամար խորհրդային իշխանության կողմից անցկացվեց 1926 թ.: Ուստի Խորհրդային Հայաստանի բնակչության թվաքանակի ու ազգային կազմի մասին ամբողջական և համապարփակ առաջին տեղեկությունները ստացվել են համամիութենական հենց այս մարդահամարի արդյունքում: Հայկական ԽՍՀ բնակչության թվաքանակը կազմել է 881.290 մարդ:

Մարդահամարը մեծ հետաքրքրություն է ներկայացնում մի քանի առումներով: Դրա ժամանակ օգտագործվել են անձնական թերթիկներ, որոնց վրա հատուկ հարցով նախատեսված էր արձանագրել հաշվառվող անձի ազգությունը, մայրենի լեզուն: Արդյունքում առանձնացվել է ԽՍՀՄ-ում բնակվող չորջ 191 էթնոսներ, որոնք խոսում էին 154 լեզուներով[10]*: Առանձնացված ազգությունների նման քանակը գերազանցում է ինչպես 1897 թ. մարդահամարի արդյունքում որոշակիորեն առանձնացված ազգությունների թիվը (104 ազգություն), այնպես էլ՝ 1920 թ. (55 ազգություն), ինչը բացատրելի է մարդահամարի անցկացման գործառամարզի (արեալի) մեծացմամբ (1920 թ. մարդահամարի համեմատությամբ): 1926 թ. մարդահամարի արդյունքում առանձնացված ազգությունների թիվը մի քանի անգամ գերազանցում է նաև հաջորդ՝ 1939 թ. մարդահամարի արդյունքներին, երբ հաշվառվել էին ընդամենը 57 ազգեր (և մեկ՝ այլ), ու ընդամենը 38 լեզուներ ստացել էին մայրենի լեզվի կարգավիճակ*[11]*: Նման խոշոր տարբերությունների պատճառը ոչ միայն մարդահամարի անցկացման տարածքն էր, այլև այն սկզբունքները, որոնք ընկած էին ազգերի կամ ազգությունների տարբաժանման հիմքում:*

1926 թ. մարդահամարի համար ստեղծվել էին երեք տեսակի հաշվառման թերթիկներ՝ անձնական, ընտանեկան և կալվածաթերթերը: Իհարկե, նման մասշտաբայնության մարդահամարի անցկացումը տեղեկատեխնիկական ցածր զարգացման պայմաններում, հաշվի առնելով ողջ ԽՍՀՄ բնակչության չրջանում դրագիտության ընդհանուր ցածր մակարդակը, մեծ դժվարություն էր ներկայացնում: Իր կոչում կենտրոնական վիճակագրական վարչությունը ևս արձանագրում էր մարդահամարի անցկացման չորջ հավանական դժվարությունները. «Մարդահամարը մեզանում կատարելու դժվարություններին ավելանում են մի չարք տեղական առանձնահատկություններ, ինչպես օրինակ հարմար ճանապարհներ չունենալը, ազգաբնակչության խոշորագույն տոկոսի անգրագետ լինելը, որակյալ ցուցակագրողների պակասը և այլն»[12]*:*

Այնուհանդերձ խորհրդային իշխանությունը մարդահամարի անցկացմանը արտակարգ կարևորություն էր հաղորդում: 1926 թ. համամիութենական մար-

[9] *Տե՛ս* Всесоюзная городская перепись 1923 года – Итоги промышленной переписи. 1926, 629.

[10] Всесоюзная перепись населения 1926 года. Перечень и словарь народностей. – http://www.demoscope.ru/weekly/2014/0591/chit_zal01.php

[11] Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992, 80–81.

[12] *«Խորհրդային Հայաստան» (Երևան), 12. XII. 1926:*

դահամարի նախապատրաստման մասին արխիվային հատուկ գրությամբ հակիրճ ներկայացվում են սպասվելիք մարդահամարի նպատակներն ու խնդիրները: Այսպես՝ 1926 թ. համամիութենական մարդահամարի գլխավոր նպատակն էր՝ «բնակչության թվաքանակի հաշվառումը, նրա ազգային, սոցիալական և մասնագիտական կազմը»[13]: Բնական է, որ խորհրդային սոցիալիստական երկրում առաջնայինը բնակչության զբաղվածության և սոցիալական կազմի իրական պատկերի վերհանման խնդիրն էր, և որպես երկրորդ կարևոր խնդիր՝ գրության մեջ նշված է հետևյալը. «Մարդահամարի երկրորդ առանցքը հանդիսանում է ազգությունների, մայրենի լեզվի և գրագիտության վերաբերյալ տվյալների ստացումը: Աչք չփակելով այն դժվարությունների վրա, որոնք առաջանում են մեր ժամանակներում ազգային կազմն ուսումնասիրելիս, պետք է խոստովանել, որ մենք կստանանք նշանակալի նյութեր բնակչության էթնոգրաֆիական կազմի վերաբերյալ»[14]: Մարդահամարի միջոցով բնակչության էթնիկ պատկերի հստակեցումն անհրաժեշտ էր խորհրդային իշխանությանը՝ սեփական ազգային քաղաքականության գործնական կիրառման առաջնահերթություններ հստակեցնելու համար:

Ի տարբերություն նախորդ մարդահամարների և տեղական-երկրամասային հաշվառումների, որոնց ժամանակ ազգերի ու ազգությունների առանձնացման հիմքում դրվել են հիմնականում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կրոնը, լեզուն, ապա 1926 թ. մարդահամարն առանձնացավ՝ այս հարցին առանձնակի ուշադրություն հաղորդելով: Բնակչության էթնիկ կազմի որոշման սկզբունքները տարաճայնություններ էին առաջացրել դեռ մինչև մարդահամարը: Գոյություն ունեին երկու հիմնական մոտեցումներ. 1. տալ բնակչության էթնոգրաֆիական կամ ցեղային պատկերը, 2. արտահայտել բնակչության ազգային կազմն այնպես, ինչպես այն ձևավորվել է հեղափոխությունից հետո ազգերի ինքնորոշման արդյունքում[15]: Վերջնարդյունքում որոշվեց որպես տարբաժանման հիմք ընդունել «ժողովուրդ» («народность») ձևակերպումը, ի տարբերություն 1920 թ. և 1923 թ., երբ անձնական թերթիկներում կիրառվել է «ազգություն» («национальность») եզրույթը: Սակայն, «народность» եզրը, չնայած ռուսերենից որպես «ժողովուրդ» ուղիղ թարգմանությանը՝ պետք է հասկանալ էթնոս իմաստով: Այս առումով մարդահամարի տեսությունը պարզաբանում է. «Այժմ անձնական թերթիկում «ազգություն» եզրույթի փոխարեն կիրառվել է «ժողովուրդ» եզրույթն այն նպատակով, որ ակնկալվել է ստանալ ցեղային ծագման վերաբերյալ պատասխան, այսինքն՝ բնակչության այս կամ այն էթնիկ խմբի պատկանելության մասին»[16]: Այնուհետև կատարվում է չափազանց կարևոր մասնավորեցում. «Քանի որ մարդահամարը նպատակ է հետապնդում որոշել ցեղային (էթնոգրաֆիական) կազմը, կարիք չկա ազգությունը չփոթել կրոնով, հպատակությամբ կամ որևէ հան-

[13] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 163, ց. 2, գ. 1512, թ. 4:*

[14] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1512, թ. 4:*

[15] Воробьев. 1938, 31.

[16] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. 1928, 3.

բապետության տարածքում բնակվելու հանգամանքով: Ազգության վերաբերյալ հարցը կարող է չհամընկնել մայրենի լեզվի վերաբերյալ հարցին»[17]: Սրանով ազգության որոշարկումն ամբողջությամբ կախման մեջ էր հայտնվում հարցվողի ինքնագիտակցությունից ու ինքնընկալումից՝ անկախ կրոնից, լեզվից և տարածքային գործոններից: Նշյալ սկզբունքից կարելի է ենթադրել, որ, դիցուք, որևէ մեկը, ով ապրում էր Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս և չէր տիրապետում հայերենին, որպես մայրենի լեզվի կրող կարող էր հաշվառվել հայ, եթե գիտակցում էր իրեն իբրև այդպիսին: Նշենք նաև, որ հաջորդ՝ 1939 թ. համամիութենական մարդահամարի ժամանակ հետքայլ կատարվեց նախորդ մարդահամարում կիրառված սկզբունքներից, և կրկին որպես հիմք ընդունվեց «ազգություն» եզրույթը, որով վերարտադրվելու էր ԽՍՀՄ բնակչության ազգային և ոչ թե ցեղային կազմը[18]: Սա պայմանավորված էր մեկ այլ խնդրով ևս՝ ինչպիսին է խորհրդային իշխանության մոտեցումն ազգային հարցի և դրա լուծման վերաբերյալ: 1920-ական թվականների սկզբին ազգային հարցի բովանդակության և դրա լուծման վերաբերյալ խորհրդային իշխանության հիմնական մոտեցումների խտացում կարելի է համարել 1923 թ. Համկ(բ)Կ XII համագումարի ժամանակ Ի. Ստալինի՝ «Ազգային մոմենտները կուսակցության և պետական շինարարության մեջ» վերնագրով ելույթը[19], ըստ որի՝ ազգային հարցի լուծման բովանդակությունը ազգային շովինիզմի (վելիկոռուսական ու տեղական) բացառման մեջ է: Այս համագումարը սկիզբ դրեց արմատավորացման քաղաքականությանը[20]: Մեծամասնություն կազմող ազգությունների կողմից փոքրամասնությունների նկատմամբ ճնշումների բացառումը հնարավոր էր առաջին հերթին վերջիններիս թվական, էթնիկ-ցեղային, լեզվական հաշվառման և ճանաչման չնորհիվ, որի արտահայտումը եղավ 1926 թ. մարդահամարի ժամանակ 191 էթնոսների դրանցումը: Ըստ համագումարի տեսլականի՝ միութենական հանրապետություններում պետք է լինեն տիտղոսակիր ժողովուրդներ, նրանց կողքին՝ այլ ազգություններ, որոնք չեն ենթարկվի ազգային ճնշումների, կունենան սեփական լեզվով և մշակույթով առաջընթացի հնարավորություն: Այս ամենը տեղի կունենա «ազգերի սոցիալիստական համերաշխության» գաղափարի շրջանակներում՝ ինտերնացիոնալիզմի հաջող օրինակ ծառայելով Արևելքի և մնացյալ աշխարհի ժողովուրդների համար:

[17] Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. 1928, 3.

[18] *Տե՛ս* Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992, 14.

[19] *Ստալին. 1927, 150–186:*

[20] *Լայն իմաստով, բնիկավորման քաղաքականությունը* (коренизация) *նպատակ ուներ թուլացնել և կանխել ազգայնականության զարգացումը նախկին ոչ ռուսական գաղութացված ժողովուրդների շրջանում: Նեղ իմաստով, միութենական հանրապետություններում կամ ազգային շրջաններում «արմատավորացում» նշանակում է ոչ ռուսական, բնիկ ազգությունների ներկայացուցիչների ընդգրկում իշխանության մարմիններում ու հասարակական կյանքի համար կարևոր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, գիտությունը, արվեստը և այլն: Նախատեսվում էր դրանով իսկ հաղթահարել մշակութային հետամնացությունը որոշ շրջաններում:*

Բնակչության էթնիկ-ցեղային կազմի վերհանումն ինքնին ենթադրում էր, որ պետք է հաշվառվեն բոլոր էթնոսները սեփական ինքնանվամբ՝ էնդոէթնոնիմով, այսինքն՝ այն անվանումներով, որոնցով մատնանշում են իրենց ազգակցությունը էթնոսի մյուս անդամների հետ և արտահայտում տարբերությունն այլ էթնոսներից: Այսպիսով, այն ազգությունների հաշվառումը, որոնց ներկայացուցիչներն ունեին հստակ արտահայտված էթնիկ ինքնության ցուցիչներ և գիտակցում էին իրենց պատկանելությունը որոշակի էթնիկ խմբի կամ ազգության, կարծես թե դժվարություններ չէր հարուցում: Մեկ այլ խնդիր էր այն էթնիկ խմբերի էթնանվան գրանցումը հաշվառման ցուցակներում, որոնց տրված էթնանունները նախորդ մարդահամարների կամ հաշվառումների ժամանակ տարբեր էին եղել, կամ նրանց ներկայացուցիչները դժվարացել են հստակեցնել իրենց էթնիկ ինքնընկալումը-ինքնագիտակցությունը:

Պարսիկների, ղարափափախների և թուրքերի չփոթը Խորհրդային Հայաստանում

Վերոնշյալ խնդիրն առաջացավ նաև Խորհրդային Հայաստանում որոշակի էթնիկ խումբը «ղարափափախ»[21], «պարսիկ» կամ «թուրք» անվանելիս: Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ անհամապատասխանություն գոյություն ունի այն սկզբունքների մեջ, որ որդեգրել էր Խորհրդային իշխանությունը էթնանունների գրանցման հարցում, ու դրանք գործնականում կիրառելիս: Զավեն Կորկոտյանը, ով 1926 թ. եղել է կենտրոնական վիճակագրական վարչության մարդահամարի բաժնի պետը, «Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831–1931 թթ.)» գրքում խոսելով 1926 թ. մարդահամարի էթնիկ որոշարկման սկզբունքների մասին՝ մեկ անգամ ևս նշում է. «1926 թ. մարդահամարը, համաձայն հրահանգի, վերջակետ դրեց այդ խառնաչփոթությանը և ղեկավարվեց «ինքնորոշման» սկզբունքով: Ով իրեն ինչպես էր անվանել, այդպես էլ ցուցակագրվել էր»[22]: Սակայն Խորհրդային Հայաստանում արձանագրված պարսիկների, ղարափափախների ու թյուրքերի էթնիկ չփոթը վկայում է, որ վերոնշյալ սկզբունքը գործնականում խախտվել է՝ մանավորապես՝ թյուրքալեզու մահմեդական բնակչության հաշվառում կատարելիս: Խոսքը վերաբերում է 1926–1928 թթ. նախկին Լենինականի գավառի Աղբաբայի շրջանում (ներկայիս՝ Ամասիա), Զանգեզուրի գավառի Կապանի ու Սիսիանի շրջաններում, Մեղրիում, ինչպես նաև Երևանի գավառում և այլուր հաշվառված պարսիկներին ղարափափախ կամ թուրք անվանելու շուրջ ծավալված քննարկումներին:

Մինչ բուն չփոթին անդրադառնալն անհրաժեշտ է նշել՝ 1920-ական թվականների սկզբին խորհրդային իշխանությունն արդեն իսկ բախվել էր այն էթնիկ խմբերի դասակարգման ու անվանակոչման խնդրին, որոնք մահմեդական էին, խոսում էին թյուրքական խոսվածքով և էթնիկ որոշարկման այլ ցուցիչներ կարծես թե չունեին:

---

[21] *Թյուրքալեզու կիսաքոչվորական մահմեդական խմբերին ընդհանրաբար անվանել են «թարաքամա», «թերեքեմե» կամ «թարաքյամա»: Նրանց մի մասը սև գլխարկ դնելու պատճառով ստացել է «ղարափափախ» անվանումը:*

[22] *Կ ո ր կ ո տ յ ա ն. 1932, 22:*

Վիճակագրական տվյալներում հստակորեն առանձնացված են օսմանցի թուրքերը: Այսպես էին անվանում դեռևս Օսմանյան կայսրության շրջանից Արևելյան Հայաստանի տարածքում բնակություն հաստատած թուրքերին[23]: Թեև Օսմանյան կայսրությունն այլևս գոյություն չուներ, սակայն ավանդության ուժով թուրքական այս խմբին, ըստ ծագման վայրի կամ հպատակության, վերագրվում էր «օսմանցի» տարբերակիչը[24]: Խորհրդային Հայաստանում բնակվող մյուս թյուրքախոս մահմեդական խմբերին հավաքական էթնանուն տալու անհաջող փորձ կատարվեց 1920-ական թվականների սկզբին: Այս մասին Զ. Կորկոտյանը գրում է. «Խորհրդային շրջանի սկզբին 1923 թ. մենք գտնում ենք առանձնացված քրդերին, իսկ մյուսները՝ միացված «Թուրքո-թաթար» հասկացության տակ, որովհետև մի շարք տեղերում նրանք մասսայականորեն ղրված էին թաթար (ռուսերեն հին տերմինի ազդեցության տակ), իսկ ուրիշ շրջաններում ուղղակի անվանվել են թուրք: 1922 թ. մշակման ժամանակ, որը կատարվել է իմ ղեկավարությամբ, անհնար եղավ այդ հասկացությունները գատել, և պարսիկ, թաթար, թուրք և այլ մի շարք իսկամ ազգեր հասկացությունը վերածվեց «Թուրքո-թաթարներ» հասկացության[25]: Նման արհեստածին հասկացության տակ եթե հնարավոր է պատկերացնել թաթարներին ու թուրքերին, անգամ ղարափափախներին, սակայն ինչպե՞ս այդ հասկացության տակ պատկերացնել պարսիկներին, որոնք բոլորովին այլ քաղաքակրթական ծագում և էթնիկ բնորոշիչներ ունեն: Սա Զ. Կորկոտյանը փորձում է բացատրել հետևյալ կերպ. «Գործառնական կյանքում թուրքերի հետ հաշվվում են նաև «պարսիկ», «ղարափափախ» և «օսմանյան թուրք» ազգություններին պատկանողները՝ նկատի ունենալով նրանց մի մայրենի լեզու ունենալը (ընդգծումը մերն է– Ա. Հ.)»[26]: Մինչդեռ 1926 թ. մարդահամարի՝ ազգությունների և լեզուների վերաբերյալ տեղեկագրում հաշվառված են և՛ ղարափափախները, որպես առանձին ազգություն[27], և՛ ղարափափախերենը՝ որպես առանձին լեզու[28]: Սակայն մեկ այլ խնդիր է պարսիկ հաշվառված անձանց իրական ինքնության պարզաբանումը: Զ. Կորկոտյանի մատնանշած փաստից, թե նրանք «մի մայրենի լեզու ունեն (ընդգծումը մերն է– Ա. Հ.)», կարելի է հստակ հասկանալ, որ, որպես «պարսիկ» հաշվառվածները նույնպես խոսել են թյուրքական խոսվածքով:

Հարկ է նշել, որ Երևանի նահանգում 1886 թ. պարսիկներ չեն հիշատակվում, Զանգեզուրի ուեզդում (գավառ) հիշատակվում են այլ ազգություններ բաժնում շատ քիչ թվաքանակով, իսկ Կարսի մարզի Կարս օկրուգում (շրջանում) հաշվառված էին ընդամենը 46 պարսիկներ, և փոխարենը՝ 17.308 ղա-

[23] *Որոշ դեպքերում նրանց անվանում էին նաև տաճիկներ:*

[24] *Օսմանցի թուրքերը տարբերակված էին նաև Խորհրդային Ադրբեջանի մյուս թյուրքական էթնիկ խմբերից ինչպես 1921 թ. գյուղատնտեսական ցուցակագրման, այնպես էլ 1926 թ. Համամիութենական մարդահամարի ժամանակ: Իսկ 1937 թ. և 1939 թ. մարդահամարի ցուցակներում «օսմանցի» տարբերակիչը բացակայում է:*

[25] *Կորկոտյան. 1932, 22:*

[26] *Կորկոտյան. 1932, 22:*

[27] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 149, թ. 5:*

[28] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 149, թ. 8:*

բափափախներ[29]: Սակայն, ըստ Հայաստանի բնակչության ազգային կազմի վերաբերյալ 1926 թ. տեղեկագրի՝ Լենինականի գավառի Աղբաբա գավառամասում հաշվառված էր 6311 պարսիկ, 28 թուրք և 1498 օսմանցի թուրք[30]: Նույն տեղեկագրով 444 պարսիկ հաշվառվել է Երևանի գավառում[31], Նոր Բայազետի գավառում՝ 409[32], Մեղրու գավառում՝ 21[33], Զանգեզուրի գավառում՝ 3606[34], Լոռի-Փամբակում՝ 182[35]: Նշված շրջաններում պարսիկների նմանատիպ հաշվառումը 1927–1928 թթ. Կենտրոնական վիճակագրական վարչությունում ենթադրյալ չափի վերաբերյալ քննարկումների տեղիք տվեց:

Աղբաբայի շրջանը, որտեղ հաշվառված «պարսիկների» թիվն ամենամեծն էր, Ռուսական կայսրության շրջանում եղել է Կարսի մարզի կազմում: 1919 թ. ապրիլից 1920 թ. հոկտեմբեր եղել է Հայաստանի Հանրապետության մի մասը: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքական բանակի կողմից գրավվեց ամբողջ Կարսը: Արդյունքում, այս մարզից միակ տարածքը, որը մնաց Խորհրդային Հայաստանին, Աղբաբայի շրջանն էր՝ շուրջ 100 քառակուսի կմ տարածքով: Այստեղ հիշատակված ղարափափախները մարզում հաստատվել էին ռուսական տիրապետության հաստատումից առաջ, հիմնականում՝ Ղազախի և Բորչալուի շրջաններից, մասամբ՝ Պարսկաստանից[36]: Ընդ որում, Թիֆլիսի գավառից տեղափոխվածները սուննի մահմեդական էին, իսկ Մոսուլի շրջակա բնակավայրերից, նաև Պարսկաստանից գաղթածները՝ շիա[37]: Նրանք բնակություն էին հաստատել հենց Աղբաբայի շրջանում, Շորագյալում: Ղարափափախները կայսրության ազգությունների կազմում հիշատակվում են մինչև առաջին Համաշխարհային մարդահամարը: 1886 թ. Աղբաբայի շրջանում հաշվառվել է 6069 ղարափափախ[38]: 1897 թ. մարդահամարով Կարսի մարզում հաշվառվել է 29.879 մարդ, ովքեր խոսել են ղարափափախերեն (ղարափափախ էթնանվան հիշատակում այս մարդահամարի ժամանակ չի կատարվել, որովհետև էթնոլեզվաբանման հիմքում լեզուն և կրոնն էին դրված, ուստի ղարափափախերենով խոսողները հաշվառված էին մյուս մահմեդականների հետ)[39]: Նույն մարդահամարով Կարսի մարզում

---

[29] Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893, 37.

[30] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 2:*

[31] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 3:*

[32] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 6:*

[33] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 7:*

[34] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 8:*

[35] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 2, գ. 1505, թ. 9:*

[36] *Մ ա լ խ ա ս յ ա ն. 2015, 20:*

[37] *Ս ա ր գ ս յ ա ն. 2015, 100:*

[38] Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893, 52.

[39] *Տե՛ս* Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

պարսկերենը նշված է որպես մայրենի լեզու ընդամենը 334 մարդու համար[40]: Սակայն 1926 թ. մարդահամարի ժամանակ Աղբաբայի շրջանում բնակվող շուրջ 6311 մարդ հաշվառվել է ոչ թե որպես ղարափափախ, այլ որպես պարսիկ:

1927 թ. հոկտեմբերի 9-ին մարդահամարի հարցերի քննարկման համար հրավիրել էր խորհրդակցություն, որին մասնակցում էին կենտրոնական վիճակագրական վարչության (այսուհետ՝ կենտվիճվար) կառավարիչ Վ. Հովսեփյանը, կենտվիճվարի մարդահամարի բաժնի վարիչ Զ. Կորկոտյանը, ԿԳԿ ներկայացուցիչ Լ. Վարդապետյանը, պատմաբան-ազգագրագետներ Հ. Աճառյանը, Լեոն և Հ. Մանանդյանը: Խորհրդակցության ժամանակ քննարկվում է նաև վերոնշյալ հարցը և կայացվում հետևյալ որոշումը.

«1. Ժողովը նախ հաստատում է այն փաստը, որ Պարսկաստանից յեկածները /հին շրջաններում/, վոչ միայն պարսիկներն այլ յեվ թուրքերը ինքնըստինքյան պարսիկ են անվանում չփոթելով պարսիկ տերմին, պարսկաստանցի տերմինի հետ:

2. Հաստատվում է նաեվ այն փաստը, որ Աղբաբայի տեղական ժողովուրդից վոչ վոք ինքն իրեն ղարափափախ չի անվանել:

3. Հավանական համարել ներկա պարսիկների յեվ նախկին ղարափափախների միեվնույն ազգությունն լինելը:

4. Յեվ որ վերջնական խոսք կարելի յե ասել այն ժամանակ, յերբ տեղում թե՛ Աղբաբայում, թե՛ Զանգեզուրում յեվ թե՛ այլ տեղերում տեղի կունենա մասնահատուկ ուսումնասիրություն: Սակայն մինչև նման ուսումնասիրության անցկացումը ժողովի որոշմամբ Աղբաբայի շրջանում հաշվառված պարսիկներին համարել ղարափափախներ, իսկ Զանգեզուրի և մյուս վայրերի մեծաթիվ պարսիկներին համարել թուրք»[41]:

1928 թ. հունվարին Զ. Կորկոտյանը Անդրկովկասի կենտրոնական վիճակագրական վարչություն է ուղարկել զեկույց՝ «Ժողովուրդների էթնոգրաֆիական բաշխվածության մասին» («Об этнографическом распределении народов»), *որում նշված է՝ Աղբաբայի շրջանում պարսիկների ու ղարափափախների շուրջ ստեղծված չփոթի ուսումնասիրության համար ստեղծված և Աղբաբա ուղարկված կոմիտեն որոշեց հաշվառված 6307 պարսիկների փոխել ղարափափախների, և միայն 4 հաշվառված պարսիկի, որոնք խոսում են պարսկերեն, «թողնել» պարսիկ: Կոմիտեն նաև առաջարկել է «պարսիկ թողնել» Երևանի, Մեղրու, Դիլիջանի և Դարալագյազի պարսիկներին, որոնք հաշվառված են փոքր թվով: Զ. Կորկոտյանը նշում է. «Անձնական թերթիկում գրված է պարսիկ, կամ մարդահամարն անցկացնողը, չխորանալով պարսիկ պատասխանի մեջ, պետք է նրանց համարել թյուրք, կամ էլ լինելով Աղբեջանի թյուրք, հարցվողը սխալմամբ իրեն համարում է պարսիկ»[42]:*

[40] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

[41] Первая всеобщая перепись населения Российской Империи. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905, 6.

[42] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 6:*

Հարց է առաջանում, թե ինչպես է հնարավոր սխալմամբ չփոթել սեփական ազգությունը: Բացի այդ, պարսկերեն խոսող 4 անձանց պարսիկ համարելու հանգամանքը վկայում է, որ թեև տեսականորեն բացառվել էր միայն մայրենի լեզվով էթնիկությունի որոշումը, սակայն տվյալ պարագայում կրկին դասակարգում կատարվեց ըստ մայրենի լեզվի: Պարսկական ծագման աղոտ հիշողության պատասխանը փորձում է տալ Ե. Լալայանը Երևանի գավառի գործադիր կոմիտեի նախագահին ուղարկված իր գրության մեջ. «Ի պատասխան Ձեր գրության՝ սրանով հայտնում ենք, թե ինչ պատճառով Երևանի ազգաբնակչության մի մասը պարսիկ է անվանում իրեն, հայտնում ենք, որ ինչպես Երևանի, այնպես և նրա գավառի ազգաբնակչությունը սարդարների տիրապետության միջոցին բաղկացած է եղել թե՛ Ադրբեջանի թաթար-թուրքերից, թե՛ պարսիկներից: Ռուսաց տիրապետության միջոցին պարսիկներից շատ-շատերը՝ մանավանդ ազնվականները գաղթել են Պարսկաստան, իսկ մի մասը մնացել են երկրում: Սրանք մի դարվա ընթացքում մոռացել են բուն պարսկերեն լեզուն և խոսում են Ադրբեջանի թուրքերենով, ավանդույթներն էլ միապաղաղվել են, այս պատճառով էլ ընդհանրապես իրենց թուրք են անվանում, և միայն շատ քչերը հիշելով իրենց ծագումը պարսիկ են անվանում իրենց»[43]: Նշենք, սակայն, որ Արևելյան Հայաստանի տարածքում էթնիկ պարսիկների զանգվածային բնակության վերաբերյալ վկայություններ մենք չունենք, թեև ազգությամբ թուրք վերոնշյալ սարդարները, լինելով պարսկական պետության ներկայացուցիչներ, գուցե և պարսիկ են համարել իրենց: Գաղտնիք չէ, որ Երևանի խաները, սկսած Ամիր-Գունա խանից մինչև վերջին Հուսեյն խանը, եղել են Ղաջար թյուրքական ցեղի ներկայացուցիչներ: Վերջիններիս կողմից շատ հաճախ հովանավորվում էր մահմեդական տարրի ներհոսքը դեպի Երևան քաղաք և խանության տարածք[44]: Սակայն, ինչպես նշում է Ե. Լալայանը, Ռուսական տիրապետության հաստատումից հետո տեղի է ունեցել հակառակ գործընթաց ևս:

Զանգեզուրի շրջանում հաշվառված պարսիկների մասին Զ. Կորկոտյանն իր վերոնշյալ զեկույցում անում է հետևյալ թերի ենթադրությունը. «Զանգեզուրի և մյուս վայրերի վերաբերմամբ վոչ մի առանձին ծանոթություն չի կարելի տալ, բացի այն յենթադրությունից, վոր ՇԻԱ և ՍՅՈՒՆԻ կրոնների շփոթություն լինի»[45]: Մեկ այլ խիստ հետաքրքրական գրություն է պահպանվել՝ ուղարկված Ղափան Զ. Կորկոտյանի կողմից. «Խնդրում եմ ձեզանից տալ գրավոր բացատրություն Ղափանի մեջ մարդահամարագրված ազգությունների վերաբերյալ: Մի շարք գյուղեր ցույց են տրված պարսիկ, ուրիշները թյուրք, իսկ ավելի մեծ թվով տաճիկ: Խնդրում ենք պարզել՝ ժողովուրդն է ինքզինք այդպես կոչել, թե մարդահամարի ղեկավար աշխատակիցների կողմից հատուկ հրահանգ է տրվել»[46]: Դարձյալ անհասկանալի է, թե մարդահամարի ղեկավար աշխատակիցների կողմից ինչու և ինչ հրահանգ պետք է տրված լիներ գյուղերի էթնիկ կազմի վերաբերյալ, եթե մարդահամարի սկզբունքն էր՝ հաշվառել այնպես, ինչպես անվանում են իրենց:

---

[43] ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 32:
[44] Այս մասին մանրամասն տե՛ս Կ ա ր ա պ ե տ յ ա ն. 1987, 95–103:
[45] ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 28:
[46] ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 28:

Հարցվածների շրջանում պետք է լիներ գոնե մեկ հատկանիշ, որի վրա հենվելով մարդահամարագրողը՝ ազգությյան բաժնում կլրացներ «պարսիկ» անվանումը: Այդպիսի հատկանիշ կարող էր լինել ղարափափախների մի մասի չիա ուղղության մահմեդական լինելը: 1898 թ. Կարսի մարզի վերաբերյալ տարեկան ակնարկում Աղբաբայի գավառամասում հստակորեն առանձնացված են 5013 չիա ղարափափախ և 5424 սուննի ղարափափախ[47]: Նույն տարեգրքում նշված է նաև հետագայում Խորհրդային Հայաստանի կազմում մնացած Աղբաբայի շրջանի որոշ գյուղերի կրոնական կազմը. օրինակ՝ Կարաչանաթիա (Արեգնադեմ)՝ 449 չիա ղարափափախ, Բալըղլը (Ձորակերտ)՝ 237 սունի, Իլիչ (Երիզակ)՝ 414 չիա, Թափաքյոյ (Բերդաչեն)՝ 421 սունի, 56 չիա, Դյուզքենդ (Ալվար)՝ 502 չիա, Ղարանամազ (Աղվորիկ)՝ 281 չիա, 116 սունի, Իլանլը (Արավետ)՝ 216 չիա, Գելլի (Արդենիս)՝ 231 սունի, 40 չիա, Խոզքենդ (Գառնառիճ)՝ 340 չիա, Օքսուզ (Դարիկ)՝ 109 չիա, Գյուլլի (Եղնաջուր)՝ 1222 չիա, Կարաբուլաղ (Շաղիկ)՝ 323 սունի[48] և այլն:

Մեկ այլ խնդիր է ղարափափախների գրավոր լեզվի հարցը: Վկայություններն այս մասին չափազանց սուղ են: Լինելով կիսագրչվոր անաննապահ՝ ղարափափախների գրավոր մշակույթի մասին հնարավոր է դատել միայն պահպանված տապանաքարերի վրա առկա գրություններից, որոնք արաբատառ օսմաներեն են: Հավանական է նաև, որ էթնիկ-ցեղային պատկանելության վերաբերյալ հարցի խիստ մասնավորեցումը, հնարավոր է, հարցվողի մոտ կապվել է տարածքային ծագման հետ, և Պարսկաստանը նշվել է որպես բնակության նախկին վայր, ելակետ, այստեղից էլ ծագել է «պարսիկ» պատասխանը: Իսկ այն վայրերում, որտեղ պարսիկներ հաշվառված են եղել համեմատաբար փոքր թվով, հնարավոր է, քաղաքացիության և էթնիկության չփոթի արդյունքում ՀԽՍՀ-ում բնակվող Պարսկաստանի քաղաքացիներն իրենց անվանել են պարսիկներ:

Այնուհանդերձ, փաստ է, որ չնայած մարդահամարի հռչակած ինքնորոշման սկզբունքներին՝ հիմնված բացառապես էթնիկ ինքնագիտակցության վրա, որոշակի միջամտություններ և «չտկումներ» տեղի ունեցել են: 1926 թ. մարդահամարի տվյալների երկրորդ մշակման ժամանակ 11.354 հաշվառված պարսիկներից միայն 1078-ն է թողնվել պարսիկ, որոնցից 909-ը խոսում էին պարսկերեն[49]: Մյուսները դասվել են թյուրքերի շարքը՝ արհեստականորեն ավելացնելով վերջիններիս թվաքանակը: Հետևաբար, ազգությունների դասակարգման ցանկում պարսիկները նշվել են «այլ» ազգությունների շարքում: Սակայն Աղբաբայի շրջանում մարդահամարագրված 6309 ղարափափախներին վիճակված չէր երկար «ղարափափախ մնալ»:

Գաղտնիք չէ, որ 1930-ական թվականներին Խորհրդային Ադրբեջանում տիտղոսակիր ժողովրդի էթնանվան որոնումները հանգեցրին «ադրբեջանցի» անվան ընդունմանը ստալինյան սահմանադրությամբ, նաև՝ 1939 թ. մարդահամարով: Սակայն ադրբեջանցի անվանումը տրվեց ոչ միայն Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական բնակչությանը, այլ նաև Խորհրդա-

[47] *Տե՛ս* Обзор Карсской области за 1898 год. 1899, Ведомость, Лит. А.

[48] Обзор Карсской области за 1898 год. 1899, Ведомость, Лит. А.

[49] *ՀԱԱ, ֆ. 163, ց. 3, գ. 151, թ. 19:*

յին Հայաստանում, Խորհրդային Վրաստնում բնակվող բազմաթիվ թյուրքալեզու էթնոսների, որոնք Ադրբեջան պետության հետ աղերս չունեին: Այս մասին նշված է նաև 1939 թ. մարդահամարի հիմնական արդյունքներն ամփոփոխ հրատարակությունների մեկնաբանություններում. «1939 թ. ադրբեջանցիների թվին են դասվել ԽՍՀՄ-ում բնակվող չատ թուրքեր (մեսխեթինցի, բաթումցի, սուխումցի): Դա կապված էր նրա հետ, որ 1926 թ. հետո անցկացվել է թուրք բնակչության «ադրբեջանականացման» քաղաքականություն: 1930-ական թթ. անցկացված անձնագրավորման ժամանակ չատ թուրքեր, գրանցվել են որպես ադրբեջանցիներ: Բացի այդ, ասիմիլիացիայի հետևանքով ադրբեջանական էթնոսի մեջ են մտել ղարաչափախները, որոնք 1926 թ. հաշվառվել էին առանձին 6 հազար մարդ»[50]: Հիշենք, որ ղարաչափախները բնակվում էին ՀԽՍՀ ծայր հյուսիս-արևմուտքում, ուստի չէին գտնվում Խորհրդային Ադրբեջանի հետ ուղղակի սահմանային չփման գոտում, և, որպես ղարաչափախ, իրենց ընկալում ու հիշատակվում են ղեռևս նախորդ դարի 30-ական թվականներից: Իսկ Խորհրդային Ադրբեջանի տարածքում բնակվող ղարաչափախներ չեն հիշատակվում ո՛չ 1921 թ. Ադրբեջանի գյուղատնտեսական մարդահամարի ցուցակներում[51], ո՛չ 1926 թ. Համամիութենական մարդահամարի: Եթե Խորհրդային Ադրբեջանի տարածքում բնակվող մահմեդական ժողովուրդների շրջանում տեսականորեն հնարավոր էր պատկերացնել ասիմիլիացիոն գործընթաց, ապա «ադրբեջանցիների» և ղարաչափախների միջև նման տարածքային բաժանվածության պայմաններում վերոնշյալ «ասիմիլիացիան» պարզապես անհնար էր: Նշենք նաև, որ ժամանակակից ադրբեջանական հրապարակումներում ղարաչափախները համարվում են ադրբեջանցի էթնոսի մի ճյուղավորում[52], իսկ թուրքական գրականության մեջ նման մեկնաբանություն չկա, ղարաչափախները համարվում են թուրքական ցեղախումբ[53]:

Եզրակացություն

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ ազգային հարցի շուրջ ունեցած սկզբունքներով 1926 թ. Համամիութենական առաջին մարդահամարը տարբերվում էր ինչպես նախորդած, այնպես էլ՝ հաջորդող բոլոր մարդահամարներից: Մարդահամարի որդեգրած էթնիկ ինքնագիտակցության սկզբունքի կիրառումը որքան էլ առաջադեմ, այնուամենայնիվ, բավականին խնդրահարույց էր: Այն համապատասխանում էր ազգային հարցի և դրա լուծման շուրջ տվյալ պահին ԽՍՀՄ ղեկավարության դիրքորոշմանը: Նման համապատասխանություն նկատում ենք նաև հաջորդ՝ 1939 թ. մարդահամարի ժամանակ, երբ գրանցված ազգությունների (և ոչ թե՝ էթնոսների) թվաքանակը գրեթե չորս անգամ նվազել էր՝ ասիմիլիացիայի կեղծ պատճառաբանմամբ հաշվառումից դուրս թողնելով ընդամենը 13 տարի առաջ գոյություն ունեցող բազմաթիվ ժողովուրդների: Ուստի 1926 թ. մարդահամարի ժամանակ կիրառված էթնիկ-ցեղային տարբաժանման սկզբունքի արդյունքում առանձին

[50] Всесоюзная перепись населения 1939 г. Основные итоги. 1992, 246.

[51] «Известия Аз. ЦСУ» (Баку), 1922, № 2, 40.

[52] Bayramov. 2002, 34; *նաև՝* Valehoğlu. 2005, 4.

[53] *Տե՛ս* Kemaloğlu. 2012, 56.

էթնիկ խմբերի հաշվառումը միայն խորացնում է 1939 թ. մարդահամարի էթնիկ համահարթեցնող բնույթը:

Ասվածի վառ օրինակն է վերը քննարկված պարսիկների, ղարափափախնե-րի, թուրքերի չփոթը Խորհրդային Հայաստանում, երբ իրեն որպես պարսիկ ընկալող (ինչով էլ, որ դա պայմանավորված լիներ) և մարդահամարի ժամա-նակ այդ ընկալումն ամրագրած էթնիկ խումբը վերանվանվեց ղարափափախ, իսկ հաջորդ տասնամյակի վերջում՝ ադրբեջանցի՝ որևէ «ասիմիլիացիոն» աղերս չունենալով Խորհրդային Ադրբեջանի հետ, որտեղ 1920–1930-ական թվականներին պետականորեն ընթանում էր ազգակերտման գործընթաց:

Անուշ Հարությունյան – Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց պատմություն, Ադրբեջանի էթնո-քաղաքական պատմություն, խորհրդային ազգային քաղաքականություն: Հեղինակ է 1 հոդվածի:
anushharutyunyan97@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Խորհրդային Հայաստան» (Երևան), 12. XII. 1926:

Կարապետյան Մ. Մ. 1987, Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ տեղաշարժերը Երևանում 1724– 1800 թվականներին. – ՊԲՀ, № 3, էջ 95– 103:

Կորկոտյան Զ. 1932, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, Երևան, Պետհրատ, 188 էջ:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 163, g. 2, գ. 151, թ. 6– 32, g. 2, գ. 1505, թ. 2– 9, g. 2, գ. 1512, թ. 4, g. 3, գ. 149, թ. 5– 8:

Մալխասյան Մ. 2015, Կարսի մարզի բնակչությունը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 80 էջ:

Սարգսյան Հ. 2015, Կարսի մարզի բնակչության թվի և էթնիկ կազմի շարժընթացը 1878 – 1914 թթ.– «Հայագիտության հարցեր» (Երևան), № 3, էջ 97–113:

Ստալին Ի. 1927, Ազգային հարց: Հոդվածներ, ճառեր, Մոսկվա, ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչություն, 264 էջ:

Антонова Н. Л. 2014, Демография. Екатеринбург, Изд. Уральского университета, 154 с.

Воробьев Н. 1938, Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. М., «Союзоргучет», 103 с.

Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г. Краткие сводки. Вып. IV. Народность и родной язык населения. М., ЦСУ, 138 с.

Всесоюзная городская перепись 1923 года – Итоги промышленной переписи. 1926, т. XVII, вып. 1. М., ЦСУ, 629 с.

Всесоюзная перепись населения 1926 года. Перечень и словарь народностей. – http://www.demoscope.ru/weekly/2014/0591/chit_zal01.php

Всесоюзная перепись населения 1939 г.: Основные итоги. 1992. М., «Наука», 254 с.

Данные Всероссийской демографической переписи населения 28 августа 1920 года. Псковская губерния**.** Вып. 2. Национальность, пол, грамотность. 1923. Псков, «Псковский набат», 58 с.

Евецкий О. 1835, Статистическое описание Закавказского края. СПб., Тип. Штаба Отдельного корпуса внутренней стражи, 308 с.

«Известия Аз. ЦСУ» (Баку), 1922, № 2.

Население России в XX веке. 2000, т. I. М., РОССПЭН, 463 с.

Обзор Карсской области за 1898 год. 1899, Карс, Тип. канцелярии военного губернатора Карсской области, 51 с. (103 табл.).

Первая всеобщая перепись населения Российской Империи. Вып. 6. Наличное население обоего пола по уездам и городам, с указанием преобладающих вероисповеданий и сословий. 1905. СПб., Изд. Центр. Стат. Комитетом Мин-ва внутр. дел, 60 с.

Первая всеобщая перепись населения Российской Империи. Вып. 7. Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков. 1905. СПб., Изд. Центр. Стат. Комитетом Мин-ва внутр. дел, 38 с.

Свод статистических данных о населении Закавказскаго края, извлеченных из посемейных списков 1886 г. 1893. Тифлис, Типография И. Мартиросянца, 52 с.

Hirsch F. 2005, Empire of nations: ethnographic knowledge and the making of Soviet Union. New York, Cornell University press, 367 p.

Kemaloğlu M. 2012, Terekeme - karapapak türkleri yerleşim alanlari, Uluslararası Türkçe Edebiyat Kültür Eğitim Dergisi Sayı 1/3, 55-81 s.

Bayramov İ. 2002, Qərbi Azərbaycanin türk mənşəli toponimləri, Bakı, “Elm” neşriyattı, 696 s.

Valehoğlu F. 2005, Qarapapaqlar və onların XIX əsr hərb tarixi, Bakı, Sada, 264 s.

ПРИНЦИПЫ КЛАССИФИКАЦИИ НАРОДНОСТЕЙ ПО ДАННЫМ ПЕРВОЙ ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ НАСЕЛЕНИЯ 1926 г. (На примере Советской Армении)

АНУШ АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: всесоюзная перепись, основные народности, определение идентичности, персы, карапапахи, турки, азербайджанцы, Центральное статистическое управление, Агбаба, Зангезур.

Перепись является важным источником точной информации о населении государства. Первая всесоюзная перепись населения в СССР была проведена в 1926 году. По принципам определения национального состава населения эта перепись отличалась как от предыдущей, так и от последующих переписей, руководствуясь исключительно принципом самоопределения. В результате по всему СССР была зарегистрирована 191 народность. Однако трудности возникали также при регистрации некоторых этнических групп. Например, более 6000 человек, проживавших в Агбабском районе северо-западной части Советской Армении, идентировали себя как персы, но дебаты в Центральном статистическом управлении привели к переименованию их в карапапахи. А прописанные в других местах персы причислялись к тюркам в том случае, когда теория переписи запретила всякое переделывание показаний опрашиваемых. Вскоре после этого, в

1939 году, карапапахи считались азербайджанцами, хотя они совершенно не были связаны с азербайджанским государством, где в 1920–30 гг. активно проводился процесс национального строительства.

Ануш Арутюнян – аспирантка отдела христианского Востока Института востоковедения НАН РА, научный сотрудник отдела новой и новейшей истории Музея истории Армении. Научные интересы: история Армении, этнополитическая история Азербайджана, советская национальная политика. Автор 1 статьи. anushharutyunyan97@mail.ru

PRINCIPLES FOR DETERMINING NATIONALITY ACCORDING TO THE FIRST ALL-UNION POPULATION CENSUS OF 1926
(On the example of the Soviet Armenia)

ANUSH HARUTYUNYAN

Summary

Key words: All-Union census, main nationalities, determination of ethnic identity, the Persians, the Karapapakhs, the Turks, the Azerbaijani, Central Statistical Office, Agbaba, Zangezur.

The census is an important source of accurate information about the population of a state. The first All-Union census in the USSR was held in 1926. This census differed from both previous and subsequent censuses in the principles used to determine the national composition of the population guided solely by the principle of self-determination. As a result, 191 nationalities were registered throughout the USSR. However, difficulties have also arisen in registering some ethnic groups. For example, over 6000 people living in the Aghbaba region of the northwestern part of the Soviet Armenia identified themselves as Persians, but debates in the Central Statistical Department led to their renaming as Karapapakhs. The Persians registered elsewhere were counted as Turks in tha case when census theory forbade any redistribution of interviewers testimony. Shortly after that, in 1939, the Karapapakhs were considered to be Azerbaijani though they were not at all connected with the state of Azerbaijan where from 1920 to 1930 the process of national building was actively carried out.

Anush Harutyunyan – Ph.D. candidate of the Department of Christian Oriental Studies at the Institute of Oriental Studies, Researcher of the Departament of the New and Modern History of the History Museum of Armenia. Scientific interests: History of Armenia, ethno-political history of Azerbaijan, soviet national policy. Author of one article. anushharutyunyan97@mail.ru

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

ՀՏԴ : 281.6(091) + 32(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-62

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(IX դարի առաջին կես)*

ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայոց եկեղեցի, արաբ կառավարիչներ, վանք, կրոնական խստացումներ, Բագրատուն Բագրատունի, Դավիթ Բ Կակաղեցի, Հովհաննես Դ Ովայեցի, Մութավաքքիլ, կրոնափոխություն, ապստամբություն, Թոնդրակյան շարժում, նահատակություն:

Նախաբան

Հայերի՝ 774–775 թթ. հակաարաբական հուժկու ապստամբության պարտությունը նոր իրողություններ առաջացրեց Հայաստանում: VIII դ. վերջին ծանր հարված ստացան երկրի ինքնավարությունը մարմնավորող երկու հաստիտուտները՝ նախարարական համակարգը և Հայոց եկեղեցին: Քաղաքական բեմը լքեցին պետականակիր նախարարական տոհմերը՝ Մամիկոնյաններն ու Կամսարականները, որոնք միևնույն ժամանակ եկեղեցու ջերմ աջակիցներն էին: Այս ծանր ժամանակաշրջանում, երբ հայ իշխանների մի մասը երկրից հեռացել էր, իսկ «մնացեալք ղօղեալք ղաղարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա»[1], երբ եկեղեցին կորցնում էր իր հարստություններն ու ազդեցությունը, և արտագաղթող հայերի փոխարեն երկրում բնակություն էին հաստատում մուսուլման արաբները, Հայաստանի առաջնորդության ղրոշը վերցնում են Բագրատունիները: Վերականգնված հայոց սպարապետությունը նորից անցնում է Բագրատունիներին, որոնք, մեծացնելով իրենց ազդեցությունն Արմինիայի հայկական շրջաններում, հաստատվում են նաև Վիրքում[2]: Սպարապետ է դառնում 775 թ. ապստամբության ժամանակ զոհված Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Մսակերը (802–826)[3], ով իր իշխանությունը հաստատել էր Հայաստանի հյուսիսարևմտյան շրջաններում՝ Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում: Աշոտ Մսակերը, ով հայ իշխաններից ամենաազդեցիկը, քաջն ու ժողովրդականն էր, հարվածներ է հասցնում թուլացած նախարարական տների հողերին տիրացած արաբական ցեղերին և նրանցից

---

* *Ներկայացվել է 21. VI. 2022 թ., գրախոսվել է 23. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Դրասխանակերտցի. 2010, 426: Ասպարեզից հեռացան ու գրեթե վերացան Ամատունի, Ռշտունի, Անձևացի, Գնունի և այլ իշխանական տներ:*

[2] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 81–82, Մատենադարան. 1912, 336, 1913, 287–290, 469–470, Ադոնց. 2006, 478–514:*

[3] Юзбашян. 1988, 54. *Համմս. Եղիազարյան. 2011, 28: Մատենադրության մեջ «Մսակեր» հորջորջման հեղինակն Ասողիկն է (Ասողիկ. 2010, 707): Նա կրել է նաև «Քաջ» մականունը:*

ետ դրված կալվածքներում հավաքում է այս ու այն կողմ ցրված հայերին: Վարդան պատմիչը հիշում է նման մի դեպք՝ կապված Գնունիների հետ, որոնք մեծ նեղություններ էին կրում Աղիովիտում հաստատված արաբական Ուխմանիկ ցեղից և արաբ իշխանություններից: 790-ական թվականներին նրանք խնդրում են Աշոտ Մսակերին «թափել գնոսա յիսմայելացւոցն»: Վերջինս ընդառաջում է նրանց և «երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախիւն իւրեանց, տանի բնակեցուցանէ ի Տայս»[4]:

Կառուցվածքային փոփոխությունները Հայոց եկեղեցու Համակարգում

IX դ. սկզբներին հետզհետե կանգ է առնում Հայաստանի անկման ընթացքը, և սկիզբ դրվում երկրի ներքին ինքնավարության վերականգնմանը: Նախարարական համակարգի հետ կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվում նաև Հայոց եկեղեցու ավատատիրական հենքը: Նախկինում՝ IV–VIII դարերում, Հայաստանի ամեն մի եպիսկոպոսական վիճակ ուներ իր որոշակի հողային տարածությունները, որոնք կառավարվում էին գյուղական հոգևորականության կողմից: Արդեն VIII դարավերջերից ու IX դ. եպիսկոպոսական վիճակներին պատկանող և գյուղական հոգևորականությանը ենթակա հողերն աստիճանաբար անցնում են օրեցօր հզորացող վանքերին: Դեռևս վաղ միջնադարից գոյություն ունեցող վանքերի կողքին ձևավորվում են նորերը, որոնք շրջակա խոպան հողերի ու անտառային մարգագետինների մշակման ու յուրացման հաշվին մեծ չափով ընդլայնում են իրենց տարածությունները[5]: Նշված փոփոխությունները կառուցվածքային նոր տեսք են տալիս եկեղեցու տնտեսական հիմքը կազմող ավատական հողատիրությանը: IX դ. արաբ պատմիչ Բալազուրին հիշում է Սյունիքում գտնվող մի վանքի մասին, որը կոչվում էր «Բաժակների (սկիհ) վանք (Դայր ալ-Ակդահ), և Հայաստանի քրիստոնյաներն այն շատ էին մեծարում ու պարգևներ ընծայում»[6]: Գեղարքունիքում հայտնի էր Մաքենյաց վանքը, որը պատմիչը կոչում է «զմեծ մայրաքաղաքն Մաքենացւոց»[7]: Նույն ժամանակաշրջանում է հիմնադրվում և նշանակալի զարգացում ապրում միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգևոր-մշակութային կենտրոն Սևանա վանքը: Աղբակում հայտնի էին Սուրբ Խաչ ու Վարագա վանքերը[8]: Նվիրատվությունների և գնումների միջոցով տարբեր վայրերում առաջացած վանքերը ձեռք էին բերում բազմաթիվ գյուղեր, կալվածքներ ու հասութաբեր այլ հաստատություններ, որոնք դառնում էին նրանց եկամտի հիմնական աղբյուրները: Վանքերը հատուկ ուշադրություն էին դարձնում իրենց տնտեսության բարեկարգմանը, ոռոգելի էին դարձնում և մշակում անջրդի հողերը: Ուշագրավ վկայություն է պահպանվել Թալինի Մայր տաճարի ՄԼԲ (783) թվականի վիմագիր արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում է Ուխտատուր վանականի՝ ջուր բերելու (ջրանցք

[4] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 77:*
[5] *Գրիգորյան. 1973, 23:*
[6] *Բալազուրի. 2005, 282:*
[7] *Կաղանկատուացի. 1983, 327:*
[8] *Արծրունի եւ Անանուն. 2010, 215, 226, 228:*

անցկացնելու) մասին[9]: Անհրաժեշտ ենթակառուցվածքներով համալրվող վանքերում կազմակերպվում էին եկեղեցական միաբանություններ, որոնք VIII–IX դդ. դառնում են հայ հոգևորական դասի ձևավորման հիմք: Այդ շրջանից սկսած՝ հոգևորականն այլևս չէր կարող թողնել եկեղեցական ծառայությունը՝ զինվորական ասպարեզ մտնելու համար: Շեշտվում է նաև կուսակրոն հոգևորականության դերը[10]:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայոց եկեղեցին, պարբերաբար ենթարկվելով իսլամի գրոհներին, միաժամանակ ենթակա է եղել հուդեների ճնշումներին, որոնք պարտադրում էին ընդունել Քաղկեդոնի եկեղեցական ժողովի որոշումները: Այս երկու հոսանքներին ընդդեմ, դավանաբանական վեճերի պայմաններում VIII դ. կեսերից եկեղեցին ամրապնդում է իր տեսական հիմքերը, ստեղծում ինքնուրույն օրենսդրություն: Հայոց եկեղեցու ծիսադավանական և աստվածաբանական սկզբունքների հստակ սահմանումը նպաստում է ազգային ու կրոնական ինքնության գիտակցման զարգացմանը: «VIII դարից ի վեր, հայկական պաշտոնական ծիսական գրքերում, հիրավի, սկիզբ է առնում տոնական օրացույցի աչքի զարնող առաջընթացը, որն ի հայտ է բերում ազգային զգացողության կրկնապատկումը»[11],– գրում է ֆրանսիացի հոգևորական Շառլ Ռենուն:

Արաբների կրոնական խստացումները

Ազգային օրենսդրության ստեղծման և ինքնության ամրապնդման հայոց եկեղեցու ձեռնարկները չէին կարող չանհանգստացնել արաբ կառավարիչներին ու ճչգրտումներ չմտցնել հայերի նկատմամբ վարվող կրոնական քաղաքականության մեջ: Եթե Օմայանների ժամանակ արաբներն ունեին «համբերատար վերաբերմունք եկեղեցու նկատմամբ»[12], ապա VIII դ. սկզբից, մասնավորապես՝ Հիշամ խալիֆի ժամանակներից (724–743), այդ քաղաքականությունը փոխվում է: Հայ կղերական դասը ենթարկվում է հարկադրանքի, իսկ VIII դ. վերջից Հայաստանի հարուստ վանքերն ու եկեղեցիները դառնում են կողոպուտի և հարստահարման օբյեկտ: Արաբներն առիթ էին որոնում վանքերից և նույնիսկ Դվինի հայրապետանոցից որևէ կալվածք կամ ունեցվածք խլելու: IX դ. սկզբներից թալանի և կողոպուտի հետ նաև խստանում է արաբների կրոնական անհանդուրժողականությունն ու առաջնային դառնում հավատափոխության գործոնը: Նույն դարի կեսերին է վերաբերում արաբ պատմիչի խոստովանական վկայությունը Հայաստանի քրիստոնյաների կողմից մեծարված և նրանց համար ուխտատեղի դարձած Բաժակների վանքում (Դայր ալ-Ակդահ) արաբ զորավարի իրականացրած թալանի մասին. «Սա հափշտակեց ամբողջ ունեցվածքը և բռնություն գործադրեց նրա մարդկանց

---

[9] *Հ ո վ ս ե փ յ ա ն. 1913, 176:*

[10] *Հայ ժողովրդի պատմություն. 1984, 369:*

[11] *Ռ ե ն ո ւ. 2008, 88: Թե՛ վարդապետական, թե՛ ծիսական ասպարեզներում բարեհաջող գործընթացի նախաձեռնողներն էին եկեղեցու նշանավոր հայրեր Հովհան Օձնեցին (717–728), Արշարունյաց եպիսկոպոս Գրիգորիսը (650–730), Խոսրովիկը (VIII դ. առաջին կես), Սողոմոն Մաքենացին (VIII դ.), որոնք մշակում են Հայ եկեղեցու ինքնուրույն օրենսդրությունը, սահմանում եկեղեցական կարգը, որը գործում է առ այսօր:*

[12] *Մ ա ն ա ն դ յ ա ն. 1978, 581:*

(վանականների) նկատմամբ»[13]: Բուղայի արշավանքների ժամանակ, ինչպես հաղորդում է Թովմա Արծրունին, արաբները հարկատու էին դարձրել Վարագա վանքի միաբաններին[14] ոտնահարելով վանական-եկեղեցական կալվածքների ապահարկության իրավական նորմը:

IX դ. առաջին կեսին քրիստոնեության ու նրա հետևորդների նկատմամբ արաբների վարած քաղաքականության վրա զգալի էր օրվա տիրակալի սուբյեկտիվ վերաբերմունքը, որը բխում էր նրա աշխարհայացքային պատկերացումներից և արժեքային համակարգից: Ժողովրդական բանահյուսության մեջ բարեպաշտ թագավորի առաքինություններով օժտված Հարուն ալ Ռաշիդի (785–809) հրամանագրով քրիստոնյաները ոչ միայն զրկվում են զբաղեցրած պաշտոններից, այլև պետք է հագնեին մուսուլմաններից տարբերվող հագուստ, իսկ նրանց եկեղեցիները ենթակա էին քանդման[15]: Սակայն արգելքներ չկային սովորական կրոնական ծեսերի և տոների կատարման կապակցությամբ: «Հարունի ժամանակ,– գրում է բրիտանացի արաբագետ Ա. Թրիթոնը,– ընդունված պատկերացումն այն էր, որ քրիստոնյաների որոշ կրոնական արարողություններ իրականացնելու իրավունքը այնքան հնուց է գալիս, որ անպատեհ է դրան հակադրվելը, որքան էլ որ մեծ լինի մուսուլմանների դժգոհությունը»[16]: Հարունի հաջորդ Մամուն խալիֆը (813–833)[17] համեմատաբար բարեհաճ մոտեցում ուներ քրիստոնյաների նկատմամբ, սակայն Եգիպտոսում քրիստոնյա ղպտիների ընդվզումներից հետո նրա վերաբերմունքը փոխվում է:

Կրոնական խստացումները բարձրակետին են հասնում Մութավաքքիլ խալիֆի օրոք (847–861), ով «մարմնացնում էր ամենամռայլ մի ռեակցիա իսլամական առաջադիմության դեմ»[18]: Նրա կառավարման սկզբնական, բայց շատ կարճ շրջանում քրիստոնյաների վիճակը մասնակիորեն բարելավվում է. վերջիններիս կրկին թույլատրվում է զբաղեցնել պետական պաշտոններ: Սակայն դրությունը շատ արագ փոխվում է, և խալիֆը 849 թ. վերացնում է քրիստոնյաներին պաշտոնների նշանակելու թույլտվությունը: Նրա հրամանով քանդվում են բոլոր նորակառույց եկեղեցիները, իսկ նորերի կառուցման վրա՝ արգելք դրվում[19]: Զիմմիների[20] համար նա սահմանում է տարբերվող հագուստ.

---

[13] *Բալազուրի. 2005, 282:* Արաբագետ Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով՝ *851 թ. արաբների դեմ հայերի ընդվզման պատճառը հենց այս վանքի կողոպտումն էր Ալա զորավարի ձեռքով* (Тер-Гевондян. 1977, 142)*:*

[14] *Արծրունի եւ Անանուն. 2010, 215, 226, 228:*

[15] Гиргас. 1865, 71.

[16] Tritton. 1970, 114. *Լինում էին դեպքեր, երբ քրիստոնյաների կրոնական տոնակատարություններին մեծ բազմություն էր միանում* (Tritton. 1970, 114)*:*

[17] *Աբուլ-Աբաս Աբդալլահ ալ-Մամունը Հարուն ալ-Ռաշիդի որդին է, հայտնի է որպես գիտությունների հովանավոր: Քրիստոնյաներին ազատեց մի շարք պարտականություններից* (Tritton. 1970, 170, 218)*:*

[18] *Լեո. 1967, 428:*

[19] *Յակուբի. 2005, 392–393,* Гиргас. 1865, 71.

[20] *Իսլամական իրավունքը խալիֆայության հպատակներին բաժանում էր երեք խմբի՝ մահմեդականներ, զիմմիներ (հովանավորյալ) և ստրուկներ* (Гиргас. 1865, 25)*: Զիմմիները նրանք են, որոնք օգտվում են Զիմմայից, իսկ Զիմման անվերջ նորոգվող պայմանագիր է, որի միջոցով մուսուլմանական համայնքն ա-*

պետք է հագնեին դեղին վերնազգեստ և չկրեին սպիտակ հագուստ[21]: Գլխահարկը կրկնապատկվում է, արգելվում է քրիստոնյաների մուտքը մուսուլմանական բաղնիք: Իր կառավարման ամբողջ ընթացքում Մութավաքքիլը չարունակաբար մեծացնում էր ճնշումները քրիստոնյաների նկատմամբ. արգելվում էր ձի հեծնել, նրանք կարող էին օգտվել միայն ավանակից կամ ջորուց: Նրանց տների վրա ամրացվում էին սատանայի պատկերով փայտե տախտակներ, իսկ գերեզմանները պղծում էին՝ հավասարեցնելով հողին[22]: Խալիֆի հրամանով նաև արգելվում էին երթերի ժամանակ խաչեր կրելը և փողոցում ժամերգություն կատարելը[23]: «Օմար II-ը և Մութավաքքիլը փորձում էին ճնշել քրիստոնեության նույնիսկ ամենասովորական դրսևորումները, բայց չեն հաջողում»[24],– գրում է Ա. Թրիթոնը:

Հայոց եկեղեցու առջև ծառացած մարտահրավերները Դավիթ Բ Կաղաղեցու օրոք

Հովսեփ Բ Փարպեցուց հետո՝ 806 թ., կաթողիկոս է ընտրվում Դավիթ Բ Կաղաղեցին: Նա Մազազ գավառի Կաղաղ գյուղից էր[25]: Դավիթ Բ-ի երկարատև աթոռակալության վերաբերյալ տեղեկությունները չափազանց սուղ են, մինչդեռ նա պաշտոնավարել է Հայոց եկեղեցու նկատմամբ արաբների գործադրած սաստիկ ճնշումների և բռնությունների ժամանակաշրջանում: Կարծում ենք, որ տեղեկությունների բացակայությունն արդյունք է եկեղեցու իրավասությունների էական սահմանափակման և կաթողիկոսական ինստիտուտի ինքնուրույնության նվազման: Հայոց հոգևոր կառույցի նկատմամբ արաբների գործադրած ճնշումները հասկանալիորեն սահմանափակում էին հայ եկեղեցականների նախաձեռնությունները՝ վերջիններիս մղելով լոկ կրավորական գործունեության: Այդուհանդերձ, պահպանված կցկտուր տեղեկությունները վկայում են, որ այդ շրջանում Հայաստանում տեղի են ունեցել եկեղեցական-կրոնական խմորումներ: IX դ. առաջին քառորդին՝ Աշոտ Մսակերի ժամանակ (802–826), Հայաստան է եկել ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր պաշտոնյա, գիտնական Նանա սարկավագը: 812–813 թթ. Աշոտ Մսակերը պատվիրել է նրան գրել Հովհաննու Ավետարանի համառոտ մեկնությունը: 813–816 թթ. Նանան արաբերենով գրել է Ավետարանի մեկնությունը և ընծայել Աշոտի որդի Բագարատ Բագրատունուն[26]: Հայաստանում սարկավագը պայքար է տարել քաղկեդոնական եպիսկուրոս անունով հույն եպիսկոպոսի դեմ, որը փորձում էր Հայոց իշխան Աշոտ Մսակերին դարձնել քաղկեդոնական

պահովում է հյուրընկալություն և պաշտպանվածություն այլ կրոնների հետևորդների համար, որոնք ընդունել են իսլամի գերիշխանությունը (Աբու Յուսուֆ. 2005, 118, ծանոթ. 13, Tritton. 1970, 50)*:*

[21] Гиргас. 1865, 71.

[22] Гиргас. 1865, 71; Tritton. 1970, 107.

[23] Tritton. 1970, 107.

[24] Tritton. 1970, 114.

[25] *Հայր Ալիշանը Կաղաղը կասկածանքով նույնացնում է հետագայի Քյոթուզ գյուղին: Հիշատակվում է Ակաւղից, Ակողից, Ակաւից ձևերով (Ալիշան. 1890, 371):*

[26] *Ակինյան. 1922, 131–132:*

եկեղեցու հետևորդ: Նանան հակաճառություն է սկսում Եպիկուրոսի դեմ և հերքում վերջինիս աստվածաբանական տեսությունները[27]: Ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր պաշտոնյա Նանայի՝ Հայաստան ժամանման փաստը վկայում է լուրջ առաքելության մասին: Ենթադրվում է, որ փորձ էր կատարվում ստեղծել հայ և սիրիական եկեղեցիների միություն, ձևավորել ընդհանուր «ռազմաճակատ» քաղկեդոնականության դեմ:

Դավիթ Բ-ի օրոք Հայաստանի ինքնավարության վերականգնման ոչ դյուրին ընթացքն ուղեկցվում է խալիֆայական իշխանության գերակայությունը չճանաչող տեղական կառավարիչների ապստամբություններով, որոնք մեծ ավերածություններ էին պատճառում Հայաստանին: Սևադա անունով մի պարսիկ իշխան, «ի տանէ Ջահապայ»[28], ընդվզում է խալիֆայության դեմ՝ փորձելով հաստատել սեփական անկախ իշխանությունը և դրանում ներառել նաև Հայաստանի հյուսիսային գավառները: Նա ամուսնացած էր Բագրատունյաց Արուսյակ իշխանադստեր հետ և փորձում էր իրավունքներ իրացնել հայկական հողերի նկատմամբ: Հովհաննես Դրասխանակերտցու հավաստմամբ, կնոջ անունով «գյոլով մասն երկրիս բռնակալեալ սեպհականաբար իմն տիրէր»[29]: Մարտնչելով արաբական տիրապետության դեմ՝ Սևադան հանդես էր գալիս որպես հայերի պաշտպան: Նա գործողություններ է ձեռնարկում Իսա իբն Խալիդ անունով[30] նոր նշանակված ոստիկանի դեմ: Աշոտ Մսակերի գլխավորությամբ հայ նախարարների մի մասը պայքար է սկսում Սևադայի դեմ և խափանում որոշ հայկական կալվածքների գավթումը: Խալիֆը, ի նշան շնորհակալության, Սամառայում պատանդության մեջ պահվող Աշոտի որդի Սմբատին վերադարձնում է հորը[31]: Մ. Օրմանյանի հաշվարկներով՝ այս դեպքերը տեղի են ունեցել 822 թ.՝ Մամուն ամիրապետի օրոք[32]: Սակայն Սևադային հաջողվում է իր կողմը գրավել մի քանի նշանավոր հայ ազնվականների, «ընդ որս էր եւ մեծ սպարապետն Հայոց Սմբատ, եւ Սիւնեաց տէր եւ այլ եւս ազատագունդ տեարք»[33]: Հայաստանում արաբական իշխանություններին սպառնացող վտանգները չեզոքացնելու համար Խալիդը դիմում է տարբեր միջոցների՝ ընդհուպ խոստանալով Սևադային Հայաստանի կառավարչի

[27] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 78:

[28] Մանազկերտի կայսիկ էմիր Ջահհապն ամուսնացած էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ: Նա հանդես էր գալիս որպես Մամիկոնյանների ունեցվածքի, այսպես ասած, օրինական ժառանգորդ և կռիվ սկսեց Բագրատունիների դեմ (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 78):

[29] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 427:

[30] Հայկական սկզբնաղբյուրներում Իսա իբն Խալիդ ոստիկանը հիշվում է Հոլ անունով: Արաբական մատենագրության մեջ նման անուն չի նշվում: Սա Իսա իբն Մուհամմադ Աբի Խալիդն է (820–823), որը Հայաստանում հաղթել է Սևադա Ջահհաֆիին (Ֆ ա ս մ է ր. 1929, 656, Տ ե ր - Ղ և ո ն դ յ ա ն. 1977, 125): Հ. Նալբանդյանը կարծում է, որ «Հոլ» անունը Խալիդը ստացել է Հայաստանում գործած դաժանությունների պատճառով, որովհետև արաբերեն «հաւլ» նշանակում է սարսափ (Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1956, 118):

[31] Ա ս ո ղ ի կ. 2010, 707:

[32] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1074, §634:

[33] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 427:

պաշտոնը[34]: Միաժամանակ խալիֆը փորձում էր խաթարել հայ նախարարների և պարսիկների միջև ձևավորված համաձայնությունն ու Սևադային ապարեզից հանել հայերի ձեռքով: Նա Դավիթ կաթողիկոսին որպես բանագնաց ուղարկում է Սմբատի և Սահակի մոտ՝ համոզելու նրանց ետ կանգնել Սևադայի հետ գործակցելու մտքից: Դավիթ կաթողիկոսը հանդիպում է Սևադային ու փոխանցում ոստիկանի խոսքը. «Ընդէ՞ր եւ կամ վասն է՞ր իմիք այդպէս զաւշաքաղութեամբ իմիք հպարտացեալ խրոխտայք դաւել գիս. թէ ոչ գիս, ասէ, կամիք ընդունել, վայրացդ ելիցդ իմ տեղի տուա՛ք ի բաց գնալով, զի ի ձենջ աներկիւղաբար չօ արարեալ, երթալ գնացից»[35]: Սակայն կաթողիկոսի ջանքերը՝ համոզելն ու աղաչանքները, արդյունք չեն տալիս. Սևադայի և հայ նախարարների դիրքորոշումը չի փոխվում, իսկ հայրապետը «յաւետ տրտմեալ» վերադառնում է: Հարցը խաղաղ ճանապարհով լուծելու բոլոր հնարավորությունները սպառելուց հետո խալիֆը, «ի պատրաստութիւն զինուց իբրեւ երկու հազար», զորքով շարժվում է նրանց դեմ և ճակատամարտ տալիս Հրազդանի հովտում գտնվող Կավակերտ գյուղի մոտ: Այդտեղ ընկնում է Սահակ Սյունին, իսկ Սևադան և Սմբատը «հազիւ ճողոպրեալք անճնապուրծ փախչէին»[36]: Ջախջախելով հակառակորդին՝ խալիֆը դաղարեցնում է պատերազմը և վերջ տալիս վրեժխնդրությանը: Նա նույնիսկ թույլ է տալիս պատվով հողին հանձնել Սահակ Սյունու մարմինը: Այդ մասին վկայություն է փոխանցում Սյունյաց պատմիչը. «Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ՝ անհնարին ողբովք հեծեծէր. և ընթացեալ բազմամբոխ պաշտօնէիւք կազմէր զդագաղն արքայակերպ և բարձեալ զմարմինն մեծահանդէս պաշտամամբք, սաղմոսիւք և օրհնութեամբ բերեալ ի կաթողիկոսարանն ի Դուին՝ դնէ ի քնարանի մերձ ի սուրբ քաւարան կաթողիկոսարանին»[37]: Արաբ հեռատես պաշտոնյան մեծահոգաբար Սմբատին չի զրկում տիրույթներից և իշխանական պատիվներից: Ոստիկանի այս մեղմ վերաբերմունքի պատճառը, ըստ Մ. Օրմանյանի, Դավիթ կաթողիկոսի միջնորդությունն էր[38]: 833 թ.՝ 27 տարի պաշտոնավարելուց հետո, «լցեալ հայրապետին զկէտ կենաց իւրոց՝ վախճանի»[39]:

---

[34] *Ա դ ո ն ց. 2006, 452:*

[35] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 427–428:*

[36] *Կավակերտի ճակատամարտը, հավանաբար, տեղի է ունեցել 829–832 թվականներին՝ խալիֆի երկրորդ պաշտոնավարման շրջանում (Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1956, 119,* Тер-Гевондян. 1977, 135*): Պատմաբան Ա. Եղիազարյանը ենթադրում է, որ Սևադան ապստամբել է երկու անգամ՝ առաջինը՝ 820–823 թթ., իսկ երկրորդը՝ 829–832 թթ. (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2010, 163):*

[37] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 122, Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 428:*

[38] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 1076, §635:*

[39] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 2010, 428: Ասողիկի երկում Դավիթ կաթողիկոսի պաշտոնավարման տևողությունը նշված է Իե (25) տարի Իէ-ի (27) փոխարեն (Ա ս ո ղ ի կ. 2010, 706): Ենթադրելի է, որ սա Ե և Է տառերի ձեռագրական չփոթի հետևանք է: Դավիթ կաթողիկոսի երկարատև պաշտոնավարության ժամկետը՝ 806–833 թթ., մեծ մասամբ համընկնում է Մամուն խալիֆի գահակալության տարիներին (810–833):*

Դավիթ Կակաղեցու աթոռակալության ժամանակաշրջանին վերաբերող ուշագրավ մի վկայություն է պահպանվել XIII դ. ժամանակագիր Մխիթար Այրիվանեցու երկում: Այն որոշակի լույս է սփռում Թոնդրակյան աղանդի ձևով եկեղեցու դեմ ուղղված շարժման սկզբնավորման խնդրահարույց փուլի վրա և վկայում Դավիթ Կակաղեցու օրոք առկա մարտահրավերների մասին: 821 թ. ներքո Այրիվանեցին արձանագրում է. «Սմբատ Աբլաբասայ. սա է նախնին Թոնդրակեցոց աղանդին»[40]: Ստեփանոս Սյունեցու վկայաբանության մեջ, որի հեղինակը դարձյալ Այրիվանեցին է, կարդում ենք. 822 թվականին «Սուրբն Ստեփաննոս կայր ի կաթողիկոսարանին և լուսաւորէր զամենեսեան բանիւ վարդապետութեան իւրոյ. հանդիպեցաւ նմա հակաճառութիւն ընդդէմ Սմբատայ երկաբնակի, որ էր սպարապետ հայոց և դավանակից յունաց, զոր յետոյ, մահուան թըւին ի համանուն թոռնէ սորա յայտնեցաւ աղանդն Թոնդրակեցոց, յաւուրս Դաւթի կաթողիկոսի Կակաղեցոյ, եւ ի սոյն աւուրս բաժանեցան ի հայոց ազգն Ծադ ի ձեռն Փարսմանայ ումեմն փառամոլ քահանայի, որպէս պատմէ սուրբն Ուխտանէս եպիսկոպոսն Սեբաստիոյ»[41]: Վկայաբանության մեջ սպարապետ Սմբատ Բագրատունու (752–775) թոռը՝ Սմբատ Աբլաբասը (Խոստովանող), հանդես է գալիս որպես Սյունեցու քաղկեդոնիկ հակառակորդ: «Ըստ երևույթին այն հանգամանքը, որ հայադավան հեղինակների պատկերացումով քաղկեդոնականությունը հաճախ նույնպես որպես հերձված կամ աղանդ էր նշվում,– գրում է պատմաբան Ա. Հովհաննիսյանը,– առիթ է ծառայել Այրիվանեցուն քաղկեդոնականության հարած Սմբատ Աբլաբասին շփոթել Թոնդրակյան աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցու հետ»[42]: Այրիվանեցու պատկերացումով 822–855 թթ. Հայաստանում իշխած Սմբատ Բագրատունին և սրա ժամանակ գահակալած կաթողիկոսն ու Թոնդրակում ծայր առած աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցին ժամանակակիցներ էին: Վերոբերյալ վկայությունը ցույց է տալիս, որ Այրիվանեցու համար աղբյուր է հանդիսացել Ուխտանեսի պատմության՝ մեզ չհասած երրորդ գիրքը, որից նա առել է հունադավան հայերի՝ ծադերի մասին հաղորդած տեղեկությունները[43]: Քաղկեդոնական Փարսման քահանայի ակտիվ գործակցությամբ «Ծոնդէացիսն», որոնք բնակվում էին Հայաստանի՝ Աղվանքին սահմանակից շրջաններում Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու գիրկն են անցնում[44]: Անունների շփոթությամբ հանդերձ Այրիվանեցու վկայությունը

---

[40] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, 54:

[41] Յ ո վ ս է փ ե ա ն ց. 1931, 19: «Յաւուրս տէր Դաւթի Փարսման քահանայ թվականի կակաղեցի որոշեալ ի հայոց ի Վիրս դարձոյց զԾոնդէացիսն, այս է Ծադն, որ կան այժմ ի հոռոմս» (Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, 54):

[42] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 340:

[43] X–XI դդ. պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն հայոց» երկասիրությունը բաղկացած է երեք մասից: Համաձայն նրա պատմության ընծայականի՝ երրորդ մասը նվիրված է եղել ծադերի, նրանց երկրի, քաղաքների, վանքերի և մկրտության պատմությանը:

[44] Ըստ Ն. Ադոնցի՝ Մխիթար Այրիվանեցին սխալվում է՝ նույնացնելով ծոնդեացիներին ծադերի հետ: Ծոնդեացիները քրիստոնյաներ էին և IX դ. հարում են Վրաց եկեղեցուն, մինչդեռ ծադերը, որոնց մասին խոսում է Ուխտանեսը, միայն X դ. վերջին դարձան քրիստոնյա (Ա դ ո ն ց. 2006, 541): Ն. Մառը ենթադրում է՝ ծադերը

կարևոր է այնքանով, որ Թոնդրակյան աղանդի սկիզբը հստակ թվագրվում է IX դ. առաջին կեսին: Ակներև են դառնում քաղկեդոնականների, մասնավորապես՝ Վրաց եկեղեցու գործնական քայլերը Հայոց եկեղեցու դավանանքի հետևորդներին իրենց կողմը գրավելու ուղղությամբ: Քաղկեդոնականությունն ընդունած հայերը հետզհետե սկսում են ապազգայնանալ, ձուլվել վրացիների, հույների և սիրիացիների հետ[45]*:*

Դավիթ Բ կաթողիկոսի աթոռակալության ժամանակաշրջանը նշանավոր է նաև քրիստոնեական կրոնի համար անձնուրաց նահատակության բազմաթիվ օրինակներով, որոնք պահպանվել են վկայաբանական երկերի էջերում: Անճնազոհության այդպիսի դրվագ է Հովսեփ ու Սահակ իշխանների նահատակությունը, որոնց հետագայում եկեղեցին սրբադասել և տոն է սահմանել նրանց պատվին: Կայսիկ ցեղի արաբ իշխաններից մեկը հաստատվում է Կարինում և ամուսնանում տեղի մի հայ քրիստոնյա աղջկա հետ: Նրանք ունենում են երեք որդի, որոնց բարեպաշտ կինը դաստիարակում է քրիստոնեական հավատով և ծեսերով[46]*: Հովսեփը, Սահակը և երրորդ զավակը, որի անունը պատմությունը չի պահպանել մեծանում են որպես քրիստոնյաներ՝ կրելով իսլամական Յուսուփ և Իսակ անունները: «Հաստնանալով»՝ Հովսեփն ամուսնանում է, ունենում զավակներ, սակայն չուտով բացահայտվում է մուսուլմանի քրիստոնեացած զավակների գաղտնիքը: Եղբայրները փորձում են փախչել Բյուզանդիա: Ինչպես վկայում է նահատակների վարքը, այդ գործում նրանց փորձում է օգնել իշխան Քուրդիկ Մամիկոնյանը*[47]*: Սակայն արաբական իշխանությունները խափանում են նրանց փախուստը, և եղբայրները ձերբակալվում են: Իսլամի օրենսգետները փորձում են նրանց համոզել հրաժարվել քրիստոնեությունից. անգամ հայրը հորդորում է առերես ընդունել և հետո անցնել հույների երկիր, սակայն եղբայրները մնում են անդրդվելի՝ ասելով. «Քրիստոնեայ եմք, և արհամարհեցաք զմոլար սնոտի ուսմունս մեր հայրենի (նկատի ունի իսլամը – Վ. Ա.)»*[48]*: Իսլամն ուրանալու համար տեղական դատավորի վճռով եղբայրները դատապարտվում են գլխատման Կարինի քաղաքապետի կողմից, որ «զիշխանությիւն ունէր քաղաքին և գաւառին Կարնոյ»*[49]*: Նրանց մահվան վճիռը, ինչպես հավանական է համարում Օրմանյան սրբազանը, իրագործվել է տեղական դատավորի ձեռքով՝ առանց ոստիկա-*

քաղկեդոնիկ հայեր են, որոնք ապրել են հարավային Հայաստանում, իսկ ծոնդեացիները, որպես ազգակից ժողովուրդ, ապրել են հյուսիսարևելյան Հայաստանում: Այս աշխարհագրական շրջանը համապատասխանում է վրացիների միսիոներական գործունեության շրջանին (Mapp. 1905, 30–31, *ծանոթ. 2*)*: Ն. Ակինյանը, ըստ էության, տարբերակում չի դնում «ծաղ»-երի և «ծաւդեացի»-ների միջև: Գտնում է՝ նրանք ազգությամբ հայ էին, որոնք ընդունել են քաղկեդոնականություն (Ակինեան. 1910, 77–79):*

[45] *Լեո. 1967, 460:*

[46] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 293, Յայսմաւուրք. 1706, Արացի ժե, Յունվարի իբ:*

[47] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 295:*

[48] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 296:*

[49] *Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, 295:*

նի մանակցության[50]: Եղբայրների նահատակությունը տեղի է ունեցել 808 թվականի արաց ամսի 15-ին[51] «յաւուր հինգշաբթու»[52]:

Հայաստանի ներքին ինքնավարության ամրապնդումը Հովհաննես Դ Ոձայեցու օրոք

833 թ. Դավիթ Բ կակաղեցուն փոխարինում է Հովհաննեսը Դ-ն՝ կոտայք գավառի Ոձայք գյուղից, որին Վարդան պատմիչը բնութագրում է որպես «այր սուրբ և պարկեշտ»[53]: Թովմա Արծրունին նրան որակում է իբրև եկեղեցական և բարոյական բարեկարգության նախանձախնդիր հայրապետ, որը «յաւետ հրաշիւք յաւրինէր զկարգս սրբոյ եկեղեցւոյ ուղղափառ առաքելական հաւատոց ի Տէր Հիսուս Քրիստոս»[54]: Շեշտվում է, որ նրա խստապահանջությունները հաճելի չէին շատերի, այդ թվում՝ իշխանների համար, որովհետև նա «դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց», հորդորում էր արժանի լինել քրիստոնեական պատգամներին, որպեսզի «վկայեցէն ըստ անուան քրիստոնէութեանն եւ գործքն»[55]:

Հովհաննես կաթողիկոսի ընտրությունը հարթ չի ընթացել, որովհետև այդ հարցում հայ նախարարների շրջանում համաձայնություն չի եղել: Տարոնի և Սասունի իշխան Բագարատ Բագրատունին (826–851), ով «հրամանատար եւ իշխան իշխանացս Հայոց գտանէր», դժգոհ է մնում այդ ընտրությունից, որովհետև «առանց կամաց նորա եղեւ հայրապետին հաստատութիւն»[56]: Բագարատն այդ ժամանակ այնքան ուժեղ էր, որ խալիֆից նույնիսկ պահանջում էր Արմինիայի ոստիկանի լիազորությունները[57]: Նա միշտ աչքի է ընկել կրոնական ու եկեղեցական խնդիրներով իր հետաքրքրվածությամբ և ի սկզբանե համաձայն չէր Հովհաննես Ոձայեցու ընտրությանը: Բայց, ինչպես կարծում է Ա. Տեր-Ղևոնդյանը, Բագարատ և Սմբատ Բագրատունի եղբայրների միջև

[50] *Օրմանեան. 2001, 1073, § 633:*

[51] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 91: Այս օրը համապատասխանել է շարժական տոմարի հոկտեմբերի 19-ին, մինչդեռ Յայսմաւուրք. 1706, Արացի ժե, Յունվարի իբ):*

[52] *Անեցի եւ շարունակողներ. 2014, 161:*

[53] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80:*

[54] *Արծրունի եւ Անանուն. 2010, 146:*

[55] *Արծրունի եւ Անանուն. 2010, 146–147:*

[56] *Դրասխանակերտցի. 2010, 429: Թովմա Արծրունին նշում է նրա բարձր կարգավիճակը հայ իշխանների մեջ. «Իշխան Տարունոյ Բագարատ, վասն զի ունէր յայնժամ զգիխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց» (Արծրունի եւ Անանուն. 2010, 141): Վարդան պատմիչը Բագարատին կոչում է «իշխան Տաւրոս լերինն» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80): Ստեփանոս Օրբելյանի երկում նա անվանվում է «իշխանն Հայոց» (Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 122): Մ. Զամչյանը նրան բնութագրում է որպես «այր հզօր և երևելի» (Զամչյան. 1984, 441): Մ. Օրմանյանն իրավացիորեն կարծում է, որ Բագարատը Հայաստանում պատրիկության պաշտոնով եղել է արաբ ոստիկանի տեղակալը, իսկ Հայոց սպարապետությունը վարել է Սմբատը (Օրմանեան. 2001, 1084, §640):*

[57] *Ղևոնդ Երեց. 2011, 31, 92:*

հարաբերություններն այդ ժամանակ այնքան լարված էին, որ Բագարատը հնարավորություն չուներ միջամտելու նոր հոգևոր առաջնորդի ընտրությանը, ինչպես նաև չէր խառնվում Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջանների գործերին[58]*: Բագարատը հայտնի էր աստվածաբանական-կրոնական հարցերում բանիմացությամբ, որի մասին վկայում է ասորի գիտնական, սարկավագ Նանան. «Յորժամ ասէ ըմբռնեալ լինէր մեծն և երևելին այն իշխանն հայոց վսեմամիտն, որ եւ զքաւականդակն յանձին բերէր ունել զգիտութիւնն, որ ի Քրիստոս հաւատոցն. որ եւ նախանձ ոչ փոքրագոյն վասն Քրիստոսի միշտ յանձին կրէր՝ կշտամբել եւ յանդիմանել զհերձուածողացն դասս»*[59]*:*

Հովհաննես Ոսկեբերանի թեկնածությունը պաշտպանել են սպարապետ Սմբատ Բագրատունին և Սյունյաց իշխան Գրիգոր Սուփանը, ովքեր օգնել են նրան զբաղեցնել կաթողիկոսական գահը: Բագարատը հարմար առիթ էր փնտրում Հովհաննեսի փոխարեն կաթողիկոս դարձնել մեկ ուրիշին[60]*: Նա կաթողիկոսից հրաժարվելու և նրան մեկուսացնելու վերաբերյալ հրովարտակ է արձակում՝ ասելով՝ «ի բաց կալ յընդունելոյ զհաւատապետն» ու ի մտի ունենալով «կացուցանել հայրապետ ըստ իւրումն ձեռներիցութեան»*[61]*: Բագարատ Բագրատունուն այս հարցում աջակցում էին որոշ ընդդիմադիր հոգևորականներ, որոնցից ոմանք նույնիսկ անդամ էին «յընտանեաց տան կաթողիկոսարանին»: Զրպարտողները Հովհաննես հայրապետի վերաբերյալ «լեզուաւք նենգաւորաւք բանս ապիրատս բամբասանաց ի վերայ յաւդէին»: Այս գործի մեջ, հավանաբար, ներքաշված էին Բագարատի թեկնածու եպիսկոպոսը և նրա համախոհները: Չի բացառվում՝ չարախոսները, որոնք կաթողիկոսի դեմ ամբաստանագիր են ներկայացրել Հայոց իշխան Բագարատին, խրախուսվել են հենց վերջինիս կողմից: Հովհաննեսին մեղադրվող արարքները հստակ հայտնի չեն, սակայն որոշ կցկտուր տեղեկություններ թույլ են տվել Մ. Օրմանյանին ենթադրել, որ մեղադրանքը վերաբերում էր բարոյական ինչ-ինչ խնդրի*[62]*: Կաթողիկոսը հեռանում է Այրիվանք կամ Դեղարդավանք և ապրում այն վայրում, որը կոչվում էր «բնակեստ սրբոյն Սահակայ»: Այստեղից ամբաստանված հայրապետը պատասխանում է Բագարատի հրովարտակին, հիմնավորում է իր անմեղությունն ու նզովում «նանրալեզու հայհոյիչք» անձանց: Սկզբնաղբյուրներն այս իրադարձությունները թվագրում են «ժամանակի իբր ի վեցերորդ ամի իշխանութեանն Բագարատայ և յութերորդ ամի կաթուղիկոսութեանն Յովհաննու», այսինքն՝ 841 թվականին*[63]*:*

---

[58] Тер-Гевондян. 1977, 136. *Այս հանգամանքը վկայում է IX դ. կեսերին հայոց ավագանու՝ երկու բևեռի տրոհվածության մասին (Հայոց պատմություն. 2014, 9):*

[59] *Ակինյան. 1922, 138: Համմտ. Զամչյան. 1984, 444:*

[60] *Դրասխանակերտցի. 2010, 429: Բագարատի քրիստոնեական բարեպաշտության մասին է վկայում Մուշի Սուրբ Փրկիչ եկեղեցու կառուցման փաստը (Արծրունի եւ Անանուն. 2010, 151):*

[61] *Դրասխանակերտցի. 2010, 429:*

[62] *Օրմանեան. 2001, 1085, §640:*

[63] *Դրասխանակերտցի. 2010, 428, Զամչյան. 1984, 443:*

Կաթողիկոսի նկատմամբ Բագարատ Բագրատունու նախաձեռնած արշավը հայ նախարարական ու հոգևոր շրջանակներում միանշանակորեն չի ընդունվում: Ի պաշտպանություն հայրապետի և ընդդեմ Բագարատի հրովարտակի հանդես են գալիս չատ հոգևորականներ: Կաթողիկոսի պաշտպաններին գլխավորում էին Սմբատ Բագրատունին ու Գրիգոր Սուփան Սյունյաց իշխանը: Բագարատ Բագրատունու նախաձեռնությամբ գումարվում է «համագունդ ի միասին եկեալք» նախարարների և եպիսկոպոսների ազգային-եկեղեցական ժողով, որը պետք է քններ և պարզեր կաթողիկոսին հասցեագրված մեղադրանքները[64]: Ժողովում քննության են դրվում չարախոսների, «մանաւանդ երից արանց՝ որք երևելիքն էին» փաստարկները, և ապացուցվում են Հայոց հայրապետի անմեղությունն ու մեղադրանքների ստահոդությունը: Հովհաննես պատմիչի խոսքերով՝ «ստուգագէտ իմացուածիւ» հաստատվում է «նաներ իժաթոյն չրթանց չար հայհոյչացն ստութիւնը»: Ժողովով արդարացվելուց հետո «հաստատեն զարձեալ յաթոռն սրբութեան զայրն Աստուծոյ»:

Կաթողիկոսի աթոռին վերականգնվելը հնարավոր եղավ երկրում արաբների ստեղծած քաղաքական բարդ իրադրության հետևանքով, որը թույլ չտվեց Հայոց իշխան Բագարատ Բագրատունուն, ինչպես հարկն է, զբաղվել այդ հարցերով[65]: Հայր Ջամչյանը հաղորդում է, որ ժողովը գումարվել է Երնջակում[66]: «Պատիժք պատուհասի հասին ի վրայ երից բամբասողացն», որոնք գլխավորում էին կաթողիկոսի դեմ արշավը: Իր հովվապետության մնացյալ տարիները Հովհաննեսը Ովայեցին անցկացնում է՝ շրջապատված հարգանքով և պատվով, իսկ եկեղեցին՝ «նորոգապէս պայծառանայր»:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ Հովհաննես Դ-ն աթոռակալել է «ամս քսան եւ երկու» (833–855): Նրա աթոռակալության ժամանակաշրջանը համընկնում է Մութասիմ-Պիլլահ (833–842), Աբու-Ջաֆար-Հարուն-ալ-Վաթիք-Պիլլահ (842–847) և վերջիններիս եղբայր Մութաֆաքքիլ-Ալալլահ (847–861) խալիֆների գահակալության: Չնայած ամիրապետերի տարբեր անվանումներին՝ երեքն էլ *հայոց մեջ հիշատակված են միևնույն Ջաֆար անունով, որը, հավանաբար, պայմանավորված էր այդ անվան տարածված լինելու իրողության հետ:*

Խալիֆայության պարսից տարրը, իսլամը ընդունելով հանդերձ, փորձում էր հակադրվել արաբներին չիականության դրոշի ներքո: Հովհաննես Ովայեցու հովվապետության շրջանում սկսվում է մի հզոր շարժում, որը պատմության մեջ հայտնի է Խուրամիդյան կամ Բաբեկյան շարժում անունով: Միջնադարյան բոլոր շարժումների նման այն հանդես էր գալիս կրոնական քողի տակ: Շարժման առաջնորդ Ջավիդանի սպանությունից հետո այն գլխավորում է Բաբեկը, ով հայկական սկզբնաղբյուրներում հայտնի է Բաբան անունով: Նա գրավում է Պարսկաստանի հյուսիսարևմտյան ու արևմտյան շրջանները և աշխատում իր իշխանությունը տարածել նաև Հայաստանի արևելյան

---

[64] *Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2020, 101:*

[65] *Ա կ ի ն ե ա ն. 1922, 135: Բագարատ Բագրատունու՝ այլ գործերով զբաղվածության մասին վկայող փաստերից մեկը նրա մասնակցությունն է 838 թ. դեպի Անկյուրա և Ամորի արաբների հաղթական արշավանքին (Ե ղ ի ա զ ա ր յ ա ն. 2011, 31):*

[66] *Ջ ա մ չ յ ա ն. 1984, 443:*

մասում: Արաբական լծից ազատագրողից նա չուտով վերածվում է ամենախոհական նվաճողի՝ կոտորելով բնակչությանը և ահ ու սարսափ տարածելով: Ինչպես հավաստում է Ստեփանոս Օրբելյանը, Բաբեկը կնության էր առել Վասակ Սյունու դստերը և «առնէր ընդ ձեռամբ իւրով զգաւառն»[67]: Սակայն չուտով սյունեցիները «անհնազանդ» եղան Բաբեկի «հրամանի և օրինաց»: Նրա դեմ ընդվզում է Բաղասական գավառի բնակչությունը, և նա Աբլ Ասաղ Աղվանեցու օժանդակությամբ սաստիկ կոտորած է կազմակերպում՝ «մաչեաց մինչ ի կանայս և մատաղ մանկտիս»[68]: Հաջորդ տարին Բաբեկը ներխուժում է Գեղարքունիք, կոտորում մոտ 15000 մարդ, քանդում և ավերում է հռչակավոր ծաղկուն Մաքենյաց վանքը: Հայերը թե՛ Սյունիքում և թե՛ Արցախում կատաղի դիմադրություն են ցույց տալիս պարսիկ ասպատակիչներին: Վարդան Արևելցին հիշում է Աբդլհերթ անունով մի պարսիկ զորավարի՝ դարձյալ «ի տանէն Ջահապայ», որը չորս հազարանոց զորքով ասպատակում է Սյունիքը: Նրա դեմ դուրս է գալիս Բաբգեն Սյունին և պարտության մատնում նրան[69]:

Կատարած ավերածությունների և բնակչության կոտորածների համար 837 թ. հայերը ձերբակալում են Բաբեկին: Դրա համար Սահլ Բագրատունին[70] Արմինիայի ու Ատրպատականի կառավարիչ Աֆշինից (835–840) ստանում է մեկ միլիոն դիրհեմ, իսկ նրա որդին, որ Բաբեկին անձամբ տարել և հանձնել էր արաբներին, ստանում է հարյուր հազար դիրհեմ: Բաբեկն իր 3300 յուրայիննների հետ տարվում է Բաղդադ և դատապարտվում տանջալից մահվան:

Հովհաննես Ոսկեբերանի աթոռակալության ժամանակաշրջանում արդեն ուրվագծվում էր արաբական տիրապետության քայքայման հեռանկարը, ուժեղանում էին ներքին երկպառակությունները: Մութասիմ խալիֆն անգամ իր մայրաքաղաքը Բաղդադից տեղափոխում է Սամառա: Տեղական իշխանությունները ձգտում էին անկախանալ, և ավատատիրությունն իր տրոհիչ էությամբ տիրապետող էր դառնում ամբողջ տերության տարածքում: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ հայկական նախարարությունները հաստատում են իրենց իշխանությունը երկրի տարածքի զերակշիռ մասի վրա: Նրանք իրենց այնքան ուժեղ են զգում, որ անգամ պատերազմներ են մղում արաբ զորավարների դեմ՝ զենքով ապացուցելով իրենց իրավունքը հայրենական տիրույթների նկատմամբ: Այդ խառնակ ժամանակներում իրար ետևից փոխվում են ոստիկանները: Բաբեկի ապստամբության ժամանակ խալիֆայությունը հնարավորություն չուներ Հայաստանով լրջորեն զբաղվել, ուստի երկիրը կրկին հնազանդեցնելու ուղղությամբ լուրջ քայլ ձեռնարկվեց միայն 849 թ.:

---

[67] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 115, Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 326:*

[68] *Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861, 115, Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 1983, 326:*

[69] *Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80:*

[70] *Ա բ ու Հ ա ն ի ֆ ա Ա լ - Դ ի ն ա վ ա ր ի. 2005, 218, Յ ա կ ո ւ բ ի. 2005, 387: Սմբատի որդի Սահլ (Սահլ իբն Սինբաթ) կամ Սունբաթ, արաբ պատմիչները նրա անվանը կցում են «ալ-արմանի»՝ հայազգի բառը: Ն. Ադոնցը կարծում է, որ նրա հայրը՝ Սմբատը, Բագրատունի է (Ա դ ո ն ց. 2006, 517):*

849 թ. Մութավաքքիլ-Ալալլահ խալիֆը[71] (847–861) «զաւրաւք բազմաւք» Հայաստան է ուղարկում «զոմն ի յաւագ նախարարացն» Աբու Սաիդ Մուհամմադ իբն Յուսուֆին (850–851), որին հայ մատենագիրները հիշում են Աբուսեթ անվամբ: Արքունիքը նրան այնտեղ էր գործուղել հարկային նոր խստություններ կիրառելու «առաքելութեամբ»: Մոտ կես դար ներքին երկպառակություններից տկարացած և հարկային եկամուտներից զրկված՝ խալիֆայությունը փորձում է բարելավել իր ֆինանսական վիճակն ու վերականգնել դիրքերը[72]: Տարոն-Սասունի իշխան Բագարատ Բագրատունին և Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունին փորձում են հարցը լուծել խաղաղ ճանապարհով, և կանխել Աբուսեթի մուտքը Հայաստան: Բագարատի գլխավորած հայ իշխանների պատվիրակությունը սահմանագլխում հանդիպում է Աբուսեթին: Վերջինիս ոսկի, արծաթ ու թանկարժեք նվերներ են մատուցում և խոստանում վճարել արքունի հարկերը, եթե արաբները համաձայնեն առանց պատերազմի հեռանալ Հայաստանի սահմաններից: Այստեղ ուշադրության է արժանի այն, որ արաբները, իրենց սովորության համաձայն, թեև որոշել էին դավադրության և խաբեության միջոցով պառակտել հայերի ուժերը և իրենց կողմը գրավել աչքի ընկնող գործիչներին, սակայն տեսնելով նրանց «անլոյծ միաբանութիւն ուխտի» վճռականությունը՝ ստիպված են լինում կեղծել և քողարկել իրենց իսկական մտադրությունները: Հայերը, որ նախապես պատրաստել էին հարկերը, անմիջապես «տան տանել նմա զհարկս եւ հասս արքունի, եւ դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն»[73]: Աբուսեթը, ոչ այնքան իրեն մատուցված նվերներից չլացած, որքան հայ նախարարների համախմբվածությունից վախենալով, շտապ վերադառնում է Բաղդադ[74]: Մինչ այդ նա Աղձնիքի և Արզնի էմիր, Բագարատ Բագրատունու քրոջ ամուսին Մուսա իբն-Ջուրարային նշանակում է Հայաստանի կառավարիչ և ուղարկում Տարոն՝ հարկերը հավաքելու ու կոտրելու հայերի դիմադրական ուժը: Մուսան ներխուժում է Տարոն և հասնում Բագարատի ճմեռանոց՝ Մուշ: Քանի որ թշնամու ուժերը մի քանի անգամ գերազանցում էին հայերին, Բագարատը օգնության է կանչում Աշոտ Արծրունուն: Վերջինս իր եղբայրների ու մարտական պատրաստականությամբ երկու տասնյակ այլ նախարարների հետ շտապում է Տարոն՝ Բագարատին օգնության: Հայ նախարարների միացյալ զորքը ուժգին ջարդ է տալիս թշնամուն ու հալածելով՝ հասնում մինչև Բաղեշ:

Բացի Մուսայից, Աբուսեթը հատուկ ծրագրով Հայաստան է ուղարկում նաև Ալա-Ծովափիին, ով Մանազկերտի կայսիկ ցեղից էր: Վերջինիս հանձնարարված էր ասպատակել Վասպուրականը, կողոպտել ու կոտորել բնակչությանը, հարկերը գանձել առավելագույն չափով[75]: Արաբական զորքերի գլուխ անցած՝ Ալա-Ծովափին Վասպուրականում «զերիվէրս, աւերէր, յափշտակէր կապուտ կողոպուտ գործէր ընչից եւ ստացուածոց, յափշտակէին զայր եւ զկին

[71] *Իր չարագործությունների և գազանային բռնակալության համար այնքան վատ համբավ էր ստացել, որ նրան անվանել են «արաբների Ներոն» (Լ ե ո. 1967, 427):*

[72] *Ն ա լ բ ա ն դ յ ա ն. 1956, 121:*

[73] *Ա ր ծ ր ու ն ի եւ Ա ն ա ն ու ն. 2010, 141:*

[74] *Մ ե լ ի ք-Բ ա խ շ յ ա ն. 1968, 354:*

[75] *Ա ր ծ ր ու ն ի եւ Ա ն ա ն ու ն. 2010, 142, 144:*

եւ զժառանգութիւն նոցա: Առնէր ասպատակ եւ ի կողմն Անձաւացեաց տէրութեանն, եւ անտի եւս առնուին աւար ի պատճառս ոտճկաց պիտոյից այրուձիոյն»[76]: Նրա հարկային բռնութիւնները զսպելու անհաջող փորձերը հայերին մղում են վճռական գործողութիւնների: Արճուճ գյուղի մոտ Արծրունյաց իշխան Աշոտն իր զորքով հարձակվում ու կոտորում է Ակա-Ծովափիի հրոսակախումբը:

Տարոնի և Վասպուրականի ապստամբությունները վերջնականապես ճնշելու ու արաբների խայտառակ պարտության վրեժը լուծելու համար Մուհամմադը Աբուսեթին երկրորդ անգամ է ուղարկում Հայաստան: Սակայն Աբուսեթը ճանապարհին մահանում է, և զորքերի հրամանատարությունը հանձնվում է նրա որդուն՝ Յուսուֆին, որը Հայաստան է հասնում 851 թ.: Մտնելով Աղբակ գավառ՝ նա գրավում է Հաղամակերտը: Աշոտը հարկերը կանոնավոր և անխափան վճարելու հավաստիացումներ պարունակող գրությամբ և մեծ ընծաներով նրա մոտ է ուղարկում իր մորը՝ Հռիփսիմե տիկնոջը: Արծրունյաց տիկնոջ դիվանագիտական առաքելությունը դրական արդյունք է տալիս, և Յուսուֆը զորքով շարժվում է Խլաթ: Ինչպես վկայում է Թովմա Արծրունին, արտաքուստ բարեկամական վերաբերմունք ցույց տալով՝ նա ձերբակալում է Բագարատին և «զամենայն ազգատոհմն նորա», որոնց չղթայակապ ուղարկում է Սամառա[77]: Այս փաստը հիշելով՝ բարձրաստիճան հոգևորական Հովհաննես Դրասխանակերտցին, հավատարիմ դասային համերաշխության կանոնին, առիթը բաց չի թողնում չեշտելու, որ դա Հովհաննես Ոսկեբերանի հայրապետի նկատմամբ Բագարատի անարդարացի վերաբերմունքի արժանի պատասխանն էր. «Եւ որ սակս սրբոյ հայրապետին զանիրաւան խորհէր, աստ ապա զերաւացի պատուհաս վրէժխնդրութեան ըստ արժանին յանձին իւրում կրէր»[78]: Բագարատին ձերբակալելուց հետո Յուսուֆն ասպատակում և տակնուվրա է անում Տուրուբերանի ու Աղձնիքի շրջանները: Արաբական զորքերի ավերածությունները համաժողովրդական ցասում են առաջացնում հայ բնակչության մեջ: Ապստամբության առաջին ազդանշանը տալիս են Սասունի լեռնային շրջանի՝ Խութի գյուղացիները: Յուսուֆի դեմ եղած դժգոհությունն ու վրիժառության զգացումն ավելի էր մեծանում այն ժամանակ, երբ մարդիկ ոտնահարված էին տեսնում իրենց կրոնական զգացմունքները: Արաբ պատմիչների վկայությամբ՝ ապստամբությունը նախապատրաստված էր հայ ազնվականների կողմից, որոնք հենվում էին ազատագրական պայքարի մեծ փորձ ունեցող քաջարի խութեցիների վրա[79]: Խութի գյուղացիները՝ Հովնանի գլխավորությամբ, հարձակվում են Մուշում կենտրոնացած արաբների վրա: Հայերի վճռական հարձակումից սարսափած Յուսուֆը փախչում և թաքնվում է Մուշի եկեղեցում, «որ յանուն Փրկչին մերոյ չինեալ էր յիշխանէն Բագարա-

---

[76] *Արծրունի եւ Անանուն. 2010, 144:*

[77] *Արծրունի եւ Անանուն. 2010, 150, Բալազուրի. 2005, 282, Յակուբի. 2005, 393:* Այս տեղեկատվությունն առկա է հայկական և արաբական բազմաթիվ սկզբնաղբյուրներում: Բագարատի երկու որդիներին՝ Աշոտին և Դավիթին, հաջողվում է փախչել ու ապաստանել Սասունի լեռներում (*Դրասխանակերտցի. 2010, 431*):

[78] *Դրասխանակերտցի. 2010, 430:*

[79] *Բալազուրի. 2005, 282:*

տայ, ի ծախս մեծամեծ գանձուց իբրեւ Յ. (300) հազարաց»[80]: Սակայն հենց այդտեղ Հովնանի մարդիկ սպանում են չարագործ Յուսուֆին: Հայերը պարտութեան են մատնում արաբներին, ազատում գերիներին: Բալազուրին վկայում է, որ Յուսուֆի սպանութենից հետո «նրա ճամբարում եղած ամեն ինչը տարան»[81]: Մուշի հիշյալ դեպքերը տեղի են ունեցել 851–852 թթ. ձմռանը: Խուժեցիների հաղթանակը մեծ ոգեւորութիւն է առաջացնում Հայաստանի մյուս շրջանների հայութեան մէջ և անհանգստացնում արաբական իշխանութիւններին: Ընդվզումները ճնշելու և Հայաստանը կրկին հպատակեցնելու համար չուտով Մութավաքքիլ խալիֆն այստեղ է ուղարկում ծագումով թուրք, բերտ ու վայրագ զորավար Բուղա Շարաբիին: Բուղայի մեծաքանակ զորքի ներխուժումը Հայաստան իրարանցում և խուճապ է առաջացնում հայ ապստամբների շարքերում: Հայերի մէջ սկսված վարանումն ու անմիաբանութիւնը քայքայում և թուլացնում են նրանց ուժերը: Նախկինում եղած փոխադարձ վստահութիւնը տեղի է տալիս անվստահութեան և անհավատարմութեան: Արծրունի պատմիչը ցավով է արձանագրում այդ ժամանակ ստեղծված մթնոլորտը. «Այսպէս տակաւին ի բազումս քայքայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս եւ իւրաքանչիւր ոք այր զընկերէ եւ զեղբարէ իւրմէ ի չարիս խոկային: Եւ թուղթս եւ դեսպանս առ թագաւորն յղէին ծածուկս ի միմեանց. այլ եւ ընդ միմեանս արկանէին բանս քսութեան, եւ ոչ ոք մնայր գէթ երկու ի միասին»[82]: Հայերի անմիաբանութիւնը ձեռնտու էր արաբներին, և Բուղան սրի ու ավերածութեան է մատնում երկիրը. ամենից առաջ դաժանորեն պատժում է Տարոնի և Սասունի բնակիչներին: Հայ նախարարներն ու ապստամբութեան առաջնորդները կալանավորվում և ուղարկվում են Սամառա, որտեղ նրանցից շատերն իրենց կյանքը փրկելու համար մուսուլմանութիւն են ընդունում: Արաբ պաշտոնյաներն ու զինվորները սեփականացնում էին հայերի հողատարածութիւններն ու ունեցվածքը և հաստատվում այնտեղ: Արաբական զորքերին հետևող վերաբնակիչներն արագորեն բնակեցնում էին հայաթափված բնակավայրերը: Արծրունյաց պատմիչը հիշատակում է Բուղայի ժիրաք անունով հրամանատարին, որը ասպատակում է Ռշտունիքն ու Տոսպը: Ժիրաքը, բնակչութեանը զանգվածաբար կոտորելուց ու աքսորելուց բացի, «զչէնս եւ զաւանս եւ զագարակս հրձիգ արարեալ, անապատ կացուցանէն ի մարդոյ եւ յանասնոյ»: Պատմիչը հիշում է Մարդպետականի եպիսկոպոս Սահակի եղբորը, որը հրաժարվում է ուրացութենից և դիմատվում: Ժիրաքը հրկիզում է Արտամետի եկեղեցին: Բուղան գերիներին ազատութիւն էր չնորհում միայն իսլամ ընդունելու պայմանով: Շատերը մերժեցին կրոնափոխութիւնը, և Բուղան «տանջեաց զնոսա գանիւ»: Մատենագիրն անվանապես հիշում է անդրդվելի մնացած Գևորգ Ակեացուն և Խոսրով Գաբեղյանին[83]:

Բուղան Դվինում բանտարկել էր 150 ազնվազարմ երիտասարդի: Արաբ զորավարը փորձում է նրանց իսլամացնել, սակայն բանտային ծանր պայմանները, կոտանքներն ու հալածանքներն արդյունք չեն տալիս: Բուղան նրանց դիմատում է: Վերջում մնում է յոթ երիտասարդ, որոնք ևս «սկսեցան ի

[80] *Արծրունի եւ Անանուն. 2010, 151:*
[81] *Բալազուրի. 2005, 282:*
[82] *Արծրունի եւ Անանուն. 2010, 153:*
[83] *Արծրունի եւ Անանուն. 2010, 168:*

Քրիստոսէ»: Պատմութիւնը պահպանել է նրանցից չորսի անունը՝ Աւոմ Անձևացի, Մլեհ Վարաժնունի, Գևորգ Բողկացի և Վասակ Ակեացի[84]: Ոչ տանջանքները և ո՛չ խոստումները չեն ընկճում նրանց, ու նրանք կտրականապես հրաժարվում են իսլամ ընդունելուց, որոնց նահատակութիւնը տեղի է ունեցել հայոց 302 թ. մեհեկան ամսի 25-ին. այն համապատասխանում է 853 թ. նոյեմբերի 17-ին[85]: Դվինում վկայվածները կոչվել են Աւոմեանք՝ Աւոմ Անձևացու անվամբ և անգամ՝ Նոր Աւոմեանք՝ առաջիններից տարբերվելու համար: Հովհաննես կաթողիկոսի կոնդակով մեհեկանի 25-ը հայտարարվում է Նոր Աւոմեանց նահատակների հիշատակի օր:

IX դ. 30-ական թվականներին՝ Հովհաննես Ոձայեցու գահակալութեան ժամանակաշրջանում, Հայաստանում Թոնդրակեան աղանդի ճևով սկզբնավորվում է մի շարժում, որը զարգացած ավատատիրութեան դարաշրջանում շուրջ երկու դար ցնցում է Հայաստանը: Այն ուղղված էր Հայոց եկեղեցու դեմ, իսկ նրա առաջնորդ Սմբատ Զարեհավանցին, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու խոսքերով, «ի հիմաց սասանեց առաքեալներին և մարգարեներին»[86]: Սկզբնաղբյուրներում հստակ վկայութիւններ չկան աղանդի հիմնադիր Զարեհավանցու գործունեութեան մեկնարկի ժամանակի մասին, ինչն առիթ է տվել ուսումնասիրողներին աղանդի սկիզբ համարել IX դ. առաջին կեսը[87], նույն դարավերջը և հաջորդ դարասկիզբը: Ժամանակագրական չփոթի սկզբնաղբյուրներից մեկն Ասողիկի վկայութիւնն է. խոսելով Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի գահակալութեան մասին, որը տեղի է ունեցել 898 թ.՝ նա գրում է. «Յաւուրս սորա երեւեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ, ի Ծաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»[88]: Սակայն այս տեղեկութիւնը հերքվում է ծանրակշիռ այլ վկայութիւններով: Ըստ XI դ. գիտնական, ռազմական և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի՝ Սմբատ Զարեհավանցին «երևեցաւ յաւուրս տեառն Յովհաննիսի և Սմբատայ Բագրատունւոյ»[89]: Իր թղթերում Մագիստրոսը հստակեցնում է, թե ում նկատի ունի «տեառն Յովհաննիսի» և «Սմբատայ» անունների ներքո: XI դ. 50-ական թվականների սկզբին իր մի թղթում դիմելով Թոնդրակեան ղեկավարներին՝ Մագիստրոսն ասում է. «... զհարիւր և զեօթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց Մեծաց, նոյնչափ և Աղուանից և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ և ոչ լուայք, խօսեցան և յանդիմանեցին և ոչ պատկառեցայք, անիծեցին և արտաքսեցին և ոչ զղջացայք»[90]: Նույն ժամանակներում գրած մեկ այլ թղթում նա վկայում է, թե Թոնդրակեաններն «աւելի քան զերկերիւր ամ ապականեալ

---

[84] *Արծրունի եւ Անանուն. 2010, 192:*

[85] *Արծրունի եւ Անանուն. 2010, 193, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 80, Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 165, Օրմանեան. 2001, 1102, §649: Համաձայն անչարժ տոմարի այն ղրվել է մարտի 3-ին (Զամչյան. 1984, 448):*

[86] *Մագիստրոսի թղթերը. 1910, 153:*

[87] *Այս տեսակետն առաջին անգամ հայտնել է Մ. Զամչյանը (Զամչյան. 1984, 884):*

[88] *Ասողիկ. 2010, 742:*

[89] *Մագիստրոսի թղթերը. 1910, 153:*

[90] *Մագիստրոսի թղթերը. 1910, 154:*

զաշխարհս ամենայն, արձանացուցին զայնպիսի ատրուշան իւրեանց վաւաշ մոլութեանն»[91]: Սրան համապատասխանում է Մագիստրոսի մյուս վկայությունը, երբ չեչտում է, թե մինչև իր ժամանակն ավելի քան 15 կաթողիկոս բանադրել է թոնդրակյաններին[92]: Նշելով թոնդրակյանների՝ շուրջ 200-ամյա գոյության և ավելի քան 15 կաթողիկոսից նրանց բանադրված լինելու մասին՝ Մագիստրոսը նկատի ուներ աղանդի կազմավորման և հայ կաթողիկոսների՝ նրանցից սահմանազատվելու սկզբնակետը[93]: Թոնդրակյանների սկզբնավորումը նա տեսնում է Հովհաննես Ոսկեբերանի կաթողիկոսի (833–855) և նրան ժամանակակից Սմբատ Բագրատունի սպարապետի (822–855) ժամանակաշրջանից:

Հովհաննես Դ Հայրապետի աթոռակալության վերջին տարիներին Թոնդրակյան աղանդի ձևով հայ ժողովրդի հոգևոր անվտանգությանը սպառնացող մարտահրավերին գումարվել էին նաև թուրք զորավար Բուղայի ավերածությունները, որոնք մեծ տառապանք էին պատճառում հայ ազգաբնակչությանը: Չնայած ծեր տարիքին՝ ժողովրդի հոգսերով ապրող հովվապետը շրջում էր Հայաստանի գավառներում, գոտեպնդում ու հուսադրում ժողովրդին, փորձում էր ուրացությունից հետ պահել նախարարներին: Նոր Ատոմյանների նահատակությունից (853) մոտ մեկուկես տարի հետո՝ 855 թ.՝ Գեղարքունիքի Սոթք գավառում՝ Մաքենոցաց վանքում գտնվելու ժամանակ, Հովհաննես կաթողիկոսը վախճանվում է:

Եզրակացություն

Այսպիսով՝

– VIII–IX դարերում կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվում Հայոց եկեղեցու տնտեսական հիմքը կազմող ավատական հողատիրությունը, նոր ձևավորված վանքերը ստեղծում են իրենց ենթակառուցվածքները, ձեռք բերում ընդարձակ հողատարածություններ: Դավանաբանական վեճերի, իսլամի կողմից տեղի ունեցող գրոհների պայմաններում եկեղեցին ամրապնդում է իր տեսական հիմքերը, ստեղծում ինքնուրույն օրենսդրություն: Հայոց եկեղեցու ծիսադավանական և աստվածաբանական սկզբունքների հստակ սահմանումը նպաստում է ազգային ու կրոնական ինքնության գիտակցման զարգացմանը:

– Քրիստոնյաների շարունակական կրոնական հալածանքները բարձրակետին են հասնում IX դ. կեսին՝ Մութավաքքիլ խալիֆի օրոք: Հայ եկեղեցական գույքի և ունեցվածքի բռնագրավումներին զուգահեռ՝ առաջնային է դառնում հայերի հավատափոխությունը, որի վկայությունը, պատմիչների մոտ պահպանված տեղեկություններից բացի, այդ շրջանում վկայաբանական գրականության լայն տարածվածությունն է:

– IX դ. առաջին կեսին Հայաստանում տեղի են ունենում եկեղեցական-կրոնական լուրջ գործընթացներ: Ասորի միաբնակ եկեղեցու հեղինակավոր ներկայացուցիչ Նանա սարկավագի՝ Հայաստան ժամանելու փաստից ենթադրվում է, որ փորձ էր կատարվում ստեղծել հայ և սիրիական եկեղեցիների

[91] *Մագիստրոսի թղթերը. 1910, 65:*
[92] *Մագիստրոսի թղթերը. 1910, 169:*
[93] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1957, 338:*

միություն, ձևավորել ընդհանուր «ռազմաճակատ» քաղկեդոնականության դեմ:

– Դավիթ Բ Կակաղեցու օրոք Հայաստանի ինքնավարության վերականգնման ոչ դյուրին ընթացքն ուղեկցվում է խալիֆայական իշխանության գերակայությունը չճանաչող տեղական կառավարիչների ապստամբություններով, որոնք մեծ ավերածություններ են պատճառում Հայաստանին: Նրա օրոք արաբների կրոնական հալածանքներին զուգահեռ՝ ակտիվանում են քաղկեդոնականների ոտնձգությունները Հայոց եկեղեցու հետևորդների նկատմամբ:

– Հովհաննես Դ Ոձայեցի կաթողիկոսն ընտրվել է առանց «իշխան իշխանացս Հայոց» Բագարատ Բագրատունու համաձայնության: Պաշտոնանկ արված, այնուհետև վերականգնված կաթողիկոսը խստապահանջ հետևողականությամբ աշխատել է կանխել հայ նախարարների հավատուրացության դեպքերը, պահանջել հետևել քրիստոնեական պատվիրաններին: Նրա աթոռակալության ժամանակաշրջանում արդեն ուրվագծվում էր արաբական տիրապետության քայքայման հեռանկարը, ուժեղանում էին ներքին երկպառակությունները: IX դ. կեսին Հայաստանում ծայր է առնում ազատագրական չարժում հարկահավաքությունից արաբներին հեռացնելու պահանջով, որը տանում էր ինքնավարության վերականգնմանը: Հայկական նախարարությունները իրենց իշխանությունն են տարածում երկրի տարածքի գերակչիռ մասի վրա: Նրանք իրենց այնքան ուժեղ են զգում, որ անգամ պատերազմներ են մղում արաբ զորավարներ Աբուսեթի, Յուսուֆի և Բուղայի դեմ՝ զենքով ապացուցելով իրենց իրավունքը հայրենական տիրույթների նկատմամբ:

Վարդան Ալեքսանյան – պ. գ. թ., դոցենտ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունը՝ Հայոց եկեղեցու պատմությունն ավատատիրության դարաշրջանում: Հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկի և չորս 20 հոդվածի: vardanalexanyan406@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբու Հանիֆա Ալ-Դինավարի. 2005, Մատյան երկարապատում ավանդությունների (Քիթաբ ալ-Ախբար ալ-Թիվալ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Աբու Յուսուֆ. 2005, Հարկերի մատյան (Քիթաբ ալ-Խարաջ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 648 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Վենետիկ, Սուրբ Ղազարի տպ., 590 էջ:

Ակինեան Ն. 1910, Կիւրիոն կաթողիկոս վրաց. Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եոթներորդ դարու մեջ, Մխիթարեան տպարան, Վիեննա, 315 էջ:

Ակինյան Ն. 1922, Թէոդորոս Ապիկուռա եւ Նանա ասորի Հայաստանի մէջ եւ Նանայի Յովհաննու մեկնութեան հայերէն թարգմանութիւնը. – Մատենագրական հետազօտութիւններ, Քննութիւն և բնագրեր, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 232 էջ:

Բալազուրի. 2005, Երկրների նվաճումը (Ֆուտուհ ալ-Բուլդան), ԵՊՀ հրատ., 703 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910, բնագիրն յառաջաբանով և ծանոթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապօլ, Տպարան Գէորգ Մաճոյեանցի, 352 էջ:

Գրիգորյան Գր. 1973, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX–XIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 267 էջ:

Եղիազարյան Ա. 2020, Ազգային-եկեղեցական ժողովները Հայաստանում Դ-ԺԱ դդ., «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 114 էջ:

Եղիազարյան Ա. 2010, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը, ԵՊՀ հրատ., Երևան, 186 էջ:

Եղիազարյան Ա. 2011, Հայ Բագրատունիների տերությունը (885–908), Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց, Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, ժ դար, Պատմագրութիւն, Գիրք Ա, Լիբանան–Անթիլիաս, ԵՊՀ հրատ., 795 էջ:

Լեո. 1967, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 786 էջ:

Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց. 1813, հ. Դ, Վենետիկ, Սուրբ Ղազարի տպ., 491 էջ:

Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 687 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 524 էջ:

Հովսեփյան Գ. 1913, Քարտեզ հայ հնագրության, «Շողակաթ», Վաղարշապատ, 218 էջ:

Մանանդյան Հ. 1978, Երկեր, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 646 էջ:

Մարկուարտ Յ. 1912, Վրական Բագրատունեաց ծագումը.– «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 6, էջ 333–340, 1913, թիւ 5, էջ 281–293, թիւ 8, էջ 463–475:

Մելիք-Բախշյան Ստ. 1968, Հայաստանը VII–IX դարերում, Երևան, «Միտք» հրատ., 424 էջ:

Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց. 1860, Մ. Էմին, Մոսկվա, Լազարեան Ճեմարանի տպ., 69 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 383 էջ:

Յակուբի. 2005, Պատմություն (Տարիխ), Երևան, ԵՊՀ հրատ., 703 էջ:

Յայսմաւուրք. 1706, Կ. Պոլիս, Գրիգոր դպրի տպ., Արացի ժե, Յունվարի իբ:

Յովհաննէս Դրասխանակերտցի. 2010, Պատմութիւն հայոց, Մատենագիրք հայոց, ԺԱ հատոր, ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս–Լիբանան, ԵՊՀ հրատ, 795 էջ:

Յովսէփեանց Գ. 1931, Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 23 էջ:

Նալբանդյան Հ. 1956, Արաբացի ոստիկանները Հայաստանում. – ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., № 8, էջ 105–124:

Չամչյան Մ. 1984, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 1060 էջ:

Ռենու Շ. 2008, Հայոց ծիսական տարվա զարգացումը VIII–XII դարերում ծիսական մեկնությունների և գրքերի հենքի վրա. – ՊԲՀ, № 3, էջ 77–102:

Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, ժամանակագրութիւն, աշխատ. Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի» հրատ., 502 էջ:

Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական. 1861, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 386 էջ:

Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ. 2010, Պատմութիւն Տիեզերական. – «Մատենագիրք հայոց», հ. ԺԵ, ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս–Լիբանան, ԵՊՀ հրատ., 893 էջ:

Տեր-Ղևոնդյան Ա. 1977, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը. – ՊԲՀ, № 1, էջ 117–128:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, էջմիածին, Մայր Աթոռ, 1870 էջ:

Ֆասմէր Ռ. 1929, ժամանակագրութիւն Հայաստանի ոստիկաններու Ալ-Ամին եւ Ալ-Մամուն խալիֆների օրոք. – «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), թիւ 10–11, էջ 650–667:

Гиргас В. 1865, Права христиан на Востоке по мусульманским законам. СПб., В печатне В. Головина, 116 с.

Марр Н. 1905, Аркаун, монгольское название армян в связи с вопросом об армянах-халкедонитах. – «Византийский временник», 68 с.

Тер-Гевондян А. 1977, Армения и Арабский халифат. Ереван, Изд. АН Арм ССР, 320 с.

Юзбашян К. 1988, Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв. М., «Наука», 300 с.

Tritton A. S., 1970, The Caliphs and their Non-Muslim Subjects. London, 1970, 240 p.

ЦЕРКОВЬ В ПЕРИОД ВОССТАНОВЛЕНИЯ ВНУТРЕННЕЙ АВТОНОМИИ АРМЕНИИ
(Первая половина IX века)

ВАРДАН АЛЕКСАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армянская церковь, арабские правители, монастырь, религиозные гонения, Багарат Багратуни, Давид II Какахеци, Ованнес IV Ованеци, Мутаваккил, вероотступничество, восстание, тондракийское движение, мученичество.

В VIII–IX веках феодальное землевладение, составляющее экономическую основу Армянской церкви, претерпевает структурные изменения. Вновь строящиеся монастыри формируют свою инфраструктуру, приобретают большие участки земли. В условиях межконфессиональных споров и нападок со стороны ислама церковь укрепляет свои теоретические основы и создает собственное законодательство. Четкое определение ритуально-религиозных и богословских принципов Армянской церкви способствует развитию осознания национальной и религиозной идентичности.

Продолжающиеся религиозные гонения на христиан достигают апогея в середине IX века при халифе Мутаваккиле. Параллельно с конфискацией имущества и драгоценностей армянской церкви первостепенным становится изменение вероисповедания армян.

В первой половине IX века в Армении происходят серьезные церковно-религиозные процессы. Прибытием в Армению одного из авторитетных представителей ассирийской церкви – дьякона Наны – предпринималась попытка создать Союз армянских и сирийских церквей.

Во время правления католикоса Давида II Какахеци нелегкий процесс восстановления автономии Армении сопровождается восстаниями местных правителей, не признающих верховенство халифатской власти. Параллельно с религиозными гонениями арабов активизируются посягательства халкидонитцев на последователей Армянской церкви.

Католикос Ованес IV Оваеци был избран без согласия Великого князя армян Багарата Багратуни. Свергнутый, затем восстановленный Католикос со строгой последовательностью старался предотвратить вероотступничество армянских князей, требовал следовать христианским заветам. В период его правления уже наметилась перспектива распада арабского господства. В середине IX века армянские князья распространяют свою власть на подавляющую часть территории страны и восстанавливают автономию.

Вардан Алексанян – к. и. н., доцент, преподаватель кафедры истории Армении и обществоведения Иджеванского филиала ЕГУ. Научные интересы: история Армянской церкви в период феодализма. Автор 3 учебно-методических пособий и около 20 статей. vardanalexanyan406@gmail.com

ARMENIAN CHURCH IN THE PERIOD OF RESTORATION OF THE INTERNAL AUTONOMY OF ARMENIA
(First half of the 9th century)

VARDAN ALEXANYAN

S u m m a r y

Key words: Armenian church, Arab rulers, monastery, religious persecution, Bagarat Bagratuni, David II Kakaghetsi, Hovhannes IV Ovaetsi, Mutavaqqil, apostasy, rebellion, Tondrakian movement, martyrdom.

In the VIII-IX centuries, feudal landownership, which constituted the economic basis of the Armenian Church, underwent structural changes. Newly built monasteries form their infrastructure and acquire large plots of land. In the context of interfaith disputes and attacks from Islam, the church strengthens its theoretical foundations and creates its own legislation. A clear definition of the ritual-religious and theological principles of the Armenian Church contributes to the development of awareness of national and religious identity.

The ongoing religious persecution of Christians culminates in the middle of the 9th century under Caliph Mutawakkil. In parallel with confiscation of the

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

property and jewelry of the Armenian Church, the change of religious confession of Armenians becomes paramount.

In the first half of the 9th century, serious ecclesiastical and religious processes took place in Armenia. With the arrival in Armenia of one of the authoritative representatives of the Assyrian church, deacon Nana, an attempt was made to create a Union of Armenian and Syrian churches.

During the reign of Catholicos Davide II Kakahetsi, the difficult process of restoring the autonomy of Armenia is accompanied by uprisings of local rulers who do not recognize the supremacy of the caliphate power. In parallel with the religious persecution of Arabs, encroachments of the Chalcedonites on the followers of the Armenian Church are intensifying.

Catholicos Hovhannes IV Ovaetsi was elected without the consent of the Grand Duke of Armenians Bagarat Bagratuni. The overthrown and then restored Catholicos tried to prevent the apostasy of the Armenian princes with strict consistency and demanded to follow Christian precepts. During his reign, the prospect of the collapse of Arab domination was already outlined. In the middle of the 9th century, the Armenian princes extended their power over the vast majority of the country's territory and restored autonomy.

Vardan Alexanyan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Lecturer at the Department of Armenian History and Social Science, Branch of YSU in Ijevan. Scientific interests: History of the Armenian Church in the Middle Ages. Author of 3 educational-methodical manuals and about 20 scientific articles. vardanalexanyan406@gmail.com

ՀՏԴ : 929:891.981 Չարենց + 891.981

Doi:10.54503/0135-0536-2022.3-85

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ
ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (1924, 21 նոյեմբեր – 1925, հունիսի սկիզբ)*

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Ե. Չարենց, Ալ. Մյասնիկյան, Հ. Սուրխաթյան, Տրապիզոն, Ստամբուլ, Աթենք, Հռոմ, Վենետիկ, Ս. Ղազար, Փարիզ, Բեռլին, Վ. Նավասարդյան, Ավ. Իսահակյան, Կ. Զարյան, Հ. Թումանյան:

Նախաբան

1922–1924 թվականները եղիշե Չարենցի ճախ որոնումների տարիներն են. նա իրեն հռչակեց «տրիբուն» բանաստեղծ, «Ես—պինվոր, // Տրիբուն // Բալչևիկ»[1] և փորձեց որոնել արվեստի նոր ձևեր, որոնք պայմանավորված էին հեղափոխական ժամանակների թելադրանքով: Այդ նպատակով 1922 թ. նախաձեռնեց «Երեքի» դեկլարացիան՝ համախոհներ ունենալով Գևորգ Աբովին և Ազատ Վշտունուն, 1923 թ. փորձեց ստեղծել «Ավանգարդ» վերնագրով ֆուտուրոկոնստրուկտիվիստական ամսագիր՝ փորձելով համագործակցել Կարո Հալաբյանի ու Տիգրան Հախումյանի հետ, բայց ներքին տարաձայնությունների և միջոցների բացակայության պատճառով գործը գլուխ չեկավ: 1924-ին Չարենցը Կարո Հալաբյանի և Միքայել Մազմանյանի հետ Մոսկվայում հրատարակեց «Standard» *ամսագրի միակ համարը: Այս ընթացքում գրեց և առանձին գրքերով լույս ընծայեց «Պոեզոգուռնա» (Մոսկվա, 1922), «Կոմալմանախ» (Երևան, 1924) ժողովածուները, «Ռոմանս անսեր» (Մոսկվա, 1922) պոեմը, «Կապկազ» (Թիֆլիս, 1923) թամաշան:*

Չարենցի տաղանդով ոգևորված՝ նրա ստեղծագործական զարգացմանը հետևում էին ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը և գրական քննադատ Հարություն Սուրխաթյանը: Տեսնելով, որ Չարենցը շատ է խորանում իր ճախ որոնումների մեջ և հեռանում արվեստի դասական արժեքներից՝ նրանք որոշեցին պայմաններ ստեղծել, որպեսզի բանաստեղծը մեկնի արտասահման ու չփվի համաշխարհային մշակույթի հետ: Որոշեցին և կազմակերպեցին: 1924 թ. մայիս 14-ին Սուրխաթյանը նամակ է հասցեագրում Մյասնիկյանին. Չարենցը «...մեր բարձր տաղանդն է, պետք է նրան ուղարկել Եվրոպա շրջագայության, աշխարհ տեսնելու: Էլ մարդ չի մնացել ռուս նոր բանաստեղծներից, որ արտասահման տեսած չլինի – արժանի չէ[2] միթե Չարենցը: Շատ բան կտեսնի, շատ բան էլ կգրի: Մոսկվայում գուցե մի

---

* *Ներկայացվել է 05. IX. 2022 թ., գրախոսվել է 12. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Չ ա ր ե ն ց. 1964, 140:*

բան անես այդ ուղղությամբ: Թող գնա մինչև աշուն պտտի: Հազիվ թե մոտ ապագայում նման տաղանդ երևա մեր մեջ: Զարենցը համաշխարհային մասշտաբով պոետ է»[2]:

Զարենցը ոգևորության ու սպասումների մեջ էր. 1924 թ. օգոստոսի 3-ին Մյասնիկյանին հասցեագրած նամակում ասում է, որ արդեն երկու ամիս է, ինչ Երևանում է և նրա հետ ուզում է ճչտել արտասահման գնալու իր ծրագրերը, որովհետև նա է իր «ամբողջ հույսը». «Արտասահման ես ուզում եմ գնալ հոկտեմբերին – 5–6 ամսով»[3]*, ճչտում է երթուղին՝ Գերմանիա, եվրոպական կենտրոններ, Հյուսիսային Ամերիկա: Ծրագրում է գեկուցումներով հանդես գալ հայ գաղութներում՝ ներկայացնել ՀխՍՀ-ի մշակութային, չինարարական հաջողությունները, արդի հայ գրականությունը. «Եթե ինձ արտասահման գնալ չհաջողվի – մտադրություն ունեմ սեպտեմբերի սկզբներին վերադառնալ Մոսկվա և վերջնականապես հաստատվել այնտեղ»*[4]:

Նախապատրաստական աշխատանքներ

1924 թ. սեպտեմբերի 4-ին Մյասնիկյանը, որպես ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար, Թիֆլիսից հեռագրում է Երևան, կենտկոմ Աշոտ Հովհաննիսյանին. «Թիֆլիս ժամանած Զարենցը դիմել է արտասահման մեկնելու հարցով, այս կապակցությամբ հղված է ՀԿԿ կենտկոմի դրական վերաբերմունքը: Եթե ՀԿԿ կենտկոմը չառարկի Զարենցի արտասահման մեկնելուն՝ կխնդրեի շտապ հաղորդել, թե ի՞նչ միջոցների հաչվին կարելի կլինի նրան ուղարկել»[5]:

1924 թ. սեպտեմբերի 9-ին ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղարության նիստում (քարտուղար՝ Մյասնիկյան) որոշվում է Զարենցին գործուղել արտասահման և հատկացնել անհրաժեշտ միջոցներ (2000 ռ.):

«Լսեցին. *25. Ընկեր Զարենցի մասին (ՌԿԿ կենտկոմի հեռագիրը):*

Որոշեցին. *ՀԿԿ կենտկոմի խնդրանքի համաձայն՝ չառարկել ընկեր Զարենցին արտասահման գործուղելու դեմ՝ նրան հատկացնելով անհրաժեշտ միջոցներ»*[6]:

Այդ օրերին՝ օգոստոսի վերջերից մինչև սեպտեմբերի 13-ը, Զարենցը Թիֆլիսում էր, որտեղից Մյասնիկյանի հետ մեկնում է Մոսկվա՝ կարգավորելու ուղևորության հարցերը: Անցագիր (վիզա) ստանալը ձգձգվում է շուրջ մեկ ամիս: Նոյեմբերի 17-ին ԽՍՀՄ արտգործժողկոմիսարիատի կողմից Թիֆլիսում Զարենցին տրվում է Թուրքիա մուտք գործելու անցագիր:

Զարենցի անձի շուրջ այս ուշադրության պայմաններում և հատկապես արտասահման մեկնելուց առաջ կարևոր է 1924 թ. նոյեմբերի 29-ին՝ Հայաստանի խորհրդայնացման տոնական օրը, «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում Հ. Սուրխաթյանի տպագրած «Խորհրդային Հայաստանի գրական քառամյակը» ամփոփիչ հոդվածը. «Քառամյակ, որ արժե մի ամբողջ

---

[2] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 404, ց. 3, գ. 7, թ. 306: Տե՛ս նաև Զ ա ր ե ն ց. 1967, 720:*

[3] *Զ ա ր ե ն ց. 1967, 407–408:*

[4] *Զ ա ր ե ն ց. 1967, 407–408:*

[5] *Զ ա ր ե ն ց. 2017, 289, 486:*

[6] *Զ ա ր ե ն ց. 2017, 289, 486:*

քառանամյակ: <...>: Ընդհանուր վերածնունդի հետ հայ գրականությունն էլ թևակոխում է իր աննախընթաց զարգացման շրջանը: <...>:

Մեր այսօրվա գրականության մեջ առաջնակարգ տեղ է գրավում Եղիշե Չարենցը: Պրոլետարական հեղափոխությունը հանճին Չարենցի հայ գրականությանը տվել է մի խոշորագույն բանաստեղծ, որն իր տաղանդով, թափով, պատրաստությամբ ու անվերջ որոնումներով <...>, իր ուժեղ ղրոշմը դրել է մեր բոլոր երիտասարդ գրողների վրա: Նույնիսկ նրանք, որոնք տաք բանավեճեր են ունեցել Չարենցի դեմ, մերժել ու ամենախիստ քննադատության ենթարկել նրա գործերը, հենց դրանք խորապես ազդվել են նրանից, նրա գրելու ձևից, նյութից:

Չարենցի գրելու ձևերը հիշեցնում են և՛ հին վարպետներին, և՛ ֆուտուրիստներին: Եվ ի՛նչ անբնական կամ խոտելի բան կա այստեղ <...>: Եվ մեր բոլոր պրոլետ գրողները այդպես էլ գրում են, բայց ոչ անմիջապես ֆուտուրիստ աղբյուրից վերցրած, այլ Չարենցի արդեն պատրաստած, հայացրած ձևերից: <...>:

Չնայած իր երիտասարդ հասակին՝ այնպիսի մնայուն գործեր է տվել հայ վերածնվող նոր գրականությանը, որ նրանք պատվավոր տեղ կարող են ունենալ ամեն մի մեծ գրականության մեջ: Հեղափոխական տարերքը, քաղաքացիական կռիվները, պրոլետարիատի հավաքական կամքի արտահայտությունը, նրա հերոսությունը, գրոհները, հաղթանակները, ստեղծագործական համառ ճիգերը, պողպատի, էլեկտրաուժի, երկաթե մկանունքի գովքը – այս ամենը տաղանդավոր արտահայտություն են գտել Չարենցի գործերում: Նրա հորիզոնը համաշխարհն է, մոտիվները՝ միջազգային <...>, սակայն այդ բոլորը բեկվում են նրա մեջ խորհրդային հայ միջավայրի պրիզմայով: <...>:

Չարենցը պակասություններ չունի՞: <...>: Այո՛, ունի վրիպումներ, սայթաքումներ, թույլ գործեր: <...>: Բայց այդ տաղանդավոր գրողի թույլ գործերի կողքին տասնապատիկ ավելի ուժեղ, ազդող, ուրիշներին իր հետևից տանող գործեր կան, որոնք Չարենցին Չարենց են դարձրել՝ Խորհրդային Հայաստանի այսօրվա ամենամեծ հեղափոխական պոետը»:

Այսինքն՝ Չարենցը «... իր կոչման գիտակցությունը ճիշտ է ըմբռնել»[7]:

Արտասահման մեկնելուց առաջ հիշարժան է նաև 1924 թ. մարտի 1-ին և 8-ին Փարիզի «Ապագա» շաբաթաթերթում Արշակ Զոպանյանի տպագրած «Եղիշե Չարենց» հոդվածը: Զոպանյանի ձեռքին էին «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակը (Մոսկվա, 1922) և «Պոեմներ» (Կ. Պոլիս, 1923) ժողովածուն. «Չարենց հայոց մեծագույն բանաստեղծներեն մին է ու մին ամենեն ինքնատիպ ու բազմազան բանաստեղծներեն, որ որևէ ազգի մեջ երևան եկած ըլլան: <...>: Չարենց անհավասար է, իր ձևը միշտ չունի Տերյանի արտահայտական անթերի գեղեցկությունը, բայց իր քերթողական անձնավորությունը ավելի զորեղ, ավելի ընդարձակ ու բազմաճև է, քան Տերյանինը: <...>: Չարենց այդ ապացույցներուն (ժողովրդի ուժեղ ու կորովի ոգու՝ Դ. Գ.) չքեղագույններեն է, և ինչ որ ամենեն ավելի հատկանշական է իր գործին մեջ, հոն տիրող առողջ, կորովի, լավատես, հավատավոր ոգին է, այնքան տարբեր Հայոց դարավոր գրականության մեջ հաճախ հայտնվող եղերերգական մելամաղձիկ կամ

[7] «Խորհրդային Հայաստան», 29. XI. 1924:

վհատ հոգեբանուվթենեն: Զարենց հայ հանճարի նոր հաստատում մըն է, ու նույն ատեն՝ բարեգուշակ նշան մը հայ ցեղի հոգեկան զորացման»[8]*:*

«Ես իմ անուշ Հայաստանի …»-ի մասին. «… Հայաստանը երգող հոյակապ տաղը, որ հայ բանաստեղծության ծաղկաքաղներուն հավիտենական զարդերեն մին պիտի ըլլա»[9]*: Զարենցին տեսում է եվրոպական գրաղաչտում. «Հայնեի մը քնարական սրամտությունը կը միացնե Վերհարնի մը դյուցազներգական ամեհի ավյունին», նկատում է բանաստեղծի «խառնվածքի հազվագյուտ բարդությունը», «անձնական խառնվածքին որոշ կնիքը» տերյանական «երգուն զմայլելի փափկություն»*[10] *ունեցող արվեստի ազդեցություններուն վրա:*

Պոեմների կապակցությամբ. «Այդ քերթվածներու խումբին մեջ վերակենդանացած կը գտնեք, բոլորովին ուրիշ չեչտով ու տարողությամբ, բայց նույնքան լայն ու հզոր չունչը, որ Նարեկացիին, Աբովյանին և Ալիշանին գործը կուռեցնե, դյուցազներգության թռիչքը Սիամանթոյին, Վարուժանին և Թումանյանին, որոնց վաղաժամ խորտակումը կ՛ողբանք, այդ էջերուն նորափետուր կը թևաբախե, ուրիշ խոսքերով, ուրիշ պատկերներով, արտահայտում բոլորովին տարբեր, նոր շրջանի մը, բայց որակով և զորությամբ նույն»[11]*:*

Ուշագրավ է, որ Զարենցի բանաստեղծական ծննդաբանությունը Զոպանյանն առնչում է ոչ միայն Տերյանի, այլև Աբովյանի ու Թումանյանի հետ և նորից գնահատում. «… բարձր մշակույթի բանաստեղծ մըն է, արվեստագետ քերթող մը, որ իր ամենեն արտառոց թվող նորաստեղծություններուն մեջ իսկ գիտակից և հաշվված գեղեցկություն մը կ՛իրականացնե», համարում է «… մեր ազային քերթության ամենեն թանկագին դեմքերեն մին»[12]*: Զոպանյանը Զարենցի անվան հետ է կապում հայոց ազգի վերածնությունը. «… մեր ցեղին համար՝ հայրենի հողին վրա՝ արդեն կ՛ընծայե ներկա մը վերածնություն: <…>: Ծյուրած, արյունաքամ, սպառած ժողովուրդե մը այդպիսի բանաստեղծ չեյլեր. մեր ժողովուրդը, թիվով նվազած, հոգվով ավելի քան ուժեղ է և ատոր բազմապատիկ ապացույցները կուտա»*[13]*: Ըստ նրա՝ Զարենցն այդ ապացույցներից չքեղագույնն է:*

1924 թ. հոկտեմբերին, մինչև արտասահման մեկնելը, Սիմոն Հակոբյանը Վիեննայի Մխիթարյանների տպարանում լույս է ընծայում «Եղիչե Զարենց» մենագրությունը՝ գրողի ստեղծագործության առաջին լուրջ քննադատական վերլուծությունը: 1922–1924 թթ. Հակոբյանի խմբագրությամբ նախ՝ Վիեննայում, ապա՝ Բեռլինում, վերստին՝ Վիեննայում լույս էր տեսնում «Արեգ» պարբերականը, որի էջերում բազմիցս տպագրվել են Զարենցի գործերը, ինչպես նաև եղել են դրական անդրադարձներ նրա ստեղծագործությանը: Սա ճանաչողական նախադրյալ էր գրողի արտասահմանյան ուղևորությունից առաջ:

---

[8] *«Բանբեր Երևանի համալսարանի», 1977, 135–141: Տե՛ս նաև Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 11–19:*

[9] *Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 11–19:*

[10] *Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 14:*

[11] *Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 15:*

[12] *Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 16:*

[13] *Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980, 18:*

Այս հոդվածները գաղափարապես նախապատրաստում են Չարենցի առաջիկա ուղևորությունն արտասահման, իսկ նա նոյեմբերի կեսից Բաթումում սպասում էր մեկնումի. նախօրյակին հանդիպում է տեղի հայկական դպրոցի աշակերտներին: Նոյեմբերի 20-ին Բաթումում գրում է «Մովսիին» բանաստեղծությունը[14]*:*

Չարենցի արտասահմանյան ուղևորությունը լուսաբանել են նաև Սուրեն Աղաբաբյանը, Գառնիկ Անանյանը, ավելի հիմնավոր՝ Ալմաստ Զաքարյանը[15]*:*

Մեկնումը

1924 թ. նոյեմբերի 21-ին Բաթումից «Բուկովինա» նավով Չարենցը մեկնում է արտասահմանյան շրջագայության: Չարենցի կինը՝ Արփենիկ Տեր-Աստվածատրյանը, նրա արտասահմանում եղած ժամանակ ուսանում էր Մոսկվայում:

Չարենցն արտասահմանում ընկալվում է որպես ԽՍՀՄ խորհրդանշան, որպես սոսկ միայն կարմիր բանաստեղծ: Նրան սիյուռքն այսպես թե այնպես ծանոթ էր Արշակ Զոպանյանի, Սիմոն Հակոբյանի՝ արդեն նշված և Վարդան Հայկունու ու Հակոբ Օշականի չնշված հոդվածներով[16]*: Վերաբերմունքը շատ հակասական էր՝ ոչնչացումից մինչև բարձր գնահատություն:*

Նոյեմբերի 23–24-ին լինում է Տրապիզոնում, հանդիպում խորհրդային հյուպատոսին, նրանից լսում Ալիի պատմությունը և գրում «Լենինն ու Ալին» պոեմը: Հաջորդ օրը Տրապիզոնից «Խորհրդային Հայաստան»-ի խմբագիր Եղիա Զուբարին է ուղարկում «Լենինն ու Ալին»՝ հետևյալ գրությամբ. «P. S. Պոեմի նյութը վերցված է իրականությունից: Տրապիզոնի մեր համամիութենական հյուպատոսն ինձ պատմեց, որ Լենինի մահվան լուրը Տրապիզոն հասնելու օրը, կեսգիշերին իր մոտ է գալիս Ալի անունով մի թուրք նավաստի՝ իր վիշտն ու հարգանքը հայտնելու»[17]*:*

Ակնարկները խորքային են, որովհետև պատմական իրավիճակի բերումով Լենինի մահը պետք է ողբար հատկապես թուրք Ալին և ոչ թե հայ Ալեքը, որովհետև Լենինը Թուրքիայի բարեկամն էր և ոչ թե Հայաստանի: Լենինը Թուրքիային տվել էր ոսկի, զենք, հրահանգիչ սպաներ, Ստամբուլում կառուցել փամփուշտի և վառոդի գործարաններ, իսկ Հայաստանին միացնելու փոխարեն՝ Ադրբեջանին էր կցել Նախիջևանն ու Արցախը, պայմանագրով Թուրքիային հանձնել Կարսի մարզն ու Սարիղամիշը: Այդ իսկ պատճառով Չարենցի վերաբերմունքի բանաձևը սա է. «Մի անո՛ւն դու ունես Ստամբո՛ւլ. – // Մի ջազդային պոռնիկ»[18]*:*

Նոյեմբերի վերջին կամ դեկտեմբերի սկզբին ժամանում է Ստամբուլ դարձած Կոստանդնուպոլիս և այնտեղ մնում մեկ ամսից ավել: Փարիզի «Արձա-

---

[14] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29. XI. 1924:*

[15] *Աղաբաբյան. 1977, 7–35, Անանյան. 1980, 7–90, Զաքարյան. 2003, 283–421, Զաքարյան. 2008, 11–172:*

[16] *Տե՛ս «Բազմավէպ» (Վենետիկ), 1923, թիւ 12, 377–378, «Հայրենիք» (Բոստոն), 1924, թիւ 2, 52–64, 1925, թիւ 3, 45–60, թիւ 4, 42–48:*

[17] *Լենինի մահվան տարելիցի կապակցությամբ պոեմը տպագրվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (22. I. 1925):*

[18] *Զարեան. 1964, 224:*

գանք» չաբաթաթերթը տեղեկացնում է. «Ծանոթ բանաստեղծ եղիչե Զարենց Պոլիս հասած է»[19]:

Կ. Պոլսում պետք է լուծվեր ԱՄՆ մեկնելու անցագրի հարցը: Չի լուծվում: Նախատեսել էր լինել Անգլիայում և Իսպանիայում: Նախաճեռնությունը չի իրականանում: Իսկ Ստամբուլում հայությունը, Զարենցի տեսածով, արհամարհված գոյություն էր քարշ տալիս՝ փորձելով ինչպես մամուլում, այնպես էլ կենցաղում հնարավորինս ավելի հաճոյանալ ամեն մի առիթով իրեն նսեմացնող իշխանություններին: Նախատեսված դասախոսությունները Կ. Պոլսի գրական շրջանակի համար չեն կայանում:

«Տեսակցություն մը պ. եղիչե Զարենցի հետ» թղթակցության մեջ նրան տրվում են այսպիսի հարցեր. «Ի՞նչ վիճակի մեջ են Պոլսեն Հայաստան մեկնող գաղթականները: Ճի՞շտ են Ռուսիո ներքին կացության մասին տարաձայնված լուրերը: Ճի՞շտ է, թե Հայաստանի թուրքերը հայերու կողմե ճնշումի ենթարկված են, ինչպես գրած էին Պոլսո թուրք թերթերը: Ո՞ւր է և ի՞նչ գործով կը գբաղի պ. Մակինցյան»[20]: Զարենցը բոլոր հարցերին տալիս է դիվանագիտորեն և սկզբունքորեն ճիշտ պատասխաններ:

Կ. Պոլսում Զարենցն այցելում է Շիշլիի ազգային գերեզմանատուն: Տպագրվել է «Բանաստեղծ եղիչե Զարենց կ'այցելե Շիշլիի ազգ. Գերեզմանատունը» թղթակցությունը. «Բանաստեղծ պ. եղիչե Զարենց, որ Պոլիս կը գտնվի, այցելած է Շիշլիի ազգ. գերեզմանատունը, ուր պ. Գառնիկ Ատիլ իրեն բացատրություններ տված է գերեզմանատան կազմակերպության մասին: Պ. Զարենց այցելած է Օրմանյան Ս-ի (Մաղաքիա Օրմանյան – Դ. Գ.), Ասպետ Ջունդի (Ատովածատուր Ջունդ– Դ. Գ.), եղիա Տեմիրճիպաշյանի և Տիգրան Էյքենճյանի (հայկաբան, թարգմանիչ – Դ. Գ.) դամբարանները և գերեզմանատան բոլոր մասերը: Հարցուցած է նաև, թե ո՞ւր կը գտնվի Մեծարենցի դամբարանը, որ ինչպես հայտնի է կը գտնվի Պալըգլը: Պ. Զարենց գոհ տպավորության տակ մեկնած է գերեզմանատունեն: Գերեզմանատան տպավորության տետրակին մեջ հետևյալը գրած է. «Այն խնամքը, որ տարվում է Շիշլիի հայ գերեզմանատան վրա, եթե տարվեր հանդեպ հայ գաղթականները, կարելի է կարծել, որ նրանց չարքերում չպիտի մնային թշվառներ»[21]:

Կ. Պոլսում տպագրվում է «Գրական կյանքը և հայ գրագետներուն վիճակը խ. Հայաստանի մեջ» հարցազրույցը. խոսվում է նոր ուղղագրության, գրական մամուլի, մտավորականության վիճակի մասին: «Իր ուղևորության նպատակը» հարցի պատասխանը. «Անիկա վերապահ ձևով մը ինձ կը վստահեցնե, թե մասնավոր «միսիոն» մը չունի և թե՝ իր մտադրությունն է շրջագայիլ արտասահմանի զանազան գաղութները և այդ առիթով ծանոթանալ հին թե նոր մտավորականներու հետ և մոտեն իրազեկ ըլլալ յուրաքանչյուր շրջանակի իմացական շարժումներուն»[22]:

Պոլսում ծանոթանում է Մեծարենցի կենսագիր Թորոս Ազատյանի հետ:

---

[19] *«Արճագանք» (Փարիզ), 14. XII. 1924:*
[20] *«Արև» (Գահիրե), 18. XII. 1924:*
[21] *«Արև», 23. XII. 1924:*
[22] *«Ժամանակ» (Կ. Պոլիս), 27. XII. 1924:*

Դեկտեմբերի 19–22-ին այդտեղ գրում է «Ստամբոլ» պոեմը և նույն ամսվա ընթացքում տեղում տպագրում առանձին գրքույկով[23]:

1925 թ. հունվարի 8-ին Պոլսից նամակ է հասցեագրում Մ յասնիկյանին: Տեղեկացնում է. «Մի ամսից ավելի է, որ ես սպասում եմ այստեղ Ամերիկա գնալու վիզա ստանալու համար. մինչև հիմա վիզա ստանալ չկարողացա…»[24]:

Ցանկացել է Պոլսում մեկ-երկու դասախոսություն տալ, սակայն տեղում Անդրֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը խորհուրդ չի տվել՝ պատճառաբանելով՝ «ոչ ոք չի գա»:

Այդ մտահոգությամբ հիշյալ նամակում չարունակում է. «Թե որքան ողորմելի է այստեղ հայ գաղութի կյանքը, դժվար է պատկերացնել. – մարդիկ պարզապես քարշ են տալիս ստվերային խղճուկ մի գոյություն, աշխատում են որքան կարելի է հաճոյանալ թուրք կառավարությանը, քծնում են, մեղայի գալիս, իսկ կառավարությունը, թուրք հասարակությունը, մամուլը և այլն, աշխատում են պահել նրանց արհամարհանքի, իրավական տեռորի, պրովոկացիաների, հայհոյանքների այնպիսի մի մթնոլորտում, որից մարդու մազերը կարող են, ինչպես ասում են, բիզ-բիզ կանգնել! – Եվ զարմանալի չէ, որ այսպիսի մի մթնոլորտում հայ գաղութը կորցրել է հասարակական կազմակերպություն լինելու ամենատարրական ատրիբուտներն անգամ. ոչ ժողով, ոչ դասախոսություն, կուսակցական կազմակերպություններ ունենալու մասին ավելորդ է խոսել: Ես այստեղ հանդիպեցի մի շարք «մտավորականների» հետ. խեղճ, ծեծված, ստվերային գոյություններ են ղրանք, որոնց աչքերում սարսափն ու քծնությունը պսպղում են ու հայցում, հայցում, հայցում…

<…> միայն «ժամանակ» թերթը տպեց իմ ինտերվյուի մի չնչին մասը, էն էլ բավականին խեղաթյուրված…»: «Նոր լուր» և «Ավետիս» թերթերը հայտնել են, որ չեն կարող տպագրել, որովհետև «ոստիկանությունը արգելած է»[25]:

Հայտնում է, որ իրեն ընդունել են իբր ««պոլշևիկյան ագենտ»-ի, և ես հպարտ եմ այդ բանի համար»[26]:

«Ես, իհարկե, ամեն տեղ և ամենքին ասում եմ, որ ճանապարհորդում եմ որպես գրականագետ և ոչ մի «միսիա» չունեմ ու ոչ մի հիմնարկության կողմից չեմ ուղարկված: Բայց չեն հավատում: Առհասարակ հարկավոր է ասել, որ Եվրոպայում չրջում է ոչ թե «կոմունիզմի ուրվականը», <…>, այլ կոմունիզմի սարսափը <…> և սիրտս ուռչում է հպարտությունից, որ բոլշևիկ եմ, կոմունիստ, լենինյան կազմակերպության անդամ…»[27]:

Իր ստեղծագործական ծրագրերի մասին. «Մտածում եմ մի վեպ գրել, որի մեջ պատկերանա այժմյան արտասահմանը՝ մեր տեսակետից: <…>: «Երկիր

---

[23] *1924 թ. դեկտեմբերի 28-ին «Ստամբոլ» պոեմն արդեն տպագրել էր և ընծայագրով ուղարկում է գրական-թատերական գործիչ Մամիկոն Գևորգյանին, իսկ 1925 թ. հունվարի 22-ին ընծայագրում է Հայկ Գյուլիքևխյանին՝ «Սիրելի Գյուլն՝ չատ քաղցր բարևներով – Չարենց»:*

[24] *Չ ա ր ե ն ց. 1967, 413:*

[25] *Չ ա ր ե ն ց. 1967, 413:*

[26] *Չ ա ր ե ն ց. 1967, 414:*

[27] *Չ ա ր ե ն ց. 1967, 414–415:*

Նայիրի»-ն ուզում եմ հրատարակել Վիեննայում կամ Փարիզում, բայց առանց առաջաբանի չեմ համարձակվում …»[28]*: Պարզվում է՝ առաջաբանի համար դիմել է ոչ միայն Աչոտ Հովհաննիսյանին, այլև Պողոս Մակինցյանին՝ լուսե՛ն, հիմա դիմում է Մյասնիկյանին՝ «… եթե գրեիք և ուղարկեիք <…> ես խորապես չնորհակալ կլինեի»*[29]*: Հետգրության մեջ ավելացնում է. «… ես այստեղ առհասարակ ինձ հեռու եմ պահում հայ գաղութից, ոչ մի հարաբերության մեջ չեմ մտնում, այսպես կոչված, «ազգային մտավորականության» հետ. նույնպես հեռու եմ պահում ինձ ամենայն ալկոհոլից՝ խոր կսկիծով մտաբերելով Թիֆլիսի սկանդալը …»*[30]*:*

Աթենք – Հռոմ

Ըստ Մյասնիկյանին հասցեագրած «1925, 8 հունվար» վերոհիշյալ ծանուցման նամակի՝ 1925 թ. հունվար 9-ին Պոլսից մեկնում է Աթենք. «Այստեղից վաղը ես մեկնում եմ Աթենք, ապա կգնամ Հռոմ, կշրջեմ իտալական զանազան քաղաքներում, հետո Փարիզ–Լոնդոն–Բեռլին–Վիեննա–Մոսկվա. ահա իմ ծրագիրը»[31]*:*

Աթենքում եղել է որպես տարանցիկ ուղևոր, որովհետև քաղաք մտնելու անցագիր չի ունեցել, բայց մնացել է: Տեղի թերթերից մեկը «Եղիշե Չարենցի նոր գերթվածը» վերնագրի ներքո հայտնում է. «Մանոթ բանաստեղծ Եղիշե Չարենց Պոլիս երթալու ատեն հանդիպած է Տրապիզոն, ուր գրած է «Լենինն ու Ալին» պոեմը, որ պիտի հրատարակվի Լենինի մահվան տարեդարձին նվիրված. «Խորհրդային Հայաստան» թերթին մեջ»[32]*:*

1925 թ. փետրվարի սկզբին դուրս է գալիս Հունաստանից և մի քանի օր անց արդեն Հռոմում էր, հանգրվանել՝ «Լոնդոն» հյուրանոցում: Փետրվարի 16 թվագրումն ունի «Հանգուցյալ պարոնը…» գրությունը, փետրվարի 24 «Чаплин: Сборник статей» *(1923, Բեռլին), ինքնագիրը՝ «Ե. Չարենց, Հռոմ, 925 / II / 24» գիրքը. մեկը՝ գրված, մյուսը՝ գնված Հռոմում:*

Ճանապարհին եղել է Նեապոլի ծոցում գտվող Կապրի կղզում. «Մենք գնում էինք դեպի Կապրի» («Հատվածներ չգրված պոեմից»)[33]*: Այդ մասին ակնարկ կա նաև Դերենիկ Դեմիրճյանին հասցեագրած «7. V. 1925, Փարիզ» նամակում. «Սքանչելի էր Նապոլին, Կապրի կղզին, Վեզուվը և Պոմպեին»*[34]*: Հիշենք, որ Կապրիում ապրել է Լենինը, 1906–1913 թթ.՝ Գորկին, իսկ այդ անուններն էին Չարենցի համար: Եղել է նաև Նեապոլում, տեսել ապագայապաշտության հիմնադիր Ֆիլիպո Թոմազո Մարինետիի նկարագրած գործող հրաբուխ Վեզուվը, որը գտնվում է Նեապոլից 15 կմ արևելք, տեսել է նաև Վեզուվի ժայթքումից քարացած Պոմպեյը …*

1925 թ. փետրվար 15-ին՝ կիրակի առավոտյան, Չարենցն այցելում է Հռոմի ազգային թանգարան, ուր և հանդիպում է Վահան Նավասարդյանին: Կոմու-

---

[28] *Ջ ա ր ե ն յ. 1967, 415:*
[29] *Ջ ա ր ե ն յ. 1967, 415–416:*
[30] *Ջ ա ր ե ն յ. 1967, 416:*
[31] *Ջ ա ր ե ն յ. 1967, 412:*
[32] *«Նոր օր» (Աթենք), 27. I. 1925:*
[33] *Ջ ա ր ե ն յ. 1963, 14, Ջ ա ր ե ն յ. 1968, 65, 626:*
[34] *Ջ ա ր ե ն յ. 1967, 419–420:*

նիստ Չարենցի և դաշնակցական Վահան Նավասարդյանի «պատահական», «անակնկալ» հանդիպման մի դրվագ.

«Նավասարդյան.— Գիտցած ըլլաք, որ պիտի գանք, դահիճնե՛ր և ձեր ձեռքեն պիտի փրկենք մեր հայրենիքը, անիկա մերն է, մե՛նք կերտեցինք:

Չարենց. — Հայ ժողովրդին պատուհասը եղած եք դո՛ւք, ձեր մտքեն բնավ մի անցնեք, թե օր մը կրնաք ոտք դնել հայրենի հողին վրա, քանի չեք վոխած ձեր խելքը, այդ օրը չեք տեսներ, հայ ժողովուրդը ատելով կ՛ատե ձեզ»[35]*:*

Եվ այսպես՝ երկու ժամ: «Անակնկալ» հանդիպումը Հռոմի ազգային թանգարանի սրահներից մեկում, Նավասարդյանի նախաձեռնությամբ, կազմակերպել էին Հռոմում Չարենցին ուղեկցող երկու ուսանողներ՝ ապագա բժիշկ Ահարոն Խաչատրյանը և ապագա ճարտարապետ Արման Սարյանը: Այդ օրը Չարենցին ուղեկցել է Արման Սարյանը: Հիշյալ հանդիպման առիթով Վահան Նավասարդյանը հրատարակել է «Չարենց: Հուշեր և խորհրդածություններ» գիրքը (Գահիրե, 1957), վերահրատարակվել է Թեհրանում (1962) և Երևանում (2007): Հանդիպման և, ընդհանրապես, ՀՅԴ-ի հանդեպ այդ տարիներին ունեցած վերաբերմունքը Չարենցն արտահայտել է «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը (Արտասահմանյան պատմվածք)» գրությամբ (1925, 16. II, Հռոմ) և տպագրել մամուլում[36]*, որի մասին թերթը նախապես տեղյակ էր պահել ընթերցողներին*[37]*: Վերնագրի ակնարկը վերաբերում է ՀՅԴ գործիչ Վ. Նավասարդյանին: Իր և Վ. Նավասարդյանի հանդիպման պատմությունն է Հռոմի ազգային թանգարանում: Շարունակվում է հեռակա բանավեճը: Անդրադարձը՝ Նավասարդյանի «Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)» հիշատակված գիրքն է:*

Նավասարդյանն իր գրքում նշում է, որ Չարենցին ճանաչել է «… երկրից. ավելի ճիշտը՝ այն օրից, երբ ընկ. Աղբալյանը նրա ծնունդն ավետեց»[38]*: Ասում է, որ «անակնկալ» հանդիպումն, իբր, տեղի է ունեցել Չարենցի նախաձեռնությամբ, որը չի համապատասխանում իրականությանը. «Հաջորդ օրը, «անակնկալի եկած», թանգարանի նկարներից մեկի առջև տեսա Չարենցին, ու դրանից հետո այն մի քանի օրը, որ ես մնացի Հռոմում, մենք եղանք գրեթե միասին»*[39]*: Վ. Նավասարդյանը Հռոմի* Via Imperia *պողոտայի պատին տեսել է պատմական քարտեզ՝ Հայաստանով հանդերձ, ներշնչվել ու «քաղցրությամբ և լի հոգիով» արտասանել է «Ես իմ անուշ …»-ը*[40]*, բայց վեճը չարունակվել է. «… որքան մեծ բանաստեղծ եք, այնքան փոքր քաղաքական դեմք եք»*[41]*:*

Վերջում Նավասարդյանը Չարենցին է հանձնում Երևանում ապրող մորը հասցեագրված նամակ, որը վերադարձին հանձնում է հասցեատիրոջը:

Այս ընթացքում «Մարտակոչ»-ը տպագրում է «Թռուցիկ տպավորություններ (Բանաստեղծ Ե. Չարենցի արտասահմանից գրած նամակից)» հաղորդումը, ներկայացնում նրա նամակից հատված. «Նախ և առաջ հիացմունք է

---

[35] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 1966, 12–13, 34:*
[36] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 05, 07. IV. 1925:*
[37] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 21. III. 1925:*
[38] *Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն. 2007, 25:*
[39] *Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն. 2007, 26:*
[40] *Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն. 2007, 41:*
[41] *Ն ա վ ա ս ա ր դ յ ա ն. 2007, 43:*

առաջացնում նյութական կուլտուրայի այն բարձր մակարդակը, որի հանդեպ մեր երկիրը դեռ նահապետական է, համարյա նահապետական: <...>: Մեծ, վիթխարի նյութական ահռելի կուլտուրա է կուտակվել այստեղ, Եվրոպայում: Մարդ չչմում է նրա փայլից ու հարմարություններից»[42]:

1925 թ. փետրվարին Հռոմում գրում է «Պոեմ հերոսական» էպիքական ֆրագմենտը[43], որի մեջ ազդարարում է իր գեղագիտական հայացքների փոփոխությունը.

Լեֆյան թմբուկը թողած մի կողմ,
Հատվող տողերը նետելով դեն,
Կրկին խրթին մի խոր դողով
Առնում եմ յամբ ես ու քողաղոտ,
Որ մեր պայքարը քնարերգեմ:
<...>: Ելել էր կյանքը հունից երեկ
Ու կոտրատում էր խուրձերն իր հին.
Հատվող տողեր էր երեկ բերել
Պոեմներին իմ ու երգերին...[44]:

Սա արդեն հավերժական քաղաքից եկող և հավերժությանն ուղղված հրովարտակ էր: Պատահական ոչինչ չկա: Հավաստագիրը «Վիշկա»-ի խմբագրությանն ուղղված նամակն է, ըստ որի՝ «... արտասահմանը իմ մեջ առաջ բերեց մի հիմնական հեղաշրջում»[45]: Կատարվում է այն, ինչի համար Մյասնիկյանն ու Սուրխանյանն ամեն ինչ պատրաստ էին Չարենցին արտասահման ուղարկելու համար: Չարենցը վերադառնում էր նոր ժամանակների արվեստի պատգամախոսի իր կոչումը, ինչը խորությամբ արտահայտվեց նրա ստեղծագործության մեջ և գեղագիտական հայացքներում: Սա այն ազդակն էր, որը պետք է ծնունդ տար «Խմբապետ Շավարշը» պոեմին (1929), «Էպիքական լուսաբաց» ժողովածուին (1930), «Լիրիքական անտրակտ» շարքին (1932) և «Գիրք ճանապարհի» հատորին (1933/1934):

Առաջիկա այցը Փարիզ նախապատրաստելու նպատակով 1925 թ. փետրվարի 22-ին Հռոմից նամակ է հասցեագրում Փարիզ՝ Կոստան Զարյանի կնոջը՝ Թագուհի Զարյանին, և խնդրում մատնացույց անել մեկին, ով, «... եվրոպական ոչ մի լեզու չիմանալու» պայմաններում, կաջակցեր իրեն, իսկ Հռոմում փորձում է գտնել բանաստեղծ ու թարգմանիչ Հրանտ Նազարյանցին, բայց՝ ապարդյուն[46]:

Հռոմում այցելել է թանգարաններ, կինոթատրոններ, Ս. Պողոս վեհանիստ տաճար, զբոսնել է քաղաքում: Պատկերացում կազմելու համար՝ որպես հետաքրքրասեր դիտող և ոչ թե այցելու, եղել է հանրատներից մեկում. «... ո՛չ

---

[42] *«Մարտակոչ» (Թիֆլիս), 18. II. 1925: Անթվակիր է, հասցեագրվել Հ. Սուրխանյանին (տե՛ս Զ ա ր ե ն ց. 1967, 726–727):*

[43] *«Խորհրդային Հայաստան», 29. XI. 1925:*

[44] *Զ ա ր ե ն ց. 1963, 227:*

[45] *Զ ա ր ե ն ց. 1967, 422–423:*

[46] *Տե՛ս «Հայություն» (Երևան), 30. VI. 1994: Նամակի տարեթիվը նշված է հունվար, որ պարզ վրիպակ է. պետք է լինի փետրվար:*

բաժակ մը ըմպելի կամ զովացուցիչ ապսպրեց, ո՛չ մեկը գեղուհիներեն անկաժե ըրավ»[47]*:*

Վենետիկ

1925 թ. մարտի 4-ին Հռոմից մեկնում է Վենետիկ: Մնում է չուրջ մեկ ամիս: Իսահակյանը հիշում է, որ Չարենցը Վենետիկում մնացել է մեկ ամիս, ամբողջ օրը միասին են եղել: Չարենցի մասին չարախոսումները նախորդել էին Իսահակյանի հետ ծանոթությանը, բայց վերջինիս տպավորությունը դրական էր:

Ապրել է հյուրանոցում, ժամանակն անցկացրել է Իսահակյանի հետ: Ըստ Իսահակյանի՝ «Մնաց մի ամբողջ ամիս Վենետիկում: <…>: Չարենցը խոհուն, զարգացած, մեծ էրուդիցիայի տեր անձնավորություն էր, անհանգիստ բնավորություն, ըմբոստ ու եռուն: Բոլոր ազգերի գրականությունները գիտեր, լավ ճանաչում էր և մեծ ճաշակի տեր էր: Արդեն ես նրան ճանաչում էի նախքան նրա հետ ծանոթանալը»[48]*:*

Իսահակյանը Չարենցին է նվիրում իր «Հայրենի աղբյուրից: Բանաստեղծություններ» (Բոստոն, 1920), «Արճակ էջեր» (Կ. Պոլիս, 1922), «Աչնան ծաղիկներ» (Վենետիկ, 1922) գրքերը՝ «Սիրելի եղիչե Չարենցին Ավ. Իսահակյանից: 4. III. 1925 թ., Վենետիկ» մակագրությամբ:

Իսահակյանը ծանոթ էր Չարենցի «Երկերի ժողովածու»-ի երկհատորյակին: Բարձր էր գնահատում «Ես իմ անուշ Հայաստանի …»-ն[49]*:*

Վենետիկում շրջել են քաղաքում՝ ջրանցքներ, գոնդոլներ, ծովափ, Ս. Մարկոսի հրապարակ, սրճարաններ, թանգարաններ, այցելել են Ս. Ղազար՝ Մխիթարյաններին, ուսումնասիրել հարուստ գրադարանը, եղել է Մուրատ-Ռափայելյան վարժարանում, մտել է Հայր Ալիշանի խուցը, Բայրոնի կացարանը: Մտերմացել է հայր Արսեն Ղազիկյանի հետ: Պահպանվել է նրա և Իսահակյանի լուսանկարը Ս. Մարկոսի հրապարակում աղավնիներ կերակրելիս: Այցելել է հայերի հավաքատեղի՝ «Ջիակոմուցի» սրճարան, գրախանութից գնել թուղթ, ինքնահոս, շրջագայել է Դոժերի պալատում, անցել Ռիալտոյի կամուրջով, նավարկել է մերձակա կղզիներ …

Գնչուհի բախտագուշակը նայել է Չարենցի ափը և սարսափից փախել՝ չվերցնելով անգամ ափի մեջ դրած արծաթե դրամը[50]*:*

Չարենցը Ս. Ղազար է այցելել նաև ավելի վաղ և թողել այսպիսի գրառում. «2, փետր. 25, Եղիշե Չարենց, Երևան»[51]*:*

1925 թ. մարտի 2-ին Իսահակյանը Վենետիկից նամակ է հասցեագրում Սարյանին. «Սիրելի Մարտիրոս, <…> այստեղ էր Ե. Չարենցը. ամեն օր միասին էինք, չատ քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով: Նրա

[47] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 1966, 168:*

[48] *Տե՛ս Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 124:*

[49] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 125*

[50] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 206: Չարենցին վերաբերող հիշողություններն ընդգրկում են 166–236, 371–448 էջերը, բայց … վստահելի չեն. Անպակաս են հարմարեցումները, վերագրումները, դեպքերի հաջորդականության շփոթությունները, տաբեթվերի սխալները:*

[51] *Ա ն ա ն յ ա ն. 1980, 76:*

մասին չատ գեչ, չար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է: Երիտասարդական տարիքի պատճառով թերություններ ունի – մեծամիտ է, երես տված է և անհանդուրժող է, սակայն խեղճը չա՛տ ջղային է, հիվանդ տղա է ուղղակի, անշուշտ տարիների մեջ այս ամենը կանցնի: Առաջին շրջանի գրվածքները նրա՝ կարղացի, գեղեցիկ բաներ են, տաղանդավոր է, բայց նրա ֆուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել, երևի հին մարդ եմ և չեմ հասկանում: Տարիքից ավելի զարգացում ունի և կարղացած ու կարդալ սիրող տղա է, չա՛տ առաջ կգնա»[52]:

1925 թ. մարտի 6-ին Իսահակյանը Վենետիկից նամակ է հասցեագրում Վ. Նավասարդյանին. «Մի երեք օր է այստեղ է Ե. Զարենցը: <...> եկել էր ինձ տեսնելու: Շատ հարգանքով արտահայտվեց <...> դեպի ինձ»[53]: *Իսահակյանը Վենետիկից Նավասարդյանին նամակ է հասցեագրում նաև 1925 թ. մարտ 16-ին. «Իսկ Զարենցը գլուխ է տանում, թե՝ ավելի ամուր ենք, քան ամենաամուր պետությունը, օրինակ՝ Անգլիան»*[54]:

Իսահակյանի՝ «Զարենցի հետ Վենետիկում» (1957) հուշագրությունից. «Մեծատաղանդ բանաստեղծ եղիչե Զարենցին առաջին անգամ ես տեսա Վենետիկում, 1924 թվականին (պետք է լինի 1925– Դ. Գ.): Զարենցը եկել էր Հայաստանից Եվրոպա ճանապարհորդելու: Ինձ մոտ եկավ նա Հռոմից: Առաջին տպավորությունը, որ ստացա նրանից, փայլուն չէր: Վտիտ մարմին, կարճահասակ, բայց խոհական, խելացի աչքերով: Մենց մի ամբողջ ամիս Վենետիկում, և մենք չատ և չատ խորին կերպով բարեկամացանք, մտերմացանք: Ամբողջ օրը միասին էինք: Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից, մնում էր մինչև ուշ գիշեր մեր տանը: Թափառում էինք հրաշալի Վենետիկում՝ ջրանցքներով, գոնդոլներով, գնում էինք ծովափ, հետո գնում էինք Մխիթարյանների վանքը՝ Սուրբ Ղազար: Խոսում էինք անվերջ ամեն հարցերի մասին՝ գիտության, գրականության, փիլիսոփայության, հեղափոխության, բոլոր այն խնդիրների, որ կան, և փոքր խնդիրների նաև, որ հուզում են մարդկանց»[55]:

1925 թ. մարտ 25-ին Իսահակյանը հերթական նամակն է Վենետիկից հասցեագրում Նավասարդյանին. «Եղիչե Զարենցը այստեղ էր, գնաց: Եվ խնդրելով ինձնից հետը տարավ քո՛ բոլոր ինձ տված գրքերը. չա՛տ հետաքրքրվում էր. ես ուրախությամբ բոլորը տվի. թեև վրան ինձ նվեր էիր գրել. հույս ունեմ, որ չես նեղանա՝ գիտնալով, որ ուզում ես գրքերդ նրանք կարդան. հետը տանելու է Մոսկվա:

Հետևյալ գրքերն էին – 1.- Դաշնակցության լիկվիդացիան, 2.- Դաշնակցության անելիքը, 3.- Հայաստանի ազատությունը, 4.- Դեմոկրատիա, 5.- Բ. Իշխանյանի գիրքը»[56]:

Այս օրերին (1925, 14 մարտ) թղթի մի պատառիկի վրա Զարենցն արել է գրառում. «Աքանչելի քաղաք է Վենետիկը»[57]: *Իսկ 1925 թ. մարտի 21-ին*

---

[52] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 206–207:*

[53] *Ավետիք Իսահակյանի նամակները. 1959, 14:*

[54] *Ավետիք Իսահակյանի նամակները. 1959, 14:*

[55] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 124:*

[56] *Ավետիք Իսահակյանի նամակները. 1959, 15: Նշված գրքերը Զարենցի գրադարանում չեն պահպանվել:*

[57] *Զարենցի տուն-թանգարան, Զարենցի ֆոնդ (անմշակ):*

Արսեն Ղազիկյանը Չարենցին է նվիրում Ադդա Նեգրիի «Ճակատագիր» բանաստեղծությունների գրքույկը՝ իր թարգմանությամբ (1919, Կ. Պոլիս)՝ «Տաղանդավոր և սիրելի բանաստեղծ պ. Եղիշե Չարենցին սրտագին նվեր: Հ. Արսեն, 21. III. 25, Վենետիկ, Ս. Ղազար»:

Մեկնելուց առաջ Իսահակյանի որդուն՝ Վիգենին է նվիրել «Կոզակ» մակնիշի լուսանկարչական ապարատ:

Փարիզում

Թղթի նույն պատառիկի վրա, որ հիշատակել ենք, 1925 թ. մարտի 29-ին արել է ևս մի գրառում. «Այսօր մեկնում եմ այս սքանչելի Վենետիկից»: Եվ ավելացրել՝ «Cafe oriental»[58]:

Արսեն Ղազիկյանը «30. III. 1925» թվակիր նամակով Զոպանյանին հայտնում է. «… վաղը Չարենցը կը մեկնի դեպի Բարիզ, չատ չիրին տղա մըն է, լավ խմոր կա մեջը, պոչևիկ է, բայց մերն է»[59]:

1925 թ. մարտի 31-ին ժամանում է Փարիզ: Ըստ Ղազիկյանի՝ Վենետիկից մեկնել է մարտի 31-ին, մեկ այլ տվյալով՝ 28-ին, ըստ իր գրառման՝ մարտի 29-ին: Հայտնի է, որ մարտի 31-ին Փարիզում մասնակցել է միջոցառման: Փարիզի «Ապագա» թերթը «Ժամանում» տեղեկատվությամբ ուշացումով հայտնում է. «Բանաստեղծ Եղիշէ Չարենց Բարիզ հասած է»[60]:

Փարիզում ապրող քրոջ տղայի՝ Տիգրան Հակոբյանի հուշերից. «Չարենցը մեզ գտավ Փարիզում: Փարիզի մեջ Ռյու Կուսաժ հյուրանոց կար: Պանթեոնի մոտ: Այնտեղ էր ապրում Չարենցը: ՀՕԿ-ի ընկերություն պետք է կազմեր: Անպիտան հայերը թշնամացան: Քեռուս ուզեցին սպանել: Ահաբեկեցին նրան»[61]:

Փարիզում էին Զոպանյանը, Շիրվանզադեն, Կոստան Զարյանը, Զապել Եսայանը, Երվանդ Քոչարը, Համլիկ Թումանյանը… Չարենցը հանդիպում է Փարիզում հաստատված և Ռենոյի ինքնաշարժների գործարանում աշխատող վաղեմի ընկերոջը՝ Վիվանին, ով էլ նրան առաջնորդում է քաղաքի տեսարժան վայրերով, նաև՝ Պեր-Լաշեզ, ուր կոմունարների պատն էր:

Չարենցի կերպարը՝ ըստ Վիվանի. «Ես երբեք, ոչ մի առիթով Չարենցին չէի տեսել այդպես չնորհքով, այդպես անբասիր: <…>: Ինչպիսի հանգստություն չարժումների ու ձայնի մեջ, և ինչ տիրական հայացք: Ասես հաղթանակի հուչարճանն էր առջևս կանգնել»[62]:

Չարենցը փորձում է փաստաթղթերը կարգավորել և Փարիզում երկար մնալ, բայց ցանկությունը չի իրականանում:

Եղիշե Չարենց – Կոստան Զարյան

Փարիզում ճակատագրական էր Չարենցի հանդիպումը Կոստան Զարյանի հետ: Բոստոնի «Հայրենիք» ամսագիրը տպագրում է Զարյանի «Բանկոոպը և

---

[58] *Չարենցի տուն-թանգարան, Չարենցի ֆոնդ (անմշակ):*

[59] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Զոպանյանի ֆ., № 3836:*

[60] *«Ապագա» (Փարիզ), 04. IV. 1925:*

[61] *Չարենցի հետ: Հուշեր. 1997, 57:*

[62] *Չարենցի հետ: Հուշեր. 2008, 38:*

մամուխի ոսկորները» վեպը[63]: Ստեղծագործական ծրագրով և ժամանակով ավելի ուշ գրված «Նավը լեռան վրա» վեպի անմիջական բովանդակային շարունակությունն է: Գլխավոր հերոսներից մեկի՝ Ավետիս Զարչարյանի կերպարի նախատիպը Զարենցն է՝ իր կյանքի և գրական գործունեության առանձին դրվագներով ու հանգամանքներով: Մնացել է անավարտ, ընդգրկում է 1924–1926 թթ.: Ամենայն հավանականությամբ, չի գտել Զարենցի կերպարի լուծման բանալին:

1922-ի նոյեմբերից մինչև 1924-ի հունիսը Զարյանն ապրել է Երևանում, և, պետանվտանգության մարմինների ձեռքը չընկնելու ահից, մի կերպ հեռացել երկրից: Իսկ այդ տարիները Զարենցի գրական ձախ գործունեության բուռն ժամանակներն էին: Զարյանը հետագայում Զարենցին հանդիպել է Ֆրանսիայում: Զարենց–Զարյան հարաբերությունները, ահա, ձևավորվել են 1922–1924 թթ., ընդհատվել՝ 1924-ի հուլիսին՝ Հայաստանից Զարյանի հեռանալով, թարմացել՝ 1925-ին Փարիզում և, ի վերջո, մնացել հեռակա, անավարտ …

Զարենցն անգիր գիտեր «Նավասարդ»-ում (1914) Զարյանի տպագրած «Արևմտյան քաղաք» բանաստեղծությունը: Ամեն բանով հանդերձ, որից բարձրագույնը Հայաստանի հանդեպ սերն էր, փոխադարձ համակրանքը բացակայում էր, հետո աստիճանաբար վերացավ, քանի որ տարբեր նշանակության գրողներ էին և բնավորությամբ, կենցաղավարությամբ տարբեր մարդիկ: Փոխադարձ անհանդուրժողականության ու հակակրանքի մթնոլորտում Զարենցը նրան ներկայանում է որպես իր «փեչակով պրոլետ բանաստեղծ, մարքսիստական անաչառ քննադատ …»:

Զարենցին Զարյանն առաջին անգամ անդրադարձել է «Անցորդը և իր ճամբան» խոհագրության մեջ[64], որն օրագրային գրառումների ձևով ընդգրկում է Զարյանի կյանքի հայաստանյան շրջանը՝ ավելացրած մինչև 1925 թվականի մարտ ամիսը: Զարենցի հանդեպ բացասական վերաբերմունքը՝ որպես խորհրդային վարչակարգի ներկայացուցչի, ակնհայտ է:

Մշակութային հարցում այդ վերաբերմունքը խիստ բացասական է. «Կառավարության հրամանով և կուսակցական որոշումով գրականություն են ստեղծում և ատրճանակի ուժով բանաստեղծություն են ստեղծում: <…>: Կոմկուսը նոր բանաստեղծական ձևի հրամաններ է տալիս և տաղաչափության օրենքներ որոշում»: Մարինետիից Մայակովսկուն անցած, այնտեղից էլ Հայաստան հասած սմոկինգը «… հիմա Աբովյան փողոցում ման է գալիս: Վիճում է, սպառնում: Սատափե համրիչը ձեռքին, կողքից ատրճանակը կախած, թևերը շարժում է օդի մեջ և աշխարհներին ասպարեզ կարդում»[65]: Այս կերպարի նախակերպարը, այսպես թե այնպես, Զարենցն է:

Հաջորդ հանդիպումները կայանում են Փարիզում: Հավանաբար այստեղ Զարենցը Զարյանին է նվիրել իր գրքերից մեկը, որը վերջինս հետագայում իր «Նավը լեռան վրա» վեպի հետ Կալիֆոռնիայի Օքլենդ քաղաքում նվիրել է բժիշկ Համբարձում Քեկլիկյանին՝ հայտնի իր «Բժիշկ մը և արդի գրականությունը» (Երուսաղեմ, 1964) գրքով:

---

[63] *Տե՛ս «Հայրենիք», 1931, նոյեմբեր–1933, դեկտեմբեր, առանձին գրքով՝ «Բանկոոպը և մամուխի ոսկորները», 1987:*

[64] *«Հայրենիք», 1926, հոկտեմբեր – 1928, փետրվար:*

[65] *Զ ա ր յ ա ն. 1975, 133–143:*

Վերջին քայլն արդեն «Բանկոոպը և մամուլի ոսկորները» վեպն է: Վիպական գործողությունները հասել են Մարիանա Այվազյանի հանդեպ 1926-ի սեպտեմբերի 5-ի Չարենցի հայտնի մահափորձի աղմկոտ իրադարձությանն ու դրան հաջորդող առաջին քայլերին և այլևս առաջ չեն գնացել, մնացել են անավարտ, որովհետև վեպը գրելու օրերին Չարենցն այլևս այն կարմիր բոլշևիկը չէր, այլ հերոսական ու հալածական մի կերպար: Իսկ այստեղ Չարյանի համակ ծաղրն է գավառից Փարիզ հասած բանաստեղծի հանդեպ, թեկուզ այդ բանաստեղծն անգամ Չարենցը լինի: Չարյանն իր վեպում Չարենցի կերպարի՝ հեգնական-ծաղրական բնույթի հետագա լուծումն այդ երգիծանքի շրջանակներում կա՛մ չգտավ, կա՛մ գտավ դրանից դուրս, բայց չուզեց նրան հերոսացնել:

Ահա Չարենցը՝ ըստ Չարյանի. «Փոքրահասակ, նիհար, մեծ քթով և այլանդակ դեմքով մեկը», «պրոլետ մի բանաստեղծ», մշտապես հարբած է, լկտի ու ցինիկ, ինքնավստահ բոլշևիկ[66]*:*

Չարյանի կերպարը մարմնավորող Իբերյանի մեջ ակնհայտ խանդ կա Չարենցի հանդեպ: Իր առիթով Իբերյանն ասում է, որ սեփական երկրում իր վրա «նայում էին, ինչպես օտարականի վրա»[67]*:*

Շարունակում է. «Փոքրահասակ կուսակցական բանաստեղծը գրպանից մի ահագին ատրճանակ հանեց և սպառնաց անորոշին»[68]*: Չարչարյան-Չարենցի անունից ավելացնում է. «Էդ Իբերյանի նման բուրժուա եվրոպացիներին առնվազն պետք է գնդակահարել … Ի՞նչ ա, իրեն հովեր է տալիս … կասկածելի ամերիկացիների հետ է նստում … մեր թշնամիների հետ: Չա, չեկան ի՞նչ ա անում, չի՞ տեսնում, ինչ ա …»*[69]*:*

Ժամանակին այսպիսի հարցերի լուծման միակ տարբերակը ձերբակալությունն ու գնդակահարությունն էր, ինչից էլ Չարյանը հասցրեց խուսափել:

Իտալիայից Չարենցը հեռագրել էր Չարյանին՝ խնդրելով դիմավորել Լիոնի կայարանում: Ահա հանդիպման պահը. «Ժամը չորսին Իտալիայից եկող գնացքից, ահագին դեղին մի պայուսակ ձեռքին բռնած, իջել էր փոքրահասակ տղու մարմնով և տարիքը անորոշ, ծերունու դեմքով հայաստանցի և կատաղորեն համայնավար Չարչարյանը… Կանաչի տվող տաբատ, երկայն մոխրագույն վերարկու և այլանդակորեն փոքրիկ մի գլուխ: <…> Կանգ էր առել իր հոտը կորցրած կես ոչխար, կես հորթ, փոքրիկ վախեցած իր աչքերը դես ու դեն ման ածելով փնտրում էր ինձ: Հետաքրքրության համար կանգնել էի այնի՞ն տեղ»[70]*:*

Բնորոշումները՝ «Տգետ, գռեհիկ, ինքնահավան, այլասերումի աստիճանի հիվանդոտ»: Ավելանում է հարբեցողը, աղմկարարը և «ընդհանուր տգիտությունը»: Հետո էլի. «Խորամանկ աչքեր ուներ: Վախում էր: Խաբում էր ինքն իրեն և խաբում նաև ուրիշներին», «արտաքին ձևերի այլանդակություններ»[71]*…*

---

[66] *Չ ա ր յ ա ն. 1987, 137:*
[67] *Չ ա ր յ ա ն. 1987, 138:*
[68] *Չ ա ր յ ա ն. 1987, 544:*
[69] *Չ ա ր յ ա ն. 1987, 544:*
[70] *Չ ա ր յ ա ն. 1987, 544:*
[71] *Չ ա ր յ ա ն. 1987, 544:*

Բոլշևիզմի հանդեպ ունեցած ամբողջ ատելությունը Զարյանը հասցեագրում է Զարենցին: Այս ամենով հանդերձ՝ հայաստանցի բանաստեղծի կերպարի որոնումները շարունակվում են. «Երբ մեկնեց, պարապ և տխրություն զգացի: Չնայած արտաքին իր ձևերի բոլոր այլանդակություններին՝ իր անձի արտառոց և ծաղրանկարական կողմերին, նրա մեջ մի ինչ-որ ամբողջական գիծ կար, որ հրապուրիչ էր և նույնիսկ մեծդի: <…>: Վերջ ի վերջո իրական հայը: Նա, որ իր մարմնի ամեն մի մասով, իր հոգու բոլոր թելերով կապված է երկրին, և որի համար արտաքին աշխարհը գոյություն ունի այնքան, ինչքան նա կարող է համեմատության ենթարկել իր սեփական երկրի հետ: Նա նայում է աշխարհին Հայի աչքերով: Նա իր աչքերը չի փոխում: Ու Հայաստան է, որովհետև նա կա»[72]:

Զարենցի կերպարի մեջ տեսնում է հայոց աշխարհի, հայկական բնաշխարհի, հայ երկրի «հակասական բնույթը». «Լեռան կատարին անցնող դղրդալից մրրիկը … Կոպիտ հողը և հանկարծակի բուսած մանուշակների կապերը»[73]: Այստեղից անցնում է հայ կյանքի հանրային, քաղաքական, պատմական վայրիվերումներին, որ իր ալիքների մեջ տարուբերում է բոլորին, մեկին՝ դարձնում բոլշևիկ, մյուսին՝ հակաբոլշևիկ, մինչդեռ նրանք՝ բոլորն էլ, երկրի զավակներն են և կոչված են հայրենաշեն արարումների. «Ու այդ՝ չնայած իր մտային քաոսին, իր վատ մարսած ընկերային և քաղաքական վարդապետության, իր միջազգային իտեալին, իր բոլշևիզմին: Նրա ամբողջական անձի համար այդ ներելի է և նույնիսկ օգտակար, որովհետև նա երբեք չի փոխվի, իր բնույթին չի դավաճանի: Նա կա և կմնա ինչ որ կա: Նա ինքը Հայաստանն է և իբրև այդ՝ տևական, անմահ»: Իսկ վերջում. «Ես նախանձում եմ նրան»[74]:

Թեև ուղղակի վկայություն չկա, բայց Զարենցը, անշուշտ, ծանոթ էր Զարյանի վեպին:

«Հայրենիք»-ի 1933 թ. դեկտեմբերյան համարում վեպի տակ գրված է. «Շարունակելի»: Դրանից հետո Զարյանն ապրեց 36 տարի, բայց վեպն այդպես էլ չշարունակեց: Այո՛, չգտավ Զարենցի կերպարի ողբերգական զարգացումների բանալին: Բոլշևիկ բանաստեղծ Զարենցը, իր հախուռն գործունեությամբ և ծայրահեղություններով, այլևս չէր կարող առաջնորդել նրան: Նշանակում է՝ պետք է վերանայեր կերպարի կերտման ճարտարապետությունը, որով Զարենցը դառնալու էր ազգային գոհի խորհրդանշան, իրական Հայաստանի պատմական խորհրդանիշ. մի բան, ինչը, սակայն, Զարյանի ծրագրերի մեջ չէր մտնում, և նա իրեն թույլ չէր տա Զարենցին հերոսացնել, որովհետև իր արհամարհանքը հասցրել էր առավելագույն աստիճանի[75]:

Այս ընթացքում Զարյանը Զարենցի կողմից գրական հիշատակի է արժանացել մի էպիգրամում (1928), որը մինչև 1983 թ. մնացել էր անտիպ: Ամոռանանք՝ 1928-ի փետրվարին «Հայրենիք»-ում ավարտվեց Զարյանի «Անցորդը և իր ճամբան» խոհագրության տպագրությունը: Կասկած լինել չի կարող, որ Զարենցը տեղյակ էր, և ահա պատասխանը.

---

[72] *Զ ա ր յ ա ն. 1987, 545:*
[73] *Զ ա ր յ ա ն. 1987, 545:*
[74] *Զ ա ր յ ա ն. 1987, 545:*
[75] *Տե՛ս Գ ա ս պ ա ր յ ա ն. 2000, 144–159, 344:*

ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

Երբ խոսում էի մի անգամ քո հետ՝
Ասացիր դու ինձ, ով հայտնի պոետ.
– Գրողը որ կա՝ պոռնիկ է միայն–
Ով որ չատ տվեց՝ կտրվի նրան:–
Եվ դու տրվեցիր, պոռնիկի նման,
Քեզ «չատ տվողին»: –
Բացագանչել է ինձ մնում միայն–
– Վա՛յ վերցնողին…[76]

Այսպես էպիգրամներով Կ. Զարյանին անհարկի անարգեցին նաև Մահարին[77], Ալազանը[78] և Տարոնցին[79]: Մինչդեռ, «Բանկոոպը և մամուլի ոսկորները» վեպն անավարտ թողնելով՝ Կ. Զարյանն արդեն իսկ ճչտել էր վերաբերմունքը Չարենցի հանդեպ: Այս հարցն ավելի խորքային ու մանրամասն քննություն է պահանջում:

Վերադառնանք Փարիզ, ուր տեղի է ունենում նրանց վերջին հանդիպումը: Կ. Զարյանը, Վիվանը և Չարենցը այցելում են գիշերային սրճարան: Չարենցի ու Զարյանի միջև բռնկվում է բուռն գրույց. «Չարենցը հայհոյալից խոսքերով բարձրաձայն նախատում էր Զարյանին, որը լուռ կլլում էր և իրեն արդարացնելու համար ուրիշ բան չգտավ անելու, քան ականջիս փսփսալ, թե՝ «հարբած է, ինչ կարող եմ անել»: Այդ ժամանակ մյուս ականջիս Չարենցն էլ մի այլ բան էր շշնջում՝ «Ոչինչ, թող կարծի, թե հարբած եմ»»[80]:

Հաջորդ օրը՝ կեսօրն անց, նորից հանդիպում են:

«– Գիտե՞ս, Չարե՛նց, որ երեկ գիշեր հարբել էիր և ինձ հայհոյեցիր:

– Որ հայհոյել եմ քեզ, այդ ճիշտ է, ես շատ լավ եմ հիշում, բայց որ հարբած եմ եղել, այդ բոլորովին էլ ճիշտ չէ»[81]:

Այս կրակահերթից հետո Զարյանը կտրուկ անհայտանում է և այլևս չի երևում:

Պահպանվել է, հավանաբար, հաջորդ օրը գրած Չարենցի այս երկտողը.

«Կոնստան,

Այս րոպեիս, առանց ուշանալու արի մոտս: Շատ վատ եմ: Ջուշանաս: Իսկույն: Կամ Համլիկին ուղարկի: Իսկույն:

Չարենց»:

Թերթիկի վրա Կ. Զարյանի ձեռքով գրված ֆրանսերեն հասցեն է. «Constan Zarian, Hotel de Balcons»[82]*:*

Համլիկը՝ Թումանյանի որդին, Փարիզում Սորբոնի համալսարանի ուսանող էր և խորհրդային դեսպանատան կցորդ: Երկուսի փոխհարաբերությունը-

[76] *Չ ա ր ե ն ց. 1983, 259, 712:*
[77] *«Յառաջ» (Փարիզ), 07. XII. 1930:*
[78] *«Հայաստան» (Փարիզ), 03. I. 1963:*
[79] *«Հայաստան», 03. I. 1963:*
[80] *Չարենցի հետ: Հուշեր. 2008, 40:*
[81] *Չարենցի հետ: Հուշեր. 2008, 40:*
[82] *ԳԱԹ, Կ. Զարյանի ֆ, № 82:*

ներն այսպես մանրամասնեցինք, որովհետև գրականության պատմության շրջագծում են: Ավելացնենք՝ Ալ. Զաքարյանի վերաբերմունքն ու գնահատականն ամենևին դրական չեն: Մեջ բերելով Զարենցի ընդգծումներով պահված, «Հայրենիք» ամսագրում տպագրված «Հայաստանում» պոեմից[83] հատված և այն համեմատելով Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի …»-ի հետ գրում է. «… Կ. Զարյանի բարբաջանքը հուդայական «պարոդիա» է … առաջին տողից վերջինը ծաղրուծանակ «Հայաստան» հայրենիքի հասցեին՝ սերնդեսերունդ նզովելի … իր, այսպես կոչված, ողջ «ստեղծագործությամբ» հանդերձ՝ տմարդի հանցագործություն է»[84]:

Ավելացնենք, որ Փարիզում հին ծանոթներից հանդիպում է նաև Երվանդ Քոչարին: Վիվանի ուղեկցությամբ Հալլում զբոսնելուց հետո ճաշակում են ֆրանսիական հայտնի սոխով ապուրը: Զրուցելիս հորդորել է՝ անպայման պետք է վերադառնալ Հայաստան, որպեսզի հառնես այնպես, ինչպես Էյֆելյան աշտարակը Փարիզում:

Վիվանի հետ «պատահական» հայտնվում են ՀՅԴ-ի կազմակերպած մի միջոցառման սրահում և ղուրս գալիս: Միջոցառումը Փարիզի հայ ուսանողական միության երկրորդ բանախոսությունն էր՝ հրավիրված 1925 թ. մարտի 31-ի երեկոյան՝ 8.30-ին: Զեկուցել է Ավետիս Ահարոնյանը՝ «Հեթանոս լույսը հայոց բանաստեղծության մեջ»:

Ներկաները ճանաչում են Զարենցին, վերջինս ասում է ուղեկցին. «Գիտե՞ս, զարմանալի ճնշող էր տպավորությունը, ասես հանգուցյալների շրջապատ էի ընկել»: Զարենցի անդրադարձն անմիջական էր՝ «Սևրի դաշնագրից մինչև «Հայ կանանց ալեծուփ մազերը և հեթանոս մարմինը» կամ ընդհակառակը»[85]:

Նույն օրը Հ. Թումանյանն իր թարգմանությամբ Զարենցին է նվիրում Ռաբինդրանաթ Թագորի «Պարտիզպանը» (Վիեննա, 1922) գիրքը՝ «Տաղանդավոր կարմիր պոետ սիրելի Եղիշե Զարենցին սիրով և հարգանքով: Paris.*»: Ավելացնենք, որ Հ. Թումանյանը նրան նաև բանաստեղծություն է նվիրել՝ «Եղիշե Զարենցին»[86]:*

Փարիզում Զարենցը երկար չի մնում, ըստ Վիվանի՝ տասը օր[87], որից հետո մեկնում է Բեռլին:

Բեռլին

Ապրիլի 11-ին Փարիզ – Բեռլին ճանապարհին գրում է «Բելգիա – Լիեժ (ճամփորդական տետրակից)»[88] և ինքնաթիռային աղետի զոհ Գևորգ Աթաբեկյանի հիշատակին է ճոնում «Նրան ու աշխարհին (Ներքող պոետից)»[89] բանաստեղծությունները:

---

[83] *Տե՛ս «Հայրենիք», 1924, թիւ 2, 52–64:*
[84] *Զ ա ք ա ր յ ա ն. 2008, 123:*
[85] *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16. VII. 1925:*
[86] *Զ ա ր ե ն ց. 2017, 429:*
[87] *Տե՛ս Զարենցի հետ: Հուշեր. 2008, 38:*
[88] *Տպագրվել է 1926-ին «Խորհրդային Հայաստան»-ի երկշաբաթյա հավելվածում (թիվ 1):*
[89] *Տե՛ս Զ ա ր ե ն ց. 1996, 79–81, 636:*

Ապրիլի 11-ին ժամանում է Բեռլին: Նույն օրն էլ ձեռք է բերում Մաքսիմ-լիան Վոլոշինի «Демоны глухонемые» *(Բեռլին, 1923) ժողովածուն և Վիկտոր Շկլովսկու* «Zoo или письма не о любви» *(Բեռլին, 1923) գիրքը: Ապրիլ 15-ին Բեռլինում գնում է նաև Մաքսիմ Գորկու* «О русском крестьянстве» *(Բեռլին, 1922), Պուշկինի «Եվգենի Օնեգին» (ինքնագիրը՝ «Ե. Չարենց, 1925 – IV, Բեռլին»), Էդգար Պոի* «Рассказы» *(Բեռլին), 1923, 2 հատոր գրքերը*[90]*:*

Բեռլինում նրան ուղեկցել է հայ ուսանողական միության նախագահ Աշոտ Պատմագրյանը: Չարենցը նրան ասում է՝ առանց Հայաստանի, առանց հայ ժողովրդի կմեռնեմ այս օտարախտի մեջ. «Ի՞նչ է ձեր կյանքը էստեղ, չա՛ն կյանք, չա՛ն կյանք: Միշտ օտար, միշտ անհարազատ միջավայրում, հեչ մարդ կարա՞ ապրի: Երկիրը՝ օտար, լեզուն՝ օտա՛ր, օտա՛ր, օտա՛ր, մարդ կմեռնի էս օտարախտից»[91]*:*

Չարենցը շատ ծանր է տանում նրա ողբերգական մահը, նրա կորուստը համարում է սարսափելի դժբախտություն հայ ժողովրդի և նրա մշակույթի համար: Հեռագրել է. «Ցնցված եմ ընկ. Մյասնիկյանի, Մոդիլևսկու և Ալթարբեկյանի մահվամբ: Իմ վիշտն անսահման է: Մխիթարվում եմ այն մտքով, որ հեղափոխությունն ապրում է: Փա՛ռք ընկածներին ու մեր կուսակցությանը: Ե. Չարենց»[92]*: Այն կարծիքի էր, որ «վթարը» Բերիայի կազմակերպած սադրանքն է՝ իհարկե, Ստալինի անմիջական հանձնարարությամբ*[93]*: Այդ պահից մտորում է նրա կերպարը գեղարվեստորեն անմահացնելու մասին:*

Ողբերգության անմիջական վերապրումով 1925 ապրիլի 12 – մայիսի 28-ին Բեռլինում գրում է Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակին նվիրված «Մյուր դե Ֆեդերե (Կոմունարների պատը Փարիզում)» պոեմը[94] *(Բեռլին, 12. IV–28. V. 1925), ավելի ուշ նրան ոգեկոչում է «Սիրելի Ալեքսանդր Ֆեոդորովիչին» (15. V. 1927) բանաստեղծության մեջ, «Գիրք ճանապարհի» ժողովածու՝ «Ա. Մ.» («Ե՛լ, բարձրացի՛ր դագաղից և կրկի՛ն երևա աչխարհին»), «Ա. Մ.» («Նայիրյան արվե՛ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած») քառատողերում (15–16. IV. 1933):*

---

[90] *Պոեմի գրքի տիտղոսաթերթիկի ինքնագիրն է և տարեթիվը. Հ. I. «925 – 4/IV, Բերլին»: Մինչդեռ Փարիզում էր: Հ. II «925 – 4 /IV». IV-ի առաջին գիծը ջնջել է, դարձել է V. այսինքն՝ մայիս, երբ արդեն Բեռլինում էր: Ուրեմն՝ երկու հատորներն էլ գնել է Բեռլինում մայիսի 4-ին: Առաջին հատորի թվագրությունը վրիպակ է:*

[91] *Հուշեր Եղիշե Չարենցի մասին. 1986, 200:*

[92] *«Խորհրդային Հայաստան», 27. III. 1925:*

[93] *Զ ա ք ա ր յ ա ն. 1989, 219, 548:*

[94] *Պոեմի մի հատված տպագրվել է «Մարտակոչ»-ում (01. VIII. 1925), ամբողջությամբ՝ «Խորհրդային Հայաստան»-ում 02. VIII – 15. VIII. 1925, նույն թվականին՝ նաև առանձին գրքով (60 էջ, 1.000 օրինակ): Ունի ուղերձ՝ «Այս պոեմս նվիրում եմ հիշատակին Ալեքսանդր Ֆեոդորովիչ Մյասնիկյանի (Մարտունու), ընկերոջ, կոմունիստի, մարդու, 1925, 7 ապրիլ, Բեռլին-Շարլոտենբուրգ»: Ապրիլի 7-ն ա՛յս գրության թվագրությունն է, պոեմն սկսել է ապրիլի 12-ին, ավարտել՝ մայիսի 28-ին:*

Բեռլինում ցանկանում էր իրագործել Փարիզում չիրականացված ցանկությունը՝ հրատարակել «Ղեկ» անունով պարբերական, սակայն հրատարակությունը չի կայանում: Այդ նպատակով նամակներ և գրություններ է հասցեագրել Ալեքսանդր Մյասնիկյանին, Հարություն Սուրխաթյանին, Մարտիրոս Սարյանին, Միքայել Մազմանյանին, Սուրեն Երզնկյանին, Մամիկոն Գևորգյանին, Դերենիկ Դեմիրճյանին, Գուրգեն Մահարուն և այլոց, ինչպես նաև թերթերի խմբագրություններին:

1925 թ. ապրիլին Բեռլինում հրատարակում է «Երեք փոքրիկ պոեմ «Լենինին» չարքից» գիրքը, որի մեջ զետեղված են 1924-ին գրած «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, Մուժիկի և մի գույգ կոշիկի մասին», «Լենին քեռին», «Լենինն ու Ալին» երկերը (ծավալը՝ 30 էջ):

1925 թ. ապրիլին Բեռլինից նամակ է հասցեագրում Հ. Սուրխաթյանին. սխալ է համարում այն պրիմիտիվ կարծիքը, որ դրսևորվել է «կյանքի ու մարդու» հանդեպ, ամեն ինչ չափազանց պարզեցված էր, հասարակացված, վուլգարության հասցված. «... ներկայիս մենք պետք է ունենանք արվեստին մոտենալու մի չափանիշ – իղեոլոգիական: Մնացածը զետալ է, մանրամասնություն, սուբյեկտիվ, «տաղանդի» հարց – ուրիշ ոչինչ» [95]*: Այսինքն՝ նախ ինչը, հետո միայն՝ ինչպեսը:*

Կրկին Փարիզում

Բեռլինից մայիսի սկզբին Զարենցը վերստին վերադարձել է Փարիզ. դա են վկայում թե՛ Համլիկ Թումանյանի 5. V-ին նվիրած Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուի (Կ. Պոլիս, 1923. «Ազնվական կարմիր պոետին, սիրելի ընկ. Զարենցին: Համլիկ, 925. 5. V. Pariz»), թե՛ 7. V-ին Դեմիրճյանին գրած նամակի տեղագրությունները, թե՛ հուշագիրները, ովքեր վկայում են՝ Բեռլինի երկաթգծի կայարանից Զարենցին ուղեկցել են Փարիզ: Աշոտ Պատմագրյանը վկայում է. «Մի քանի այցելություններ, գնումներ, և մեր օրը վերջացավ: Ժամադրվեցինք հաջորդ օրվա համար, որպեսզի իրեն կայարան առաջնորդեի: Գնում էր Փարիզ» [96]*: Մնացել է մոտ տասը օր:*

1925 թ. մայիսի 7-ին Փարիզից հերթական նամակն է հասցեագրում Դեմիրճյանին և աշխատակցելու հրավիրում «... ինչպես մեր թերթին, այնպես էլ ժուռնալին: Փարիզում հրատարակվող թերթը և մանավանդ ժուռնալը պետք է այն վայրը լինեն, ուր հանդիպելու են իրար Հայաստանի և արտասահմանի այն գրողները, որոնք անվերապահ կերպով փարած են խորհրդային Հայաստանի գաղափարին» [97]*:*

Թերթը և ամսագիրն այս դեպքում նույն բանն են. «Ղեկ»-ի տպագրությունը չի իրականանում, դրա փոխարեն 1925-ի հոկտեմբերից Եղիա Զուբարի խմբագրությամբ Փարիզում լույս է տեսնում «Երևան» եռօրյա լրագիրը:

Դեմիրճյանին ուղղված նամակում Զարենցը չարունակում է. «Վենետիկում հանդիպեցի Իսահակյանին: Մի ամիս միասին էինք: Ամեն օր հիշում էինք քեզ: Շատ հաճելի մարդ է բնավորությամբ: Գրում է «Ոստա Կարոն», եթե

---

[95] *Սուրխաթյան. 1929, 120–121:*
[96] *Հուշեր Եղիշե Զարենցի մասին. 1986, 201:*
[97] *Զարենց. 1967, 118–119:*

նման լինի իր պատմածին – վիրահարի գործ է լինելու: Բայց վախում եմ, որ նա ավելի լավ պատմող է (բերանացի), քան արձակագիր: <…>: Նա «Դատաստանդ» չի կարդացել, իսկ «Քաջ Նազարի» միայն վերջին գործողությունն էր կարդացել դասագրքում – շատ էր հավանել, ուղղակի հիացած էր: Դե ես էլ իմ կողմից յուղ լցրի նրա հիացմունքի վրա: Արդեն քո «Քաջ Նազարի» առաջին ընթերցողը և հիացողը – եթե հիշում ես – ես եմ եղել: Ես շատ հավանեցի Վենետիկը, Պոլիսը և Փարիզը, Հռոմը և Բեռլինը առանձին տպավորություն չարին վրաս: Սքանչելի էր Նապոլին, Կապրի կղզին, Վեզուվը և Պոմպեին: Աննման գեղեցկություններ են դրանք, հեքիաթային բաներ!»[98]:

«Ղեկ»-ի հրատարակության կապակցությամբ «Նամակ խմբագրության» վերնագրով նույն «Կոմունիստ»-ում տպագրվում է Չարենցի անթվակիր գրությունը. «Հարգելի ընկեր.

Առաջիկա ամսվա սկզբներից (1925 թ. հունիս – Դ. Գ.) Փարիզում լույս է տեսնելու «Ղեկ» պարբերաթերթը, սկզբում իբր չաբաթաթերթ, իսկ հետագայում շաբաթը երկու անգամ: Թերթն ունենալու է գրական-գեղարվեստական միամսյա հավելվածներ:

Սրանով խմբագրությունս հրավիրում է ձեզ պարբերական և կանոնավոր աշխատակցության:

Խմբագրությունս համոզված է, որ դուք, քաջ տեղյակ լինելով թերթի առաջադրած խնդիրներին և նպատակներին՝ կլինեք նրա աջողության շահախնդիր, ամենամոտ կանգնած անձերից մեկը:

Խմբագրությունս խնդրում է նաև, որ դուք ուղարկեք պարբերաբար ինչպես «Կոմունիստ» թերթը, այնպես էլ այն բոլոր հրատարակությունները, որ լույս են տեսել կամ տեսնելու են նրա հրատարակությամբ:

Ընդունեք ընկ. բարևներս և խորին հարգանքներս:

Ի դիմաց խմբագրության՝ Չարենց»[99]:

«Կոմունիստ»-ը հայտարարում է «Ղեկ» պարբերականի բաժանորդագրություն. «Բացված է բաժանորդագրություն «Ղեկ» պարբերաթերթի: Խմբագրությամբ Ե. Չարենցի»[100]:

Իր գրական հայացքների վերանայման մասին 1925 թ. մայիսի 14-ին Բեռլինից Չարենցը նամակ է հասցեագրում Բաքվի «Վիչկա»-ի խմբագրությանը. «Ամենից առաջ ասեմ, որ արտասահմանը իմ մեջ առաջ բերեց մի հիմնական հեղաշրջում: Ես այդտեղ նախ արվեստագետ էի և ապա պրոլետարական, իսկ այստեղ ես դարձա՝ նախ պրոլետարական և ապա արվեստագետ»:

Չարենցը դրսում ավելի սուր է զգում «… այն հսկայական կոնտրաստը, որ կա մեր և հին աշխարհի մեջ: <…> արվեստի ասպարեզը միշտ էլ թափուր է եղել պրոլետարիատի «մսից և ոսկորից» չինված մարդկանցից: <…>: Իսկ մենք ի՞նչ էինք անում! – կարծում էինք աշխարհը նվաճել պլակատներով և ողորմելի ագիտկաներով, որոնք շատ-շատ կարող են ունենալ ընթացիկ ռեկլամի նշանակություն: Եվ կարծում էինք, որ դա է այն իսկական արվեստը, որ հարկավոր է պրոլետարիատին: Իսկ գիտե՞ս ինչու էինք այդպես կարծում –

[98] *Չ ա ր ե ն ց. 1967, 119–120:*
[99] *«Կոմունիստ» (Բաքու), 26. V. 1925:*
[100] *«Կոմունիստ», 01. VI. 1925:*

որովհետև մեր ինտելիգենտական ողորմելի խելքով վերցնում էինք կենդանի բանվորներին և չինում էինք մի՝ իբր թե «դասակարգային օգուտի» անկենդան չուչելո, այդ «օգուտն» էլ վերցնում էինք ամբողջ մարդուց առանձին, օգում կախված. – չէ՞ որ մենք «հերքում էինք» կենցաղը և հոգեբանությունը!»[101]:

Վերադարձ

1925 թ. հունիսի սկզբին Զարենցն արդեն Մոսկվայում էր՝ գրական հանդիպումներ, «երկիր Նայիրի» վեպի ռուսերեն թարգմանության կապակցությամբ քննարկումներ Մարիետա Շահինյանի և Հակոբ Խաչատրյանցի հետ: 1925 թ. հուլիս 28-ին Իսահակյանը Վենետիկից նամակ է հասցեագրում Մարտիրոս Սարյանին. «Զարենցը գնաց, և ո՛չ մի տող չգրեց. դավաճան մարդ դուրս եկավ: Ես սիրեցի նրան, լավ ընկեր է, և նույնիսկ հայ մարդ է»[102]:

1925 թ. հուլիսի 29-ին արդեն Թիֆլիսում էր. արտասահմանյան ճամփորդության վերաբերյալ «Մարտակոչ»-ը օգոստոսի 1-ին տպագրում է «Զրույց ընկ. Ե. Զարենցի հետ» տեղեկատվությունը՝ ամփոփելով արտասահմանյան տպավորությունները.

«Ամենուրեք նկատելի է վախը դեպի բոլշևիզմը: <...>:

Այսպես կոչված նախկին վաստակավոր գրողներից ես հանդիպեցի միայն բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ, որի կարոտը «երկրի» շատ մեծ է: Նա իր այսօրվան աշխատակցությունը արտասահմանյան ամեն ուղղության պարբերականների մեջ կապում է զուտ իր անձնական տնտեսական պայմանների հետ: Նրա մեջ արդեն որոշակի նկատելի է գաղափարական թեքում դեպի խորհրդային Հայաստանի (ինչպես գրական, նույնպես և քաղաքական) իդեալները: Մենք միանգամայն համոզված ենք, որ շատ մոտ ապագայում նա կվերահաստատի իր սերտ կապը խորհրդային Հայաստանի հետ:

Ներկայումս նա մշակում է իր «Ուտոպ Կարո» վեպը... <...>:

Այժմ ես մեկնում եմ Երևան կարոտս առնելու խորհրդային Հայաստանից, որը առանձնապես թվալի էր կարմիր գծից դուրս»[103]:

Բաքվի «Կոմունիստ»-ը իր հերթին տպագրում է հուլիսի 29-ին՝ Թիֆլիսից անմիջապես Երևան մեկնելուց առաջ, Զարենցի հետ Ս. Մ.-ի (Սուրեն Երզնկյան) հարցազրույցի հաղորդումը՝ «Եվրոպայից Մոսկվայի վրայով Թիֆլիս է վերադարձել մեր հայտնի պրոլետարական պոետ ընկ. Եղիշե Զարենցը: Նա վերջին ամիսները ապրում էր Փարիզում: <...>: Փարիզում ընկ. Զարենցը ծրագրում էր հրատարակել գրական-գեղարվեստական «Ղեկ» հանդեսը, բայց ֆրանսիական կառավարությունը արտաքսեց հեղափոխական պոետին՝ որպես «վնասակար տարր»: <...>: Այնուհետև խոսակցությունն անցնում է արվեստի խնդիրներին: Զարենցը մեծ հիացմունքով է խոսում «հին արվեստի» գլուխգործոցների մասին»[104]:

Մոսկվայից Երևան ճանապարհին մի քանի օր մնում է Թիֆլիսում, հուլիս 31-ին արդեն ճանապարհին էր. վերադառնում է հայրենիք[105]:

---

[101] *Զ ա ր ե ն ց. 1967, 422–426:*

[102] *Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 209:*

[103] *Զ ա ր ե ն ց. 1967, 302–303: Ստորագրված է Մ. Ս՝ Սուրեն Երզնկյանն է:*

[104] *«Կոմունիստ», 04. VII. 1925:*

[105] *«Խորհրդային Հայաստան», 02. VIII. 1925:*

Վերադառնում է արվեստի հանդեպ նոր պատկերացումներով. դեռևս Եվրոպայում արդեն վերանայել էր իր գրական տեսակետները և այդ մասին գրել մտերիմներին:

Արտասահմանից բերել էր երկու նկար. մեկը՝ Քրիստոսը՝ փշե պսակը գլխին, մյուսը՝ կիսամերկ մի կին:

Թիֆլիսից Երևան ճանապարհին 1925 թ. հուլիսի 31-ին Լենինականի երկաթգծի կայարանում կայանում է բախտորոշ հանդիպումը. հինգրոպեանոց դադարի ընթացքում Չարենցը ծանոթանում է տեղի երիտասարդ գրողների հետ: Տրամադրությունը կայտառ էր, հագին՝ կանաչագույն կոստյում, գլխին՝ լայնեզր գլխարկ, չուրթերին՝ սիրո պես անմեղ հեգնանք՝ մի՞թե սա է Երկիր Նայիրին: Դիմավորողները՝ «Հոկտեմբեր», ապագա «Նոյեմբեր» գրական խմբակցության անդամներ՝ արդեն ծանոթ Գուրգեն Մահարի, և ձեռքները բարևի մեկնած Մկրտիչ Արմեն, Գեղամ Սարյան, Սողոմոն Տարոնցի, …

Մեծ գրական կյանք սկսելու պատգամներ է հղում:

Իսկ Երևանում նրան սպասում էին. «Բանաստեղծ Չարենցը, որ 10 ամսից ի վեր գտնվում էր Եվրոպայում, հուլիսի 31-ին Մոսկվայի վրայով վերադարձավ Հայաստան»[106]: Ճչտենք՝ Բաթումից դուրս գալը և Մոսկվա վերադառնալը օրացույցով տևել է 7 ամիս 10 օր: Վերադարձից հետո անկատար է մնում ճամփորդական նոթեր գրելու ցանկությունը, քանի որ նոթագրություններ չէր արել:

Ինչպես նշեցինք, արտասահմանյան ուղևորության ընթացքում գնել է բազմաթիվ գրքեր: Ավելացնենք մյուսները ևս. ռուս գրողներից՝ Պուշկին, այդ թվում՝ «Потаенная тетрадь (Пушкин – Дельвигу)», *Դոստոևսկի, Մե-րեժկովսկի, Զամյատին* («На куличках. Рассказы», *Բեռլին, 1923, ինքնագիրը՝ «Ե. Չարենց, 1925 – V – 15, Բերլին»), Լեսկով (*«Избранные сочинения», *հ. I, Բեռլին – Պ-գրդ – Մ., ինքնագիրը՝ «Եղիշե Չարենց, 925 – 11. V, Բերլին»), Բելի [*«Серебряный голубь», *Բեռլին, 1922, ինքնագիրը՝ «Ե. Չարենց, 925 – 11 – IV, Բերլին». տիտղոսաթերթին հետագայում ավելացել է Երևան այցելած Անդրեյ Բելիի «22. V. 1928» թվագրությամբ ընծայագիրը.* «Глубо-коуважаемому Егише Абгаровичу Чаренцу с надеждой на новые встречи» *(«Մեծարգո Եղիշե Աբգարի Չարենցին՝ առաջիկա հանդիպման հույսով»)], Ռեմիզով, «Ռուսական արվեստի պատմություն», Կոնդիվի Ասկանիո,* «Жизнь Микель-Анджело Буонарроти», *Բեռլին, 1923, ինքնագիրը «Ե. Չարենց, 925 – IV – 14, Բերլին»:*

Հավանաբար Վենետիկից ձեռք է բերում Մխիթարյանների հրատարա-կություններ՝ Ղ. Ինճիճյան «Հնախոսություն աշխարհագրական Հայաստան-յայց աշխարհի» (Վենետիկ, 1835), «Ստորագրություն հին Հայաստանյայց» (Վենետիկ, 1822) գրքերը:

Եզրակացություն

Չարենցի արտասահմանյան ուղևորությունը հիմնավորապես վերափոխեց նրա արվեստի գեղագիտությունը: Մինչ այդ տարված լինելով գրականութ-յանը հեղափոխականացնելու գաղափարներով և 1922–1924 թթ. դիմելով

[106] *«Խորհրդային Հայաստան», 02. VIII. 1925:*

ծայրահեղ վորձարարության («Երեքի դեկլարացիա», «Standard», ինչպես նաև այդ ընթացքում հրատարակած գրքերը՝ «Ոտմանս անսեր», «Կոմալմանախ»)՝ նա պոեզիան դարձրել էր զաղափարական քարոզչության, իր բառով ասած՝ «ագիտացիա»:

Արվեստի համաշխարհային արժեքները, որոնց հետ իր ուղևորության ընթացքում նա չփվեց հատկապես Հռոմում, Վենետիկում, Փարիզում և Բեռլինում, նրա մեջ արթնացրին ծանրակչիռ ու մնայուն գրականության ստեղծելու անչեղ ցանկություն, ինչն արտահայտվեց թե՛ իր վերափոխումն ազդարարող տեսական մտքերով, թե՛ գեղարվեստական ստեղծագործությամբ, ինչպիսիք են՝ «Պոեմ հերոսական» (1925), էլեգիա՝ գրված Վենետիկում (1925), «Խմբապետ Շավարշը» (1929) պոեմները և, հատկապես, «Էպիքական լուսաբաց» (1930) ժողովածուն: Այդ վերափոխմամբ նա կազմակերպեց նաև գրական գործը՝ ստեղծելով և ղեկավարելով «Նոյեմբեր» գրական խմբակցությունը:

Զարենցը, ով անցել էր խորհրդապաշտության, ապագայապաշտության ու պրոլետարական մշակույթի (պրոլետկուլտ) բովով, մտնում է նոր հուն, որը նրան տանում է դեպի իրապաշտություն և մենամենտալիզմ:

Դավիթ Գասպարյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմությունն, Եղիշե Զարենց: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների: grakanagetgasparyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաբաբյան Ս. 1977, Եղիշե Չարենց, հ. II, Երևան, ԳԱ հրատ., 400 էջ:

Անանյան Գ. 1980, Չարենցի հետ, Երևան, «Լույս», 156 էջ:

«Ապագա» (Փարիզ), 04. IV. 1925:

Ավետիք Իսահակյանի նամակները. 1959, Գահիրե, 172 էջ:

«Արձագանք» (Փարիզ), 14. XII. 1924:

«Արև» (Գահիրե), 18. XII. 1924, 23. XII. 1924:

«Բազմավէպ» (Վենետիկ), 1923, թիւ 12, էջ 377–378:

«Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 3, էջ 135–141:

Գասպարյան Դ. 2000, Հայ գրականություն, հ. I, Երևան, «Զանգակ», 344 էջ:

Զարյան Կ. 1975, Երկեր, Անթիլիաս, 646 էջ:

Զարյան Կ. 1987, Բանկոոպը և մամութի ոսկորները, Անթիլիաս, 652 էջ:

Զաքարյան Ալ. 1989, Գրականության և պատմության ընթացքները, Երևան, «Խորհրդային գրող», 548 էջ:

Զաքարյան Ալ. 2003, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, հ. II, Երևան, ՀԳՄ հրատ., 432 էջ:

Զաքարյան Ալ. 2008, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, հ. III, Երևան, «Ֆենոմեն» հրատ., 532 էջ:

«Ժամանակ» (Կ. Պոլիս), 27. XII. 1924:

Իսահակյան Ավ. 1977, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, «Սովետական գրող», 436 էջ:

Իսահակյան Ավ. 1979, Երկերի ժողովածու, հ. VI, Երևան, «Սովետական գրող», 432 էջ:

Իսահակյան Վ. 2000, Հայրս, Երևան, «Գիտություն», 590 էջ:

Խաչատրյան Ա. 1966, Եղիշե Չարենցի հետ Հռոմի մեջ, Բեյրութ, 34 էջ:

«Խորհրդային Հայաստան», 29. XI. 1924, 22. I. 1925, 21.III. 1925, 27. III. 1925, 05, 07. IV. 1925, 17. VII. 1925, 02. VIII. 1925, 16. VIII. 1925, 29. XI. 1925:

«Խորհրդային Հայաստանի» երկշաբաթյա հավելված, 1926, թիվ 1:

«Կոմունիստ» (Բաքու), 26. V. 1925, 01. VI. 1925, 04. VIII. 1925:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 404, g. 3, գ. 7, թ. 306:

«Հայություն» (Երևան), 30. VI. 1994:

«Հայաստան» (Փարիզ), 03. I. 1963:

«Հայրենիք» (Բոստոն), 1924, թիւ 2, էջ 52–64, 1925, թիւ 3, էջ 45–60, թիւ 4, էջ 42–48, 1926, հոկտեմբեր–1928, փետրվար, 1931, նոյեմբեր–1933, դեկտեմբեր:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ա. Չոպանյանի ֆ., № 3836:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Կ. Զարյանի ֆ., № 82:

Հուշեր Եղիշե Չարենցի մասին. 1986, Երևան, «Սովետական գրող», 504 էջ:

«Մարտակոչ» (Թիֆլիս), 18. II. 1925, 29. VII. 1925, 01. VIII. 1925:

«Յառաջ» (Փարիզ), 07. XII. 1930:

Նավասարդյան Վ. 2007, Չարենց: Հուշեր և խորհրդածություններ, Երևան, «Նամէ» տպագրատուն, 164 էջ:

Չարենց Ե. 1925, Կոմունարների պատը Փարիզում, Երևան, Հայպետհրատ, 60 էջ:

Չարենց Ե. 1963, Երկերի ժողովածու, հ. II: Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ալ. Գ. Զաքարյան, Երևան, ԳԱ հրատ., 400 էջ:

Չարենց Ե. 1964, Երկերի ժողովածու, հ. III: Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ալ. Գ. Զաքարյան, Երևան, ԳԱ հրատ., 376 էջ:

Չարենց Ե. 1967, Երկերի ժողովածու, հ. VI: Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ալ. Գ. Զաքարյան, Երևան, ԳԱ հրատ., 804 էջ:

Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. IV: Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ալ. Գ. Զաքարյան, Երևան, ԳԱ հրատ., 626 էջ:

Չարենց Ե. 1983, Անտիպ և չհավաքված երկեր, բնագիրը պատրաստեց և ծանոթագրեց Ան. Չարենց, Երևան, ԳԱ հրատ., 712 էջ:

Չարենց Ե. 1996, Նորահայտ էջեր: Պոեմներ, բանաստեղծություններ, հոդվածներ: Աշխատասիրությամբ՝ Դ. Գասպարյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Չարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց: Անտիպ ժառանգություն: Աշխատասիրեց, ծանոթագրեց, առաջաբան և վերջաբան՝ Դ. Գասպարյան, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:

Չարենցի հետ: Հուշեր. 1997, կազմ. և խմբ.՝ Դ. Գասպարյան, Երևան, «Նաիրի», 424 էջ:

Չարենցի հետ: Հուշեր. 2008, մաս 2-րդ, կազմ. և խմբ.՝ Դ. Գասպարյան, Երևան, «Նաիրի», 440 էջ:

Չարենցի տուն-թանգարան, Չարենցի ֆոնդ (անմշակ):

Սուրխաթյան Հ. 1929, Հետ-հոկտեմբերյան հայ գրականություն, Երևան, Հայպետհրատ, 352 էջ:

Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին. 1980 (տպագրության պատրաստեց Գ. Գույումջյան), Երևան, ԳԱ հրատ., 320 էջ:

ЗАРУБЕЖНАЯ ПОЕЗДКА ЕГИШЕ ЧАРЕНЦА
(1924, 21 ноября – 1925, начало июня)

ДАВИД ГАСПАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Е.Чаренц, Ал. Мясникян, А. Сурхатян, Трабзон, Стамбул, Афины, Рим, Венеция, Св. Лазарь, Париж, Берлин, В. Навасардян, Ав. Исаакян, К. Зарян, Г. Туманян.

21 ноября 1924 г. Егише Чаренц из Батуми отправляется в международное путешествие на теплоходе «Буковина». За границей Чаренца воспринимают как символ СССР, как красного поэта. Первой его остановкой был Трабзон, где он написал поэму «Ленин и Али», основанную на полученных там впечатлениях. Затем следует Константинополь, где 19–22 декабря Чаренц написал поэму «Стамбол» и в том же месяце издал ее отдельной книгой. 9 января 1925 г. он уезжает из Стамбула в Афины.

В начале февраля 1925 г. поэт покидает Грецию и через несколько дней он уже в Риме. По пути побывал на острове Капри в Неаполитанском заливе.

В Риме Чаренц посещает Национальный музей, где встречается с известным деятелем дашнакской партии Вааном Навасардяном. В результате этой встречи родилось произведение Чаренца «Умерший господин или господин Умерший» и книга Ваана Навасардяна «Егише Чаренц. Воспоминания и размышления» (Каир, 1957).

4 марта 1925 г. Чаренц прибыл из Рима в Венецию, где находился около месяца. Здесь он посещает Мхитаристов, навещает Аветика Исаакяна. Из бесед с Исаакяном родилась поэма «Элегия, написанная в Венеции».

Из Венеции Чаренц уезжает в Париж, где встречается с Костаном Зарян, Ервандом Кочаром, Ширванзаде, Гамликом Туманяном – сыном Ованеса Туманяна, студентом Сорбоннского университета и атташе советского посольства. В Париже Чаренц инициирует издание литературного журнала «Гек» («Руль») под своей редакцией.

9–11 апреля 1925 г. по дороге из Парижа в Берлин поэт написал стихотворение «Бельгия – Льеж (из путевой тетради)». Под влиянием трагической гибели Мясникяна Чаренц увековечил память о нем поэмой «Стена коммунаров в Париже», написанной в Берлине 12 апреля – 28 мая 1925 г.

После путешествия продолжительностью семь месяцев и 10 дней Чаренц возвращается на родину и инициирует создание литературной группы «Ноябрь», которая должна была стать носителем и воплощением его новых идей.

Давид Гаспарян – д. филол. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: история армянской литературы и культуры XX века, Егише Чаренц. Автор множества книг и статей.grakanagetgasparyan@mail.ru

EGHISHE CHARENTS' FOREIGN JOURNEY
(November 21, 1924 – beginning of June, 1925)

DAVID GASPARYAN

S u m m a r y

Key words: Yeghishe Charents, Al. Myasnikyan, H. Surkhatyan, Trabzon, Istanbul, Athens, Rome, Venice, St. Lazar, Paris, Berlin, V. Navasardyan, Av. Isahakyan, K. Zaryan, H. Tumanyan.

On November 21, 1924, Charents left Batumi for an international journey on the ship "Bukovina". Abroad, Charents was perceived as a symbol of the USSR, as a red poet. His first stop was Trabzon, where he wrote the poem "Lenin and Alin" based on the impressions he got there. Then follows Constantinople where Charents wrote the poem "Stambol" from December 19 to 22 and in the same month, he published it in a separate booklet. On January 9, 1925, he left Istanbul for Athens.

In early February of 1925, the poet left Greece and in a few days, he was already in Rome. On the way, he visited the island of Capri in the Bay of Naples.

In Rome Charents visited the National Museum, where he met the famous political figure of the Dashnakcutyun party Vahan Navasardyan. The result of that meeting was the work "Deceased Lord or Lord Deceased" by Charents and the book written by Vahan Navasardyan "Eghishe Charents. Memories and Reflections" (Cairo, 1957).

On March 4, 1925, Charents left Rome for Venice, where he stayed for about a month. In Venice, he visited the Mkhitaryan Congregation and went to see Avetik Isahakyan. From conversations with Isahakyan the poem "Elegy written in Venice" was born.

Charents travelled from Venice to Paris, where he met Kostan Zaryan, Yervand Kochar, Shirvanzade, Hamlik Tumanyan-Hovhannes Tumanyan's son, a student at Sorbonne University and attaché of the Soviet embassy. In

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

Paris, he initiated the publication of a literary magazine “Ghek” (“The Wheel”) under his editorship.

From April 9 to11, 1925, on the way from Paris to Berlin, the poet wrote the poem “Belgium - Liège (from a travel notebook)”. Under the influence of Myasnikyan’s tragic death, Charents immortalized his memory with the poem “The wall of Communards in Paris” written in Berlin from April 12 to May 28, 1925.

After a journey of seven months and 10 days, Charent returned to his homeland and initiated establishment of a literary group “November”, which was supposed to become the bearer and embodiment of his new ideas.

David Gasparyan – Doctor of Philological Sciences, Professor, Leading Researcher at the Department of New History of the Institute of History of NAS of RA. Scientific interests: History of Armenian literature and culture of the XX century, Egishe Charents. Author of multiple books and articles.
grakanagetgasparyan@mail.ru

ՀՏԴ : 929:891.981 Թումանյան + 891.981

Doi:10.54503/0135-0536-2022.3-113

ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ*

ԹԱԴԵՎՈՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Թումանյան, աշխարհ, պատկեր, վերլուծական փիլիսոփայություն, ստրուկտուրալիզմ, մոտիվների տեսք, ասոցիացիաներ, առասպելաբանական բնույթ, կոլեկտիվ ապքեթիպ, խոսքարտահայտման տեսություն:

Նախաբան

«Ես հետզհետե փիլիսոփայությունն եմ սիրում և բանաստեղծության մեջ էլ այն, որ ոչ արտասուք ունի, ոչ հուզմունք, այլ մի վեհափառ խաղաղություն, մի վոլիմպիական, վսեմ, արհամարհոտ թռիչք դեպի լավագույն աշխարհները և ավելի ջինջ ու մաքուր մթնոլորտները (ընդգծումը մերն է – Թ. Խ)»[1]*,– նշում է Թումանյանը.*

Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՜նչ կա որ.
Ես եղե՛լ եմ, կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՜նչ կա որ.
Հազար էսպես ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, Տիեզերքի մեծ Հոգու հետ, ի՜նչ կա որ[2]:

Գրական տեքստի փիլիսոփայությունը համադրում է XX դարում առաջացած մի շարք գիտակարգերի և փիլիսոփայության նորագույն մեթոդաբանության հայեցակարգերը՝ նշանագիտություն, լեզվաբանական և փիլիսոփայական պրագմատիկա, տրամաբանական իմաստաբանություն, տեսական պոետիկա, վերլուծական բանասիրություն, հոգեվերլուծության տարատեսակ ուղղություններ, առասպելաբանություն և բնութագրաբանություն: Եթե փորձենք ձևակերպել այս բոլոր գիտակարգերի գրական տեքստի նկատմամբ ունեցած վերաբերմունքը և վերլուծական կարողությունները, ապա դրանց էությունը կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

ա) տեքստի բոլոր բաղադրիչները փոխառնչության մեջ են: Սա դասական ստրուկտուրալիզմի առանցքային դրույթն է,

---

* *Ներկայացվել է 10. X. 2022 թ., գրախոսվել է 12. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1997, 289:*

[2] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1990, 51: Թումանյան. «Բանաստեղծի քառյակներն ունեն փիլիսոփայական խորք, դրանք հանճարեղ են ինչպես Դավիթ Մարգարեի սաղմոսները, ու մարդը դրանք կարդալով՝ հոգեպես հարստանում է,– գրում է քննադատը: – Թումանյանի քառյակները նրա քրիստոնեական մարդասիրության դրսևորումներն են. դրանք յուրօրինակ աստվածային պատվիրաններ են, հավերժական ճշմարտություններ: Այդ քառյակներում չկան ազգեր, պետական սահմաններ, կա մարդն անցավոր, և կա հավերժական Ոգին: Բանաստեղծի քառյակներն ուղղված են ապագայի բոլոր մարդկանց» (Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2019, 27):*

բ) տեքստային բաղադրիչների կապն ունի անդրմակարդակային բնույթ և արտահայտվում է կրկնվող ու տարբերակվող միավորների՝ մոտիվների տեսքով: Սա, այսպես կոչված, ըստ մոտիվների վերլուծության եղանակն է: Եվ եթե ուսումնասիրենք մշակույթը որպես տեքստ, ապա նրա տարբեր աստիճաններում կարող են երևան գալ միատեսակ մոտիվներ,

գ) տեքստում պատահական ոչինչ չկա: Ամենաազատ թվացող ասոցիացիաներն ամենահուսալին են: Սա դասական հոգեվերլուծությունից եկող տեսակետ է, որտեղ ցույց է տրված, որ բառերի միջև եղած կապը կարող է տեղի ունենալ միանգամյա պատահական ասոցիացիաներով, մինչդեռ հենց դրանցով է կառուցված բառի իմաստային պատկերը,

դ) տեքստի յուրաքանչյուր մակերևութային և եզակի արտահայտության ետևում թաքնված են խորքային և համընդհանուր օրինաչափություններ, որոնք ունեն առասպելաբանական բնույթ: Սա Կ. Գ. Յունգի վերլուծական հոգեբանության հիմնարար դրույթն է: Խորքային առասպելույթը կարող է հանդես գալ նաև առօրյա կյանքում, եթե այն ընկալվում է որպես տեքստ: Օրինակ, Յունգը ցույց է տալիս, որ անգամ զուգընկերոջ ընտրությունը կախված է մարդու անհատական գիտակցության մեջ ներդրված կոլեկտիվ արքետիպից[3],

ե) տեքստը չի նկարագրում իրականությունը, այլ նրա հետ մտնում է բարդ հարաբերության մեջ: Սա համարվում է վերլուծական փիլիսոփայության և խոսքագործահայտման տեսության դրույթը,

զ) այն, ինչ ճշմարիտ է մի տեքստում (հնարավոր աշխարհում), կարող է սխալ լինել մեկ ուրիշում. սա հնարավոր աշխարհների իմաստաբանության տեսությունն է:

Եվ վերջապես՝

է) տեքստը քարացած բան չէ, այլ երկխոսություն հեղինակի, ընթերցողի և մշակութային ենթատեքստի միջև: Սա Բախտինից եկող պոետիկայի տեսությունն է[4]:

Տեքստի փիլիսոփայության էությունը

Այս յոթ սկզբունքների կիրառումը, որոնք ավանդական դարձան XX դարում գեղարվեստական տեքստի կամ ցանկացած այլ օբյեկտի նկատմամբ, որը կարելի է դիտարկել որպես տեքստ, կազմում է տեքստի փիլիսոփայության էությունը[5]:

Այս հայեցակարգերն ունեցել են ինչպես իրենց պիոներները, այնպես էլ՝ հետևորդները, նույն համաբանությամբ՝ ինչպես իրենց դասականները, այնպես էլ՝ դիլետանտները: Բնականաբար, հայ գրականագիտությունն իր

---

[3] Юнг. 1991, 121.

[4] Бахтин. 1994.

[5] *Ագնես Հելլերը գրում է. «Թեկուզ արևմտյան մշակութային ավանդույթների նկատմամբ բոլոր դարաշրջաններում ցուցաբերված հետաքրքրությունը արևմտյան փիլիսոփայական արժեքների արմատավորումը հայոց հոգևոր աշխարհում սկսած Դավիթ Անհաղթից» (տե՛ս* Хеллер. 2004, 28)*: Հելլերը հունգարացի փիլիսոփա է:*

վերլուծություններով այս կամ այն չափով առնչվել է թվարկված մեթոդաբանություններին, ասենք, ինչ-որ չափով ստրուկտուրալիզմին (Արամ Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Լևոն Գ. Հակոբյան, Սուրեն Զոլյան), Բախտինի երկխոսության և պոլիֆոնիայի տեսությանը (գրեթե առանց հաջողության կամ ավելի ճիշտ՝ քննարկվող նյութի հարմարեցմամբ, քան ստուգապես հիմնավորված ապացույցներով), բազմաթիվ հոդվածներում և ուսումնասիրություններում արծարծվել են պոետիկային առնչվող խնդիրներ, սակայն հաճախ որպես տուրք մոդային, քան գիտական նախապատվությանը: Մի խոսքով՝ դրանք համակարգված բնույթ չեն ունեցել և, որ ամենակարևորն է՝ գրականագիտական ընդհանուր մթնոլորտը չեն փոխել: Այն հիմնականում մնացել է կուլտուր-պատմական ավանդական (իմա՝ մարքսիզմի փիլիսոփայությունը. դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմնադրույթները և մեթոդը), իսկ ուժեղներից սկսած՝ նաև պատմափիլիսոփայական (Էդուարդ Ջրբաշյան, Սերգեյ Սարինյան, Վլադիմիր Կիրակոսյան, Ջավեն Ավետիսյան, Արամ Ալեքսանյան, Գրիգոր Հակոբյան) տիրույթներում: Վերջին ժամանակներս երկչոտ փորձեր են կատարվում նաև տեքստի հոգեվերլուծական ուղղությամբ (Վարդան Ջալոյան):

Եղել են նաև առասպելաբանական վերլուծության օրինակներ, սակայն բացարձակապես դուրս են մնացել նշանագիտական, տրամաբանական իմաստաբանության և լեզվաբանական պրագմատիկայի ոլորտները: Սա հատկապես տարօրինակ է, որովհետև հենց այդ ոլորտներում առանձին հայ հեղինակներ (Էդուարդ Աթայան, Էդմոն Ավետյան, Սուրեն Զոլյան, Սերգեյ Վարդազարյան, Լևոն Գ. Հակոբյան) հասել են բացառիկ մակարդակի: Այս հանգամանքը կարելի է բացատրել ևս մի տարօրինակ իրողությամբ. հայ գրականագետների ճնշող մեծամասնությունը գրեթե ոչ մի հետաքրքրություն չի ցուցաբերում գրականության հետ կապված լեզվաբանական խնդիրների նկատմամբ: Անշուշտ, նույնը կարելի է ասել հայ լեզվաբանների մասին, բայց դրանից վիճակի արտառոցությունը չի փոխվում: Այնպես որ, Մանուկ Աբեղյանը մնում է մեր վերջին բանասերը, ով համազոր վերաբերմունք ուներ և՛ լեզվաբանության, և՛ գրականագիտական խնդիրների նկատմամբ, այսինքն՝ լիարժեք բանասեր էր:

Վերոհիշյալ յոթ կետերում ամփոփված դրույթներից յուրաքանչյուրը տեքստի փիլիսոփայական վերլուծության հնարավորություն ընձեռում է, իսկ մեզ համար չափազանց սկզբունքային վերապահումով՝ եթե առաջնային է համարվում սկզբնաղբյուրը՝ գրական տեքստը: Անշուշտ, այստեղ նույնպես վտանգ կա, որ հայտնվելով միջճյուղային գիտակարգերում՝ գրականագիտությունը կկորցնի իր ինքնավարությունը, սակայն սկսած անցյալ դարի 60–70-ական թվականներից՝ միջճյուղային ուսումնասիրությունները հումանիտար գիտություններում դարձան անհրաժեշտ պայման: Խնդիրն այն է, որ ինքը՝ փիլիսոփայությունը նույնպես դարձավ միջճյուղային գիտակարգ՝ իր մեջ ընդգրկելով կառուցվածքային լեզվաբանության, նշանագիտության, քաղաքատնտեսության և հոգեվերլուծության առանձին տարրեր, էլ չենք խոսում մյուս հումանիտար գիտությունների մասին: Այդ սերտաճումից առաջացան նոր գիտակարգեր, ինչպես, օրինակ, մշակութաբանությունը: Խնդիրը միայն այն է, որ օգտվելով հասարակագիտական մյուս ոլորտներում հումանի-

տար գիտությունների ստացած արդյունքները, գրականագիտությունը կարողանա պահպանել ինքնավարությունը և չդառնա հիշատակված գիտություններից որևէ մեկի կցորդը, անկախ այն բանից՝ դա կլինի փիլիսոփայությունը, սոցիոլոգիան, թե մեկ ուրիշը: Իսկ դա հնարավոր է միայն մեկ դեպքում՝ գրական տեքստին առաջնայնություն տալու պարագայում[6]: Եվ միայն այդ դեպքում գրականագիտությունն արժանի կլինի իր ուսումնասիրության առարկային՝ գրականությանը[7]:

Թումանյանի ստեղծագործության փիլիսոփայական ենթատեքստի քննության մեր ելակետը հենց այս է, և մենք ըստ կարելվույն կօգտագործենք վերոհիշյալ յոթ կետում ամփոփված դրույթների ընձեռած հնարավորություններից յուրաքանչյուրը, որ լավագույնը կհամարենք տեքստի այս կամ այն կողմը, կամ ենթաշերտը մեկնաբանելիս:

Աչխարհի պատկեր

Որքան էլ տարօրինակ թվա, առաջին անգամ այս հասկացությունը (աշխարհի պատկեր) շրջանառության մեջ է դրել ավստրիացի փիլիսոփա, անալիտիկ փիլիսոփայության հիմնադիր, XX դարի նշանավոր մտածողներից մեկը՝ Լյուդվիգ Վիտգենշտայնը, իր հռչակավոր «Տրամաբանա-փիլիսոփայական տրակտատում»[8], սակայն մարդաբանություն, նշանագիտություն (սեմիոտիկա) և մյուս գիտություններ մտել է գերմանացի լեզվաբան Լեո Վայսգերբերի աշխատությունների շնորհիվ[9]: Ընդհանուր առմամբ, այն

---

[6] *Ֆրանսիացի փիլիսոփա, պոստստրուկտուրալիստ և նշանագետ Ռոլան Բարտի համար տեքստը հռետորական կատեգորիա է: Ինչպես նկատում է Արիստոտելը, «այստեղ մենք մտահոգված ենք ոչ այնքան նրանով, թե ինչ ասենք, որքան նրանից, թե ինչպես ասենք և դա կախված է նրանից, թե ում ենք ասում» (տե՛ս* Барт. 1989, 419*):*

[7] *Հերմենևտիկայի տեսության մեջ անկյունաքարային արժեք ունի մասի ու ամբողջի սերտ փոխկապվածության դրույթը, որի հաշվառումը էական դեր է խաղում ստեղծագործության ընկալման ու հասկացման հասնելու գործում, քանզի միայն մասերի և ամբողջի անընդհատ համադրմամբ և փոխլրացմամբ է ձևավորվում ստեղծագործությունը՝ «...քանզի յուրաքանչյուր ստեղծագործություն, ըստ էության, դրանում առկա բազմաթիվ տարրերի միջև հաստատված հարաբերությունների մի հսկայական ցանց է, իսկ գեղարվեստական խոսքի էությունն էլ այն է, որ նրա մեջ մտնող յուրաքանչյուր տարր դառնում է անհրաժեշտ ու անփոխարինելի և սերտորեն կապված ողջ ստեղծագործությանը,– նշում է լեզվաբանը: – Ամբողջի և մասի հարաբերակցության այս դրույթը մասնավորապես կարևորվում է տեքստի մեկնաբանության հերմենևտիկ շրջանի շլայերմախերյան տեսության համատեքստում, համաձայն որի՝ հասկացման գործընթացում մեկնաբանը ամբողջի ներըմբռնողականորեն ընկալված նախնական իմաստից անցում է կատարում դեպի առանձին մասերի ընկալում և հասկացում և ապա, ելնելով այդ մասերի վերլուծական ըմբռնման արդյունքից, նորովի ձևավորում ստեղծագործության ընդհանուր իմաստը: Ընդ որում՝ մեկնաբանի ուշադրությունը տեղափոխվում է մասից դեպի ընդհանուրը համեմատությունների, ինտուիցիայի միջոցով և հակառակը՝ ամբողջից դեպի մասը՝ այն կրկին մեկնաբանելու համար (Գ ա ս պ ա ր յ ա ն. 2015, 32):*

[8] В и т г е н ш т е й н. 2005.

[9] *Տե՛ս* В а й с г е р б е р г. 1993, 11–12.

կարելի է ներկայացնել որպես իրականության մասին ներըմբռնողական պատկերացումների մի համակարգ, որով, ըստ իրականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի, հնարավոր է առանձնացնել, նկարագրել կամ վերակառուցել ցանկացած սոցիալ-հոգեբանական միավոր՝ լինի ազգ, սոցիալական որևէ խումբ կամ անձ: Ընդունված է կարծել, թե յուրաքանչյուր պատմական ժամանակ ունի իր աշխարհի պատկերն ու պատկերացումը[10]*: Այս առումով բավական հետաքրքիր զուգահեռներ են անցկացվել XIX և XX դարերի միջև՝ փորձ անելով գտնել այն ամենաընդհանուր գերիշխող գաղափարները, որոնք հատուկ են այս երկու դարերին:*

Երկու դարերի սահմանագծին

Թումանյանը ստեղծագործել է այս երկու դարերի սահմանագծին[11], ուստի ուսումնասիրության առանձին նյութ կարող էր լինել, թե նա ինչ էր ժառանգել XIX և XX դարերից: Այդ իմաստով հետաքրքիր համապատկեր է ներկայացնում ակադեմիկոս Ս. Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն[12]: Հեղինակը, ճիշտ է,

---

[10] Հայկական հոգեբանությանը նույնքան խորթ է նաև արևմտյան անհատապաշտությունը՝ անհատի մակարդակին իջեցված եսականությունը: Այստեղ Ես-ն առավելապես չափվում է ընտանիք, բարեկամ, ընկեր, հարևան շրջանակներով: Գուցե նմանօրինակ մտածելակերպի հետ է առնչվում նաև հայոց ավանդական գործարարական ոգին, մասնավորապես՝ Ի. Կանտի կողմից բարձր գնահատված հայանի առևտրական չնորհքը՝ իբրև ժամանակին ճանաչված մշակութային մեծ արժեք: Կանտը, համեմատական վերլուծության ենթարկելով եվրոպական մի շարք ժողովուրդների (անգլիացիների, ֆրանսիացիների, գերմանացիների, իսպանացիների և այլոց) ազգային բնութագծերը, մեծ համարումով է արտահայտվում հայերի մասին՝ «բանականությամբ օժտված և աշխատասեր ժողովրդի»: Փիլիսոփան ղրականորեն է տարբերում հայերին «ժամանակակից հույներից»: Իսկ «եվրոպական թուրքերի ազգությունների» մասին պարզապես նկատում է, որ նրանք «երբեք չեն եղել և չեն կարող լինել այն, ինչ անհրաժեշտ է որոշակի ժողովրդական բնավորություն ձեռք բերելու համար» (տե՛ս K a n t. 1974, 369–370*):*

[11] «Թումանյանը անցման եպոխայի գրողն է: Հին չենը, ծաղկող քաղաքը, քայքայվող գյուղը, խոշորագույն պատերազմները, ազգային շարժումներ, քաղաքական ահռելի բախումներ, աշխատավոր գյուղացին, ծնվող կապիտալիստը… ահա յերևույթների չարանը, վեր դիալեկտիքորեն հաջորդում են իրար, խառնվում են իրար, հակասում են իրար, սակայն վերջիվերջո տալիս են կյանքի այնպիսի պատկերներ, վորոնք բնորոշում են այդ շրջանի ընդհանուր կերպարանք (ընդգծումը մերն է— Թ. Ի)»,— գրում է Ալեքսանդր Մյասիկյանը (Մ ա ր տ ո ւ ն ի. 1923, 163):

[12] Ս ա ր ի ն յ ա ն. 2004: Գրականագիտական գործունեության ընթացքում Ս. Սարինյանը բազմաթիվ գաղափարներ է հղացել, որոնցից չատերը լավագույնս կիրառել է իր աշխատություններում: Դրանց մի մասը մնացել է տողատակերում, առանձին հոդվածների մեջ և զարգացում չի ունեցել: Վերջին 25–30 տարիներին Սարինյանի մտահղացումների շարքում առանձնանում է մեկը, որի մասին արժե ավելի մանրամասն խոսել: Խոսքը գրականության փիլիսոփայության մասին է, որը մի ամբողջ բաժին է զբաղեցնում «Հայոց գրականության երկու դարը» աշխատության չորրորդ գրքում (հատորում ընդգրկված նյութերի կեսից ավելին): «Հարցի պատմաբանական հղումն ուղղակի է՝ ինչո՞ւ կա Արվեստի փիլիսոփայություն, Կրոնի փիլիսոփայություն, Իրավունքի փիլիսոփայություն, Պատմության փիլիսո-

հատուկ համեմատություն չի անցկացրել երկու դարերի հայ գրականության միջև, սակայն առանձին վերլուծություններ ակամա ուրվագծում են այդ պատկերը և ինքնին ընդգծում դրանց հատկանիշները:

Թումանյանն ինքն էլ ուներ այդ դարերի՝ իր արտահայտությամբ «դարա-միջի ժամի», ընդ որում չափազանց ողբերգական զգացողությունը, երբ գրում էր.

փայլություն, բայց չկա Գրականության փիլիսոփայություն»,– հենց այս տողերով է բացվում գիրքը (Սարինյան. 2004, 4): Հարցի դրվածքը առաջին հայացքից բավական տրամաբանական է թվում: Բայց մի այլ՝ «Արդի գրականագիտության գլխավոր ուղղությունները» հոդվածում ակադեմիկոսը հարցը փակված է համարում՝ գրեթե անառարկելի պնդումով. «Գրականությունը փիլիսոփայական գիտություն է և այստեղ է նրա գիտականացման ուղին և այս մակարդակում է տեսանելի գրականության տեղը հումանիտար գիտությունների համակարգում» (Սարինյան. 2004, 196): Հարցաշարը՝ թե ինչու կա պատմության, կրոնի, արվեստի, իրավունքի և չկա գրականության փիլիսոփայություն, անշուշտ, կարելի է չարունակել, սակայն այստեղ խնդիրն այն է, թե ինչու է գրականագետը նախապատվություն տալիս փիլիսոփայությանը. ինչո՞ւ է փիլիսոփայությունը այդքան արգասավոր համարվում: Իհարկե, նախընտրության հարց է, մանավանդ գրականության պատմաբանն ինքն էլ գիտակցում է, որ «բացառվում է որևէ մեթոդի չափանիշներով գնահատել մեկ այլ մեթոդի գիտական փորձը, և նույնարժեք են թե՛ սոցիոլոգիական, թե՛ ֆորմալիստական կամ կառուցվածքային և թե՛ հոգեբանական կամ հոգեվերլուծական եղանակների արգասավորությունը: Էականը տվյալ մեթոդի գիտականացումն է, տեսական ու պատմական հիմունքների համադրումը» (Սարինյան. 2004, 196): Իսկապես՝ «էականը տվյալ մեթոդի գիտականացումն է», բայց այդ պարագայում որքանո՞վ է փիլիսոփայությունն օգնում մեթոդի, այս դեպքում՝ գրականագիտական մեթոդի գիտականացմանը: Ահա հարցը, որին չորրորդ հատորում ընդգրկված և այս հատորից դուրս բազմաթիվ հոդվածներով փորձում է պատասխանել Սարինյանը: Նախապես ասենք, որ հասկանալի է փիլիսոփայությանը գերապատվություն տալու Սարինյանի ձգտումը. հանել հայ գրականագիտությունը սեփական դափնիներով փառաորված հարյուրամյա թմբիրից, գոնե փոքր-ինչ ընդարձակել հորիզոնը, մեծացնել տեսադաշտը, գրականության հիմնախնդիրների լուծումը ընդլայնել և գնահատության ու վերաբերմունքի ոլորտից տեղափոխել վերլուծության ոլորտ: Այս իմաստով փիլիսոփայությունն իրոք անփոխարինելի է: Մյուս կողմից՝ փիլիսոփայություն անունն ինքնին գայթակղիչ է մի գրականագիտության համար, որը իրականում եթե անգամ չի կորցրել իր մեթոդաբանական կողմնորոշումները, ապա շատ առումներով արդեն ոչինչ չունի իր զինանոցում: Էլ չենք խոսում այն մասին, որ ինքնագիտակցման մակարդակում և հասարակայնորեն արժեզրկվել է այն աստիճան, որ գիտականության ոչ մի պաշար չի թողել: Ավելին, մեթոդը, որ տիպաբանական է համարում Սարինյանը ողջ հայ գրականագիտության պատմության ընթացքում, գրելով, թե՝ «բոլոր մեթոդներից ամենաարգասավորն ու համապարփակը կուլտուր-պատմական մեթոդն է, որը հնարավորություն է տալիս գրական երևի համակողմանի վերլուծությանը» (Սարինյան. 2004, 197), գոնե կոնկրետ արդյունքներով, եթե անգամ ինչ-որ ժամանակ արգասավոր է եղել (Մ. Աբեղյան, Ա. Տերտերյան), բնավ էլ ո՛չ համապարփակ, ո՛չ էլ համակողմանի վերլուծության հնարավորություն չի տվել: Նախ, որովհետև լուսնի տակ այդպիսի համապարփակ մեթոդ չկա գիտության և ոչ մի բնագավառում:

Ինչպես երկու ահեղ սարեր՝
Պատում են մեզ երկու դարեր –
Մեկի ետև՝ հեքիաթի հին-հին,
Մյուսի ետև՝ լուռ ու մըթին,
Եվ մենք նրանց նեղ արանքում
Լաց ենք լինում, սիրում, խընդում...
Ավա՛ղ, կանցնեն սեր, խինդ ու լաց,
Եվ խղճալի աճյուն կտրած,
Մեզ կըփակեն երկու դարեր,
Ինչպես երկու ահեղ սարեր[13]:

Հետաքրքիր կլինի հարցը դիտարկել երկու դարերի փիլիսոփայական ընկալման կտրվածքով, որով և գուցե հնարավոր լինի հստակեցնել գրականության նման բարդ համաղրականություն ունեցող երևույթի բացատրությունը:

Եթե ընդհանուր գծերով փորձենք տալ երկու դարերի (XIX, XX) աշխարհի պատկերի փիլիսոփայական նկարագիրը, ապա հարկ կլինի առանձնացնել փիլիսոփայության ամենաավանդական և իր նշանակությամբ ամենահիմնարար երկու հակադիր սկզբունքների՝ կեցության ու գիտակցության հարաբերության խնդիրը:

XIX դարի Եվրոպայի հոգևոր կյանքը, հատկապես դարի երկրորդ կեսին, սկսում էր ուրվագծել զարգացման երկու հիմնական միտումներ. մի կողմից՝ լարվածաբար զարգանում էին մատերիալիստական-տեխնիկական գիտությունները, որոնք զարկ տվեցին ինդուստրիալ-տեխնոկրատ քաղաքակրթության ձևավորմանը իր ողջ պոզիտիվիստական-պրագմատիկ մտայնությամբ, մյուս կողմից՝ արվեստներն ու փիլիսոփայությունը, որոնք հատկապես Եվրոպայում դրսևորում էին հստակ իդեալիստական ուղղվածություն՝ գտնվելով իռացիոնալիստական միտումների և իրականությունից կտրվելու սպառնալիքի ներքո:

XIX դարի փիլիսոփայական նկարագրում այդ հակադրությունը իրոք չափազանց կարևոր էր և ընդհանուր առմամբ գերիշխող հատկանիշ էր դրապաշտությունը (պոզիտիվիզմ), կամ այլ կերպ ասած՝ աշխարհի մատերիալիստական պատկերացումը[14]: Այսինքն՝ առաջնային էր համարվում կեցությունը և ոչ թե գիտակցությունը: Իհարկե, սա չի կարելի այդքան կտրուկ ընդունել որպես բացարձակ ճշմարտություն, քանի որ նույն դարից հառնում են իդեալիստական և ռոմանտիկական վիթխարի շարժումներ, որոնք պակաս նշանակություն չունեն դարի աշխարհի պատկերման ընդհանուր հարացույցում: Սակայն որքան էլ այդ հանգամանքը չանտեսենք, միևնույն է՝ դարի գերիշխող հատկանիշը դրապաշտական է: Եվ իրավացի է գրականագետ Ա-

[13] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1988, 190:*

[14] *«Ապաշավանք» հոդվածում Թումանյանը գրում է. «Էլ չեն խաբիլ մեզ նրանց մեքենաներն ու ճարտար արվեստները: Ճիշտ է ասել ժողովուրդը, թե դրանք բոլորը «սատանի հնարքներ» են, չոր ուղեղի ծնունդներ, և նրա լուսավորության մեջ ոչ աստվածային չունչն է տիրում, ոչ մարդկային խղճմտանքն է թագավորում» (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, 148):*

րամ Ալեքսանյանը, երբ իր գրական վերլուծումներով առաջնորդվում է հենց դրապաշտական գեղագիտության առաջադրած ըմբռնումներով[15]:

Այդ կտրվածքով ի՞նչ է իրենից ներկայացնում XX դարի աշխարհի փիլիսոփայական պատկերը:

Առաջին հերթին XIX դարին հատուկ կեցություն-գիտակցություն բինար սկզբունքը (կրկնակի՝ երկու մասից, բաղադրիչներից կազմված) վերացվում է՝ այն դիտարկվելով որպես կեղծ հիմնախնդիր, իսկ արդեն տրամաբանական դրապաշտության ու վերլուծական փիլիսոփայության մեջ առաջադրվում է նոր հակադրություն՝ լեզվի և իրականության երկանդամ հակադրությունը, որ այնուհետև զարգացում ունենալով, հանգում է ավելի հիմնարար՝ տեքստ-իրականություն հակադրության, որտեղ առաջնայնությունը տրվում է տեքստին (սիմվոլիզմը և ընդհանուր առմամբ մոդեռնիզմի բոլոր ուղղությունները): Սակայն XX դարասկզբում կատարված խոշորագույն հեղաշրջումները բնագիտության մեջ (հարաբերականության տեսություն), հումանիտար գիտություններում (հոգեվերլուծություն ու լեզվաբանություն) և արվեստում (կինո), առաջին պլան մղեցին գիտակցության, պատրանքի և երևակայության առաջնայնության խնդիրները, որոնք, սակայն, դարավերջին հանգեցրին եզրակացության, թե աշխարհի պատկերն անսպառ է և չի տեղավորվում տեքստ-իրականություն մոդելում: Ուստի և առաջ քաշվեց փիլիսոփայորեն չափազանց կարևոր նշանակություն ունեցող լրացման սկզբունքը[16]:

Վերադառնանք Թումանյանի երկու դարերի բանաստեղծական նկարագրությանը: Բանաստեղծության մեջ ժամանակը ստուգապես արձանագրված է՝ «Դարամիջի ժամին. XIX–XX»: Արձանագրված են դարերի գնահատականները՝ XIX-ը՝ «հեքիաթի հին-հին», իսկ XX-ը՝ «լուռ ու մթին»[17]:

---

[15] Ա լ ե ք ս ա ն յ ա ն. 2010, 58–88:

[16] *Եթե համառոտ ձևակերպելու լինենք Ֆիզիկոս Նիլս Բորի առաջադրած այդ լրացման սկզբունքը, ապա կստացվի հետևյալ պատկերը՝ հստակորեն ձևակերպված տրամաբանական համակարգերը գործում են, ինչպես փոխաբերությունը. նրանք առաջադրում են մոդելներ, որոնք միաժամանակ իրենց պահում են և՛ որպես արտաքին աշխարհ, և՛ ոչ այդպիսին: Այսինքն՝ միայն մեկ տրամաբանական կառույցը բավարար չէ միկրոաշխարհը նկարագրելու համար (տե՛ս* Г е й з е н б е р г. 1990*):*

[17] *«Հայի ոգին» հոդվածում Թումանյանը նշում է. «Ցեղեր էլ կան, որ քաղաքական անկախ կյանքը կորցնելուց հետո էլ կարողացել են պահել իրենց ազգային կերպարանքը երկար դարերի ընթացքում, ամեն տեսակ հալածանքների տակ: Իհարկե, ծանր է եղել միշտ էս մաքառումը և բարոյական ու ֆիզիկական կորուստները անվերջ, բայց այնուամենայնիվ նրանք չեն կորել ու կան: Էդ ժողովուրդներից մինն է անշուշտ մեր դժբախտ ցեղը, որ քաղաքականորեն անկախ չի եղել դրեթե երբեք, որ իր գոյության տարիներից ավելի շատ կարող է կոտորածներ համարել, և սակայն էսօր էլ տակավին կա իր լավ թե վատ՝ ազգային կյանքով ու կերպարանքով: Գիտությունը, լուսավորությունը մարդկային կյանքի պատմության շատ մութ տեղերի հետ միասին լույս կձգի և մեր անցկացած երկար ու դժար ճամփի վրա մինչև նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը (ընդգծումը մերն է – Թ. Խ)» (Թ ու մ ա ն յ ա ն. 1994, 193): Մութ-սեւ գույնը սովորաբար դիտվում է որպես իշխանության, ուժի և կայունության խորհրդանիշ: Միևնույն ժամանակ, սեւ գույնը դիմացինին փոխան-*

Հեքիաթին և մյուս բանահյուսական ակունքներ ունեցող ձևերին դիմելը նույնպես Թումանյանի՝ համընդհանրական, գաղափարային հակման վկայությունն է: Բանաստեղծի՝ անվերջ հղովվող միտքը «աշխարհի կարգ է» արտահայտությունն է: Համենայնդեպս, սա է գրեթե մեծ կտավի պատմվածքներում նկարագրված բոլոր ողբերգությունների հիմնական պատճառը: Միաժամանակ դա է նրա հերոսների ողբերգության պատճառը: Ի՞նչ է նշանակում «աշխարհի կարգ» արտահայտությունը. բացահայտել այն, կնշանակի ընդունել աշխարհը որպես կայուն մի հաստատուն, որը ո՛չ հնարավոր է փոխել, ո՛չ մերժել, ո՛չ հաստատել: Նշանակում է, ըստ Թումանյանի, կա անփոփոխ մի բան, մի հաստատուն մեծություն, որ նախագո է: Ի՞նչ է սա. հունական ճակատագրին համարժեք մի բան, պլատոնյան նախագաղափա՞ր, որ ինչ-ինչ փոխակերպումներով ներառվում է Թումանյանական աշխարհընկալման մեջ:

XIX դարավերջը և XX դարասկիզբը, ըստ երևույթին, տիպաբանորեն նշանակալի փուլ է: Հենց այդ ժամանակաշրջանում էլ զարգացում են ստանում հայ գրականության մեջ[18]: Թումանյանի ստեղծագործություններում մանկութ-

ցում է ինչ-որ հնարավորություն պարունակող գաղտնիք կամ անհանգստանալու տեղիք չտվող անորոշության գագաթում: «Սակայն Թումանյանի դեպքում տեքստի մեջ հեղինակի «ուրվականը» լրիվ չրջանցել հնարավոր չէ: Նրա ստեղծագործության համատեքստում նույն կամ մոտ նշանակություններով բազմիցս կրկնվող առանձին բառեր, արտահայտություններ, խորհրդանշաններ, արքետիպեր, այնուամենայնիվ, այս կամ այն կերպ ուղղորդավորում են ընթերցողական հայացքը, որքան էլ վերջինս իր բնույթով հակված լինի անկախության: ...Այդպիսի ուղղորդավորող դերակատարում ունեն «պայծառ», «լուսեղեն», «անթախիծ» բառերը: Առաջին երկուսը՝ իբրև սրբության, մաքրության, անբծության խորհրդանիշ, անընդհատ կրկնվում են բանաստեղծի՝ տարբեր ժանրի բազմաթիվ ստեղծագործություններում տարատեսակ երանգափոխումներով և «մութի», «խավարի» հետ տարաբնույթ հակադրություններով (ընդգծումը մերն է – Թ. Ի)»,– նշում է Կիրակոսյանը (տե՛ս նաև Կ ի ր ա կ ո ս յ ա ն. 2014, 124–125): «Իմացաբանության մեջ Դեմոկրիտը տարբերակում է զգայական և բանական գիտելիքները: Դրան համապատասխան՝ նա ընդունում է իմացության երկու տեսակ՝ մութ (անօրինածին) և ճշմարիտ (օրինածին): Առաջինը հիմնված է զգայությունների, երկրորդը՝ բանականության վրա: Թեև զգայություններն ընկած են իմացության հիմքում, սակայն դրանք «մութ», այսինքն՝ անհավասարի գիտելիք են բովանդակում, քանի որ իրերի (ատոմների) իսկական բնությունը անհավաստի է զգայություններին և ճանաչվում է միայն բանականությամբ: Ատոմները սլանում են դատարկության մեջ, ընդ որում՝ ավելի խոշորները իրենց չարժման ընթացքում դիպչում են մանրերին ու դրանց վեր են մղում: Այդ չարժումներից գոյանում է ատոմների պտույտը, որի հետևանքով ծագում են բազմաթիվ աշխարհներ, որոնցից մեկը մեր աշխարհն է (ընդգծումը մերն է – Թ. Ի): Միայն այն սերն է արդարացի, որը ձգտում է գեղեցկության՝ ցավ չպատճառելով» (Մ ի ր ո ւ մ յ ա ն. 1999, 51):

[18] «Բավական հարուստ է եղել այս ժամանակահատվածում Թումանյանի ծավալած թե՛ ստեղծագործական, թե՛ հասարակական գործունեությունը՝ առիթ տալով բազմաթիվ արձագանքների,– եզրակացնում է քննադատը: – Լինելով հայ մտավոր ներուժի կենտրոնաձիգ ուժերից՝ բանաստեղծը հաճախ է հայտնվում քննադատության թիրախում: Բազմաբեղետ կարծիքների և բանավեճերի արդյունքում բացահայտվում են ոչ միայն Հովհ. Թումանյանի, այլև ժամանակի քննադատական մտքի

յան թեման մշակվում է ինչպես քնարերգության մեջ, այնպես էլ՝ արձակում: Մանկության պատկերը թումանյանական քնարերգության մեջ հանդես է գալիս հարազատ եղերքի, բնության հետ անտրոհելի կապի մեջ: Այստեղ մանկության թեման, սովորաբար, ինքնակենսագրական է: Այն հեղինակային գիտակցության մեջ ներկայանում է որպես օրհնություն, կյանքի դառնություններին անտեղյակ մանուկների երջանկություն: «Հին օրհնություն» փիլիսոփայական բանաստեղծության մեջ Թումանյանը հրաշալիորեն կարողանում է ներկայացնել մանկան անաղարտության և անգիտության թևակոխումը կյանքի ճանաչողության մեծերի այն աշխարհը, որը, պարզվում է, տառապանքների ու տխրության հովիտ է:

«Պողոս-Պետրոս» բալլադում և «Գիքորը» պատմվածքում այդ երկու աշխարհները բախվում են: Առաջինում փոքրիկ եղբայրները դառնում են անզգամ խորթ մոր զոհերը, ով նրանց ուղարկում է հորթերին արածեցնելու, որոնք կորում են, և դժբախտ, ահը սրտներում երեխաները չեն կարողանում գտնել: Այստեղ Թումանյանն օգտագործել է հեքիաթներում լայն տարածում ունեցող «չար խորթ մոր» սյուժեն, մինչդեռ «Գիքորում» խնդրին իրապաշտական լուծում է տալիս. գյուղացի երեխային կորում են բնական միջավայրից՝ Լոռվա հարազատ սարերից և ուղարկում Թիֆլիս՝ վաճառականի մոտ «մարդ» դառնալու: Մանկան կատարյալ անհարմարվողականությունը քաղաքային միջավայրին, որտեղ պետք է ճարպիկ լինել, ստել, կեղծավորություն անել, ուտել ոչ այն ժամանակ, երբ սիրտդ ուզում է, այլ «սահմանված» պահին, երեխային կործանում են. պարզվում է, բնության և ճշմարտության աշխարհն անհամատեղելի է ստի ու կեղծիքի վրա կառուցված քաղաքային արհեստական աշխարհի հետ: Թումանյանը «բնապաշտ» է: Եվ պատահական չէ, որ, ինչպես նրանք, նա էլ մանուկների համար հրաշալի հեքիաթներ է գրել՝ հավատալով դրանց դաստիարակչական ուժին:

Մենք

Իմաստային ծանրաբեռնվածություն ունի «մենք»[19] (մեզ՝ երկու անգամ) դերանունը: «Մեծ ցավը» (1909) հոդվածում չարունակելով քննարկել այն հարցը, որ հարևան ժողովուրդները չեն ճանաչում հայերին, իսկ հայերն էլ՝ նրանց, Թումանյանը գրում է. «Բայց կա ցավի ավելի մեծը ավելի ամոթալի մի դրություն: Մենք մեզ էլ չենք ճանաչում: Երկիր ունենք-չենք ճանաչում, պատմություն ունենք-չենք ճանաչում, ժողովուրդ ունենք-չենք ճանաչում, լեզու ունենք-չենք իմանում: Մտածում ենք. ինչ մեծ պակասություն է դատարկ աշխարհագրական էն տգիտությունը, որ մեր երկիրը չգիտենք: Չենք

հիմնական միտումներն ու գեղագիտական չափանիշները ...» (Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 2019, 49):

[19] Մեր կարծիքով՝ «մենք»-ը կոլեկտիվ արքետիպներից է: Հոգեբան Կարլ Յունգը ստեղծեց արքետիպերը: Այս տերմինը, մինչ նաև օգտագործել են Պլատոնը, Արիստոտելը, Օգոստինոս Երանելին, Գյոթեն: «Անձնավորությունը (պերսոնա) ընդամենը կոլեկտիվ հոգու դիմակն է,– գրում է Յունգը,– այն դիմակը, որը կեղծակերպում է անհատականությունը՝ պարտադրելով ուրիշներին և ինքն իրեն հավատալ, որ ինքն անհատականություն է այն դեպքում, երբ նա ուղղակի դեր է խաղում, որի միջոցով խոսում է կոլեկտիվ հոգին» (Юнг. 1991, 121):

հասկանում, թե էդ չգիտենալով ինչքան բան չգիտենք: Չէ՛ երկիրն է իր առանձնահատկություններով, որ պայմանավորում է ու բացատրում և՛ պատմություն, և՛ դրականություն, և՛ գեղարվեստ, և՛ տնտեսական վիճակ, և՛ մարդկային հայտնի տիպ ու հոգի: Նա է որոշում ազգերի ճակատագիրը, առանց նրա բնավորությունը հասկանալու, ո՛չ կարող ես անցյալը ըմբռնել, ո՛չ ներկաը հասկանալ, ո՛չ ապագաը տնօրինել: Պատմություն ունենք-տգետ ենք: Եվ դժբախտաբար դեռ մի կարգին պատմության գիրք էլ չունենք, թեև քիչ ժողովուրդ կունենա էնքան նյութ իր պատմության համար, ինչքան մենք ունենք: Նախնական մշուշի մեջ թաղված դարերի մասին չեմ ասում, այլ էն ժամանակների ու անցքերի, որոնց վրա ընկնում է ճշմարիտ պատմության լույսը: Զգիտենք: Զգիտենք մենք ի՛նչ ենք եղել, ի՛նչ ենք արել, ինչո՛ւ և ինչպես, ի՛նչ օրով, ի՛նչ ճանապարհով ենք էստեղ հասել... (ընդգծումը մերն է – Թ. Խ)»[20]:

Թումանյանը գրում է՝ «մենք» «չգիտենք», ինչպես՝

Երկու դարի արանքում,
Երկու քարի արանքում,
Հոգնել եմ նոր ընկերի
Ու հին ցարի արանքում[21]:

Կան մի շարք հարցեր. որո՞նք են ճանաչողության սուբյեկտը և օբյեկտը («մենք»-ը և «մեզ»-ը), կարելի՞ է «մենք» անվանել ինքն իրեն չճանաչող ազգը: «Մենք»-ը վերաբերում է դարերի պատմություն ունեցող ազգի ընդհանրությա՞նը, թե՞ ինքնաճանաչմանը:

«Գիտությունը, լուսավորությունը մարդկային կյանքի պատմության չատ մութ տեղերի հետ միասին լույս կձգի և մեր անցկացրած երկար ու դժար ճամփի վրա մինչև նրա սկիզբը, որ ինչքան թանկ է մեզ համար, էնքան էլ վեր է մեր ուժերից: Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը»[22]*,– գրում է Թումանյանը:*

---

[20] *Թ ու մ ա ն յ ա ն. 1994, 174: Հրանտ Մաթևոսյանը գրում է. «Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք: Տարազգի-տարալեզու գրականության մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով՝ և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է: Առանց Թումանյանի՝ այդ եզերքը մերը չէ, այլև մենք այդ աշխարհի առջև կանգնած ենք աղքատ ազգականի մեր խեղճ ու ցածր թշնամանքով (ընդգծումը մերն է – Թ. Խ)» (Մ ա թ և ո ս յ ա ն. 2001, 724): Ս. Գորոդեցկին գրում է, թե Թումանյանը «տիեզերքի քուրմ և մարդկության խիղճն է» (տե՛ս* З а к а р я н. 2011, 17*):*

[21] *Թ ու մ ա ն յ ա ն. 1990, 12: Արևմուտք–Ռուսաստան հարաբերությունները Թումանյանի համար ունեին տարանջատված կողմեր՝ քաղաքական և մշակութային: Քաղաքական առումով՝ հայությունը պետք է ապավինի Ռուսաստանին: Նրա մշակութային նախապատվությունները տարբեր են: Թումանյանը «Հայ ժողովրդի կապը Գերմանիայի հետ» հոդվածում ընդգծում է. «Ինչպես մի ժամանակ հայերը, թեև ենթարկված էին Պարսկաստանի ազդեցությանը, բայց բարձր կուլտուրայի համար դիմում էին հին Հունաստան, այնպես էլ նոր հայությունը, թեև Ռուսաստանի սահմաններում ու նրա կուլտուրայի ենթակա, բայց բարձր զարգացման համար միշտ դիմել է Գերմանիա» (Թ ու մ ա ն յ ա ն. 1995, 356):*

[22] *Թ ու մ ա ն յ ա ն. 1994, 193:*

Առաջին հերթին մտավորական վերնախավի («մենք») առաքելությունն էր, որը պետք է ճգտեր «ճանաչել» ժողովրդին («մեզ») և ներկայացներ, վերաղարձներ նրան իր իսկ պատկերը՝ ժողովրդի պատմության, գրական տեքստի կամ մեկ այլ տեսքով և ընդլայնելով «մենք»-ի շրջանակը[23]*:*

«Ամեն մի ազգի ինքնաճանաչողության համար ազգագրությունը բռնում է առաջնակարգ կարևոր տեղ»,– «Ազգագրական գործը մեզանում» հոդվածում գրում է Թումանյանը: – Մինչև կյանքի ու ժամանակների խորքը թափանցելով, ինչքան որ կարող է թափանցեք մարդկային միտքն ու գիտության լույսը, նա ապացույցներ ու եզրակացություններ է դուրս բերում մարդաբանությունից, լեզվաբանությունից, հնագիտությունից, աշխարհագր<ական> պայմաններից և այդպիսով ցեղերի ու ժողովուրդների անցած կյանքի պատկերը հանում մեջտեղ իրենց ամեն առանձնահատկություններով, այլև խնամքով հավաքում է իր օրերի ազգագրական նյութերը, որ կարող էին ծածկվել, կորչել հեղհեղուկ ժամանակի ալիքների տակ, ու այդ բոլորն ամբարում է, պահում թանգարանների ու ազգագրական գրվածքների մեջ»: Նա ընդգծում է, թե ազգագրությունը թույլ է տալիս վերականգնել «ցեղերի ու ժողովուրդների անցած կյանքի պատկերը (ընդգծումը մերն է – Թ. Խ)»[24]*:*

Ահեղ սպրեր

Երկու դարերն էլ տրված են միևնույն փոխաբերությամբ՝ ահեղ սպրեր: Ահեղ մակդիրը, ըստ ամենայնի, Թումանյանի վերաբերմունքն է ժամանակի նկատմամբ:

Երկու դարերն էլ իրենց հետևից թողնում են «մահ ու ավեր՝ և խղճալի աճյուն կտրած»: «Ամեն կենդանի գոյություն, որ ոտնատակ է ընկնում, եթե չի մեռնում, այլանդակվում է, դառնանում և վիչանում: Սա է բնության օրենքը (ընդգծումը մերն է – Թ. Խ)»[25]*,– նշում է Թումանյանը: Ինչ վերաբերում է մահվանը «լուսավոր» տեքստերում, պետք է նշել, որ «լուսավոր» տեքստերը բավական հաճախ ավարտվում են դվխավոր հերոսի մահվամբ: Դրանցում առկա է ընկճվածության տարրը*[26]*: Սակայն դրանով հանդերձ, մահը որպես այդպիսին չի նկարագրվում. այն կարծես բացակայում է, որքանով այդ աշխարհազգացողության շրջանակներում կյանքը ներկայացվում է անվերջ և հավերժական: Մահն այստեղ գոյության ընդհատումը չէ, այլ դեպի հավերժություն չարժման չարունակություն: Անցյալն ունի միակ, ան-*

---

[23] *Ինքնաճանաչման անհրաժեշտությունը՝ իմանալու, «Թե ո՞վ է ինքը, որտեղի՞ց է գալիս և ո՞ւր է գնում» նշանակում են ոչ այլ ինչ, քան հայության՝ որպես արդիական ազգի կազմավորումը: Նույնն է ենթադրում ճանաչելու միանգամայն արդիական ձևը, որ առաջարկում է Թումանյանը՝ «երևույթների վրա նայել բնության ու պատմության օրենքների բարձրությունից» (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, 223):*

[24] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1969, 109:*

[25] *«Դառնացած ժողովուրդ» (1910) հոդվածում, Թումանյանը գրում է. «… չատ չարություն կա մեր հոգում, նախանձ է գյուղացին, վաճառականը, հոգևորականը, մամուլը…»: Գրողը հարցնում է. «Ինչո՞ւ է էսպես» և պատասխանում. «Ուրիշ ընդհանուր հանգամանքների հետ զարհուրելի ծնող է եղել մեզ համար մեր պատմությունը: Նա երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ» (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 222–223):*

[26] *Տե՛ս* Б е л я н и н. 2000, 137.

այլընտրանք ճանապարհի կարգավիճակ, ներկան՝ ընթացք կյանքի ճանապարհներին, ապագան տեսնվում է անվերջ:

«Հեքիաթ հին-հին՝ հեքիաթ» բառը Թումանյանի համար մի քանի նշանակություն ունի. ա) որպես ժանր, բ) որպես աշխարհընկալման ձև, գ) փոխաբերություն (սիմվոլիստներին տրված գնահատականը՝ նրանք ստեղծեցին իրենց հեքիաթը): Վերևում ասվեց, որ XIX դարի ընդհանուր պատկերը՝ դրապաշտական է, Թումանյանի պատկերացմամբ՝ այն իռացիոնալ է, սակայն ճանաչելի, որքանով ճանաչելի է որպես հեքիաթ[27]: Նոր դարն անճանաչելի է:

Եթե ոչ Թումանյանը, ապա նրա հերոսների մեծ մասը պահպանողական է: Եթե այդպիսին չէ, այսինքն՝ խախտում է ինչ-որ օրենք, դառնում է ողբերգական կերպար: Այդպես բնական կյանքի՝ հեքիաթի անդորրը խախտում է քաղաքակրթությունը: Ըստ այդմ ստացվում է, որ վարքի ազատությունը քաղաքակրթական է: Բայց այն դժբախտության պատճառ է: Մյուս կողմից՝ բնությունն և քաղաքակրթությունն: Ինչ բնական է, քաղաքակրթական չէ: Հետևաբար, ազատությունը քաղաքակրթական լինելով՝ բնական չէ: Սա Թումանյանի ամենամեծ պարադոքսներից է[28]:

---

[27] *Ամենից առաջ Թումանյանը հեքիաթի մեջ տեսնում էր ժողովրդի կենսափորձի խտացումը, որին դիմելով՝ անհատ-հեղինակը կարող է ոչ միայն տոգորվել ժողովրդական ոգու այդ մեծ հարստությամբ, այլև գտնել իր ստեղծագործական անհատականության դրսևորման լայն ասպարեզ: Այսպես, 1909 թ.՝ «Հայոց դրամբյանիզմի» դեմ մղած պայքարի ժամանակ, նա ասում էր. «Հեքիաթները դրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ չնորհքը հենց էդ պատմելու մեջն է, որ իմանան ի՛նչը փոխեն, ի՛նչը դուրս գցեն, ի՛նչը պահեն, ի՛նչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմեն, որ և դեղեցիկ դուրս գա և ժողովրդականի համն ու հոտը չկորցնի» (Թ ու մ ա ն յ ա ն. 1994, 96): Ավելի քան տաս տարի անց, մի զրույցի ժամանակ, Թումանյանն ընդգծում էր հեքիաթի բացառիկ կարևոր տեղը համաշխարհային մշակույթի համակարգում՝ ասելով. «Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ... հարուստ ու չքեղ աշխարհ է: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում: Նոր դրողներից փորձեր անողներ կան. Օսկար Ուայլդը, Մետերլինկը և ուրիշներ» (Ն. Թ ու մ ա ն յ ա ն. 1987, 225): Նույն մտքին նա վերադառնում է իր ամենավերջին նամակներից մեկում 1922 թ. հուլիսին. «Դա դրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են: Եվ այժմ դրականության մեջ սիմվոլիզմը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի հանդուգն ձգտումն հեքիաթին մոտենալու» (Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 424): «Թումանյանը ամեն անգամ խորանում էր ժողովրդական ստեղծագործությունների լուսաբանության մեջ: Ժողովրդի կյանքը, ձգտումները, փիլիսոփայությունը, բանահյուսությունը, լեզուն՝ այս ամենը նրա ուղեցույց փարոսն էին» (Դ ե մ իր ճ յ ա ն. 1976, 245):*

[28] *Դեմոկրիտը (մ. թ. ա. V դ.) մշակույթը բնութագրում է որպես «երկրորդ բնություն»: Միևնույն ժամանակ պետք է ուշադրություն դարձնել նաև այն պնդման վրա, թե մշակույթը հակադիր է բնությանը: Ամերիկացի հասարակագետ և քաղաքագետ Սամուել Հանթինգտոնը մշակել է մշակութաբանական մի վարկած, ըստ որի, ժամանակակից համաշխարհային քաղաքականությունը մտնում է մի նոր փուլ, երբ կոնֆլիկտների աղբյուր են դառնում ոչ թե գաղափարախոսությունն ու տնտեսությունը, այլ մշակույթը: Նա ենթադրում է, որ հատկապես մշակույթը պետք է որոշի այն սահմանները, որոնք մարդկությունը բաժանում են և դառնում*

Բանաստեղծության կառուցման սկզբունքով «Հեքիաթը և լուռ ու մթին» պատկերը պետք է հակադրություն կազմեն, ինչպիսի հակադրություն են կազմում ապրելը իր՝ բոլոր, Թումանյանի թվարկած հատկանիշներով՝ «լաց լինել, սիրել, խնդալ» և դրանց անցումը՝ կանցնեն, որի համար ափսոսանք կա (ավհ՛ղ): Ինչպես նկատելի է, «լաց լինելը և խնդալը» ինքնին բնական հակադրություններ են: Մինչև տեղ է գլաղեցնում սիրելը՝ որպես գոյության հիմք: Թումանյանի սիրային լուծումները այժմեական մակարդակում մշտապես ողբերգական են: Ուրեմն՝ սերը հավասարապես «և՛ լաց է, և՛ խինդ»: Այսինքն՝ սերը կենտրոնական տեղ է գլաղեցնում.

Իմ կընուննքին, երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սըրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան…[29]

Սերը Թումանյանի մոտ նույնպես դուալիստական է՝ այն կամ մեղք է, երբ ունի գուտ երկրային, մարդկային մեղքի բնույթ («Ների՛ր, ով կույս»), կամ՝ հոգևոր է: Առաջին դեպքում այն միշտ անհատական է և սոցիալական պատճառաբանվածություն ունի, երկրորդ դեպքում՝ կապվում է վերանհատական, քրիստոնեական համընդհանուր սիրո փիլիսոփայության հետ («Ինոնարհվելով իջնում մինչև ոտնատակ // Արհամարհված սրբությունը համբուրում»)[30], որը որոշում է ընդհանուր միասնական մշակույթյան տիպը:

Աչխարհի պատկերը և Թումանյանի հերոսները

Արիստոտելի «Պոետիկայում» հանդիպում ենք մասնագետների ուշադրությունը քիչ գրաված մի մտքի. «Սակայն քանի որ արտացոլողները արտացոլում են գործող անձանց, իսկ գործողները անպայման լինում են կամ լավ կամ վատ (քանի որ բարքերը գրեթե միշտ որոշվում են հենց դրանցով՝ իրարից տարբերվելով առաքինությամբ և փչացածությամբ), կամ մեզանից լավն են կամ վատ, կամ էլ ինչպես մենք ենք…»[31]: Ստացվում է, որ փիլիսոփան գրական երկերը բաժանում է ըստ գործող անձանց հատկանիշների. որոշ երկերում նրանք բարձր են մեզանից. ա) մեզնից վատն են, բ) այնպիսին են, ինչպես մենք, գ) սահմանումը, իհարկե, բարոյախոսական է թվում, քանի որ ժամանակակից մարդու համար անհնար է հաշտվել մտքի հետ, թե ոմանք կարող են մեզնից լավը լինել կամ թեկուզ հավասար լինել: Մինչդեռ իրականում անտեսվում է Արիստոտելի ելման կետը. խոսքը գործող անձանց մասին է, հետևաբար՝ նրանց գործողությունների: Այսինքն՝ կարող են լինել պատկերվող հերոսներ, որոնք կարող են անել բաներ, որոնք մենք չենք կարող անել (աստվածներ, հերոսներ, մեծ զորավարներ, առաջնորդներ և այլն), և այդ իմաստով

կոնֆլիկտների աղբյուր: Նրա բառերով՝ գլոբալ քաղաքականության քիչ թե շատ նշանակալի կոնֆլիկտները տեղի կունենան ոչ թե ազգ-պետությունների միջև, այլ տարբեր քաղաքակրթություններ ներկայացնող ազգերի և խմբերի միջև: «Քաղաքակրթությունների բաժանման գծերը,– նկատում է Հանթինգտոնը,– ապագա ռազմաճակատների գծերն են» (Хантингтон. 2003, 496)*:*

[29] *Թումանյան. 1990, 57:*

[30] *Թումանյան. 1988, 78:*

[31] Аристотель. 1984, 647.

մեզնից լավն ու բարձր են: Մյուսները կարող են անել զանազան հանցագործություններ, անպարկեշտ բաներ և այլն, հետևաբար՝ մեզնից վատն են, երրորդներն այն, ինչ մենք էլ կանենք, ուստի մեզ նման մարդիկ են:

Թումանյանի հերոսների պատկերասրահում կարելի է հանդիպել գործող անձանց այդ բոլոր աստիճանակարգություններին, որոնց սահմանները տարածվում են [թագավորից – չարչի պարագծով (քնարերգության մեջ հանդիպող Աստծո պատկերն առանձին խոսակցության նյութ է, քանի որ նա գործող անձ չէ): Հերոսների սահմանման խնդրում անչափ կարևորվում է նշանաբանության խնդիրը:

«Պոեզիայի պատմության մեջ կարելի է տարբերել երկու կարգի բանաստեղծների. առաջիններն իրենց ստեղծագործությամբ ավարտում են մինչ այդ եղած գրական պրոցեսը, ընդհանրացնում կուտակած փորձը, այն բարձրացնում իր զարգացման բարձրագույն աստիճանին, մինչև վերջ բացահայտում նրա ներքին հնարավորությունները, իսկ երկրորդները սկիզբն են դառնում նոր պրոցեսի, հայտնաբերում պոետական նոր աշխարհ և նոր լեզվամտածողություն: Հովհ. Թումանյանը ավարտեց XIX դարի հայկական բանաստեղծական զարգացման ուղին (որի սկիզբն էր Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը) և կատարյալ ձևերի մեջ իրականացրեց ազգային-ժողովրդական ոգու գեղարվեստական մարմնավորման մեծ պրոցեսը՝ հնարավորություն տալով XX դարի մուտքը մեր գրականության մեջ: Նույն դերը խաղաց Ավ. Իսահակյանի պոեզիան, այս անգամ արդեն մաքուր լիրիկական պլանում, ի տարբերություն Հովհ. Թումանյանի, որի պոեզիայում իշխում էր էպիկական մտածողությունն»[32]*:*

Թումանյանի՝ համընդհանրական, հավերժական գաղափարներին դիմելու կերպն ակնհայտ է անգամ հերոսների (բառիս բուն իմաստով) կերտման մակարդակում: Թումանյանը Րաֆֆու կամ Աբովյանի հերոսների տիպը չունի (Աղասի կամ Սամվել, Դավիթ Բեկ): Եթե նույնիսկ երբևէ փորձել է ստեղծել այդպիսի կերպարներ («Հին կռիվը», «Քաջերի կյանքից», «Դեպի հայրենիք» անավարտ վեպը), կա՛մ կիսատ է թողել և այլևս երբևէ չի անդրադարձել, կա՛մ չուտափույթ ավարտել է պատմությանն ակնարկային բնույթ տալով: Այդ իմաստով ինչ-որ տեղ կարելի է հակառակը պնդել, այսինքն՝ Թումանյանն ապահերոսականացրել է իրական հերոսներին (բառիս գեղարվեստական՝ կերպարային իմաստով). օրինակ՝ առնելով նույն «Քաջերի կյանքից» պատմվածքի՝ Լոռվա քաջերի կողմից նախատինքի արժանացած Աղասու կերպարը: Այն նույն Աղասու, որին այնպես ջերմեռանդությամբ հերոսականացրել է Թումանյանի մեծ նախորդը՝ Խաչատուր Աբովյանը: Մինչդեռ պատկերը փոխվում է, երբ հերոսների կերտման սկզբունքով նա ձգտում է բացարձակի, ինչպիսինն են Մեծ Մհերը, Սասունցի Դավիթը, «Թմբկաբերդի առումը» պոեմի կերպարներից Թաթուլը նույնպես նման կարգի առասպելական հերոս է: Մի խոսքով, Թումանյանի ստեղծագործության մեջ իրական հերոսականությունը

[32] *Է ղ ո յ ա ն. 2009, 311: Տե՛ս նաև «Նա էր (Թումանյանը – Թ. Խ), որ եկավ փրկելու մեր հազար տարվա կան ու չկան՝ արձանագրելով ու հավերժացնելով: Ըստ այմ՝ նա դարապլուխ չսկսեց, այլ դարապլուխ փակեց...»,– նշում է Պ. Սևակը (Ս և ա կ. 1974, 353):*

բացակայում է: Ասել է թե՝ եթե կա հերոս, դարձյալ գաղափարի և ոչ իրի մակարդակում: Այդ իմաստով պետք է բնավ պատահական չհամարել նրա այն գործերի անավարտ լինելը, որոնք ըստ մտահղացման, պետք է այդպիսի իրական հերոսներ ունենային: Կարծում ենք նույնն է պարագան Իսահակյանի «Ուստա Կարոյի» անավարտության դեպքում, չնայած այս դեպքում վերջինս կարող էր հանգիստ տեղավորվել բանաստեղծի ռոմանտիզմի համակարգում:

Թումանյանի համար ինքնին նշանային է հերոսների արտաքինի և հանդերձանքի բացակայությունը: Եթե ոչ արտաքինը, ապա հագուստը մշտապես ժամանակային համաչափում հատկանիշ կրող է: (Նրա անավարտ վեպը՝ «Դեպի հայրենիք», այդ իմաստով հետաքրքիր նյութ է. հեղինակը առաջին անգամ մանրամասնորեն նկարագրում է իր հերոսի արտաքինն ու հագուստները, այսինքն՝ այն որակները, որոնք գոնե տեսության մեջ ռեալիստական հանգամանքներ են: Սակայն միայն կիսատ թողնելու փաստը ցույց է տալիս, որ նրա այդ կարգի՝ իրական հերոսը չի կարող մարմնավորում ստանալ, որովհետև իր իդեալ կրողը չի կարող նաև իրական լինել): Սա նշանակում է, որ Թումանյանի համար կարևորվում է մարդու մարդաբանական որակները և ոչ թե ժամանակային արտաքին դրսևորումները: Նրա այդ կարգի հերոսները հարաբերության մեջ մտնելով մյուսների հետ, իրենց հատկանիշ-որակները սովորաբար պահպանում են: Եվս մի հատկանիշ, որ նա ռեալիստ չէ[33]: Այսինքն՝ հանգամանքները դարձյալ չեն գործում: Ուրեմն՝ նրա հերոսները զուրկ են նաև սոցիալականությունից: Սա նույնպես անբնական է, քանի որ նրա «հերոսները» հենց առանձնանում են սոցիալական պատկանելությամբ: Բնականը հակադրելով սոցիալականին (սա հայտնի է մեզ և ոչ թե նրա հերոսներին)՝ ինքնին առաջ է գալիս վարք կամ պարզապես օրենք հասկացությունը և այն խախտելու (ակամա) իրավիճակը:

---

[33] *Իր հուշերում Թումանյանի մասին Դ. Դեմիրճյանը գրում է. «Նա բռնի իդեալականացնում էր կյանքը… Նա իդեալիստ էր և ձգտումներ ուներ բարձրանալու և բարձրացնելու: Նա պատկերացնում էր իր ժողովրդի համար մի բարձր կուլտուրական վիճակ: Որտեղի՞ց պետք է ձեռք բերվեր այդ վիճակը, ո՞վ պետք է ձեռք բերեր այդ: Դա մենակ Թումանյանը չէր, որ չգիտեր… Դա անշուշտ քաղաքական երազ չէր… Պարզ չէր, թե ի՞նչ քաղաքական վիճակում պիտի ստացվի այդ կուլտուրան… Թումանյանի իդեալիզմը զարգացել և ձևաթիռվել էր ռոմանտիզմի (ընդգծումը մերն է – Թ. Խ): Նա ստեղծել էր մի գունագեղ, «մաքուր», «բարի», «իմաստուն» և հեռավոր մի աշխարհ, ուր «չարը» դադարում էր գոյություն ունենալ, ուր իշխում են «բարին», «գեղեցիկը», «վեհը»: Սրանք հասարակ ցնորքներ չէին հոգեկան առանձնության ժամերին միտքը զբաղեցնելու համար: Այդ պատկերացումներն ու ձգտումները մտնում էին նրա ստեղծագործությունների մեջ: Ավելին: Նա ջանում էր այդ «գեղեցիկը», «իմաստունը» և «բարին» մտցնել իր առօրյա կենցաղի, իր շրջապատող հասարակության մեջ… Թումանյանի այդ ռոմանտիզմը զարգացավ և փոխվեց՝ նրա կյանքի վերջին շրջանում՝ միստիցիզմի, միստիկական հոգեխոսության (ընդգծումը մերն է – Թ. Խ)» (Դ ե մ ի ր ճ յ ա ն. 1987, 265): Տե՛ս նաև. «Դասականի և ռոմանտիկի տարբերությունը շատ պարզ բան է: Այդ տարբերությունը իր արվեստը չիմացողի և նրան տիրապետողի միջև է: Այն ռոմանտիկը, ով տիրապետում է իր արվեստին, դառնում է կլասիկ: Ահա թե ինչու, ռոմանտիզմը իր ավարտը գտավ Պառնասականների մեջ» (В а л е р и. 1976, 155):

Եզրակացություն

Թումանյանը XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակների հայ գրականության և հասարակական կյանքի խոշորագույն դեմքերից մեկն է: Նրա ստեղծագործական ժառանգությունը կարևոր տեղ է գրավում հայ գրականության և ողջ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Բանաստեղծի ստեղծագործությունը դարձավ հայրենիքի անցյալի և ներկայի, նրա հոգևոր ուժերի և գեղարվեստական ավանդույթների լավագույն մարմնավորումը:

«Դարամիջի ժամին. XIX–XX» բանաստեղծության թումանյանական տեքստն ունի որոշակի կենտրոններ: Դրանք խտանում են խորհրդանշական արտահայտությունների, փոխաբերությունների, բառերի, պատկերների չուրջ ու կազմում են թումանյանական տեքստի նշանային և խորհրդանշանային համակարգը: Այդպիսի կենտրոնների դեր կատարում են նաև առանձին և ամբողջական ստեղծագործություններ: Գրական տեքստի փիլիսոփայությունը համադրում է XX դարում առաջացած մի շարք գիտակարգերի և փիլիսոփայության նորագույն մեթոդաբանության հայեցակարգերը:

Թադևոս Խաչատրյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նոր գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ հայ բանաստեղծության ու արձակի ուսումնասիրություն: Հեղինակ է 5 գրքի և ավելի քան 100 հոդվածի:
tade@inbox.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանյան Ա. 2010, Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջեր»-ի իմաստասիրական համատեքսը. – «Վէմ», № 4, էջ 58–88:

Գասպարյան Ս. 2015, Հերմենևտիկան որպես գեղարվեստական ստեղծագործության մեկնաբանության մեթոդաբանություն.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 29–36:

Դեմիրճյան Դ. 1976, Երկերի ժողովածու, հ. XIV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:

Դոլուխանյան Ա. 2019, Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի ազգային ոգին է. –ՊԲՀ, № 1, էջ 4–29:

Էդոյան Հ. 2009, Շարժում դեպի հավասարակշռություն (հոդվածներ, էսսեներ), Երևան, Սարգիս Խաչենց-Ֆրինթինֆո, 500 էջ:

Թումանյան Ն. 1987, Հուշեր և զրույցներ, Երևան, «Լույս», 335 էջ:

Թումանյան. 1988, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 696 էջ:

Թումանյան. 1990, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 637 էջ:

Թումանյան. 1991, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 622 էջ:

Թումանյան. 1994, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 831 էջ:

Թումանյան. 1994, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 670 էջ:

Թումանյան. 1995, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 718 էջ:

Թումանյան. 1997, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 713 էջ:

Թումանյան. 1999, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 778 էջ:

Կիրակոսյան Վլ. 2014, Թումանյանի «Բարձրից» բանաստեղծությունը (տեքստային վերլուծության փորձ). – «Գրականագիտական հանդես», ԺԵ, էջ 124–142:

Մաթևոսյան Հր. 2001, «Հայագիտակ» – 1958–2013, Երևան, 724 էջ:

Մարտունի Ա. 1923, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը. Սոցիոլոգիական ակնարկ, Թիֆլիս, տպ. «Վր. ժ. Տ. Գ. Խ. Պոլիգրաֆի 5-րդ», 664 էջ:

Միրումյան Կ. Ա. 1999, Անտիկ փիլիսոփայության ակնարկ, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Նոյան տապան», 124 էջ:

Մնացականյան Ե. 2019, XX դարասկզբի գրական քննադատության մեթոդաբանական տարբերությունները և Հովհաննես Թումանյանը. – ՊԲՀ, № 1, էջ 30–50:

Սարինյան Ս. 2004, Հայոց գրականության երկու դարը, հ. 4, Երևան, «Տիգրան Մեծ», 624 էջ:

Սևակ Պ. 1974, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, «Հայաստան», 416 էջ:

Аристотель. 1984, Сочинения в четырех томах. Т. 4. М., «Мысль», 830 с.

Барт Р. 1989, Избранные работы: Семиотика: Поэтика. М., «Прогресс», 616 с.

Бахтин. 1994, Проблемы творчества Достоевского. М., «Алконост», 178 с.

Белянин В. П. 2000, Основы психолингвистической диагностики (Модели мира в литературе). М., «Тривола», 248 с.

Вайсгерберг Й. Л. 1993, Родной язык и формирование духа. М., Изд. Едиториал УРСС, 232 с.

Валери П. 1976, Об искусстве. М., «Искусство», 623 с.

Витгенштейн Л. 2005, Философские работы. Ч. I. М., «Гнозис», 440 с.

Гейзенберг В. 1990, Физика и философия. Часть и целое. М., «Наука», 400 с.

Закарян А. 2011, Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ». Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, 103 с.

Хантингтон С. 2003, Столкновение цивилизаций. М., «АСТ», 604 с.

Хеллер А. 2004, Два столпа современной этики. – «Вопросы философии» (Москва), № 3, с. 28–37.

Юнг К. Г. 1991, Архетип и символ. М., Изд. Renaissance, 300 с.

I. Kant. 1974, Anthropologie in pragmatischer Hinsicht. Reclams Universal-Bibliothek Nr. 4, S. 369–370.

ОБРАЗ МИРА ПО ОВАНЕСУ ТУМАНЯНУ

ТАДЕВОС ХАЧАТРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Туманян, образ, мир, аналитическая философия, структурализм, картина мотивов, ассоциации, мифологический характер, коллективный архетип, теория выражения.

Творческое наследие Ованеса Туманяна занимает важнейшее место в армянской литературе и во всей духовной культуре. Творчество поэта стало наилучшим воплощением прошлого и настоящего Армении, ее духовных сил и художественных традиций.

То обстоятельство, что Туманян творил на стыке двух столетий – XIX и XX веков – может стать отправной точкой для изучения философского контекста его творчества. В целом его можно представить как систему представлений о действительности, с помощью которых можно выделить, описать или реконструировать любую социально-психологическую единицу, будь то нация, социальная группа или индивид.

Тадевос Хачатрян – к. филол. н., старший научный сотрудник отдела новой литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: изучение армянской поэзии и прозы. Автор 5 книг и более 100 статей. tade@inbox.ru

IMAGE OF THE WORLD ACCORDING TO HOVHANNES TUMANYAN

TADEVOS KHACHATRYAN

S u m m a r y

Key words: Tumanyan, image, world, analytical philosophy, structuralism, picture of motives, associations, mythological character, collective archetype, theory of expression.

Creative heritage of Hovhannes Tumanyan occupies the most important place in the Armenian literature and in the entire spiritual culture. The poet's creative works has become the best embodiment of the past and present of Armenia, its spiritual power and artistic traditions.

The fact that Tumanyan created at the turn of two centuries – XIX and XX centuries – can be the starting point for studying the philosophical context of his works. In general, it can be represented as a system of insightful perceptions

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

of reality, with the help of which one can single out, describe or reconstruct any social-psychological unit, whether it be a nation, a social group or an individual.

Tadevos Khachatryan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of Modern Literature of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA. Scientific interests: Study of Armenian poetry and prose. Author of 5 books and over 100 articles. tade@inbox.ru

ՀՏԴ : 929: 891.981 Ղունկիանոս Կարնեցի + 891.981

Doi:10.54503/0135-0536-2022.3-133

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԿԱՐՆԵՑՈՒ «ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ*

ԱՐԻԱԴՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ արդարություն, ազահություն, խոհախրատական, աշուղական արվեստ, «ղատիլ» կրկներգ–եզրույթ, աչխարհիկ ոգի, աստվածաչնչային պատվիրան, ծուլություն, տգիտություն:

Նախաբան

XVIII դարում դժվարին ու հակասական իրականության մեջ փոխվում է հայոց գեղարվեստական գրականության ողջ նկարագիրը: Խորանում է բանաստեղծության և կյանքի կապը՝ հասարակական խոհեր արտահայտող նոր թեմաներով, բանաստեղծական արվեստն իր ժողովրդական, աշուղական շերտերով զարգացման առավել լայն ճանապարհ է գտնում:

Գրավոր բանաստեղծության պատկառելի ժառանգության մեջ տաղանդավոր մի մեծ խմբի (Քոսա Երեց, Նաղաշ Հովնաթան, Բաղդասար Դպիր և այլք) ներկայացուցիչների թվում իր վաստակն ունի աշուղ-բանաստեղծ Ղունկիանոս Կարնեցին (1781/1786–1841)[1]: Ցավոք, հայ դասական բանաստեղծության պատկերը հարստացնող բազմաշնորհ հեղինակի ոչ բոլոր գործերն են մեզ հասել[2]:

Աշուղ-բանաստեղծի ինքնատիպ դիմագիծը

Ա. Զոպանյանը, խոսելով աշուղական բանաստեղծության մասին, ի թիվս այլոց, հիշում և բարձր է գնահատում Ղունկիանոս Կարնեցուն. «Ժողովրդական կամ աշուղական բանաստեղծութեան ամենէն գեղեցիկ ու կատարեալ

** Ներկայացվել է 05. IV. 2022 թ., գրախոսվել է 06. VII. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Տե՛ս Խ ա չ ա տ ր յ ա ն. 1969, 199–200:

[2] Ղունկիանոս երգչից մեզ հասած հայերեն տաղերն առաջին անգամ տպագրվել են «Բազմավեպ» ամսագրում (տե՛ս Ղունկիանոս երգիչ Կարնեցի. 1883, հ. ԽԱ, 97–110, 238–246, 332–340, Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1884, հ. ԽԲ, 50–57, 137–142, 212–216, 322–328, 1885, հ. ԽԳ, 38–43, 123–131, 217–226): Հրատարակող Աթանաս Տիրոյանը ներկայացրել է համառոտ կենսագրական տեղեկություններ (Ղունկիանոս երգիչ Կարնեցի. 1883, հ. ԽԱ, 97–110): Նրա ջանքերով աշուղ-բանաստեղծի գրական ժառանգությունը վերահրատարակվել է առանձին գրքով (Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894), որի սկզբի ԵԺԳ էջերում Կարնեցու կենսագրական տվյալներն են, հաջորդ էջում հեղինակի գրքի «Գովասանք գրքոյս» սկսվածքով ներբողն է (այդ մասին տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2017, 100–111): Ղունկիանոսի մասին նաև տե՛ս Ղունկիանոս երգիչ Կարնեցի. 1995, Զ ո ւ ռ ն ա ջ յ ա ն. 2002, 174–176:

էջերը անոնք են, զոր արտադրած են ժողովրդական կեանքէն, լեզուէն ու ճաշակէն ներշնչուող, բայց և նոյն ատեն իրենց քերթողական բնազդին որոշ չափով գրական հմտութիւն ու ճաշակ միացնող աշուղներ, այդպէս եղած են Սայաթ-Նովա, Նաղաշ Հովնաթան, Ղունկիանոս»[3]:

Հայ քնարերգութեան գիտակ Վ. Բրյուսովը, ծանոթանալով Ղունկիանոս կարնեցու երգերին, գրում է. «Աշուղների պոեզիայի հուժկու զարգացումը, Սայաթ-Նովայի բանաստեղծութիւններում իհարկե կեանքի կոչեց բազմաթիվ հետևողներ ու նմանակողներ: Արագ ստեղծվեց «Սայաթ-Նովայի դպրոցը», և, ըստ էութեան, մինչև մեր օրերն էլ բոլոր հայ աշուղները ենթարկված են նրա անհաղթահարելի ազդեցութեանը, պատում են նրա գծած ծիրի շրջանակում: Այդ քնարերգութիւնը ներկայացնում է պատմական, էսթետիկ մեծ հետաքրքրութիւն: ... Նշենք միայն հետագա աշուղներից երկուսին, որոնց մոտ ավելի, քան ուրիշների, ավելի ուժեղ է հնչում մի ուրուն, նոր բան. դրանք Ղունկիանոսն ու Ջիվանին են: Առաջինը՝ Ղունկիանոսը ծնվել է XVIII դարի վերջին, էրզրումում. մի քանի տարի է անցկացրել վանքում, ապա գնացել—հասել է Եգիպտոս, եղել է Իբրահիմ փաշայի քարտուղարը, բայց հեռացել նրանից, անճնատուր եղել ամեն տեսակ զրկանքներով լի թափառական կյանքի, ըստ որում եղել է, ի միջի այլոց Պետերբուրգում և անցած դարի կեսերին մեռել է Վարևան գյուղում: Ղունկիանոսի պոեզիան նշանակալի է միստիկ նրբերանգով, որ սակավադեպ է աշուղների երգերի մեջ»[4]:

Քաջածանոթ լինելով թուրքական և պարսկական ժողովրդական ստեղծագործութիւնը և, առհասարակ, մշակութին՝ Կարնեցին հմտորեն օգտվել է դրանցից: Եղել է գրագետ ու զարգացած անճնավորութիւն (տիրապետել է արաբերենին, պարսկերենին, թուրքերենին և այլ լեզուների): Ղունկիանոսը չարունակել է ստեղծագործել մինչև XIX դ. առաջին կեսը:

Կարնեցու կյանքին անդրադարձել է նաև Հ. Թորոսյանը, որի վկայութեամբ՝ երգիչը եղել է «Լիբանանում՝ վանական, Եգիպտոսում՝ վաճառական, Ղրիմում՝ հաշվապահ, Շիրակում՝ ուսուցիչ: Այս գավառում է, որ գրում է իր բանաստեղծութիւնների մեծ մասը, որոնք չուտով դառնում են ժողովրդական ոչ միայն Շիրակում, այլև Կարինում, Կոստանդնուպոլսում»[5]:

Ղունկիանոս Կարնեցու «Աչխատութեան վրայ» բանաստեղծութիւնը

Ղունկիանոսի այս բանաստեղծութիւնը բերված է «Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ» խորագրի ներքո[6]: Այն «Յորդորականք» չարքի XIII բանաստեղծութիւնն է[7]: Որպես XVIII դ. վերանորոգվող ընդհանուր մշակութային չարժման կամ անցման շրջանի ուրուն մի պոեզիա՝ գրված է քառատողային պարզ նկարագրութեամբ. ոչ մեծ ծավալով, կարճ, դիպուկ (56 տող, 14 քառատող, 4-ական տողերով): Զորս տողից բաղկացած յուրաքանչյուր տան վերջին տողերում, որպես մտքի վերընթաց գիծ, միշտ հնչում է գոյա-

---

[3] *Զ ո պ ա ն յ ա ն. 1912, ԺԷ:*

[4] *Տե՛ս Բ ր յ ու ս ո վ. 1967, 102–103:*

[5] Thorossian. 1951, 225.

[6] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76–77:*

[7] *Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

տևության, ինքնահաստատման, մաքառման պայքարով նիրհած գիտակցությունն արթնացնող, փիլիսոփայական բնույթի «դատիլ» կրկներգ – եզրույթը[8]:

Համանման կարգի ստեղծագործություններն ամբողջովին արտացոլում են XVIII–XIX դդ.՝ ամենածանր ու ողբերգական ժամանակաշրջանի հայ իրականությունն իր բոլոր կողմերով: Իրենց թարմ բնույթով, կենցաղագրական քնարերգության նյութով և արվեստով, պատմական որոշակի ժամանակաշրջանում քաղաքական մեծ նշանակություն են ստանում՝ ազդարարելով հայ գրականության պատմության նոր դարաշրջանի գալուստը:

Կարնեցու քնարերգությունը մի կողմից առնչվում է միջնադարի տաղերգությանը, մյուս կողմից՝ աշուղական արվեստին: Այդ երկուսը միահյուսելով, ներդաշնակելով՝ ստեղծվում է ազգային քնարերգության դասական բանաստեղծության մի նոր չերտ՝ չեչոված մարդասիրական, ժողովրդական հոգեբանությամբ:

Աշուղը երգում է այն, ինչ-որ աստվածներն են նրան ներշնչում

Աշուղները, ունենալով խոսքի և ստեղծագործության ազատության մեծ առավելություն, առաջնահերթ խնդիր են համարել բարոյական որոշակի սկզբունքներ ներշնչելը՝ համաձայն իրենց աշխարհայացքի խոհախրատական, ուսուցողական ուղղություն տալը: Աշուղական արվեստի գեղարվեստական արտահայտչամիջոցներով անված, խոսելու մեջ հմուտ աշուղ-բանաստեղծը առաջնային է համարում Տիրոջ կողմից տրված արդար աշխատանքի, վաստակի հրաման-պատվիրանը: Բանաստեղծական ներքին համակարգի փոփոխությամբ առաջին քառատողը սկսում է աշուղական երկխոսության ըրույցի ձևով. քանի որ այն ուղղված է աշխատանքին, ուստի սկսվում է Աստծո՝ Ադամին տրված պատգամով (Ծննդ.Գ 18), որին համահունչ ձևով առաջին երկտողում ասվում է.

Քըրտամբ երեսաց քոց կերիցես, ըսաց[9],
Մեր Տէրը մեզ տըւեց հրաման դատիլը[10]:

Աշուղական բանաստեղծության մեջ տողերի և տների որոշակի պարբերականությամբ կրկնվում է մի բառ կամ կապակցություն, որպես իմաստակիր միավոր, որով ընդգծվում է տվյալ բանաստեղծության իմաստն ու ասելիքը: Այստեղ այդ բառն է «դատիլը»՝ դատել, աշխատել իմաստով:

---

[8] «Գավառական բառ կամ նշանակություն ունեցող «դատիլ» կրկներգ – եզրույթը նշանակում է կառավարել, տնօրինել գործերը, առաջնորդել, կարծիք ունենալ կամ արտահայտել մեկի կամ մի բանի մասին, գնահատել՝ համեմատելով իրերը, երևույթները եզրակացություն հանել: Այն ունի նաև չարաչար աշխատելու իմաստ» (տե՛ս Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, 495):

[9] Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր կտակարանաց. 1997, 3, հմմտ. Ծննդ, գլ. Գ., 19. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար. զի հող էիր եւ ի հող դարձցիս»:

[10] Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:

Հաջորդ երկու տողերում ասվում է, որ առավել լավ կեցության համար հարկավոր է դատել՝ աշխատել: Այսինքն՝ աշխատանքն է բարեկեցության հիմքը.

Առաւել օգտաւոր կեցուվթիւն կենաց,
Խիստ գովելի է, պատուական՝ դատիլը[11]:

Առաջին երկու երկտողերը եզրափակվում են «դատիլ» բառով և հանդես են գալիս որպես իմաստակիր միավորներ, որոնցով տարբեր տեսանկյուններից կարևորվում է աշխատանքի դաղափարը: Այս երկու երկտողերից հետո «դատիլ» բառով արդեն ավարտվում են քառատողերը, այսինքն՝ աշխատելու դաղափարը դրվատում է առանձին բանաստեղծական տներով:

Առաջին տան մեջ ընդգծվում է՝ աշխատելն իսկ պետք է զուգակցվի խելքով գործելու հետ, որ արհեստավորը պետք է «խելք բանեցընէ»:

Հաջորդ տան մեջ նկատի ունենալով Աստծո մարդուն կավից, հողից պատրաստելը՝ մարդուն անվանում է «չրպլախ անօթ»: Հիշենք, որ մի քանի տասնամյակ անց Միքայել Նալբանդյանն էր մարդուն իր օրինակով անվանում հողանյութ չինվածք[12]:

Բերեց կապեց ղըսմէթին[13] Աստուած խըզմէթին,
Խայրէթին[14] քով ի՞նչ կայ որ ըլլայ չէթին[15]
Թող մօտենայ հեղ մը չըպլախ անօթին
Տեսնէ ի՛նչ խէր[16] ցըցնէ իրան դատիլը[17]:

Խրատաբարոյական հարցադրումներ

Չորրորդ տան մեջ ասվում է, որ աշխատանքն է մարդու համար ստեղծում պատվական փառավոր սեղան: Օտարության մեջ տառապած հայի թափառական կյանքն ու զրկանքները ճաշակած, կենսասեր բանաստեղծն աչքի է ընկնում առօրյա կյանքի մանրուքները, կենցաղային առանձին մանրամասները նկատելու զարմանալի ունակությամբ: Վաստակված դրամով «առատ պարգևներով ապրուստը ճարել: Իրական կդառնա հարուստ «Պատուական, փառաւոր սեղան՝ դատիլը»:

---

[11] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

[12] *Տե՛ս Նալբանդյան. 1953, 9:*

[13] *«Ղամաթ (արաբ.) – դավառական բառ կամ նշանակություն (արաբ. kϴsmet, տաճկ.-ից) գ. Բախտ. Ղամաթ չունիմ» (Մալխասեանց. 1944, 189): «Ղամաթ, ղամեթ 1. Բախտ: 2. ճակատագիր, նախասահմանված բաժին: 3. Բախտով վիճակված, բաժին ընկած» (տե՛ս նաև Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, 358):*

[14] *«Խայրեթին – (պարսկ.), խայրեթ – տե՛ս ղէյրաթ, ղայրաթ – ջանք, ճգտում, նկրտում, եռանդ» (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, 351):*

[15] *«Չեթին (թուրք.) – չէթին – դժվարին, կարծր, դժվարիմաց, դժնդակ, ծանր» (տե՛ս Գործնական բառարան Տաճկերենէ Հայերէն. 1893, 253):*

[16] *«Խեր (արաբ.) – 1. օգուտ, շահ: 2. Բարիք, բարերարություն, լավություն: 3. Բարի, լավ, հաջողակ, բարեգուշակ: 4. Փառք, երանություն և այլն» (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, 315):*

[17] *Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

Ղունկիանոսը հավասարապես մերժելի է համարում և՛ ժլատությունը, և՛ շռայլությունը՝ գեխությունը: Անգամ սեփական աշխատանքը չպետք է շռայլությամբ մսխել: Նաև սեփական անձը չպետք է «ժլատությամբ զրկել», այլ աշխատանքի արդյունքը չափավորապես վայելել:

Շատ կոնկրետ խոսում է մարդու վարքագծի, ապրելու ու գործելու հարցերի շուրջ: «Շրջայլութեամբ վաստակդ ալ մի՛ զայ[18] էներ», «եւ ոչ ժլատութեամբ քո անձըդ զրկել»: Մարդկային արատը, ինչպես շատ աշուղների, այնպես էլ Ղունկիանոսի երգերի մեջ, սոսկ անհատի ճակատագրով սահմանված գիծ չէ, այլ հասարակական երևույթ: «Հարբստութեամբ բարձրացան շատ աղքատներ», «Գանձի նման երբ որ գըտան դատիլը»[19]:

Հայտնի է, որ ծուլությունը համարվում է յոթ մահացու մեղքերից մեկը[20]: Հեղինակն առանձին մի տուն է նվիրում ծույլերին և չաշխատողներին: Զթաքցնելով իր հակակրանքն աշխատանքից խուսափող ծույլ մարդկանց նկատմամբ՝ սրտի խորունկ ցավով ու զայրույթով դատապարտում և իր բողոքն է հայտնում: Հռետորաբար դիմելով նրանց՝ ասում է, որ թող բացեն ականջները և իրենց վիճակից՝ «Հալէն» գանգատվող ծույլերը: Նրանք որտե՞ղ կարող են ունեցվածք ունենալ, եթե չեն աշխատում:

Կարնեցին այն միտքն է հայտնում, որ աշխատող մարդը կարոտ չի մնա: Աշխատանքը ոչ միայն ունեցվածք, այլև պատիվ է բերում: «Ով ոք աշխատութեան սըրտով կը ջանայ», «Հէչ մէկ բանի մ՚ կարօտ էհտաճ[21] չի մընայ», «Մալ ու տէօվլէթ գանճ ու պատիւ կը ստանայ», «Հէմ տէր կ՚անէ բարի անուան դատիլը»[22]:

Ղունկիանոսն իր խոհերն ու ապրումներն արտահայտում է ուրույն եղանգներով, որոնք հիշեցնում են աշուղական արվեստում տարածված հանրածանոթ պատկերներ:

«Ի՞նչպէս չըսեմ՝ աշխատութիւնն անգին է» սկսվածքով տունը գովք է աշխատանքին ուղղված.

Խըղճահարը տառապանքէն կը հանէ,
Մելամաղձէն ազատ՝ աս վարճքն ալ կ՚անէ՝
Կ՚ըլլայ անոր դեղ ու դարմանն դատիլը[23]:

[18] *«Զայ – (զայ) (արաբ. – կորած), գավառական բառ կամ նշանակություն, փչացած, վնասված, խանգարված» (տե՛ս Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, 6): «Կորած բարբառային արտահայտություն է զայ անել, գործ են ածվում կապակցությունների մեջ. 1. Փչացնել, վնասել, 2. կորցնել, 3. սպանել, ոչնչացնել, 4. յուրացնել, տակով անել» (տե՛ս նաև Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, 397):*

[19] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

[20] *Տե՛ս Ժամագիրք Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ. 1866, 3–5:*

[21] *«Էհտաճ (պարսկ.) – կարիք, անհրաժեշտություն» (տե՛ս* Персидско-русский словарь. 1970, т. I, 51)*:*

[22] *Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[23] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

Բարոյական աշխարհայեցողությունն

«Նարեկացու ծաղիկները արդարների բազմությունն է»[24]: Ղունկիանոսն աշխատանքը համեմատում է ծաղիկներով լեցուն պարտեզի՝ «ծաղկալի պաղչայի» հետ: «Հէմ չորս կողմէն մէոհրած[25] ապրանաց պողչի», «երես դարձըննելով տօստերն[26] որ պախչի»: Այս տան մեջ որպես եզրահանգում ասում է, որ նեղ օրերի պահապանն է «դատիլը»՝ աշխատելը: Դժվար վիճակից դուրս գալու ելքը. «Ան նեղ աւուրն է պահապան դատիլը»[27]:

Բարոյական անկման վիհին կանգնած ընչաքաղց, մարմնի ձայնին հլուհնազանդ մարդիկ առաջնորդվում են միայն անձնական շահերով: Հոգսերով լի, նեղ օրվա դեպքում բարեկամ, ծանոթ, մտերիմ, կորցնում են բարոյական բոլոր առաքինությունները:

Ըստ Ղունկիանոսի՝ ծույլը ոչ միայն չի աշխատում, այլև փորձում է վնասել աշխատողին և «կը սեպէ փուճ բան դատիլը»:

Բանաստեղծության նախավերջին քառատողում զայրույթով դատապարտում է ծույլերին, դատարկ, թույլ մարդկանց, որոնք, աշխատող լավ մարդուն, խոսքով կամ գործով, ծանր վիրավորանք են հասցնում, արհամարհում: «Գէչը լաւին պագի[28] հեղ կը նախատէ», «Վար կը զարնէ, քամահրելով կը ատէ». պարզ, անպաճույճ լեզվով նկարագրում է, որ անխելք, անհաստատ մարդը «դատիլը» համարում է անարժեք, նույնիսկ հանցանքի նման մի բան.

Պատճառն աս է. ինքը թէմպէլ, թուլ, վատ է,
Խենդութեամբ կը սեպէ փուճ բան՝ դատիլը[29]:

Եթե աշխատանքն առաքինությունների աղբյուրն է, ապա չաշխատելը՝ չարության, ըստ այդմ՝ չաշխատողները «փետրալի բարձ են դևերի համար»: Այս պատճառով է, որ Աստծուն հակառակ գործող չար ոգին, անսուրբ, անմաքուր, գարշելի, զզվելի, ապականված, կեղտոտված, զազիր սատանան չի ցանկանում մարդկանց «դատիլը»՝ աշխատելը: «Զուզեր մէկի՝ մ'պիղծ սատանան՝ դատիլը»[30]: «Վասն որոյ է փորը քաղցած, միսը բաց», «Լացէն զատ ի՞նչ պետք է ատ կերպ յիմարաց», «Դատարկներն են փետրալի բարձ չար դիւաց»[31]: Մնամեջ, տգետ մարդիկ ներկայացվում են որպես փետուրներով լցված բարձ դևերի համար:

---

[24] *Ղ ա զ ի ն յ ա ն. 1980, 14:*

[25] *«Մեոհրած-մեոհր (պարսկ.)– կնքած» (տե՛ս* Персидско-русский словарь. 1970, т. II, 584*):*

[26] *«Դոստերն (պարսկ., թրք.* dost*)– 1. բարեկամ, 2. մոտիկ, ծանոթ, մտերիմ, 3. սիրելի, 4. սիրուհի, սիրեկան» (տե՛ս Հայոց լեզվի բացատրական բառարան. 2001, հ. Ա, 346):*

[27] *Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[28] *Պագի (պարսկ.)– որոշ (տե՛ս* Персидско-русский словарь. 1970, т. I, 212*):*

[29] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[30] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[31] *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր կտակարանաց. 1997, 1154–1155, համմտ. Գիրք Սիրաքայ, գլ. ԼԱ 18. «Յաղագս ցնորից հոգոց. լաւ է առն մորոսի բիր*

Աշուղական բանաստեղծությանը բնորոշ ձևով հեղինակի մասին կենսագրական տեղեկությունները և բանաստեղծության բուն ասելիքը խտացվում են վերջին երկու տողերում կամ տան մեջ: Ղունկիանոսը վերջին քառատողում գրում է.

Ղունկիանէ, չարն ու բարին լաւ գատէ,
Խօսքերըս լըսողաց խելք ու խըրատ է,
Աչխարհիս վըտանգէն զինքը կ'ազատէ,
Փըրկութեանն ալ է մեծ նըշան՝ դատիլը[32]:

Այստեղ՝ առաջին տողում, դիմում է ինքն իրեն, որ չարն ու բարին իրարից լավ բաժանի և որպես խրատ ուղղի լսողներին: Այդ խրատները թող ազատեն աշխարհի վտանգից: Որպես ընդհանրացում՝ ողջ ստեղծագործության բուն ասելիքն այն է, որ փրկության մեծ նշան է, այսինքն՝ ելքը դատելն է՝ աշխատելը: «Միջնադարեան հայ բանաստեղծութեան, ամենէն ճոխ ու ինքնատիպ մասերէն մին կը կազմեն բարոյախօսական, աւելի ճիշդ՝ «խրատական» տաղերը»[33],– նշում է Ա. Ջոպանյանը:

Ժողովրդի կյանքով ապրող բանաստեղծի ներաշխարհը

Որքան դեպի նոր ժամանակներն ենք գալիս, այնքան շատանում են աշխարհիկ սկզբունքներ ներշնչող քարոզներն ու խրատները:

Առաջնորդվելով մեծն Նարեկացու հումանիստական դաղափարներով՝ Կարնեցին հետադարձ հայացքով ներթափանցում է նրա ողբի ակունքները՝ հորդորելով հավատալ մարդկային աղարտված կերպարի բարոյական մաքրագործմանը: Կենտրոնական դեմք դարձնելով մարդու հավաքական կերպարը՝ նա ասում է, որ կյանքի ապրուստի միջոցն ապահովելու համար, պետք է անտրտունջ աշխատել, պարապ չմնալ: Հասարակությանն օգտակար ու պիտանի մնայուն արժեքներ ստեղծելու, ինչպես նաև անհատական, հոգեկան պահանջները բավարարելու համար ուղիներ է նշում: Մարդը մտքի ուժով ձեռք բերված, վաստակած դրամով կարող է հարստանալ և ունենալ ընտիր, լավ որակի, առաջնակարգ արդուզարդ. «Ջէնահաթին[34] հետ միատեղ՝ կ'անցընէ», «Թևերն ոսկի խաս ապըրլան՝ դատիլը»[35]:

Կարնեցին զարմանալի անմիջականությամբ և մտերմիկ տոնով մեկնաբանում է, որ ճակատագրի տված բաժնից նվեր տալը չպետք է դժվարին լինի[36]: Ամենքին խրատում է միշտ զգոն լինել, օգնության ձեռք մեկնել խեղճերին,

---

դլխոյն, քան բարձս փետրալիցս, զի իմաստութեամբ ո՛չ խրատի. մի՛ յապաղեր տալ նմա զաւգուտ նորա. զի թէ վաղ եւ անագան՝ այսու խրատեսցի նա»:

[32] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[33] *Տե՛ս Ջոպանեան. 1912, Ի:*

[34] *«Ջենահաթին – զենաթ (արաբ., պարսկ) – զարդ, զարդարանք արդուզարդ» (տե՛ս Հայոց լեզվի բացատրական բառարան. 2001, 407):*

[35] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

[36] *Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր կտակարանաց. 1997, 1140–1141, համմտ. Սիրաք, գլ. Դ., 36. «Մի՛ լիցիս յաւժար յառնուլն ձեռաւք, եւ ի տալն՝ կարկամեալ»:*

թուլլերին, որբերին, աղքատներին: Անսահման կարեկցանք ու սեր տածել, խնամք տանել, հիվանդների, տանջված մարդկանց նկատմամբ. «Նարեկացու ողբը մեծ նստվածք է թողել հետագա բոլոր դարերի և հատկապես XVIII դարի բանաստեղծության վրա ...»[37]: Ղունկիանոսի մարդասիրությունը սահմաններ չունի, այնպես, ինչպես Նարեկացունը, ով ասում էր. «կարեկից եղիր տառապանքներին իմ կորստաբեր», «Բժշկի նման չոչափիր աղտերս ամենաթշվառ ...»[38]:

Սա ինքնին Վերածննդի գրականության հատկանիշ է:

Ղունկիանոսն էպիկական թախծալի տողերով չեչտում է, որ նվազել է սերը աշխատանքի նկատմամբ. մարդիկ փոխանակ իրենց վիճակից գանգատվելու, չեն ձգտում վերափոխվելու, արարելու. «Ուսկի՞ց ըլլայ անգործներուն մաքերը»[39]: Կյանքը զրկվում է իմաստից այն պահին, երբ մարդը դադարում է կողքիններին օգուտ բերել .«Հեռացուցեր են օգնական դատիլը»[40]:

Հոգևորից անցում աշխարհիկի

Փորձելով մարդասիրական աշխարհայացքը հաշտեցնել հոգևորի հետ՝ կարնեցին ընկնում է երկընտրանքի մեջ. ի վերջո, կառչելով հանդերձյալ կյանքի գաղափարին՝ որոշակիորեն պաշտպանում է մարդու աշխատանքի ուղեցած դերը, քանի որ մահից հետո կատարվելու է Աստծո կամքը: Հոգևորից դեպի աշխարհիկը վերափոխության ուղին մի որոշակի ճանապարհ է անցնում. Աստծո բացահայտ դատաստանից ոչ մեկը չի կարող փախչել. «Ավ ի՞նչ կը նայես, դու ելիր, հոն գընա», «կամք տըւողին համբաւը միշտ կը մընայ», «Է դատաստան բաց, փաք մէյտան[41] դատիլը»[42]:

Աշուղ-բանաստեղծը դարի ընդհանուր ապականության մեջ դիմում է մարդ-բանականի ընդհանրական կերպարին՝ խնդրելով ազատվել իրական մեղքերից, հեռու մնալով անհատի բնավորության մեջ բուն դրած «ագահության ախտից».

Արդարութիւնն ալ մի մոռնար միանգամ,
Ագահութեան ախտից փախիր յարաժամ,
Հալալ արդիւնքիդ մէջ չընսառնես հարամ,
Որ կը լինի փուճ անպիտան՝ դատիլը[43]:

---

[37] *Տե՛ս Ն ա զ ա ր յ ա ն. 1992, 75:*

[38] *Ն ա ր ե կ ա ց ի. 2014, 452:*

[39] *«Մալեր – հազվադեպ բառ կամ նշանակություն (արաբ.– ապրանք, հարստություն), 1. հարստություն, գույք (շարժական իրերով), մալ բառի հայերեն հոգնակին է, որ նշանակում է ունեցվածք» (տե՛ս Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944, 234):*

[40] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 76:*

[41] *Մէյդան-մէյտան (պարսկ., թրք.)– հրապարակ, դաշտ (տե՛ս Մինչին հայերենի բառարան. 2009, 490):*

[42] *Տե՛ս Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

[43] *Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, 77:*

Ըստ էության, սերտ կապ կարելի է տեսնել դեռևս XV դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի «Վասն ագահութեան» դողտրիկ բանաստեղծության և Ղունկիանոսի նմանատիպ խոհեր արտահայտող մտքերի հետ: «Նաղաշը հասարակական կյանքում եղած բոլոր չարիքների պատճառը մարդկանց ագահությունն է համարում»[44],– գրում է գրականագետ Մ. Մկրյանը: Ակներև է, որ այս երկու բանաստեղծներն էլ հանգում են այն եզրակացության, որ կյանքում գոյություն ունեցող բոլոր անարդարությունների պատճառը մարդ-անհատի բնավորության մեջ բուն դրած ագահությունն է:

Եզրափակիչ քառատողում անձնական օրինակով Ղունկիանոսը դաստիարակչի դեր է կատարում՝ չեշտելով, որ մարդը, առհասարակ, պետք է իրենից վանի, արմատախիլ անի չարը, վերափոխվի: Կարնեցին ծանր զրկանքներ է կրել և իր ցգացումներն արտահայտել է անձնական բնույթի «Հրաժեշտ ի սիրելեաց»[45], «Դարձեալ հրաժեշտ ի սիրելեաց»[46] բանաստեղծությունների մեջ:

Բանաստեղծությունը տաղաչափության ու հանգավորման ձևի ու եղանակի մեջ ունի նորի առաջմղիչ ուժը: Սա հենց վերանորոգության կամ անցման շրջանի բանաստեղծության արվեստի բնորոշ գծերից մեկն է: Վերափոխության ուղին առավել վառ գծերով մի որոշակի ճանապարհ է անցնում հոգևորից դեպի աշխարհիկը:

Եզրակացություն

Այսպիսով, Ղունկիանոս Կարնեցու «Աշխատության վրայ» բանաստեղծության մեջ արտացոլված են տեսական, բարոյագիտական հարցեր, որոնք բխում են ժամանակի կենսական պահանջներից: Հետագայի շատ հեղինակներ կրել են Կարնեցու՝ միջնադարյան հայ քնարերգության նոր շրջանի բանաստեղծությանը կամրջող ստեղծագործության ազդեցությունը:

Արիադնա Հարությունյան – Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գրաղարանավար: Գիտական հետաքրքրությունը՝ Ղունկիանոս Կարնեցու գրական ժառանգությունը: Հեղինակ է 6 հոդվածի: an.xanzadyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բյուսով Վ. 1967, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, ԳԱ հրատ., 295 էջ:

Գործնական բառարան Տաճկերենէ հայերէն. 1893, Միհրան Աբիկեան, Կ.-Պոլիս, 350 էջ:

Գրիգոր Նարեկացի. 2014, Մատյան ողբերգության, Երևան, «Նաիրի», 626 էջ:

[44] *Տե՛ս Մկրյան. 1938, XXII:*
[45] *Այս մասին տե՛ս Հարությունյան. 2018, 79:*
[46] *Հարությունյան. 2018, 81:*

Զուռնաջյան Ս. 2002, Ձավախք, ժամանակագրություն, Ակնարկներ Ախալքալաքի ամբողջական պատմության, Երևան, «Հայաստան», 622 էջ:

Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. 1866, արարեալ սրբոց թարգմանչացն մերոց. ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՊԱՅ եւ երանելի Հայրապետացն մերոց. գիւտոյ եւ Յովհաննու Մանդակունւոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, յԵրուսաղեմ, ի տպարանի սրբոց Յակովբեանց , էջ 5:

Խաչատրյան Պ. 1969, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ–ԺԷ դդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 343 էջ:

Հարությունյան Ա. 2018, Ղունկիանոս երգիչ Կարնեցի. «Այլ եւ այլք». – «Էջմիածին» (Ս. Էջմիածին), Յուլիս, էջ 73–83:

Ղազինյան Ա. 1980, Գրիգոր Նարեկացի, Երևան, Հայկական ՍՍՀ «Գիտելիք» ընկերություն, 35 էջ:

Ղունկիանոս երգիչ Կարնեցի. – «Բազմավէպ» (Վենետիկ – Ս. Ղազար), 1883, հ. ԽԱ, էջ 97–110, 238–246, 332–340:

Ղունկիանոս երգիչ Կարնեցի, 1995, Ղունկիանոսի ընծան, Երևան, «Գիր գրոց», 110 էջ:

Մալխասեանց Ստ. 1944, Հայերէն բացատրական բառարան, հ. I, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 608 էջ:

Միջին հայերենի բառարան. 2009, Երևան, ԵՊՀ հրատ., 835 էջ:

Մկրյան Մ. 1938, XIII–XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ, Երևան, Պետ. համալսարանի հրատ., XXII էջ:

Նազարյան Շ. 1992, Ողբի և սթափման բանաստեղծություն XVIII դար, Երևան, ՀԳԱ, 460 էջ:

Նալբանդյան Մ. 1953, Ընտիր երկեր, Երևան, ԳԱ հրատ., 683 էջ:

Չոպանյան Ա. 1912, Հայ էջեր, Փարիզ, տպ. Կ. Ներսէսեան, 120 էջ:

Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ.–1884, հ. ԽԲ, էջ 50–57, 137–142, 212–216, 322–328,1885, հ. ԽԳ, էջ 38–43, 123–131, 217–226, 224–225:

Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցւոյ. 1894, հայերէն առաջաբանը կենսագիր՝ Ա. Տիրոյանի, Վենետիկ – Ս. Ղազար, 94 էջ:

Персидско-русский словарь. 1970, т. I. М., «Советская энциклопедия», 782 с.; т. II, 847 с.

Thorossian H. 1951, Histoire de la Litterature Armenienne, Paris, Préface de RENÉ CROUSSET de L'Académie Française, p. 225.

СТИХОТВОРЕНИЕ «О ТРУДЕ» ЛУНКИАНОСА КАРНЕЦИ

АРИАДНА АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: справедливость, жадность, рассудительно-поучительное, ашугское искусство, припев-окончание «датил», светский дух, библейская заповедь, лень, невежество.

Стихотворение ашуга-поэта переходного периода развития армянской литературы Лункианоса Карнеци (1781/1786 –1841) «О труде» имеет познавательный смысл. Одним из свойств ашугской поэзии является периодическое повторение в каждой строке и строфе слова или словосочетания как смысловой единицы, подчеркивающей смысл и суть данного стихотворения. Здесь это слово «*դատիլ*» в значении «работать», «трудиться». Карнеци обращается к несущим вдохновение основам духовного облика человека – трудолюбию, мужеству, творчеству. Стихотворение, имеющее также признаки светского духа, является одним из примеров развития армянской поэзии.

Ариадна Арутюнян – старший библиотекарь Научно-исследовательского института древних рукописей им. М. Маштоца. Научные интересы: литературное наследие Лункианоса Карнеци. Автор 6 статей.
an.xanzadyan@mail.ru

THE POEM “ON LABOR” BY GHUNKIANOS KARNETSI

ARIADNA HARUTYUNYAN

Summary

Key words: justice, greed, thoughtful and instructive, minstrel art, refrain-ending “datil”, secular spirit, biblical commandment, laziness, ignorance.

The poem by minstrel-singer of the transitional period in the development of Armenian literature - Ghunkianos Karnetsi (1781/1786-1841), “On Labor” has a cognitive meaning. One of the features of minstrel poetry is the periodic repetition in each line and stanza of a word or phrase as a semantic unit, emphasizing the meaning and essence of this poem. Here the word «*դատիլ*» means “to work”, “to labor”. The author refers to the inspirational principles of the spiritual image of a person - diligence, courage, and creativity. The poem, which also has signs of a secular spirit, is one of the examples of the development of Armenian poetry.

Ariadna Harutyunyan - Senior Librarian at Matenadaran, Research Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots. Her research interest is the literary heritage of Ghunkianos Karnetsi. Author of six articles. an.xanzadyan@mail.ru

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

ՀՏԴ՝ 809.198.1 + 800.87

Doi:10.54503/0135-0536-2022.3-144

ՀԱԴՐՈՒԹԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԱՍԻՆ*

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Հադրութի բարբառ, Ղարաբաղի բարբառ, Ս ճյուղ, հնչյունական հատկանիշներ, քերականական հատկանիշներ, բարբառների ընդհանրություններ, վերլուծական ձևեր, դերանուններ, դերբայ, չարունակական ժամանակներ:

Նախաբան

Հադրութը գտնվում է Արցախի Հանրապետության հարավում, եղել է ԼՂԻՄ շրջկենտրոններից մեկը: Պատմական փաստաթղթերում Հադրութի շրջանը նշվում է Դիզակ կամ Տիզակ անվամբ[1]: Ըստ 1965 թ. հրապարակված տվյալների՝ Հադրութի շրջանն ուներ 45 գյուղ, որոնցից միայն մեկում հայեր չէին բնակվում: Շրջանի 6 գյուղում (Մելիքջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ, Շաղախ, Դոլանլար, Խծաբերդ) բնակվում էին Ղարաղաղից տարբեր ժամանակներում գաղթած հայեր[2]: «Հադրութի բարբառը» մենագրության հեղինակ Ա. Պողոսյանը փաստում է, որ այդ բարբառով խոսում էին շուրջ 20.000 հայեր, որոնցից 16.000-ը բնակվում էին շրջանի գյուղերում, մյուսները՝ Ադրբեջանի տարբեր բնակավայրերում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանում և հատկապես՝ Միջին Ասիայի չատ քաղաքներում[3]: Նախքան Ադրբեջանի կողմից գավթվելը՝ Հադրութի շրջանն ուներ քաղաքային 1 և գյուղական 28 համայնք՝ 41 գյուղական բնակավայրերով: 2005 թ. տվյալներով շրջանն ուներ 12.300 բնակիչ: Փախստական դարձած հադրութցիները ներկայում ապաստան են գտել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարբեր բնակավայրերում, այլ վայրերում, և հերթական անգամ հայրենագրկումը դառնալու է հայերենի յուրօրինակ բարբառներից մեկի կորստյան պատճառ:

Հայ բարբառագիտությունը Հադրութի բարբառային միավորի մասին

Հադրութի բարբառի հատկանիշները, նրա փոխհարաբերությունները հարևան բարբառային միավորների հետ մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այդ բարբառին անդրադառնում ենք՝ օգտագործելով ոչ միայն առկա հետազոտությունները, այլև «Հայերենի բարբառագիտական ատլասի նյու-

---

* *Ներկայացվել է 27. VI. 2022 թ., գրախոսվել է 30. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Դիզակը Խամսայի մելիքությունների մեջ ամենահարավայինն էր: XVIII դ. 2-րդ կեսին Դիզայի մելիքությունը, ինչպես մյուս մելիքությունները, թուլանում է և վերանում, սակայն մելիքական տան ներկայացուցիչները, իբրև կալվածատերեր, պահպանում են իրենց իրավունքները:*

[2] *Տե՛ս Պողոսյան. 1965, 5:*

[3] *Պողոսյան. 1965, 7:*

թերի հավաքման ծրագրով»[4] անցյալ դարի վերջերին և ներկա դարի առաջին երկու տասնամյակներում լրացված մի շարք տետրերի պարունակած նյութը: Բարբառի իրողությունները դիտարկում ենք Ղարաբաղի և Մեղրու բարբառների հետ համեմատությամբ: Հադրութի բարբառի ընդհանուր բնութագրման, հարևան բարբառների շարքում նրա դիրքը որոշելու նպատակով նախ խմբավորել ենք տարածաշրջանի[5] համար ընդհանուր հատկանիշները, ապա՝ առանձնացրել Հադրութի և Ղարաբաղի, Հադրութի և Մեղրիի բարբառների համար բնորոշ հատկանիշները: Առանձնացրել ենք նաև Հադրութի բարբառի այն հատկանիշները, որոնք տարածաշրջանի բարբառային այլ միավորներում չեն արձանագրվել:

Հադրութի բարբառի մասին ակնարկ գտնում ենք Հ. Աճառյանի «Քննություն Ղարաբաղի բարբառի» աշխատության մեջ: Հեղինակը նկատում է, որ Ղարաբաղի բարբառի մեջ սահմանականի ներկան երկու գլխավոր տեսակ ունի, որոնք դերբայով են միայն իրարից զանազանվում[6], ընդ որում՝ երկրորդ տեսակի դերբայը կազմվում է՝ անորոշի լ մասնիկի փոխարեն դնելով ս՝ ըպրիս, տըսնաս (ապրում, տեսնում): Լեզվաբանը ս-ն համարում է խս-ից առաջացած (լալիս, գալիս, տեսնելիս) և նկատում, որ ներկայի երկու (ում և ս մասնիկներով) հիմքերն էլ ծագումով ներգոյական են՝ ում և խս մասնիկներով[7]: Նշվում է, որ ներկայի երկրորդ տեսակը գործածական է Վարանդա և Դիզակ գավառներում՝ նախորդ (ում) ձևի հետ[8]:

Հադրութի բարբառի մասին առաջինը խոսել է Ա. Ղարիբյանը՝ 1940 թ. հրապարակված «Հայերեն բարբառների մի նոր ճյուղ» աշխատության մեջ ներկայացնելով այդ բարբառի հակիրճ նկարագրությունը[9]: Այնուհետև «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նա նկատել է, որ Ղարաբաղի տարածքի վրա անցյալում եղել են երկու բարբառներ՝ ա) հյուսիսային՝ Ղարաբաղի, բ) հարավային՝ Հադրութի: Ըստ Ա. Ղարիբյանի՝ այս երկուսը միախառնվել են, գերակշռություն ստացել է Ղարաբաղի բարբառը, որը «կլանել» է Հադրութի բարբառի մեծ մասը՝ միաժամանակ նաև հաղորդելով մնացող մասին իր հիմնական գծերից շատերը, և դրա հետևանքով ստացվել է այժմյան Հադրութի բարբառը, որ շատ գծերով նման է Ղարաբաղի բարբառին, բայց պահպանում է նաև իր սեփական առանձնահատկությունները: Հետաքրքրական է լեզվաբանի այն դիտարկումը, թե Հադրութում Ղարաբաղի բարբառով խոսելը համարվում է քաղաքավարի ձև[10]: Ա. Ղարիբյանը նշում է, որ Հադրութի ամբողջ շրջանը խոսում է Հադրութի ու Քեյվան-Շաղախի բարբառներով, որոնց երանգը ղարաբաղական է, սակայն իրականում դրանց և Ղարաբաղի բարբառի միջև կա խորը տարբերություն: Մասնավորապես, նշվում է ներկայի կազմությունը (կ՚իրըմ ըմ – կիրիս ըմ), բաղաձայալ անցյալ ժամա-

[4] *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր (այսուհետ՝ ՀԲԱ ծրագիր). 1977:*

[5] *Նկատի ունենք հիմնականում Ղարաբաղի, Հադրութի և Մեղրու բարբառներն ընդգրկող տարածքը:*

[6] *Տե՛ս Աճառեան. 1899, 167:*

[7] *Աճառեան. 1899, 167:*

[8] *Աճառեան. 1899, 167–168:*

[9] *Տե՛ս Ղարիբյան. 1940, 107–127:*

[10] *Ղարիբյան. 1953, 232:*

նակների կազմությունը (կիրըմ ի – կիրիս ըմ լալ[11]), փաստում է՝ Հադրութին ավելի բնորոշ է բացառականի կազմությունը նը՝ստա բառի օժանդակությամբ, քան Ղարաբաղի սովորական բացառականն է և այլ[12]:

Բարբառի համառոտ նկարագիրը բերվում է Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց»-ում: Ըստ նրա՝ Հադրութի բարբառով են խոսում նաև Մարտունու շրջանի մի շարք գյուղեր, ինչպես և Շուշվա ու Մարդակերտի շրջանների մի քանի գյուղեր: Ա. Գրիգորյանը ևս նշում է, որ թեև Հադրութի բարբառը կրել է Ղարաբաղի բարբառի ուժեղ ազդեցությունը, բայց և այնպես մնացել է ինքնատիպ[13]:

Արցախի բարբառային ամբողջական պատկերը ներկայացնելով՝ Կ. Դավթյանը նշում է, որ Հադրութի բարբառին հյուսիսից հարում է Ղարաբաղի բարբառը, իսկ հարավից սահմանակից են Մեղրու և Ղարադաղի բարբառները: Լեզվաբանը նկատում է, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառները վաղ անցյալից ունեցել են փոխադարձ ազդեցություններ[14]: Ըստ նրա՝ Հադրութի բարբառին անցյալում պատկանած՝ շրջանին հյուսիսից հարող որոշ մասերի (Մարտունու, նաև Ստեփանակերտի հարավը), ինչպես և Ղափանի խոսվածքները, հանդիպելով Ղարաբաղի բարբառին և ուժեղ ազդեցության ենթարկվելով, կլանվել են նրանից՝ որոշ ձևափոխությամբ պահպանելով Ս ճյուղի Հադրութի բարբառի որոշ հատկանիշներ: Ղարաբաղի բարբառը ևս կրել է ազդեցություն Հադրութի բարբառից, սակայն դա եղել է անցյալում: Ընդհանրապես, Կ. Դավթյանը կարծում է, որ ազդեցությունը եղել է հյուսիսից հարավ: Նշվում է նաև, որ հադրութցիներն այլ միջավայրում խուսափում են իրենց բարբառի ձևերից, նույնիսկ իրար հետ խոսելիս երբեմն Ում ճյուղի ձևեր են գործածում[15]: Նշելով, որ Հադրութի բարբառը իր բաղաձայնական համակարգով, քմայնացումներով, շեշտով, ձայնավորների սղումներով, նաև ձևաբանական որոշ հատկանիշներով համարյա նույնն է Ղարաբաղի բարբառի հետ՝ Կ. Դավթյանը ներկայացնում է Հադրութի բարբառի մի շարք առանձնահատկություններ. անկատար դերբայի կազմությունը ս-ով, բայական 1-ին և 2-րդ դեմքերի հոգնակի վերջավորությունների նույնությունը, գրաբարյան մեք-ի դիմաց մուք ձևի առկայությունը, թեքման ձևերում ք-ից և ց-ից առաջ ն-ի բացակայությունը (մուք ուրաց կասիք), նէ հոգնակերտի առատ գործածությունն ու դրանով կազմությունների Ու հոլովումը և այլն[16]: Հետազոտողը նաև նկատում է, որ Հադրութի գյուղերը նույնպես իրար նկատմամբ ունեն որոշ տարբերություններ՝ գլխավորապես հնչյունափոխական բնույթի: Դրանց մի մասը նա պայմանավորում է Ղարադաղից ներգաղթածների և Հադրութի տեղական խոսվածքների խառնուրդով[17]:

---

[11] *Այս աշխատանքում ա, ո, ու տառերի ընդգծված գրությամբ ներկայացնում ենք համապատասխան հնչյունների քմայնացած տարբերակները:*

[12] *Տե՛ս Ղ ա ր ի բ յ ա ն. 1953, 230–231:*

[13] *Գ ր ի գ ո ր յ ա ն. 1957, 474:*

[14] *Տե՛ս Դ ա վ թ յ ա ն. 1966, 234:*

[15] *Դ ա վ թ յ ա ն. 1966, 235:*

[16] *Դ ա վ թ յ ա ն. 1966, 251:*

[17] *Դ ա վ թ յ ա ն. 1966, 252:*

Բարբառի ամբողջական ուսումնասիրության հեղինակ Ա. Պողոսյանը ևս փաստում է պատմական Սյունիքի տարածքում երկու հիմնական բարբառների առկայությունը՝ հյուսիսում՝ Ղարաբաղի, հարավում՝ Հադրութի: Նա նկատում է, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառների սահմանագիծի մի շարք գյուղեր խոսում են Հադրութի ու Ղարաբաղի համադրաբարբառով (կամ՝ միջբարբառով)՝ Ղարաբաղի բարբառի լեզվական իրողությունների գերազանցությամբ[18]*:*

Ըստ ձևաբանական դասակարգման՝ Հադրութի բարբառը պատկանում է հայ բարբառների Ս ճյուղին (մընաս ըմ՝ մնում եմ), ըստ հնչյունաբանական դասակարգման՝ երկաստիճան ձայնեղազուրկ խմբին, ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Գ. Ջահուկյանը բարբառային այս միավորն ընդգրկել է Ղարաբաղի բարբառի կազմում[19]*:*

Տարածաշրջանի ընդհանուր հատկանիշներ

Տարածաշրջանի բարբառային հիմնական միավորներին բնորոշ են ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական մի շարք ընդհանուր հատկանիշներ: Հնչյունական հատկանիշներից են.

1. ընդհանուրհայերենյան ձայնավորներից բացի՝ քմայնացած ա (լավ), ու (տուա), օ (ծօր) ձայնավորների, ը՝ խառը տիպի ձայնավորի (վը՝ղ – հող, վը՝տ – հոտ) և վերին բարձրացման ը (ի՝ – ավելի փափուկ ի) ձայնավորի (ի՝րփի՝վերի՝ որբևայրի) առկայությունը.

2. քմայնացած գ՝, կ՝, ք՝ բաղաձայնների առկայությունը (կ՝էնգ՝ատ, զանգ՝, չաք՝ար).

3. ֆ շրթնատամնային խուլի բացակայությունը.

4. վերջընթեր չեշտ (ըղա՛ղել, ըղա՛ման).

5. բառասկզբի նախնական ձայնեղ պայթականներից ու հպաշփականներից հետո, անկախ խլացումից, ա>է անցում. պէժին, պէկ, պէմպակ, կէվաթ, տէնակ, տէրտակ, ծէխ *(Հ., Ղ.),* բէմբակ, դէնակ, դէղար, ձէգ՝, բէնջար, բէց, բէհ *(Մ.)*[20]*.*

6. բառավերջի ըն-ի դիմաց՝ նը. ակնը, մաննը, մուկնը, ծուկնը, վը՝ննը.

7. ձայնավորների ներդաշնակության դրսևորում (աղոթել>ուղօթել, եբաղ>ապաղ, երկաթ>արկաթ, երկանք>արկանք, սերկևիլ>սըրկօվուլ, կկու>կուկու, զրույց>զուրուց, օրորոց>ուրուրուց).

8. տարբեր դիրքերում ու-ի դիմաց օ (ութ>օթ, ուղտ>օղտ, ուս>օս, ուշ>օշ, ուտել>օտէլ, ուրախ>օրախ, ուրբաթ>օրփաթ, թմրուս>թըմբօս, կծու>կըծօ, ճիճու>ճըճօ, դուռ>տօռնը, թուխ>թօխ, կտուց>կըտօց, չուն>չօն) և այլն:

Քերականական ընդհանուր հատկանիշներից են.

1. հոգնակի ուղղականում նէր մասնիկի բացակայությունը (ականջներ>ունգուճնէ, եղբայրներ>ըխպըրնէ//ախպէրք՝//ըխպըրօտէք՝).

2. ներգոյական հոլովի առկայությունը (ականջում>ունգուճում, դիշերում>քիչէրըմ, հոր մեջ>հօրըմ).

---

[18] *Պ ո ղ ո ս յ ա ն. 1965, 8:*

[19] *Ջ ա հ ու կ յ ա ն. 1972, 136:*

[20] *Շարադրանքում օգտագործված են հետևյալ հապավումները՝ Հ. – Հադրութի բարբառ, Ղ. – Ղարաբաղի բարբառ, Մ. – Մեղրու բարբառ:*

3. բոլոր հոլովների՝ որոշիչ հոդ ստանալու հատկանիշ (հայր>հայր/ը/, հօր/ը/, հօրա/ն/, հօրավ/ը/, հօրըմ/ը/).

4. հայցականի արտահայտություն՝ մե՛կ ուղղականին, մե՛կ տրականին նմանությամբ (ականջը>անգուճը, քրոջը>քուվէրը).

5. բացառական, գործիական, ներգոյական հոլովների պարզ և վերլուծական ձևերի առկայություն (մարթ – մարթա /բցռ/, տըղա – տըղավ /գործ/, տըղըմ /ներգ/, տըղէն անա /բցռ/, տըղէն անավ /գործ/, տըղէն անըմ /ներգ/).

6. ցուցական դերանունների հետ համապատասխան ցուցական հոդի գործածություն. (էս խօսաա, էս ստաքանս, էտ տըղատ, աա մարդըս).

7. չորս թվականի դիմաց ք-ով ձևի առկայություն (Հ., Ղ. չօրք, Մ. չուրք).

8. անձներական թվականների առկայություն[21]. Հ. ուրկօքան//ուրկօքէն (սեռ. ուրկըքանուց), իրէքան//իրէքէն, չուրսէքյան, Մ՝ ըրկօքէն (սեռ. ըրկօցուն//ըրկօքէնուս), Ղ. ըրկօքան, չուրսէքան, ըրկուքանուն//ընկուքանուց.

9. հինհայերենյան հարցական ո դերանվան արտացոլում հու ձևով.

10. ական (աական//ացական) *մանրիկով ապառնի դերբայի առկայություն՝* խըմըլական.

11. ժխտական դերբայի բացակայություն.

12. ալ *վերջավորությամբ վաղակատար,* ած *վերջավորությամբ հարակատար,* օղ//ուղ *վերջավորությամբ ենթակայական դերբայների առկայություն* (տըսալ, տըսած, տըսնօղ).

13. ժխտական խոնարհման դեպքում ժխտման ձևերի հետադասություն (կըրթըցնել մէ, կըրթըցնել մէք^{յ}, կ^{յ}իրիս չըմ, կ^{յ}իրիլական չըմ, կ^{յ}իրալ չըմ, կ^{յ}իրէցէ վէչ, կ^{յ}իրիմ վէչ) *և այլն:*

Ղարաբաղի և Հադրութի բարբառների ընդհանրությունները

Այս երկու միավորների միջև ընդհանրությունները բավականին շատ են: Դրանցից են.

1. հինհայերենյան բ, պ, դ, ճ, ջ *ձայնեղների դիմաց համապատասխան* պ, կ, տ, ծ, ճ *խուլերի դրսևորում* (բան>պէն, պլուխ>կլլօխ, դու>տու, ձրի>ծըրի, ջիլ>ճիլ), *այսինքն՝ առկա է երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ.*

2. բաղաձայնների մեծ մասի քմայնացած տարբերակների առկայություն (պ^{յ}, կ^{յ}, ք^{յ}, դ^{յ}, տ^{յ}, թ^{յ}, ճ^{յ}, ծ^{յ}, ց^{յ}, ճ^{յ}, չ^{յ}, լ^{յ} *և այլն).*

3. միավանկ բառերի ո ձայնավորից առաջ հ>վ *անցում* (վը^{հ}տ /<հոտ/, վը^{հ}ր /<հոր/, վը^{հ}ղ /<հողղ/)[22].

---

[21] *Ըստ Ա. Գրիգորյանի՝ արդի բարբառներից անձներական թվականներ ունեն միայն Ղարաբաղի և Մեղրու բարբառները (տե՛ս Գ ր ի գ ո ր յ ա ն. 1957, 124):*

[22] *Նկատենք, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառները ֆ հնչյուն չունեն, ուստի այլ բարբառների հ>ֆ համապատասխանությունը դիմաց սրանցում առկա է հ>վ համապատասխանություն: Կարծում ենք՝ երկու դեպքում էլ նախ տեղի է ունեցել բառասկզբի հ-ին հաջորդող ո-ի երկբարբառացում (որովհետև չրթնատամնայինի ի հայտ գալը կարող է պայմանավորված լինել չրթնային ձայնավորով), ապա հնչյունական այդ կազմության մեջ չրթնատամնային տարրի ուժգնացում, և դրա հետևանքով՝ թույլ հ-ի անկում, ընդ որում՝ դիտարկվող բարբառներում՝ առանց չրթնատամնայինի խլացման (մանավանդ որ այդ խլացումով պիտի առաջանար բարբառին անծանոթ ֆ հնչյուն), իսկ այլ բարբառներում՝ խլացնելով այդ չրթն-*

4. ծառանունների հոգնակիի կազմում օտ մասնիկով (տանձի-տանձօտ, գըկըռէ-գըկըռօտ, ճըղպօրէ-ճըղպօրօտ, թութէ-թութօտ).

5. սեռական հոլովի տարբեր ձևավորումներ՝ որոշյալ և անորոշ առումների դեպքում (անորոշ սեռականներ՝ տըխտակու, վը^{է}ղու, պէնու, ծիյու, հարթնէրու, որոշյալ սեռականներ՝ տըխտակէն, վը^{է}ղէն, պէնին, ծիյին, հարթնէրին).

6. բացառականի վերլուծական ձևերի կազմություն անա, նըէստա բառամասնիկներով (սարան նըէստա)[23].

7. երկու թվականի ձևերում ս-ի բացակայություն (Հ. էրկունը, Ղ. ըրկունին).

8. հու հարցական դերանվան սեռականի հուր ձև.

9. ընթացակցական դերբայի կազմություն անորոշից՝ ավ մասնիկով (պըրծընէլավ, ըսկըսէլավ).

10. ապառնի դերբայի կազմություն անորոշից՝ ական մասնիկով (ՙնըստըլական, ուտըլական).

11. օժանդակ բայի անցյալի պարզ ձևերի առկայություն (Հ. ի, իր, ար, իքʲ, իքʲ, ին, Ղ. ի, իր, էր//ար, ինքʲ, իքʲ, ին).

12. անցյալ կատարյալի իմաստի արտահայտություն պարզ ժամանակաձևով (խըմըէցէ, խըմըէցէր, խըմըէց) և այլն:

Հադրութի և Մեղրու բարբառների ընդհանրությունները

Մեղրու բարբառի հետ Հադրութի բարբառի ընդհանրություններն ավելի քիչ են: Դրանցից են.

1. ես դերանվան հոգնակի ուղղականում ն-ի բացակայություն (Հ. մուք, Մ. մէքʲ).

2. ո հարցական դերանվան դիմաց հու//հուվ ձևերի առկայություն.

3. ներկա ժամանակաձևի կազմություն ս-ով կազմվող անկատարով (Հ. կ՚իրիս ըմ, Մ. խըսէս իմ).

4. օժանդակ բայի հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի նույնություն (Հ. ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն, Մ. իմ, իս, ի, իքʲ, իքʲ, ին//ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն).

5. բոլոր պարզ ժամանակաձևերում հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի ձևային նույնություն (Հ. խըմըէցէքʲ, խըմըէցէքʲ, խըմըէցէն, Մ. մընաք, մընաք, մընան)[24] և այլն:

տամնայինը: Հ. Աճառյանը և Ա. Ղարիբյանն այս իրողությունը համարել են հ>ֆ հնչյունափոխություն (Աճառյան. 1911, 105, Ղարիբյան. 1953, 132): Հ. Մուրադյանը բերում է Ռ. Բաղրամյանի կարծիքը, համաձայն որի՝ նման դեպքերում ո-ն դարձել է վո, որից հետո հ-ն իր շունչը տվել է վ-ին և խլացրել այն (տե՛ս Մուրադյան. 1982, 269): Հ. Մուրադյանը կարծում է, որ հո-ի դիմաց վէ, ֆո հնչյունական համապատասխանություններն առաջացել են հայերենի հնագույն բարբառային այնպիսի նախաձևերի հիմքի վրա, որոնցում բառասկիզբը եղել է առանց հ-ի (Մուրադյան. 1982, 270):

[23] ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 127 (Հին Թաղլար), թիվ 388 (Քարագլուխ), նաև Մեծ Թաղերն ու Այգեստանը ներկայացնող տետրերում բերվում են 2 ձևերն էլ (ըշխարքէն անա//ըշխարքէն նէստա), իսկ թիվ 90 (Տումի) տետրում՝ միայն անա-ով ձև՝ քուվէրը անա:

[24] Արցախի տարածաշրջանի բարբառային միավորների առումով Կ. Դավթյանը նկատել է. « … այն գյուղերում, ուր «մենք» անձնական դերանունը առանց ն-ի է, այնտեղ հոգնակիի 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորությունները միատեսակ են (-էքʲ),

Մի շարք հատկանիշներ էլ նկատել ենք միայն Հաղրութի բարբառում: Այդպիսիք են.

1. հարցական չեչտը նաև բացականչականի երանգ ունի, դրվում է ոչ թե դերբայի, այլ հանգույցի վրա՝ ասալ ը՞ս, ըսըլական ը՞ս.

2. ի տարբերություն Մեղրու և Ղարաբաղի բարբառների՝ նէր հոգնակերտը բացակայում է նաև թեք հոլովներում (քիչըրնէ, քիչըրնու)[25].

3. մեծ տարածում ունի կրկնակի հոգնակիության դրսևորումը (թէվքէր – թիվքըրնէ - թէվքէք. լէնջէր - լէնջըրնէ, խըելքէր - խըլքըրնէ, խօսկէր – խօսկէրք՝ - խուսկուրնէ, հալթնէր -հալթնէրք՝ - հըլթնըրնէ, սուտէր-սուտէրք-սուտուրնէ).

4. բազմավանկ բառերի հոգնակին կարող է կազմվել էր մասնիկով (պարիկամնէ-պարիկամէր /բարեկամներ/, դիզընըլկնէ – դիզընակէր /դաշանակներ/, լըկըմընէ – լըկըմանէր /լակամաններ/).

5. ա ձայնավորով ավարտվող բառերի պարզ բացառականը կարող է արտահայտվել առանց մասնիկավորման՝ չեչտադրմամբ (ուղղ. խօ՛խա, փըէ՛սա, բաց. խուխա՛, փըսա՛).

6. հաճախ ապառնի դերբայը կարող է կազմվել ոչ թե անորոշից, այլ բայարձից (պըրծընական /պրծնելու/, մընական /մնալու/, իսկ պատճառականների դեպքում միշտ է այդպես՝ նըստըցնական /նստեցնելու/, ուրխըցնական /ուրախացնելու/). ի դեպ՝ այս իրողության թուլ դրսևորում կա նաև Ղարաբաղի բարբառում.

7. շարունակական ձևերի առկայությունն (մընաա ըմ լաղ, չկուտրես ըս նիս, կուտրըլական ինք՝ լաղ)[26].

8. կրավորական վ ածանցն ավելանում է Ա խոնարհման բայերի ներկայի հիմքի վրա (պէնալ – պէնվալ, կ՝ուղանալ – կ՝ուղանվալ, իմանվալ – իմանվալ, գ՝իղալ – գ՝իղվալ) և այլն:

Բերված իրողությունները թուլ են տալիս անել մի շարք եզրահանգումներ: Կարծում ենք՝ Ս ճյուղին պատկանող Հաղրութի, Մեղրու և Ում ճյուղին պատկանող Ղարաբաղի բարբառների ունեցած ընդհանուր հատկանիշների առատությունը կարող է վկայել՝ այդ բարբառները ի սկզբանե և շարունակաբար գործածվել են իրենց բնօրրանում, իսկ բնակչության տեղաշարժերն այնպիսի բնույթ չեն կրել, որ կարողանային էականորեն խախտել բարբառային իրողությունների աստիճանական անցումները: Այդ առումով չատ կարևոր է այն հանգամանքը, որ հատկապես այս բարբառներն ընդգրկող տարածքում է պահպանվել հինհայերենյան հատկանիշների մի փունջ՝ ֆ-ի բացակայությունն, բառավերջի բաղաձայնահաջորդ ն-ի պահպանում, ցուցական դերանունների

ինչպես և միատեսակ են այդ գյուղերում օժանդակ բայերի ու մյուս պարզ ժամանակների հոգնակիի 1-ին և 2-րդ դեմքերի վերջավորությունները» (Դ ա վ թ յ ա ն. 1966, 161): Ասվածը պետք է վերագրել նաև Մեղրու բարբառին:

[25] ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 388 (Քարագլուխ), նաև Մեծ Թաղերը ներկայացնող տեղերում կան նէր-ով սեռականի ձևեր (ծըղկընէրու, տիրիվնէրու):

[26] Տե՛ս Պ ո ղ ո ս յ ա ն. 1965, 178, Ղ ա ր ի բ յ ա ն. 1940, 113: Սակայն ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 90 (Տումի), թիվ 127 (Հին Թաղլար), թիվ 388 (Քարագլուխ), թիվ 484 (Դրախտիկ), նաև Մեծ Թաղերն ու Այգեհատը ներկայացնող տեղերում չարունակականի նման ձևեր չեն արձանագրվել:

հետ համապատասխան ցուցական հոդի գործածություն, չորս թվականի դիմաց ք-ով ձև, անձնական թվականների առկայություն, հարցական ո ղեր-անվան դրսևորում: Այս իրողությունը նշանակում է, որ դիտարկվող բարբառային միավորների արմատները ձգվում են դարերի խորքը՝ V դար և դրանից առաջ ընկած ժամանակներ: Մյուս կողմից՝ բարբառային հիշյալ միավորները, ընդհանուրհայերենյան հատկանիշների հետ ունեն հինհայերենյան շրջանից չեկող հատկանիշների՝ բարբառային հայերենի մյուս դրսևորումներից տարբերակող փոնջ [խառը տիպի ձայնավորների առկայություն, ընդգծված վերջընթեր չեշտ, հոգնակի ուղղականում նէր հոգնակերտի բացակայություն, բացառական, գործիական, ներգոյական հոլովների պարզ և վերլուծական ձևերի առկայություն, ական (ական//ացկան) մասնիկով ապառնի դերբայի առկայություն, ժխտական դերբայի բացակայություն], որը վկայում է այդ միավորների դարավոր հարևանության և զարգացման միասնական ընթացքի մասին: Ինչ վերաբերում է մանավոր ընդհանրություններին ու տարբերություններին, ապա այդպիսիք բարբառային խոսքի չղթայի աստիճանական անցումների բնական արտահայտություններ են:

Եզրակացություն

Դիտարկված բարբառախոս տարածքում նկատելի է բարբառային հատկանիշների մեծ ընդհանրություն, առավելապես՝ տիպաբանական բնույթի (օրինակ՝ քմայնացման առկայություն ձայնավորական ու բաղաձայնական համակարգերում, ձայնավորների ներդաշնակություն, վերլուծական հոլովաձևերի առկայություն, բոլոր հոլովների հոդառություն, անձնական թվականների առկայություն, ժխտական դերբայի բացակայություն և այլն): Ակնհայտ է, որ դիտարկվող բարբառները ի սկզբանե և շարունակաբար գործածվել են իրենց բնօրրանում, դրանց արմատները ձգվում են դարերի խորքը՝ V դար և դրանից առաջ ընկած ժամանակներ: Լեզվական փաստերը վկայում են նաև հայերենի այդ տարբերակների դարավոր հարևանության և զարգացման միասնական ընթացքի մասին:

Հադրութի բարբառը, չնայած Մեղրու բարբառի հետ նույն ճյուղին պատկանելուն, ավելի շատ ընդհանրություններ ունի Ղարաբաղի բարբառի հետ: Սակայն Ղարաբաղի բարբառից ունեցած տարբերությունը ներկայի կազմության առումով, ինչպես նաև էական մի շարք այլ տարբերություններ, մեր կարծիքով, թույլ չեն տալիս Հադրութի բարբառը համարել Ղարաբաղի բարբառի տարբերակ:

Հիշյալ բարբառների փոխհարաբերությունների առավել հանգամանալի ուսումնասիրության պարագայում թերևս հնարավոր կլինի հանգել եզրակացության՝ գործ ունենք Հադրութի միջբարբառի հետ, որը համատեղում է Ում ճյուղի Ղարաբաղի և Ս ճյուղի բարբառների (Մեղրու, Քեյվան-Շաղախի) հատկանիշներ:

Վիկտոր Կատվալյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, հնչյունաբանություն, տերմինաբանութ-

յուն, բառարանագրություն, լեզվաքաղաքականություն: Հեղինակ է 13 մենագրության և 80 հոդվածի: viktorkatvalyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աճառյան Հ. 1911, Հայ բարբառագիտություն, Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների.– էմինյան ազգագրական ժողովածու, Մոսկվա–Նոր Նախիջևան, 326 էջ:

Աճառյան Հ. 1899, Քննություն Ղարաբաղի բարբառի, Վաղարշապատ, 198 էջ:

Գրիգորյան Ա. 1957, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևանի համալսարանի հրատ., 543 էջ:

Դավթյան Կ. 1966, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 506 էջ:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր. 1977, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 141 էջ:

Ղարիբյան Ա. 1940, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ. – Գիտական աշխատություններ, Երևանի պետ. համալսարան, էջ 107–127:

Ղարիբյան Ա. 1953, Հայ բարբառագիտություն, Երևան, ՀՍՍՌ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, 459 էջ:

Մուրադյան Հ. 1982, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1. Հնչյունաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 347 էջ:

Պողոսյան Ա. 1965, Հադրութի բարբառը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 371 էջ:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 347 էջ:

О ГАДРУТСКОМ ДИАЛЕКТЕ

ВИКТОР КАТВАЛЯН

Резюме

Ключевые слова: Гадрутский диалект, Карабахский диалект, ветвь ***U*** (S)*, фонетические признаки, грамматические признаки, диалектные общности, аналитические формы, местоимения, причастие, континуативные времена.*

Гадрут расположен на юге Республики Арцах, был одним из районных центров НКАО. До оккупации Азербайджаном в Гадрутском районе была 1 городская и 28 сельских общин с 41 сельским поселением. В настоящее время гадрутцы нашли убежище в разных населенных пунктах Республики Армения и лишены возможности вернуться на родину: еще один из уникальных диалектов армянского языка находится под угрозой исчезновения. По морфологической классификации гадрутский диалект относится к ***U*** (S) ветви армянских диалектов, по фонологической классификации – к

двухрядной группе, не имеющей ряда звонких, по многопризнаковой классификации Г. Джаукян включил эту диалектную единицу в Карабахский диалект. Хотя Гадрутский диалект относится к той же ветви, что и Мегринский диалект, он имеет больше общего с Карабахским диалектом. Однако отличие от Карабахского диалекта по структуре презенса, а также ряд других существенных отличий, на наш взгляд, не позволяют считать Гадрутский диалект вариантом Карабахского диалекта. Не исключено, что в данном случае мы имеем дело с интердиалектом, сочетающим в себе черты Мегринского, Кейван-Шагахского диалектов ветви **Ս** и черты Карабахского диалекта ветви **ՈւՍ**. Корни Гадрутского, Карабахского и Мегринского диалектов уходят в глубь веков. Языковые факты свидетельствуют об их многовековом соседстве и общем процессе развития.

Виктор Катвалян – д. филол. н., директор Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: диалектология, история армянского языка, фонология, терминология, лексикография, языковая политика. Автор 13 монографий и 80 статей. viktorkatvalyan@mail.ru

ABOUT THE HADRUT DIALECT

VIKTOR KATVALYAN

Summary

Key words: Hadrut dialect, Karabakh dialect, **Ս** (S) *branch, phonetic features, grammatical features, dialect communities, analytical forms, pronouns, participle, continuative tenses.*

Hadrut is located in the south of the Republic of Artsakh, it was one of the regional centers of the NKAO. Before the occupation by Azerbaijan, the Hadrut region had 1 urban and 28 rural communities with 41 rural settlements. At present, the people of Hadrut have found refuge in different settlements of the Republic of Armenia deprived of the opportunity to return to their homeland: another unique dialect of Armenian is in danger of extinction. According to the morphological classification, the Hadrut dialect belongs to the **U**(S) branch of the Armenian dialects; according to the phonological classification, to a two-level group with no voiced consonants; according to the multi-feature classification, G. Jaukyan included this dialect as a unit in the Karabakh dialect. It is true that although the Hadrut dialect belongs to the same branch as the Meghri dialect, it has more in common with the Karabakh dialect. However, in our opinion, the difference from the Karabakh dialect in terms of the formation of the present tense, as well as a number of other significant differences, do not allow us to consider the Hadrut dialect as a variant of the Karabakh dialect. It is possible that in this case we are dealing with an inter-dialect that combines the features of the

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

Meghri, Kayvan-Shagakh dialects of the **ՍՈՒ** branch and the features of the Karabakh dialect of the **ՈՒՄ** branch. The roots of the Hadrut, Karabakh and Meghri dialects trace back centuries. Linguistic facts testify to their centuries-old neighborhood and the general process of development.

Viktor Katvalyan – Doctor of Sciences in Philology, Director of the NAS RA Institute of Language after R. Acharyan. Scientific interests: dialectology, history of the Armenian language, phonology, terminology, lexicography, language policy. Author of 13 monographs and 80 articles. viktorkatvalyan@mail.ru

ՀՏԴ՝ 891.981-13

Doi:10.54503/0135-0536-2022.3-155

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ*

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ ասացական բայ, ասացող, ենթակա, երկխոսություն, զեղչում, զուգորդվել, կոչական, հեղինակի խոսք, չարադասություն, պատում, ուղղակիորեն մեջբերվող խոսք:

Նախաբան

Երկխոսությունները մեկը մյուսին հաջորդող առնվազն երկու բարդ կառույցներ են՝ յուրաքանչյուրը սովորաբար բաղադրված ուղղակիորեն մեջբերված (այսուհետ՝ ուղղակի) և հեղինակի խոսքերից: Երկխոսությունները «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումներում առանձնանում են արտահայտության և բովանդակության պլանների, գործածության հաճախականության ու այլ առումներով և առայսօր լեզվաբանական ուսումնասիրության նյութ չեն դարձել: Ստորև առաջին անգամ քննել ենք «Սասնա ծռերի» երկխոսությունների, մասնավորապես՝ հեղինակի խոսքի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները[1]: Աշխատանքը գերազանցապես կատարել ենք նկարագրական և համեմատության մեթոդներով. համեմատության եզր են ծառայել էպոսի տարբեր պատումների և ժամանակակից հայերենի լեզվական իրողությունները:

Երկխոսությունների կառուցվածքը և բաղադրիչների չարադասությունը «Սասնա ծռեր» էպոսում

«Սասնա ծռեր» էպոսի բոլոր պատումներում զգալի տեղ են գրավում երկխոսությունները: Ուղղակիորեն մեջբերվող խոսքը, դրանցում հանդես գալով հեղինակի խոսքի զուգորդությամբ, գրավում է նախաղաս, միջադաս կամ վերջադաս դիրք.

«Ըսաց. – *Կոզբատին իկեր ի» (Գ, 112):*

«– *Աչո՛ւղ, – ըսեց, – էդ խաղ ու մաղ մի՛ գովա» (Գ, 426):*

«– *Դե՛, տավար մուղաթ ելի, յես երթամ, – ասավ» (Բ, 256):*

Ուղղակի խոսքի՝ ենթակա-ստորոգյալ-կոչական-միջանկյալ բառ բաղադրիչներից վերջին երկուսը սովորաբար գրավում են նախադաս դիրք միջանկյալ բառ–կոչական չարադասությամբ:

---

* *Ներկայացվել է 25. VII. 2022 թ., գրախոսվել է 27. VIII. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Փաստական նյութը քաղել ենք «Սասնա ծռեր» (խմբագրեց ակադ. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կարապետ Մ. – Օհանջանյանի), մասն երկրորդ, Երևան, 1951 (այսուհետ՝ Բ) և «Սասնա ծռեր» (պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի), հ. Գ, Երևան, 1979 (այսուհետ՝ Գ) աշխատություններից:*

Միջադաս հեղինակի խոսքով կարող են ընդմիջարկվել՝ ա) կոչականն ու նախադասության անդամները, բ) միջանկյալ միավորն ու նախադասության անդամները կամ գ) միջանկյալ միավորն ու կոչականը.

«– Մարե՛,– ըսավ, – իմ հոր ձիուն ի՞նչ չնո՛րք կա» (Գ, 211):

«– Հե՛յ, – կըսե, – մեռնի՛մ քըզի, Մարաթգու սուրբ Խաչ Պարագի՛ն» (Գ, 174):

«– Ջէ՛,– ըսավ, – ախպե՛ր, Մեր օրենք էնբես է, օր …» (Գ, 195):

Պատումներում հեղինակի վերջադաս խոսքերն ակնհայտորեն սակավադեպ են, ինչը պայմանավորված է էպոսի լեզվի բարբառային և ժողովրդախոսակցական հիմքով[2]:

Բարդ կառույցով արտահայտված ուղղակի խոսքերին զուգորդվող հեղինակի խոսքերը նույնպես ունեն տարբեր չարադասություն: Միջադաս լինելու դեպքում դրանք սովորաբար ընդմիջարկում են ուղղակի խոսքի բաղադրիչ նախադասությունները[3]:

«– Տո՛,– ըսաց,– քու պատա՛նք կարիմ, – ըսաց, –

Հէ՛ն ա, Մսրա Մելիք էգեր ա, – ասաց, –

– Մի միլլոն զորք է բերի Սասնու վրեն,- ըսաց,

–Դու հըլա չըս էրտա քո հորոխպո՛ր մոդ» (Գ, 168) և այլն:

Հեղինակի խոսքի առանձնահատկությունները «Սասնա ծռեր» էպոսի երկխոսություններում

Որպես կանոն, երկխոսություններում հեղինակի խոսքի ստորոգյալ են դառնում ասացական բայերը կամ տվյալ գործածության մեջ ասացական բայի դեր կատարող այլ բայեր, որոնք, ըստ դասանշային արժեքի, հարաբերելի են անձնանիշ առարկա ցույց տվող ենթակաների[4]: Էպոսի բոլոր պատումներում հեղինակի խոսքերի ստորոգյալներն ավելի հաճախ արտահայտվում են ասել բայի խոնարհված ձևերով: Ավելին՝ որոշ պատումներում ասացողները միևնույն ասել բայով կազմում են և՛ խոսողի, և՛ խոսակցի հեղինակի խոսքերը[5].

---

[2] *Հեղինակի խոսք-ուղղակի խոսք չարադասությունը բնորոշ է նաև արդի բարբառներին և ժողովրդախոսակցական հայերենին:*

[3] *Համմտ. «Զարթնեց, ասավ.*

– Կերչ ու Սևաստապոլ: Հիմա էլ, – ասավ, – միջոց էլ ունենք, հասկացողություն էլ, ու մեր կորածի տեղն էլ հայտնի է, այսինքն պիտի գնանք գտնենք, պիտի բերվի: Բայց կներես, – ասաց, – չի՞ կարելի մի երկու շաբաթ, մի ամիս, չատ-չատ՝ ասենք թե մինչև ձմեռ հետաձգենք» (Մ ա թ և ո ս յ ա ն. 1985, 311):

[4] *Խ ա չ ա տ ր յ ա ն. 2016, 1, 14:*

[5] *Համմտ. «– Էս երկրում մինը մընի ապրելն ուզում չի, թշնամու սարքած ասեկոս է:*

Ասաց.

– Կենտրոնի գործկոմ քու ասեկոս խաստատեց, քու պոչ ֆերմայից խուզեց:

Ջեռը թարս բարձրացրեց, ասաց.

- Ըռխիդ ծեփիլ տեմ հա՛:

Ասաց.

- Գնա քու կնիկի բերան ցեպի:

Ասաց.

«– Ըսաց.- Պառա՛վ, – ըսաց, – հիմա որտե՞ղ է:

– Ըսաց.- Կրողը քեզ տանի՛, կնա, ախս» (Գ, 112) և այլն[6]:

Նայած խոսքային իրավիճակին՝ ուղղակի խոսքն ունի տարբեր հնչերանգ, որով պայմանավորված՝ հեղինակի խոսքի ստորոգյալը պետք է արտահայտվի իմաստով տարբեր ասացական բայերով (օր.՝ բացականչականի դեպքում՝ կանչել, ձայն տալ, բոռալ, հարցականի դեպքում՝ հարցնել և այլն): Սակայն լեզվական փաստերը վկայում են, որ, օրինակ, բացականչել, կարգադրել, հարցնել, պատասխանել և այլ բայեր էպոսում ոչ միայն սահմանափակ թիվ ունեն, այլև դրանցով կազմված հեղինակի խոսքերն են հազվադեպ.

«– Հը՛, ի՞նչ մարդ ա,– խարցնում ա ըտոնցը» (Բ, 100):

«Ընտից կանչեց Դավթին.– Դավի՛թ, … վե՛ր էլ» (Բ, 249):

«Է՛, թաքավո՛ր տեսավ՝ տղաներ լավ տղա՛, կարգադրեց Թե.

– Էս մարդիկ Թո՛ր ըլնին մեզի խայվաչի, չըբըխչի» (Գ, 350):

«Մարա Մելիքն կը պատասխանա,

Թե.– Քեռի՛ Թորոս, որ ըտմալ ա …» (Բ, 661):

Դրան հակառակ՝ ասել բայը լայնորեն գործածվում է ուղղակի խոսքերին զուգորդվող թե՛ պատմողական և թե՛ այլ հնչերանգ ունեցող հեղինակի խոսքերում.

«Ասավ. – Կարա՞ս մե թիքա եթաս, բերես» (Բ, 256):

«– Պետք չե՛ս ընձի, – ասում, – տարե՛ք:

Սև ձինը բերե՛ք» (Գ, 488):

«– Ասում. – … բա՛ էս ժողովրդին ի՞նչ տամ» (Գ, 470):

«– Դե՛,– ասեց,– Սանասա՛ր, Ասլիմելի՛ք, – ըսեց, –

[h]Առավոտ չուդ [h]ելե՛ք, Պաղրաատություն տեսեք» (Գ, 350):

Բերված փաստերը վկայում են, որ ասել բայը ենթարկվել է բառիմաստի ընդլայնման. այն հանդիպում է գրեթե բոլոր ասացական բայերի փոխարեն՝ տարբեր կիրառություններում նշանակելով «պատասխանել», «հարցնել», «հրամայել», «բացականչել» և այլն: Կարծում ենք՝ դրան նպաստել է ասել և հարցնել, կանչել, բոռալ ու այլ բայերի զուգահեռ գործածությունը միևնույն հեղինակի խոսքում.

«Կէրտա Հորու վրեն, գ'Հարցու.

– Մհե՛ր, – կըսե, – ո՞նց իս» (Գ, 234):

«Դավիթ նստում վրեն, բոռում.

– Մելի՛ք, – ասում,- դուրս [h]յելի՛, վերջիդ օրը» (Գ, 489):

«Դավիթ ձեն տվեց ընտից, ասավ.

– Քեռի՛, զա՛րկ, Թո գա քո դուրզը» (Բ, 249):

- Իմ կնիկը քու Թայը չի:

Ասաց.

- Իմ տայն է….» (Մ ա թ և ո ս յ ա ն. 1985, 338):

[6] Խոսքը ոճավորելու նպատակով ուղղակի և հեղինակի խոսքերի որոշ անդամներ երբեմն կրկնվում են՝

«Թողեց գնաց տուն, կանչեց խըրոխպեր, ըսաց.

– Արի ըստեղ, – ըսաց, – խըրոխպեր ….» (Գ, 117) և այլն:

Մի շարք պատումներում (Գ/ԺԱ, Գ/ԺԲ, Գ/ԺԷ և այլն) գրավելով նախադաս դիրք՝ ասել բային զուգադիր գործածվում են վերցնել բայի կամ էլ՝ վերջինիս վեկալել բարբառային համանիշի խոնարհված ձևեր[7].

«Թորոս վեկալում ա աում ա.

— Ի՞նչ ա կամեցե (Բ, 97)

Էն էլ վերցնում ա աում ա [h]իր տղա Թորսին .... » (Բ, 97):

«Էրեխեն վերցուց աեց,

Թե,— Էտ Վեգե՛վն ա, Դավիթի ախպեր» (Բ, 510) և այլն:

Թեև որոշ դեպքերում վերցնել//վեկալել-ը և աել-ը տրոհվում են կամ էլ ընդմիջարկվում այլ բառերով, այնուամենայնիվ չեն դադարում որպես զուգադաբայություն ընկալվելուց.

«Են էլ կը վեկալա, կ՚աա ...» (Բ, 96):

«Վերցրեց Թագավորն աաց.

Իմ՛լ յերկյուղ չունեմ ...» (Բ, 97):

Փաստենք, որ որոշ բարբառակիր ասացողների համար վերցնել աել և վեկալել աել զուգաբայերի գործածությունն այնքան է սովորական, որ մի շարք պատումներում հեղինակի խոսքերի մի մասը կառուցվում է ստորոգյալի մասնակի զեղչմամբ, սակայն զեղչվում է ոչ Թե վերցնել կամ վեկալել, այլ աել բաղադրիչը: Այս դեպքում վերցնել և վեկալել բայերը ենթարկվում են իմաստափոխության՝ կատարելով ասացական բայի դեր.

«... [h]Ինքը վեկալեց, Թե. — Մեր աղջիկն էրեխով ա» (Բ, 97):

«Էդ մարդիկը վեկալին, Թե. — Դո՞ր ես էթում» (Բ, 100):

«Փայլևաններ վերցրին, Թե. — ... հրաման ա» (Բ, 248):

«Էտ գա՛վազա հոտաղ վերցուց (փխ.՝ վերցուց աեց — Գ. Խ.),

Թե. — Սասունա՛ ծուռ, էսօր մանճրկալի օրն էր ...» (Բ, 512):

Նշված հնարքով նույնիսկ երկխոսություններ են կազմվել.

«Մըսրա Մելիք վերցրեց. — Մերի՛կ, ...Դավթին պտի մորթեմ:

Մերը վերցրեց. — Որդի՛, ընչի՞ ես մորթում» (Բ, 251):

Էպոսի պատումներում աել բայի ամենատարածված դիմավոր ձևերն են սահմանական եղանակի (աում է//աում է//աում ա, աում//կաե//կըսե) և անցյալ կատարյալը (աաց//աավ// աեց//ըսաց//ըսեց և այլն)[8].

«— Տո՛,— ըսաց, — քու պատա՛նք կարիմ, — ըսաց, —

Չէ՛ն ա, Մսրա Մելիք էգեր ա, — աաց» (Գ, 168):

«Կոզբաղին լե մեչոկն է բռնե. կըսե.

— Հորոխպե՛ր, կամա՛ց, կամա՛ց, կամա՛ց, —

Կըսե, — դու չգիտես չափիս» (Գ, 166) և այլն:

Հայտնի է, որ ասացողները տարբեր բարբառակիրներ էին, և հեղինակի խոսքերում աել բայը ամեն մեկի կողմից տարբեր հաճախականությամբ, տարբեր քերականական ձևերով և բարբառային տարբերակներով էր դոր-

---

[7] *Լոռու խոսվածքում գործածվում է վեր ունել («վերցնել») վերլուծական բարդությունը, որի բայական բաղադրիչի 2-րդ հիմքը համալրվում է գրաբարյան սկզբունքով, այն է՝ տարարմատ կալա, կալար, կալավ և այլ բայաձևերով՝ վեր եմ ունում, վեր կալա, վե՛ր կալ և այլն:*

[8] *Նշված ժամանակաձևերը հեղինակի խոսքում հաճախադեպ են գրական հայերենի բոլոր շրջաններում:*

ծածկում: Այսպես՝ Մշո բարբառակիր Մարտիրոս Գրիգորյանը (Գ/Ե պատում) խոսքն առաջ է տանում թե՛ կը ճյուղին պատկանող Մշո բարբառին բնորոշ կըսե ձևով, թե՛ վերջինիս՝ Արարատյան բարբառին հատուկ ասում է տարբերակով: Ընդ որում, դա արվում է ոչ միայն պատումի տարբեր հատվածներում, այլև միևնույն հատվածում.

«Պառավ գիկա, կըսե.

– Տո՛, զքու պատա՛նք կարիմ, – կըսե, –

Հրյա՛ գնա, – ասում է, – տե՛ս,

Քու հորոխպեր ինչ ա անում» (Գ, 166):

Ավելին՝ հիշյալ ասացողը գրական արևելահայերենի ասում է ձևին զուգահեռ գործածում է նաև ասում ա բարբառային ձևը.

«Կըսե. – [h]Ուր է՝ գրող քու բերա՛ն, – ասում ա, –

Հէն ա, ձեր տուն է, [h]ո՛ւր է, – ասում ա, –

Գնա՛ տուն, տե՛ս» (Գ, 166):

Ջուգաձևություններով աչքի է ընկնում նաև Գ/Թ պատումը, որում, օրինակ, ասել բայի ասաց անցյալ կատարյալը կը ճյուղի բարբառակիր մարտունեցի ասացող Հովհաննես Հակոբյանը գործածում է թե՛ գրական արևելահայերենով ու արևմտահայերենով, թե՛ դրանց բարբառային տարբերակներով՝ ասաց, ասեց, ըսաց, ըսեց, ասավ.

«Ասեց. – Ինչո՞ւ, ո՛ղի՛ր, գլոխդ կախիր: …

– Ջէ՛,- ասեց,- եսիմ, սրտիդ չէկավ:

Ասեց.– Սրտիս էնքան չէկավ օր՝

Անփո՛րց տղա են, տրանց փորցենք, նո՛ր ախճիդ տուր:

Ըսեց. – Թաքավո՛ր, տե՛ս, ի՛նչքան գոռոզ մարդիք ին, …

– Տղանե՛ր, Սանասա՛ր, Ասլիմելի՛ք, – ըսաց, – …

Նորից կրկնավ թաքավո՛ր, ասավ.

– Ա՛յ տղեք ջան, Սանասա՛ր, Ասլիմելի՛ք, …

Ասաց. – ո՛ղի՛ր, քու ղոչուն քաչա՛ …» (Գ, 350–351):

Վերոբերյալ լեզվական փաստերը վկայում են, որ Արարատյան բարբառը և հիմնականում նրա հենքի վրա ձևավորված գրական արևելահայերենը որոշակի ազդեցություն են գործել Արևելյան Հայաստան ներգաղթած՝ կը ճյուղի բարբառակիրների լեզվամտածողության կաղապարների վրա:

Հայտնի է, որ Բայազետի բարբառին հատուկ են վաղակատար և հարակատար դերբայներով կազմված «Թագավորը Շըմշկիկ խաթունն ա, Մարդը մեռե, [h]ինքը նատե թագավոր» (Բ, 145), «Ընդունք գ'ացած թադրոն»[9] կարգի դերբայական նախադասություններ[10]: Ծագումով բայազետցի Թորգոմ Սարգսյանը, որը կյանքի հիմնական մասն անցկացրել է Ում ճյուղի բարբառակիրների միջավայրում (Գ, 458), ԺՒ պատումի հեղինակի խոսքերի մի մասը կազմում է ասում ա ստորոգյալով.

[9] *Կ ա տ վ ա լ յ ա ն. 2016, 415:*

[10] *Դերբայական նախադասություններ վկայվել են դեռևս գրաբարին նախորդող շրջանից՝ արտահայտված վաղակատարի նախատիպ անցյալ դերբայով. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն Ի Տուհայ գաւառէն, զԲասող գետով, եկեալ նստեալ զՇրէչ բլրով …» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913, 199):*

«Ո՞ր ճամպխով գացին:

Ասում ա. – Էս յան գացին:

– Դը՛,– ասում ա, – իմ կոբալը տո՛ւ» (Գ, 470):

Սակայն վերոհիշյալ ասացողը ավելի հաճախ հարազատ է մնում իր բնիկ լեզվամտածողությանը[11] և որոշ հեղինակի խոսքեր, փոխանակ «ասել բայի անկատար դերբայ+օժանդակ բայ» մասնակաղապարով արտահայտելու, կազմում է Բայազետի բարբառին բնորոշ ձևով՝ դերբայական նախադասությամբ, այն է՝ առանց օժանդակ բայի[12]:

«– … Ասում. – Էդ ո՞վ ա:

– Ասում. – Էդի Մելիքն ա:

– Ասում. – … որտե՞ ա Մելիքն» (Գ, 486):

Որոշ դեպքերում էլ հիշյալ ասացողը հեղինակի խոսքերն արտահայտում է ասում ա և ասում ստորոգյալների անկանոն հերթափոխով.

– Նանե՛ ջան,– ասում, – մեզի հարիսա կտա՞ս:

Ասում ա. – Բալա՛ ջան, նստի՛,

Ինչքան կուտես՝ լցեմ, կե: ….

Ասում ա. – Նանե՛ ջան, – ասում, – էս ա՝ կանթը քցեմ, –

Պուտուկ ա ըլնում՝ առաջ, չէ՞» (Գ, 469):

Էպոսի երկխոսությունների առանձնահատկություններից է և այն, որ ասացողները կարևորում են ոչ թե հեղինակի, այլ ուղղակի խոսքի ամբողջականությունը: Բանն այն է՝ միշտ ունենալով արտահայտության նույն եռաբաղադրիչ կաղապարը («ենթակա–ստորոգյալ–հանգման (հաղորդման) խնդիր»)՝ հեղինակի խոսքերը, ի տարբերություն ուղղակիորեն մեջբերվող խոսքերի, գրեթե չեն նպաստում նկարագրվող դեպքերի զարգացումներին: Ունենալով հիմնականում սահմանափակ տեղեկատվություն՝ եռաբաղադրիչ հեղինակի խոսքերը էպոսում սակավադեպ են և գերազանցապես հանդիպում են արձակ պատումներում.

«Թաքավոր ասաց ախչըկան. – Ընչի՞ էկար» (Բ, 558):

«Օխտը տարին օր կը լրանա, մեկ տասներկու տարեկան տղա մ՚ հարցուց իրան հայրից. …» (Բ, 566):

«Մսրա Մելիքն իրա ծառայողներուն կ՚ըսա. …» (Բ, 661):

Հեղինակի խոսքի ենթական և/կամ հաղորդման խնդիրը բառային արտահայտություն ունեն գերազանցապես այն ժամանակ, երբ տվյալ խոսքային հատվածի բովանդակության պլանում կարող է առաջանալ իմաստի շփոթ: Այսպես՝ «Էտու. Խալիֆին տվին, առից տարավ: Ասաց. – Քաոռասուն օր ես պտի քաոռունք պահիմ …» բանատողերից չի ենթադրվում, որ «Ասաց» հեղինակի խոսքի ենթական Ծովինարն է: Դրությունը շտկում է Խալիֆեն ենթակայի գործածությունը հաջորդ հեղինակի խոսքում.

«Էտու Խալիֆին տվին, առից տարավ:

Ասաց. – Քաոռասուն օր ես պտի քաոռունք պահիմ.

Առանձին տուն տիր:

---

[11] *Նա պատումը լսել է հորից, որը 1877-ին Բայազետից գաղթել է Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի այժմյան Ծաղկաշեն գյուղ:*

[12] *Ակնհայտ է, որ այս դեպքում գործել է նաև համաբանության օրենքը:*

Խալիֆեն ասաց.

– Քառասուն օր ես չեմ տիմանա՝ քեզ չտենամ ...» (Գ, 26):

Բազմաթիվ դեպքերում հեղինակի խոսքի ենթական և հաղորդման խնդիրը զեղչված են, և միայն ստորոգյալն ունի բառային արտահայտություն.

«... Կ'ըսա. – Քեռի՛ Թորոս, դու իմ դարդեր չըս գինա:

Կ'ըսա. – Ի՞նչ դարդ, լա՛ռ:

Կ'ըսա. – Յես ի՞մ...

Կ'ըսա. – Ի՞մալ ես իմ: Յեսիմ ո՞րն ա ....» (Բ, 692):

Եվ քանի որ հաճախադեպ են նաև ստորոգյալների զեղչմամբ հեղինակի խոսքերը, ապա ստացվում է, որ պատումներում հեղինակի խոսքերն ավելի հաճախ կա՛մ թերի նախադասություններ են, կա՛մ զեղչված են ամբողջությամբ:

Հեղինակի խոսքի ենթակայի և/կամ հաղորդման խնդրի զեղչում տեղի է ունենում մանավորապես այն դեպքում, երբ նրանց նշած առարկան կամ առարկաները (որպես կանոն, դրանք պետք է կա՛մ անձնանիշ լինեն, կա՛մ անձնավորված)[13] չարահյուսական որևէ պաշտոնով բառային արտահայտություն ունեն տվյալ երկխոսությանը նախորդած որևէ նախադասության կազմում.

«... Գնաց, նստավ էտ նանեի կշտի խետ, ըսեց (Նանեին – Գ. Խ.).

– Նանե՛, – ըսեց, – փըչում՝ խըրիսա լցես, ուտենք» (Գ, 368):

«Իշկաց տեսավ՝ էդ մարդ նիա՛թ-նիա՛թ նստե:

Ըսեց (մարդուն – Գ. Խ.). – Տնաչե՛ն, ... h ընչ ես նիաթ» (Գ, 369):

« h Ելավ Դավիթի դեմ.

– Դավի՛թ ջան, Դավի՛թ, – ըսեց, –

Մեռիմ քե, Դավի՛թ ...» (Գ, 419):

Սովորաբար հեղինակի խոսքի հաղորդման խնդիրը զեղչվում է նաև այն դեպքում, երբ ասացողներն ուղղակի խոսքում գործածում են կոչական, որը հեղինակի խոսքում զեղչված հաղորդման խնդրի հետ սովորաբար ցույց է տալիս միևնույն անձնանիշ առարկան կամ առարկաները: Հենց դրանով է պայմանավորված, որ հեղինակի խոսքի հաղորդման խնդիրը և ուղղակի խոսքի կոչականը միաժամանակ բառային արտահայտություն ունեն միայն էպոսի սակավաթիվ երկխոսություններում.

«Թողեց կնաց Բաղդա՛դ, գուդքիրուն ըսաց.

– Գուդքի՛ր, – ըսաց, – ես ձեզ ասեցի ...» (Գ, 84):

«Խանչեց Ջինով h Յովանին, ըսեց. – Ջինով h Յովան:

Ըսեց. – Ի՞նչ ա» (Գ, 283):

---

[13] Որոշ պատումներում երկխոսություն է ծավալվում նաև մարդկանց և կենդանիների միջև: Ստեղծագործական այս հնարքով (անձնավորում) համահարթեցվում են իրականի և միֆականի սահմանները.

«Կարմիր ձինը գալում.

– Ե՞փ պտի խասցնես:

Ասում. – Մինչև ոտըդ դնես զանգուն,

Ես քե կըխասցնեմ Դավթի կռվին» (Գ, 488):

Վերը բերված բազմաթիվ օրինակներից ելնելով՝ փաստենք, որ պատմություններում հեղինակի խոսքերն ավելի հաճախ արտահայտվում են միայն ստորոգյալով, որով ապահովվում է ուղղակի խոսքերի սահուն հերթագայությունն: Բանն այն է՝ հեղինակի (և առհասարակ) խոսքի կարևոր բաղադրիչը ստորոգյալն է, և դրանով է պայմանավորված ուղղակի խոսքի առկայությունը: Այսուհանդերձ, հեղինակի խոսքում, այլ անդամներից բացի, կարող է դեղչվել նաև ստորոգյալը: Ընդ որում, եթե ենթակայի և/կամ հաղորդման խնդրի դեղչմանը չի հետևում նաև ստորոգյալի դեղչում, ապա ստորոգյալի դեղչման դեպքում դեղչվում է ողջ հեղինակի խոսքը: Արդյունքում բազմաթիվ երկխոսություններ կազմվում են միայն ուղղակի խոսքերով, որոնց նախորդում է թե կամ որ[14] ստորադասական շաղկապներից որևէ մեկը.

«... Թե.– Մենք ըստուց ենք:

Թե.– Ջեզի տուն, տեղ կա՞ էստեղ» (Բ, 649):

«.... Թե.– Դու քու աղի ի՞նչն ես:

Թե.– Ես իմ աղի ղայֆաչին եմ» (Բ, 507):

Հեղինակի խոսքի՝ ամբողջությամբ դեղչված լինելու դեպքում ասացողներն ուղղակի խոսքից առաջ գործածում են նաև բա (թե) կամ (թե) բա արտահայտությունը, որում, սակայն, գրեթե չի պահպանվել գրաբարում վկայված բամ ասացական բայի թեք ձևերից մեկի (բայ) նախնական իմաստը («ասում է»)[15].

«– Կանչեք շապիկ բերող. էդ ի՞նչ ա էլե:

– Բա չեմ գիտում. ...» (Բ, 262):

«Ըսաց. – ... Էդ էրեխեն ... Ոչ կիրեր, ոչ խմե:

– Բա. – Ինչո՞ւ» (Գ, 100):

Որոշ երկխոսություններ կառուցվում են միայն ուղղակի խոսքերով, այսինքն՝ առանց հեղինակի խոսքերի կամ վերջիններս ուղղակի խոսքերին կապակցող բա, թե, որ[16] կապակցման միջոցների[17]: Նման հնարք սովորաբար կիրառվում է արագ զարգացող դեպքեր նկարագրելիս.

---

[14] *Որ//օր շաղկապն այս դերում հազվադեպ է հանդես գալիս.*

«Էդ չաղճըպան գնաց, ձեն տվեց քաղաքըն, օր.

– h Ելե՛ք, խլաթցի՛ք, Դավիթի տղա Մհեր էգավ» (Գ, 287):

[15] *Լոռու խոսվածքում առայսօր գործածական է թո բա թե (բառացի՝ թող ասի, թե) արտահայտությունը, որը մեր օրերում նշանակում է «չի կարող պատահել»: Արդի որոշ բարբառներում թող>թո հնչյունափոխությունը սովորական է, ինչն առկա է նաև էպոսի պատումներում՝ «Ասավ. – Որ խելքով ա, Թո ըլլի ձիան ջհորը տա գլոխը» (Բ, 241): «Թո գա, խետ գուլաչ կպնի» (Բ, 243): «Թո էթա ավ անա» (Բ, 159):*

[16] *Որոշ պատումներում (Գ/ԺԴ, Գ/ԺԵ և այլն) գործածվել է թե շաղկապի համանիշ քի օտարաբանությունը.*

«Գացին մոր խաբար տվին,

Քի. – Քո տղեն կը սպաներ Մելիք» (Բ, 351):

«Որթկարած վազավ, գնաց, դնեն մտավ,

Քի. – Ծենով Օհա՛ն, Թեվաթորո՛ս, ...

Իմ մուչտուլուղ տվեք, ...» (Բ, 367):

[17] *Պատումների լեզվին հատուկ է հեղինակի և ուղղակի խոսքերի կապակցումը գերազանցապես ոչ թե շարահարությամբ, այլ զուգադրությամբ (ստորադասական շաղ-*

«– Է՛հ, Դավիթ:
– Հրամայեցե՛ք, Մելի՛ք:
– Ի՞նչպես կովենք:
– Ինչպես դու գիտես. …» *(Բ, 42)*:

Եզրակացություն

«Սասնա ծռեր» էպոսի երկխոսություններում հեղինակի խոսքի չարադասությունը (ենթակա-ասացական բայով ստորոգյալ-հանգման խնդիր) և բովանդակությունը գրեթե չեն փոփոխվում, և ի տարբերություն ուղղակիորեն մեջբերվող խոսքերի՝ հեղինակի խոսքերը գրեթե չեն նպաստում նկարագրվող դեպքերի զարգացումներին: Դրանով է պայմանավորված այն, որ նշված անդամները ոչ միշտ բառային արտահայտություն ունեն, սակայն, իբրև կանոն, ենթադրվում են: Էպոսի պատումներում առավել հաճախադեպ են միայն ստորոգյալով հեղինակի խոսքերը՝ արտահայտված գերազանցապես աssել բայով, որը, չնորհիվ բառիմաստի ընդլայնման, գործածվում է ոչ միայն պատմողական, այլև՝ ուրիշ հնչերանգով ուղղակի խոսքերին զուգորդված: Ասացողներն իրարահաջորդ ուղղակի խոսքերից առաջ երբեմն գործածում են միայն հեղինակի և ուղղակի խոսքերն իրար կապակցող թե չաղկապը, երբեմն էլ զեղչում են նաև այն: Հեղինակի խոսքի մասամբ կամ լրիվ զեղչմամբ, նախ՝ ապահովվում է աչխույժ երկխոսություն, ապա՝ առաջին պլան է մղվում ուղղակի խոսքով արտահայտվող գործողությունը, ինչը պատումներում նկարագրվող դեպքերի զարգացումը խթանող կարևորագույն միջոց է: Էպիկական գործերին հատուկ ոճական այս հնարքը բարբառային և խոսակցական լեզվի ազդեցության հետևանք է: Այն տեղ է գտել նաև արդի հայ արձակում:

Գուրգեն Խաչատրյան – բ. գ. դ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆ.: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի պատմություն, հայերենի չարահյուսություն, ոճագիտություն: Հեղինակ է 5 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: gxachatryan@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Գ. Կ. 2016, Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում. – «Լեզու և լեզվաբանություն», 1, էջ 5–17:

Կատվալյան Վ. Լ. 2016, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Երևան, «Աստղիկ», 536 էջ:

Մաթևոսյան Հ. 1985, Երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, «Սովետական գրող» հրատ., 616 էջ:

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913, Տփղիս, Արագատիպ Մարտիրոս Մնացականեանցի, 396 էջ:

կապների միջոցով), որի արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, անհնական ուղղակի խոսք:

Սասնա ծռեր. 1951, խմբագրեց ակադ. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կարապետ Մ.– Օհանջանյանի, մասն երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1006 էջ:

Սասնա ծռեր. 1979, Պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 584 էջ:

ДИАЛОГИ В ЭПОСЕ «САСУНСКИЕ ХРАБРЕЦЫ»

ГУРГЕН ХАЧАТРЯН

Р е з ю м е

Ключевые слова: глагол речи, сказитель, подлежащее, диалог, эллипсис, сочетать, обращение, авторская речь, синтаксис, сказание, прямая речь.

В диалогах эпоса «Сасунские храбрецы» синтаксис авторской речи (подлежащее– выражающее речь глагол-сказуемое–косвенное дополнение) и содержание почти не меняются. Этим обусловлено то, что указанные компоненты не всегда имеют вербальное выражение, которое, однако, как правило, подразумевается. В многочисленных вариантах эпоса чаще всего встречается авторская речь только со сказуемым, выраженным преимущественно глаголом ասել «сказать», который в результате расширения лексического значения, употребляется не только в повествовании, но и в сочетании с прямой речью, имеющей разные семантические оттенки.

Сказители перед следующей друг за другом прямой речью иногда используют союз **թե** («что»), а иногда пропускают его тоже. Частичным или полным эллипсисом авторской речи обеспечивается, с одной стороны, динамичный диалог, а с другой стороны, на передний план выходит действие, выраженное прямой речью, что является важнейшим средством развития описываемых событий в разных вариантах эпоса. Подобный стилистический прием, характерный для эпических действий, возник в результате влияния диалектов и разговорного языка. Это явление наблюдается и в современной армянской прозе.

Гурген Хачатрян – д. филол. н., проф. кафедры армянского языка и литературы Ванадзорского государственного университета им. О. Туманяна. Научные интересы: история армянского языка, синтаксис армянского языка, стилистика. Автор 5 монографий и более 100 статей.
gxachatryan@yahoo.com

DIALOGUES IN THE EPIC "THE DAREDEVILS OF SASSOUN"

GURGEN KHACHATRYAN

S u m m a r y

Key words: verbs of speech, narrator, subject, dialogue, ellipsis, combine with, vocative, author's speech, syntax, epic, direct speech.

In the dialogues of the epic "The Daredevils of Sassoun", the syntax (subject-expressing speech, verb-predicate-indirect object) and the content of the author's speech mostly remain the same. This is due to the fact that the above mentioned components do not always have a verbal expression which, however, as a rule, is implied. In numerous versions of the epic, most often the author's speech is found only with a predicate expressed mainly with a verb ասել "to say", which, as a result of extension of the lexical meaning, is used not only in the narrative but also in the combination with direct speech with different semantic shades.

Narrators sometimes use conjunction թե ("that") before successive direct speech, other times they also omit it.

Partial or complete ellipsis of the author's speech provides, on one hand, a dynamic dialogue and, on the other hand, the action expressed by the direct speech is brought to the fore, which is the most important means of developing the described events in different versions of the epic. Such a stylistic technique, characteristic for epic actions, arose as a result of the influence of dialects and colloquial language. This phenomenon is also observed in modern Armenian prose.

Gurgen Khachatryan – Doctor of Philological Sciences, Professor of the Department of Armenian Language and Literature of Vanadzor State University after Hovh. Tumanyan. Scientific interests: History of Armenian Language, Syntax of Modern Armenian, Stylistics. Author of 5 monographs and more than 100 articles. gxachatryan@yahoo.com

Պատմագրանդակտիկական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

ՀՏԴ : 85-13

Doi:10.54503/0135-0536-2022.3-166

ՊԻԳՄԱԼԻՈՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ*

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ այլաբանություն, ընություն, դրամա, էսթետիկական, թեմատիկ պայմանաճև, նախատիպ, ներդաշնակություն, նյութ ու ճև, հայեցում:

Նախաբան

Առասպելն ավանդվել է Օվիդիուսի «Մետամորֆոզներով» և իր հետագա անդրադարձումներն ունի՝ սկսած Ժան-Ժակ Ռուսսոյի «Պիգմալիոնը» մոնոդրամայից (1770 թ.) և ամբողջացած Բեռնարդ Շոուի նույնանուն հոգեբանական կատակերգությամբ (1913 թ.): Օվիդիուսի չափածո (հեքսամետրոն) գրառումն իր խնդրով՝ ի հաստատումն արվեստի և իրականության նույնացման, ավարտված է, բայց անավարտ է թվում այժմեության հեռանկարում: Դա առիթ է տալիս թեմայի խորքը նայելու, շոշափելու գրույցի իրական հողն ու հարց տալու, թե որտե՞ղ է գեղարվեստական ստեղծագործության կյանքը, որքանո՞վ ստեղծագործողի հայեցումներում և որքանով արտաքին զննումներում:

Այս առասպելի մատչելի իմաստը, համաճայն «սիրո արվեստը» վերլուծող Օվիդիուսի, սիրո աստվածուհու՝ Աֆրոդիտեի չնորհն է Պիգմալիոն արձանագործին որպես ներշնչում: Բայց արվեստագետը չփոթվել է, համայվել իր ստեղծած մարմարե գեղեցկուհու պատկերով ու փարվել նրան. «Օ՛, եթե դու կենդանանայիր ու խոսեիր ...»[1]: Նա զոհեր է մատուցում սիրո աստվածուհուն, խունկ ծխում, աղոթում ու խնդրում, թե «տուր ինձ մի կին այնքան գեղեցիկ, որքան իմ կերտած այս արձանը»[2]: Եվ տրվում է. արձանն իջնում է պատվանդանից: Ու՞ր մնաց այլևս արվեստը: Սա հայտնությո՞ւն է, փլուզո՞ւմ, թե՞ այլաբանություն: Բայց գրույցն արվեստի մասին չէ, այլ սիրո աստվածուհու հրաշագործության: Առասպելն ինտրիգ է թաքցնում և դրամա: Եթե այլաբանությանը նայենք, արձանի պատվանդանից իջնելն ընդունելու ենք որպես ճշմարտություն: Դա ճշմարիտ է այնքանով, որքանով ճշմարիտ է ստեղծագործողի ու ընկալողի ներշնչումը: Գեղարվեստական ստեղծագործության կյանքն է այդ, բայց ինչպիսի՞ ներշնչում և ինչպիսի՞ կյանք:

Առասպելի անմիջական անդրադարձումները

Առաջին անդրադարձը, ինչպես ասվեց, Ժան-Ժակ Ռուսսոյի սենտիմենտալ մոնոդրաման է, որ Գյոթեն համարել է դարաշրջան ստեղծող գործ, այն է՝

---

* *Ներկայացվել է 28. X. 2022 թ., գրախոսվել է 03. XI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] Овидий. 1937, 252.

[2] Овидий. 1937, 252.

եվրոպական ռոմանտիզմի սկիզբը: Սա արձակ բանաստեղծություն է դրամատիկական մենախոսության տեսքով, որ բեմ է բարձրացվել երաժշտությամբ (Փարիզ, 1775 թ., երաժշտ. Օ. Կոանիե) և ընդունվել որպես նոր ժանր «մելոդրամա» ձևական անվանումով: Որքանով է այս պիեսը խաղային, առանձին հարց է, կապված ժամանակի բեմական պատկերացումների հետ: Ինչպե՞ս է իմաստավորվում թեման, որտե՞ղ է արվեստի իրականությունը, և որտե՞ղ՝ կյանքը: Ռուսսոն է մղում այս հարցին իր սենտիմենտալ մեկնությամբ: Նրա մոնոդրամայում արվեստի և իրականության հարցը ոչ այնքան գեղագիտական է, որքան հոգեբանական, ավելին՝ հոգեվիճակ է, և դրաման այստեղից էլ սկսվում է: Ստեղծագործության ընթացքն իր տարերքում ավարտված է, արդյունքն՝ օտարված, ստեղծագործողը՝ մենակ, ասես՝ կողոպտված: Հեղինակի ընդարձակ ռեմարկում նկարագրված է տեսարանը: Բեմի խորքում և հանդիսականի ուշադրության կենտրոնում է ավարտված ու կտավով ծածկված արձանը: Նրա քողարկված ներկայությունը մթնոլորտ է ստեղծում, և այդ մթնոլորտը կրողը ներկա գործող անձն է: Նրա ձեռքի տակ եղած նյութը կենդանի իրականություն է եղել իր համար, ինքն այդ իրականության մեջ, հիմա այդտեղից դուրս: Մնում է հիշել, թե ինչ զգացումներով ու պատկերացումներով է մոտեցել նյութի իրականությանը: Շուրջը սկսված ու կիսատ թողնված գործեր են, ոչինչ չասող: Պետք է նորից չոչափել նյութը, զգալ մարմարի ճերմակամրությունը: Նա վերցնում է մուրճն ու մոտենում անավարտ գործերից մեկին. մեկ-երկու հարված ու հեռանում է անբավական:

«Պիգմալիոն. Զկա այստեղ ոչ կյանք, ոչ հոգի: Սա միայն քար է… Օ իմ հանճար, որտե՞ղ ես … Մարմարը պաղ է ձեռքիդ տակ»[3]:

Արվեստագետն ստեղծել է մի գործ ու քողարկել, թաքցրել սեփական հայացքից, ինչպես թաքցնում են թանկ զգացմունքը: Եվ զգում է, որ հեռավորություն է ստեղծվել իր և իր ստեղծածի միջև: Հեղինակի ռեմարկն այստեղ պարզ միզանսցեն է: Արձանագործը մոտենում է ծածկված արձանին ու հեռանում, քայլում հետ ու առաջ, կանգ առնում, հոգոց քաշում ու նայում հեռվից:

«Պիգմալիոն. Ինչո՞ւ եմ նրան թաքցնում, ինչի՞ եմ հանելու դրանով»[4]:

Արձանն այս սոսկ երևակայության արդյունք է: Արձանագործը չի ունեցել ընորդուհի, երևակայել է ծովային աստվածուհյան՝ Ներեոսի հիսուն աղջիկներից Գալաթեայի գեղեցկությունն ու որոնել նրան մարմարի ճերմակության մեջ, գտել, թաքցրել և հիմա ուզում է վերապրել իր նախնական հույզը: Նա հեռու է կանգնում ծածկված արձանից, ապա մոտենում, ձեռքն զգուշորեն մոտեցնում ծածկոցին ու հետ քաշվում:

«Պիգմալիոն. Ինձ սարսափ է պատել. կարծես դիպչում եմ անիմանալի մի աստվածուհյան զոհասեղանին: Բայց սա քար է, Պիգմալիոն, քո ձեռքի գործը»[5]:

Նա ձեռքի արագ շարժումով հետ է քաշում ծածկոցն ու ընկնում երևանի-վայր, փարվում արձանի ոտքերին:

[3] Русско. 1961, 505.
[4] Русско. 1961, 506.
[5] Русско. 1961, 507.

«Պիգմալիոն. Օ՛, Գալաթեա, ընդունիր իմ խոնհարումը: Ես ուզում էի ղիցուհի ստեղծել, ստեղծեցի աստվածուհի: Աֆրոդիտեն ինքը չի հասնի քո գեղեցկությանը: Բնությունը չի ստեղծել ավելի գեղեցիկ էակ: Այս գեղեցկությունը դուրս է եկել իմ ձեռքից, իմ ձեռքը դիպել է նրան ...»[6]:

Այս վերջին բառերի հետ խորհրդապաշտությունը տեղի է տալիս զգայականության առջև: Արձանագործն իր արվեստում խորհո՞րդ է որոնում, թե՞ իրականություն, մի՞ստիկա, թե՞ էրոտիկա, արվե՞ստ, թե՞ կյանք:

«Պիգմալիոն. Ես այստեղ սխալ եմ տեսնում: Զգեստը մի քիչ չատ է ծածկում մերկությունը. պետք է կտրել... (վերցնում է հատիչը, թեթևորեն դիպչում մարմարին ու ցնցվում): Չեմ կարող, չեմ համարձակվում... Օ՛, աստվածներ, մարմինը դողում է, դիմադրում է»[7]:

Դիմադրում է նյու՞թը, իմաստը՞, թե՞ ձևը: Հաջորդ խոսքերն արտասանվում են ինքնամոռացության ու զառանցանքի մեջ: Արձանն իջնու՞մ է պատվանդանից, թե՞ թվում է այդ: Հեղինակն այստեղ ռեմարկային հիշեցում չունի, դրությունը թողել է ընթերցողի ու դերակատարի երևակայությանը: Արձանագործն ուզում է հավատալ տեսիլքին ու սթափվում է, սկսում է հեգնել իրեն:

«Պիգմալիոն. Օ՛, դժբախտ, քո զառանցանքը հասավ վերջին սահմանին: Բանականությունը լքում է քեզ... Ինչ երջանկություն. քարով հմայվածը խելքը թոցրել է, տեսիլքները հետապնդում են նրան...»[8]:

Գալաթեան կանգնած է Պիգմալիոնի առջև որպես կուլիսից դուրս եկած անձ կամ գուցե պատրանք, գուցե չի երևալու, միայն ձա՞յնն է լսվելու: Ռեմարկվել է ըստ ժամանակի թատրոնի պայմանականության:

«Գալաթեա. Ես եմ:

Պիգմալիոն. Զգացմունքների հրաշալի խաբկանք, որ անգամ լսողությանս մեջ է, ա՜խ... մի լքիր ինձ:

Գալաթեա (ձեռքը դնում է մարմարին). Ես չեմ:

Պիգմալիոն. (Գալաթեայի ձեռքը սեղմում է կրծքին):

Գալաթեա. Ա՜խ, այս ես եմ:

Պիգմալիոն. Այո՛, թանկ և հրաշալի կերտվածք, կատարյալ գործ իմ ձեռքի, իմ սրտի ու իմ աստվածների: Ես տվել եմ քեզ իմ էությունն ու կապրեմ միայն քեզանում»[9]:

Այստեղ է դրամայի սենտիմենտալ ավարտն ու վճիռը: Ստեղծագործողը չի պատկերացնում իր կյանքն իր ստեղծագործությունից դուրս, և հոգեբանական ու էսթետիկական պահերը նույնացված են: Ստեղծագործողի սենտիմենտալ հայեցումն այստեղ վեր է ֆիզիկական նյութից, որ նրա խարիսխն է և դիմադրում է: Խարիսխի մյուս թևը չնչող իրականության մեջ է, և ինչն ինչի՞ն է դիմադրում, մարմա՞րը հատիչին, բնությու՞նն ստեղծագործողին, թե՞ ստեղծագործողը բնությանը: Սենտիմենտալիզմն առաջնորդ է կարգում մարդկային հույզն ու հանձնվում նրան, և դա նրա էսթետիկական սկզբունքն է: Ռոմանտիզմը կրում է հույզը որպես բնության ու արվեստի օրենք: Կարղանք

---

[6] Русско. 1961, 507.

[7] Русско. 1961, 507.

[8] Русско. 1961, 509.

[9] Русско. 1961, 510.

Պուշկինյան ժամանակի բանաստեղծ Եվգենի Բարատինկու «Արձանագործը» բանաստեղծությունը.

Հառել է հայացքը մարմարին,
Դիցուհու մի պատկեր է փնտրում,
Իր սրտի զարկը մուրճի ծայրին է,
Քարը պաղ է, ծանր է ու լուռ:

Ստեղծագործողը դժվար է հասնում կամ չի հասնում այն սահմանին, որտեղ նյութը տեղի է տալու էսթետիկական հայեցման առջև: Բայց հայեցումն ինչպես էլ իրականանա, չի վերաճելու իրականության.

Պատասխան մի ծաղիկ թե ծաղկի,
Ու ժպտա մարմարե դիցուհին,
Տարփանքից այտն էլ թե շիկնի,
Չի տրվի երբեք հանճարին[10]:

Եթե սա այլաբանություն է, փորձենք այլաբանական տեսք տալ հարցին: Գալաթեան պատվանդանից իջնելու է որպես ո՞վ, և ինչպե՞ս է ընդունվելու ստեղծողի կողմից: Պատասխանը տալիս է հայ բանաստեղծը՝ Գեղամ Սարյանն իր «Մարմարակերտ գեղուհին» էպիկական քերթվածով, Օվիդիուսի «Մետամորֆոզներ» անմիջական տպավորությամբ՝ անգամ հեքսամետրոնին հետևելով: Այստեղ բոլոր կանանցից հրաժարված Պիգմալիոնն ընտրել է մի վիճակ, որին Կանտի լեզվով ասելու ենք «անշահ հայեցում»: Իսկ հայեցման թեման կնոջ առասպելն է.

Ապրեց մենակ, բայց նրա խոհերի մեջ մշտավառ
Ճառագայթում էր չքնաղ ու անմարմին մի էակ,
Իր հանճարի պատկերած գեղեցկության մի տիպար
Լուռ, մենավոր իր հոգու այցելուն էր չարունակ[11]:

Եվ արձանագործն սկսում է մարմին տալ իր հայեցմանը բնության զգայելի տարրերից. ծովի փրփուրի ճերմակությունն, արեգակի ճառագայթները, դիչերային աստղերի առկայծ ու այս ամենի հետ բարության խորհուրդը՝ «անմեղության եղնիկներից անտառի»[12]: Բայց ահա ավարտելով գործը՝ նա սկսում է իրական կին որոնել մարմարե կերտվածքում: Նա մտովի տեսել է մի պատկեր ու չոչափել մարմարի կարծրությունն ու մաս-մաս հետ է քաշել քարե ծածկոցը, ի հայտ բերել իր երազանքը մարմարի ողորկության ու ճերմակ պաղության մեջ.

Ահա, թե հանկարծ ջերմանար գեղեցկուհու այտը պաղ,
Ահա, թե իրեն երկարեր բազուկներն իր սպիտակ[13]:

[10] Поэты пушкинской поры. 1985, 395 *(Թարգմանությունը մերն է – Հ. Հ.):*
[11] *Սարյան. 1969, 118:*
[12] *Սարյան. 1969, 118:*
[13] *Սարյան. 1969, 119:*

Մարդն արվեստի է հասել, բայց իր երազանքն արվեստից դուրս է: Սիրո աստվածուհին, եթե առասպելին ենք հետևելու, լսում է երազողի աղոթքը և …

Եվ Պիգմալիոնն անսահման խնդությունից պրբեցած
Հրաշակերտ գեղուհու փարթամ ուսերը գրկեց,
Պառվանդանի վրայից համբուրելով բերեց ցած,
Նայեց …

Այստեղ մի ցնցում կա ու դրամատիկական դաղար, ինչպես կլասիցիստական դրամայի դարձակետում (պերիպետիա): Բանաստեղծը չտապել է ու չրջանցել այդ դաղարը, որտեղ անհատականությունը բախվում է իր իսկ սկզբունքին՝ արվե՞ստ, թե՞ իրականություն: Արձանի պատվանդանից իջնելն էսթետիկական հույզի վերազումն է և սթափության պահ.

… զղջաց սարսափով, դարձավ նրան ու դոչեց.
—Դարձիր նորից դեպի քո պատվանդանի բարձունքին.
Այնտեղ արվեստ էիր դու, անմահ էիր ու անհաս…[14]

Առասպելն ավելի ճշմարիտ լուծում չէր կարող ունենալ բանաստեղծի ու արվեստագետի հայացքում: Այն, ինչ իրային է ու ճշմարիտ մարմարե կերտվածքում, չի կարող ունենալ ուրիշ կյանք: Նրա ճշմարտությունը հնարավոր է ոչ այլ կերպ, քան քարե ամրության մեջ: Արվեստագետի պատկերացմանն ու երազանքին պատասխանում է նյութն իր նյութականությամբ: Հայ բանաստեղծի մեկնությամբ դիմադրողը նյութը չէ, այլ ստեղծագործողը, որ տարրանջատում է հոգեբանական ու էսթետիկական պահերն արվեստում: Ռուսսոյի մոնոդրամայում մեր հարցին տրվում է սենտիմենտալ պատասխան ի հաստատումն այն մտքի, որ ստեղծագործողի կյանքը նրա ստեղծագործության մեջ է, բայց որքանո՞վ և ի՞նչ առումով: Եթե սա դրամա է, ի՞նչ է պատասխանելու դրամայի հերոսուհին, որ ներկա չէ: Նրա ներկայությունն ստեղծողի երևակայության մեջ է: Այստեղ է ստեղծագործության կյանքն այնքանով, որքանով երևակայությունն ստեղծագործողի համար զգացական վիճակ է և իրականության հետ ունեցած հարաբերության մեջ կարող է վերաճել դրամայի:

Առասպելի դրամատիկական փոխակերպումը

XIX դ. ռոմանտիկական թատրոնը լուծությամբ է անցել այս թեմայի, ինչպես և Ռուսսոյի մոնոդրամայի կողքով, եթե նկատի չառնենք Ֆրանց Ջուպպեի «Գեղեցկուհի Գալաթեան» օպերետը (Բեռլին, «Մայզելս», 1865 թ.)[15]: Առասպելի ինտրիգն ի հայտ էր գալու Բեռնարդ Շոուի «Պիգմալիոնը» հոգեբանական կատակերգությամբ: Հեղինակի ներշնչման աղբյուրը կենդանի իրականությունից է և արվեստից կամ արվեստի կենդանի իրականությունից՝ թատրոնից ու դերասանական անձից: Դժվար է իմանալ՝ որտե՞ղ է նախասակիզբը. հեղինակը ո՞ր նախատիպից է սկսել: Գրական վկայություններում մեր

[14] *Սարյան. 1969, 120:*

[15] Театральная энциклопедия. 1963, 815.

առջև երկուսն են: Առաջինը պիեսի սկիզբում է, ուր մասնակից է հեղինակի դիմակը՝ Անցորդ անվանումով, երկրորդը դերասանուհին է, ում համար նախատեսվել է հերոսուհու դերը: Անցորդը գրառում է փողոցում հանդիպած ծաղկավաճառուհու խոսքերն ու անհոդաբաշխ բացականչությունները: Աղջիկն անհանգստանում է.

«Ծաղկավաճառուհի. Ինչու՞ է նա գրում իմ խոսքերը: Ես ի՞նչ եմ արել: Ես իրավունք ունեմ ծաղիկ ծախելու»[16]:

Անցորդը, որ հետո ներկայանալու է միստր Հիգգինս անունով, կանգ է առել՝ մատիտն ու ծոցատետրը ձեռքին: Նա մտածված կամ պատահաբար գտել է իր մտահղացման նյութը մեծ քաղաքի ծայրամասային փողոցում: Ծաղիկը բնության մասնիկն է ու սիմվոլը, ծաղկավաճառուհին բնության անմշակ ներկայությունն իր միջավայրի պահվածքով ու տոնայնությամբ. հանդգնությունն, դիմացինին ծաղրող ակնարկներ, կոպիտ արտասանվածք, սրամտությունն և միաժամանակ կարեկցանք հայցող խոսքեր՝ «ես մի խղճալի օրիորդ...»[17]: Նրա խնդիրը չահը չէ, այլ արժանապատվությունը. ինչո՞վ է պակաս իր դիմաց դուրս եկողից, քաղքենի լինի, թե ազնվական: Սա ոչ այնքան տիպ է, որքան բնավորություն, դրամատուրգիական նվիրակարգից դուրս: Եվ ի՞նչ կարող է հուշել ընթերցողին ու կերպարը վինտրողին նրա ձեռքի ծաղիկը, որ կարծես լույսի թեթև շողք է հեղինակի ընտրած փողոցի խորապատկերում: Ի՞նչ է ընկալվում այնտեղ, եթե պիեսի հերոսուհու նախատիպը ծաղկավաճառուհին է, և մյուս կողմից հեղինակին ներշնչում տվող դերասանուհին:

Հեղինակն իր մտահղացման մեջ, եթե պիեսի վերնագրին ենք հետևում, արձանագործ Պիգմալիոնն է, թեթևակի ինքնահեգնանքով, իր դիմաց կենդանի բնության չունչը, մտքում առասպելից եկող դիցուհին և առասպելից էլ վեր՝ XX դարասկզբի անգլիական բեմի առաջնուհին՝ Սթեյլա Պատրիկ Քեմբլը՝ (1865–1940 թթ.) իր «վտանգավոր հմայքով» (perilously bewitching)[18] և բեմական անսպասելիությամբ:

Հնարավո՞ր էր նրան որևէ դերով մոտեցնել արդիականությանը, եթե դերակատարումներին նայենք. Կատարին (Շեքսպիր՝ «Անսանձի սանձահարումը»)՝ կամակոր ու հանդուգն, Լեդի Մակբեթ («Մակբեթ»)՝ ձեռքերն արյունոտ, և սրանց կողքին անմեղության սիմվոլացում Օֆելիա («Համլետ»)՝ զատկածաղիկները ձեռքին: Իրական ու բեմական կերպարները համեմատելի չեն, և էականը դերասանուհու անձն է: Ծաղիկը թույլ մի շողք է, որ ուղղում ենք երկու նախատիպերի դեմքին՝ պատկերացնելու համար դերասանուհու հնարավորությունները հեղինակի մտահղացման շրջանակում:

«Օֆելիա. Ահա ձեզ սամիթ և աղավնախոտ ... Այս էլ ահա զատկածաղիկ: Կուզենայի ձեզ մանուշակներ էլ նվիրել, բայց ...»[19]:

«Իլայզը. Յոհ, առհ, ծաղիկներ գնեք, կապիտան, ծաղիկներ, ա՛յ, այս ջոկովի ծաղկեփունջը մի խեղճ օրիորդից»[20]:

[16] Шоу. 1980, 214.
[17] Шоу. 1980, 213.
[18] Hartnoll. 1980, 83.
[19] *Շեքսպիր. 1951, 214:*
[20] Шоу. 1980, 214.

Երկու տեղում էլ տեսնում ենք թախիծ, կարոտ ու ներդաշնակության ձգտում: Ինչ-որ բան բացահայտ է, ինչ-որ բան թաքնված: Երկու հոգիներն էլ ձգտում են հավասարակշիռ վիճակի, փնտրում են չունեցածն ու կորցրածը, իսկ հեղինակն այս նյութից դուրս է բերում XX դ. Գալաթեային. մի դեր, որ մրցորդային էր լինելու ժամանակի ու հետագայի դերասանուհիների համար:

Դերը չի տրամադրել բեմական առաջնուհու պատվանդանին կանգնած դերասանուհուն: Հեղինակն ընդարձակ մի նամակով բացատրել է խնդրի էությունը և մերժվել: Գրվել է երկրորդ նամակը, դարձյալ մերժում, ապա երրորդը, չորրորդը. և այսպես մեկ տարի՝ 1913–1914 թվականներ: Ստեղծվել է մի նամականի դրամա, որ կարելի է անվանել Պիգմալիոնի առասպելի փիլիսոփայական մեկնությունը: Դերասանուհին ի վերջո տվել է իր համաձայնությունը՝ կարծես հասկանալով, որ սա իր ճակատագրական դերն է: Իսկ նրանց նամակագրությունը, որ հետագայում հրատարակվելու էր, թատերախոսները համարելու էին «պլատոնական մտերմություն»[21]: Այդ մտերմության խմաստը Պիգմալիոնի առասպելի հակադարձումն էր. ոչ թե ինչպես է գաղափարն իջնում պատվանդանից, այլ ինչպես է բարձրացվում պատվանդան: Ծաղիկն այստեղ ընթերցողին, բեմադրողին, դերասանուհուն ու հանդիսականին ուղղված էսթետիկական ակնարկ է՝ ի հիշեցում բնության և արվեստի համերաշխության: Հեղինակն իր հերոսի հետ կարգավորողն է այդ վիճակի: Նա հավատում է լեզվի անսահման հնարավորություններին, համոզված է, որ մշակելով մարդու լեզուն, կարթնացնես նրա հոգևոր էությունը: Եվ հեղինակն իր դիմակի համար ընտրել է ժամանակի անգլիական բեմում ամենագեղեցիկ խոսող դերասանին. Բիրբոմ Թրի (1853–1917 թթ.), սուր կատակերգականից (Ֆալստաֆ) մինչև խոր ողբերգականի (Համլետ) հասնող մի արտիստ: Հիգինսի դերը, եթե տեքստից ելնենք, դրամատիկական է, բայց որոշ դրույթյուններ՝ չփոթմունք, սրտնեղություն, ճչմարտությունից հեգնանքով պաշտպանվել և այլն, նրան գցում են կատակերգական վիճակների մեջ: Առավել դրամատիկական է նրա դաստիարակությանը հանձնված օրիորդի դերը: Հիգինսի համար նա փորձարկվող նյութ է, բայց փորձարկողը լա՞վ է ճանաչում նյութը, գիտե՞ ինչ է ստեղծելու իր խնդրից վեր, իր նպատակը գերազանցող: Այստեղ է և՛ դրաման, և՛ կատակերգությունը: Օրիորդի բառապաշարի ու արտասանվածքի փոխվելով՝ ամբողջապես փոխվում է նրա մտահոգեկան կերտվածքը: Այս բարեկիրթ լեզին այլևս համատեղելի չէ իր սոցիալական վիճակի հետ և գիտակցում է իր մտավոր ու բարոյական գերազանցությունն իրեն կրթողի հանդեպ: Նրա հանդուգն հեգնանքն այստեղ նրբանում է, դառնում սալոնային ու հրապուրիչ: Ով գիտե, թե ով է եղել իր խելքով ու բարեկրթությամբ վայլող այս լեզին: Ստեղծողը միայն գիտե և չի ուզում տեսնել նրան այդքան վեր ու վեհ: Այս կինը հանգիստ ու վստահ կրում է իր արժեքն ու արժանապատվությունը, իսկ նրանով հպարտացող միստր Հիգինսը լքված է ու անօգնական: Նա չի կարողանում և չի ուզում հասկանալ, թե ինչու իր ստեղծագործությունն իր սեփականությունը չէ: Նա վախենում է կորցնելուց ու արդեն կորցրել է իր կյանքը գարգարող գեղեցիկ առարկան: Չի ճանաչել մարդուն, չի կարողացել կամ չի մտածել հոգեկան չփում ստեղծելու մասին և

[21] Taylor. 1979, 53.

հիմա ուղիներ է փնտրում՝ դժվարությամբ հորինվող խոսքեր, մի քիչ քնքշանք ու սենտիմենտ, ապա ձևացյալ վստահություն, նահանջ ու ինքնահեգնանք, և…

«Իլայզը. *Մի փորձեք դարձյալ չփոթեցնել ինձ: Ձեզ վիճակված է ղեկավարվել առանց ինձ»*[22]:

Այս խոսքն արդեն դիմացինին շրջագծից դուրս նետող հարված է, նույնն է թե պատվանդանից իջնող Գալաթեան ապտակեր Պիգմալիոնին: Ի՞նչ է պատասխանելու միստր Հիգգինսը, որ չնսեմանա իր գտած և իրենից հեռացող ճշմարտության առջև: Նա սկսում է ձևանալ, ասել այն, ինչ չի մտածում, բայց չփոթվում է ու տեղի տալիս:

«Հիգգինս. *Այո՛, ոչ մեկն ինձ պետք չէ. ես ունեմ իմ սեփական հոգին և ինձ տրված աստվածային հրի կայծը: Բայց դու ես ինձանից պակասելու, Իլայզը: Ես սովոր եմ քո ներկայությանը, քո ձայնին ու քո տեսքին, որոնք ինձ անգամ* (even) *դուր են գալիս»*[23]:

Անզգույշ մի բառ է դուրս թռչում «սիրահարի» բերանից՝ even, *և սիրո խոստովանությունը հակառակ ներգործությունն է ունենում: Հեղինակը սոցիալ-հոգեբանական հակադրվածություն է ստեղծել այս տևական, բեմական ժամանակամիջոցի առումով երկար տեսարանում: Իրավիճակի իմաստը, սակայն, ավելի խորն է երևում էսթետիկական տեսակետից: Ստեղծագործողը չի կարողանում բաժանվել իր ստեղծագործությունից, ինչպես այն նկարիչը, որ վաճառքի չի դնում իր ամենասիրելի գործը: Հիգգինսն այս վիճակում է ու փորձում է բացատրել իր՝ որպես ստեղծագործողի դրությունը:*

«Հիգգինս. *Ինձ իրականում հետաքրքրում են մարդուս բնությունն ու կյանքը: Դուք մասնիկն եք այդ բնության, ինչին երբևէ հանդիպել եմ: Ես իմ հոգին եմ դրել այդտեղ: Ուրիշ ի՞նչ եք ուզում»*[24]:

Խոսքի մեջ անցնում է անուղղակի խոստովանության և դարձյալ անզգույշ խոսք է ասում՝ անհեթեթության հասնող: Ի՞նչ կարող է ուզենալ կամ պահանջել արվեստը ստեղծագործողից: Պատասխանը փիլիսոփայական է:

«Իլայզը. *Ուզում եմ անտարբեր լինել այն վիճակի հանդեպ, ինչի հանդեպ անտարբեր եմ»*[25]:

Իրականությունը դուրս է ստեղծագործողի խնդիրներից, ինչպես և ստեղծագործությունն իր օբյեկտիվ բովանդակությամբ՝ ստեղծագործողի սուբյեկտիվ մտահղացումից: Դե, արի ու հասկացիր, մարդուս բնությամբ հետաքրքրվող լեզվաբան-հնչյունագետ կամ արվեստագետ՝ ինչո՞ւ են բնությունն ու նրա մասնիկն անհաղորդ ու անկարեկից քո հանդեպ: Արվեստագետը կանգնած է չգիտակցված հարցի առջև և գտնում է խոսքեր, որ կարծես իրենը չեն, կարդացել է կամ լսել:

«Հիգգինս. *… ինձ թողեք ձեր հոգին, իսկ ձեր ձայնն ու տեսքը տարեք ձեզ հետ»*[26]:

---

[22] Ш о у. 1980, 285.
[23] Ш о у. 1980, 285.
[24] Ш о у. 1980, 286.
[25] Ш о у. 1980, 286.
[26] Ш о у. 1980, 286.

Ինչպե՞ս ենք հասկանալու այստեղ անդլերեն հոգի (soul) *բառը, չու՞նչ, իմա՞ստ, ի՞նչ ներկայություն, որ սահմանելի չէ: Հերոսուհին ու ղերասանուհին այստեղ նույնացված են, իսկ պիեսի հերոսը բախվում է իր համար անմատչելի մի արժեքի և համեմատական է փնտրում:*

«Հիգգինս. Դուք ամրոցի աշտարակ եք ...»[27]:

Այս խոսքը կարծես ուղղված է «վտանգավոր հմայքի» տեր ղերասանուհուն, որ, ընդդիմանալով դերին, ստեղծելու էր իր դյուխզործոցը, քննադատների խոսքով՝ «վերջին ու հզոր խոսքն իր լոնդոնյան կարիերայում»[28]: Եվ իսկապես՝ խոսքը ու վերջին:

Դերասանուհին այս դերով բեմ է բարձրացել մեկ թատերաշրջանում (մինչև 1914-ի վերջը) հարյուր տասնութ անգամ և ... այլևս ոչ մի դեր, հեռացել է թատրոնից՝ թողնելով այնտեղ իր առասպելը: Վերադարձել է տարիներ անց՝ 20-ական թվականների վերջին, բայց ոչ որպես Իլյազը Դուլիթլ:

Ո՛չ հեղինակը, ո՛չ էլ ղերասանուհին չէին կարող մտածել, որ իրենց «պլատոնական մտերմությունը» ենթարկվելու է մի նոր փոխակերպման՝ իրենցից հետո, պիեսից դուրս, օվկիանոսի այն կողմում: Այդ թեմատիկ պայմանաձևով թատերագրի անուն էր ձեռք բերելու համեստ մի ղերասան Ջերոմ Քիլթի (1922– ?): Նա պիեսի էր վերածելու հեղինակի ու ղերասանուհու նամակագրությունը «Սիրելի ստախոս» (“Dear Liar”) *վերնագրով ու բեմադրելու Նյու Յորքի թատրոններից մեկում (1943 թ.), խաղալու Շոուի ղերը, հետագայում վերաբեմադրելու (1960 թ.)՝ Պատրիկ Քեմբըլի դերում ճանաչված դրամատիկական ղերասանուհի Կատրին Քորնելը (1898 –1974 թթ.)[29]: Շարունակվել է գեղարվեստական ստեղծագործության կյանքը թեմայի և նյութի, նյութի ու ձևի փոխակերպումներով:*

Հարցի դիալեկտիկան

Պիգմալիոնի առասպելն իր գրական և բեմական անդրադարձումներում հանգեցնում է պարզ թվացող մի հարցի. ի՞նչն է գեղարվեստական ստեղծագործության մեջ նախնական ու որոշիչ, ստեղծագործողի հայեցո՞ւմը, թե՞ մատերիայի իներցիան որպես հնարավորություն ու դիմադրություն: Ստեղծագործողն այնտեղ ներդաշնակություն է տեսնում կամ փնտրում և բախվում է նյութականության արգելքին, հակադրվում ու համերաշխվում: Դա կարող է սկսվել մի հայացքով, մի ձայն լսելով, կտավին վրձնի հպումով և գունապլաստիկայի հայտնաբերմամբ, դաշնամուրի ստեղնաշարին դիպչելով, քարի հղկումով ու զարդանախշ դուրս բերելով, վերջապես՝ լեզվով ու հնչող խոսքով ի հրավեր դեղեցկի ու ճշմարտության: Գործում է բնության և մարդու համերաշխությունը՝ որպես զգայությունների կարգավորում («զամենայն ինչ ըստ կարգի առնէ»[30]), ձևերի հայտնագործում, ոգեկոչում պատկերների ու սիմվոլների: Եթե արտալեզվական ձևերը (տարածական, ռիթմա-ժամանակային, վարքագծային և այլն) հանգեցնում են լեզվի կամ արտածվում են լեզվից ու

[27] Шоу. 1980, 291.

[28] Stanton. 1996, 95.

[29] Taylor. 1979, 53.

[30] *Դավիթ Անյաղթ. 1960, 102:*

խոսքից, եթե «լեզուն է կեցության տունը» [31]*, և «իմ լեզվի սահմաններն իմ աշխարհի սահմանների էությունն են»* [32]*, ուրեմն մեկընդմիշտ ընդունելու ենք կանտյան սկզբունքը, որ «բոլոր արվեստների չարքում առաջնագույնը պոեզիան է»* [33]*, այն «խաղը* (Spiel)*, որ ինքն է սատարում իրեն (մեր վերոհիշյալ օրինակում անձի բեմական ներկայությամբ – Հ. Հ.) և անգամ մեծացնում իր ուժերն իր համար»* [34]*: Սա այն լուռ ու մաքուր իրականությունն է, որ իր լռությամբ խաղարկում է երևութականը՝ որպես հնարավորություն «դիտելու բնությունն իր հայացքին ու ընկալմանը համապատասխան ձևով, որ չի տալիս բնությունը ո՛չ արտաքին զգայական փորձին, ո՛չ էլ բանականությանը»* [35]*: Այստեղ է դասական գեղագիտության մայր սկզբունքը՝ բնությունից վեր և ի բնություն. մի վիճակ, ինչին ենթագիտակցորեն ձգտում են ստեղծագործողն ու ստեղծագործությունն ընկալողը, և մտածողին կանգնեցնում հարցականի առջև: «Գեղարվեստական ձևը գաղտնիք է ու գաղտնիք էլ մնալու է», – գրում է Նիկոլայ Հարտմանը* [36] *և «գիտակներին» ազատում մտածելու հոգսից:*

Խնդիրն այն է, թե ի՞նչ է ստեղծագործությունը բնության նյութականության հանդեպ. չարունակությո՞ւն և փոխակերպու՞մ, թե՞ «պլատոնական մտերմություն»: Հարցերի առանցքում միշտ ձևաստեղծման խնդիրն է, որ արծարծվել է վաղ միջնադարից, աստվածաբանական դատողություններում, մղել կասկածների նյութի ու ոչնչի չուրջ և ի վերջո հանգեցրել «թաքնված ձևերի գոյությունը խոստովանելուն», նաև ընդունելուն, որ «կան ձևեր մատերիայում ծագող» [37]*: Այս հարցն իր հակասությամբ աչխուժացել է XX դարասկզբի գեղարվեստական նորագույն ուղղությունների շրջանում: Հակասություններն ի հայտ են եկել երբեմն նույն հեղինակի նույն դատողության մեջ: «Ֆիզիկական իրողությունը, – գրել է Բենեդետտո Կրոչեն, – չի թափանցում ոգու իրականություն որպես պատկեր, այլ մղում է պատկերի վերարտադրության (այն միակ պատկերի, որն էսթետիկական է), քանզի կուրորեն արթնացնում է հոգեկան օրգանիզմը և առաջացնում էսթետիկականին համարժեք տպավորություններ»* [38]*: Իսկ ի՞նչ համարենք ֆիզիկական իրողությունը, որ կույր է էսթետիկականի հանդեպ ու մասնակից է նրան: Նեոհեգելական փիլիսոփան խնդիր չունի պատասխանելու չմշակված և իր աշխարհայացքից դուրս հարցերի, կարծես տարակուսում է («էսթետիկականին համարժե՞ք ...») և մեզ կարևոր միտք է տալիս: Տարակուսանքը ժամանակի գեղարվեստական իրողություններով է պայմանավորված, ունի իր տրամաբանությունը և հանգելու է տեսականացման կարծես այլ՝ դատողությունից հեռու ուղիներում:*

Այնտեղ, որտեղ մի ակնարկ է նետում ու անցնում իդեալիստ Կրոչեն, այդտեղ անսպասելի մի տեսություն է առաջադրում էկզիստենցիալիստ Մարտին

[31] Хайдеггер. 1993, 272.
[32] Витгенштейн. 2010, 119.
[33] Кант. 1966, 330.
[34] Кант. 1966, 345.
[35] *Տե՛ս* Кант. 1966, 345.
[36] Гартман. 1958, 336.
[37] Фома Аквинский. 2019, 187.
[38] Кроче. 2000, 111.

Հայդեգերը: Դա իր՝ ժամանակին չչրջանառված և հետագայում միայն հայտնի դարձած «Գեղարվեստական ստեղծագործության ակունքը» ընդարձակ զեկուցումն է, որ կարդացվել է 1935 թվին Ֆրայբուրգի Արվեստագիտության ընկերությունում, այնուհետև՝ 1936-ին Յուրիխի համալսարանում[39]: Եթե ըստ Կրոչեի «գեղեցիկը չունի ֆիզիկական գոյություն»[40] և էսթետիկականի ներհայեցումն է, ապա Հայդեգերը դիմում է արվեստի ֆիզիկական դրսևորմանը, թե ի՞նչ ճշմարտություն է այդ, որ ձգտում է գեղեցիկի: «Տիրահռչակ էսթետիկական վերապրումն անգամ, – գրում է նա, – գեղարվեստական ստեղծագործության առարկայականության կողքով չի անցնում»[41]: Նա բերում է գրեթե բոլոր օրինակները՝ քարի ամրությունն ու ծանրությունը ճարտարապետության մեջ, հնչյունի ու տոնի հնչեղությունը երաժշտության մեջ, բառի հնչյունական որակն ու նշանակյալի առարկայական պատկերը պոեզիայում և այլն: «Բայց ստեղծագործությունն այլ բան է հայտնում, – գրում է նա, – բացահայտումն է այլ բանի <...> երբեք չի դառնում իր»[42]: Նյութն արտահայտվում է իրենով, հաղթահարվում է որպես նյութականություն և իրականում բացահայտվում է, հաստատում իր և իրենից վեր ճշմարտությունը. այն, ինչն այնկողմնային է որպես, Հերակլիտի ասած, «թաքնված հարմոնիա»:

Փորձենք հասկանալ: Ներկը նկարչի վրձնի ծայրին ներկ է, կտավի վրա ենթարկված է նկարչի հայեցմանն ու ձեռքի գծային կառավարմանն ու այլևս ներկ չէ, գույն է, լույս ու տրամադրություն. և ահա նրա ճշմարտությունը, որ նյութական չէ: Այդպես էլ երաժշտությունը: Ձայնը ֆիզիկական է, խոսքի ու երգի մեջ ֆիզիոլոգիական, երաժշտական գործիքն իր է՝ պատրաստված ոչ իրային նպատակով, երաժիշտի ձեռքում՝ տրամադրություն ու հույզ, որ կարող է մղել դրությունների, տոն տալ փիլիսոփայի մտքերին, և դա, եթե Հայդեգերի մտքին հետևենք, բնության ճշմարտությունն է մարդու մեջ: Հայդեգերը չի ներկայանում որպես էսթետ, գրեթե շրջանցում է գեղեցկի գաղափարը: Նրա բուն խնդիրն այն ճշմարտությունն է, որ դրսևորվում է արվեստի միջոցով: Ասելով իրայնություն՝ նա ոչ միայն ստեղծագործությունն է դիտում որպես իրի հետ ունեցած հարաբերություն, այլև արվեստում պատկերվող իրը իրայնությունից դուրս հարաբերությամբ: Նրա բերած օրինակը Վան Գոգի «Կոշիկներն» են, որտեղ առարկայական հավաստիությունը՝ ծանրություն ու չմաշվող ծավածք, կրում է (ոչ թե նշանակում) մի ամբողջ աշխարհ որպես ճշմարտություն: Գեղեցկի մասին ոչ մի խոսք: Դա, եթե Կրոչեի դատողությանը հետևենք, առարկայական չէ, ընկալողի հայացքում ու տրամադրության մեջ է՝ ինտենցիա:

Հայդեգերի էսթետիկան գեղագիտություն չէ, այլ զգայաբանություն, որի առանցքում անհատի հոգևոր ներկայության որոնումն է բնության և նյութի օգնությամբ: Գեղեցիկի գաղափարն այստեղ փիլիսոփայի սուբյեկտիվ հայացքից դուրս է: Դա նրա մտքի օբյեկտիվ արդյունքում է և, ինչպես նկատել է նրա առաջին հետևորդներից մեկը՝ Ֆրայբուրգի համալսարանի ուսանող Վալ-

[39] Хайдеггер. 2008, 79.
[40] Кроче. 2000, 117.
[41] Хайдеггер. 2008, 85.
[42] Хайдеггер. 2008, 87.

տեր Բիմելը, Հայդեգերը հեռացել է «արվեստի տեսության մեջ իշխող միմեզիսի կեղծ ըմբռնումից»[43], և նրա համար «գեղեցիկը ճշմարիտն արտահայտելու եղանակներից մեկն է»[44]: Բայց որքանո՞վ է ճշմարտության ձգտումն էսթետիկական: «Այնքանով, – պատասխանում է ուսանողը, – որքանով ճշմարտի էության մեջ առկա է ձգտումն առ արվեստ»[45]: Հետագա մեկնություններում էլ նկատված է, որ գեղեցիկի հարցը Հայդեգերի համար առաջին տեղում չէ: Այս է գուցե պատճառը, որ նրա բանավոր զեկուցումների հիմնական ղրույթը՝ դարձ ի բնություն, որքան էլ աշխուժություն է ստեղծել, լավ չի ըմբռնվել որպես հետազոտման եղանակ և միաժամանակ լուծության է մատնվել: Հայդեգերի զեկուցման աղազրությունը հրապարակվել է երկրորդ զեկուցումից տասնչորս տարի անց՝ 1950 թվականին, «Ջորդված արահետներ» ժողովածուի առաջին էջերում[46] հարցի համանման ու կրկնվող արծարծումներով, համախոհներ շատ չի ունեցել: Նա այստեղ համակարգ չի ստեղծել. խնդիր է առաջադրել, և խնդիրը «չորդված արահետին» ոտք դնելն էր:

Արվեստում բնության ու նյութի արտահայտչականության հարցին այլ հայացքով և այլ համատեքստում անդրադարձել է Նիկոլայ Հարտմանը, թվում է՝ Հայդեգերից անկախ, 1945-ի ապրիլ-մայիսին, Պոտսդամում, ինքնամեկուսացման վիճակում գրված և 1953-ին Բեռլինում հրատարակված «Էսթետիկայում»[47]: Հայդեգերի տեսության մեկնաբանն ու ջատագովը՝ Գեորգ-Հանս Գադամերը, հետագայում 1956-ին հրատարակված և 1967-ին կրկնված առաջաբան-ներածություններում նկատում է, որ «անգամ Հարտմանը էսթետիկական առարկան (բնության մեջ և արվեստում – Հ. Հ.) բացատրում է նույն կերպ, ինչ Հայդեգերը»[48]: Բայց Հարտմանը, որ փիլիսոփայության ընդհանուր հարցերում Հայդեգերի համախոհը չէ, գեղագիտության տեղում ճայնակից է դառնում նրան: Խնդիրը նրա համար ստեղծագործության նյութական ակունքի որոնումը չէ, այլ էսթետիկական առարկայի (արվեստում և արվեստից դուրս) բազմաշերտության քննությունը, առաջին շերտում ֆիզիկապես զգայելին, որ նա անվանում է «առաջին պլան»: Անկրականի հայեցումը, որն ըստ Կանտի, էսթետիկականի բուն էությունն է, Հարտմանի դիտումով «հետին պլանում» է և ընկալվում ու գիտակցվում է չնորհիվ ֆիզիկական դրսևորման՝ «առաջին պլանի»[49]: Հարտմանը և Հայդեգերը համերաշխ են այստեղ: Կրոչեի հետ էլ հակասություն չի երևում: Նրանց խնդիրներն ու տերմինաբանությունն են տարբեր: Կրոչեն ասում է ինտուիցիա և արտահայտություն, Հարտմանը՝ առաջին պլան և հետին պլան, Հայդեգերը՝ հող (Erde) և աշխարհ (Welf): Կրոչեն և Հարտմանը էսթետիկականի տրամաբանությունն են քննում արվեստում և արվեստից դուրս, տարբեր հայացքներով ու տարբեր համատեքստերում: Հայդեգերն իր չավիղն է բացում՝ չոշափելով գեղարվես-

[43] Бимель. 1998, 173.
[44] Бимель. 1998, 175.
[45] Бимель. 1998, 178.
[46] Гадамер. 1958, 349.
[47] Гартман. 1958, 688.
[48] Гадамер. 1958, 108.
[49] Гартман. 1958, 141.

տական ստեղծագործության իրային խարիսխը, զգայությունից գիտակցության մղելով այն, ինչը Կանտն անվանում է մատերիայի ինեռցիա: Հայդեգերը փնտրում է բնության ու բնազանցության կապն արվեստագետի աշխատանքում և արվեստն ընկալողի զգայություններում:

Խնդիրը պարզեցնում են Հայդեգերի մեկնաբանները: Գադամերը դիմում է Հերակլիտից եկող հայտնի խոսքին՝ «բնությունը սիրում է թաքնվել»[50]: Սա, իհարկե, բնագետի խոսք է, որ ծառայեցվում է գեղագիտությանը: Փիլիսոփան մոռանում է այստեղ փիլիսոփայությունը և խոսում է բանաստեղծորեն. «Բնությունը հառնում է ի լույս և թաքնվում խավարում, ծաղիկն էլ բացվում է արևի լույսին ընդառաջ և արմատներով գնում հողի խորքը»[51]: Հրաշալի է ասված: Փիլիսոփան ձեռքը դրել է արվեստագետի զարկերակին ու մղվում է դեպի, իր լեզվով ասած, ակունքը (Ursprung): *Այստեղ է արվեստագետի ու բնության կենդանի հարաբերությունը: Իսկ ի՞նչ է նշանակում Հայդեգերի ասած հողը, որ անմիջականորեն չի տեսնվում կամ շոշափվում: Դա կարող է լինել հոգեֆիզիկական, բարոյահոգեբանական, բարոյահասարակական, կրոնական և այլն: Բայց շոշափելի է խարսխի ֆիզիկական գոյությունը, ասենք՝ բնության մանրիկ եղեգնյա փողն ու այդ փողը հնչեցնողի շունչը: Ջութակի լարն ու դաշնամուրի ստեղնաշարը երաժիշտի մատների ու նյարդերի հետ տարբեր գույներ են թելադրում: Այդպես էլ նկարչի համար մի բան է մատիտը թղթի ճերմակ անապատում, և այլ բան վրձինը, ներկն ու կտավը կամ քարն արձանագործի մուրճի ու հատիչի տակ: Բնությունը տալիս է ձայներ ու հնչյուններ, տարածականություն, լույս ու ստվեր, ծավալներ, ծանրություն ու թեթևություն, շարժում, անշարժություն ու լռություն, զովություն ու ջերմություն, որոնց արձագանքը, դիմադրությունն ու պատասխանն արվեստի իրողություններն են՝ բնության բնազանցումը, իրային ու խորհրդակերպ:*

Եզրակացություն

Գեղարվեստական ստեղծագործության մեջ ոչինչ ֆիզիկապես անհենակետ չէ: Բանաստեղծությունն անգամ իր անշոշափելիությամբ ու լռությամբ մաքուր հայեցում չէ, ոչ միայն հնչյունական է իր հանգերով, ասոնանսներով ու ալիտերացիաներով, այլև հենակետեր է փնտրում բնության մեջ, և անկենդան նյութը կյանք է առնում ստեղծագործողի երևակայության մեջ, ինչպես հողից բարձրացող ծաղիկը, ինչպես կենդանացող մարմարն արձանագործի ձեռքին: Նյութը խոսում է իրենով ու հաղթահարվում ձևաստեղծման մեջ. մարմարը լույս է արձակում, քարը՝ ծաղկում, բրոնզը՝ գնգում: Զարենցի տողերն այստեղ ձայնակցում եմ մեր զատողություններին.

Բրոնզ ես, հու՛ր ես,
Բրոնզե սու՛ր ես,
Բրոնզե փա՛ռք ես,
Բրոնզե փայլ,
Բայց դու զո՛ւր ես,

[50] Г а д а м е р. 1991, 112.
[51] Г а д а м е р. 1991, 112.

Ահա, իզո՛ւր ես
Կոտրում սու՛րս
Արևառ[52]:

Նյութի հնչյունական զգացումն ուղղակիորեն հանդիպում է երևակայվող պատկերին, ներշնչում ու ղիմաղրում, և այս լարվածքում է գեղարվեստական պատկերի ուժը:

Արվեստի հոգեբան Լև Վիգոտսկին նման օրինակներով, մինչ Հայդեգերի տեսությունը (1932 թ.), չրջանառության է դրել նյութի ու ձևի հակասության օրենքը որպես էսթետիկական հույզի մի բացատրություն և ղիմում է կաթարսիս (քավություն) հասկացությանը[53]*, որ դրամայի դասական տեսությունից է առնված և վերաբերում է նյութի ու իմաստի հաչտությանն արվեստում: Ամենաբնորոշն այստեղ ճարտարապետությունն է՝ հողը գրկող ծանրություն և թռիչք, խարիսխներ ու խոյակներ՝ բազալտի ամուր զանգվածը նրբահյուս ծաղկե ժանյակով և ծաղկի քնքշությունը քարի կարծրությամբ: Հայդեգերի և նրա մեկնաբանների խնդիրն այլ է: Նրանք ենթատեքստում են թողնում գեղեցիկի գաղափարը ու չեշտում են մեկ բառ՝ ճշմարտություն* (Wahrheit)*: Խոսքը վերաբերում է բնության ու արվեստի այն համերաչխության, որ արվեստագետի հոգևոր կեցությունն է՝ նրա լինելը* (Existenz) *ստեղծագործության ընթացքի ու արդյունքի հարաբերություններում: Այստեղ «չեզոքանում է սուբյեկտի և օբյեկտի հակադրվածությունը»*[54]*: Այս հարցի առաջին պատասխանը Ռուսոյի մոնոդրամայում է ու հերոսի վերջին խոսքում՝ «ես կապրեմ միայն քեզանում»: Նման պատասխան է տալիս Շոուի դրամայի հերոսը՝ «ես սովոր եմ քո ներկայությանը»: Այս նույն գաղափարն է սիմվոլացվում մարմարի լույսին փարված արձանագործի կերպարով:*

Հենրիկ Հովհաննիսյան – արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատերագիտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ արվեստագիտություն, թատրոնի տեսություն և պատմություն: Հեղինակ է 14 գրքի և շուրջ 200 հոդվածի:
henrikhovhannisyan1936@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Անյաղթ. 1960, Սահմանք իմաստուսիրութեան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 167 էջ:

Շեքսպիր Վ. 1951, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, «Հայպետհրատ», 594 էջ:

Չարենց Ե. 1962, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 301 էջ:

Սարյան Գ. 1969, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 290 էջ:

Бимель В. 1998, Мартин Хайдеггер сам о себе. Челябинск, Изд. Урал ЛТД, 285 с.

[52] *Չարենց. 1962, 159:*

[53] *Տե՛ս* Выготский. 1966, 271–273.

[54] Гадамер. 1991, 110.

Витгенштейн Л. 2010, Логико-философский трактат. М., «Астрал», 179 с.
Выготский Л. 1966, Психология искусства. М., «Искусство», 576 с.
Гадамер Г.-Г. 1991, Актуальность прекрасного. М., «Искусство», 367 с.
Гартман Н. 1958, Эстетика. М., «Иностранная литература», 692 с.
Кант И. 1966, Сочинения в шести томах, т. 5. М., «Мысль», 564 с.
Кроче Б. 2000, Эстетика как наука выражения и как общая лингвистика. Тула, «Интрада», 160 с.
Лосев А. 1963, История античной эстетики (ранняя классика). М., «Высшая школа», 583 с.
Овидий. 1937, Метаморфозы. М., «Академия», 450 с.
Поэты пушкинской поры. 1985. М., «Художественная литература», 414 с.
Руссо Ж.-Ж. 1961, Избранные сочинения. М., Государственное издательство художественной литературы, 847 с.
Театральная энциклопедия. 1963, т. II. М., «Советская энциклопедия», 1212 с.
Фома Аквинский. 2019, Сумма теологии. М., «АСТ», 315 с.
Хайдеггер М. 1993, Время и бытие. Статьи и выступления. М., «Республика», 546 с.
Хайдеггер М. 2008, Исток художественного творения. М., «Академический проект», 520 с.
Шоу Б. 1980, Полное собрание пьес в шести томах, т. 4. Л., «Искусство», 652 с.
Hartnoll P. 1980, The Concise Oxford Companion to the Theatre. New York, 640 p.
Sarah Stanton and Martin Banham, 1996, Theatre, Cambridge, 419 p.
Taylor Y. R. 1979, The Penguin dictionary of Theatre. New York, 304 p.

МИФ О ПИГМАЛИОНЕ И ЖИЗНЬ ХУДОЖЕСТВЕННОГО ТВОРЕНИЯ

ГЕНРИК ОГАНИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: аллегория, природа, драма, эстетический, тематический модус, прототип, гармония, материя и форма, созерцание.

Литературные интерпретации древнегреческого предания об аллегорическом оживлении мраморной статуи приводят к размышлениям о природе формообразования в творчестве художника. Выдвигается на первый план материальность и вещность как художественное видение. В процессе творения материальное вступает в проявленность как базис эстетического переживания. Инерция материи есть нечто данное в чувствах художника не на материальном уровне. Природа воспринимается как откровение гармонии в творческом видении художника. В сопротивлении материи кроется иное и большее чем физическая данность. Перед скульптором камень приобретает

эстетическую силу так же, как настроенный инструмент в руках музыканта или литературный текст для актера в пространстве сцены. В соотношениях материи и видения художника подразумевается нечто субстанциальное, что приводит к устранению противоположностей формы и материи, субъекта и объекта.

Генрик Оганисян – д. иск., проф., член-корреспондент НАН РА, заведующий отделом театроведения Института искусств НАН РА. Научные интересы: искусствознание, теория и история театра. Автор 14 книг и около 200 статей. henrikhovhannisyan1936@gmail.com

THE PYGMALION MYTH AND THE PERPETUITY OF A WORK OF ART

HENRIK HOVHANNISYAN

S u m m a r y

Key words: allegory, nature, drama, aesthetic, modus theme, prototype, harmony, work of art, form vs matter.

In its further literary interpretations (“Metamorphoses”, by Ovid) the ancient Greek myth of Pygmalion, the sculptor, symbolizes the true inspiration of an artist and the one who apperceives the work of art. The transformation of the marble statue is a clear allegory which drives the reader to various reflections on the metaphysics of a work of art and the external reality. The issue is highly contradictory. The inertia of an artistic form is equally present in the apperception of the artist and the resistance of the physical matter. Nothing is groundless in this creative process. The sculptor is feeling the solid stone aesthetically, the musician is bidding the strain of the instrument, the poet is relishing the sound energy of the linguistic matter, while the actor is feeling the author’s text in the empty space of the stage. Thus the form vs matter contradiction is being neutralized by the aesthetic apprehension and the physical matter in integrity.

Henrik Hovhannisyan – Doctor of Sciences in Arts, Professor, Correspondent member of the NAS RA, Chair of the Department of Theatre Studies at the NAS RA Institute of Art. Scientific interests: Art Studies, History and theory of theatre. Author of 14 books and over 200 scientific articles.
henrikhovhannisyan1936@gmail.com

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

ՀՏԴ : 929:891.981 ՀՈԲՈՍ + 891.981

DOI:10.54503/0135-0536-2022.3-182

ԼՈՌԵՑԻ ԱՌԱԿԱԽՈՍ ՀՈԲՈՍԸ
(ժամանակը, միջավայրը և բարքերը)*

ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ առակախոս, Հոբոս, Լոռի, Շնող, տոհմ, Ճոճկան, առակ, տապանաքար, Կայծոն, Վերան, Բերո:

Նախաբան

Ջվարճախոսությունը երգիծական կերպարներով հարուստ ժողովրդական բանահյուսության մի յուրահատուկ ճյուղ է: Հայաստանի ամեն մի պատմա-ազգագրական շրջան, իրեն ընորոշ պատկերացումներին համապատասխան, ունի իր երգիծաբան-ջվարճախոսը, ժողովրդի գնահատմամբ՝ երբեմն միամիտ, բարի, հիմար կամ խելոք:

Ժողովրդական ջվարճաբանություններն ու սրախոսությունները խիստ հարազատ են հայ մարդուն, քանի որ բխում են նրա կյանքից, հայի սովորություններից, կենցաղից, վարք ու բարքից[1]:

Ամենահայտնի ջվարճախոսն արցախցի Պըլ (խենթ, ծուռ) մականունով Պուղին է, որի բանահյուսական կրկնակները՝ Պոզոզ-Մուկուչը՝ Շիրակում, Հոբոսը՝ Լոռիում, քեռի Գինոսը՝ Ղափանում, ներկայացնում են տարբեր շրջանների բնակչության հավաքական նկարագիրը[2]:

Ընդհանրապես ժողովուրդը ծուռ, պիժ մականվամբ մկրտում է այն մարդկանց, որոնց արարքները դուրս են գալիս սովորական, հասարակության կողմից սրբագործված չափանիշների, ըմբռնումների շրջանակից[3]:

Առակախոս Հոբոսը և նրա ծննդավայրը

Հայ ժողովրդական երգիծանքում իրենց արտասանական յուրահատկություններով առանձնանում են Լոռու երգիծական մանրապատումներն ու ջվարճախոսությունները: Լոռիում գրառված երգիծական մանրապատումներում գերակշռում են մեղմ սյուժետային կառուցվածքով ստեղծագործությունները, որոնց մեծ մասը հյուսված է իրական դեպքերի, երևույթների և անձանց շուրջը լոռեցու միամիտ խոսքի ու գործողությունների, բնավորության յուրահատուկ գծերի պատկերավոր վերարտադրությամբ[4]:

---

* *Ներկայացվել է 05. IX. 2022 թ., գրախոսվել է 29. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Բ ա բ խ ո ւ դ ա ր ե ա ն ց. 1883, Դ:*

[2] *Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. 2016, 143:*

[3] *Ղ ա զ ի յ ա ն. 1978, 62:*

[4] *Մ ա ր գ ս յ ա ն. 2017, 25:*

Լոռին Հոբոսի գվարճապատումների հայրենիքն է, նրա անվան հետ են կապվում Շնող, Հոբարձի և Ճոճկան գյուղերը:

Շնողի բնակիչները բնիկներ են, իսկ մի մասի նախնիները XVIII դ. վերջին եկել են Արցախից[5]:

Այն մասին, որ դեռևս XVII դ. Շնողը նույն անունն էր կրում, վկայում է մի ավետարանի հիշատակարան. «Կազմող՝ Դաւիթ Շնողնեցի: Կազմեցաւ ի թուիս Հայոց :ՌՀԳ: (1624) զհայրապետութեան սբ. աթոռոյն Հախպատայ կիրակոս արհեպիսկոպոսին»[6]:

Ըստ ժողովրդական պարզունակ ստուգաբանության՝ Շնող անվան հիմքում ընկած է չեն հող իմաստը: Իրականում ող մասնիկը հնարավոր է դիտարկել ոչ թե որպես վերջածանց, այլ արմատական գոյական անուն՝ ողն: Թերևս դրանով է պայմանավորված, որ Շնող անվան հոլովման կամ բարդման ժամանակ տեղի խոսվածքում հավելվում է «ն» տառը[7]:

Հոբոսը բնիկ Շնող գյուղից է, որտեղից շատ Հոբոսյաններ հետագայում տեղափոխվել են այլ վայրեր:

Հետաքրքիր է Հոբարձի գյուղի հիշատակությունը, որի անվանումը, ինչպես Լոռու և Տավուշի հնավանդ շատ տեղանուններ՝ Արդվի, Աքորի, Դսեղ, Հագվի, Ճոճկան, Շնող, Արճիս, Բաղանիս, Կոթի, Կիրանց և այլն, հստակորեն չեն ստուգաբանվում: Դրանց բնակչության մի մասն ակնհայտորեն բնիկ է, որը սերնդեսերունդ փոխանցել է նաև տեղանունները, որոնց բուն իմաստը, դարերի ընթացքում ինչ-որ չափով աղավաղվելով՝ մոռացվել է:

Ենթադրվում է, որ Հոբարձի գյուղի երբեմնի տիրոջ անունն էլ Հոբոս է եղել: Հոբոս անունը կամ բառը Հոբարձիում XX դ. երկրորդ կեսին դեռևս չէր մոռացվել. «Հոբոսութիւն» նշանակում էր չարաճճիություն կամ գժություն[8]:

Ճոճկան գյուղը, որպես Հոբոսի ծննդավայր, հիշատակում է միայն երվանդ Լալայանը: Հոբոսի մասին նա գրում է. «Հոբոսը Բորչալուի գաւառի Ճոճկան գիւղացի է եղել: Երբ այս գիւղն անցել է Լօռիս-Մելիքեաններին, սա չէ կամեցել կալուածատիրական գիւղում ապրել, ուստի և տեղափոխուել է Շնող գիւղը, որ Ճոճկանին շատ մօտ է: Այստեղ վերաբնակուելով՝ նա հետզհետե հեղինակութիւն է ձեռք բերել և նոյնիսկ տանուտէր ընտրուել: Նա մեռել է անցեալ դարի վաթսունական թուականներին, իսկական անունը Յովհաննէս է եղել»[9]:

Ճոճկանն ու Շնողը բաժանված են Դեբեդի կիրճով, բնակչությունը, սովորությունները, գրաղմունքները նույնն են, կան խոսվածքի չնչին տարբերություններ, որոնք բնորոշ են հարևան բոլոր գյուղերին:

Ճոճկանում Հոբոսը, որպես ճոճկանցի, չի հիշվում, բայց նրա առակներին, ինչպես և տարածաշրջանի մյուս գյուղերում, այնտեղ ևս ծանոթ են: Ժամա-

[5] Архиепископ Оганес. 1872, 36.

[6] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.). 1978, 142:*

[7] *Շ ա խ կ յ ա ն. 2016, 634–635:*

[8] *Հ ո բ ո ս յ ա ն. 1973, 31:*

[9] *Հ ո բ ո ս. 1903, Ա–Բ:*

նակին Հոբոսի առակներն այնքան հանրահայտ էին, որ չնողնեցիներին, անկախ տոհմական ծագումից, հարևան գյուղերում «Հոբոս» էին անվանում: Գյուղացիները, եթե ուզում են մի բան պատմել անցյալի դեպքերից, ասում են. «Էն հոբոսական ժամանակները», իրենց ասածը հաստատելու համար՝ «Հոբոսական խոսքով»:

Շնողում բոլոր Հոբոսյանները համագյուղացիների համար «Հոբոս» են, չնայած այն բանին, որ գյուղի մեծ տոհմերից մեկը լինելով՝ բաժանվել է մի քանի ճյուղերի, որոնց մի մասն է միայն առակախոս նախապապի բուն ժառանգորդը:

Դիտարկենք, մեր կարծիքով, Հոբոսից սերող ճյուղերից մեկը՝ ինչ-որ չափով մոտենալու համար նրա ժամանակին:

Գևորգ Հոբոսյանը ծնվել է Շնողում 1915 թ.: Նրա հայրը՝ Սարգիս Հոբոսյանը, ով հայտնի էր Կակուլի մականունով, ծնվել է 1884 թ.: Սարգսի հայրը՝ Պետրոսը, ծնվել է 1853 թ.: Հիշվում են նաև Պետրոսի հայրն ու պապը: Հոր անունը եղել է Խաչատուր (Խուճ Խեչո), ունեցել է Պետրոսից ավագ մի տղա ևս՝ Հակոբ անունով (Անամոթ Ակոբ), նաև՝ Գևորգ և Հովհաննես անունները: Գևորգը, հավանաբար, եղել է Խաչատուրի հայրը, իսկ Հովհաննեսը, ով, ըստ երևույթին, նույն Հոբոսն է՝ պապը: Կարելի է ենթադրել, որ Խաչատուրը ծնվել է 1810–1820 թթ. միջակայքում, իսկ նրա հայրը՝ Հոբոսը, 1780–1790 թթ.:

Հոբոսի տապանաքարը

Տոհմագրության համար սկզբնաղբյուրի կարևորագույն նշանակություն ունեն տապանագրերը, բայց դրանցից միայն մեկն է պահպանվել:

Ըստ ավանդության՝ Շնողի հիմքը Կայծոն բերդն է կամ Բերդաթաղը, որը տեղի խոսվածքում հայտնի է «Վենճ քարի գլուխ» անունով[10]: Բերդից հարավ՝ Շնող գետի Առվի ջուր վտակի ճախափնյա բարձրադիր հրվանդանին է գտնվում գյուղի մեկ այլ թաղամաս՝ Նորաշենը:

Այս թաղամասի գերեզմանոցում կա XIII դ. մի քանի խաչքար, իսկ պահպանված հնագույն տապանագիրը վերաբերում է ՌՄԼԵ (1786) թվականին: Հոբոսյան տոհմին վերաբերող մեզ հայտնի ամենահին վիմագիր տապանաքարը պահպանվել է այս գերեզմանոցում: Կարծում ենք, որ հենց սա է առակախոս Հոբոսի տապանաքարը:

Տապանաքարի հարավային նիստը բաժանված է երկու մասի, որոնցից մեկը՝ բավականին ընդարձակը, նախատեսված է եղել տապանագրի համար, սակայն ինչ-ինչ պատճառով գրվել է միայն առաջին տողը՝ «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀՕԲՕՍ»: Մյուս հատվածում հեծյալ է պատկերված: Տապանաքարի հյուսիսային նիստին քանդակված է մաճկալ, որի նաև ռազմիկ լինելու մասին են վկայում պատկերված թուրն ու դաշույնը: Շատ իրական է պատկերված հայկական ավանդական գուլպանը՝ մաճ, ճևիչ, խոփ, մեծ ու փոքր անիվներ, ուղի լուծ: Քարի հորիզոնական հարթ մակերեսին քանդակված են գինու երկու սափոր, խաչ և, հավանաբար, ժամանակի նորությունններից մեկը՝ չիչ: Քարի արևելյան,

[10] *Շ ա խ կ յ ա ն. 1999, 83:*

նեղ ճակատի ստորին մասում քանդակված է հավասարաթև խաչ, որից վերև՝ թեք մակերեսին, գրված է մահվան թվականը՝ 1874:



Հոբոսի ապրած ժամանակն ու վայրը ճշտելու համար կարևոր ենք համարում քննարկել մի կարևոր իրողություն: Շնողում պատմվող առակներում Հոբոսի հետ հիշվում են ևս երկու անձ՝ Բերոն ու Վերանը: Վերջինս Ե. Լալայանի հրատարակած առակներում չի հիշատակվում: Առակներում նկարագրվող դեպքերը վերաբերում են Շնողին: Այդ են վկայում առաջին հերթին տեղանունները՝ «Վենճ քարի պլուխ», «Ճիլի Մակնի քար», «Յուցրուկ գաղուկ», «Գադա տափ» և այլն:

Հոբոսի ժամանակակիցները

Ովքե՞ր են Վերանն ու Բերոն, որոնց սերունդները՝ Վերանանք ու Բերոանք, այժմ էլ գյուղի հայտնի տոհմերից են:

«Շնողնեցի Վերանը» Լոռվա հայտնի քաջերից է, որի տոհմը հայտնի է Վերանանք անունով (Բեկթաչյանները), և որի ընկիկ թաղամասը Շնողի Կայծոն բերդի տարածքն է: Վերան Սարգսի Բեկթաչյանը մահացել է 1853 թ. օգոստոսին, 98 տարեկան հասակում[11]: Հոբոսը նրա ժամանակակիցն է, ծնվել է Շնողում և ապրել XVIII դարի վերջերին և XIX դարում, մահացել՝ 1874 թ.:

Կայծոնի «Բերդի դուռ» մուտքից հյուսիս-արևելք պահպանվել է միջնադարյան գերեզմանոցի ցանկապատված մի հատված, որը Տերունական խաչարձան-մատուռ ուխտավայրն է[12]: Ավանդաբար սրբավայրի տարածքը Վերանանց տոհմական գերեզմանոցն է: Այնտեղ կա XIII դ. երեք որմնափակ խաչքար, որոնցից մեկն ունի հետևյալ արձանագրությունը՝ ՍԲ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՈՂՈՐՄԵԱ ՎԱՆԷՆԷ ԹՎԻՆ ՈՀԱ (1222)[13]: Շուրջ երկու տասնյակ տապանաքարերից մեկի վրա, որը թվագրություն չունի, գրված է ՎԱՆՆԵՒ: Այն եզակի անունը, մեր կարծիքով, պատահականորեն չի հայտնվել տոհմական գերեզմանոցում:

[11] *Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, ց. 2, գ. 6101:*
[12] *Շ ա խ կ յ ա ն. 1986, 128:*
[13] *Դիվան հայ վիմագրության. 2012, 254:*

Վանենի էր նաև Զաքարյան տոհմի նշանավոր դուստրը՝ Աբաս Թագավորի տիկինը, Սանահնի կամուրջի կառուցողը, ով թաղված է Հաղբատի ժամատանը[14]*:*

Վանենի տոհմական անվան կրկնությունը թույլ է տալիս ենթադրել, որ Վերանանք Զաքարյան տոհմի մի ճյուղն են կամ ազգակցական որևէ կապ ունեն նրանց հետ: Շնողի վիմագրում հիշատակված անձը կարող է լինել Կյուրիկե Գ-ի և Թամարի դուստրը՝ Դավիթ Անհողինի թոռը[15]*:*

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը Վերանի մասին գրել է. «Մարդիկ էր ուղարկել ուրախացած Մեհրաբ յուզբաշին և շրջակա տեղերի հայտնի քաջերին հրավիրել, հավաքել Դսեղ: Եկել էր ճոճկանեցի Խուդին, որ ասլանի սիրտ ուներ, գյուլլուբաղցի Դոնղուզ Ղռանը, որ լեզգու արյուն էր խմում, արղվեցի լեզգի Պետոն, որ մազը մազից ջոկում էր գյուլլով, սանահ-նեցի Արութինը, որ ձին աստղերի հետ էր խաղացնում, չնողնեցի վիթխարի Վերանը, հաղբատեցի ածղահա Պրանը, և ուրիշ անվանի քաջ մարդիկ: Այս բոլորին հավաքել էր Մեհրաբ յուզբաշին Աղասու պատվին լինելիք խնջույքն ու հանդեսը փառավոր անելու համար»[16]*:*

Հայտնի մտավորական, «Հովիվ» և «Հովիտ» շաբաթաթերթերի խմբագիր Գրիգորիս Երզնկյանցը Կայծոն բերդի մասին գրում է. «Երբ տասն ու չորսերորդ դարից սկսած մահմեդական տարրը սկսեց ճնշել վրաց իշխանու-թիւնը, այն ժամանակ տիրապետող իշխանները չկարողացան իրանց պապա-կան երկիրները պաշտպանել, ուստի և այս կամ այն խանի, աղալարի բռնու-թեան ներքոյ ընկնելով, զրկուեցան իրանց իրաւունքներից, շատ անգամ քոչելով զանազան տեղեր և իրանց անձը փրկելով այդ աշխարհասասան արհաւիրքներից: Այսպիսի ընկճուած դրութեան մէջ մնացին երկար ժամանակ և Կայծոնի բնիկ տիրապետող անձինք, մինչև որ վերջը Բէգդաչեան տոհմը, որ, ըստ մեր կարծեաց, հիմնուելով սերնդէ սերունդ անցած աւանդութեանց վրայ, աղնուազարմ Զաքարեան սերնդի ճիւղը պետք է կազմէ, կարողացաւ շրջապատող խաներին և աղալարներին նախ՝ գրաւել և ապա իւր ազդե-ցութեան հիմքը վերականգնել Կայծոնի բերդում: Վրաց թագաւորութիւնն էլ, որ մինչև այդ ժամանակ առ ահի Կայծոնի վրայ շատ չէր ուշք դարձնում, այլ միայն իւր յանցաւորների աքսորատեղի էր որոշել, ինչպես և Ախտալի հանքատեղին, օգտուելով Կայծոնի այժմեան նպաստաւոր հանգամանքից, կամեցաւ այս բերդին մօտիկ գտնուող Ղազախի սահմանը պաշտպանութեան առնել, նշանակելով տիրապետող տոհմին իբրև նեցուկ Աբաշիձէ իշխաններից մէկին:

Բայց ոչ այնքան, որքան վերջինս, տեղացի տիրապետները մանաւանդ Վերան–քեօխվան, կարողացան բերդը հրոսակներից ազատել և պահպանել է Զորագետի այն միակ ճանապարհը, որ տանում էր դէպի Հաղբատայ և Սանահնի վանքերը և թէ Լոռուայ նշանաւոր տեղերը: Մինչև այժմ էլ տեղացի ծերունիներն աւանդաբար պատմում են Վերան–քեօխվայի զարմանալի քաջութիւնները: Այդ կերպ տիրապետութիւնը շարունակուեցաւ մինչև Ռու-

[14] *Դիվան հայ վիմագրության. 2012, 168:*
[15] *Դիվան հայ վիմագրության. 2012, 344:*
[16] *Թ ու մ ա ն յ ա ն. 1994, 20:*

սաց իշխանութեան հաստատուիլը: Վերջինիս հաստատուելով, Աբաշիձէ իշխանական տոհմը ցանկացաւ իրեն սեպհականութիւն հաստատել տալ Կայծոնը, միայն այդ ցանկութեան արգելք եղաւ Վերան–քեօխվան, մերժել տալով վերոյիշեալ իշխանական ճգտումն, իւր օգտի համար էլ ոչինչ չարեց ... ուստի և բոլորովին չհետևաց իւր անունով հաստատել տալուն ... երբ ոմանք համոզում էին նորան այդ հաստատութիւնը ձեռք բերել, նա ասում էր՝ պապական իմն է, և իմն կը կլինի»[17]:

Վերանանց Բեկթաշյան օտարահունչ ազգանվան մեջ աղոտ կերպով ուրվագծվում է այդ տոհմի ընօրրանի անունը՝ «Քարի գլուխ»: Բեկը հասկանալի է, իսկ «թաշ» թուրքերեն նշանակում է քար, այստեղից էլ՝ «Քարի բեկ» կամ «Քարի իշխանավոր»: Հայտնի է մի հիշատակություն, որտեղ այդ ազգանվան մեջ, քարի փոխարեն, գրված է գլուխ: «Անհնարին է ի մոռացոնս արկանել զհիասքանչ քաջագործութիւնս Ղարաբաղցի, Երևանցի, Լօռեցի, Ջորագետցի և Ղազախեցի Հայոց ... մա՞րթ ինչ լցէ մոռանալ զՇուլավերցի հսկայն Սօսի աղայ և զմելիք Յովհաննէսն, որք խոյանային ի սարս և ի ձորս Քվէչու և Բօլնիսի ...: Գովասանական բանիւք պատմեն ականատեսքն զքաջագործութիւնս Շնօղեցի Վերան քևխի Բէգբաշեանց, Հաղբատեցի Յարութիւնի Երզնկեան, բթահատ Բաղալի Պարանեան, Դսեղցի ահեղատեսիլ և վիթխարի Յովակիմայ Թումանեան, որք սրով, թրով և հրազինուք քաջընտիր սպառազինեալ երիտասարդօք դողացուցեալ զսարս և զձորս Լօռւոյ և Ջորագետի, արիաբար հռչակեցին զինքեանս ... ընդդեմ սրիկայից և առաջնախաղաց զորաց պարսից ...»[18]:

Շնող գյուղի ավագ սերունդը դեռևս հիշում է տեղական մի դարձվածք, որն աղոտ հուշում է Վերանանց տոհմիկ լինելու մասին. երբ ինչ-որ մեկին հանձնարարություն էին տալիս, որը կատարելուց հետո նա ղժդհ էր մնում տրված գնահատականից, հեգնանքով ասում էին. «Գնա Վերանանց խանը բի, հախդ տամ»: Փայտե խանը մինչև XX դ. կեսերը Լոռու և Տավուշի բոլոր տնտեսությունների պարտադիր կարասիներից էր: Դրանց տարողությունը 12,5 գրվանքա[19] (մոտ 5 կգ) էր, բայց, ըրանք ճշգրիտ չէին, քանի-որ պատրաստում էին տարբեր վարպետներ: Կարծում ենք, որ ազնվական ծագում ունեցող տոհմիկ ընտանիքներում չատ բաների թվում ավանդաբար պահպանվում էին նաև ճշգրիտ չափերը, և այդ դարձվածի բուն իմաստը կապվում է ճշգրիտ ու արդար վարձատրության հետ:

Հոբոսը և գյուղական համայնքը

Անդրադառնանք Հոբոս, Վերան և Բերո եռյակին, որոնցից առաջինը հայտնի առակախոսն է, Բերոն՝ առակներում հիշատակվող դեպքերի հիմնական մասնակիցը, իսկ Վերանը՝ վկան: Որոշ առակներում Հոբոսը հիշվում է նաև որպես գյուղի տանուտեր, իսկ Բերոն՝ գղիր:

[17] Գ. Երզնկեան. 1895, 2–3:
[18] Ռ. Երզնկեան. 1887, 363:
[19] Պետրոսեան. 1896, 1200:

Նշենք, որ ռուսական առաջին վիճակագրական ցուցակներում Վերանանք, Հոբոսանք և Բերոանք չկան, ինչից ելնելով՝ կարելի էր կարծել, թե նրանք Շնողի ուշ շրջանի վերաբնակներ են: Այս հարցի հստակ պատասխանը չունենք, ենթադրել կարելի է, որ որպես գյուղական համայնքի ավազանու անդամներ, նրանք ազատված են եղել հարկերից, իսկ սկզբնական ցուցակներում նշվել են միայն հարկատուների անունները[20]:

Երվանդ Լալայանի «Հոբոս» գրքույկը

Անդրադառնանք Ե. Լալայանի հիշատակությանը՝ Հոբոսի ճոճկանցի լինելու մասին: Իր բանահավաքչական բեղուն աշխատանքներում Ե. Լալայանն ընդգրկում էր տեղացի շատ մարդկանց, ուսուցիչների, ուսանողների և հոգևորականների: Շնողում նրան օգնել են այդ գյուղացի, Լայպցիգի համալսարանի շրջանավարտ Հմայակ Մաժինյանը (Պապաշա), Գևորգ Ղորխմազյանը, հավանաբար նաև՝ Հմայակ Յոլչինյանն ու Բագրատ Մկրտումյանը: Թերևս, նաև նրանց հավաքած նյութերի հիման վրա է Ե. Լալայանը 1903 թ. Թիֆլիսում հրատարակել «Հոբոս» գրքույկը, որի առաջաբանում նա գրում է. «Հոբոսը ներկայանում է որպէս ամբողջ գիւղի ամենախելացի և առաջատար անձը, միանգամայն լինելով տխմարութեան տիպար»[21]: Հարց է առաջանում, թե ինչու է նշանավոր ազգագրագետը, ունենալով նման կարծիք, այն հրատարակել: Բնականաբար, այս հարցի պատասխանը չունենք, կարելի է միայն ենթադրություններ անել: Թերևս, Ե. Լալայանը տուրք է տվել շնողնեցի բանահավաքների «վիրավորված» ինքնասիրությանը, որ համագյուղացի Հոբոսն իր «տխմար» առակներով «խայտառակում» է գյուղը և գյուղացիներին: Որպես օրինակ ներկայացնենք դրանցից մի քանիսը:

«Մի անգամ Հոբոսը, գութան վարելիս մի մողէս է լսյան ընկնում: Հոբոսը գութանը կանգնեցնել է տալիս և ձեռի չէկիով[22] խփում մողէսն սպանում, ապա ինքնաբաւական կերպով սկսում է պեխերը սրել:

Հոտաղներից մինը հարցնում է.

– Մ տղէք, այդ ո՞վ սպանեց:

–Դէհ չգիտե՞ք, որ այդպիսի բաները միայն Հոբոսի ձեռից կըզան, էլ ի՞նչ էք հարցնում, –պատասխանում է ինքը Հոբոսը[23]:

Մեկ օրինակ ևս. «Մի անգամ Հոբոսը հունձ անելիս ձեռքը օրաղով[24] կտրեց: Տուն վերադառնալով, գնաց չինող ղարբնի մօտ և ասաց.

– Տօ տնաւեր, որ գիտէիր օրաղիդ հունարը կտրիլն ա՝ էլ ո՞ւր ինձ տուիր»[25]:

Պարզ ու խոսուն մեկ այլ առակում՝ «Հոբոսի Յուդրուկի գաղտկի արտը հինգ վեց այծ են մտնում, որոնցից ամենափոքրը սպիտակ է լինում: Հոբոսը

---

[20] *Ա վ ե տ յ ա ն. 1998, 39:*
[21] *Հ ո բ ո ս. 1903, Բ:*
[22] *Մաճկալի ձեռքի այն փայտն է, որով խոփի վրայի հողը մաքրում են:*
[23] *Հ ո բ ո ս. 1903, 23:*
[24] *Օրաղ-մանգաղ:*
[25] *Հ ո բ ո ս. 1903, 25:*

սաստիկ բարկացած գնում, բռնում է այս սպիտակ այծին և մի լավ թակում, ասելով. «Տօ, անտէր, ասենք թէ սրանք ջահել իծան են, խելքներուն հասնում չի, բա դու պռաւած, որ էդ ա մազդ Բերօի բիճա Վարոսի մէրքի պէս սիպտակել ա, դու ի՞նչ ես ասում, որ էդ արտը ըրածում ես, քու հէ՞րն ա ըշխատել, թէ դու»[26]:

Նկատենք, որ հանրահայտ այս թափառող սյուժեն հայտնի է նաև Հայաստանի այլ պատմաազգագրական շրջաններում[27]:

Այսպես. Սյունիքում պատմվող առակներից մեկում «Այծերը մտնում են Փարսու բանջարանոցը: Մահակով սկսում է ծեծել սպիտակ այծին:

– Փարսի, ինչո՞ւ ես ղրան ծեծում:

– Մյուսներն անխելք ջահել են, ներելի է, իսկ սա սպիտակ միրուքավոր, չի հասկանո՞ւմ, որ չի կարելի ուրիշի բոստան մտնել»[28]:

Հայաստանի պատմաազգագրական բոլոր շրջաններին բնորոշ մի իրողություն կա, որով էլ կարելի է բացատրել համագյուղացուց «հրաժարվելու» երևույթը: Խոսքը վերաբերում է հարևան գյուղերի միջև եղած հակադրություններին, կատակներին ու զավեշտներին:

Շնորհում ե. Լալայանին օգնած բանահավաքների նման գնահատականի պատճառը եթե ինչ-որ չափով բացատրելի է, ապա անհասկանալի է ե. Լալայանի վերաբերմունքը: Դեռևս 1896 թ. իր հիմնադրած «Ազգագրական հանդես»-ի առաջին համարում նա գրում է. «Դէհ ուրեմն, հայ ժողովուրդ, բաց սիրով մեր առաջ քո սիրտն ու հոգին, թող որ մենք թափանցենք քո ներքին կեանքի մէջ և պատկերացնենք քեզ ինչպէս որ էս. քո ախտերիդ նկարն անգամ կարող է բարիք բերել քեզ: Եւ դեռ քանի քաղաքակրթութեան հուրը լափում է անցյալի բոլոր յիշատակներն մենք պետք է շտապենք ազատելու ինչ որ դեռ մնացել է ...»[29]:

Հակված ենք կարծելու, որ ե. Լալայանն է նման գնահատական տվել առակախոսին, քանի որ այն առկա է նաև «Ազգագրական հանդես»-ում. «Շրջակայ գիւղացիները սրանց կոչում եմ Բերօ և Հոբոս, այստեղացի այն երկու գաւառապետունների անունով, որոնք իմաստունի հռչակով ամենամեծ յիմարներն են եղել»[30]: Այս տարբերակն ավելի հավանական է, եթե հաշվի առնենք ե. Լալայանի որոշ մեկնաբանություններ հայոց ազգագրական տարբեր շրջանների, առանձին գյուղերի և երևույթների մասին: Նա գրում է. «Նախնի բարոյականութիւնը դժբախտաբար այժմ անհետացել է, և անբարոյականութիւնը հետզհետե տարածվում է. բայց և այնպես՝ այս ժողովուրդը բարոյապես բարձր է կանգնած Ախալցխայի և Ալեքսանդրապոլի ժողովուրդներից»[31]:

Բարքերի անկման գլխավոր պատճառներից մեկը նա համարում է այն, որ «Առհասարակ նկատված է, որ այգեշատ տեղերում շատ է տարածված անբա-

[26] *Հ ո բ ո ս. 1903, 23–24:*
[27] *Մ ո կ ս. 2015, 387:*
[28] *Մ ա ր գ ա ր յ ա ն. 1992, 25:*
[29] *Լ ա լ ա յ ե ա ն. 1896, 6:*
[30] *Լ ա լ ա յ ե ա ն. 1901, 365:*
[31] *Լ ա լ ա յ ա ն. 1983, 180:*

րոյականությունը»[32]: Նկատենք, որ ըստ Ե. Լալայանի, այս ախտը տարածված էր նաև այգեզուրկ Ջավախքում, որտեղ «… կան գյուղեր, ուր գրեթե բոլոր հարսները «սիրող» ունին»[33]:

Մեկ այլ տեղ կարդում ենք. «Հոր ու մոր այս հարգանքը տևում է մինչև նրանց ծերությունը: Հետզհետե ծերանալով նրանք կորցնում են իրենց դիրքերը: Որդիներն այլևս չեն լսում ծնողներին, հարսները ջողաք (խոսքին խոսք բերել) են տալիս, շատ անգամ ծաղրում, ծիծաղում: Նույնիսկ ամենաբռնակալ հայրը ծերանալով և ուժից ընկնելով խոնարհվում է, մեղմանում է և ակնածում որդիներից ու հարսներից»[34]: Այս տողերը գրվել են հարյուր տարի առաջ: Այսօր վիճարկել կամ կասկածի տակ դնել Ե. Լալայանի նմանատիպ դիտողություններն ու եզրահանգումները մեր ժողովրդի կենցաղի ու բարքերի վերաբերյալ, թվում են՝ և՛ անիմաստ, և՛ ժամանակավրեպ:

Այս և նմանատիպ շատ հարցեր նկատել են նաև Ե. Լալայանի ժամանակակիցները: Հովհ. Թումանյանը նրան քննադատել է ոչ միայն հասարակական, գրական և գիտական գործունեության առումով: Բանաստեղծը որոշ դեպքերում անդրադարձել է նաև նրա անձին ու խառնվածքին[35]:

Վերը բերված փաստերը թույլ են տալիս հավատալ, որ, ցավոք, բանաստեղծը ճիշտ է եղել: Այլապես ինչով բացատրել այն փաստը, որ նրա ստեղծած հայոց ազգագրական գանձարան են թափանցել նաև ակնհայտ բամբասանքներ և ուռճացված տեղեկություններ ժողովրդի բարքերի ու բարոյական կերպի մասին:

Եզրակացություն

Առակախոս Հոբոսը ծնվել և ապրել է Լոռու Շնող գյուղում XIX դարում: Նա իր համագյուղացի Վերանի՝ Լոռվա հայտնի քաջերից մեկի ժամանակակիցն է: Ինչպես և իր բոլոր համագյուղացիները, զբաղվել է հողագործությամբ, ինչը վկայում է նաև նրա տապանաքարը: Հոբոսի պարզ ու միամիտ առակները 1903 թ. հրատարակել է հայ նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանը, գրքույկի առաջաբանում նշելով, որ նա Ճոճկանից է տեղափոխվել Շնող: Հոբոսի վերաբերյալ պահպանված ազգագրական ու բանահյուսական խիստ սահմանափակ նյութերի ու գրավոր աղբյուրների կցկտուր տվյալների համադրությամբ ճշտվում է, որ Հոբոսի բուն ծննդավայրը Շնողն է:

Սուրեն Հոբոսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ հայոց ավանդական տնտեսական մշակույթ: Հեղինակ է 5 գրքի և շուրջ 50 հոդվածի: suren.hobosyan@mail.ru

[32] *Լ ա լ ա յ ա ն. 1988, 137:*
[33] *Լ ա լ ա յ ա ն. 1983, 139:*
[34] *Լ ա լ ա յ ա ն. 1988, 126–127:*
[35] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2010, 187:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետյան Վ. 1998, Շնող, Երևան, Հեղ. հրատ., 539 էջ:

Բարխուդարեանց Մ. Վ. 1883, Պըլը–Պուղի, Թիֆլիս, «Վարդանեանի եւ ընկ. տպարան», 190 էջ:

Դիվան հայ վիմագրության. 2012 h. IX, Լոռու մարզ, (կազմողներ՝ Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 611 էջ:

Երզնկեանց Գ. Հնութիւնք հայրենեաց, I, Կայծոն կամ Շնող.– «Արձագանք» (Թիֆլիս), 15. III. 1895:

Երզնկեանց Ռ. 1887, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ, Արարատ, գ. Ը, Վաղարշապատ, էջ 349–364:

Թումանյան Հ. 1994, Քաջերի կյանքից. – Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 16–26:

Լալայեան Ե. 1896, Հրատարակչից. – «Ազգագրական հանդէս» (Շուշի), Ա, էջ 5–6:

Լալայեան Ե. 1901, Բորչալուի գաւառ. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), գ. VII–VIII, էջ 271–436:

Լալայան Ե. 1983, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 457 էջ:

Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 505 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, g. 2, գ. 6101:

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.). 1978, հ. Բ, կազմողներ՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 940 էջ:

Հայրապետյան Թ. 2016, Ղարաբաղի առակախոս Պըլ Պուղին (ըստ 1991–2015 թթ. Արցախում գրառած նյութերի). – Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), II, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., էջ 142–146:

Հարությունյան Հ. 2010, Հովհաննես Թումանյանը և Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերությունը. – Հայ ժողովրդական մշակույթ, XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 185–190:

Հոբոս. 1903, Ժողովրդական առակներ, հաւաքեց Ե. Լալայեան, Թիֆլիս, 31 էջ:

Հոբոսյան Ս. 1973, Դաշտային ազգագրական նյութեր, Լոռի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, ֆ. 168:

Հոբոսյան Ս. 2009, Դաշտային ազգագրական նյութեր, Տավուշ, գյուղ Կոթի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, ֆ. 168:

Ղազիյան Ա. 1978, Ղարաբաղի զվարճախոս Պըլ Պուղին.– ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, էջ 60–69:

Մարգարյան Ա. 1992, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Երևան, «Չար» ֆիրմա, 32 էջ:

Մոկս. 2015, Հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Ս. Բ. Հարությունյան (գիտական ղեկավար), է. Հ. Խեմչյան, Մ. Հ. Խեմչյան, Ա. Կ. Պողոսյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 707 էջ:

Շախկյան Գ. 1986, Լոռի. Պատմության քարակերտ էջերը, Երևան, «Հայաստան» հրատ., 182 էջ:

Շախկյան Գ. 1999, Կայծոն–Շնող հայրենագիտարան, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 364 էջ:

Շախկյան Գ. 2016, Թումանյանական աշխարհ. մշակութային գիտադարան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 852 էջ:

Պետրոսեան Մ. 1896, Գաւառական նամակներ.– «Մուրճ» (Թիֆլիս), № 9, էջ 1196–1204:

Սարգսյան Ա. 2017, Զավեշտի դրսևորման միջոցները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 299 էջ:

Архиепископ Оганес. 1872, Карабагские мелики в Грузии с 1800 по 1808-й год – «Кавказская старина» (Тифлис), № 2, с. 34–45.

БАЛАГУР ОБОС ИЗ ЛОРИ
(Время, среда деятельности и нравы)

СУРЕН ОБОСЯН

Р е з ю м е

Ключевые слова: балагур Обос, Лори, Шнох, род, Чочкан, басня, надгробие, Кайцон, Веран, Беро.

Лори является родиной шуток баснописца Обоса (сокращенное от имени Ованес); с его именем связывают названия сел Шнох, Чочкани Обарци. В 1903 г. в Тбилиси этнограф Ерванд Лалаян опубликовал часть басен Обоса, написав в предисловии, что он из села Чочкан переселился в Шнох.

На одном из кладбищ Шноха сохранилось надгробие Обоса, на восточной грани которого написано «Это могила Обоса», год смерти – 1874. В баснях упоминаются еще двое – Беро и Веран, а описываемые события, согласно топонимам, относятся к Шноху. Веран – один из известных храбрецов Лори, род которого известен под именем Верананк (Бекташян), исконным местом проживания которого является территория крепости Кайцон.

Совокупность весьма ограниченных этнографических и фольклорных материалов и фрагментарных письменных источников об Обосе подтверждает, что его фактической родиной является Шнох.

Сурен Обосян – к. и. н., заведующий отделом этнографии Института археологии и этнографии НАН РА, старший научный сотрудник. Научные интересы: армянская традиционная хозяйственная культура. Автор 5 книг и 50 статей. suren.hobosyan@mail.ru

THE FOLK STORYTELLER HOBOS FROM LORI
(Period and environment of his activity and morals)

SUREN HOBOSYAN

S u m m a r y

Key words: storyteller Hobos, Lori, Shnogh, ancestry, Chochkan, fable, tombstone, Kaytson, Veran, Bero.

Lori is the homeland of the fabulist Hobos (abbreviated name for Hovhannes); the villages of Shnogh, Chochkan and Hobardzi are associated with his name. In 1903 in Tbilisi, ethnographer Yervand Lalayan published part of Hobos' fables, writing in the preface that he moved to Shnogh from Chochkan village.

In one of the cemeteries of Shnogh, the tombstone of Hobos is preserved, on the eastern edge of which is written: "THIS IS GRAVE OF HOBOS", the year of death - 1874. Two more people are mentioned in the fables – Bero and Veran, and the events described, according to the place names, refer to Shnogh. Veran was one of the famous and brave men of Lori, whose family was known as Veranank (Bektashyan), and whose original place of residence was the area of the fortress Kaytson.

A totality of very limited ethnographic and folklore materials and fragmentary written sources about Hobos confirms that Shnogh is his actual birthplace.

Suren Hobosyan – Candidate of Historical Sciences, Head of the Ethnography Department of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Senior Researcher. Scientific interests: Armenian traditional economic culture. Author of 5 books and about 50 articles. suren.hobosyan@mail.ru

Պատմա-բանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

ՀՏԴ՝ 633.88(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-194

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԴՐԱՆՑ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

(Ըստ Սյունիքի դաշտային-ազգագրական նյութերի)*

ԱՆԻ ՍԱՐԱՏԻԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Սյունիք, դեղաբույսեր, բուսաբուժություն, ժողովրդական բժշկություն, միջնադար, բժշկարաններ, ձեռագրեր, հավատալիքներ, էթնոբուսաբանություն, դաշտային նյութեր:

Նախաբան

Ժողովրդական բժշկությունը, չնայած արդի բժշկական հաստատությունների ու դրանց տրամադրած ծառայությունների համեմատաբար հասանելի լինելուն, դեռևս պահպանել է իր կարևորությունը հատկապես գյուղական բնակավայրերում և կիրառվում է հիմնականում կենցաղային մակարդակում: Ժողովրդական բժշկության, մասնավորապես՝ բուսաբուժության միջոցով մարդիկ փորձում են կարգավորել կամ բուժել հիմնականում չնչառական, մարսողական, սրտանոթային, միզասեռական և հենաշարժիչ համակարգերի թեթև ծանրության խնդիրները: Օգտագործելով շրջակայքում աճող դեղաբույսերը՝ գյուղատնտեսությամբ զբաղվող ժողովուրդը ոչ միայն փորձում է խուսափել տալ բժշկության հետ կապված ծախսերից, այլև խնայում է իր ժամանակը և օգտագործում ավանդաբար իրեն հասած ժողովրդական գիտելիքը, որը հիմնականում զարերի փորձության է անցել: Կարևոր հանգամանք է նաև այն, որ ժողովուրդը շատ ավելի հաճախ վստահում է զարերի փորձառությամբ ամրագրված և նախնիների փոխանցած ժողովրդական միջոցներին՝ բնությունից ստացված դեղաբույսերն առավել անվտանգ համարելով գիտական բժշկության առաջարկած դեղամիջոցներից ու բուժամիջոցներից:

Ժողովրդական բուսաբուժությունը և դեղաբույսերի օգտագործումը բնութագրական է Հայաստանի բոլոր շրջանների և ժողովուրդների համար[1],

---

** Ներկայացվել է 16. IX. 2022 թ., գրախոսվել է 19. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.: Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի 20ITSH-053 «Բնական բուսական ռեսուրսների օգտագործումը Սյունիքում. ավանդույթները, ժամանակակից միտումները և հեռանկարները» գիտական նախագծի շրջանակում: Խորին շնորհակալություն ենք հայտնում կ. գ. թ. Ռոման Հովսեփյանին և պ. գ. թ. Համլիկ Աբրահամյանին՝ հոդվածի պատրաստման ընթացքում տրված արժեքավոր խորհուրդների և թեմային առնչվող նյութերի տրամադրման համար:*

[1] Տե՛ս Հ ո վ ս ե փ յ ա ն, Ս տ ե փ ա ն յ ա ն-Ղ ա ն դ ի լ յ ա ն, Մ ե լ ք ո ւ մ յ ա ն. 2014, 148–162, Հ ո վ ս ե փ յ ա ն, Ս տ ե փ ա ն յ ա ն-Ղ ա ն դ ի լ յ ա ն, Դ ա ֆ ն ի. 2020, 34–35, Հ ո վ ս ե փ յ ա ն. 2020, 235–247:

սակայն Սյունիքում, ըստ նախնական տվյալների, դեղաբույսերի օգտագործման ավանդույթներն ավելի լավ են պահպանվել[2]:

Հետազոտության առաջնային նյութը հավաքվել է սկսած 2020 թ.՝ Սյունիքի մարզի տարածքից դաշտային ազգագրական հետազոտությունների և հրատարակված ու արխիվային նյութերի աղբյուրագիտական հետազոտությունների միջոցով: Ազգագրական հետազոտությունները, մասնավորապես՝ հարցազրույցները և անմիջական դիտարկումները կատարվել են Սյունիքի մարզի բոլոր համայնքներում՝ Գորայք, Սիսիան, Տաթև, Գորիս, Տեղ, Կապան, Քաջարան, Մեղրի, հիմնականում՝ գյուղական բնակչության շրջանում[3]: Դաշտային նյութերի գրանցում իրականացրել ենք հիմնականում գարնան սկզբից մինչև ուշ աշուն ընկած ժամանակահատվածում:

Ժողովրդական բժշկության ուսումնասիրության պատմությունը Հայաստանում

Ժողովրդական բժշկության բնագավառում հնուց կարևոր տեղ ունեին դեղաբույսերը[4]: Բուսաբուժությունը միջնադարյան Հայաստանի մշակույթի կարևոր բաղադրիչներից մեկն է, որի մասին վկայում են դրա վերաբերյալ մեծաքանակ աղբյուրները, որոնք մասամբ են ուսումնասիրվել:

Հայաստանի բժշկության պատմության ուսումնասիրությունը սկսվել է XIX դ. առաջին կեսին: Այն նշանավորվում է միջնադարյան բժշկության դասական Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» գրքի հայերեն բնագրի լույս ընծայմամբ: Գիրքը լույս ընծայեցին Վենետիկի Մխիթարյանները 1832 թ. Սուրբ Ղազար կղզում[5]: Դրան հաջորդեց Վիեննայի Մխիթարյան Միաբանության հրատարակությունները. նրանք իրենց հարուստ բժշկարանների հավաքածուներով դարձան հայ բժշկապատմական ուսումնասիրության կարևոր կենտրոններ: Բնագրերի ուսումնասիրությունից զատ, հրատարակվեցին նաև բժշկության պատմությանը նվիրված աշխատանքներ՝ ինչպես, օրինակ, Ղևոնդ Ալիշանի «Հայբուսակ»-ը (Վենետիկի Ս. Ղազար, 1895)[6], իսկ ավելի ուշ ծավալուն ուսումնասիրություններ են կատարել Կարապետ Գաբիկյանը, Ստելլա Վարդանյանը և այլոք[7]:

Բժշկության նկատմամբ մեծ հետաքրքրություն են ունեցել միջնադարյան փիլիսոփա, թարգմանիչ, եկեղեցական գործիչ Եղնիկ Կողբացին, ով իր «Եղծ աղանդոց» գրքում անդրադարձել է նաև բուսաբուժությանը[8], ինչպես նաև ականավոր աստղագետ և փիլիսոփա Անանիա Շիրակացին, ով իր «Քննիկոնում» անդրադարձել է նաև բժշկությանը[9]: Միջնադարյան հայ բժիշկները

---

[2] Hovsepyan, Stepanyan-Gandilyan, Stollberg. 2019, 23–34; Hovsepyan. 2022, 123–136.

[3] *Հոդվածում օգտագործվել են մեր ամբողջ հետազոտական թիմի հավաքած և մշակած տվյալները:*

[4] *«Երեկոյան Երևան», 09. II. 1966:*

[5] *Հ ե ր ա ց ի. 1832:*

[6] *Մանրամասն տե՛ս Վ ա ր դ ա ն յ ա ն. 2000, 10–11:*

[7] *Գ ա բ ի կ ե ա ն. 1968, Վ ա ր դ ա ն յ ա ն. 2000:*

[8] *Վ ա ր դ ա ն յ ա ն. 2000, 63:*

[9] *Վ ա ր դ ա ն յ ա ն. 1982, 16:*

քաջատեղյակ էին անտիկ բժշկության դասական աշխատություններին, սակայն հայոց լեզվով բժշկարանների ստեղծումը տեղի ունեցավ միայն X դարում[10]: Ինչպես հավաստում են մատենագետները, առաջին բժշկարաններում ակնհայտորեն զգացվում է արաբական մշակույթի ազդեցությունը, այդպիսի օրինակ է Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 7049 ձեռագիրը, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց ակադեմիկոս Լ. Խաչիկյանը[11]:

Դեղաբույսերի վերաբերյալ կարևոր տեղեկությունների աղբյուր են նաև Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ», «Օգուտ բժշկութեան» աշխատությունները[12]: Բույսերի մասին մի առանձին կարևոր աղբյուր է Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 6267 ձեռագիրը[13]: Ձեռագրի հեղինակը Ստեփանոս Շահրիմանյանն է, այն կոչվում է «Տնկաբանություն կամ Փղորայ Հայաստանի» (1818 թ.): Այստեղ նկարագրվում է 800 դեղաբույս, բերված են բուսաբանական, պատմական տվյալներ դրանց ծագման, տարածման ու օգտագործման մասին:

Ժողովրդական բժշկությունը մեծ կիրառություն է ունեցել, հատկապես՝ գյուղական շրջաններում, որտեղ մեծ համբավ ունեին հեքիմները: Այս փաստը ընգծվում է նաև XIX–XX դդ. հայ պարբերական մամուլի էջերում[14]: Երևույթը պատճառաբանվում էր բժիշկ-մանագետների՝ քաղաքային շրջաններում կենտրոնացած լինելու հանգամանքով[15]:

Ուսումնասիրության արդյունքները

Դաղձ, տյա՛խծ, տեսնը, դեսնը, դեխնը (Mentha spp., Mentha longifolia) *Սյունիքում, թերևս, համատարած կիրառություն ունեցող բույսերից է, որի մասին Շահրիմանյանը գրում է. «Կոչի աշխարհ նանուխ, լատին.՝ մէնթհայ* Mentha, *արաբերեն կամ պարսկերեն՝ նանահ կամ նէէնէհ»[16]: Նա նաև հավելում է, որ անանուխը չորացնում են և օգտագործում տարբեր հիվանդությունների ժամանակ, առավել հաճախ՝ ստամոքսի ցավի: Հնարավոր է, որ պարսկերենից թափանցած լինի բույսի տեղական, առավել հաճախ հանդիպող անունը. «Սա նյանյան ա (ցույց է տալիս մշակվող տեսակը), էս էլ ճրի տաղց ենք ասում (ցույց է տալիս վայրի տեսակը), էս էլ ոնց որ վայրին ա, ճնշման համար, սրտի համար, պահում ենք, էլի, աստված ոչ արած, դեղի համար ... »[17], «փորացավի համար նյանյա ենք օգտագործում»[18]:*

---

[10] Վ ա ր դ ա ն յ ա ն. 1982, 14:

[11] Խ ա չ ի կ յ ա ն. 1971, 23–43: Խաչիկյանը հայ միջնադարյան բժշկության վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև Հովհաննես Երզնկացու ճառերից և քարոզներից (այդ մասին հանգամանորեն տե՛ս Խ ա չ ի կ յ ա ն. 2012, 9):

[12] Ա մ ա ս ի ա ց ի. 1927:

[13] Շ ա հ ր ի մ ա ն յ ա ն. 1818:

[14] «Նոր-Դար» (Թիֆլիս), 28. X. 1888, 16. II. 1894, «Մշակ» (Թիֆլիս), 12. I. 1888:

[15] «Մշակ», 12. I. 1888:

[16] Շ ա հ ր ի մ ա ն յ ա ն. 1818, 24բ:

[17] Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ). 2021, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ, հարցազրույցի թիվ (այսուհետ՝ հ/թ) 210804-3, կին:

[18] ԴԱՆ. 2021, Սյունիքի մարզ, գ. Բռնակոթ, հ/թ 210806–2, կին:

Անթառամը (Helichrysum spp.) *ևս Սյունիքում տարածված դեղաբույս է. «… անթառամ է ծաղիկ դեղին, փոքրագոյն, և միշտ գունավոր, օգտագործում են երբ արյունը խտանում է, այն ջրիկացնող հատկություն ունի»*[19]*: Բանասացները նշում են անթառամի այդ նույն հատկության մասին, նաև նշում՝ օգտագործում են աղեստամոքսային համակարգի և լյարդի խնդիրների դեպքում*[20]*:*

Եղինջը (Urtica spp.) *Սյունիքում առավել հաճախ հանդիպում է աղինջ կամ հաղինջ ձևով. «Հա, մենք աղինջ ենք ասում, օգտակար ա ստամոքսի ցավի համար»*[21]*: Մ. Մաշտոցի անվան մատենադարանի № 6267 ձեռագրում մեկնաբանվում է այն այսպես. «Եղինճ կոչի եւ եղիճ և աղինճ և աղինջ, լատ.՝* Urtica, *արաբերեն՝ գէրիզ, պարսկերեն՝ էնճիրէ, զոր Ամիրդովլաթ դնէ անճիրայ, օգտակար է հատկապես երիկամների համար»*[22]*:*

Սյունիքում վայրի սխտորը կամ սխտորուկը (Allium spp.) *ընդունված է օգտագործել հիմնականում սննդային նպատակներով, թեև նշվում է նաև առողջության համար ընդհանուր օգտակարության մասին (ինչպեսև՝ մշակովի սխտորի դեպքում): Ուշագրավ է, որ Ղ. Ալիշանի «Հայբուսակ»-ում վայրի սխտորի հականեխիչ հատկության վերաբերյալ վկայակոչված է հունական մի ավանդություն. « … եւ մեզի պատմեցին հին բժշկապետքն և ստուգեցին և ասացին, թէ յանկարծակի պատերազմունք եղեւ ի Հելլենացւոց երկիրն, և շատ մարդիկ ջարդեցան ի դաշտի մի մէջ, և ի յայն դաշտն ի յայս խոտէս շատ էր բուսեր, և այս մեռելնին ի վերայ յայս խոտիս պառկել էին, և կային այլ մեռած մարդիկ, որ պառկել էին, և այս խոտս չկայր ի նոցա ներքեւն և ի բոլորքն, նա կամօքն Աստուծոյ այն մարդիկն, որ ի վերայ այս խոտիս էին պառկեր, չի փտեցան. այն մարդկացն, որ այս խոտս ոչ ի ներքեւն և ոչ ի բոլորքն էր, նա ամէնն փտեցան և անհետացեալ եղան»*[23]*:*

Զամանը (Carum carvi) *Սյունիքում մեր օրերում օգտագործվում է հիմնականում թեյի համար, թեև բանասացները նշում են նաև դրա ընդհանուր բուժական հատկություննների մասին, երբեմն՝ նաև մարսողության խանգարումների բուժման և սրտի աշխատանքի կարգավորման համար*[24]*: Ըստ հնդկական ավանդական բժշկության՝ Այուրվեդայի՝ հնդիկները նույնպես այն կիրառել են նույն ցուցումներով*[25]*:*

Եզան լեզուն (Plantago lanceolata) *Սյունիքում օգտագործվում է մարսողական համակարգի, մասնավորապես՝ ստամոքսի խնդիրների դեպքում և տեղային մաշկային բորբոքումների բուժման նպատակներով. «Եզան լեզու չի, մեր բարբառով տըխտըկոն ա, տաք ջրի մեջ ես գցում, դնում վերքի վրեն կապում, ինքը թարախային պրոցեսը հանում ա»*[26]*: Եզան լեզվի բժշկող հատ-*

[19] *Շ ա հ ր ի մ ա ն յ ա ն. 1818, 27ա, 27բ:*
[20] *ԴԱՆ. 2021, Սյունիքի մարզ, գ. Բռնակոթ, հ/թ 210806-4, կին:*
[21] *ԴԱՆ. 2021, Սյունիքի մարզ, ք. Գորիս, հ/թ 210803–2, կին:*
[22] *Շ ա հ ր ի մ ա ն յ ա ն. 1818, 21ա, 114բ:*
[23] *Ա լ ի շ ա ն. 1895:*
[24] *ԴԱՆ. 2022, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, հ/թ. 220713–10, տղամարդ՝ 40 տ.:*
[25] *վ ա ր դ ա ն յ ա ն. 2000, 38:*
[26] *ԴԱՆ. 2021, Սյունիքի մարզ, գ. Քարաչեն, հ/թ 210805–2, կին:*

կության մասին գրում է մեծ բժշկապետ Մխիթար Հերացին[27]: Շահրիմանյանը գրում է. «Եղնալեզու, այն լայնատերև, մուգ կանաչ բույս է, օգտակար է որովայնի ցավերի համար»[28]: «Հայբուսակ»-ում նշվում է. «Եղնալեզու, Թորթին ցեղերուն է, կ'ըսէ բժկարան մի, և լաւն այն է որ տերեւն թանձր լինի ...»[29]:

Հավատալիքներ դեղաբույսերի մասին

Բույսերի բուժիչ հատկությունները մշտապես եղել են մարդկանց ուշադրության կենտրոնում[30]: Քանի որ նախկինում հավատքով բուժվելը համարվել է նույնքան օրինաչափ և նորմալ, որքան բուսական ծագման բուժիչ նյութերով բուժվելը, բուժման ռացիոնալ ու իռացիոնալ մեթոդները դիտարկվել են մի համատեքստում, որտեղ դրանց վերաբերվող գիտելիքները միահյուսված են եղել: Նման իրավիճակ է եղել չարխափան համարվող շատ բույսերի դեպքում[31]: Բույսերի դարմանող հատկությունների մասին հավատալիքները արտացոլվել են նաև հայ ժողովրդական հեքիաթներում[32]:

Ուշագրավ է հատկապես լոշտակի (Bryonia spp.) *մասին տեղեկությունները, որի արմատը հանելու համար հատուկ ծիսակարգ էին կատարում[33]: Դեղաբույսը շատ վաղուց է հայտնի մարդկությանը՝ որպես ցավամոքիչ, արյունահոսությունը դադարեցնող, լուծողական և միզամուղ միջոց[34]: Սյունիքում այդ բույսը հայտնի է լոշտակ, անխոս և ղարավաշ անուններով: Անխոս ասողները մեկնաբանում են, որ բույսը քաղելիս պետք է չխոսել, այլապես դառը կլինի: Արմատը հանում են, կտրատում, լցնում ալկոհոլի մեջ կամ չորացնում, փոշի սարքում՝ դեղ օգտագործելու նպատակով[35]: Որպես դեղ օգտագործում են հիմնականում ստամոքսի խնդիրների դեպքում[36]: Լոշտակ դեղաբույսի վերաբերյալ կա մի ավանդազրույց, համաձայն որի՝ լոշտակը մի սպասավոր է եղել և իր վարդապետի կողմից «սաստիկ տանջվել»: Վերջինս, կանխեղից ձեթ լցնելով քնած ժամանակ, այրել է վարդապետի մորուքը և արժանացել «գետինը մտնես» անեծքին: Լոշտակն իսկույն գետինն է մտնել: Վարդապետը զղջալով՝ ավելացրել է՝ «ամենայն հիվանդության դեղ լինես», սակայն այրվածքի ցավը զգալով՝ վարդապետը կրկին անիծել է՝ «ով նրան հանի՝ ինքը մտնի տեղը»: Եվ ահա այդ պատճառով մարդիկ խուսափում են լոշտակը հանել հողից. հանում են չան օգնությամբ[37]:*

Այս դեղաբույսի մասին կա մի ուշագրավ աղոթք. «... Դու ես Թագավոր ամենայն խոտից, և որ գոյացոյցն զքեզ և պարգևեաց քեզ բժշկութիւն ազգի

---

[27] *Հ ե ր ա ց ի. 2019, 276:*

[28] *Շ ա հ ր ի մ ա ն յ ա ն. 1818, 104բ–105ա:*

[29] *Ա լ ի շ ա ն. 1895, 150:*

[30] *«Նոր-Դար», 10. VIII. 1893:*

[31] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2001, 9:*

[32] *Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. 2006, 167:*

[33] *Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. 2006, 171:*

[34] *Վ ա ր դ ա ն յ ա ն, Ա ս լ ա ն յ ա ն. 2017, 18:*

[35] *Ըստ Ռ. Հովսեփյանի և Ն. Ղանդիլյանի՝ Սյունիքի Տաթև համայնքում 2017–2019 թթ. գրանցած էթնոբուսաբանական նյութերի:*

[36] Hovsepyan, Stepanyan-Gandilyan, Stollberg. 2019, 29.

[37] *Լ ա լ ա յ ա ն. 1903, 189, Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1987, 26:*

մարդկան ամենայն ցավոց և անուամբ անեղին և անմահին …», որն ավարտվում է այսպես. «Եօթն անգամ ասա և ապա հանէ իւր արմատովն. և յորժամ քաշես՝ պտուղն պտղեցո՛ր ոսկրը աման, պահէ. Թե հանց հանդիպի որ չորս ճեղ լինի, նոր ամանի մէջ ծրարէ, պահէ»[38]:

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը՝ մարդկանց մեջ կան այնպիսի պատկերացումներ, որոնց համաձայն՝ հիվանդությունները առաջանում էին չար ոգիների ազդեցությամբ, որից խուսափելու համար օգտագործում էին հմայիլներ[39]: Օրինակ՝ դիվահարությունից խուսափելու և դիվահարին բուժելու համար ժողովրդական զրույցներում ու հավատալիքներում բազմաթիվ միջոցներ և եղանակներ են առաջարկվում: Դևերից կարելի է պաշտպանվել չարահալած հատկանիշներով օժտված տարբեր բույսերի, դրանցից պատրաստված հմայիլների միջոցով[40]: Այսինքն՝ հանրահայտ չարխափան բույսը բռչնին (Celtis spp.) *է, որը համարվում է սուրբ ծառ:*

Եզրակացություն

Դաշտային գրառումները համեմատելով գրավոր աղբյուրների հետ՝ հետաքրքիր համընկումներ ենք տեսնում ժողովրդական գիտելիքների (որոնք մինչ այժմ կենսունակ են) և գրավոր աղբյուրների միջև.

1. դաշտային ուսումնասիրությունները և գրավոր աղբյուրների վերլուծությունը, սակայն, ցույց են տալիս, որ դեղաբույսերի մասին ավանդական գիտելիքը և նախախորհրդային ու միջնադարյան ժամանակների գրավոր աղբյուրներում արտացոլված գիտելիքներն անմիջականորեն կապված չեն և, որպես կանոն, փոխանցվում են բանավոր կերպով: Այս հանգամանքը, այնուամենայնիվ, չի բացառում ժողովրդական խմացության և միջնադարյան գրավոր աղբյուրների հնարավոր կապը:

2. Այսինքի աշխարհագրական ու կլիմայական պայմանների բազմազանությամբ պայմանավորված՝ բազմազան են նաև դեղաբույսերը, դրանց տեղական անունները և օգտագործման նպատակներն ու ձևերը:

3. Դեղաբույսերը տեղի բնակչության համար կենսական կարևորություն ունեն, երբեմն՝ նաև տնտեսական առումով. որոշ համայնքներում կամ առանձին ընտանիքներում այն եկամտի հիմնական աղբյուր է:

Այսպիսով, ինչպես անցյալ դարերում, այժմ էլ շարունակվում է դեղաբույսերի հավաքչությունն ու կիրառությունը, և այն չի դադարում ավանդական մշակույթի կարևոր մաս լինել:

Անի Սարատիկյան – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ Հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի երկաթի դարի հնագիտություն, Հայկական լեռնաշխարհի ջրօգտագործման մշակույթ: Հեղինակ է 5 հոդվածի:
anisaratikyaniae@gmail.com

[38] *Սրուանձտեանց. 1878, 327–328:*
[39] *Հայրապետյան. 2006, 169:*
[40] *Գալստյան. 2021, 46, 111:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիշան Ղ. 1895, Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն, Սբ. Ղազար, Վենետիկ, 697 էջ:

Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ Բառարան բժշկական նիւթոց. 1927, Վիեննա, Մխիթարեան տպարան, 766 էջ:

Գաբիկեան Կ. 1968, Հայ բուսաշխարհ (Պսակեալ Իզմիրեանց գրական մրցանակաւ յամին 1912), Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 294 էջ:

Գալստյան Հ. 2021, Չար ոգիները հայ ժողովրդական զրույցներում, տեսակների դասակարգումն ըստ գործառույթների (ատենախոսություն), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 236 էջ:

Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ). 2021, Սյունիքի մարզ (ք. Գորիս, Սիսիան, գ. Քարահունջ, Քարաշեն, Տաթև, Բռնակոթ):

Լալայան Ե. 1903, Բորչալուի գավառ.– «Ազգագրական հանդես» (Թիֆլիզ), գիրք X, Արագտիպ Մ. Մարտիրոսեանցի, էջ 112–268:

Խաչիկյան Լ. 1971, Հայ բնագիտական միտքը XIV–XVIII դդ.– ՊԲՀ, № 2, էջ 23–43:

Խաչիկյան Լ. 2012, Աշխատություններ, Ա (կազմ.՝ Շ. Լ. Խաչիկյան, խմբ. Պ. Մ. Մուրադյան), Երևան, «Նաիրի» հրատ., 547 էջ:

Հակոբյան Ս. Ինչու չեն օգտագործվում հայկական դեղաբույսերը. – «Երեկոյան Երևան», 09. II. 1966:

Հայրապետյան Թ. Լ. 2006, Բուժման ծիսահմայական և կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում.– ՊԲՀ, № 2, էջ 167–186:

Հարությունյան Ս. 1987, Հայ հին վիպաշխարհը, Երևան, «Արևիկ», 190 էջ:

Հարությունյան Ս. 2001, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մուղնի», 80 էջ:

Հովսեփյան Ռ., Ստեփանյան-Ղանդիլյան Ն., Մելքումյան Հ. 2014, Բուսաբուծական և բուսահավաքչական գործունեությունները եզդիների և քրդերի մշակույթներում (նախնական տվյալներ). – ՊԲՀ, № 3, էջ 148–162:

Հովսեփյան Ռ., Ստեփանյան-Ղանդիլյան Ն., Դաֆնի Ա. 2020, Վայրի բուսական ռեսուրսների սննդային օգտագործումը Վայքում. էթնոբուսաբանական հետազոտությունների մեկնարկը Վայոց ձորում. «Վառ անցյալ, վառ ապագա». – «Վայոց ձորի պատմամշակութային ժառանգությունը» գիտաժողով (մարտի 13–14) (Եղեգնաձոր), էջ 34–35:

Հովսեփյան Ռ. 2020, Բուսահավաքչությունը և բուսաբուժությունը Հայաստանի եզդիների կենցաղում.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 235–247:

Մխիթար Բժշկապետի Հերացիոյ Ձերմանց Մխիթարութիւն, Արդեամբք եւ ծախիւք ազնուական Կարապետ Չէլէպիի Տիւզեան, Ի Վենետիկ, Ի տպարան Սրբոյն Ղազարու, յամի 1832 (ՌՄՁԱ), 150 էջ:

Մխիթար Հերացի. 2019, Ձերմանց մխիթարութիւն (բնագրային համաբարբառ), կազմող՝ Դ. Ս. Մովսեսյան, Երևան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 1231 էջ:

«Մշակ» (Թիֆլիս), 12. I. 1888:

«Նոր-Դար» (Թիֆլիս), 28. X. 1888, 10. VIII. 1893, 16. II. 1894:

Շահրիմանյան Ս. 1818, Տնկաբանութիւն կամ փղորայ Հայաստանի. – Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր № 6267, 469 էջ:

Սրուանձտեանց Գ. 1878, Մանանայ, ժողովեա եւ ի լոյս էած Գ.Վ. Սրուանձտեանց, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսական պահճի Գափու էսատ էֆենտի խան, 457 էջ:

Վարդանյան Ս. 1982, Բժշկությունը Հին եւ Միջնադարյան Հայաստանում, Երևան, «Սովետական գրող» հրատ., 58 էջ:

Վարդանյան Ս., Ասլանյան Ա. 2017, Բժշկության պատմություն (բ. գ. դ. պրոֆեսոր Ս. Վարդանյանի խմբագրությամբ), Երևան, Երևանի Հերացու անվան պետական բժշկական համալսարան, 280 էջ:

Վարդանյան Ս. 2000, Հայաստանի բժշկության պատմություն, Երևան, «Քննասեր», 439 էջ:

Овсепян Р. А., Степанян-Гандилян Н. П. 2021, Использование растений в народной медицине молокан Армении: предварительные данные. – «Этнография» (Москва), № 2, с. 98–117.

Hovsepyan R., Stepanyan-Gandilyan N., Stollberg Ch. 2019, Phytomedicinal Knowledge and “Official” Sources in Tatev (Armenia). – «Ethnobiology Letters», № 10, pp. 23–34.

Hovsepyan R. 2022, Syunik (Armenia) in the context of perspectives of ethnobotanical studies. – «Review of Armenian Studies» (Yerevan), № 1, pp. 123–136.

НЕКОТОРЫЕ НАБЛЮДЕНИЯ О ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЯХ И ИХ УПОМИНАНИЯ В ПИСЬМЕННЫХ ИСТОЧНИКАХ
(По сюникским полевым этнографическим материалам)

АНИ САРАТИКЯН

Р е з ю м е

Ключевые слова: Сюник, лекарственные растения, фитотерапия, народная медицина, средневековье, лечебники, рукописи, поверья, этноботаника.

Этноботанические исследования, проводимые в Сюникской области, дают ценную информацию о видах лекарственных растений, целях и способах их использования, а также о народных традициях в области природопользования. Имеются также данные о некоторых используемых в настоящее время лекарственных растениях (мята, бессмертник, крапива, дикий чеснок, тмин, подорожник, переступень и др.) в средневековых трудах, где обсуждаются и интерпретируются варианты и способы лечения ими различных заболеваний. Сравнение использования лекарственных растений в народной медицине Сюника с данными об их использовании, представленными в рукописях и других письменных источниках Матенадарана (№ 6267, № 7049) показывает глубину народных знаний, которые до сих пор сохраняются и передаются из поколения в поколение.

Ани Саратикян – младший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археология железного века Армении, использование водных ресурсов в Армянском нагорье. Автор 5 статей. anisaratikyaniae@gmail.com

SOME OBSERVATIONS ON MEDICINAL PLANTS AND THEIR REFERENCES IN WRITTEN SOURCES
(According to Syunik ethnographic materials)

ANI SARATIKYAN

S u m m a r y

Key words: Syunik, medicinal plants, phytotherapy, folk medicine, Middle Ages, medical books, manuscripts, beliefs, ethnobotany.

Ethnobotanical studies carried out in the Syunik region provide valuable information on species of medicinal plants, purposes and methods of their use, as well as folk traditions in the field of exploitation of natural resources. There are also data on some of the currently used medicinal plants (mint, everlasting, nettle, wild garlic, caraway, plantain, bryony, etc.) in medieval works, where options and methods of treating various diseases with these medicinal plants are discussed and interpreted. The comparison of the use of herbs in folk medicine in Syunik with data on the use of the same herbs presented in manuscripts and other written works from Matenadaran (№ 6267, № 7049) shows the depth of folk knowledge that is still preserved and passed down from generation to generation.

Ani Saratikyan – Junior Researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA at the Department of Early Archeology. Scientific interests: Iron Age archeology of Armenia, water resources use in the Armenian Highlands. Author of 5 scientific articles. anisaratikyaniae@gmail.com

ՀՏԴ՝ 551.58(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-203

5.2 ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ՄԵՋԱՆԻՑ ԱՌԱՋ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ*

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Բանալի բառեր՝ կուր-արաքսյան մշակույթ, ծավալում, կլիմայական փոփոխություն, հնամիջավայր, չարժունակություն, բնակչության տեղաշարժ, ապաբնակեցում:

Նախաբան

Հոլոցենի շրջանում փաստագրված համաշխարհային կլիմայական փոփոխությունների շրջափուլերից երկուսը, որոնք մասնագիտական գրականության մեջ հայտնի են 4.2 հազար տարի մեզանից առաջ *և* 5.2 հազար տարի մեզանից առաջ իրադարձություն *անվանումներով (համապատասխանաբար՝* 4.2 ka BP *և* 5.2 ka BP event*), համընկնում են Հայկական լեռնաշխարհի՝ վաղ բրոնզի դարն ընդգրկող կուր-արաքսյան մշակույթի երկու կարևոր փուլերի հետ: Առաջինը վերաբերում է այս մշակույթի ավարտական փուլում՝ Ք. ա. մոտ 2500 թ. դիտարկվող տրոհման և մասնատման գործընթացին: Այն ավարտվում է Ք. ա. մոտ 2200 թ. սահմաններում՝ կուր-արաքսյան բնակավայրերի լքմամբ կամ ավերմամբ, բնակչության զանգվածային արտագաղթով և ընդարձակ տարածքների ապաբնակեցմամբ (ներառյալ՝ Արարատյան դաշտավայրը): Զուգահեռաբար այդ գործընթացն ուղեկցվում էր էթնիկական տեղաշարժերով («կուրզանային մշակույթ»-ի կրողների ներհոսքը դեպի լեռնաշխարհ): Երկրորդը, այսպես կոչված, «կուր-արաքսյան ծավալում»-ն է («էքսպանսիա»-ն): «Ծավալման» ժամանակագրումը Ք. ա. մոտ 3000–2900 թթ. ցույց է տալիս, որ այն տեղի է ունեցել կլիմայական կտրուկ փոփոխությունների մեկ այլ շրջափուլում: Կուր-արաքսյան մշակութային աշխարհում դիտարկվող հասարակական ճգնաժամի դրսևորումները, բնակչության չարժունակության աճն ու տեղաշարժն առավել բարենպաստ գոտիներ վկայում են, որ գործ ունենք փոխկապակցված երևույթների հետ:*

5.2 հազար տարի մեզանից առաջ կլիմայական իրադարձությունը

Միջին Հոլոցենի վերջում նկատվող գլոբալ կլիմայական անոմալիան կամ, այսպես կոչված, 5.2 հազար տարի մեզանից առաջ իրադարձությունը*, որն այլ կերպ հայտնի է նաև Պիորյան տատանում անունով* (Piora Oscillation)*, տևել է*

---

* *Ներկայացվել է 12. V. 2022 թ., գրախոսվել է 18. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH–005 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: Շնորհակալություն ենք հայտնում Պավել Ավետիսյանին, Արամ Քոսյանին ու Արսեն Բոբոխյանին՝ հոդվածին ծանոթանալու և օգտակար դիտարկումների համար:*

մի քանի հարյուր տարի՝ Ք. ա. մոտ 3300/3250–3100/3000 թթ.՝ իր բարձրակետին հասնելով Ք. ա. 3200–3100 թթ. սահմաններում[1]: Դա բավական լավ փաստագրված համաշխարհային կլիմայական փոփոխությունների շրջան էր, որը Հոլոցենի կլիմայական օպտիմում (Holocene Climatic Optimum, *մոտ 9000–5500 տարի մեզանից առաջ) անվանումով բնութագրվող միջինհոլոցենյան տաք և խոնավ կլիմայից տարբերվում էր խիստ ցուրտ ու չորային եղանակային պայմաններով[2]: Այդ երևույթը վեր է հանվել հնամիջավայրային տարբեր տվյալներով[3] և դիտարկվում է Միջերկրածովյան ավազանում ու Եվրոպայի տարբեր հատվածներում, կենտրոնական և հյուսիսային Աֆրիկայում, Արաբական թերակղզում, կենտրոնական ու արևելյան Ասիայում, Ամերիկյան մայրցամաքներում և այլուր[4]:*

Կլիմայական այս իրադարձությունը փաստագրվում է Հայկական լեռնաշխարհին հարող առաջավորասիական տարածքներում ևս, այդ թվում՝ Բարեբեր Մահիկի այն գոտիներում, որոնք միաժամանակ ընդգրկվել են կուր-արաքսյան մշակութային ընդհանրության մեջ: Մասնավորապես, Իսրայելում գտնվող Սորեկի քարանձավի հոսանաստվածքային գոյացումներից ստացված տվյալների համաձայն՝ կլիմայի կտրուկ փոփոխությունը ժամանակագրվում է մեզանից 5250–5170 տարի առաջ (Ք. ա. մոտ 3300–3220 թթ.)[5]: Նախորդող խոնավ պայմանների համեմատությամբ՝ այս գոտին Ք. ա. 3100 թ. սահմաններում ստացել է 200–300 մմ-ով կամ մոտ 30–50 տոկոսով պակաս տեղումներ[6]: Փոքր Ասիայում կլիմայական փոփոխությունն ու տևական երաշտը փաստագրվում է մոտավորապես Ք. ա. 3150–3050 թթ. համար[7]: Հարյուրամյակները ընդգրկող չորային պայմաններ են վկայված այս նույն ժամանակաշրջանի համար Իրանական բարձրավանդակում[8]: Լարնակայի (Կիպրոս) Աղի լճի նստվածքային շերտի հնամիջավայրային հետազոտությունները փաստում են կլի-

---

[1] Weiss. 2000, 77f.; Staubwasser, Weiss. 2006, 379f.; Roberts, Eastwood, Kuzucuoğlu *et al.* 2011, 151.

[2] Roberts, Eastwood, Kuzucuoğlu *et al.* 2011, 151, 158; Clarke, Brooks, Banning *et al.* 2016.

[3] Charles, Pessin, Hald. 2010; Roberts, Eastwood, Kuzucuoğlu *et al.* 2011, 153; Riehl, Pustovoytov, Weippert *et al.* 2014, 12349–12350; Riehl. 2021, 61; Engel, Brückner. 2021, 91–93, fig. 3.3; Sun, Wang, Zhang *et al.* 2021, 237f.

[4] Zanchetta, Bar-Matthews, Drysdale *et al.* 2014, 137; Roland, Daley, Caseldine *et al.* 2015, 214–219; Thompson, Mosley- Thompson, Davis *et al.* 2002, 592; Sirocko, Sarntheln, Erlenkeuser. 1993, 324; Magny, Leuzinger, Bortenschlager *et al.* 2006, 14f.; Rashid, Polyak, Mosley-Thompson. 2011, 8–10; Thompson. 2011, 217–229; Brooks. 2013, 95; Tan, Dong, An *et al.* 2021, 607–609 *և այլն:*

[5] Bar-Matthews, Ayalon. 2011, 169.

[6] Bar-Matthews, Ayalon. 2004, 381f. and fig. 12.

[7] Kuzucuoğlu. 2007, 468; Kuzucuoğlu, Dörfler, Kunesch *et al.* 2011, 184; Mercuri, Sadori, Ollero. 2011, 200f.

[8] Shaikh Baikloo. 2020, 39f.; Shaikh Baikloo, Chaychi Amirkhiz, Niknami. 2020, 449f.

մայի կտրուկ ցրտելու մասին մեզանից 5250±20 տարի առաջ (միջինում՝ ավելի քան 3 ± 0.4)։ Նվազում է հատկապես ճմեռային և գարնանային տեղումների քանակը, իսկ առաջավորասիական երկրների մեծ մասում տարեկան տեղումները բաժին են հանում հենց այդ ամիսներին[9]*։*

Միջագետքից տվյալները թեև քիչ են, սակայն փաստագրված է խիստ չորային կլիմայի հաստատումը Ք. ա. մոտ 3000 թ. սահմաններում[10]*, իսկ Թել Աբու Շահրայնի (չոմերական էրիդու քաղաքը)՝ ուշ-ուրուկյան շրջանի բնակավայրի հասարակական կառույցների չուրջ 2 մ հաստությամբ ավազի շերտով ծածկված լինելու հանգամանքը վկայում է տևական երաշտի և հողի էրոզիայի մասին*[11]*։ Այդ նույն ժամանակաշրջանում Օմանի ծոցում ավելանում է ցամաքածին նստվածքների ծավալը, ինչը ևս աճող էրոզիայի ու վատթար պայմանների վկայություն է*[12]*։ Կտրուկ (մոտ 30 տոկոսով) նվազում է Նեղոսի հոսքի ծավալն ու վարարումների ուժգնությունը Ք. ա. մոտ 3000–2900 թթ.*[13]*։*

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա այստեղից հայտնի տվյալները հիմնականում ստացվել են Վանա լճի նստվածքային շերտերի ուսումնասիրությունից։ Լճի ջրերում մագնեզիումի և կալցիումի քանակի ավելացում է նկատվում Ք. ա. 3000 թ. սահմաններում, ինչը պայմանավորված էր լճի ստացած ջրի նվազ ծավալներով։ Անտառածածկ դոտիների նվազման և հողի էրոզիայի դրսևորում է լճի ջրերում նկատվող էոլյան կվարցային ավազափոշու քանակական աճը[14]*։ Տեղումների էական նվազում ու մի քանի հարյուր տարի տևած չորային պայմաններ են վկայված վերինեփրատյան ավազանում*[15]*։ Ք. ա. 3000 թ. սահմաններում նկատվում է Եփրատ և Տիգրիս գետերի հոսքի կտրուկ անկում*[16]*։ Միևնույն ժամանակ, հաճախակի են դառնում կործանարար հեղեղումները՝ այս գետերի անոմալ վարարումների արդյունքում*[17]*։ Թեև տվյալներն առայժմ քիչ են*[18]*, բայց կլիմայական փոփոխությունների գլոբալ բնույթը հաշվի առնելով՝ հազիվ թե կասկած հարուցի այն փաստը, որ Վանա լճի կամ Տիգրիս ու Եփրատ գետերի ջրահավաք ավազանում դիտարկվող երևույթները նույնությամբ դրսևորվելու էին լեռնաշխարհի այլ հատվածներում ևս, ներառյալ՝ Կուր և Արաքս գետերի ավազանը (տե՛ս նաև ստորև)։*

[9] Kaniewski, Marriner, Cheddadi *et al.* 2020, 6f.

[10] Aqrawi. 2001, 279–282; Kennett, Kennett. 2006, 79–81; Kennett. 2007, 241f.; Altaweel, Marsh, Jotheri*et al.* 2019, 37–42; Lawrence, Philip, de Gruchy. 2021.

[11] Weiss. 2003, 609.

[12] Sirocko, Sarntheln, Erlenkeuser. 1993, 324; Cullen, deMenocal, Hemming *et al.* 2000, 381, fig. 4.

[13] Butzer. 1984, 106; Stanley, Krom, Cliff *et al.* 2003, 398f. and fig. 2.

[14] Weiss. 2003, 606f. and fig. 13 *(նշված գրականությամբ)։*

[15] Arıkan. 2015, 160f., 165 and Table 2. *Տե՛ս նաև* Masi, Sadori, Baneschi *et al.* 2013; Masi, Sadori, Zanchetta *et al.* 2013, 70.

[16] Butzer. 1995, 133, fig. 2, 136–138; Nützel. 2004, 122.

[17] Wilkinson, Galiatsatos, Lawrence *et al.* 2012, 162f.

[18] *Տե՛ս, մասնավորապես*, Joannin, Ali, Ollivier *et al.* 2014.

Կլիմայական իրադարձության հնագիտական վկայությունները

Քննարկվող կլիմայական իրադարձության հետ կապվող հիմնական զարգացումներ Առաջավոր Ասիայում, այսպես կոչված, Ուրուկյան «աշխարհ-համակարգ»-ի[19] անկումն է ուշուրուկյան փուլի վերջում՝ մի ժամանակահատված, որը համընկնում է Առաջավոր Ասիայի ստացած տեղումների նվազագույն քանակի հետ[20]: Պատահական չէ, որ ուրուկյան ծավալման մեկնարկը Ք. ա. մոտ 3700/3600 թթ. սահմաններում համընկնում է կլիմայի չորային փուլի սկզբի հետ և ինքնին դիտարկվում է կլիմայական փոփոխությունների համատեքստում[21], ուղղված երկրագործական նոր գոտիներ և հումքի աղբյուրներ մուտք ապահովելուն՝ Եփրատ ու Տիգրիս գետերի նվազ հոսքի և հարավային Միջագետքում ամառային տեղումների դադարի, անոմալ հեղեղումների և, ընդհանրապես, վատթարացող միջավայրի հետևանք[22]:

Հարավային Միջագետքում ծնունդ առած և ինչպես ոռոգովի, այնպես էլ, հավանաբար, անջրդի երկրագործության[23] ու գետային նավարկության վրա հիմնված ուրուկյան մշակույթը, որն իր գաղութային բնակավայրերի ցանցով ընդգրկել էր Բարեբեր Մահիկի գոտին[24] և ներթափանցել էր անգամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան (Թեփեկիք)[25] ու հարավային շրջաններ (Բաշուր Հյոյուք)[26], անապասելի անկում է ապրում Ք. ա. 3100–3050 թթ. սահմաններում[27]: Հյուսիսային Սիրիայում և հյուսիսային Միջագետքում ի հայտ եկած ուրուկյան բնակավայրերը կամ «գաղութ»-ները լքվում են (Թել Լեյլան, Նինվե, Թել էլ-Հավա, Թել Բրակ և այլն)[28]: Շուրջ 40 տոկոսով նվազում է Թել Բրակի շրջակայքի բնակավայրերի թիվը, բուն Թել Բրակի տարածքը կրճատվում է մի քանի անգամ[29]: Ուշուրուկյան փուլին հաջորդող շրջանում տարա-

---

[19] Algaze. 1989; Algaze. 1993; Algaze. 2008. *Ուրուկյան «աշխարհ-համակարգ»-ի շուրջ ծավալված քննարկումները դուրս են այս հոդվածի նպատակներից: Համմ., օրինակ,* McMahon. 2020; Selz. 2020 *և այլն:*

[20] Brooks. 2013: 98; Sun, Wang, Zhang *et al.* 2021, 238f.; Lawrence, Philip, de Gruchy. 2021, 11f.

[21] Brooks. 2013, 98; Clarke, Brooks, Banning *et al.* 2016, 114; Sun, Wang, Zhang *et al.* 2021, 239.

[22] Algaze. 1993, 17f.; Algaze. 2001, 31f.; Algaze. 2013, 70.

[23] Algaze. 2008, 42f.

[24] Algaze. 1989, 573–580; Algaze. 1993, 63–74; Stein. 1999a, 91–101, fig. 6.4; Rothman. 2011b, 813–835; Rothman, Badler. 2011, 83, fig. 4.8; Selz. 2020, 181–185, fig. 3.1 *և այլն:*

[25] Palumbi. 2015, 79, 82; Palumbi. 2017, 119.

[26] Sağlamtimur. 2017, 2f.

[27] Stein. 1999a, 91f.; Weiss. 2003, 606–610; Clarke, Brooks, Banning *et al.* 2016, 114.

[28] *Տե՛ս համապատասխանաբար* Brustolon, Rova. 2007, 32 and n. 31, 37; Arrivabeni. 2010, 3f., 42; Algaze. 1986, 132f.; Algaze. 2013, 83; Oates. 2005, 28; *տե՛ս նաև* Weiss. 2003, 594–606.

[29] *Տե՛ս համապատասխանաբար* Eidem, Warburton. 1996, 53–55 and fig. 1a; Charles, Pessin, Hald. 2010, 184, 188, Table 3.

ծաշրջանը ներկայանում էր սակավաթիվ, փոքր բնակավայրերով՝ նոսր բնակչությամբ[30]: Խաբուրի վերին ավազանում՝ Խաբուրի վտակ Վադի Ջառահի շրջանում գտնվող Թել Լեյլանի գոտու բնակավայրերի քանակը, ընդհանուր առմամբ, նվազում է ավելի քան 90 տոկոսով, բնակավայրերի ընդհանուր մակերեսը՝ շուրջ 85 տոկոսով[31]: 80 և ավելի տոկոսով նվազում է Թել Բեյդարի շրջակայքի բնակավայրերի թիվը[32]: Նույն պատկերն է նաև հյուսիսարևելյան Սիրիայի այլ գոտիներում, օրինակ՝ Թել Համուկարի շուրջը[33]: Բնակավայրերի քանակի կտրուկ անկում է նկատվում Իրաքյան Ջազիրայում՝ Թել էլ-Հավայի շրջանում՝ Ք. ա. 3100–3000 թթ. սահմաններում[34]: Հյուսիսային Միջագետքում՝ «Նինվեի հնագիտական ծրագրի» շրջանակում, ուսումնասիրված տարածքներում վաղբրոնզեդարյան բնակավայրերի քանակը նախորդող ուշ էնեոլիթյան դարաշրջանի համեմատությամբ քիչ էր ավելի քան 70 տոկոսով[35]: Սա ցույց է տալիս, որ բնակչության նվազումը կամ ապաբնակեցումը, արձանագրված ավերումները չէին վերաբերում միայն ուրուկյան «գաղութային» բնակավայրերին, և ճգնաժամը համընդհանուր էր:

Նույն երևույթը դիտարկվում է Եփրատի մեծ ոլորանի շրջանում, ուր ուրուկյան խոշոր առևտրական գաղութները (Թել Հաբուբա Քաբիրա-Հաբուբ/Թել Կաննաս, Ջեբել Արուդա, Թիլադիր Թեփե) կամ ուշ էնեոլիթյան բնակավայրերում ձևավորված «անկյավ»-ները և փոքր «ֆորպոստ»-երը լքվում են կամ ավերվում (Թել էլ-Հաջ, Թել Ջերաբլուս Թահթանի, Շադի Թեփե, Հաջընեբի Թեփե, Թեփեջիք և այլն)[36]: Վերինեփրատական գոտում գտնվող ուրուկյան մշակութային շերտերով ներկայացող բնակավայրերը նույնպես կամ լքվում են (Հասեք Հյույուք), կամ էապես նվազում է դրանց տարածքը (Սամոսատ, Քուրբան Հյույուք և այլն)[37]: Արսլանթեփե-Մալաթիայի պալատական համալիրն ավերվում է[38], ուշ էնեոլիթյան մեծաքանակ բնակավայրեր են լքվում ինչպես Մալաթիայի, այնպես էլ՝ Խարբերդի հովիտներում (օրինակ՝ Քորջուքթեփեն[39]), նկատվում է բնակչության թվի էական նվազում[40]:

Նույն երևույթները դիտարկվում են Իրանական բարձրավանդակի տարբեր հատվածներում: Արևմտյան Իրանում լքվում են Գոդին Թեփեն և շրջակա ար-

[30] Weiss. 2003, 601, 618, Appendix 1.

[31] Weiss. 2003, 601, figs 10–12; Arrivabeni. 2010, 42–44; Ristvet, Weiss. 2012, 234 and fig. 2.

[32] Arrivabeni. 2010, 44.

[33] Ur. 2010, 104–106.

[34] Weiss. 2003, 601. *Համմ. նաև* Wilkinson, Philip, Bradbury *et al*. 2014, 64–67, figs 6–8.

[35] Gavagnin. 2016, 76, 79 and fig.

[36] *Տե՛ս, օրինակ,* Wilkinson, Galiatsatos, Lawrence *et al.* 2012, 161; Stein. 1999b, 17 and fig. 3; Stein, Bernbeck, Coursey *et al.* 1996, 220; Akkermans, Schwartz. 2003, 207–209; Algaze. 1993, 32, 97.

[37] *Տե՛ս, օրինակ,* Algaze. 1993, 35, 50f.; Wilkinson, Galiatsatos, Lawrence *et al.* 2012, 154–156.

[38] Frangipane. 2012, 237f.

[39] van Loon. 1980, 272.

[40] Baştürk, Konakçı. 2005, 99–101, Tables 2–3.

բանյակ-բնակավայրերը[41]*: Հարավ-արևմուտքում ընկած խոշորագույն կենտրոնի՝ Սուսայի մակերեսը նվազում է կիսով չափ*[42]*: Սուսայի հարակից երկրագործական գոտու բնակավայրերը, ներառյալ՝ Զողա Միշը, լքվում են*[43]*: Ոչ ուշ, քան Ք. ա. մոտ 3000–2900 թթ. ապաբնակեցվում է ողջ հյուսիս-կենտրոնական Իրանը (Թեփե Սիալկ, Թեփե Հիսար, Արիաման, Շողալի Փիշվա, Թեփե Ղոլի Դարվիշ, Ղաբրիսթան, Մեյմանաթ Աբադ և այլն), բնակչությունը տեղաշարժվում է դեպի Գորգանի հովիտ*[44]*:*

Եվ, վերջապես, բնակավայրերի լքում ու մասնակի ապաբնակեցում է դիտարկվում նաև հարավային Միջագետքում: Ուրուկ/Վարկայից անմիջապես հյուսիս ընկած Նուֆֆարից (Հին Նիպպուրը) Բիամայա (Ադաբ), Նուֆֆարից Թելլ Ֆարա (Շուրրուպակ) և Թելլ Յոխա (Ումմա) ձգվող գոտու երկրագործական շրջանների բնակավայրերը դատարկվում են, նույն երևույթը նկատվում է նաև Ուրուկ/Վարկայից Թելլ Աբու Շահրայն (Էրիդու) ընկած հատվածում[45]*: Միաժամանակ, բնակչությունը, հիմնականում, սկսում է կուտակվել Ուրուկում ու նրա անմիջական շրջակայքում: Ուշուրուկյան փուլի վերջում այստեղ կենտրոնացած բնակչության թիվը հաշվվում է շուրջ 80–90 հազ. մարդ*[46]*: Բուն Ուրուկի տարածքը խիստ ընդարձակվում է՝ հասնելով 250 հա-ի՝ 20–50 հազ. բնակչությամբ*[47]*:*

Կուր-արաքսյան ծավալումը

Ք. ա. IV հազ. կեսերին Հայկական լեռնաշխարհում սկսվում է ինքնատիպ մի մշակույթի ղարաշրջան, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է տարբեր, առավելապես՝ կուր-արաքսյան (չենգավիթյան) մշակույթ/ այսրկովկասյան մշակութային ընդհանրություն անուններով[48]*: Ք. ա. IV հազ. Վերջերին լեռնաշխարհի մեծագույն մասը հնամշակութային այդ նոր իրողության կրողն էր*[49]*:*

Կուր-արաքսյան մշակույթի ֆենոմեններից մեկը նրա տարածման աննախադեպ լայն գոտին է, երբ կուր-արաքսյան բնակչության մեծաթիվ խմբեր, ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված, սկսում են այս մշակույթի «միջուկային գոտուց»[50] *կամ «հայրենիք»-ից*[51]*, այն է՝ կուր-արաքսյան մի-*

---

[41] Rothman, Badler. 2011, 110f.

[42] Helwing. 2013, 98 and Table 6.1; Petrie. 2014, 141f. and Table 9.1; Le Brun. 2019, 104–106.

[43] Algaze. 1989, 576; Weiss. 2003, 606; Le Brun. 2019, 104.

[44] Shaikh Baikloo, Chaychi Amirkhiz, Niknami. 2020, 452–455.

[45] Kennett, Kennett. 2006, 89f.; Kennett. 2007, 253; Algaze. 2008, 106–108; McMahon. 2020, 299.

[46] Algaze. 2008, 108–110 and fig. 19; Algaze. 2013, 74f.

[47] Pollock. 2001, 191f.; Selz. 2020, 167f.

[48] *Ավետիսյան. 2012, 9–10: Տե՛ս նաև* Areshian. 2007, 47f. and n. 2; Badalyan. 2014, 71f. and n. 1; Rothman. 2017, 217f.; Sagona. 2018, 215f. and n. 8.

[49] *Ավետիսյան. 2014, 40–41:*

[50] *Ավետիսյան. 2012, 12, Ավետիսյան. 2014, 42:*

[51] *Տե՛ս, օրինակ,* Rothman. 2017, 217; Rothman. 2021, 53.

ջազետքը, տեղաշարժվել դեպի Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններ, ապա և լեռնաշխարհի սահմաններից դուրս: Այս երևույթը մասնագիտական գրականության մեջ ստացել է կուր-արաքսյան ծավալում անվանումը[52]: Տեղաշարժերն ուղղված էին հիմնականում դեպի արևմուտք՝ վերինեփրատյան գոտի (կուր-արաքսյան մշակույթը վկայված է Թեփեջիքում, Քորուջումթեփեում, Նորշունթեփեում, Արսլանթեփեում, Քուրբան Հյոյուքում, Հասեք Հյոյուքում, Սամոսատում, Ջեբել Արուդայում և այլուր)[53], այնուհետև՝ դեպի արևելակենտրոնական Փոքր Ասիա (Յըղըզելի)[54] ու դեպի հարավ-արևմուտք՝ Ամուկի հովիտ (Ջաթալ Հյոյուք, Թել ալ-Ջուդեյդե, Թել Թայինաթ և այլն)[55], ապա էլ ավելի հարավ՝ դեպի Հորդանան գետի հովիտ (Քիրբեթ էլ-Քերաք/Թել Բեթ Յերախ, Թել Բեթ Շան, Թել Հազոր, Թել Յակուշ և այլն)[56]:

Կուր-արաքսյան ծավալումը դեպի արևմուտք՝ վերինեփրատյան գոտի, սկիզբ է առել Ք. ա. IV հազ. վերջերին: Ք. ա. մոտ 3000 թ. կուր-արաքսյան բնակավայրեր են ի հայտ գալիս Եփրատի վտակ Արածանիի երկայնքով (Մշո և Խարբերդի դաշտեր), այդ նույն շրջանին է վերաբերում կուր-արաքսյան մշակույթը կրողների հիմնադրած բնակավայրը Արսլանթեփեում (Period VIB1)*: Մոտավորապես այդ նույն ժամանակ կուր-արաքսյան մշակույթը մուտք է գործում Ամուկի հովիտ, իսկ Հորդանան գետի հովիտ կուր-արաքսյան մշակույթի մուտքը թվագրվում է Ք. ա. 2900/2850 թթ.[57]:*

Լայնածավալ տեղաշարժերի մյուս ուղղությունը հարավ-արևելքն էր՝ դեպի Իրանական բարձրավանդակի հյուսիսարևմտյան (Գյոյ Թեփե, Յանըք Թեփե, Գիջլար Թեփե և այլն)[58], արևմտյան (Գոդին Թեփե, Սանգալան Թեփե, Թեփե

[52] *Քննարկումների համար տե՛ս և հմմտ.* Rothman. 2003; Rothman. 2015; Rothman. 2017, 244–250; Smith. 2005, 258f.; Smith. 2015, 104–110; Smith, Badalyan, Avetisyan. 2009: 25–27; Batiuk, Rothman. 2007; Batiuk. 2013; Kohl. 2009, 252–255; Marro. 2011, 292–301; *Ավետիսյան. 2012, 13–15*, Işıklı. 2015; Palumbi, Chataigner. 2014, 254–257; Palumbi. 2015; Wilkinson. 2014, 206–224; Greenberg, Palumbi. 2014, 120–133; Sagona. 2018, 226, 270–273.

[53] *Տե՛ս* van Loon. 1980, 272; Erarslan. 2011, 22. *Հմմտ. նաև* Frangipane. 2019, 87–89; Palumbi. 2017, 120–124; Sagona. 2018, 222 *և այլն:*

[54] Özkse. 1993; Özkse. 2005. *Տե՛ս նաև* Palumbi. 2012, 268–276.

[55] Braidwood, Braidwood. 1960, 264, 294, 345, 350–368 *և այլն:*

[56] Greenberg, Paz, Wengrow *et al.* 2012, 96–103.

[57] *Տե՛ս համապատասխանաբար* Batiuk, Rothman. 2007, 9; Frangipane. 2012, 238–240; Frangipane. 2014, 172f.; Braidwood, Braidwood. 1960, 259 *և այլուր*, Greenberg, Palumbi. 2014, 127; Wilkinson, Philip, Bradbury *et al.* 2014, 89.

[58] Kroll. 2005; Summers. 2014; Maziar. 2019, 54 and figs 1–2, 58–69; Palumbi. 2019, 32–34; Ebrahimi, Rezaloo, Danti *et al.* 2021, 12 *(նշված գրականությամբ):*

Փխաա)[59] *և հյուսիս-կենտրոնական շրջաններ (Թեփե Կոլի Դարվիշ, Դուրանաբադ և այլն)*[60]*:*

Կուր-արաքսյան մշակույթի կրողների ներհոսքը հյուսիսարևմտյան Իրան, մասնավորապես՝ Ուրմիա լճի ավազան, սկսվում է Ք. ա. մոտ 3000 թ. քիչ առաջ (Յանըք Թեփե, Phase 2A): Ք. ա. մոտ 3000 թ. է թվագրվում կուր-արաքսյան խմբերի ներկայությունը Գյոյ Թեփեում (Level K1), Հասանլուում (Period VIIC)*, ապա և էլ ավելի հարավում՝ կենտրոնական Զագրոսներում (Գոդին Թեփե,* Period IVB*)՝ տեղի ուշուրուկյան «գաղութ»-ի լքումից կարճ ժամանակ անց*[61]*:*

Հյուսիս-կենտրոնական Իրանի տարածքներ կուր-արաքսյան մշակույթի կրողների ներհոսքը ևս թվագրվում է Ք. ա. մոտ 3000/2900 թ. սահմաններում[62]*:*

Եվ, վերջապես, կուր-արաքսյան մշակութային ընդհանրության կարևոր գոտիներից էր Դաղստանը (Վելիքենդ, Սուգյութ և այլն)[63]*, առկա են վկայություններ դեպի հյուսիս-արևմուտք՝ մերձպոնտական գոտի ուղղված ևս մեկ հոսքի մասին (Բյույուքթեփե Հյոյուք, Ալուջրա-Գավուր Քալեսի և այլն)*[64]*:*

Ըստ էության, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում՝ մոտ մեկ դարի ընթացքում կուր-արաքսյան մշակույթը հայտնվում է աչխարհագրական առումով տարբեր, հարյուրավոր կմ հեռու ընկած գոտիներում՝ սփռվելով Լևանտից մինչև Կասպից ծով, մերձպոնտական տարածքներից մինչև արևմտյան Իրան ու կենտրոնական Իրանական սարահարթ:

Կլիմայական իրադարձության հասարակական արձագանքը

Կլիմայի կտրուկ փոփոխությունը և կլիմայական անբարենպաստ պայմանների հաստատումը հատկապես սահմանային գոտիներում՝ անջրդի երկրագործության տնտեսության վրա հիմնված հասարակությունների շրջանում խաթարելու էր տնտեսական կայունությունը: Վատթարացող միջավայրում անարդյունավետ երկրագործությունը, բերքատվության նվազումը կամ բերքի կորուստը բնակչությանն անխուսափելիորեն կանգնեցնելու էր սոցիալ-հասարակական ճգնաժամի առջև: Նման մարտահրավերներին դիմակայելու անընդունակ համայնքները լքում էին իրենց բնակավայրերը և ստիպված էին դեգերել՝ գտնելու նոր ապաստարան առավել բարենպաստ միջավայրում: Մյուս

---

[59] Batiuk, Rothman. 2007, 14f.; Rothman. 2011a, 139–206; Rothman. 2015, 91–93; Palumbi. 2019, 37–39.

[60] Fahimi. 2005; Palumbi. 2019, 34; Maziar. 2019, 53–58 and figs 1–2 *(նշված գրականությամբ):*

[61] *Տե՛ս համապատասխանաբար* Danti, Voigt, Dyson. 2004, 594–598; Weiss. 2003, 601; Rothman. 2011a, 160–163; Summers. 2014, 159; Palumbi. 2019, 32.

[62] Fazeli, Valipour, Kharanaghi. 2013, 105 and Table 7.1, 109–113, 118f.; Maziar. 2019, 55.

[63] Magomedov. 2006; Kohl, Magomedov. 2014.

[64] Işıklı. 2015, 242f.; Kaymakçı. 2017.

կողմից, բնապաշարների ու նախևառաջ՝ ջրի մշտական աղբյուրների և երկրագործության համար պիտանի հողերի/արոտների փնտրտուքը բնակչության մեծաթիվ խմբերի մեկտեղելու էր այդ աղբյուրների մոտ՝ առաջ բերելով հակամարտություն/բնապաշարների համար պայքար և/կամ համակեցության անհրաժեշտություն՝ հասարակական հարաբերությունների կարգավորման առավել բարդ մեխանիզմների գործադրմամբ: Հարավային Միջագետքում տեղ գտած գործընթացները լավագույնս բնութագրում են այս երևույթը: Կլիմայի փոփոխությունն ու միջավայրի վատթարացումն ուշուրուկյան շրջանի վերջին փուլերում հանգեցնում է բնակավայրերի լքմանն ու ընդարձակ տարածքների ապաբնակեցմանը ոչ միայն ուրուկյան գաղութներում, այլև՝ հարավային Միջագետքում: Մյուս կողմից, մեծաթիվ բնակչության կենտրոնացումը գետահովիտներում՝ համեմատաբար սահմանափակ տարածքներում, զուգահեռաբար, ուղեկցվում էր սոցիալ-հասարակական այնպիսի զարգացումներով, որոնք հանգեցնելու էին, այսպես կոչված, «կոմպլեքսային հասարակություններ»-ի և/կամ վաղպետական կազմավորումների ծննդին[65]*: Այս գործընթացը բնութագրվում է սոցիալական փոփոխություններով՝ սոցիալական շերտավորմամբ ու հասարակական հարաբերությունների առավել բարդ ձևերի հաստատմամբ, ուրբանիզացիայի բարձր մակարդակով, իշխող խավի ձևավորմամբ և այդ խավի ձեռքին քրմական ու ռազմական/քաղաքական և տնտեսական իշխանության կենտրոնացմամբ՝ այդ իշխանության իրագործման տարբեր գործիքներով*[66]*:*

Այստեղ սահմանափակվենք՝ նշելով, որ համանման գործընթացներ են դիտարկվում ոչ միայն եփրատ-տիգրիսյան միջագետքում, այլև՝ Նեղոսի գետահովտում, Ինդոս և Դեղին գետերի հովիտներում և այլուր:

Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա Ք. ա. IV հազ. վերջերին կուր-արաքսյան մշակույթի միջուկային գոտում՝ կուր-արաքսյան միջագետքում դիտարկվող գործընթացները համահունչ են ուրուկյան ծավալման գոտում տեղ գտած գործընթացների հետ: Այստեղ փաստագրված կուր-արաքսյան մշակույթի վաղ՝ «էլառ-արագածյան» փուլին (կուր-արաքսյան I փուլ, Ք. ա. 3500/3350–2900 թթ.)[67] *բնորոշ են հիմնականում մեկ հնագիտական շերտով ներկայացող հուշարձանները (Մաղկասար 1, Ապարան III, Հոռոմ I, Նորաբաց, Անուշավան, Քյուլթեփե I և այլն)*[68]*: Ուշագրավ է, որ կուր-արաքսյան բազմաշերտ հուշարձաններում, որոնք պարունակում են թե՛ վաղ («էլառ-արագածյան» փուլի), և թե՛ ուշ («կառնուտ-չենգավիթյան» և/կամ «չրեչ-մոխրաբլուրյան») փուլերը ներկայացնող շերտեր (կուր-արաքսյան II*

[65] Brooks. 2013, 98f.

[66] *Տե՛ս, օրինակ,* Algaze. 2001, 33–37; Rothman. 2004; Lawrence, Philip, de Gruchy. 2021.

[67] Badalyan. 2014, 73–80; Badalyan. 2018, 51–54.

[68] *Արեշյան, Ղաֆադարյան. 1996, 35,* Areshian. 2005, 74; Areshian. 2007, 30; Hovsepyan, Mnatsakanyan. 2011, 24–26; Бадалян. 2003, с. 20–21; Badalyan. 2021, 216; Badalyan, Avetisyan. 2007, 37f., 57f.; Badalyan, Edens, Gorny *et al.* 1993, 3; Badalyan, Kohl, Stronach *et al.* 1994, 14–16.

փուլ, Ք. ա. 2900–2600/2500 թթ.[69]), որպես կանոն, այդ շերտերը միմյանցից բաժանվում են ստերիլ կամ հրդեհի շերտով: Մասնավորապես, Գեղարոտի բնակավայրում այդ շերտը ներկայանում է ավազակավային լանջակուտակումային նստվածքների տեսքով, ինչն ակնհայտորեն գոյացել է միջավայրի էրոզիայի հետևանքով[70]: Այդ նույնը երևում է նաև Մոխրաբլուրում: Ք. ա. IV հազ. երկրորդ կեսով թվագրվող IX հորիզոնի բնակատեղիի ավերումից հետո բնակավայրը միառժամանակ լքվում է, և կյանքն այստեղ շարունակվում է որոշակի ընդհատումից հետո, որի արգասիքն է VIII հորիզոնի բնակատեղին (Ք. ա. III հազ. սկիզբ)[71]: «Էլառ-արագածյան» և հաջորդող «կառնուտ-չենգավիթյան» ու «չրեչ-մոխրաբլուրյան» փուլերով ներկայացող բազմաշերտ հնավայրերում այս փուլերի միջև առկա է խզում և ուղիղ շարունակականություն չկա: Վերը հիշատակված Գեղարոտում այդ փուլի տևողությունը գնահատվում է մոտ կես դար[72]:

Ընդհանուր առմամբ, ակնհայտ է, որ «էլառ-արագածյան» փուլն ավարտվում է Ք. ա. մոտ 3000 թ. սահմաններում՝ բնակավայրերի լքմամբ (մասամբ՝ նաև ավերմամբ, ինչպես, օրինակ, Գեղարոտը) և դրանց տարածքի առժամանակյա ապաբնակեցմամբ: Դա ազդարարում էր նաև կուր-արաքսյան I փուլի ավարտը[73]:

Երբ կուր-արաքսյան I փուլի ավարտական ժամանակահատվածում միջուկային գոտում տեղ գտած երևույթները՝ բնակավայրերի լքումն ու ապաբնակեցումը դիտարկում ենք հինառաջավորասիական լայն համատեքստում, ապա ակնհայտ է դառնում, որ այստեղ տեղ գտած գործընթացները՝ ուրուկյան հետքաշումը և տեղական բնակավայրերի լքումն ու ամբողջական կամ մասնակի ապաբնակեցումը/բնակչության տեղաշարժերը փոխկապակցված էին և, ըստ երևույթին, պայմանավորված միևնույն գործոններով: Դա նկատվել է վաղուց[74], սակայն, վիճարկելի է այդ գործընթացներին սկիզբ դրած գործոնների խնդիրը[75]:

---

[69] B a d a l y a n. 2014, 80–88.

[70] B a d a l y a n. 2014, 80; B a d a l y a n. 2021, 216f., 220.

[71] *Ա ր ե շ յ ա ն, Մ ի մ ո ն յ ա ն, Մ ա ր գ ս յ ա ն. 1979, 208:*

[72] B a d a l y a n. 2014, 80; B a d a l y a n. 2021, 217f.

[73] *Ա վ ե տ ի ս յ ա ն. 2012, 14–15, Ա վ ե տ ի ս յ ա ն. 2014, 42–43,* B a d a l y a n. 2018, 54–56; B a d a l y a n. 2021, 220f.; R o t h m a n. 2021, 52.

[74] A l g a z e. 2001, 76; K o h l. 2009, 253; F r a n g i p a n e. 2014, 181f.; W i l k i n s o n. 2014, 219; S u m m e r s. 2014, 159; P a l u m b i. 2017, 113–117; G r i f o n i, P a l u m b i. 2020, 101; R o t h m a n. 2021, 52.

[75] *Կուր-արաքսյան ծավալման համար նշվում են տարբեր պատճառներ, այդ թվում՝ բնակչության աճի գործոնը* (A r e s h i a n. 2007, 29f.; R o t h m a n. 2015, 9192; R o t h m a n. 2018, 135f.)*, մետաղի և ընդհանրապես՝ առևտրի/առևտրական ճանապարհների աշխուժացման գործոնը* (S a g o n a. 1984, 138; M. K e l l y - B u c c e l l a t i. 1990, 122f.; B a t i u k, R o t h m a n. 2007; R o t h m a n. 2003; R o t h m a n. 2011b, 829; *Ա վ ե տ ի ս յ ա ն. 2012, 13–14*)*, գինեգործությունը և գինեգործության տարածումը* (B a t i u k. 2013, 450)*, էթնիկական նոր տարրերի ներթափանցումը դեպի «բնօրրան»* (K o h l. 2009, 254–260) *և այլն: Մասնագիտական գրականության մեջ կուր-արաքսյան ծավալման շարժիչ ուժերի*

Անկասկած է, որ երկրագործությունը և հատկապես հացահատիկային բույսերի մշակությունը բնութագրական է կուր-արաքսյան մշակույթի վաղ փուլի բնակավայրերին[76]: Պատահական չէ, որ կուր-արաքսյան բնակավայրերի շուրջ 2/3-րդը գտնվում է երկրագործության համար նպաստավոր և ավելի քան 400–600 մմ տարեկան տեղումներ ստացող գոտիներում[77], ինչը կրկնակի անգամ գերազանցում է տարեկան տեղումների այն նվազագույն չեմը, որն անհրաժեշտ է անջրդի երկրագործության համար: Դա իր հերթին հուշում է, որ այդ բնակավայրերում կուր-արաքսյան համայնքները զբաղվելու էին հենց անջրդի երկրագործությամբ: Ըստ այդմ, կարելի է վստահությամբ նշել, որ կուր-արաքսյան I փուլում գործ ունենք ոչ թե քոչվոր/կիսաքոչվոր-անասնապահ համայնքների կառուցած ժամանակավոր բնակատեղիների, այլ՝ հավասարակշռված տնտեսավարության վրա հիմնված մշտական բնակավայրերի հետ[78], ուր կարևոր դեր ուներ թե՛ երկրագործությունը, և թե՛ անասնապահությունը: Տնտեսության կազմակերպման առումով նման բնակավայրերը՝ հացահատիկի պահեստավորման համար նախատեսված հորերով[79], բնորոշ չեն անասնապահ-քոչվորական համայնքներին: Քոչվորական/կիսաքոչվոր կենցաղվարության դերը կուր-արաքսյան մշակույթում[80], իրապես, գերագնահատված է թվում[81]:

Ուստի, եթե գործ ունենք մի մշակույթի հետ, որն, ըստ էության, հիմնված էր երկրագործության վրա, ապա արդյո՞ք մշակութային այդ աշխարհում տեղ գտած ցնցումները պայմանավորված չէին հենց արդյունավետ երկրագործության խաթարմամբ, ինչպես նաև ի հայտ եկած խնդիրներին դիմագրավելու կամ փոփոխություններին հարմարվելու տեղի համայնքների անկարողությամբ: Կուր-արաքսյան I փուլի կամ «էլառ-արագածյան» խմբի բնակավայրերի լքումը մի ժամանակահատվածում, որը համընկնում է քննարկվող կլիմայական իրադարձության հետ, պատահականություն չի կարող լինել:

Կուր-արաքսյան I փուլի բնակավայրերի լքման պատճառը, կարծում ենք, կլիմայական փոփոխություններն էին՝ տեղումների կտրուկ անկումը, տևական ու առավել ցուրտ եղանակային պայմանների հաստատումը: Բերքի պարբերական կորուստը/ցածր բերքատվությունը, ինչն անխուսափելիորեն առաջացնելու էր սննդի պակաս, սով և սոցիալական պայթյուն, խախտելու էր այն հիմ-

թվում առաջ է քաշվել նաև, այսպես կոչված, «հրելու» և «քաշելու» գործոնը (տե՛ս Palumbi. 2017, 120, 125–127; Rothman. 2017, 244–246). *Քննարկումների համար ամփոփ տե՛ս նաև* Rothman. 2014, 41f.

[76] Hovsepyan. 2011, 61; Hovsepyan. 2015; Badalyan, Smith, Lindsay *et al.* 2014, 165–169. *Մանրամասն տե՛ս* Longford. 2015.

[77] Batiuk. 2013, 456.

[78] Batiuk. 2013, 453.

[79] *Սիմոնյան. 2013, 11*, Longford. 2015, 167.

[80] *Տե՛ս, օրինակ,* Kushnareva. 1997, 194–196; Frangipane, Palumbi. 2007, 251f. *և այլն:*

[81] Smith. 2005, 259; Batiuk. 2013; Batiuk, Rothman. 2007; Summers. 2014, 164f.; Longford. 2015, 155–159, 169f.; Sagona. 2018, 218, 227, 273–279.

քերը, որոնց վրա առնվազն մի քանի հարյուրամյակ հենված էր կուր-արաքսյան երկրագործական-անասնապահական համայնքը:

Կլիմայի փոփոխությանը կուր-արաքսյան նստակյաց բնակչությունը արձագանքել է դիմելով հարկադրված տեղաշարժի՝ լքելով իր բնակավայրը և փորձելով գտնել բնակության համար առավել բարենպաստ միջավայր: Կարելի է մտածել, որ պայմանների/միջավայրի փոփոխությունը վեր էր իրենց բնակության վայրում այդ փոփոխությանը հարմարվելու տեղի համայնքների կարողությունից: Ահա այս շրջանում է, որ կուր-արաքսյան համայնքները երկրագործական-անասնապահական տնտեսավարությունից անցում են կատարում չարժունակ անասնապահական/քոչվորական կենցաղավարության: Շարժունակությունը, ինչպես երևում է, միաժամանակ դառնում է կուր-արաքսյան համայնքի գոյության երաշխիքը:

Այս առումով կարելի է նշել ևս մեկ հետաքրքիր փաստ: Կուր-արաքսյան Ի «էլառ-արագածյան» փուլում խոշոր եղջերավոր անասունները կազմել են բավական նշանակալի տոկոս[82] ի տարբերություն հետագա փուլերում նկատվող մանր եղջերավոր (ոչխար և այծ) անասունների գլխաքանակի կտրուկ աճի (օրինակ՝ Գեղարոտում[83]): Ընդ որում, այս երևույթը նկատվում է դեռևս ուշ էնէոլիթի վերջում՝ ինչպես ուշուրուկյան, այնպես էլ՝ էնեոլիթյան կամ էնեոլիթյան և ուշուրուկյան նյութական մշակույթով ներկայացող տեղական հուշարձաններում[84]: Մանր եղջերավոր անասունների գլխաքանակի աճը, սովորաբար, պայմանավորում են տնտեսական գործոններով, նախևառաջ, նկատի ունենալով բրդի պահանջարկի աճը: Մինչդեռ, անասնապահության մեջ դիտարկվող այս փոփոխությունը կարող էր պայմանավորված լինել մեկ այլ գործնական պատճառով: Թե՛ չարժունակության, և թե՛ տաք ու չորային միջավայրին ու աղքատ արոտավայրերին հարմարվելու տեսանկյունից մանր չորքոտանիները, հատկապես այծերը, ցուցաբերում են շատ ավելի մեծ ընդունակություն այն դեպքում, երբ խոշոր եղջերավորների կախվածությունը խոտի և ջրի պաշարներից չափազանց մեծ է[85]:

Այսպիսով, ինչպես կարծում ենք, կլիմայի փոփոխությունն էր այն գլխավոր գործոնը, որը «հրեց» կուր-արաքսյան մշակույթի կրողներին՝ միջավայրային/կլիմայական փոփոխություններին իբրև այլընտրանք ընտրելու արտագաղթի և չարժունակ անասնապահական կենցաղավարության անցնելու ռազմավարությունը:

Հետաքրքիր է, որ ի տարբերություն հարավային Միջագետքի, ուր բնակչությունը սկսում է կենտրոնանալ ջրի մշտական աղբյուրների ու նախևառաջ՝ Եփրատի ափերի մոտ ընկած կենտրոններում՝ լքելով երբեմնի երկրագործական գոտիներում սփռված բնակավայրերը և առաջ բերելով ուրբանիզացիայի ան-

---

[82] Rothman. 2014, 43f.

[83] Badalyan, Smith, I. Lindsay *et al.* 2014, 163.

[84] Algaze. 2008, 46–48; Siracusano, Bartosiewicz. 2012; von Baeyer, Smith, Steadman. 2021. *Տե՛ս նաև* Frangipane. 2014, 172; Palumbi, Chataigner. 2014, 255f.; Grifoni, Palumbi. 2020, 101–103; Sagona. 2018, 277f. *և այլն:*

[85] Reshma Nair, Sejian, Silpa *et al.* 2021.

նախադեպ բարձր մակարդակ, կուր-արաքսյան միջուկային գոտում, օրինակ, Արաքսի ափերի մոտ նման գործընթացներ չեն արձանագրվում: Կուր-արաքսյան համայնքները չեն փորձում տեղումների պակասը լրացնել Արաքսից տարված ջրանցքների ջրերով՝ միջավայրի վերաձևման ռազմավարություն, որը հաջողությամբ իրականացնելու էր ուրարտական պետությունը Ք. ա. VIII–VII դարերում: Այս փաստը, միգուցե, հնարավոր է պայմանավորել հասարակության հնարավորություններն և աշխարհագրական պայմանների տարբերությամբ/բարդությամբ: Կարելի է մտածել, որ կուր-արաքսյան միջուկային գոտում հնարավոր ուրբանիզացիոն միտումներին խոչընդոտ է հանդիսացել լեռնաշխարհի բարդ ռելիեֆը, ինչը կուր-արաքսյան՝ սահմանափակ հնարավորություններով համայնքներին առաջադրել է անհաղթահարելի խնդիրներ:

Այս առումով նշենք, որ կուր-արաքսյան սակավամարդ և ցրված համայնքները, իսկ միջուկային գոտու բնակավայրերի դեպքում հատկապես գործ ունենք փոքր, տեղային ու անգամ մասնակի մեկուսացած համայնքների հետ[86], չեն ունեցել բավարար միջոց՝ հողային/ջրանցքաշինական հսկայական և բարդ աշխատանքներ իրականացնելու համար, եթե անգամ դրանցում ներգրավվեր աշխատունակ ողջ բնակչությունը[87]: Այստեղ նկատենք, որ կուր-արաքսյան բնակավայրերի մեծ մասի մակերեսը չէր գերազանցում 1 հեկտարը՝ սահմանափակ, ոչ ավելի, քան 75–150 մարդու հասնող բնակչությամբ: Նման քանակ է ենթադրվում, օրինակ, Նորաբացի (0.6–0.8 հա) և Ադաբլուրի համար (1 հա)[88], Պուլուր/Սաքյոլի (0.5 հա) բնակչության թիվը ենթադրվում է չուրջ 130 մարդու սահմաններում[89]: Ընդ որում, մակերեսի/բնակչության թվի նման պատկերը բնորոշ էր հատկապես կուր-արաքսյան I փուլի կամ այլ կերպ ասած՝ «էլառ-արագածյան» խմբի բնակավայրերին[90]: Ավելի մեծ մակերեսով բնակավայրեր ի հայտ են գալիս հետո՝ կուր-արաքսյան II փուլում՝ մեծաքանակ, մինչև 1 հա զբաղեցնող դյուղերից զատ ներառելով նաև 2–6 հա մակերեսով բնակավայրեր[91]՝ 400–1200 մարդու հասնող բնակչությամբ (100–200 մա-

[86] Rothman. 2018, 135.

[87] *Համայնքային կոլեկտիվ կազմակերպված աշխատանքի վկայություններ կան կուր-արաքսյան մի քանի հնավայրերում (պաշտպանական պատ կամ հենապատ, մոնումենտալ պաշտամունքային աշտարակ և այլն), սակայն դրանք վերաբերում են կուր-արաքսյան II փուլին [տե՛ս* Burney, Lang. 1971, 57; *Արեշյան, Սիմոնյան, Սարգսյան և այլք. 1977, 267–268, Արեշյան, Ղաֆադարյան. 1996, 63–66,* Areshian. 2005, 79, figs 14, 16–18; Areshian. 2007, 33, 37f.; *Խանզադյան. 1979, 11–13 (Մոխրաբլուր, Ադաբլուր, Գառնի, Շրեշ-բլուր, Զյանբերդ, էլառ և այլն),* Simonyan, Rothman. 2015, 21f.; Rothman. 2021, 63f., 65 and fig. 11 *(Շենգավիթ)*; Alizadeh, Eghbal, Samei. 2015, 44–49 *(Ռավազ/Քյոհնե Շահար) և այլն: Տե՛ս նաև* Erarslan. 2011, 22; Kroll. 2017; Sagona. 2018, 241f].

[88] Areshian. 2005, 75f., 79; Areshian. 2007, 31.

[89] Conti, Persiani. 1992, 404.

[90] Rothman. 2021, 55.

[91] *Համմ., օրինակ, Նորշունթեփեն՝ 3.2 հա* (Erarslan. 2011, 22), *Մոխրաբլուրը՝ 3.5 հա* (Areshian. 2005, 76), *Ամիրանիս–Գորան՝ 4 հա* (Kohl.

րդ/հա հաշվարկով)[92]*: Կուր-արաքսյան առավել մեծ բնակավայրերը, ամեն դեպքում, չէին գերազանցում 10–15 հազ. հա*[93]*:*

Հետևաբար, կարելի է մտածել, որ Արաքսի կամ լեռնաշխարհի մեկ այլ՝ մշտական հոսք ունեցող գետի ափերին կուր-արաքսյան համայնքները եթե անգամ փորձել են կենտրոնանալ՝ հաստատվելով որևէ բնակավայրի չուրջ և փորձելով համատեղ ուժերով շրջակա միջավայրը հարմարեցնել նոր պայմաններին, ապա այդ փորձերն ավարտվել են անհաջողությամբ: Այստեղ կարող էր դերակատար լինել նաև այն փաստը, որ կուր-արաքսյան ընդհանրության շրջանում միևնույն հոգևոր-մշակութային աշխարհը կիսող մերձավոր համայնքները, եթե անգամ խոսել են միևնույն լեզվով, չեն ունեցել այնպիսի պաշտամունքային համակարգ, որը կենթադրեր ինչպես տեղային, այնպես էլ՝ «համակուրարաքսյան աստվածություն»-ների գոյություն՝ այս կամ այն բնակավայրն ունենալով իբրև տվյալ աստվածության պաշտամունքի կենտրոն[94]*: Վաղ կուր-արաքսյան «հավասարարական» կամ «հորիզոնական» սոցիալական կառուցվածքով ներկայացող հասարակության մեջ պաշտամունքային համակարգը թեև ցույց է տալիս հավատալիքների՝ հնագիտորեն փաստագրված որոշակի ընդհանրություն, սակայն այն գերազանցապես ընտանեկան բնույթ ուներ՝ այդ պաշտամունքի կենտրոնում ունենալով կուր-արաքսյան մշակույթին բնութագրական կավե «եռաթերթ», երբեմն՝ մարդակերպ կամ կենդանակերպ քանդակված օջախները կամ շարժական պայտաձև օջախ-հենակները*[95]*: Առավելագույն դեպքում պաշամունքային այդ համակարգը համայնքային մակարդակից անդին չէր անցնում*[96] *և խոսել քրմական իշխա-*

2009, 250), *Սղնախները (Քեթի)՝ 5 հա* (Петросян. 1989, 13), *Շենգավիթը և Կառնուտը՝ 6 հա (Սիմոնյան. 2013, 6), Հառիճը՝ 6–7 հա (Արեշյան, Ղաֆադարյան. 1996, 59–60,* Areshian. 2005, 81, n. 25; Kohl. 2009, 250) *և այլն: Բնակավայրերի աստիճանակարգման համար տե՛ս* Kushnareva. 1997, 74–78; Areshian. 2007, 40–42; Kohl. 2009, 250; Sagona. 2018, 218.

[92] *Տե՛ս և համմա., օրինակ,* Simonyan, Rothman. 2015, 20.

[93] *Էլառ և Դվին՝ 10 հա (Խանզադյան. 1979, 9,* Areshian. 2005, 82f.; Areshian. 2007, 39), *Գոդին Թեփե՝ 10 հա* (Areshian. 2007, 40), *Բարուջ Թեփե Մարանդ՝ 10 հա, Ռավազ/Քյոհնե Շահար՝ 15 հա* (Kroll. 2005, 116; Alizadeh, Eghbal, Samei. 2015, 40):

[94] *Հարավային Միջագետքում Ուրուկ-Վարկայի՝ իբրև նման «համաշուքերական» կենտրոնի դերակատարության համար տե՛ս* Algaze. 2008, 114f.

[95] Burney, Lang. 1971, 77f.; Sagona. 1998, 22–25; Sagona. 2018, 248–253; *Գնուն. 2006, Ավետիսյան. 2012, 17–18,* Greenberg, Palumbi. 2014, 123; Simonyan, Rothman. 2015, 27–33. *Տե՛ս նաև* Smith. 2015, 118–121; Rothman. 2017, 241–243; Rothman. 2021, 63; Kelly-Buccellati. 2018, 119f.; Grifoni, Palumbi. 2020, 100.

[96] Sagona. 2018, 252. *Այստեղ կարող ենք նշել համայնքային կառույցների/սրբարանների մասին, ինչպիսիք բացվել են, օրինակ, Շենգավիթում, Կվացխելեբիում, Գոդին Թեփեում և այլուր: Ամփոփ տե՛ս* Simonyan, Rothman. 2015, 23–25, 36f.; Grifoni, Palumbi. 2020, 102–108. *Մոխրաբլուրի 6*

նուիթյան մասին, որը կկարողանար համախմբել մարդկային կամ նյութական չատ ավելի մեծ միջոց, քան կարող էր տրամադրել տվյալ համայնքը, թերևս, ավելորդ է: Այս բոլոր գործոններն առանձին կամ միասին վերցրած կարող էին խոչընդոտ հանդիսանալ կուր-արաքսյան միջագետքում ուրբանիզացիայի խորացման, կոմպլեքսային հասարակութիւնների ձևավորման, ապա և՝ վաղ պետականութեան անցման գործում:

Եզրակացութիւն

Ք. ա. մոտ 3000 թ. կուր-արաքսյան մշակութեի հանգուցային տարեթվերից է: Այն մի կողմից բաժանում է կուր-արաքսյան I փուլը II-ից, մյուս կողմից մատնանշում է կուր-արաքսյան ծավալման սկիզբը[97]: Կուր-արաքսյան փուլերի միջև անցումը և ծավալման սկզբնավորումը, ինչպես երևում է, մեծապես պայմանավորված էր 5.2 *հազար տարի մեզանից առաջ կլիմայական իրադարձութեամբ: Կուր-արաքսյան միջուկային գոտում դիտարկվող երևութները հանդիպում են նաև լեռնաչխարհի սահմաններից դուրս, օրինակ, ինչպես վերը նշվեց, հյուսիս-սիրիական – հյուսիս-միջագետքյան անջրդի երկրագործական գոտիներում, բայց էապես տարբերվում են հարավային Միջագետքում տեղ գտած գործընթացներից: Ըստ երևութեին, կուր-արաքսյան և հարավ-միջագետքյան/ուրուկյան հասարակութիւնները կլիմայական փոփոխութիւններին արձագանքել են տարբեր կերպ, կայացրել ռազմավարական տարբեր որոշումներ՝ հանգելով միանգամայն տարբեր, անգամ՝ հակընդիր արդյունքների: Դա կարող էր պայմանավորված լինել միջավայրի առանձնահատկութիւններով կամ տեղի հասարակութիւնների մոտ գոյութիւն ունեցող սոցիալ-տնտեսական և մշակութային համատեքստով: Կուր-արաքսյան միջուկային գոտում այն դրսևորվում է կենցաղվարութեան փոփոխութեամբ և անցումով դեպի չարժունակ անասնապահութիւն: Երբեմնի երկրագործական մշտական բնակավայրերը լքվում են, տարածքը՝ առժամանակ ապաբնակեցվում, իսկ բնակչութիւնը զանգվածաբար տեղաշարժվում է դեպի առավել բարենպաստ գոտիներ: Նման գոտիներից էր Հայկական լեռնաչխարհի արևմուտքը, ուր կուր-արաքսյան վաղ փուլի՝ «էլառ-արագածյան» տիպի խեցեղենը մուտք է գործում Մշո դաշտ, ապա և հայտնվում է մերձեփրատյան գոտիներում Ք. ա. 3000 թ. սահմաններում[98], բերվելով, ըստ երևութեին, Արածանիի հոսանքով դեպի Եփրատ չարժվող համայնքների կողմից:*

Մյուս կողմից՝ կուր-արաքսյան խմբերի տեղաշարժերը, որոնք բազմաթիվ հետազոտողներ պայմանավորում են գոյութիւն ունեցող առևտրական ճանապարհների երթուղիներով, իսկ բուն տեղաշարժերը դիտարկում իբրև արհեստավորների/վաճառականների առանձին խմբերի ներհոսք[99], ակնհայտո-

մետրանոց աշտարակը, որի վրա իր հերթին կանգնեցվել է 4 մ բարձրութեամբ պաշտամունքային կոթող, հնարավոր է՝ որպես սրբարան ծառայել է նաև Մոխրաբլուրի հարակից բնակավայրերի համար: Այն թվագրվում է կուր-արաքսյան II փուլով (տե՛ս և համմ. A r e s h i a n. 2005, 79f.; A r e s h i a n. 2007, 38f.)*:*

[97] R o t h m a n. 2021, 52.

[98] B a d a l y a n. 2021, 220; R o t h m a n. 2021, 55.

[99] *Տե՛ս, օրինակ* B a t i u k , R o t h m a n. 2007.

րեն, ընթացել են՝ շրջանցելով հյուսիս-սիրիական – հյուսիս-միջագետքյան ընդարձակ գոտին: Կուր-արաքսյան մշակույթը թռուցիկ ներկայացված է միայն Եփրատի մեծ ոլորանի շրջանում՝ Եփրատի ափերին ընկած որոշ հնավայրերում, և խոպառ բացակայում է Բալիխ, ըստ էության, նաև՝ Խաբուր գետերի ավազաններում[100]: Միլմչել Ռոթմանի դիտարկմամբ՝ կուր-արաքսյան խեցեղենը հազվադեպ է հանդիպում «լեռների տակերից անդին»[101]: Սա կարող է ունենալ իր բացատրությունը. երբեմնի ծաղկուն հյուսիսային Սիրիան և հյուսիսային Միջագետքը, կլիմայական այդ նույն իրադարձության արդյունքում կորցնելով իրենց իսկ բնակչության ճնշող մասը, պարզապես վեր էին ածվել անհյուրընկալ տարածքի և ոչինչ չէին կարող առաջարկել կուր-արաքսյան վերաբնակիչներին[102]: Մյուս կողմից՝ կուր-արաքսյան խեցեղենի խիստ թռուցիկ ներկայությունը վերինտիգրիսյան գոտում, այս դեպքում, կարող էր պայմանավորված լինել տվյալ գոտում ձևավորված բավական կենսունակ համայնքների ցուցաբերած հնարավոր դիմադրությամբ[103]: Սղերդից ոչ հեռու գտնվող Բաշուր Հյոյուքում բացված ու գերազանցապես Նինվե 5 խեցեղենով ներկայացող, բրոնզե զենքերի, մետաղե և անմնական արդուզարդի իրերի հարուստ բազմազանությամբ ու մարդկային զոհաբերություններով ուղեկցվող «վերնախավային» դամբարանները և կից թաղումները (Ք. ա. մոտ 3100–2900 թթ.)[104] կարելի է դիտարկել այդ գոտում սեփական շահերը պաշտպանելու կարող ռազմունակ վերնախավի ներկայության նման վկայություն:

Կլիմայական գործոնի դերը կուր-արաքսյան ֆենոմենի համատեքստում, ինչ խոսք, չի անտեսվել: Սակայն, իբրև գործոն, այն հիմնականում դիտարկվել է կուր-արաքսյան մշակույթի կայացման տեսանկյունից[105]: Կուր-արաքսյան ծավալման և կլիմայի կապը թռուցիկ ակնարկել են միայն մի քանի հետազոտող[106]: Ցավոք, կուր-արաքսյան միջագետքին վերաբերող հնակլիմայաբանական աշխատանքները սակավաթիվ են և ամբողջական պատկեր դեռևս չեն տալիս[107]: Որքան հայտնի է, այս գոտու կուր-արաքսյան հնավայրերից

---

[100] Smith. 2005, 259; Smith, Badalyan, Avetisyan. 2009, 26; Kohl. 2009, 253; Batiuk. 2013, 451, fig. 1.

[101] Rothman. 2014, 39.

[102] *Հմմտ. նաև* Longford. 2015, 169.

[103] *Հմմտ., օրինակ,* Kohl. 2009, 254.

[104] Sağlamtimur. 2017; Baysal, Sağlamtimur. 2021.

[105] Sagona. 1984, 138f.; Palumbi. 2008, 47f.; Rothman. 2017, 239, Rothman. 2021, 54. *Կուր-արաքսյան մշակույթում միջավայրի խաղացած դերակատարության համար հմմտ. նաև* Areshian. 2007, 44f.; *Գնուն ի. 2010, 90–91,* Rothman. 2017, 232–235. *Կուր-արաքսյան մշակույթի անկման գործում կլիմայական փոփոխությունների դժվարության համար տե՛ս նաև* Areshian. 2005, 84; Areshian. 2007, 47; Grekyan. 2022; Kosyan. 2022.

[106] Rothman, Kozbe. 1997, 110 and n. 4; Algaze. 2000, 77; Rothman. 2003, 109; Трифонов, Караханян. 2004, 336–337.

[107] Kvavadze, Connor. 2005; Longford, Drinnan, Sagona. 2009, 131–133; Connor, Kvavadze. 2014, 15–19; Joannin, Ali, Ollivier *et*

հայտնաբերված հնագիտական բուսական մնացորդների կայուն ածխածնի իզոտոպային ուսումնասիրություններ նույնպես առկա չեն[108], ինչը թույլ կտար վերհանել կլիմայական տատանումների և բերքատվության միջև կապը[109]: Հետևաբար, հնամիջավայրային տարաբնույթ հետազոտությունների անցկացումը խիստ անհրաժեշտ է թվում՝ կուր-արաքսյան ֆենոմենը խորությամբ հասկանալու համար: Եվ թեև ընդունված է կարծել, որ Ք. ա. IV–III հազարամյակներում գործ ունենք բավական կայուն, ընդ որում՝ չատ ավելի խոնավ և տեղումնառատ կլիմայի հետ[110], բայց պետք է նկատի ունենալ, որ կլիմայական՝ թեկուզև կարճատև (մի քանի տասնամյակից մինչև մեկ դար), բայց կտրուկ փոփոխությունը կարող էր նման տատանումների հանդեպ զգայուն, կուր-արաքսյան աշխարհում խորքային, հարյուրամյակներ տևող գործընթացների սկիզբ դնել:

Մյուս կողմից՝ կլիմայական փոփոխության՝ իբրև կուր-արաքսյան ծավալման «հրման» գործոնի տեսակետն ամենևին չի բացառում մյուս գործոնների դերը (մետաղի առևտուր, գիտելիքի արտահանում և այլն)[111]: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ կուր-արաքսյան ծավալումը տեղի է ունեցել մի քանի փուլերով (կուր-արաքսյան կրկնակի ներկայություն է վկայված, օրինակ, Գոդին Թեփեում, Արսլանթեփեում և այլուր), և եթե առաջին փուլում կլիմայական փոփոխությունը կարող էր կատարել «հրելու» դերը, ապա հետագա դարերի համար «քաշելու» դերին կարող են հավակնել միանգամայն այլ, մասնագիտական գրականության մեջ արդեն իսկ արծարծված գործոններ:

Որպես կանոն՝ կլիմայական փոփոխությունները համընկնում են գրավոր և հնագիտական աղբյուրներով վկայված ճգնաժամային երևույթների հետ: Կուր-արաքսյան ծավալման պարագայում գրավոր աղբյուրները բացակայում են, սակայն առկա հնագիտական և հնամիջավայրային տվյալները բավարար են թվում՝ առնվազն կարծիքի մակարդակով կուր-արաքսյան մշակութային աշխարհում տեղ գտած գործընթացների վրա կլիմայական փոփոխությունների խաղացած դերը քննարկելու համար:

Երվանդ Գրեկյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայաստանի վաղ հնագիտության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների և Հին Առաջավոր Ասիայի երկրների պատմություն ու պատմական աշխարհագրություն, սոցիալ-տնտեսական հարաբերություններ, հոգևոր մշակույթ, հնագիտություն և հնամիջավայր: Համահեղինակ է 2 կոլեկտիվ մենագրության և ավելի քան 90 հոդվածի:
ervandgr@yahoo.com

---

al. 2014; Leroyer, Joannin, Aoustin *et al.* 2016; Jude, Marguerie, Badalyan *et al.* 2016; Cromartie, Blanchet, Barhoumi *et al.* 2020.

[108] *Վերինեփրատյան գոտու համար տե՛ս, օրինակ,* Masi, Sadori, Baneschi *et al.* 2013a; Masi, Sadori, Zanchetta *et al.* 2013b.

[109] Riehl. 2021.

[110] *Տե՛ս և համմ.* Трифонов, Караханян. 2004, 336; Palumbi. 2008, 5; Smith. 2015, 107.

[111] *Տե՛ս ծանոթ. 75:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավետիսյան Պ. Ս. 2012, Հայկական լեռնաշխարհի հնամշակութային միջավայրի ձևափոխումների հիմնական միտումները Վաղ բրոնզի դարում. – ՊԲՀ, № 2, էջ 3–19:

Ավետիսյան Պ. Ս. 2014, Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում (Սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների): Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման գիտական զեկուցում, Երևան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 92 էջ:

Արեշյան Գ. Ե., Ղաֆադարյան Կ. Կ. 1996, Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների ճարտարապետությունը վաղ բրոնզի դարում. – Հայկական ճարտարապետության պատմություն, հ. առաջին. Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը հնագույն ժամանակներից մինչև մ. թ. ա. 3–րդ դարը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 19–67:

Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ. 1977, Հայագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 3, էջ 266–274:

Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ. 1979, Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 205–224:

Գնունի Ա. 2006, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները. – ՊԲՀ, № 1, էջ 236–253:

Գնունի Ա. 2010, Հայաստանում քաղաքագոյացման հիմնահարցի շուրջ. Վաղ բրոնզի ուրբանիզմի սոցիո-մշակութաբանական վերլուծության փորձ. – «ՎԷՄ. Համահայկական հանդես», № 4, էջ 89–111:

Խանզադյան Է. 1979, Էլառ–Դարանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 188 էջ, 34 էջ աղ.:

Սիմոնյան Հ. 2013. Շենգավիթ. Շարքային բնակավա՞յր, թե՞ վաղ քաղաք. – «Հուշարձան», Երևան, № 8, էջ 5–53:

Бадалян Р. С. 2003, Раннебронзовое поселение Апаран III. – Древнейшая культура Армении, 3. Материалы сессии, посвященной 70-летию Телемака Хачатряна.Ереван, «Мугни», с. 20–26.

Петросян Л. А. 1989, Раскопки памятников Кети и Воскеаска (III–I тыс. до н. э.). – Археологические раскопки в Армении. № 21, Ереван, Изд. АН АрмССР, 180 с., илл.

Трифонов В. Г., Караханян А. С. 2004, Геодинамика и история цивилизаций. М., «Наука», 668 с.

Akkermans P. M. M. G., Schwartz G. M. 2003, The Archaeology of Syria. From Hunter-Gatherers to Early Urban Societies (c. 16,000–300 BC). Cambridge, Cambridge University Press, pp. 467.

Algaze G. 1986, Habuba on the Tigris: Archaic Nineveh Reconsidered.– Journal of Near Eastern Studies. Chicago, vol. 45/2, pp. 125–137.

Algaze G. 1989, The Uruk Expansion: Cross-Cultural Exchange in Early Mesopotamian Civilization.– Current Anthropology. Chicago, vol. 30/5, pp. 571–608.

Algaze G. 1993, The Uruk Wold System. The Dynamics of Expansion of Early Mesopotamian Civilization. Chicago – London, The University of Chicago Press, pp. 162.

Algaze G. 2001, The Prehistory of Imperialism, M. S. Rothman (ed.), Uruk Mesopotamia & Its Neighbors: Cross-Cultural Interactions in the Era of State Formation. Santa Fe, NM, School of American Research Press, pp. 27–83.

Algaze G. 2008, Ancient Mesopotamia at the Dawn of Civilization. The Evolution of an Urban Landscape. Chicago – London, The University of Chicago Press, pp. 230.

Algaze G. 2013, The End of Prehistory and the Uruk Period, H. Crawford (ed.), The Sumerian World. London – New York, Routledge, pp. 68–94.

Alizadeh K., Eghbal H., Samei S. 2015, Approaches to Social Complexity in Kura-Araxes Culture: A View from Köhne Shahar (Ravaz) in Chaldran, Iranian Azerbaijan, Paléorient. Paris, vol. 41/1, pp. 37–54.

Altaweel M., Marsh A., Jotheri J., Hritz C., Fleitmann D., Rost S., Lintner S. F., Gibson M., Bosomworth M., Jacobson M., Garzanti E., Limonta M., Radeff G. 2019, New Insights on the Role of Environmental Dynamics Shaping Southern Mesopotamia: From the Pre-Udaid to the Early Islamic Period, Iraq, London, vol. 81, pp. 23–46.

Aqrawi A. A. M. 2001, Stratigraphic Signatures of Climatic Changes during the Holocene Evolution of the Tigris-Euphrates Delta, Lower Mesopotamia, Global and Planetary Change. Amsterdam, vol. 28, pp. 267–283.

Areshian G. E. 2005, Early Bronze Age Settlements in the Ararat Plain and its Vicinity, Archäologische Mitteilungen aus Iran und Turan, Berlin. Bd. 37, S. 71–88.

Areshian G. E. 2007, From Extended Families to Incipient Polities: The Trajectory of Social Complexity in the Early Bronze Age of the Ararat Plain (Central Near Eastern Highlands), L. M. Popova, Ch. W. Hartley, A. T. Smith (eds), Social Orders and Social Landscapes. Newcastle, Cambridge Scholars Publishing, pp. 26–54.

Arıkan B. 2015, Modeling the Paleoclimate (ca. 6000-3200 cal BP) in Eastern Anatolia: The Method of Macrophysical Climate Model and Comparisons with Proxy Data, Journal of Archaeological Science. Amsterdam, vol. 57, pp. 158–167.

Arrivabeni M. 2010, Early Bronze Age Settlement in the Tell Leilan Region: A Report on the Ceramic Material of the 1995 Survey, Kaskal. Venice, vol. 7, pp. 1–49.

Badalyan R. S. 2014, New Data on the Periodization and Chronology of the Kura-Araxes Culture in Armenia, Paléorient. Paris, vol. 40/2, pp. 71–92.

Badalyan R. S. 2018, The Chronology of the Kura-Araxes: New Data and Old Problems of Periodizations and Chronology of the Early Bronze Age Materials in Armenia, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies. Oxford, vol. 12/1, pp. 51–65.

Badalyan R. 2021, From Homogeneity to Heterogeneity. The Periodizations and Chronology of Kura-Araxes: The View from Armenia, L. Giemsch, S. Hansen (eds), The Caucasus. Bridge between the Urban Centres in Mesopotamia and the Pontic Steppes in the 4th and 3rd Millennium BC. The Transfer of Knowledge and Technologies between East and West in the Bronze Age. Proceedings of the Caucasus Conference, Frankfurt am Main, November 28 – December 1, 2018, Schriften des Archäologischen Museums Frankfurt Bd. 34. Frankfurt am Main, Verlag Schnell & Steiner GmbH, pp. 211–222.

Badalyan R. S., Avetisyan P. S. 2007, Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, I. Mt. Aragats and its Surrounding Region, British Archaeological Reports, International Series no. 1697. Oxford, Archaeopress, pp. 319.

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

Badalyan R., Edens C., Gorny R., Kohl Ph., Stronach D., Tonikjan A., Hmayakyan S., Mandrikyan S., Zardaryan M. 1993, Preliminary Report on the 1992 Excavations at Horom, Armenia, Iran. London, vol. 31, pp. 1–24.

Badalyan R., Kohl Ph., Stronach D., Tonikjan A. 1994, Preliminary Report on the 1993 Excavations at Horom, Armenia, Iran. London, vol. 32, pp. 1–29.

Badalyan R. S., Smith A. T., Lindsay I., Harutyunyan A., Greene A., Marshall M., Monahan B., Hovsepyan R. 2014 (2016), A Preliminary Report on the 2008, 2010, and 2011 Investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia, Archäologische Mitteilungen aus Iran und Turan. Berlin, Bd. 46, S. 149–222.

Bar-Matthews M., Ayalon A. 2004, Speleothems as Palaeoclimate Indicators, A Case Study from Soreq Cave Located in the Eastern Mediterranean Region, Israel, R. W. Battarbee, F. Gasse, C. E. Stickley (eds), Past Climate Variability through Europe and Africa, Developments in Paleoenvironmental Research no. 6. Dordrecht, Springer, pp. 363–391.

Bar-Matthews M., Ayalon A. 2011, Mid-Holocene Climate Variations Revealed by High-Resolution Speleothem Records from Soreq Cave, Israel and Their Correlation with Cultural Changes, The Holocene. Thousend Oaks, Cal., vol. 21/1, pp. 163–171.

Baştürk M. B., Konakçı E. 2005, Settlement Patterns in the Malatya Elazığ Region in the IV and III Millennium BC, Altorientalische Forschungen. Berlin, Bd. 32/1, S. 97–114.

Batiuk S. G. 2013, The Fruits of Migration: Understanding the ‘Long Dureé’ and the Socio-Economic Relations of the Early Transcaucasian Culture, Journal of Anthropological Archaeology. Amsterdam, vol. 32, pp. 449–477.

Batiuk S. G., Rothman M. S. 2007, Early Transcaucasian Cultures and Their Neighbors: Unraveling Migration, Trade, and Assimilation, Expedition. Philadelphia, Pa., vol. 49/1, pp. 7–17.

– Նույն թվին լուսժողկոմի[30] կարգադրությամբ մեկնում է Թիֆլիս՝ Անդրկովկասյան մամուլի ցուցահանդեսում հայկական պավիլիոնը կազմակերպելու համար:

– Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] միաժամանակ երկու հրավեր է ստանում Հայաստանից. ա. ստանձնել Երևանի գեղարվեստական-տեխնիկական դպրոցի վարիչի պաշտոնը, բ. ստանձնել Էջմիածնի թանգարան-մատենադարանի օգնական-վարիչի պաշտոնը:

– 1924-ի աշնանից Գ. Լ[ևոնյանը] վերջնականապես տեղափոխվում է Հայաստան:

– 1925-ի սկզբից Երևանում հրավիրվում է ստանձնելու Հայաստ[անի] օգնութ[յան] կենտր[ոնական] կոմիտեի գեղարվեստական-հրատարակչ[ական] բաժնի վարիչի և «Հրավիրակ»-ի խմբագրի պաշտոնները:

– Նույն թվին լուսժողկոմատի կողմից նշանակվում է Փարիզում բացվելիք արվեստա-արդյունաբերական ցուցահանդեսում Հայաստանի բաժինը կազմակերպող հանձնաժողովի անդամ և քարտուղար:

---

[27] *Կանայան Ստեփան (1860–1936). հայ ճանաչված բանասեր, պատմաբան և մանկավարժ:*

[28] *Վրաստանում բնակվող հայ գրողներին ու արվեստագետներին միավորելու և նրանց գործունեությունը նորահաստատ խորհրդային իշխանության նախանշած նպատակներին ծառայեցնելու նպատակով 1921 թ. մարտին Թիֆլիսում ստեղծված գրական-մշակութային կազմակերպություն:*

[29] *Գ. Լևոնյանի «Հայ կերպարվեստագետներ. միջին դարերից մինչև մեր ժամանակը» կենսագրական բառարանն անտիպ է:*

[30] *1923 թ. հունվարից մինչև 1929 թ. հոկտեմբերը (իր մահը) ՀՍԽՀ լուսավորության ժողկոմն Աբգարանազ Մռավյանն էր:*

— Նույն թվին ընտրվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ:

— Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] հրավեր է ստանում Պետակ[ան] համալսարանի վարչությունից՝ առաջիկա 1925-1926 ուստարվ[ական] տարվանից դասախոսելու գեղարվեստի պատմություն:

— Նույն թվին Հայկենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից հրատարակվելիք «Հայաստանը — 5 տարի» ժողովածուի[31] խմբագրական կոլեգիայից հրավիրվում է որպես այդ ժողովածուի գեղարվեստական տպարանա-տեխնիկական մասի վարիչ:

Ծանոթություն

— Գարեգին Լևոնյանն իր գրական գործունեության ընթացքում աշխատակցել է 40-ից ավելի պարբերականների՝ տալով հոդվածներ պատմա-հնագիտական, բանասիրական-քննադատական, հրապարակախոսական և այլն:

— Հրապարակական[32] դասախոսություններ է կարդացել 80-ի չափ թե՛ խ[որհրդային] Միության սահմաններում և թե՛ արտասահմանում:

— Կազմակերպել է հայ մամուլի ցուցահանդեսներ 5 անգամ. Թիֆլիսում, Լենինականում և Երևանում:

- Հրատարակել է իր կազմած մի շարք դասագրքերն ու ձեռնարկները տեղագրության, նկարչության[33] և գծագրության:

— Անվճար պաշտոններ վարել է, բացի վերևում հիշվածներից, հետևյալ հասարակական-կուլտուրական հիմնարկներում. Կովկ[ասյան] Հայոց հրատարակչ[ական] ընկ[երության] խորհրդի անդամ և քարտուղար, Հայ արվեստագետների միության խորհրդի անդամ և քարտուղար, Հայոց ազգագրակ[ան] ընկերության խմբագր[ական] ժողովի անդամ, Հայոց ղրամատիկ[ական] ընկերության ժյուրիի անդամ:

— Քաղաքական կուսակցություններից Գ. Լ[ևոնյանը] մի քանի տարի գործել է Էջմիածնում եղած ժամանակ Հնչակյան կուսակց[ության] մեջ՝ լինելով տեղ[ական] կոմիտեի անդամ:

Կազմեց՝ Գարեգին Լևոնյանց

ՀԱԱ, ֆ. 122, ց. 5, գ. 19, թ. 3–4 շրջ.: Բնագիր: Ինքնագիր:

---

[31] *Տե՛ս Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920–1925, հրատ. ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի, Երևան, 1926, 472 էջ:*

[32] *Հրապարակային:*

[33] *Մասնավորապես տե՛ս Գ. Լ ևոնեան. Գծագրություն եւ նկարչություն: Տարրական դասընթաց, Մաս առաջին. Ստորին դասարանների համար, Թիֆլիս, 1905, նույնի՝ Հայկական վայելչագրություն եւ գեղագրություն դպրոցների եւ ընտանիքների համար, Տետրակ Ա. Տարրական դասընթաց, Պարզ գրություն, Թիֆլիս, 1908, Տետրակ Բ. Միջին դասընթաց, Պարզ եւ վայելուչ գրություն, Թիֆլիս, 1908, Տետրակ Գ. Մասնագիտական դասընթաց, Գեղագրություն, Թիֆլիս, 1908, նույնի՝ Գծագրություն եւ նկարչություն: Տարրական դասընթաց, Առաջին մաս. Գծեր, ձեւեր, մարմիններ, ստորին դասարանների համար, Թիֆլիս, 1909, Երկրորդ մաս. Հեռանկար (պերսպեկտիվա), միջին դասարանների համար, Թիֆլիս, 1909:*

№ 2

ԳԱՐԵԳԻՆ ՋԻՎԱՆԻ ԼԵՎՈՆՅԱՆ
(Կենսագրական տեղեկանք)

28 հունվարի 1947 թ.
Երևան

Ծնվել է Ալեքսանդրապոլում (Լենինական) 1872 թ. հոկտեմբերի 24-ին աշուղի ընտանիքում: Տարրական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցներից մեկում, միջնակարգը՝ ռուսաց քաղաքային ուսումնարանում: Պատանի հասակից սիրել է արվեստ և գրականություն: 1892-ին լույս է ընծայում իր անդրանիկ աշխատությունը՝ «Հայ աշուղներ», 1895-ին լույս է տեսնում նրա երկրորդ աշխատությունը՝ «Հայոց պարբերական մամուլը», որն արժանանում է Կ. Պոլսում Սահակ-Մեսրոբյան մրցանակին:

1895-ին Գ. Լևոնյանն իր ծնողների հետ տեղափոխվում է Թիֆլիս, ուր մնալով մի քանի տարի, ստիպենդիա է ճարում[34] և գնում է Մոսկվա՝ նկարչություն սովորելու:

1898-ին նա գնում է Պետերբուրգ (Լենինգրադ), որտեղ ակադեմիկոս [Լ.] Դմիտրիևի արվեստանոցում աշխատելուց հետո մտնում է Արվեստների ակադեմիա (Академия художеств)՝ *աշխատելով պրոֆ. [Վ.] Մաքեի մոտ:*

1902-ի աշնանը Գ. Լ[ևոնյանը] վերադառնում է Կովկաս՝ հրավիրված լինելով Էջմիածնի ճեմարան նկարչության ուսուցիչ: Ճեմարանում նրա պաշտոնավարությունը տևում է 5 տարի:

1906-ին նա մեկնում է Գերմանիա՝ Լայպցիգում մնալով 5 ամիս և աշխատելով փորագրության արվեստի մեջ հմտություն ձեռք բերելու մի հայտնի պոլիգրաֆի գործարանում: Վաղարշապատում եղած ժամանակ մոտ 3 տարի գործել է Հնչակյան կուսակցության տեղական կոմիտեի մեջ[35]: 1907-ին Գ. Լ[ևոնյանը] վերադառնում է Թիֆլիս, ուր բաց է անում Գեղարվեստական կուրսեր, որտեղ սովորողներն ավարտելիս ստանում են նկարչության և ուսուցչի կոչում: 1908-ից նա սկսում է խմբագրել և հրատարակել «Գեղարվեստ» գրական-արվեստագիտական ժուռնալը՝ իր շուրջը գրավելով ժամանակի լավագույն գրողներին և արվեստագետներին («Գեղարվեստ»-ի հրատարակությունը ընդհատումներով տևում է մինչև 1921 թվականը):

1910–11 ուսումն[ական] տարում Գ. Լ[ևոնյանը] պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում որպես նկարչության ուսուցիչ: 1912-ին նա նորից է մեկնում արտասահման՝ նպատակ ունենալով մոտիկից ուսումնասիրել Արևմտյան Եվրոպայի նյութական կուլտուրայի նշանավոր հուշարձանները, ինչպես և համաշխարհային հռչակ ունեցող կերպարվեստագետների գործերը: Այս ճանապարհորդությունը տևում է 18 ամիս, նա ավել կամ պակաս չափով լինում է Ֆինլանդիայում, Շվեդիայում, Գերմանիայում, Ավստրիայում, Իտա-

[34] *Ինչպես նախորդ դեպքում, այնպես էլ այստեղ Լևոնյանը չի գրում, որ կրթաթոշակ ստացել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:*

[35] *Այս նախադասությունը մատիտով ջնջել է: Նպատակահարմար ենք համարել այն վերականգնել:*

լիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Բելգիայում և Հոլանդիայում:

Համաշխարհային առաջին պատերազմի սկզբից մինչև փետրվարյան հեղափոխությունը Գ. Լ[ևոնյանը] Թիֆլիսում զբաղվում է բացառապես գրական-գեղարվեստական աշխատանքներով. շարունակում է «Գեղարվեստ» հանդեսի հրատարակությունը և ընթացիկ հոդվածներով աշխատակցում «Մշակ» լրագրին:

1916–1917 ուսումն[ական] տարվա ընթացքում Հայոց ազգագրական ընկերության հիմնած հայագիտական կուրսերում դասախոսում է հայ գեղարվեստի պատմություն:

Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայից մինչև Վրաստանում սովետական իշխանության հաստատումը և այնուհետև Գ. Լ[ևոնյանը] շարունակում է պարապել իր ազատ պրոֆեսիայով՝ 1919 թվին մի քանի ամիս միայն Երևանում վարելով սեփական տպարանում «Հայկական չեկերի» տպագրության գործը:

1921-ին Գ. Լ[ևոնյանն] ընտրվում է Վրաստանի Հեղ[ափոխական] թանգարանի աշխատակից անդամ:

Նույն թվին ժող[ովրդական] համալսարանի վարչությունից հրավեր է ստանում Հավլաբարի բաժանմունքում կարդալ դասախոսություններ գրականության և արվեստի շուրջը:

Այնուհետև երբ Թիֆլիսում հիմնվում է Հայ արվեստի տունը (Հայարտուն) և սկսում է հրատարակվել «Մարտակոչ» լրագիրը նույն չենքում, Գ. Լ[ևոնյանն] իր աշխատանքները կենտրոնացնում է այդ հիմնարկության մեջ՝ որպես Հայարտան խորհրդի անդամ և աշխատակից «Մարտակոչ»-ի:

1923-ին Գ. Լ[ևոնյանը] լինում է հիմնադիր անդամներից մեկը, ապա և խորհրդի անդամ Վրաստանի Հայոց պատմա-ազգաբանական ընկերության:

Նույն թվի աշնանը գնում է Լենինական՝ այնտեղի գործկոմից հրավեր ստացած լինելով քաղաքում հիմնելու գեղարվեստական դպրոց: Սակայն խնդիրը դեռ չվերջացած՝ լուսժողկոմատի կողմից կանչվում է Երևան և գործուղվում է Թիֆլիս՝ այնտեղ բացվելիք Անդրկովկասյան մամուլի ցուցահանդեսում Հայաստանի բաժանմունքը կազմակերպելու:

1934-ին Գ. Լ[ևոնյանը] Հայարտան ղրամատիկական ստուդիայում կարդում է դասախոսություններ գեղարվեստի պատմությունից:

Նույն թվին ՀՍԽՀ լուսժողկոմատից հրավեր է ստանում ստանձնելու Երևանի Գեղարդտեխնիկումի վարիչի պաշտոնը:

Դարձյալ նույն թվին նրան հրավիրում են էջմիածնից՝ այնտեղի պետական թանգարանի վարիչի տեղակալ: Գ. Լ[ևոնյանն] այդ պաշտոններից թե՛ մեկից, թե՛ մյուսից հրաժարվում է:

1925-ի վերջերին Գ. Լ[ևոնյանը] թողնում է Թիֆլիսը և տեղափոխվում Երևան, ուր լուսժողկոմատի կողմից նշանակվում է Փարիզում բացվելիք արվեստա-արդյունաբերական ցուցահանդեսում հայկական բաժինը կազմակերպող հանձնաժողովի քարտուղար:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից հրավիրվում է որպես հրատարակչական բաժնի վարիչ և «Հրավիրակ» ժուռնալի խմբագիր տեխնիկական[36]:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] ընտրվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ:

Նույն թվին պետպլանին կից «Խ[որհրդային] Հ[այաստան]. 5 տարի» ժողովածուի խմբագրության կողմից Գ. Լ[ևոնյան]ին է հանձնվում այդ հրատարակության տպագրության գեղարվեստական-տեխնիկական գործի խնամքը և հսկողությունը:

1926-ին ընտրվում է ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ և ապա ուղղագրական հանձնաժողովի անդամ և քարտուղար:

Նույն թվին ինստիտուտի կողմից նշանակվում է ներկայացուցիչ անդամ Հայաստանի գավառագիտական բյուրոյի (կենտրոնական):

1927-ին Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է Պետական հրատարակչություն՝ հրատ[արակչական] բաժնի գեղ[արվեստական] տեխնիկական գործերի հրահանգիչ, պաշտոնավարում է 5 տարի:

Նույն թվին ընտրվում է Հայաստանի կերպարվեստագետների ընկերության վարչության անդամ, ապա և նախագահ:

Նույն թվից նաև Հայաստանի Գիտական աշխատավորների սեկցիայի (ԳԱՍ) անդամ:

1926–1927 ուսումն[ական] տարում Գեղարդատեխնիկումում դասախոսում է արվեստի պատմություն:

1928-ին Գիտ[ության] և արվ[եստի] ինստիտուտի Գ[եղարվեստի] բաժնում ընտրվում է գեղարվեստական տերմինոլոգիա մշակող հանձնաժողովի անդամ:

1932-ին ընտրվում է Հայաստանի կուլտուրայի պատմության ինստիտուտի անդամ:

Նույն թվին Գրողների միությունը տոնում է Գ. Լ[ևոնյանի] գրական-արվեստագիտական գործունեության 40-ամյակը: ՀՍՍՀ կենտգործկոմը նրան չնորհում է արվեստի վաստակավոր գործչի կոչում, իսկ լուժողկոմատի միջնորդությամբ նրան նշանակում են անհատական կենսաթոշակ:

Նույն թվին Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է «Հայկական սովետական հանրագիտարանի» խմբագրություն՝ որպես գրականության և արվեստների բաժնի գիտնական քարտուղար:

1937–1939 թվերին Գ. Լ[ևոնյանն] արվեստի պատմությունից դասախոսում է Հայկինոյի ստուդիայում:

1938–1939 ուսումն[ական] տարում հրավիրվում է Մանկավարժական ինստիտուտ՝ որպես դասախոս արվեստի պատմության. այդ պաշտոնավարությունը տևում է մինչև 1942 թ.: Այդ թվերին հայ արվեստի պատմությունից մի ցիկլ կարդում է նաև [Գ.] Սունդուկյանի անվան Պետ[ական] դրամայի կոլեկտիվի համար:

1939-ին Հայաստանի Գերագույն սովետի նախագահությունից ստանում է պատվոգիր՝ Մոսկվայում կայացած Հայ արվեստի դեկադայի առնչությամբ:

[36] *Բառը մատիտով ջնջել է՝ դարձնելով «տեղակալ»:*

1939 թվի հունվարից մինչև [19]41 թվի վերջը Գ. Լ[ևոնյանը] պաշտոնավարում է նաև երաժշտ[ական] գիտա-հետազոտական կաբինետում՝ որպես ավագ կոնսուլտանտ:

1940–1941 ուստարում Գ. Լ[ևոնյանը] հրավիրվում է Պետ[ական] համալսարան՝ որպես դասախոս արվեստի պատմությունից, այդ պաշտոնը չարունակվում է մինչև այժմ: Նույն թվից Գ. Լ[ևոնյանը] գիտ[ական] խորհրդի անդամ է Արմֆանի[37] պատմության և գրականության ինստիտուտներում:

Նույն թվից անդամ է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի: 1932 թվից անդամ է Հայաստանին սովետական գրողների, 1939-ից՝ խորհրդային կերպարվեստագետների միությունների, իսկ 1940-ից՝ թատրոնական ընկերության:

1946 թ. փետրվարին ՍՍՌՄ ատեստացիոն բարձրագույն կոմիտեի կողմից հաստատվում է պրոֆեսորի գիտական կոչման մեջ:

Իր գրական գործունեության 55 տարում Գ. Լ[ևոնյանն] աշխատակցել է 70 անուն պարբերականների՝ տալով գրական, պատմա-բանասիրական, քննադատական և այլ հոդվածներ և ուսումնասիրություններ:

1892–1941[38] թվ[եր]ի ընթացքում հրատարակվել են նրա բազմաթիվ աշխատությունները:

Կազմել և լույս է ընծայել նաև դպրոցական ձեռնարկներ գծագրության, գեղագրության և նկարչության վերաբերյալ: Կարդացել է բազմաթիվ զեկուցումներ և հրապարակային դասախոսություններ:

Մասնակցել է Թիֆլիսում և Երևանում կազմակերպված գեղարվեստական ցուցահանդեսների իր գրաֆիկ նկարներով և քսիլոգրաֆիական[39] աշխատանքներով:

Հասարակական աշխատանքների մեջ անվճար պաշտոններ է վարել զանազան կուլտուրական հիմնարկներում երկար տարիներ:

[Կազմեց՝ Գարեգին Լևոնյան]

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1894ք, թ. 1–3: Թողոն: Մեքենագիր՝ ինքնագիր հավելումներով:

---

[37] *ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղ:*

[38] *Ինչպես այլ դեպքերում, Լևոնյանն այստեղ 1941 թվականը «1947» չի դարձրել:*

[39] *Փայտագիր:*

ՀՏԴ : 929:947.925 Տեր-Դանիելյան + 32(479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-245

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ «ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՀՈԴՎԱԾԸ*

Հայագետ, հասարակական-քաղաքական գործիչ Դ. Անանունը (1880–1943) XX դարի առաջին երեսնամյակի հայ իրականության կարկառուն դեմքերից է: Գրական-մշակութային, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ նա մեծապես նպաստել է ինչպես Հայաստանի առաջին Հանրապետության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի առաջին տարիների կայացմանը: Իր բազմաթիվ ուսումնասիրությունների և հրապարակային ելույթների հենքը Հայաստանում «Հայության հավաքման», համախմբման գաղափարի պրոպագանդումն էր: Դ. Անանունի քաղաքական ու գաղափարական հայացքները կատաղի քննադատության էին ենթարկվում, որը և խորհրդային իշխանության առաջին տարիներին հանգեցրեց նրա մեկուսացմանը, այնուհետև՝ մահվանը[1]:

Դ. Անանունը հասարակական-քաղաքական այն գործիչներից, մտավորականներից է, ով, սթափ գնահատելով մեր ժողովրդի ճակատագրում Ռուսաստանի դերը, ընդհանուր առմամբ, համարել է, որ հայ ժողովուրդը պետք է ունենա ռուսական կողմնորոշում: Ու պատահական չէ, որ նա մասնակցել է ռուս-հայ գրական կապերի պատմության մեջ նշանակալի իրադարձություն համարվող Մ. Գորկու նախաձեռնությամբ և խմբագրությամբ 1916 թ. ապրիլի վերջին Պետրոգրադում լույս տեսած «Հայ գրականության ժողովածու»-ի հրատարակությանը[2]: Ժողովածուն նվիրված էր ռուսահայերի ստեղծագործությանը և կազմված էր Վ. Տերյանի ծրագրով՝ Պ. Մակինցյանի ու Լ. Քալանթարի աշխատակ-

---

* *Ներկայացվել է 26. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

[1] *Դ. Անանունի մասին մանրամասն տե՛ս Դ. Անանուն. Ղարաբաղ, հրապարակող՝ Ա. Զաքարյան.– «Գրական թերթ» (Երևան), 22. XII. 1989, Ա. Վիրաբյան. Կյանք և ողբերգություն.– «Հայաստան» (Երևան), 20. VI. 1991, Հ. Բ. Աբրահամյան. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, № 1, էջ 19–30, Նույնի՝ Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 198–213, Ա. Մանուկյան. Գրականագետ Դավիթ Անանունը Դաշնակցության համախոհ (1927 թ.).– «Հայոց Աշխարհ» (Երևան), 09. IV. 1999, Ա. Զաքարյան. Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2010, № 1, էջ 245–252, Նույնի՝ Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2020, № 1, էջ 90–127, Նույնի՝ Դավիթ Անանունը Հովհաննես Թումանյանի մասին (Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 2020, № 1, էջ 430–436, Նույնի՝ Դավիթ Անանուն. Ղարաբաղ.– «Գիտություն» (Երևան), փետրվար, № 2, 2020, Վ. Հակոբյան. Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), Գ, 2012, էջ 123–135, Հ. Գրիգորյան, Վ. Հակոբյան. Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի և գործունեության.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, № 2, էջ 108–128, Վ. Հակոբյան. Դավիթ Անանուն, Երևան, 2020 և այլն:*

[2] Сборник армянской литературы. Под редакцией М. Горького. Петроград, 1916.

ցումյամբ, այն յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ: Ժողովածուն բացվում է Դ. Անանունի «Армянский вопрос в России» *վերնագրով՝ XI դխից բաղկացած ծավալուն հոդվածով*[3]*: Նկատենք, որ դա հայերեն՝ «Հայերը Ռուսաստանում» վերնագրով 1917 թ. տպագրվել է Բաքվում լույս տեսնող «Գործ» ամսագրում*[4] *հետևյալ պարզաբանմամբ. «Այս հոդվածի թարգմանությունը լույս է տեսել Մաքսիմ Գորկիի խմբագրությամբ հրատարակված* «Сборник Армянской Литературы» *ժողովածուի մեջ* (Петроград 1916 г.)*: «Գործ»-ի խմբագրությունը ավելորդ չի համարում տպագրել հոդվածի բննագիրը, ի նկատի առնելով նրա չահեկանությունը նաև հայ ընթերցողի համար»*[5]*:*

Նպատակ չունենալով բովանդակային առումով ծավալվել սույն արժեքավոր աշխատության մասին (քանի որ դրա մասին տեղեկանալու լավագույն միջոցը հենց այն կարդալն է, բացի այդ՝ դա հստակ երևում է նաև ստորև բերվող նամակից)՝ ասենք, որ նախքան Մ. Գորկու ժողովածուում հոդվածի տպագրվելը Պ. Մակինցյանն այս գործի մասին հետաքրքիր դիտարկումներով ու առաջարկներով նամակ է գրել հեղինակին: Անթվակիր այդ նամակում Պ. Մակինցյանը գրում է. «Պայծառ Դավիթ, // Ստացա հոդվածդ այսօր: Իսկույն գնացի Աշոտի[6] *մոտ և միասին կարդացինք: Մեր երկսի կարծիքն էլ այս է. առաջին 9 գլուխը – չա՛տ և չա՛տ լավ ես գրել, առանց տատանվելու կարելի է ասել, որ այդպես և ոչ ոք չէր կարող գրել մեզանում (ընդգծումը մերն է– Ա. Զ.): Իսկ վերջը, չասպելուց է, թե ընչից է, խարաբ ես արել: Որովհետև մեր երկսի համար էլ շատ թանկ է քո մասնակցությունը մեր ժողովածվի («Գարուն»-ի – Ա. Զ.) մեջ, ուստի խնդրում ենք, որ նորից գրես վերջը: Թե թույլ տաս, կանենք այս նկատողությունը՝ նախ դուրս գրիր 10 գլխից մինչև վերջ և տեղը գրիր միայն մի կամ երկու գլուխ հետևյալ բովանդակությամբ. ինչպես հոդվածիդ բխում է՝ ռուսահայերս պոլիտիկական պահանջներ չունենք, այլ ունենք քաղաքացիական պահանջներ (պետիցիան օրինակ) և ահա առանց հասարակության չերտավորման պատմությունն անելու ամփոփիր մեր հասարակության ընդհանուր պահանջները ամենաաջակողմյանից սկսած մինչև ամենաձախակողմյանները: … Ապա՝ լիբերալական վերաբերմունքդ դեպի Վորոնցով Դաշկովը թող: Այդ ինչ մանիլովչինա է: Դու ինքդ և դպրոցական հարցի առիթով և մանավանդ հողային կոլոնիզացիայի պոլիտիկայի առիթով բողոքական հոդվածներ ես գրել և նույն իմաստով քննադատաբար վերաբերվել դեպի այդ բյուրոկրատը:*

---

[3] *Նույն տեղում, էջ V–XLVI: Ստեփան Զորյանը «21 օգոստոսի 1916» թվակիր նամակով Դ. Անանունին հայտնում է. «Սիրելի Դավիթ //* “Арм. Сборник”*-ում տպագրված Ձեր հոդվածը մեծ աղմուկ է հանել վրացիների մեջ մի քանի ֆրազների առթիվ: Քութայիսում հրապարակվող «Միջօբարի» թերթի 4–5 համարում կիյա Աբաշիձեն «Իմ-ամ» կեղծանունով հայհոյում է Ձեզ: Անպայման «Մշակում» քաղվածքներ կտանք, որից գաղափար կկազմեք …» (Հ. Բ. Աբրահամյան. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, էջ 200): Նույն թվականի հոկտեմբերի 25-ին էլ գրում է. « … մի բան ես մոռացել եմ ժամանակին գրել քեզ: Աբաշիձեի հոդվածից քաղվածքներ թարգմանվեց, բայց անկարելի եղավ տպագրել: Բանից պարզվում է, որ այն, ինչ կարելի է Քութայիսում, նույնը չի կարելի Թիֆլիսում: // Ողորմելի տրամաբանություն: Իսկական «смутное время»» (նույն տեղում, էջ 201):*

[4] *«Գործ» (Բաքու), 1917, № 2, փետրվար, Բ. մաս, էջ 1–42:*

[5] *Նույն տեղում, էջ 1:*

[6] *Նկատի ունի էջմիածնի ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս, փիլիսոփայության դոկտոր, ՍԴՀԿ-ի բովով անցած, հետագայում խորհրդային պետական գործիչ, ակադեմիկոս, ականավոր պատմաբան, Դ. Անանունի մտերիմ ընկեր Աշոտ Հովհաննիսյանին:*

Տաճկահայերի հարցը բոլորովին թո՛ղ: Վասնզի կլինի մի հատուկ ժողովածու տաճկահայերին նվիրված և այնտեղ կգրես «Հայկական հարց» վերնագրով այդ նյութի մասին: Եթե կարևոր է, կարող ես իհարկե հիշատակել, բայց առանձին պուխ մի նվիրիր:

Այսքանը: Կարծում եմ, որ ընկերաբար կվերաբերվես մեր այս ընկերական դիմումին և չես մերժի այս ծրագրով ավարտել հոդվածդ, որ ըստ ամենայնի տեղյակ և չնորհալի գրչի արտադրանքն է: Եթե թույլ կտաս, հոդվածդ ետ չեմ ուղարկի և կտպեմ «Գարունի» առաջիկա IV համարում, որ այս տարի ուզում ենք լույս ընծայել: Հարմարացրու մեր ծրագրին – թարգմանեմ՝ ղրկեմ: ...»[7]*:*

Նամակի բովանդակությունից ելնելով, ըստ էության, կարող ենք արձանագրել, որ Դ. Անանունն այդ հոդվածը նախապես ուղարկել է «Գարուն» ժողովածուի IV գրքում տպագրվելու համար: Ժողովածուն, սակայն, չի տպագրվել[8]*: Դ. Անանունն առաջարկված «ծրագիրը» չի ընդունել, որը երևում է և՛ Վ.Տերյանով Դաշկովի վերաբերյալ նկատառումից, և՛ հոդվածի XI գլխի պահպանումից. հոդվածը նախնական տեսքով թարգմանվել է ռուսերեն ու տպագրվել Մ. Գորկու վերը նշված ժողովածուում*[9]*:*

Ստորև հրապարակում ենք «Գործ» ամսագրում տպագրված, հայ ընթերցողների համար այսօր էլ «չահեկան» խնդրո առարկա հոդվածը՝ արդի ուղղագրությամբ, սրբագրական և տեխնիկական մասնակի միջամտությամբ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

---

[7] ՀՀ գրականության և արվեստի թանգարան, Դ. Անանունի ֆ., թիվ 80, թ. 1–2:

[8] 1916 թ. ապրիլի 23-ին Պետերբուրգից Կ. Միքայելյանին գրած նամակում Վ. Տերյանը մանրամասնորեն հայտնում է, որ տպագրության է պատրաստվում և աշնանը լույս կտեսնի «Գարուն» գրական-քննադատական ալմանախի IV գիրքը (տե՛ս Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու, հ. չորրորդ, կազմեց և ծանոթագրեց՝ Վ. Զ. Պարտիզունին, Երևան, 1979, էջ 249): Այդ մասին «Հորիզոն»-ում հայտարարություն է տպագրվում (տե՛ս 08. VI. 1916): Սակայն «Գարունի» նոր համարներ չհրատարակվեցին. 1917 թ. հունվարին Տերյանի, Մակինցյանի և Միքայելյանի ստորագրությամբ «Նամակ խմբագրությանն»-ը ծանուցում էր. «Ի նկատի ունենալով «Գործ» ամսագրի երևան գալը. «Գարուն»-ի խմբագրությունը սրանով հայտնում է, որ դադարեցնում է նոր ալմանախների հրատարակությունը ... » (Վ. Տ ե ր յ ա ն. նշվ. ժող., էջ 430):

[9] Վ. Տերյանը Յ. Խանզադյանին (<1916, մարտ, Պետրոգրադ>) գրում է. «Բարև արա Դավթին (Անանունին – Ա. Զ.): Շատ ուրախ եմ, որ նրա վրա կանգ առանք հոդվածի համար (մեր ժողովածուի համար) – հոդվածը ինձ դուր է գալիս, թեև, իհարկե, կան թերի տեղեր– դա անխուսափելի է, մանավանդ որ շտապ եղավ գործը» (Վ. Տ ե ր յ ա ն. նշվ. ժող., էջ 247): Յ. Խանզադյանին գրած <1916, հուլիսի II կես–օգոստոս, Պետրոգրադ> նամակում էլ Վ. Տերյանն այս նյութի մասին գրում է. «... Ահա այստեղ էլ Դավթին են հայհոյում տեղիս «պատրիոտները»: Բայց ասա, դարձյալ, ո՞ւմ, ո՞ւմ պիտի դիմեի ես– Ջիվիլեգովի՞ն, թե՞ Վարանդյանին: Ո՞վ է ավելի կարող: Սուբյեկտի՞վ եմ ես, արդյոք, կրկին» (նույն տեղում, էջ 273): Ի դեպ, 1917 թ. հունիսի 9-ին Բաքվից Դ. Անանունը Հայոց Կ. Ազգային բյուրոյի հրատարակչական մասնախմբին հայտնում է. «Մեծ. պ. պ. // Ստացել եմ Ձեր հրավերը «Հայոց հասարակական կյանքը Ռուսաստանում» վերտառությամբ հոդված գրելու Բյուրոյի հրատարակելիք «Կարմիր Գրքի» համար: Իբրև ազգի անդամ և որոշ քաղաքական-հասարակական աշխարհայացքի տեր մի մարդ՝ ես միշտ բողոքել և դեմ եմ եղել Ազգային Բյուրոյի վարած քաղաքականության: Այս պատճառով էլ չեմ կարող աջակցել բյուրոյի այդ նախաձեռնած աշխատանքին» (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ. 1):

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ*)

Այս հոդվածում մենք պիտի ջանանք պարզաբանել, թե քաղաքական որպիսի իղեալ ունի հայ ազգը, այսինքն՝ ինչ քաղաքական ձևի մեջ է նա կամենում պարփակված տեսնել հայութեան հավաքական գոյութիւնը: Եվ ահա հարցի այս ձևակերպմանը կարող ենք պատասխանել, որ հայ ազգը, իբրև քաղաքական մարմին, Ռուսաստանում քաղաքական իղեալ չունի: Նրա և ոչ մի խավը չի առաջադրում կամ գուրգուրում քաղաքական անջատում: Նրա մեջ չկա և տերիտորիալ ավտոնոմ աշխարհամասի կողմնակցութեան ազդեցիկ հոսանք, ինչպես թույլ են նաև այն ձայները, որոնք արծարծում են էքստերիտորյալ ազգային-կուլտուրական ավտոնոմիայի անհրաժեշտութիւնը հայ ազգի անարգել զարգացման համար: Օտար ընթերցողին կարող է անհավանական թվալ այս դրութիւնը, քանի որ նա անշուշտ լսած կլինի ռուս ազդակողմյանների մեղադրանքը, թե Ռուսաստանին ինչ-որ հայկական վտանգ է սպառնում, սակայն իրողութիւնն այն է, որ «վտանգավոր» հայ ազգը ոչ միայն զուրկ է իր քաղաքական իղեալից, այլև ազգովին մի ապոլիտիկ ժողովուրդ է: Այս երևույթի պատճառը թաքնված է այն աննորմալ պատմութեան մեջ, որ դայակ է եղել հայերին: Նրան էլ մենք պիտի դիմենք, եթե կամենում ենք խելամուտ լինել, թե ինչ են ներկայացնում հայերը Ռուսաստանում:

I.

Հայ ազգը շատ վաղուց է կորցրել իր քաղաքական անկախութիւնը: Այս մասին գաղափար ունի համարյա ամեն մի կրթված անձնավորութիւն: Բայց հավանորեն այդ կրթված անձնավորութիւններից շատ քչերին է ծանոթ այն պարագան, որ հայ հայրենիքը նվաճող արաբը, սելջուկն ու թաթարը իրանց ռազմական գործողութիւններով ոչ միայն կոտրեցին հայերի դիմադրական ուժը, այլև այնպիսի վարչական միջոցներ ձեռք առան, որ մշտապես իրանց ապահովեն հայերի վտանգից: Այդ միջոցներից գլխավորը հայերի տնտեսական անխնա շահագործումն էր, համատարած կողոպուտը, որ նրանց հասցրեց գրաստական վիճակի: Ֆրանսիական ճանապարհորդ Տուռնեֆորը, որ 1701 թ. այցելել է Հայաստան, վկայում է. «Պարսիկները արհամարհում են հայերին և, նրանց նկատում են իբրև ստրուկների մի հոտ, որը չի կարող ընտելացնել իրան պատերազմի, ոչ էլ ապստամբել»: Հայ ժողովուրդը իրոք իրան գերութեան մեջ էր համարում, դիմազուրկ էր դարձել և ազատութեան կարոտը նրան այցելում էր, իբրև կրոնական մխիթարութիւն հանդերձյալ կյանքի համար: Հայ երկրի նվաճողները ոչ միայն ժողովրդին տապակում էին չահագործման կաթսայում, այլև ջանում էին նրան զրկել հարազատ առաջնորդներից ու

---

*) *Այս հոդվածի թարգմանութիւնը լույս է տեսել Մաքսիմ Գորկիի խմբագրութեամբ հրատարակված «Сборник Армянской Литературы» ժողովածուի մեջ* (Петроград 1916 г.)*: «Գործ»-ի խմբագրութիւնը ավելորդ չի համարում տպագրել հոդվածի բնագիրը, ի նկատի առնելով նրա չահեկանութիւնը նաև հայ ընթերցողի համար:*

հովանավորողներից: Եվ նրանք սիստեմատիկ կերպով արմատախիլ էին անում հայ ազնվական դասը, որ միջին դարերում ռազմիկ տարրն էր և ժողովրդի գլուխը: Հայ ազնվականության առջև բացված էր երկու ասպարեզ՝ ազգությունն և հավատուրացությունը, որ նյութական բարիք ու պատիվ էր բերում տիրողներից, կամ մահ և գաղթ օտար երկրներ: Հիշենք իրրև պատկերացում, որ 706 թ. արաբական կուսակալը խաբեությամբ Նախիջևան հրավիրեց 800 հայ նախարար և նրանց փակելով եկեղեցում՝ այրեց:

Այո՛, դժնդակ, խիստ դժնդակ նվաճողներ եղան Հայաստանի համար արաբները և Միջին Ասիայից դուրս եկած նոմադները: Հայ պատմաբան Լեոն մի վկայություն է բերում արաբ աշխարհագիր Իբն-ալ-Ֆակիհից, թե որն էր Հայաստանին սպասող վիճակը: Ահա այդ պատկերավոր վկայությունը. «Սիրիացի Մեքհուլն ասաց. «Այն երկիրը, որ ամենից առաջ կավերվի, Հայաստանն է»: Հարցրին նրանից. «Իսկ ի՞նչը կավերե նրան»: Պատասխանեց. «Ձիանների սմբակները»): Եվ հենց այս ասացվածքի համեմատ միջնադարյան հայ պատմաբան Մատթեոս Ուռհայեցին բացականչում է. «Նրանց (այսինքն սելջուկների) ձիերի սմբակները մաշեցին լեռներն ու բլուրները»: Իսկ եթե սելջուկների արշավանքներից մաշվում էին լեռներն ու բլուրները, ապա չէ՞ր մաշվի հայ ժողովուրդը:*

Եվ նա մաշվեց: Միանգամայն փոխվեց նրա նկարագիրը: Փոխվեց և նրա հասարակական կազմը: Կորցնելով քաղաքական կազմակերպությունը որպես ազգության զորեղ կապ, նա ամուր փարեց թույլ և ոտնահարված միակ ազգային հաստատությանը՝ եկեղեցուն: Հոգևոր դասը դարձավ նրա մխիթարիչն ու առաջնորդը, որ բոլոր պատուհասները վերագրելով ժողովրդի ծովացյալ մեղքերին, սկսեց հնչեցնել համբերության ու խոնարհության քարոզը: Եկեղեցական դասը, իրրև հայության ներկայացուցչություն, պաշտոնապես ճանաչվեց նաև նվաճողների կողմից: Չէ՞ որ հենց իրանք, նվաճողները, ավտոկրատական կազմակերպություն ունեին, մի սիստեմ, երբ հոգևոր ու աշխարհական իշխանությունները ամփոփված են միևնույն ձեռքում: Այս հանգամանքը մեծ չափով զորություն ներշնչեց հայ եկեղեցու կազմակերպությանը: Ճիշտ է, նա կողոպտվում էր անխնա, անարգվում իրրև քրիստոնեություն, բայց այնուամենայնիվ հանդուրժվում էր և աջակցություն գտնում:

Ժամանակի ընթացքում, երբ հայ ազնվականությունը վերացավ երկրի շատ վայրերում կամ մնաց նոսրացած նրա մի քանի անկյուններում, և առհասարակ հայության առաջ խափանվեցին ռազմական և վարչական ասպարեզները, ազգի ծոցում ծնունդ առավ մի ուրիշ հասարակական խավ՝ վաճառականների դասը:

Հայտնի է, որ ավատականությունը հարգանք չունի ղեպի առևտուրը և ստոր զբաղմունք է համարում այն, թեև աչքը միշտ տնկած է պահում վաճառականի գրպանին: Հարկավ, Հայաստանում բազմած օտարազգի ավատականությունը խիստ արգելքներ չպիտի հարուցաներ, եթե հայության միջից մարդիկ ելնեին և առևտրով զբաղվեին: Այդ պարապմունքն արդեն չէր արգելված հայերին: Եվ նրանք դարձան ճարպիկ վաճառականներ: Նրանց վաստակի խոշորագույն մասը մտնում էր տիրողների գրպանը, բայց մի բան էլ

*) *Լէօ, «Հայ հայրենիքը», Թիֆլիս, 1915, էջ 124:*

մնում էր իրանց: Նյութական բարիքների տեր դառնալով, հայ վաճառական դասը սկսեց որոշ դեր խաղալ ազգի կյանքի մեջ: Եթե ազգի ներկայացուցչությունը պաշտոնապես ամփոփված էր հայ հոգևորականության ձեռքին, ապա հայ վաճառականությունը դարձավ նրա նյութական թիկունքը և սկսեց նրա հետ կիսել այդ ներկայացուցչության աղոտ կչիռն ու պատիվը:

*Հայ ազնվականության կրած հարվածը սարսափելի էր, բայց նա միանգամայն չվերացավ: Հայոց անմատչելի լեռներում չարունակեցին մնալ որոշ տոհմեր, որոնք խոնարհվեցին տիրողների առջև, բայց ձեռքից բաց չթողին իրանց արտոնությունները**): *Այդ հայ տոհմերում իշխանությունը ժառանգական բնույթ ուներ և իր բովանդակությամբ նահապետական էր: Նման հայ իշխողները ավելի շուտ ցեղապետներ էին: Նրանց հարգն ու վարկը մեծ էր հասարակ ժողովրդի աչքում: Եվ քանի որ հայ իշխողների թիվը խիստ պակաս էր, ապա նրանք առանձնապես չէին կարող ազգ ներկայացնելու հավակնություններ փայփայել իրանց մեջ: Նրանք ուժ էին, երբ համերաշխություն էին պահպանում ազգային խոշոր ուժի՝ եկեղեցական դասի հետ: Հայության վրա ծանրանում էր օտարի բռնակալությունը և այս հանգամանքը դալիս էր վերացնելու ներքին դասային հակամարտությունը: Հայ հոգևորականը, հայ ցեղապետ-ազնվականը, որ մելիք էր կոչվում, և հայ վաճառականը բռնավոր օտարի դիմաց ստիպված էին համերաշխ ընթանալ և միասին պաշտպանել ազգային իրավունքները, որոնք ընդհանրապես կապված էին կրոնի ազատ դավանության հետ: Ժողովուրդը շատ քիչ բան էր վայելում այդ միությունից: Նա տանելի կյանք էր վարում նույն անմատչելի լեռներում, ուր պահպանվել էին հայ ազնվական տոհմերը: Մնացած վայրերում հայ ժողովուրդը բռնության և շահագործման անմռունչ զոհ էր:*

Ահա այս դրությունն էր ապրում հայությունը, երբ սկսեցին քաղաքականություններ մշակվել Ռուսաստանի և հայ ազգի ներկայացուցիչների մեջ: Դա Պետրոս Մեծի օրով էր:

II.

*Նշանակալից է, որ Պետրոս Մեծի հետ քաղաքական բանակցությունների մեջ է մտնում լեռնային Հայաստանի (Ղարաբաղի) հայ ազնվական-մելիքների ներկայացուցիչը: Այդ հայրենասերի անունը Իսրայել Օրի էր***) *(վախճանվել է Աստրախանում 1711 թ.):*

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ քաղաքական ազատության հարգը այդ ժամանակ ավելի շատ ազնվականությունը կարող էր ճանաչել: Սակայն պետք է ասել, որ Ղարաբաղի մելիքների հետ համերաշխ էր և տեղի հոգևորականությունը, որը բանակցությունների համար հետագայում տվեց իր ներկայացուցիչը (Մինաս վարդապետ): Համերաշխ չէր Ղարաբաղի ազնվա-

---

*) *Այդ ազնվականությունը գլխավորապես կենտրոնացած էր Ղարաբաղում, այժմյան Գանձակի նահանգի Շուշու, Կարյագինի, Ջիվանշիրի, Ջանգեզուրի և Գանձակի գավառներում:*

**) *Պետրոս Մեծի վերաբերմունքի մասին դեպի հայերը տե՛ս* Г. А. Эзов, «Сношение Петра В. с армянским народом» *մեծ մենագրությունը.* С. П. Б., 1898.

կան և հոգևոր դասերի հետ հայոց ընդհանրական կաթողիկոսը, որը նստած լինելով պարսկական բռնության կենտրոնում (Էջմիածին), վտանգավոր քայլ էր համարում հայերի բանակցությունը օտար պետությունների հետ:

Ի՞նչ էին խնդրում Պետրոս Մեծից հայերը: Օգնել իրենց զինվորական ուժով՝ թոթափելու պարսից լուծը: Նրանք Պետրոսին բացատրում էին, որ Պարսկաստանը ճարճատում է ներսից, որ նա չի կարող դիմանալ ռուսական զորհին: Որ անհրաժեշտ է վերականգնել հայոց անկախությունը և զորացնել Վրաստանը և այս քրիստոնյա պետությունների միջոցով առևտրի լայն դուռ բանալ Արևելքի հետ: Պետրոսը համամիտ էր հայերին: Այս առիթով ակադեմիկ Պ. Բ. Բուտկովը գրում է. «Պարսկաստանի հարուստ գավառների միացումը Ռուսաստանին մի նպատակ ուներ՝ հարստացում և ռուսական առևտրի ծավալում մինչև Հնդկաստանի և Ասիայի այդ ընդարձակ մասի սահմանները: Թագավորը ցանկանում էր, որ Պարսկաստանում տիրապետությունն անցնի քրիստոնյաներին՝ վրացիներին, հայերին և ռուսներին»):*

Պետրոսը այս ծրագրի իրագործման համար սկսեց հուսադրել հայերին ու վրացիներին, դրդեց նրանց՝ ակնհայտնի կերպով դուրս գալ պարսկական հպատակությունից և զորք կազմելով, սպասել իր արշավանքին դեպի Անդրկովկաս: Ռուսական զորքերը իրոք 1722 թ. շարժվեցին Աստրախանից և գրավեցին Կասպից ծովափնյա գավառները՝ Դերբենդ, Բաքու, Գիլան և Մազանդարան: Հայերը և վրացիները վրաց Վախթանգ թագավորի առաջնորդությամբ սպասում էին Պետրոսին Գանձակի մոտ, բայց ռուսական շարժումը իր վրա գրավեց Թուրքիայի ուշադրությունը (Պարսկաստանը ներքին խռովությունների չնորհիվ անկարող էր դիմադրություն ցույց տալ ռուսներին) և Պետրոսը, անցանկալի համարելով ընդհարումը այդ զորեղ պետության հետ, հատուկ դաշնադրությամբ պարտավորվեց առաջ չխաղալ դեպի Անդրկովկասի խորքերը և բավականանալ միմիայն մերձկասպիական գավառների գրավումով: Հայաստանն ու Վրաստանը թողնվեցին իրանց ճակատագրին: Թուրքիան էլ կամեցավ օգտվել Պարսկաստանի խառնակ վիճակից և իր զորքերով գրավեց պարսկական Հայաստանն ու Վրաստանը, սոսկալի ջարդեր տեղալով ապստամբված քրիստոնյա բնակչության գլխին: Վախթանգ թագավորը ապավինեց Ռուսաստանին: Հայ ժողովուրդը խոնարհվեց Թուրք պետության լծին, թեև դիմադրության առանձին հաջող փորձեր արավ:

Պետրոս Մեծը, որ հուսադրել էր հայերին, իր հրովարտակներով նրանց ոտքի կանգնեցրել և ապա իրանց ճակատագրին թողել, 1724 թ. նոյեմբերի 10-ին ուկազներ ստորագրեց, որոնցով հայերին հրավիրում էր գնալ բնակվելու մերձկասպյան նորանվաճ գավառներում, Թերեք և Սուլակ գետերի ափին և այլն: Գեներալ-մայոր Կրոպոտովի անունով տրված ուկազի մեջ կայսրը պատվիրում էր. «Ձույց տուր նրանց ամեն օգնություն և պահպանիր նրանց ամուր հովանավորությամբ. վարվի նրանց հետ այնպիսի եղանակով, որ նրանցից

* П. Б. Бутков, «Материалы для новой истории Кавказа с 1722 г. по 1803 г.», т. I, С. П. Б., 1869, стр. 146.

չլսվի և ոչ մի գանգատ, որովհետև մենք այդ հայ ժողովրդի վրա սփռել ենք մեր կայսերական առանձին ողորմությունն ու հովանավորությունը»):*

Հարկավ Պետրոս Մեծի այս առաջարկից օգտվողներ եղան, բայց հայերի ցանկությունն էր մնալ իրանց հողի վրա և ազատագրվել իբրև հայրենիքի տեր ժողովուրդ:

Մերձկասպիական գավառները (провинции) *երկար չմնացին Ռուսաստանի ձեռքում: Պետրոսի ապիկար հաջորդները 1735 թ. մարտի 10-ին Պարսկաստանի հետ կապած պայմանագրով այդ գավառները վերադարձրին իրանց նախկին տիրոջը: Այդ ժամանակ Պարսկաստանում թագավորում էր Նադիր շահը, որ իր պատերազմական գործողություններով ընդդեմ աղվանների և Թուրքիայի ահագին հռչակ էր ստացել Արևելքում և Արևմուտքում: Նադիրը լավ վերաբերմունք ցույց տվեց դեպի հայերը, որպեսզի նրանց հետև պահե Ռուսաստանից: Նա մելիքներին հաստատեց իրանց ժառանգական իշխանության մեջ և անմիջական ստորադասության մեջ դրեց պարսկական արքունիքից, որով սանձ դրեց տեղական թուրք իշխողների պրետենզիաներին**):*

Իսկ Պետրոս Մեծի ձեռնարկից այն ժառանգությունը մնաց, որ հայերի քանակը չատացավ Աստրախանում և Թերեք գետի վրա: Այդ հայերը զարկ տվին ռուս-պարսկական առևտրին և մետաքսի գործարաններ հիմնեցին հարավային Ռուսաստանում: Հետևյալ թվերը ցույց են տալիս, թե հայերը ինչ դեր էին խաղում ռուս-պարսկական առևտրի մեջ: 1737 թ. մինչև 1745 թ. Ռուսաստանից ներմուծվել է Պարսկաստան.

Ռուսների ձեռքով	*416, 005 ռ. 44 կ.*	*ապրանք*
*Հայերի » *	*2, 484, 024 » 51 1/2*	*»*
*Անգլիացիների » *	*698, 133 » 92 1/2*	*»*
	Ընդամենը՝ 3, 598, 163 ռ. 88 կ.	*»*

Պարսկաստանից արտահանվել է Ռուսաստան.

Ռուսների ձեռքով	*631, 510 ռ. 31 3/4 կ.*	*ապրանք*
*Հայերի » *	*1, 597, 953 » 5/8 » *	*»*
*Անգլիացիների » *	*200, 460 » 2 3/4 » *	*»*
	Ընդամենը՝ 2, 429, 913 ռ. 35 1/8 կ. ***)	*» *

Պարզ է, որ հայերի դերը ռուս-պարսկական առևտրի մեջ միանգամայն գերիշխող էր:

Հայ-ռուսական քաղաքական բանակցությունները նորից կյանք առան Եկատերինա Մեծի օրով: Նորից հրապարակի վրա երևաց հայկական անկախ պետության ստեղծման և Վրաստանի հզորացման գաղափարը: Եկատերինան

---

*) Бутков, стр. 68.

**) *Անդ, հ. II, էջ 385:*

***) Бутков, т. I, стр. 222 *(ծանոթություն): Անդ, էջ 417–419:*

էլ էր ցանկանում Անդրկովկասի վրայով առևտրական կապ հաստատել Հնդկաստանի հետ: Նրա ծրագիրն էր Քուռ գետի վրա Եկատերինասերդ անունով մի քաղաք հիմնել, որը պիտի դառնար խոշոր առևտրական կենտրոն: Ապա նա ծրագրում էր Բաքուն իր բոցավառվող նավթային գազերով դարձնել մի տեսակ Մեքքա Հնդկաստանի կրակապաշտների համար և ղրանով սերտ կապեր հաստատել այդ երկրի հետ: Մյուս կողմից նրա սիրելի իշխան Պոտյոմկինը Արևելքում թագ ստանալու տենչն էր գուրգուրում իր սրտում: Հայերի կողմից այս շրջանում բանակցություններ էր վարում արքեպիսկոպոս Իչխ. Հովսեփ Արղության-Երկայնաբազուկը, որը իր նամակներով հուսադրում էր մելիքներին և ազգի մյուս գլխավորներին, թե մոտ է հայերի փրկության և ազատ կյանքի ժամը: Ռուսաստանի ծրագիրները և հայերի ու վրացիների համակրությունը այդ ծրագրերին չափազանց թանկ նստեցին նրանց: Սկսվեց քրիստոնյաների մի չտեսնված հալածանք Անդրկովկասի թուրք խաների կողմից, որոնք տեղական իշխողներ լինելով, ճանաչում էին Պարսկաստանի գերիշխանությունը:

Վերջապես դեպի Անդրկովկաս արշավեց ինքը՝ Պարսկաստանի շահ Աղա-Մահոմեդ-խանը, որը 1795 թ. գրավեց Թիֆլիսը, կործանեց քաղաքը, իսկ ժողովրդին կամ կոտորեց, կամ գերի տարավ: Դա մահացու հարված էր Վրաստանի համար: Շահի արշավանքը ավերիչ հարված էր նաև հայաբնակ գավառների համար. սովը և ժանտախտը հետևանք եղան այդ արշավանքի և երկրի բնակչությունը խիստ նվազեց:

Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը 100 հազար ռուբլի տվեց բռնավորին, որով և փրկեց ազգի սրբավայրը կործանումից:

Հետ դարձավ դեպի Պարսկաստան Աղա-Մահոմեդ-խանը և ռուսական զորքերը 1796 թ. հրաման ստացան մտնել Անդրկովկաս, մի թևը դեպի Վրաստան, մյուսը դեպի Մերձկասպիական գավառները: Ռուսական Կասպիական կորպուսի հետ արշավանքին մասնակցում էր և Հովսեփ արքեպիսկոպոսը, որը բանակցություններ էր վարում թուրք իշխողների հետ, հոժարեցնելով նրանց ընդունել ռուսական հպատակություն և դիմադրություն ցույց չտալ զորքերին: Ամեն ինչ հաջող էր գնում և ռուսները թեթև ջանքերով գրավեցին Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Շամախու, Շեքիի (Նուխու), Գանձակի խանությունները: Հպատակություն էր պատրաստվել նաև Ղարաբաղի (Շուշու) խանը, որը հայերի ոխերիմ թշնամին էր, բայց վախճանվեց կայսրուհին և նրա որդի Պավելը, որ իր մոր գործերին հակառակ էր, հրաման տվեց զորքերին հետ նահանջել Անդրկովկասից դեպի Ռուսաստան: Մեծ էր հայերի վիշտը այդ կարգադրության պատճառով: Նրանք նորից հանձնվեցին գիշատիչ խաներին, որոնք բազմապատկեցին ավանդական հալածանքը, բռնությունը և կողոպուտը:

Բայց Վրաստանի քաղաքական կացությունը այնպիսի ընթացք ընդունեց, որ Ռուսաստանը այլևս իր զորքը դուրս չհանեց այդ երկրից: Արդեն 1783 թ. դաշնագրով Վրաստանը հանդեպ Ռուսաստանի վասալական վիճակի մեջ էր: 1801 թ. հունվարի 18-ի հրովարտակով նա հռչակվեց միացրած Ռուսաստանին իբրև մի պրովինցիա: Այս թվականից Ռուսաստանը ամուր նստեց Անդրկովկասում և քայլ առ քայլ սկսեց նվաճել և հպատակեցնել իրան հայ-թուրքական գավառները: Հայերի ձգտումները՝ վերացած տեսնել պարսկական

բռնակալությունը, այժմ իրագործվում էին: Բայց չէր իրագործվում նրանց տենչը ինքնուրույն քաղաքական կյանք ունեցող Հայաստանի մասին: Դա այժմ նույնիսկ անիրագործելի էր, որովհետև մի դարի պայքարներն ու հաշածանքները խիստ ծանր էին նստել հայ բնակչությանը. նա նվազել էր թվով և մասամբ լքել հայրենիքը, իսկ նրա առաջնորդ մելիքները նվազել էին և նյութականի կողմից: Մի ժամանակ նրանք իրանց էին համարում երկրի բնական տերը, իսկ այժմ խոնարհվել էին խանական իշխանության առջև:

III.

Թե որքան պարսկական բռնությունները քաղաքականապես դիմազուրկ էին դարձրել հայ ժողովուրդը մանավանդ նրա պատմական հայրենիքի սրտում՝ Արարատյան դաշտում, այդ մասին խիստ հետաքրքրական է լսել նոր հայ գրականության երախտավոր հիմնադիրներից մեկի՝ Խաչ. Աբովյանի վկայությունը, որ անձամբ ապրել է պարսկական տիրապետության ներքո, ուրեմն և միանգամայն վստահելի վկա է: Երևանի հայ երևելիները հետևյալն են հարցնում իրենց այցելության եկած էջմիածնի վարդապետներից. «Ախր որ մեր միան էապես գազանի պես ուտում են, սրա չարեն ի՞նչ կլի: Տեղից վեր կենողը ոտը մեզ վրա ա բարձրացնում: Զիլում՝ որ մեկ օր գնանք, ջուրը թափվենք պրծնենք: Մնացել ենք եղեմի պես չլինքներս ծառած. սրա վերջն ախր ի՞նչ պետք ա ըլի, գիր չէ՞ք բաց արել, ի՞նչ ա ասում. էս աշխարքս քանի՞ տարի էլ պտի մնա. վախտը հասել չի՞, որ մեկ Գաբրիելյան փողը փչեր, աշխարքս հայլու պես դղվեր ... էջմիածինը և Երուսաղեմը մնային, մեր ազգը զորանար, էս անհավատ անօրենները մի կորչեին, ջնջվեին և մենք սկսեինք երկնքի և երկրի փառքը վայելել, ինչպես որ հրեշտակը երազումը մեր տատը Լուսավորչին պատմել ա»: Աստված Լուսավորչին չարչարելով՝ «մե՛ր խաթեր էնպես արավ, որ մեր ազգն էլ տանջվի, չարչարվի, էլ էս աշխարքին թամահ չանի, որ Աստուծո մոտ պարզերես գտնվի ու երկնային թագավորությունը վայելի: Ախ, ի՞նչ կլեր, որ էս օրը մի չուտ գար, մեր աչքն էլ լիս տեսներ. երկրի թագավորությունը մեր ընչի՞ն ա պետքը, երկնքումը պտի մեր աստղը բանի, որ ամեն ազգ էլ տեսնին ու մեզ էրնակ տան: Մեր դլխին թագ, իրանցը բաց տեսնեն ու ամաչեն, փոշմանեն, որ երկրիս մեծությանը էնքան եսիր էին էլել»):*

Հայ ժողովուրդը այսպիսով իր երկրային տառապանքների չնորհիվ տարվել էր կրոնական միսթիսիզմով և իր փրկությունը սպասում էր հանդերձյալ կյանքի գալստյամբ: Դա մի ժամանակ էր, երբ Ռուսաստանը ոտքը ամուր դրել էր Վրաստանում և առաջ էր մղում իր նվաճողական քաղաքականությունը: 1804 թ. նա նվաճեց Գանձակի խանությունը: 1805 թ. նրան հպատակություն հայտնեցին Շուշու, Շեքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի խանությունները: Այդ նվաճումը վերջնականապես հաստատվեց 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքած ռուս-պարսկական պայմանագրով: 13 տարուց հետո 1826 թ. պատերազմը նորից բորբոքվեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև: Պարսկաստանը հաղթվեց և 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով գիջեց Ռուսաստանին Երևանի ու Նախիջևանի խանությունները և

*) *Խաչատուր Աբովյանի երկերը, Մոսկուա, 1897, էջ 124:*

Օրդուբադի գավառը: Դարձյալ պատերազմն ստիպեց, այս անգամ Թուրքիային, 1829 թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլսի պայմանագրով Ռուսաստանին զիջել Ախլցխայի փաշալիքը: Այսպիսով նախորդ դարի քսանական թվականների վերջում Ռուսաստանը գրաված ուներ այժմյան Գանձակի, Երևանի և Բաքվի նահանգները: Այս նահանգների բնիկ հայ ժողովրդին միացավ Պարսկաստանից և Թուրքիայից գաղթած հայերի մի հոծ բազմություն (140, 000 հոգի): Եվ հայերի թիվը Անդրկովկասում հասավ 300 հազարի):*

*Կարո՞ղ է այս հայությունը որևէ հայ քաղաքական իդեալ սնուցանել իր մեջ նման այն իդեալներին, որ արծարծվում էին Պետրոս Մեծի և Եկատերինա Մեծի ժամանակ: Ո՛չ, նա կատարյալ խեղճություն էր ներկայացնում և զուրկ էր ազգը ժողովող զորեղ դասակարգից: Ազնվականությունը քանակով աննշան էր, տգետ և նյութապես թույլ: Վաճառականությունը բուն հայրենիքում խոշոր նյութականի տեր չէր և զորեղ էր գաղութներում (Հնդկաստան, Ռուսաստան և այլն): Նա քաղաքականապես տհաս էր: Մնում էր հոգևորականությունը, որ ազգը ներկայացնող դասն էր, կազմակերպված էր և կչիռ ու պատիվ ուներ: Սակայն այդ դասն էլ ըստ մեծի մասին խարխափում էր տգիտության գրկում և հեռու էր քաղաքական հարցերից: Նրա առանձին ներկայացուցիչները (Հովսեփ արքեպ. Արղությանը և Ներսես Աշտարակեցին) ավելի աչքաբաց էին և որոշ ազգային քաղաքական իդեալներ էին սնուցանում, բայց նրանք էլ անզոր գտնվեցին համատարած խեղճության մթնոլորտում: Նրանց ջանքերը, դիվանագիտական մարզանքները վերջիվերջո գալիս էին հայ ժողովրդին գործիք դարձնելու օտարի ձեռքում և ամրացնելու նրա տիրապետությունը նորանվաճ երկրում: Հայերը խոշոր ծառայություններ մատուցին ռուսական զենքին: Նրանք կամավորներ էին տալիս, պաշար և տեղափոխության միջոցներ էին մատակարարում, ամեն կարգի աջակցությամբ թուլացնում էին թշնամու դիմադրական զորությունը: Կարելի է մի ամբողջ հատոր գրել այդ նյութի մասին: Եվ այդ բոլորին ի վարձատրություն հայերն իրավունք էին ստանում լոկ հասարակ ռուսահպատակ դառնալ: Դա էլ մի խոշոր բարիք էր նահատակ ազգի համար: Դիմենք նորից Խաչ. Աբովյանի վկայությանն: Տեսնենք ռուսական տիրապետությունը ինչ խոսքեր է կորզում նրա գրչից. «Հայոց արտասվալից աղոթքը, որ գիշեր ցերեկ անում էին, թե երբ կլի մեկ ռուսաց՝ իրանց հավատակցի երեսը տեսնեն, եղո հողը մտնեն, լսեց Աստված և կատարեց»**): … «կարելի է՝ աշխարհք աշխարհքով դիպչի, ազգեր գան ու էլ եղ ոչնչանան, բայց քանի որ հայի չունչն ու լեզուն կա, ե՞րբ նրանց մտքից կերթա էն ավետալից սհաթը (Երևանի առումը –Դ. Ա.) …»***: «Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռքը գցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»****:*

Այո՛, ռուսական տիրապետությունը բացարձակ բարիք էր: Նրա հովանու տակ 300 հազարանոց մի հայկական բազմություն սկսում էր զարգանալ

**) «Նոր-Հոսանք», № 5, 1914, էջ 748–749. մեր աշխատությունը՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում»:*

***) Խաչ. Աբովյանի երկերը, էջ 268:*

****) Խաչ. Աբովյանի երկերը, էջ 271:*

*****) Խաչ. Աբովյանի երկերը, էջ 272:*

միևնույն քաղաքական և հասարակական նորմաների ներքո, մի առավելություն, որ գոյություն չուներ հին՝ իրարից բաժան-բաժան և իրար բզկտող մանր-մունր բռնակալ իշխանությունների մեջ: Այժմ հայերը ապահովված էին ֆիզիկական գոյության կողմից: Նրանց առաջ բացվում էր պետական ծառայության ասպարեզ: Ապահովվում էր երկրի մեջ երթևեկությունը, հռչակվում էր ըբաղմունքի և արհեստի ազատություն, որ անգնահատելի բարիքներ էին վաճառական դասի համար: Մի խոսքով՝ պարսկական և թուրքական անհավասարության և անարխիայի փոխարեն հաստատվում է ամուր կարգ ու կանոն:

Ռուսական տիրապետությունը հեղափոխիչ ազդեցություն ունեցավ հայ ազգի սոցիալական կաղապարման գործում: Անցավ երեք տասնյակ տարի և հին ազգության փոխարեն նորն էր չնչում և հավաքական գոյության ձևեր փնտրում: Դրա հետ մենք կծանոթանանք հետևյալ գլխում:

IV.

Հայ ազգության ողնաշարը թե պարսկա-թուրքական տիրապետության շրջանում և թե այժմ կազմում է գյուղացիությունը: Այդ գյուղացիությունը պարսկա-թուրքական տիրապետության տակ կեղեքվում էր անխնայորեն, բայց ճորտական վիճակ չէր ճանաչում, քանի որ ճորտությունը, իբրև ինստիտուտ, գոյություն չուներ Հիշյալ պետություններում: Անդրկովկասում ճորտությունը իր սարսափներով գոյություն ուներ միմիայն Վրաստանում և հայ գյուղացիության մի աննշան մասը, որ ապրում էր այդ երկրում, ենթակա էր ճորտական վիճակի: Վրաստանում ճորտեր ուներ նույնիսկ հայ եկեղեցին, մի բան, որ տեսնված չէր պարսկա-թուրքական պետություններում: Այստեղ հայ գյուղացիությունը թպրտում էր կաշառակեր և հարստահարիչ ոստիկանության ցանցերում և միայն այդքանը: Գյուղացիությունը կամ կառավարվում էր հայ մելիքների, կամ թուրք բեկերի ձեռքով, որոնք պետությունից ռոճիկ չէին ստանում և իրանց ոստիկանական-դատաստանական ֆունկցիաների համար վարձատրվում էին ժողովրդից հավաքած հարկերի որոշ մասով կամ բացարձակ կաշառքով:

Այլ դրություն ստեղծվեց հայ գյուղացիության համար, երբ երկիրը անցավ ռուսների ձեռքը: Ռուսները նշանակեցին վարձովի պաշտոնյաներ և սկսեցին ներմուծել ներքին Ռուսաստանի բարդ բյուրոկրատական մեխանիզմը, որ սկզբում մի կատարյալ չարիք դարձավ բնակչության համար: Արևելցին ընտելացել էր իշխանավորի անմիջական դատաստանին, իսկ ռուսական կարգերը իրանց անվերջ գրագրությամբ և խծբծանքներով ծանր էին գալիս ժողովրդին: Այսպես թե այնպես նոր կարգերով և պաշտոնյաներով հրաժարեցվում էին մելիքներն ու բեկերը: Նրանց համար այլևս հասարակական ֆունկցիա չէր մնում և ժողովուրդն էլ ազատվում էր նրանց կերակրելու պարտավորությունից: Բայց դուրս եկավ դրա հակառակը: Անդրկովկասի այդ տիրող դասը արդեն կռահել էր, թե ինչ կարգեր են տիրում ներքին Ռուսաստանում և նա սկսեց աղմկելով ապացուցանել, որ ինքը ռուս կալվածատեր դասի նման մի հասարակական խավ է, որ իր անդամների կառավարչությանը հանձնված շրջանները անշարժ սեփականություն են, իսկ գյուղացիները՝ ճորտեր: Ռուս

իշխանությունը սկզբում չէր կամենում հաշտվել այս պահանջի հետ: Ա. Պ. Երմոլովի կուսակալության շրջանում (1816–1827) շատ էլ ուշադրության չէր առնվում այդ պահանջը, քանի որ նա անհիմն էր: Ինքը Նիկոլայ I իր՝ Կովկասի այցելության ժամանակ (1837 թ.) լսելով Ղազախի գավառի հայ գյուղացիների գանգատը, թե թուրք աղալարները «առաջ կողոպտում էին հայերին, իսկ այժմ կառավարում են նրանց», հրամայեց ազատել հայերին աղալարների կախումից): Կայսեր այդ վերաբերմունքը ամիթ դարձավ, որ պետական ընդհանուր տեսակետ մշակվի խաների, աղալարների, մելիքների և բեկերի (այսպես կոչված* высшее мусульманское сословие*) հողային պրետենզիաների նկատմամբ: Այս հարցի պարզաբանումը հանձնվեց սենատոր Գանին, որն այն եզրակացության եկավ, թե վերոհիշյալ տարրերի հողային պահանջները անհիմն են և կառավարությունը 1841 թ. 25 ապրիլի օրենքով հրաժարվեց կալվածատեր ճանաչել աղալարներին: Կառավարության դիտավորությունն էր այդպես վարվել և մուսուլմանական բարձր դասի մնացած խավերի հետ: Այս մտադրությունը ոտքի կանգնեցրեց այդ դասին: Նա պարզ տեսնում էր, որ ինքը զրկված է քաղաքական ազդեցությունից, ուստի չէր կամենում ձեռքից տալ և տնտեսական ուժը, որ հողի և աշխատավոր մարդկանց մեջ էր կայանում: Սկսվեցին խլրտումներ և բարդացավ երկրի կառավարչության գործը: Բանն այնտեղ հասավ, որ Պետրոգրադից Անդրկովկաս եկավ իշխ. Զերնիշովը և մի կոչով կայսեր անունից խոստացավ բավարարել բարձր դասի հողային պահանջները: 1844 թ. Կովկասի փոխարքա նշանակվեց իշխ. Մ. Ս. Վորոնցովը: Սրա օրով մուսուլմանական բարձր դասը արժանացավ առանձին բարյացակամ ուշադրության: Նրա հողային իրավունքների մասին իր զեկուցման մեջ Վորոնցովն ասում է. «Ամենուրեք, ուր ժողովուրդը քաղաքացիական ստորին աստիճանի վրա է, կառավարության համար անհամեմատ դժվար է ներգործել ամբողջական մասսայի վրա, այնինչ դա հեշտ էր մի դասի միջոցով, որն ավելի լուսավոր է և հետևաբար ավելի ազդեցիկ: Այստեղ երկրի քաղաքական կացության չնորհիվ դժվարությունն ավելի է շոշափելի, ուստի ոչ միայն պետք է ոտնձգություն անել դեպի բարձր դասի իրավունքները, այլև անհրաժեշտ է բոլոր միջոցներով պաշտպանել և հաստատել, որովհետև միայն ազնվապետական սկզբունքը կարող է հաղթահարել այն ամրակավար ուղղությունը, որ զարգացել է և այնպես խոր արմատներ գցել Դաղստանում և որի դեմ, ցավելով պիտի ասել, մինչև օրս զենքից բացի ուրիշ պատվար չի հակադրվել»: Կայսեր նա գրում էր. «Պետք է վերադարձնել աղալարներին ու բեկերին այն հողերը, որոնք սխալմամբ և մեծ վնասով մեզ համար խլվել են նրանցից»**):*

Այդպիսով ռուսական բյուրոկրատիան ցույց էր տալիս իր ճորտական բնույթը: Ինչ նա տեսել էր ներքին Ռուսաստանում, այն էլ կամենում էր պատվաստել պետության ծայրագավառներում: Եվ իշխ. Վորոնցովի փոխարքայության օրով մի շարք օրենքներ հրատարակվեցին (Հրովարտակ 6 դեկ. 1846 թ., օրենքներ. 20 ապր. 1847 թ., 28 դեկտ. 1847 թ. և 8 դեկտ. 1851 թ.), որոնցով

*) В. Н. Иваненко, «Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до Наместничества В. К. Михаила Николаевича», Тифлис, 1901, стр. 338.

**) Акты, собр. Кавк. Археогр. Комиссией, т. X, № 15.

բարձր դասը հողատեր դարձավ, իսկ հայ և թուրք գյուղացիների խոշորագույն մասը՝ այդ դասի ճորտը: Ճորտական վիճակը տարածվեց հայ գյուղացիության 24 %-ի վրա (1886 թ. մարզահամարի հաշվով): Այդ դրության էական կողմը այն էր, որ գյուղացիությունը իր բերքերից բաժին (1/5, 1/10, 4/30) պիտի հաներ կալվածատեր դարձած բարձր դասի անդամներին, ծառա պիտի տար նրանց, անվարձ պիտի աշխատեր նրա տնտեսության մեջ և պիտի ենթարկվեր նրա վարչական-ոստիկանական կառավարչության ու դատաստանին: Հայ գյուղացիությունը ճորտ տրվեց ոչ միայն հայ մելիքներին, այլև ավելի շատ թուրք խաներին ու բեկերին, իսկ թե ինչպես էին վերաբերվում վերջիններս իրանց կերակրող աշխատավորներին, դրան կարող է պատկերացում ծառայել հետևյալ փաստը. «1842 թ. իրանց կալվածատեր գնդապետ Ջափար-Ղուլի աղայի դեմ ծառանում են Բանադզոր գյուղի (այժմյան Կարյագինի գավառում) բնակիչները: Նրանք պահանջում էին թեթևացնել հողատիրության պայմանները: Գյուղի քահանա Մինաս Միրզաբեկյանը, ժողովրդի վճիռը կատարելով, փիլոն ծածկած ներկայանում է Ջափար-Ղուլի աղային, բայց սա կատաղած՝ հրամայում է իր ծառաներին վերցնել փիլոնը և գցել շան վրա, իսկ քահանայի հետ եղած գյուղացիներին հրամայում է երկրպագել փիլոն ծածկած շանը»): Եվ սա Թուրքիայում չէր կատարվում, այլ մի քրիստոնյա պետության մեջ: Եթե թուրք կալվածատերը գիտեր անարգել հայ գյուղացու կրոնը, հայ կալվածատերը գիտեր նրան օտարացնել այդ կրոնից:*

*«Մեր օրերում (1885 թ.), – գրում է Ստ. Զելինսկին, – ուղղափառություն են դավանում էջմիածնի գավառի Շահրիար գյուղի բնակիչները, թվով 24 ծուխ կամ 196 հոգի երկու սեռի: Այդ գյուղի բնակիչներից ոմանք ուղղափառություն են ընդունել դեռ 1865 թ., իրանց կալվածատիրոջ հետ ունեցած վեճից հետո»**):*

Սա նշանակում է, որ հայ գյուղացին կալվածատիրոջ ճանկերից ազատվելու և հող ստանալու համար կրոնափոխության է դիմել, «ռուս» է դարձել, որ ռուսական իշխանության աչքը քաղցր լինի իր վրա:

Այս երկու օրինակները ցույց են տալիս, թե որպիսի սոցիալական վիճակ ստեղծեց հայ գյուղացիության համար այն պետությունը, որի առաջխաղացումը Արևելքում նա համարում էր «Փրկչի» գալուստ: Եվ այդ գյուղացիությունը այնքան համբերատար գտնվեց, որ անգամ դա համարվեց բարեկեցության և գոհության նշան:

1861 թ. փետրվարի 19-ին ռուս գյուղացիությունը ազատագրված հռչակվեց ճորտությունից: Հայերի և թուրքերի համար համանման օրենք հրատարակվեց 10 տարի հետո՝ 1870 թ. մայիսի 14-ին: Դա իրոք ազատագրող օրենք չէր: Նա գյուղացիներին թողնում էր պարտադիր (обязанный) *վիճակի մեջ դեպի կալվածատերերը, որովհետև միանգամից չէր վերջացնում հողերի փրկագործումը* (выкуп)*: Նոր օրենքը վերացնում էր պարտադիր աշխատանքները կալվածատիրոջ տնտեսության մեջ և ծառա տալու պարտավորությունը, որո-*

---

*) *Լէօ, «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական Հոգևոր դպրոցի», Թիֆլիս, 1915, էջ 79:*

**) Свод материалов по изучению эконом. быта госуд. крестьян Закавказского края, т. II. Тифлис, 1887, стр. 36.

չելով դրանց փոխարեն իբրև հատուցում դրամական տուրք: Գյուղացին պիտի անխափան չարունակեր բերքի տուրք տալ կալվածատիրոջը, ինչպես և առաջ: Իսկ կալվածատերերի ոստիկանական-դատաստանական իրավունքները գյուղացիների վերաբերմամբ ոչնչացված էին առաջ, 60-ական թվականների կեսին, քանի որ նրանք վիթխարի չափերով իշարն էին գործադրում այդ իրավունքները: Գյուղացիների իսպառ վերկազործումը 1870 թ. մայիսի 14-ի օրենքը կապում էր նրանց և կալվածատիրոջ փոխադարձ համաձայնության հետ: Նա ստիպողական միջոցներ չէր ձեռնարկում այդ իմաստով և պետական նյութական աջակցություն չէր ցույց տալիս, ինչպես այդ կատարվել էր ներքին նահանգներում: Գալով հողերի բաժանման, որ պիտի տեղի ունենար կալվածատերերի և գյուղացիների միջև, պետք է ասել, որ չնորհիվ կաշառակեր հաշտարար միջնորդների (мировые посредники) *գյուղացիները ըստ մեծի մասին ստացան առապար, ավազոտ և անբերրի տեղեր: Հողերի լավագույն մասը մնաց կալվածատերերին, որոնք օգտվելով օրենքի մի կետից, թե կալվածատերը կարող է իրան վերապահել հողերի 1/3-ը, գյուղացիներին չտվին որոշված չնչաբաժինը* (душевой надел)*[*]:*

1870 թ. մայիսի 14-ի օրենքը իր գոյությունը պահպանեց ուղիղ 42 տարի: Այդ ժամանակամիջոցում գյուղացիները բնական և դրամական տուրքեր տալով կալվածատերերին, կրկնակի հատուցին իրանց բաժին մնացած հողերի արժեքը: Սակայն Գ. Պետական Դուման կամեցավ վերջնականապես ազատագրել միանգամ արդեն «ազատագրված» գյուղացիներին: Նա ընդունեց 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, որով գյուղացիների ազատագրումը կատարվում էր ստիպողաբար (принудительно) *և պետական դրամական օժանդակությամբ: Հայ և թուրք գյուղացիները պարտավորվում էին պետական գանձարանի աջակցությամբ 24 միլիոն ռուբլի վճարել իրանց հողատերերին: (Այդ գումարի մեջ չի մտնում այն տոկոսը, որ պիտի ստանա գանձարանը): Եվ այսպես ռուս իշխանությունը Անդրկովկասի հայ-թուրքական պրովինցիաներում նախ ճորտական դրություն ստեղծեց, ինչպես այդ արավ Ուկրաինայում, ապա ազատագրեց ճորտերին, միլիոններ կորզելով ժողովրդից հօգուտ «արիստոկրատական սկզբունքի»* («аристократическое начало»)*:*

1886 թ. մարդահամարով կիսաճորտական վիճակի մեջ եղող հայ գյուղացիների քանակը հավասար էր 170 հազարի, որ կազմում էր հայ գյուղացիության ընդհանուր քանակի 24 %-ը: Հայ կիսաճորտական գյուղացիության չլնքին նստած դասը գլխավորապես թուրք ազգության էր պատկանում: Միմիայն Երևանի նահանգի Նախիջևանի գավառում 50 բեկապատկան հայ գյուղեր կային 1886 թ. (3105 ծուխ, 24256 չունչ), որոնց տերերը բացառապես թուրքեր էին: Թիֆլիսի նահանգում այդ նույն թվականին կային 55 կալվածատիրական հայ գյուղեր (1875 ծուխ, 11203 չունչ), որոնք համարյա բացառապես վրացիներին էին պատկանում: Այս փաստերը խմիթարյանց ջուր են մաղում նրանց գլխին, որոնք հայ անվան հետ անպայման կապում են և չահագործողի հատկությունը: Հայ գյուղացին ավելի շատ էր չահագործվում: Եվ նրան չահագործում էին հայ, թուրք և վրացի կալվածատերերը:

[*] Материалы для изучения эконом. быта госуд. кр. Закав. края, т. 1, Тифлис, 1885, стр. 461–469.

Կալվածատերի լուծը ծանր նստեց հայ գյուղացիության հոգու կորովի և նկարագրի վրա: Նա դարձավ հեղինակության գերի և ձեռներեցությունից զուրկ մի մասսա:

Լավ վիճակ չունեցավ և արքունի կոչված հողերի վրա նստած հայ գյուղացիությունը: Նա իր հերթին կորացած էր պետության խնամակալության և հարկերի ու բեկառի (натуральные повинности) *տակ: Այժմ պետությունը կամենում է նույնպես փրկագործման ենթարկել իր հողերը, այսինքն գյուղացիներից տասնյակ միլիոններ կորզել և նրանց ձեռքի հողը գյուղացիական սեփականություն հռչակել: Այդ խմաստով 1913 թ. օրինագիծ կա մտցված Պետական Դումա: Պատերազմը արգելք եղավ նրա քննության և ընդունման: Հավանորեն մոտ ապագայում այդ օրինագիծն օրենք կդառնա և գյուղացին պլուխը քարշ կկանգնե վաչխառուի դռանը:* «Ён достанет», — *ասել է դեռևս Շչեդրինը:*

V.

Նոր տիրապետությունը ավելի շատ չահեկան եղավ հայ ազնվականության և վաճառական դասի համար: Սակայն նա չահեկանությունից բացի կործանեց այն սերտ դաշնակցությունը, որ մինչև այդ արտաքին բռնավորական ճնշումների չնորհիվ գոյություն ուներ հիշյալ երկու խավերի և հոգևորականության մեջ: Գոնե սա կարելի է հաստատապես պնդել ազնվականության վերաբերմամբ, իսկ լքել հոգևորականության թիկունքը՝ դա նույնիսկ մոտիկ անցյալում նշանակում էր ձեռնպահ մնալ ազգային-կուլտուրական կյանքում, անգիտանալ այդ կյանքը:

Ռուսաց տիրապետությունը անչարժ ժառանգական կալվածների տեր դարձրեց հայ ազնվականությունը: Բայց նա ավելի չահեկան եղավ, բանալով այդ դասի առջև պետական ծառայության ասպարեզը: Անցավ երեք-չորս տասնյակ տարի և հայ նահապետական ազնվականության ծոցից դուրս եկան անվանի զորապետներ և այնպիսի մինիստր, ինչպես Մ. Տ. Լորիս-Մելիքովն էր: Սակայն ազգի դեմ հարուցած ընդհանուր հալածանքները եկան այդ ասպարեզը փակելու հայ ազնվականության առջև և նախորդ դարի 80-ական թվականներից սկսած նրա տված պաշտոնյաների քանակը կամաց-կամաց պակասեց: «Кавказский Календарь» *պաշտոնական հրատարակության տված տեղեկությունները այդ մասին, որ բերում ենք մեր մշակությամբ, ցույց են տալիս Անդրկովկասի քաղաքացիական հիմնարկությունների հայ պաշտոնյաների քանակի հետևյալ վայրէջքը. 1877 թ. (փոխարքայություն Մեծ. իշխ. Միխայիլ Նիկոլաևիչի) եղել է 523 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (2365) 22,1%, 1886 թ. (կառավարչապետ իշխ. Դոնդուկով-Կորսակով, հալածանքի առաջին շրջանը հայերի դեմ) եղել է 661 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (3217) 20,5%, 1897 թ. (նոր պաշտոնի անցած իշխ. Գոլիցինի ժամանակ) եղել է 719 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (4065) 17,6%, իսկ 1901 թ., երբ իշխ. Գոլիցինը նորանոր չարիքներ էր նյութում հայերի դեմ, եղել է 617 հայ պաշտոնյա կամ բոլոր պաշտոնյաների (4917) 12,5%: Ահա այսպես 1877 թ՝ 22,1%, իսկ 1901 թ՝ 12,5%:*

Այստեղ նկատենք, որ հայ պաշտոնեությունը բացառապես չէր որդեգրվում ազնվականներից: Պետական ծառայության էին ձգտում և հոգևորականների զավակները, և վաճառականության նոր սերունդը, անգամ գյուղացիները, սակայն ըստ մեծի մասին ազնվականներն էին նրա երկրպագուները: Հալածանքն ուղղված էր այս ասպարեզում ոչ միայն հայ տարրի դեմ, այլև նա այնպիսի բնույթ ուներ, որ հնարավորություն չէր տալիս հային աչքի ընկնող տեղ բռնելու բյուրոկրատական սանդուղքների վրա:

Իսկ ընդհանրապես ի՞նչ կապ էր պահպանում հայ ազնվականությունը ազգի հավաքական մարմնի հետ, ինչպե՞ս էր գործադրում իր ազդեցությունը այդ մարմնի կարիքների բավարարման խնդրում: Այստեղ պիտի ասենք, որ հայ ազնվականությունը և ծառայող դասը միշտ էլ եղել են կառավարության ձեռքում կույր գործիք ճնշելու նրա ազգային-կուլտուրական անհատականությունը: Հիշենք, որ հայ ազնվականության միջից դուրս եկավ գինվորական հռչակ հանած իշխ. Մաղաքովը (ըստ կոմս Պասկևիչի՝ «отъявленный корыстолюбец»), *որ երմոլովի առաջ փաստաբանում էր, թե հայ գյուղացիությունը ճորտական վիճակ է ունեցել պարսկական տիրապետության շրջանում: Հիշենք իշխ. Վ. Օ. Բեբուտովին (1791–1858), որը լինելով 1829–1838 թթ. կառավարիչ Հայոց շրջանի (այժմյան Երևանի նահանգ), ճնշումներով կաթողիկոս ընտրել տվեց կառավարության սիրելի Հովհաննես Կարբեցուն, որը մի ապիկար անձ լինելով, անկարող եղավ պաշտպանել իր հոտի ազգային շահերը: Իզուր չէր իշխ. Վորոնցովը 1854 թ. Կովկասից հեռանալիս գրում իր տեղապահ գեն. Ռեադին, թե հայ ազնվականության բարձր տոհմերին արդեն ռուսացած և ռուսական գործի մարդիկ կարելի է համարել*[*]*: Այդ տոհմերի ներկայացուցիչները իրանց ազգային ծագումը հիշում էին այն ժամանակ, երբ կարիք էր զգացվում նրանց միջոցով հայ ժողովրդի շինքին փաթաթել այս կամ այն կարգադրությունը, կամ թե այդ ժողովրդին մղել դեպի արտաքին թշնամին: Այդպես չէ՞ր միթե բոլոր ռուս-թուրքական պատերազմների ժամանակ:*

Եվ այսպես հայ ազնվականությունը խորթացավ ազգի ընդհանրությունից, դարձավ դրսից եկած թելադրանքների գործիք: Նա ազգի սրտացավ առաջնորդը չեղավ և մասն չունեցավ նրա հասարակական իդեալների դարբնման մեջ:

Իսկ հասարակական ի՞նչ ուղի բռնեց հայ վաճառական դասը, որ հին ժամանակ համընթաց էր գործում հայ հոգևորականության և ազնվականության հետ:

Ռուսական տիրապետությունը այս դասի համար դարձավ նյութական բարիքի հորդահոս աղբյուր: Նախորդ դարի 30-ական թվականների ռուս հետազոտողը հետևյալ վկայությունն է տալիս Թիֆլիսի հայերի վերաբերյալ. «Նրանք տիրել են Թիֆլիսի և ողջ Անդրկովկասի առևտրին, կատարում են ամեն կարգի հանձնարարություններ, իրանց ձեռքին ունեն համարյա բոլոր կապալները և գործի մատակարարման գործը: Նրանք թարգմաններ են, ձե-

[*] Акты, т. X, № 71.

կուցանողներ ու գործակալներ: Մի խոսքով, ուր չահի հնարավորություն կա, այնտեղ են և հայերը»[*]:

Այս տեղեկությունների համաձայն պատկեր է տալիս հայ պատմաբան Ալ. Երիցյանը. «Հարկ է ասել, որ Պասկևիչը (1827–1831) ավելի ձեռնտու էր համարում զորաց թե պաշարի մատակարարությունը և թե տնտեսական մյուս պահանջները հանձնել աճուրդով մասնավոր անձանց, քան թե կատարել առաջվա ժամանակների պես տերության պաշտոնեից ձեռքով: Շնորհիվ այս ներմուծած կարգ ու կանոնների, օսմանյան պատերազմում Պասկևիչի արած տնտեսական ծախքը հազիվ հասավ վեց միլիոն ռուբլի թղթադրամի, որ համեմատաբար չատ քիչ էր: Այդ կարգ ու կանոնները ստեղծեցին և կազմակերպեցին ժողովրդի մեջ մի առանձին դասակարգ «փոդրաթչի» անունով, որ միանգամայն կայացած էր հայերից: Սրանց էր հանձնված զորքերի մատակարարությունը, ճանապարհների հարդելը, չինությունների կառուցանելը, ծանրություններ տեղափոխելը և միով բանիվ այն ամենը, ինչ որ կարևոր էր բանակի տնտեսական կառավարության համար: Հայ «փոդրաթչիները» չատ նշանավոր ծառայություններ մատուցեցին ռուսական զորքին և ոմանք պատվանշաններով պարգևատրվեցան: Իրանց ճարպիկությամբ և աշխատասիրությամբ նրանք գրավել էին զորապետների ուշադրությունը և երբեմն այնպիսի փափուկ հանձնարարություններ էին կատարում, որ միանգամայն կվերաբերվին զինվորական և կամ քաղաքագետ պաշտոնեից: Ոմն Թիֆլիսեցի փոդրաթչի Քալենյան, որ բանակին միս մատակարարելով բավականին հարստություն վաստակեց, մի խումբ լրտեսներ էր պահում և նրանց միջոցով ամենաճիշտ տեղեկություններն էր հաղորդում սպարապետին թշնամու մտադրության մասին: Միչտ զորաց հետ լինելով և չատ անգամ էլ իրանց անձը վտանգի ենթարկելով, մի քանի փոդրաթչի հայեր կարճ միջոցում նշանավոր հարստության տեր դարձան և չուտով փոդրաթը այնքան հրապուրիչ դարձավ, որ արհեստավորից սկսած մինչև աստիճանավորը, թողնելով յուրյանց սովորական պարապմունքը, հետամուտ էին փոդրաթ գտնելու և այդ միջոցով հարստանալու: Թեև փոդրաթի դիմողները ամենքը չհարստացան, և չատ չատերն էլ միանգամայն վնասվեցին, բայց մի քանի օրինակների պատճառով հասարակաց բերանում «փոդրաթչի» և հարուստ բառերը հոմանիշ դարձան: Այդպիսով ահա ժողովուրդի այս նոր դասակարգը յուր արտաքին փայլով պատվելի դիրք բռնեց և ռամիկների աչքում գերադասվում էր նաև ազնվականների կարգից»**: Նկարելով այս պատկերը, Ալ. Երիցյանը վչտացած ասում է, որ «փոդրաթչիները» իրանց գեխ կյանքով, անբարոյական արարքներով և օտարամոլությամբ հայ ազգի անունը կոտրում էին օտարների առջև, որ նրանք օրեցօր խորթանում էին ազգի հավաքական մարմնից:

Դարձյալ մի վկայություն, որ պատկանում է փոխարքա իշխ. Վորոնցովին (1844–1854): Իր տեղապահ գեներալ Ռեադին թողած հրահանգի մեջ նա գրում է (1 մարտի 1854 թ.). «Հայերն այստեղ կառավարության գլխավոր

---

[*] Обозрение Российских владений за Кавказом, ч. I, С. П. Б., 1836, стр. 199.

[**] Ալ. Երիցեան. Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դ., հ. I, Թիֆլիս, 1894, էջ 442–447:

*գործիքն են կապալների և հանձնարարությունների համար: Նրանց մրցումը իրար հետ իջեցնում է գները մեր օգտին: Հայ առևտրականների մեջ կան անձինք, որոնք արժանի են առանձին ուշադրության, ինչպես օրինակ պատվավոր քաղաքացիներ Արշակունի և Միրիմանյան, որոնք շահավետությամբ իրանց և գանձարանի համար՝ վերցրած ունեին Սալյանի ձկնորսարանի ահագին կապալը, տեղական (այսինքն Թիֆլիսի – Դ. Ա.) քաղաքագլուխ Ավեչնիկյանը և մանավանդ նահանգային քարտուղար և ազնվական Հովհաննես Միրզոյանը, փորձառու, ջանասեր մի մարդ՝ միշտ պատրաստ, որքան հնարավոր է քիչ շահով իր համար, օգտակար լինել կառավարությանը: Նա մեզ մատուցել է շատ խոշոր ծառայություններ, իր վրա վերցնելով այնպիսի գործեր, որոնց համար ցանկացողներ չկային, կամ թե գտնելով այդպիսիները և աջակցելով նրանց իր գրավականով»**)*:*

Ի՞նչ են ցույց տալիս այս վկայությունները: Որ հայ վաճառական դասը գանձ է ժողովում կառավարության տաքուկ թևի տակ: Եվ մենք գիտենք, որ երկար ժամանակ Անդրկովկասում նա ոչ միայն զորքին պաշար մատակարարողն էր, որ ինքնին մի հորդահոս աղբյուր էր հարստանալու համար, այլև պետության պատկանող աղի, նավթի և ձկնորսարանների կապալառուն, մինչև իսկ մետաքսահարկի ժողովողը: Այսպես է ի միջի այլոց կազմակերպվել հայ առևտրական կապիտալը: Նախորդ դարի 60-ական թվականներից նա սկսում է արդյունաբերական և ապա ֆինանսական դառնալ: Այստեղ էլ նա սկզբում վայելում է կառավարության հովանավորությունը:

Մի շարք պատճառներով հայ կապիտալի կուտակումը և բարգավաճումը կատարվում է հայերի պատմական հայրենիքից հեռու, այսպես ասած հայկական գաղութներում: Թիֆլիսը ամբողջ Կովկասի վարչական կենտրոնն էր և որպես այդպիսին՝ նպաստավոր վայր էր առևտրի համար: Հայ վաճառականը այդտեղ շտապեց: Մերձկասպիական գավառները հարուստ էին մետաքսով, տորոնով (марена), *աղով և նավթով: Այդ երկիրը շնորհիվ Կասպից ծովի հեշտ հաղորդակցության մեջ էր ներքին Ռուսաստանի հետ, և հայ վաճառականը կասպիական ափերը դիմեց: Այսպես հերթը հասավ նաև Փոթիին և Բաթումին, երբ նրանք դարձան Կովկասի առևտրական պորտերը Թուրքիայի և հարավարևմտյան Եվրոպայի համար: Բուն հայ երկրում մնաց մանր առևտրականը կամ շատ-շատ մի քանի խոշոր առևտրական տներ: Հաշտարխանում և Մոսկվայում, հայկական այդ հեռավոր գաղութներում, ավելի շատ հայ կապիտալ կար կենտրոնացած, քան ամբողջ Երևանի նահանգում, որ հայության կենտրոնն է:*

Եվ ի՞նչ փոխհարաբերություններ պիտի ստեղծեին հայ առևտրաարդյունաբերական դասակարգի և ազգային ժողովրդական մարմնի մեջ այս պայմանները: Այն, որ առևտրաարդյունաբերական դասակարգը տակավ առ տակավ պիտի խորթանար ժողովրդական զանգվածից, չպիտի տոգորվեր նրա ազգային ապրումներով, միջոցներ չպիտի ձեռք առներ դեմ կանգնելու այն բոլոր կառավարչական հարվածներին, որոնք նպատակ ունեին ազգային տեսակետից դիմազուրկ անել հայ ժողովրդին: Մի՞թե կառավարական տաքուկ թևի տակ զարգացած խավը կհամարձակվեր բողոքող և դիմադրող լինել: Եվ ին-

*) Акты, т. X, № 71.

չո՞ւ համար անել այդ: Զէ՞ որ հայ ժողովուրդը ոչ խոշոր սպառողական ուժ էր, ոչ էլ այդ կապիտալի համար միակ աղբիւրից տարրը: Հայ կապիտալը զորանում էր ավելի շատ օտար հորիզոնների տակ և նրա կրողները կոմոպոլիտ էին, կամ իշխանութեան առջև խոնարհ հաճոյացողներ: Այդպես մնաց հայ կապիտալիստ դասակարգը և այն ժամանակ, երբ արդէն մտահոգվում էր շղթաներ դնել նրա թռիչքներին: «Եթէ սկզբում, – ասված է մի պաշտոնական հրատարակութեան մէջ, – հայերի գործունեութիւնը ճանաչվել է օգտակար, որովհետև նրանք, լինելով Թիֆլիսի նահանգի վրացիներից ավելի եռանդուն և ձեռներեց, իսկ տեղական մահմեդական բնակչութիւնից ավելի զարգացած, քիչ չեն նպաստել երկրի առևտրի ու արդիւնաբերութեան բարգավաճման, այժմ, երբ հայերի թիվը հասել է Անդրկովկասի ողջ բնակչութեան 20 տոկոսին, նրանց գործունեութեան զարգացումը այլևս չպետք է ցանկալի համարել: Այդ տարրը, լինելով միաճուլ և գործելով միաբան, ցույց է տալիս շոշափելի գերակշռութիւն մյուս ժողովուրդների նկատմամբ և սպառնում է մերձավոր ապագայում իր ձեռքը կենտրոնացնել երկրի ողջ առևտուրն ու արդիւնաբերութիւնը ի վնաս բուն ռուս ազգաբնակչութեան չահերի, ազգաբնակչութեան, որի քանակը Անդրկովկասում 8 անգամ պակաս է հայկականից»):*

Այսպես էր դատում ռուս կառավարութիւնը Պլևեի և Գոլիցինի ժամանակ: Եվ սա մի կարճատես և վտանգավոր քաղաքականութիւն էր հենց բուն ռուս չահերի համար, քանի որ այժմ գաղտնիք չէ, որ Մերձավոր Արևելքում միմիայն հայերն են անկեղծորեն կապված ռուս պետականութեան հետ: Այսպիսով բյուրոկրատիան կասկածի տակ առավ իր կողմից այնքան հովանավորված հայ առևտրաարդիւնաբերական դասակարգը և հալածանք սկսեց նրա դեմ: Բայց ի՞նչ դիրք բռնեց վերջինս: Բողոքե՞ց, հակակառավարչակա՞ն դարձավ: Եվ ոչ մեկը: Նա մնաց նույն ռուսական պետական իմաստութեան երկրպագուն: Նա ջանք չխնայեց էլ ավելի շատ գունավորվելու ռուսական գույնով, խորթացնելով իրան և իր սերունդը մայրենի միջավայրից: Հայկականը հալածվեց նրա տնից: Նա ամուր փարեց ռուս լեզվին և ռուս կրթութեանը: Հարազատ ազգի համար նա պահեց մի ավանդական ազգային սովորութիւն՝ բարեգործութիւն անել: Զկարծեք թե կամովին. ոչ, հանդիսավոր դիմումներից հետո միայն կամ ժողովրդական աղետի ժամանակ, երբ ամենուրեք խոսվում և աղերսվում էր: Հայ առևտրաարդիւնաբերական դասը չտոգորվեց ազգային իղեալներով. նա իր կապը ազգութեան հետ վերածեց կրոնականի: Այո, այդ դասը ազգային գույն չունի, այլ նա միայն կրոնի միջոցով է կապված հայութեան հետ:

Ինչո՞ւ այդպես եղավ: Զէ՞ որ մենք ասացինք, որ նա զարգացավ պետութեան տաքուկ թևի տակ և բուն հայրենիքից հեռու: Նա իր նյութական զորութեամբ իսկի սպական էլ չէ հայ ողորմելի միջավայրի համար: Նրա համար անհրաժեշտ է բաց ունենալ ամբողջ պետութեան չուկաները: Նա մեծ նավ է դարձել, իսկ մեծ նավին հարկավոր է մեծ նավարկութիւն:

Այս պայմաններում, կրկնում ենք, խոսք չի կարող լինել հայ խոշոր բուրժուազիայի ազգային իղեալների մասին: Դրանք գոյութիւն չունեն: Խոսք

*) Материалы по вопросу о распространении действий Крестьянского Поземельного Банка на Закавказский край, С. П. Б, 1904, стр. 130–131.

կարող է լինել միմիայն այդ դասակարգի և նրան հարող ինտելիգենցիայի ապազգայնության մասին, իսկ դա հայոց հարց չի կազմում, և մենք փակում ենք այս գլուխը:

VI.

Ի՞նչ էր հայ հոգևորականությունը պարսկական տիրապետության ներքո և ի՞նչ էվոլյուցիա կրեց նա ռուսական տիրապետությունից հետո:

Պարսկական տիրապետության շրջանում հայ հոգևորականությունը ազգը ներկայացնող դասն էր: Նրա գլուխը, ամենայն հայոց կաթողիկոսը, հաստատվում էր պարսից շահի և թուրքաց սուլթանի հրովարտակներով: Թե կաթողիկոսը և թե առհասարակ հոգևորականությունը ժողովրդական ընտրությամբ էին պաշտոնի անցնում: Հոգևորականությունը և եկեղեցին պահվում էին հավատացյալների հոժարակամ նվիրաբերությամբ և կալվածներից ստացված հասույթով: Հոգևորականության պարտավորությունների մեջ էր մտնում ոչ միայն հայ ազգի կրոնական, այլև կրթական-կուլտուրական պետքերի հոգացումը: Ավելին. թույլատրվում էր հայերին իրանց ղատական վեճերի համար դիմել կաթողիկոսի և առհասարակ հոգևորականության ղատաստանին[*]*: Թե հոգևորականությունը և թե եկեղեցական կալվածները ազատ էին հարկերից:*

Չնայած իր արտոնյալ վիճակին, հայ հոգևորականությունը պարսից տիրապետության ժամանակ շատ բան չէր կարողանում անել ժողովրդի համար: Ինքը՝ այդ հոգևորականությունը, խարխափում էր տգիտության և չքավորության մեջ, որովհետև այն, ինչ խոստացվում էր հանդիսավոր ֆերմաններով, ամենակոպիտ կերպով ոտնահարվում էր կյանքի մեջ: Հայոց եկեղեցու կենտրոնը՝ Էջմիածնի վանքը և նրա միաբանությունը իր ընդհանրական կաթողիկոսով՝ պարսից ձեռքում նյութական շահագործման մշտական օբյեկտ էր: Էջմիածինը դարձել էր մի վայր, ուր աշխարհի ծայրերը ցրված հայությունից առատ նվիրաբերություններ էին տեղում: Նա նման էր հրեական Սողոմոնի տաճարին, որը իր տուրքն էր պահանջում Իսրայելից: Եվ տեսեք, թե որքան էր պարսկական իշխանությունը հարգում Էջմիածնի իրավունքները. նրա ուխտավորները պաշտպանություն էին գտնում և ազատ էին մաքսերից. նրա նվիրակները, որոնք այցելության էին գնում օտար երկրներ և հարուստ նվերներ ժողովում տարաբնակ հայությունից, նույնպես ազատ էին մաքսից. անգամ արգելվում էր քննել նրանց իրերը: Եվ այս բոլորը նրա համար, որ Էջմիածնի ուղին բռնած ոսկին ու հարստությունը չընկնի մանր-մունր սահմանակալ պաշտոնյաների ձեռքը, այլ որևէ պատրվակով մի գեղեցիկ օր փոխադրվի կամ շահի, կամ նրա երևանի փոխարքա խանի սնդուկը: Արդեն տեսանք, որ Ղուկաս կաթողիկոսը (1780–1799) 1795 թ. 100 հազար ռուբլի տվեց Աղա-Մահոմեդ-խանին, որով միայն կարողացավ փրկել Էջմիածնի վանքը կործանումից:

Ռուսական տիրապետությունը վերջ տվեց այս նուրբ և անխնա շահագործմանը: Նա մյուս կողմից ճանաչեց հայ եկեղեցու և նրա պետի՝ ամենայն հայոց կաթողիկոսի դարերով սրբագործված իրավունքները: 1836 թ. մարտի 11-ին հրատարակվեց հայ եկեղեցու վերաբերյալ օրենքը, որ այսօր էլ պահպանում է իր ամբողջ ուժը: Այդ օրենքը հայ եկեղեցուն տալիս է ինքնավարության իրա-

[*] *Սիմէոն կաթողիկոս. «Ջամբռ», Վաղարշապատ, 1873, էջ 122:*

վունք: Հոգևորականությունը և նրա պետը միմիայն ժողովրդական ընտրությամբ կարող են պաշտոնի անցնել: Եկեղեցու կազմակերպությանը վերապահվում է իրավունք հոգ տանել հայ ժողովրդի հոգևոր-կրթական պետքերի համար: Այդ կազմակերպությունը իր տեղական ճյուղերով ճանաչվում է պետական հաստատություն (Էջմիածնի Հայ-Լուսավորչական Սինոդը, Թեմական Առաջնորդը, Կոնսիստորիան և այլն): Այսպիսով 1836 թ. մարտի 11-ի օրենքը կարգավորություն էր մտցնում հայ եկեղեցու խարխլված կազմակերպության մեջ: Ճիշտ է, այդ օրենքը չէր սրբագործում բոլոր հին ավանդական սովորությունները, բայց նա հնարավորություն էր տալիս մի կրոնական համայնքի ինքնավար կերպով կարգավորելու իր հասարակական-կրոնական գործերը:

Ռուսաց կառավարությունը սկզբում չէր կամենում նսեմացնել հայ եկեղեցու նշանականությունը: Ընդհակառակը, նա ցանկալի էր համարում, որ Էջմիածինը ձգող ուժ դառնա Պարսկաստանի և Թուրքիայի հայության համար: Այդ էր պահանջում նրա Մերձավոր Արևելքի քաղաքականությունը: Ճիշտ է, նա կամենում էր եկեղեցու գլուխ ունենալ կամակատար մարդկանց և ներշնչումներ էր անում այդպիսիների ընտրության համար, ինչպես այդ եղավ Հովհաննես Կարբեցու ժամանակ (1831–1842), բայց արտաքուստ միշտ պահպանում էր հարգալից վերաբերմունք: Պատահում էր, որ Կովկասի ավելի հեռատես կառավարիչները դեմ էին գնում ընտրական ճնշումներին և թելադրանքներին, բարձր գնահատելով հայերի դերը ռուսական արևելյան քաղաքականության համար: Այդպես վարվեց, օրինակ, իշխ. Բարյատինսկին (1857–1862), հրաժարվելով ճնշումներ գործադրել կաթողիկոսական ընտրությունների ժամանակ, նույնիսկ կողմնակից լինելով, որ կաթողիկոս ընտրվի մի թուրքահայ հոգևորական[*]:*

Մենք տեսանք, որ 1836 թ. մարտի 11-ի օրենքը հայերին եկեղեցական ինքնավարություն տալով, նրանց հոգևոր-կուլտուրական պետքերի հոգացողության պարտավորությունը բարդեց հոգևորականության վրա: Բայց կարո՞ղ էր հայ հոգևորականությունը չինարար գործ կատարել այդ ուղղությամբ: Նա ժառանգել էր պարսից տիրապետության շրջանից տգիտություն, անհոգություն, կաշառակերություն և կամայական վերաբերմունք դեպի հասարակական գումարները: Մյուս կողմից պատերազմները, նեղություններն ու կողոպուտները սպառել էին Էջմիածնի նյութական միջոցները: Պետք էր որոշ ժամանակ անցներ, որ եկեղեցական կազմակերպությունը բարոյական և նյութական ուժ հավաքեր ի կատար ածելու իր վրա դրած պարտականությունները: Այդպես էլ եղավ: 25–30 տարի անցավ օրենքի հրատարակումից հետո, մինչև որ եկեղեցական կազմակերպությունն սկսեց կանոնավոր գործունեություն ցույց տալ: Այդ մոմենտը զուգադիպեց ռուսական հասարակական կյանքի մեջ հայտնի 60-ական թվականներին, երբ պետության համայն կյանքի մեջ զարթոնքի շարժում սկսվեց: Շարժվեց և հայ աշխարհիկ ինտելիգենցիան, որն սկսեց քարոզել կազմակերպված ազգային կյանքի անհրաժեշտությունը և այստեղ բախվեց հայ եկեղեցու կազմակերպության հետ: Հայ եկեղեցին պիտի եռուն կյանք ցույց տար, պիտի ապացուցաներ իր անհրաժեշտությունը ազգի համար, պիտի ընդգրկեր հասարակական օգտավետ գործունեություն, որ ավե-

[*] Акты, т. XII, № 463.

լորդ չսեպվեր հայ աշխարհիկ հասարակության առջև: Նա ստիպված էր ձեռք զարկելու օրենքի իր վրա դրած պարտականությունների իրագործման, այն է՝ լծվելու լայն կրթական աշխատանքի:

Նա այսպես էլ վարվեց: Մատթեոս կաթողիկոսը (1858–1865) ստեղծեց դպրոցական աշխարհիկ և ընտրովի հոգաբարձություններ և ուսումնարանների կրթական ու նյութական հոգսը նրանց հանձնեց, հոգևոր իշխանությանը վերապահելով բարձր հսկողությունը և կոնտրոլը: Դա իհարկե նրա անհատական մտքի ու կամքի արդյունքը չէր: Նա ստիպված էր տեղի տալ ժողովրդական պահանջի առջև և այդ ձևով վերջ տալ աշխարհիկ հասարակության տրտունջներին: Սակայն հենց որ հայ հոգևորականությունը հրաժարվեց կաստա դառնալու ձգտումներից և միացավ աշխարհիկ ինտելիգենցիային՝ միասին տանելու ազգի կրթական-կուլտուրական գործը, նա կասկածելի դարձավ բյուրոկրատիայի աչքում և այնուհետև անդադրում հալածանքի ենթարկվեց: Կառավարությունը ձգտեց նսեմացնել հայ եկեղեցու պետի նշանակությունը, անգիտանալ նրա իրավունքները, արգելքներ հարուցանել դպրոցական գործի զարգացման դեմ և այլն, և այլն: Հայոց կաթողիկոսությունը իհարկե չէր կորցրել իր նշանակությունը մերձարևելյան արտաքին քաղաքականության համար: Եթե դեռևս հարգանք մնում էր դեպի այդ հաստատությունը, ապա միմիայն չնորհիվ հիշված քաղաքականության պահանջների: Բյուրոկրատիական ռեժիմը կողմնակից էր կատարյալ հարթեցման (нивелировка)*: Նա չէ, որ պիտի համբերեր ինչ-որ հայերի եկեղեցական ինքնավարության, բայց կար արտասահմանյան հայությունը և պահանջվում էր հաշվի նստել նրա ձգտումների և տրամադրության հետ: Այսպես թե այնպես 60-ական թվականներից սկսած հայոց եկեղեցին և նրա ստեղծած կուլտուրական հաստատությունները սկսեցին վայելել բյուրոկրատիայի առանձին ուշադրությունը: Հայերի դեմ հալածանքը ավելի շատ սաստկացավ այս կողմից: Բայց մինչև այդ հալածանքների էության անցնելը մենք պետք է մի ակնարկ նետենք հայ աշխարհիկ ինտելիգենցիայի և նրա քարոզած վերածնության վրա:*

VII.

Հայերի հասարակական վերածնությունը սկիզբն առավ նախորդ դարի 50-ական թվականներին: Ի՞նչ գործոնների ազդեցության տակ եղավ այդ և ի՞նչ բովանդակություն ուներ նա: Հայերի վերածնությունը մի կողմից կապ ուներ ընդհանուր հասարակական շարժման հետ, որ տիրում էր Ռուսաստանում, մյուս կողմից նա ուներ իր ներքին, տեղական դրդապատճառները: Մենք կխոսենք այդ դրդապատճառների մասին:

Տեսանք արդեն, թե ինչպես կազմակերպվեց հայ առևտրական կապիտալը, որը ուռճանալով՝ 60-ական թվականներից սկսեց նշաններ ցույց տալ արդյունաբերական և ֆինանսական դառնալու: Այդ առևտրական կապիտալը կատարյալ քայքայում մտցրեց երկրի ինքնամփոփ տնտեսակարգի մեջ: Նա սկսեց Ռուսաստանից (Մոսկվայից և Նիժնի-Նովգորոդից) Անդրկովկաս ներմուծել ռուսական ֆաբրիկաների գործվածքներն և մյուս պատրաստի իրերը (готовые изделия)*, արտահանելով նույն այդ կենտրոնները մեր երկրի հում մթերքները (բուրդ, բամբակ, մետաքս, տորոն, կաշիներ և այլն): Հայ առևտրա-*

կան կապիտալի չավղով գնացին և ներքին Ռուսաստանից Անդրկովկասում հաստատված ռուս և այլազգի վաճառականները: Մոսկվայի ֆաբրիկանտները (Բարանով, Գուչկով, Պրոխորով, Զետուերիկով և այլն) իրանց ֆաբրիկաներից ելած ապրանքների հատուկ դեպո ստեղծեցին Թիֆլիսում, որը սաստկացնում էր մեր ծայրագավառի առևտրական մրցումը): Ռուսաստանից ներմուծված ապրանքները էժան էին, քանի որ ռուս ներմուծողները պրեմիա էլ էին ստանում գանձարանից: Էժանության հետ կար և զարդերի ու գույների դրավչությունը: Այս բոլորը եկավ սպանելու Անդրկովկասի տեղական տանուտերծը: Ի. Շոպենը 30-ական թվականներին միմիայն Երևանի նահանգում հաշվել է 4297 ջուլհակ, որոնցից 3970 հայ, իսկ 327 թուրք**), այնինչ 1865 թ. այդ արհեստը գտնվում էր անկյալ վիճակում***):*

*Պետք է նկատել, որ Անդրկովկասում առևտուրն և արհեստը կազմակերպված էին համքարական միությունների մեջ, ինչպես այդ տեղի ուներ միջնադարյան Եվրոպայում: 1865 թ. Երևան քաղաքում գոյություն ուներ 26 համքարություն, Ալեքսանդրապոլում՝ 24, իսկ Թիֆլիսում՝ 80: Ռուսական իշխանությունը սկզբում արգելքներ չէր հարուցանում նրանց դեմ: Բայց դրությունը փոխվեց, երբ համքարությունները ոտքի կանգնեցին առևտրական կապիտալի հարվածների դեմ: Տեսնելով օր ավուր դժվարացող կյանքի պայմանները, համքարությունները աշխատում էին ավելի սեղմվել իրանց կազմակերպությունների մեջ և արհեստն ու առևտուրը դնել խիստ կանոնների տակ: Նրանց այդ ձգտումների դեմ արտահայտվում էին ազատ առևտրի կողմնակիցները և կառավարությունից պահանջում միջոցներ ձեռք առնել համքարությունների դեմ: Այս հողի վրա անպակաս էին խլրտումները, իսկ 1865 թ. Թիֆլիսում գործը հասավ հրապարակային պայքարի: Համքարությունները փակելով իրանց խանութներն ու արհեստանոցները, ամբոխով հարձակվեցին քաղաքագլխի տան վրա և ջարդեցին ու ոչնչացրին նրա կայքը, ապա հետևելով քաղաքի մի ծայրը, բանակ դրին: Կառավարությունը զորք կանչեց և միմիայն զինական ուժի ներկայությունը և արյունահեղ ընդհարման երկյուղը ստիպեց համքարություններին քաղաք դառնալ և աշխատանքի կանգնել: Այս եղելությունը բավական էր, որ բյուրոկրատական մեքենան սկսեր գործել: Համքարությունները այժմ վտանգավոր դատվեցան և կառավարության կողմից: «Թիֆլիսի 1865 թ. փողոցային անկարգությունները, – գրում է բարոն Նիկոլայը, – ցույց տվին, որ այդ կերպ՝ առանց կառավարության կապի՝ միացած կորպորացիաները կարող են վնասակար լինել նաև հասարակական հանգստության համար»****):*

Եվ կառավարությունը հաստատեց այդ կապը: Նա լուծեց առևտրական համքարությունը, իսկ արհեստավորականների համար հորինեց արհեստավո-

---

*) Акты, т. X, № 184, 193, 194, 200 и 207.

**) И. Шопен. «Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской Империи», С. П. Б., 1852, стр. 843–850.

***) Сборник статистических сведений о Кавказе, Тифлис, 1869.

****) Отчет по Главному Управлению Наместника Кавк., Тифлис, 1873, стр. 118–119.

րական կանոնադրությունն: Թիֆլիսի 80 համքարությունից մնացին 17, որոնք ենթարկվեցին կառավարության խնամակալությանն ու հսկողությանը:

Անդրկովկասի մնացած քաղաքներից մի երկուսում առևտրական կապիտալի առաջացրած հեղաշրջումը ստեղծեց կրոնական չարժում: Շամախում հայ արհեստավորները բողոքականություն էին ընդունում, առարկելով թե հայ-լուսավորչականները հետևում են չոայլ կյանքի: Ակնքասնդրապոլում դեպի բողոքականությունը հակում էին ցույց տալիս քեարգեահները (վարպետացու), այնինչ վարպետները մնում էին ամուր փարած հայ եկեղեցուն: Տնտեսական հակամարտությունը այսպիսով ընդունում էր կրոնական չարժման բնույթ:

Այս պայմաններում հայ ժուռնալիստը հետևյալն է գրում. «Մենք այստեղ (Թիֆլիսում) շատ անգամ լսում ենք մեր արվեստավորներից, համքարներից (գուցե և Ռուսաստանի հայերից ևս միևնույնը լինի լավում), թե նոքա չեն կամենում երկար ժամանակ պահել յուրյանց որդիքը մեր այժմյան ուսումնարաններում այն պատճառով, որ այն ուսումով նոցա որդիքը հացի տեր չեն կարողանում դառնալ: Օրինավոր գանգատ: Ամենայն մարդ կարող է վկայել, որ այժմյան ուսումնարանների հաղորդածովը խեղճ աշակերտը ո՛չ մի գործ չէ կարողանում կատարել աշխարհի մեջ, օրինավոր կերպով ապրուստ ճարելու համար: Նրա ուսումը ոչինչ հարաբերություն չունի կենաց հանգամանքների հետ, ուսում է առել նա, սակայն այն մտքով, որ ասե, թե ուսում եմ առել: Հարցրեք այդ ուսումով պարոններին, կարո՞ղ են յուրյանց կյանքը ապահովել նյութական կերպով: Մենք կպատասխանենք նոցա կողմանե, բոլորովին ո՛չ: Ուսումը այլ է դեռևս մեզ համար, և այլ է աշխարհի մեջ ապրելը. ուսումնարանում երեխան ավարտում է յուր ուսման ընթացքը և կենաց ասպարեզ մտնելով, նոր է սկսում սովորել կենաց հանգամանքները և պայմանները»): Այստեղ հիշված ուսումնարանը հայ հոգևորականության ստեղծած կրթական հաստատությունն է: Նա կյանքի հետ չի ընթանում: Այսպես է հեղինակի միտքը: Իսկ կյանքը բարդացել է, ապրուստը դժվարացել: Ի՞նչ անել:*

*Եվրոպականացո՛ւմ, լսվում էր Մոսկվայից: Այդպիսի լոզունգ տվողը պրոֆ. Ստեփաննոս Նազարյանն էր (1812–1879), հայ վերածնության ամենաերախտավոր գործիչը: Եվրոպականացում կենցաղի և գրության բոլոր կողմերով, մկրտություն եվրոպական իմացական ավազանում, կամ անդարձ կորուստ. այսպես էր ճևակերպել ժամանակի պահանջը այդ ռահվիրան: Իր գրական-լուսավորական գործունեության սկզբում նա այն կարծիքին էր, որ «ազգի օգուտը հառաջ տանելու համար ո՛չ ով ծառա չէ, ո՛չ ով պարոն չէ, այլ ամենքյան պարտական են մշակ լինել, արդար և ջերմեռանդ մշակ՝ մեծատունը՝ յուր առատ արծաթովը, և գիտնավորը՝ յուր աշխատասեր գրչովը»**): Եվ սա վատ գինակցություն չէր մի ազգի վերածնության համար՝ խոշոր բուրժուազիա և ինտելիգենցիա: Սակայն Նազարյանը շատ չուտով համոզվեց, որ հայ խոշոր բուրժուազիան կենտրոնախույս ուժ է և չի մտահոգվում ազգի ճակատագրի մասին: Նա այն ժամանակ բուրժուազիայի փոխարեն դրավ հայ եկեղեցական դասը (1858 թ.) և սկսեց հոգևորականությունը և ինտելիգենցիան կոչել դեպի*

*) «Կռունկ Հայոց Աշխարհի», 1862, նոյեմբեր, էջ 852–853:

**) Ս. Նազարեանց, «Վարդապետարան Կրոնի», Մոսկուա, 1853, էջ 10:

ազգաշինություն: Բայց հոգևորականությունից նա տեսավ հալածանք և բուժ ըմբռնողություն իր պրոպագանդի նկատմամբ, մանավանդ երբ բացահայտորեն սկսեց պաշտպանել, թե կրոնը չէ հայությունը բնորոշող հատկանիշը: 1863 թ. Նազարյանը ինտելիգենցիային նոր դաշնակից է տալիս: «Մի ազգի գլխավոր ուժը և զորությունը հասարակի մեջ է», – գրում է նա: Եվ «հայկազյան ժողովրդի լուսավորությունը պիտո է լինի յուր հատուկ ձեռքի վաստակած վաստակը»): Ինչպե՞ս: Հայերը պետք է ընկերակցություններ կազմակերպեն՝ բարեգործական և կուլտուրական-լուսավորական: Ինքնօգնությունը պիտի լինի նրանց գլխավոր մտահոգությունը: Ինքնօգնությամբ դեպի եվրոպականացում: Այստեղ քաղաքականություն չկա, այլ պարզ լուսավորական աշխատանք: Պետությունը պետք է գոհ լինի, որ մի ազգ իր իսկ միջոցներով կամենում է զարգանալ և բարգավաճել: «Ռուսաստանը, – գրում է Ս. Նազարյանը, – կարող է ամենևին աներկբա լինել Հայոց ազգի դեպի նա անդրժելի հավատարմության մասին, և դորա ապացույցքը միշտ և հանապազ տեսել է նա: Տաճիկները, որպես մահմեդականք, յուրյանց հարաբերության մեջ դեպի Ռուսաստան թե չատ և թե փոքր միշտ կասկածելի են. վրացիք, թեպետև կարող չէին պահպանել յուրյանց ազատ դրությունը պարսիկների երեսից, այնուամենայիվ տրտնջում են և անգոհ են Ռուսաստանից, որ սա բավականացել չէ մի պաշտպանողական իշխանությամբ, այլ ստորադրել է նրանց յուր ստույգ հրամանակալության տակ: Բայց հայերը ճշմարտապես և իրավացի չնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նրանց մի անտանելի, անարդական տիրկությունից, և բացել է նոցա առաջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»**): Հինգ տարի անց նա դարձյալ դառնում է այդ խնդրին. «Հայերս քաղաքական մտքով ռուս ենք, այսինքն Ռուսաց կայսեր հպատակք և անդամք այդ տերութենական մարմնի, և ունեմք նույն օգուտքը և վնասքը, ինչ որ ունի թագավորությունը ներքուստ և արտաքուստ»***):*

Ահա այս հիմքերի վրա պիտի վերածնվեր հայությունը. քաղաքական լոյալություն, որովհետև առանց Ռուսաստանի հայերին սպասում է պարսկական ղժոխքը, և ինքնօգնությամբ առաջ մղած կուլտուրական-լուսավորական չինարար աշխատանք: Կարող ենք վստահորեն պնդել, որ վերջին 50 տարվա ընթացքում հայերի հասարակական մտածողությունը դուրս չի եկել այս ծրագրից: Վերջապես դա կպարզվի մեր հոդվածի և հետագա գլուխներից: Ս. Նազարյանը ականատես եղավ իր ծրագրի ընդունելության: 1864 թ. հիմնվեց Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունը, որի հիմնադիր բժ. Դավիթ Ռոստոմյանը Նազարյանի ջերմ կողմնակիցներից էր: (Հիշյալ ընկերությունը՝ իբրև կուլտուրական-լուսավորական հաստատություն՝ խոշոր երախտիքներ ունի հայերի վրա):

Ս. Նազարյանը իր կուլտուրական վերածնությունը երևակայում էր իբրև ինտելիգենցիայի և «հայ հասարակի», այսինքն մանր առևտրական և արհեստավոր դասերի, մանր-բուրժուազիայի դաշնակցություն: Հայության հավաքումը հենց ընթացավ այդ ուղիով: Սակայն Ռուսաստանի քաղաքական

---

*) «Հիւսիսափայլ», 1863, դեկտեմբեր, էջ 3:

**) «Հիւսիսափայլ», 1859, յունուար, էջ 11–12:

***) Անդ, 1864, մարտ, էջ 227:

ռեժիմը ստիպեց, որ Նոր հայությունը հովանավորություն փնտրե եկեղեցական կազմակերպության մեջ և իր ծրագրի իրագործումը առաջ մղե եկեղեցուն շնորհված ինքնավարության նորմաների շրջանակում: Չէ՞ որ հայը և հավատացյալ էր: Եթե նրան արգելվում է կազմակերպվել կուլտուրական աշխատանքի շուրջ իբրև հայ, իբրև ուրույն ազգության անդամ, ապա դա չի արգելվում, իբրև հայ-լուսավորչականի, իբրև քրիստոնյայի: Եվ արժե՞ր միթե արտաքին ձևի համար անգիտանալ միջուկը: Թող մնա հոգևոր դասի գերիշխանությունը, միայն թե դպրոցի և կուլտուրական հաստատության բովանդակությունը ներդաշնակե ժամանակի պահանջների հետ: Հայ հոգևորականությունը իր պաշտոնը ստանում է ժողովրդական քվեով և նա պիտի ընդուներ, որ եկեղեցին, բացի կրոնական հաստատությունից, դառնա և ժողովրդի կուլտուրական-լուսավորական գործի ղեկավարը: Այդպես էլ եղավ: Նոր հայությունը դարձավ զանազան խավերից ելած (разночинная) ինտելիգենցիայի, մանր-բուրժուազիայի և հոգևորականության մի դաշնակցություն կուլտուրական բարգավաճման հողի վրա: Այս դաշնակցության նյութական ֆոնդը մնաց հավատացյալի հոժարակամ նվերը իր եկեղեցուն և բարենպատակ հաստատության, ապա եկեղեցու կալվածքներից ստացված հասույթը: Մի այսպիսի կազմակերպությամբ ռուսահայը ստեղծեց դպրոցների և այլ հաստատությունների ցանց և նույն այդ կազմակերպությանը ապավինած նա դիմադրավեց հետագայի կառավարական հալածանքներին:

VIII.

Հիմա անցնենք հայ ժողովրդի հանուն կուլտուրայի և հանուն ազգային ինքնուրույն նկարագրի կրած մարտիրոսագրության:

1868 թ. Գեորգ Դ. կաթողիկոսը (1866–1882) հրատարակեց դպրոցական կանոնադրություն, որը ճանաչում էր ժողովրդի գերիշխող իրավունքը դպրոցական գործերի մեջ: Այդ կանոնադրության մեջ ասված է, որ ծխական դպրոցները կառավարվում են ժողովրդից ընտրված և թեմական իշխանության կողմից հաստատված հոգաբարձուների ձեռքով: Իսկ դպրոցների նյութականի մասին որոշվում էր. 1) ուսումնատուրք աշակերտների ծնողներից, 2) հոժարակամ նվիրատվություն և 3) տոկոսներ եկեղեցական դրամագլուխներից: Այս կանոնները թեթև փոփոխություններով 1868 թ. հետո հիմնաքար մնացին հայ եկեղեցական-ծխական դպրոցների: Եվ քանի որ դպրոցական գործը հանձնված էր ժողովրդին, ապա հասարակական եռանդը սկսեց ավելի շատ սպառվել նրա վրա:

Հարկավ, հայ երեխաները միմիայն հայ եկեղեցական-ծխական դպրոցները չէին հաճախում, այլև պետական: Մի քանի թվական տեղեկություններ ցույց կտան, թե Կովկասի ուսումնարանական շրջանում ինչ քանակի հայ էր սովորում այս կամ այն կարգի կրթական հաստատություններում: Հայերը սովորում էին*):

*) «Մշակ», 1915, № 181. մեր հոդվածը՝ «Հայութեան հաւաքական զօրութիւնը»:

	1886 թ.	1890 թ.	1895 թ.	1900 թ.
Պետ. միջնակարգ դպր.	2166	2298	2869	5250
Հայ եկ. միջն. դպր.	1176	1068	1589	2024
Պետ. ստորին դպր.	5630	8651	9516	25858
Հայ. եկ.-ծխ. դպր.	4700	10733	19235	–

Այս թվերը իրանք քիչ բան չեն ասում, բայց նրանց կատարելապես ըմբռնելու համար պետք է դիմել նորից պատմության: Հայ դպրոցական գործը դեռ իր խանձարուրքի մեջ էր, երբ սկսվեցին բյուրոկրատական կասկածները և խնամակալական ձգտումները: 1872 թ. բարոն Նիկոլայը գրում էր. «Պետք է հիշել հայ դպրոցների բավական նկատելի զարգացումը, որոնք իբրև եկեղեցական-ծխական խուսափում են կառավարական հսկողությունից. այդ դպրոցները ընդհանուր առմամբ քիչ են նպաստում ուղիղ կրթության տարածման: Ուսուցումը նրանց մեջ հանձնվում է միանգամայն անպատրաստ անձանց կամ գտնվում է ծայրաստիճան տգետ հոգևորականության ձեռքին, ուստի և այն շոշափելի գումարները, որոնք գոհաբերվում են այդ դպրոցների համար եկեղեցական եկամուտներից, ինչպես և մասնավոր անհատներից ու հասարակություններից, կազմում են ապարդյուն ծախք՝ նվիրված թյուր գիտակցված ցեղային առանձնահատկության բավարարման»)։*

Մի՞թե այստեղ ժպիտ չի առաջացնում բյուրոկրատիայի հոգսը ժողովրդական անարդյունավետ գործադրած գումարների մասին: Չէ՞ որ բյուրոկրատիան ամենից շատ և ամենից անհաշիվ վատնողն է ժողովրդական միջոցների, բայց նա դառնում է հաշվարար և ժողովրդասեր, երբ խոսքը վերաբերում է «ցեղական առանձնահատկության» վրա գործադրած գումարներին:

Բյուրոկրատիան չկամեցավ հենց 70-ական թվականների սկզբին փակել հայոց դպրոցները, բայց նա հրատարակեց իր առաջին սահմանափակիչ կարգադրությունը 1874 թ. հուլիսի 19. «ա) որ բոլոր դպրոցներում ավանդվի ռուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ ավանդում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, ավանդվեն նաև ռուսաց պատմություն և աշխարհագրություն ռուսերեն լեզվով, բ) որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ռուսահպատակներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական հատկություններ»:

Այս կանոնների սահմաններում կառավարության ուսումնարանական իշխանությունները իրավունք ունեին կոնտրոլի ենթարկել նաև հայոց եկեղեցական-ծխական դպրոցները: Կոնտրոլից ազատ էին այն դպրոցները, որոնք նպատակ ունեին բացառապես հոգևորականներ պատրաստելու:

Այդ կարգադրությամբ բյուրոկրատիան իրավունք ստացավ տեղի անտեղի ձեռնամուխ լինել հայ եկեղեցական-ծխական դպրոցների գործերին: Եվ սկսվեց նրա խնամակալական և արգելառիթ գործունեությունը: Տեղի ունեցան գրագրություններ, բացատրություններ, պահանջներ և տրտունջներ, որոնք վերջ ի վերջո իրար դեմ հանեցին մի կողմից հայ հասարակությունը իր հոգևորականության առաջնորդությամբ, իսկ մյուս կողմից Կովկասի ուսումնարանա-

---

*) Отчеты по Главному управлению Наместника, стр. 280.

կան շրջանի հոգաբարձուին, որի եռևը կանգնած էր ներքին գործերի մինիստրությունը:

Գործը հասավ այնտեղ, որ բյուրոկրատիան 1884 թ. փետրվարի 16-ին հրատարակեց նոր կանոններ հայ դպրոցների գոյության և ուսումնական մասի վերաբերյալ: Այդ կանոնների հրատարակումը տեղի ունեցավ առանց պահպանելու մինչ այդ ընդունված ձևերը, այն է՝ կանխորեն չհմացվեց հայ հոգևոր իշխանության կարծիքը: Նոր կանոններն էլ գալիս էին լայնարձակ իշխանություն տալու Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին, ըստ որում ասված էր, թե «Ուսումնարանական Շրջանի Հոգաբարձուին թողնվում է, որ այն դեպքում, երբ նա գտնում է ուսուցիչներից կամ վարժուհիներից որևէ մեկին անհամապատասխան իր կոչման, դիմել հոգևոր վարչության՝ անմիջապես հեռացնելու այդ անձանց իրանց պաշտոնից և նրանց փոխարինելու ուրիշներով»:

Հետո իհարկե հոգաբարձուին իրավունք էր վերապահվում աջակցություն խնդրել Կովկասի կառավարչապետից և առհասարակ հայ հոգևորականության ներհակության դեպքում ստիպել կատարելու իր կամքը: Առհասարակ 1884 թ. կանոնները դժվարացնում էին հայ դպրոցների գոյության պայմանները, և էջմիածնի լուսավորչական Սինոդը հրաժարվեց նրանց ընդունել և կիրառել: Սինոդը իր այդ քայլը պատճառաբանում էր նրանով, որ հայոց դպրոցների տերն ու տնօրենը կաթողիկոսն է, իսկ կաթողիկոսական գահը այդ ժամանակ Գևորգ Դ. մահվան պատճառով թափուր էր, ուրեմն և ինքը իրավասու չէ օրենքը ընդունելու: Նա խնդրում էր հետաձգել օրենքի գործադրությունը մինչև նոր կաթողիկոսի ընտրությունն ու հաստատությունը: Այդ իմաստով գրավոր դիմումներ անելուց բացի նա հատուկ պատգամավոր ուղարկեց Պետրոգրադ, սակայն չկարողացավ համոզել ներքին գործերի մինիստրը կոմս Տոլստոյին և Կովկասի կառավարչապետ իշխ. Դոնդուկով-Կորսակովին: Եվ հայոց ծխական դպրոցները, որոնց քանակը 1883 թ. 200-ից անցել էր և որոնց մեջ սովորում էին 12 հազարից ավելի երկսեռ մանուկներ, փակվեցին ոստիկանական միջոցներով:

1886 թ. այդ դպրոցների վերաբացման իրավունք ստացվեց: Դա մի սիրալիրություն էր, որ կառավարությունը արել էր նորընտիր Մ'ակար կաթողիկոսին (1885–1891), որը նրա թեկնածուն էր համարվում: Հայոց դպրոցները նորից սկսեցին ընթանալ զարգացման ուղիով և բուժվել կրած հարվածից (1883 թ. նրանց մեջ սովորում էր 12 հազարից ավելի աշակերտ, իսկ 1886 թ՝ 4700): Բայց ասված է՝ սպասողին գերեզմանը կարող է ուղղել: 1889 թ. նորից սկսվեցին ճնշումները, սահմանափակումները և բացատրություններ: Նախ պահանջվեց, որ հայ դպրոցի ուսուցիչները ցենզ ունենան պետական միջնակարգ դպրոցներից: Դա ընդունվեց հայ հոգևորականության կողմից, թեև դրանով հարվածվում էր նրա պահած միջնակարգ դպրոցների (սեմինարիաներ և Գևորգյան ճեմարան) պրեստիժը: Ապա պահանջվեց, որ եկեղեցական-ծխական դպրոցները պահպանվեն բացառապես եկեղեցական միջոցներով, թեև հայտնի էր, որ հայ եկեղեցին դարերով իր գոյությունը պահպանել է հոժարակամ նվերներով և որ եկեղեցուն տվողը տալիս է և նրա բացած դպրոցին: Սա մի միջոց էր կառավարության կողմից պարզելու, թե ինչ դրամագլուխների տեր է հայ եկեղեցին և ապա մի կարգադրություն էր, որ պիտի դեպի փակումը առաջնորդեր հայ դպրոցները:

1895 թ. դեկտեմբերին Կովկասի կառավարչապետը կարգադրեց՝ ուսումնարանական շրջանի հոգաբարձուին հանձնել հայոց ծխական դպրոցները: Ինքը հոգաբարձուն իր տարեկան հաշվետվության մեջ այսպես է նկարագրում այդ «կուլտուրական» արշավը. «Ժողովրդական դպրոցների տեսուչը տեղական վարչության ներկայացուցիչների կամ ոստիկանության գործակալների ընկերակցությամբ այցելում էր ուսումնարանը, առաջադրում ուսումնարանի ղեկավարին կամ հոգաբարձության պ. Կառավարչապետի վերոհիշյալ կարգադրությունը և պահանջում ուսումնարանը անմիջապես հանձնել տեղական կրթական տեսչության, կազմելով ընդհանուր ստորագրությամբ արձանագրություն այդ հանձնման մասին: Ցավելով պիտի ասել, որ ոչ մի ուսումնարանի հանձնում տեղի չունեցավ և հունվարից սկսած ժողովրդական դպրոցների տեսուչներից հասնում էին տեղեկություններ արձանագրություններով հանդերձ այն իմաստով, որ ուսումնարանի ղեկավարները մերժել են ենթարկվել նրանց առաջադրած պահանջներին, առարկելով, թե կարգադրություն չունեն իրանց բարձր հոգևոր իշխանությունից»):*

Ինչպիսի՞ կուլտուրական ուժ էր ոչնչացնում բյուրոկրատիան: 1895 թ. հայոց ծխական դպրոցների թիվը հասնում էր 240, որից երկդասյան տղայոց՝ 26, օրիորդաց՝ 23, խառն՝ 10, միդասյան տղայոց՝ 130, օրիորդաց՝ 28, խառն՝ 181: Այդ դպրոցների բյուջեն հավասար էր 263015 ռ.: Ուսուցանողների կազմն էր՝ կրոնուսույց 69, ուսուցիչ 330, վարժուհի 128, ընդամենը 527 հ.: Աշակերտության քանակը հավասար էր 19235 հոգու, որից տղա՝ 12616, կամ 65,6%, աղջիկ՝ 6619, կամ 34,4%:

Այդ դպրոցների չինովնյությունները և ուսումնական պիտույքները գրավելուց հետո կառավարությունը 1898 թ. մարտի 26-ի օրենքով ձեռնամուխ եղավ գրավելու նրանց նյութական միջոցները: Բայց նա այստեղ խոչոր դժամարներ չգանձեց, որովհետև հայոց դպրոցները պահպանվում էին ժողովրդի կողմից տարեցտարի տրվող հոժարակամ նվերներով: Սա այնպիսի նյութական ապահովություն էր, որ խարսխված էր ժողովրդի ջերմ համակրության վրա, իսկ կառավարությունը իր հալածական քաղաքականությամբ անկարող էր գրավել այդ համակրությունը և այն՝ նյութական միջոցներ ղարձնել:

Հայ ժողովուրդը 1896 թ. հետո 10 տարի զուրկ մնաց մայրենի դպրոցից: Նրան իրավունք տրվեց վերաբանալ փակած դպրոցները և հետ ստանալ գրաված միջոցները 1905 թ. օգոստոսի 1-ի ուկազով, երբ կառավարությունը պատրաստվում էր կապիտուլյացիայի համառուսական ժողովրդական շարժման առաջ: Սակայն մինչև այդ թվականը շատ տառապանք տեսավ հայ ժողովուրդը, ուստի և անհրաժեշտ է կանգ առնել նաև այդ տառապանքների վրա:

IX.

Դպրոցը հայերի միակ կուլտուրական հաստատությունը չէր: 1864 թ. գոյություն ուներ Բաքվում Հայոց Մարդասիրական ընկերությունը: 1879 թ. հիմնվել էր Հայոց Հրատարակչական ընկերությունը, իսկ 1881 թ. Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը: Թե Մարդասիրական և թե Բարեգործական ընկերությունները առավելապես կուլտուրական-լուսավորական ընկերություններ էին: Նրանք բանում և պահպանում էին դպրոցներ ու գրա-

*) Отчеты попечителя Кавк. Учебн. Окр. за 1896 г., стр. 170–171.

դարաններ, թոշակ էին տալիս հայ ուսանողներին, գրքեր էին հրատարակում և վերջապես նյութական օգնություն էին հասցնում չունևոր գրողներին ու գրականագետներին: Բացի այդ նրանք զբաղվում էին բարեգործությամբ, ապրուստի միջոցներ և գործիքներ մատակարարում չունևորներին, ճանապարհածախս վճարում, բնակարան վարձում և այլն: Բաքվի Մարդասիրական ընկերությունը թեև ճյուղեր բանալու իրավունք ուներ, բայց չէր օգտվել այդ իրավունքից, իսկ Կովկասի Բարեգործական ընկերությունը, որի կենտրոնը գտնվում է Թիֆլիսում, բացել էր ճյուղեր չատ ու քիչ հայաշատ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Շուշի, Երևան, Ախալցխա, Գորի, Հին Նախիջևան, Բաթում, Նոր-Բայազետ, Կարս, Ալեքսանդրապոլ, Նուխի, Գանձակ և այլն: 1899 թ. նրա ճյուղերի թիվը հասնում էր 20-ի:

Եվ ահա հենց 1899 թվականին կառավարությունը իր թաթն է դնում այդ ընկերությունների վրա: Նա նախ և առաջ ոչնչացնում է ճյուղեր բանալու իրավունքը, ապա արգելում կուլտուրական-լուսավորական գործունեությունը: Մարդասիրական ընկերությունը, համակերպելով կառավարության պահանջներին, դառնում է մի սոսկ բարեգործական հաստատություն: Նույն ուղին է բռնում և Կովկասի Բարեգործական ընկերությունը: Նրա ճյուղերը բոլորը համարյա թե վերջնականապես փակվում են, որովհետև առանց կենտրոնի աջակցության չէին կարող ինքնուրույն կյանք ունենալ: Մնում է Թիֆլիսի կենտրոնականը, որը դառնում է հայ բարեգործական հաստատություն այդ քաղաքի անունով՝ առանց կուլտուրական-լուսավորական գործունեության իրավունքի: Ի լրումն ամենայնի այդ ընկերությունների գործավարությունն ու գրագրությունը պիտի կատարվեր ռուսերեն, իսկ փակման դեպքում նրանց գույքը պիտի անցներ համապատասխան քաղաքային ինքնավարություններին:

Ծանր էր այդ հարվածը, բայց հայերը լռությամբ ընդունեցին:

Փակման հերթը 1900 թ. հունիսին հասավ Հայոց Հրատարակչական ընկերությանը: Նա իր գոյության ընթացքում հրատարակել էր 187 անուն գիրք, որոնց մեծամասնությունը թարգմանական էին: Իհարկե այդ հրատարակությունները բոլորն էլ անցել էին նախնական գրաքննության և իրանց մեջ ոչ մի վտանգավոր բան չէին պարունակում: Բայց նրանք հրատարակված էին հայերեն, իսկ պայքարը մղվում էր հենց այդ լեզվի դեմ, ուրեմն որքան քիչ գիրք լույս տեսնի տպագրական մամուլի տակից, այնքան լավ: Հրատարակչականը փակվեց առանց իսկ առաջարկ ստանալու փոփոխություններ մտցնելու իր կանոնադրության մեջ:

Մյուս հալածանքները, որոնք վիրավորում էին հայերի կրոնական զգացումները, հետևյալն էին:

1. Ամենայն հայոց կաթողիկոսի առաջադրությունները թեմական իշխանավորներ նշանակելու գործում Կովկասի կառավարչապետի կողմից չէին հաստատվում կայսեր և չէին հարգվում, որով խախտվում էր եկեղեցու նվիրապետությունը և անգիտացվում 1836 թ. մարտի 11-ի օրենքը:

2. Հայոց բարձր հոգևորականության անդամները առանց քննության և դատի ենթարկվում էին վարչական աքսորի:

3. Էջմիածնի Սինոդի դատախազը, դուրս գալով իր իրավասության սահմաններից, միջամտում էր եկեղեցական գործերին:

4. Հայերից պահանջվում էր դատարաններում երդումն ընդունել դատավորների ձեռքով և այն էլ ռուսերեն:

5. Պետական ուսումնարաններում ստիպում էին հայ աշակերտներին կրոնն անցնել ռուսերեն:

6. Հայ եկեղեցու պաշտոնական օրգան «Արարատ» ամսագիրը, որ 1868 թ. հրատարկվում էր առանց դրաքննության, 1897 թ. պետք է ենթարկվեր նախնական դրաքննության:

Այս բոլորը հարկավ գալիս էին ոտնահարելու խղճի և կրոնի ազատության սկզբունքները և ծանր ու ճնշող տպավորություն էին գործում հայերի վրա: Բայց այն, ինչ այդ հալածանքներից հետո տեղի ունեցավ, հայերը չէին կարող երևակայել:

1903 թ. հունիսի 12-ին հրաման դուրս եկավ հարքունիս գրավել հայ եկեղեցու անշարժ կալվածները և դրամագլուխները: Դա արվում էր իբր հօգուտ հայ եկեղեցու: Կիսապաշտոնական հոդվածները, որ հրատարակվում էին պաշտոնական «Кавказ» թերթում, ճգնում էին ապացուցանել, որ հայ հոգևորականությունը չի կարողանում արդյունավետ կերպով կառավարել հայ եկեղեցու կալվածները, որ նա վատնող է և որ վերջապես իբր թե այդ կալվածներից ստացված եկամուտները ծախսվում են այնպիսի նպատակների վրա, որոնք կապ չունեն կրոնի և եկեղեցու հետ: Սա ակնարկ էր, թե եկեղեցական եկամուտները գործադրվում են հակակառավարական պրոպագանդի վրա: Իհարկե, այս բոլորը ոչ մի կապ չուներ ճշմարտության հետ: Բյուրոկրատիայի համար անտանելի էր այն աննշան ինքնավարությունը, որ ուներ հայ եկեղեցին և որի ծոցում հայ ժողովուրդը ընտելանում էր մի քանի հասարակական գործեր կարգավորել: Նա կամենում էր վերացնել այդ ինքնավարությունը, բռնի միջոցներով ռուսացման քաղաքականություն վարել: Բայց դուրս եկավ, որ սխալ էին նրա հաշիվները:

1903 թ. հունիսի 12-ի օրենքը ոտքի հանեց ապոլիտիկ հայ ժողովրդական զանգվածը: Ձեռքից խլվում էր նրա դարերով պահպանած ազգային սեփականությունը, մի սեփականություն, որը ճանաչել և անխախտ պահպանել էին պարսից բռնավոր շահերը: Եվ նոր օրենքի գործադրումը հանդիպեց հայերի մասսայական դիմադրության: Դա հրապարակական դիմադրություն էր գենքով և արյունահեղությամբ: Կազմակերպվեց ազգային ինքնապաշտպանության գաղտնի կոմիտե, որ ղեկավարում էր ժողովրդական չարժումը: Թիֆլիսը, Բաքուն, Գանձակը, Կարսը և այլ քաղաքներ տեսան բազմամբոխ ցեմոնստրացիաներ և ընդհարումներ ոստիկանության ու զորքի հետ:

Կառավարությունը, չնայած ժողովրդական այդ բուռն բողոքին, գրավեց եկեղեցու կալվածներն ու դրամագլուխները, գրավեց և մոտ երկու տարի կառավարեց իր գործակալների միջոցով, բայց այդ շրջանում էլ նա ուներ հայերի պասսիվ դիմադրությունը: Հայ հոգևորականությունը հրաժարվեց կառավարությունից ստանալ գրաված կալվածների եկամուտները և իր ապրուստը հայթայթեց ժողովրդական հոժարակամ նվիրաբերություններով, իսկ հայ ժողովուրդը իր հերթին չկամեցավ կապալով շահագործելու վերցնել եկեղեցական հողերն ու այլ արդյունատեղիները (угодья) *և նրանք ընկած մնացին առանց մշակման:*

Ահա այսպես պատասխանեց հայ ազգը 1903 թ. հունիսի 12-ի օրենքին: Հիշենք, որ այս շրջանում սկսեցին կաղապարվել զանազան քաղաքական հոսանքներ, իսկ երկու քաղաքական կուսակցություններ, որոնք մինչև այդ զբաղված էին բացառապես թուրքահայ հարցով, անհրաժեշտ դատեցին գործունեություն սկսել և Ռուսաստանում ու նեցուկ լինել հայ ժողովրդի ինքնապաշտպանության: Այդ կուսակցություններն էին՝ Հնչակյան և Դաշնակցական:

Հայ ժողովրդի խմորվիլը քաղաքական պայքարով և նրա մեջ առաջացած կուսակցությունների գործելակերպը, որը «սպիտակ տերրորին» պատասխանում էր նույնպես տերրորով, հավասարակշռություն հանեց երկրի կառավարչապետ իշխ. Գոլիցինին և նրա արբանյակներին: Այդ տակտիկան ազմինիստրատորները հայերին համարյա զրկեցին պետական օրենքների հովանավորությունից, իսկ երբ հասավ ռուսական հիշատակելի 1905 թ. և ենթադրելի համարվեց, որ հայերը չպիտի ձեռնունայն նստեն, նրա վրա քայլեցրին թուրք ժողովրդի տականքները: Թուրքական գրոհը հայերի վրա, որ միանգամայն անսպասելի ծագեց Բաքվում 1905 թ. փետրվարի 6-ին, դժոխքի վերածելով երեք ամբողջ օր մի խոշոր առևտրա-արդյունաբերական քաղաք, ըստ սենատոր Կուզմինսկու զեկուցման հետևյալ ավերածությունը առաջացրեց. սպանվեց 269 մարդ, որոնցից 224 հայ, 41 թուրք և 4 ռուս. վիրավորվեց 220 մարդ, որոնցից 95 հայ, 87 թուրք և ուրիշ ազգերից 38 հոգի: Այս թվերը սեն. Կուզմինսկին անպայման ճիշտ չէ համարում և ենթադրում է, որ շատ սպանվածներ իրանցից թուրքերը ծածկել են: Ապա այդ օրերում այրվել են 4 մեծ տուն, կողոպտվել 176 բնակարան, խանութ և արհեստանոց, որոնցից 134-ը հայի, 34-ը թուրքի և 8 այլ ազգերի:

Բաքվի անակնկալ ընդհարումը բռնկեցրեց Անդրկովկասի մնացած վայրերի թուրքերին և հայերին: Մի տարի և կես շարունակվեց թուրք-հայկական արյունոտ պայքարը: Թիֆլիսը, Շուշին, Գանձակը, Երևանը և Հին Նախիջևանը իրենց գավառներով ասպարեզ դարձան կողոպուտի, սպանությունների, հրդեհների և ավերումների: Հազարավոր կյանքեր խամրեցին: Ամբողջ չուխաներ այրվեցին: Գյուղեր կործանվեցին: Թուրք և հայ ժողովուրդը այդ «պատերազմի» մեջ, պատերազմի, որ տարվում էր կառավարության աչքի առաջ, որը իբրև թե անզոր էր կանգնեցնելու այն, կորցրին միլիոնների ստացվածք և կարողություն: Աղաղակող փաստ է, որ երբ 1905 թ. օգոստոսին երկրորդ անգամ Բաքուն դարձավ թուրք-հայկական ընդհարման թատերաբեմ և երբ թուրքերը այրեցին նավթային հանքերը, կառավարությունը ստիպված էր դանձարանից 20 միլիոնի օժանդակություն տալ նավթարդյունաբերողներին, որ նրանք վերականգնեն իրենց ձեռնարկությունները, այն ինչ դա չէր լինի, եթե սկզբում պետական խելք և կամք լիներ: (Թուրք-հայկական ընդհարումները կարողություն առաջացրին երկրի հասարակ ժողովրդի մեջ և հայ հասարակությունն ստիպված էր 600 հազարից ավելի դրամ ժողովել և դրանով հաց մատակարարել գյուղացիներին): Ահա այս ղժնդակ կացությունն ստեղծեց կառավարական տասնյակ տարիների հալածանքը և այսպիսի «չինարար» կառավարչապետ եղավ Կովկասի համար իշխ. Գոլիցինը: Նա Կովկասը հասցրեց քայքայման դուռը և ինքն էլ տեռորիստի հարվածներից քայքայված հեռացավ այդ երկրից:

1905 թ. գարնանը Կովկասի փոխարքա նշանակվեց կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը: Այս մարդը այլ վարչական ուղի ընտրեց իր համար: Հայերը սրա օրով ընդհանրապես այլևս պետության և օրենքի խորթ որդիք չէին նկատվում, թեև դժվար էր այդ տեսակետին ընտելացնել Կովկասի պաշտոնեությունը, որը տասնյակ տարիներ շնչել էր և գործել հայատեցության չիկացած մթնոլորտում: Վորոնցով-Դաշկովի օրով, 1905 թ. օգոստոսի 1-ին, Բարձրագույն ուկազով վերադարձվեցին հայ եկեղեցական կալվածները: Հայ հոգևորականությունը նորից իրավունք ստացավ զբաղվել կրթական գործով, ուրեմն հայ ժողովուրդը տեր դարձավ եկեղեցական-ծխական դպրոցներին: Ապա հետզհետե հայոց կուլտուրական-լուսավորական հաստատությունները (Մարդասիրական և Կովկասի Բարեգործական ու Հրատարակչական ընկերությունները) կյանքի կանչեցին իրանց հին կանոնադրությունները, ճյուղեր բաց արին և բացի լոկ բարեգործությունից զբաղվեցին նաև կուլտուրական-լուսավորական գործունեությամբ: Ստեղծվեց հասարակական գոյության չատ ու քիչ նորմալ միջավայր: Ինքնապաշտպանությունը, որ կլանում էր ազգի բոլոր ուժերը սկսած 1903 թ., նախ կառավարության ռեպրեսիաների, ապա թուրքական հարձակումների դեմ, տեղի տվեց հասարակական գործի և ըմբռնման չերտավորման: Այդ ուղղությամբ ահագին դեր խաղաց և համառուսական չարժումը 1905 թվականին: Հայության մեջ սկսվեց հայացքների և կարծիքների պայքար: Նրանց լուսաբանմանը կլինի նվիրված հետևյալ գլուխը:

X.

XX դարի սկիզբը հայ հասարակական մտքի զարգացման մեջ նշանավոր պիտի համարել նրանով, որ այդ չրջանից հայ միջավայրում հրապարակ են գալիս անհատ սոցիալ-դեմոկրատներ և սկսում իրանց կրքոտ պրոպագանդը հայերի քաղաքական հետամնացության դեմ, հրավիրելով նրանց հարել համառուսական ընդդիմադիր չարժման և ընդհանուր ուժերով նվաճել «մարդու և քաղաքացու իրավունքները»: Այդ պրոպագանդը հանդիպեց նույնպես կրքոտ դիմադրության: Դիմադրողները, որ գլխավորապես դաշնակցականներ էին, իրենց ղեկավարի բերանով պատասխանում էին. «Դուք խոսում եք «հավելյալ արժեքի» մասին, իսկ մենք «հավելյալ արյան»:

Այս պատկերավոր ոճի միտքը այն էր, որ չնայած ռուս պետության հալածանքներին, հայերը Ռուսաստանում ունեն կյանքի և գույքի ապահովություն, այն ինչ Թուրքիայում վտանգված է նրանց ֆիզիկական գոյությունը: Մյուս կողմից թուրքահայերի կյանքի բարելավումը կախված է եվրոպական պետությունների կոնցերտից և եթե հայերը Ռուսաստանում դեմ գնալու լինեն պետության, ապա չպիտի վայելեն սրա աջակցությունը թուրքահայ դատի համար, այլև պիտի առաջացնեն խիստ թշնամական վերաբերմունք:

Մտածողության այս կապակցությունը չուտով մերժվեց Հնչակյան կուսակցությունից, որը մեկն էր թուրքահայ դատով զբաղվող կազմակերպություններից: Այս կազմակերպության արտասահմանյան մամուլը («Հնչակ» և «Վերածնունդ») սկսեց արծարծել այն միտքը, թե թուրքահայերի ազատագրումը խոչոր կապ ունի ռուս ժողովրդի ազատագրության հետ, որ Եվրոպան սարսափի մեջ է ռուսական աբսոլյուտիզմից, որ վերջինիս չքացումը լայն ուղի

կբանա բոլոր երկրների քաղաքական և սոցիալական զարգացման համար: Սակայն հայ ժողովրդական մասսաները անտարբեր էին սոց.-դեմոկրատների և հնչակյանների պրոպագանդին: Նրանց հանդես բերած գաղափարները դժվարությամբ էին ըմբռնվում և պահանջում էին ավելի բարձր կուլտուրական զարգացում, քան ուներ հայ ժողովուրդը:

1903 թ. հունիսի 12-ի օրենքը միանգամից տասնյակ տարիների խաղաղ պրոպագանդի գործ կատարեց: Ժողովրդական մասսաները ծառացած էին այլևս և այժմ հեշտությամբ էին ընդունում հակակառավարական լոզունգը: Դաշնակցական ղիվանագիտության սիրահար ինտելիգենցիան սկսեց տատանվել իր սկզբունքների մեջ և որպեսզի չզրկվի ժողովրդական համակրանքից, լույս աշխարհ հանեց իր՝ Ռուսաստանի գործունեության ծրագիրը: Դաշնակցականները այսպիսով միմիայն իրերի թելադրանքով հարեցին ընդհանուր շարժման: Նրանք այլևս բարիք չէին սպասում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունից: Դա մտքի մի խոշոր տեղաշարժություն էր, որ կատարվեց նրանց մեջ, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ հայ ժողովրդական շարժումը առանձնապես քաղաքներում չուտով ստացավ սոցիալական բնույթ և իր կազմով սկսեց հարվածել հայ բուրժուազիային և ճեղք բանալ ազգային միության (ավելի ճիշտ ասած՝ ազգային խոնարհության) մեջ, մի բան, որ ցանկալի չէր դաշնակցականների աչքում, քանի որ դասակարգային հակամարտությունը սպառնում էր փակել նրանց նյութական աղբյուրը:

1904 թ. հիմնվեց Հայ Սոց.-Դեմ. բանվորական կազմակերպությունը, որի հիմնադիրները հանդիսացան Դաշնակցությունից անջատված մտավորականներ և մինչև այդ հայության մեջ գործող անհատ սոցիալ-դեմոկրատներ:

Այժմ ինքնին հարց է ծագում, թե այդ քաղաքական հոսանքները որպիսի՞ ազգային իղեալ առաջադրեցին իրանց հետևողներին, կամ ին՞չ բովանդակություն դրին «Հայերը Ռուսաստանում» հասկացողության մեջ:

Հնչակյանների նկատմամբ պիտի ասենք, որ նրանք հենց սկզբից թույլ կազմակերպություն ունեին և նոր ուժ չստացան, առաջինը ընդգրկելով իբրև կազմակերպություն ռուսահայերին քաղաքական պայքարի կոչելու լոզունգը: Նրանք տատանվում էին սոցիալ-դեմոկրատական և ազգային-դեմոկրատական հոսանքի մեջ: 1905 թ. նրանց մի մասը հեռացավ կազմակերպությունից և միացավ սոցիալ-դեմոկրատներին: Մյուս աննշան մասը ընդունելով սոցիալ-դեմոկրատ հորջորջումը, բայց աղոտ հասկացողություններ ունենալով այդ վարդապետության մասին, մնաց իբրև պոչ արտասահմանում (գլխավորապես Թուրքիայում) գոյություն ունեցող հնչակյանների և առանձնապես նկատելի տեղ չբռնեց հայ կյանքի մեջ: Համենայն դեպս հնչակյանների խումբը անջատողական կամ մի ուրիշ որոշակի ազգային իղեալ չի առաջադրում: Նա ինքը գաղափարական որոշություն չի ներկայացնում:

Դաշնակցականները, անհրաժեշտ դատելով քաղաքական պայքարի դիմել Ռուսաստանում, հարեցին ռուս սոցիալիստ-հեղափոխականների ծրագրին: Նրանց ծրագրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ պահանջում են քաղաքական ֆեդերացիա Անդրկովկասի համար: Նկատի առեք՝ Անդրկովկասի, այլ ոչ հայերի: Սա նշանակում է վարել ծայրագավառի քաղաքականություն, այլ ոչ ազգային:

Հայ սոց.-դեմ. բան. կազմակերպության ծրագիրը նույնն էր, ինչ Ռուսաստանի Ս. Դ. բ. կուսակցությանը, բայց մի տարբերությամբ: Հայ սոց.-դեմոկրատները հրաժարվում էին ընդունել Ռ. Ս. Դ. բ. կուսակցության ծրագրի «ազգային ինքնորոշում» (самоопределение) պահանջը[*]*: Այդ պահանջը իր տրամաբանական զարգացման մեջ նշանակում է քաղաքական անջատում, որը հայ մարքսիստների համար անընդունելի է և անգամ համարվում է իբրև վնասակար դաղափար:*

Հարկավ, այս հոսանքներով չեն սպառվում հայ հասարակական մտքի երանգավորումները: Դուրսը մնում է ինտելիգենցիայի մի խոշոր բազմություն, որը անցյալում իր ուսերի վրա է տարել հայերի կուլտուրական-լուսավորական զարգացումը և այժմ էլ անձնվիրաբար գործում է այդ ասպարեզում: Այդ ինտելիգենցիայի հասարակական դավանանքը կարելի է որակել իբրև լիբերալ-նարոդնիկություն (либеральное народничество)*: Լիբերալիզմ և ժողովրդասիրություն՝ այս գծովն է գնում հիշյալ ինտելիգենցիան, որը կրթվել է Գր. Արծրունու (վախճ. 1892 թ.) սկզբունքներով:*

Այդ ինտելիգենցիան արտահայտիչն է հայերի չափավոր մտածողության: Նա ուս սահմ.-ռամկավարների քաղաքական և հասարակական դավանանքի թարգմանն է հայերի մեջ: Եվ նրա բերանը կարելի է համարել «Մշակ» թերթը:

1905 թ. հիշյալ ինտելիգենցիայի ջանքերով համառուսական հանրագրությունների շրջանում հայերն էլ հայտնեցին իրենց ցանկությունները մինիստրների խորհրդին: Այստեղ առաջ ենք բերում հայերի հանրագրությունը ամբողջովին, որ հայության խոշորագույն մասի քաղաքական և հասարակական դավանանքի թարգմանն է.

«1. Հայ ազգաբնակչության մասնակցությունը Կովկասի մյուս ժողովուրդների հետ համահավասար համառուսական ներկայացուցչության մեջ: Հայ ազգաբնակչության իրավունք է տրվում մասնակցելու այն քննությունների, որոնք նպատակ ունեն նպաստել պետական կարգերի կատարելագործմանը Ռուսաստանում, և դա այն ձևով ու հիմունքներով, որով այդ մասնակցությունը ապահովված կլինի կենտրոնական նահանգների բնակչության համար:

2. Կազմակերպումն Կովկասի ինքնավարության, որին հավասար իրավունքներով կմասնակցեն Կովկասում բնակվող բոլոր ժողովուրդները:

Անկախ սրանից անհրաժեշտ է առանց հետաձգման Կովկասում մուծել հետևյալ բարենորոգումները:

1. Համապատասխին զեմստվոյական հաստատություններ և փոփոխումն քաղաքային կանոնադրության լիակատար ինքնավարության հիմունքներով:

2. Մուծումն երդվյալների դատարանի, ընտրովի հաշտարար դատավորների և կիրառումն տեղական լեզուների հաշտարար դատաստանական հաստատություններում: Հայ գերակշռող բնակչություն ունեցող շրջաններում դատավորները պարտավոր են իմանալ հայ լեզուն:

3. Հայ գյուղացիների հողաբաժինների պարտադիր ետ-գնումն կառավարության աջակցությամբ այն ընդհանուր հիմունքներով, որ գործադրվել է ներքին նահանգներում:

---

[*] *«Կեանք», 1906, № 15:*

4. Նախընտրական իրավունք արքունի ազատ հողերի վրա վերաբնակվելու տեղական սակավահող և հողազուրկ գյուղացիների համար: Լիակատար վերացումն այն կարգի, որով տեղական գյուղացիների հողաբաժիններից զատվում են հողամասեր եկվոր բնակչության համար:

5. Հանուն ժողովրդական կրթության լայն իրագործման՝ դպրոցների և կրթական հաստատությունների բացման կատարյալ ազատություն հասարակական և մասնավոր ձեռներեցությամբ և հայերեն դասավանդումով: Բարձրագույն կրթական հաստատության բացումն Անդրկովկասում, առավելության տալով արևելյան բաժանմունք ունեցող համալսարանին:

6. Պարտադիր ուսուցումն տարրական դպրոցներում մայրենի լեզվով: Հայոց լեզուն և կրոնը արքունի միջնակարգ դպրոցներում հայերի համար դասվում են պարտադիր առարկաների չարքը:

7. Ազատություն ժողովների, հավաքումների, ընկերակցությունների և միությունների: Լեզվի ազատություն ժողովների մեջ: Տեղական մամուլի ազատությունը գրաքննությունից և նրա պատասխանատվությունը դատարանի առջև:

8. Իրավունք սոսկ հայտարարությամբ բանալու տարրական և միջնակարգ դպրոցներ, հրատարակչական, բարեգործական, լուսավորական և այլ հաստատություններ ու հիմնելու պարբերական հրատարակություններ:

9. Վերացումն բոլոր դավանական ու կրոնական սահմանափակումների:

10. Վերահաստատումն հայ եկեղեցու իրավունքների և արտոնությունների նրա կանոնների և հնագույն կարգերի համեմատ, ինչպես և վերաբացումն փակված եկեղեցական-ծխական ու թեմական դպրոցների:

11. Վերադարձնումն հայ եկեղեցու այն գույքերի, որոնք պատկանում են եկեղեցիներին, վանքերին և նախկին եկեղեցական-ծխական ու թեմական դպրոցներին՝ թե գոյություն ունեցող և թե փակված:

12. Հայերը զինվորական ծառայությունը կատարում են Կովկասի սահմաններում:

13. Ներումն այն բոլոր հայերին, որոնք քաղաքական և կրոնական համոզմունքների համար դատապարտված են կամ աքսորված վարչական կարգով:

14. Վերացումն Կովկասում գոյություն ունեցող զեմստվոյական պահակների:

15. Վերացումն Կովկասում տիրող ուժեղացրած պահպանության և ռազմական դրության»:

Այս վավերագիրը ցույց է տալիս, թե որքան չափավոր են հայերի ձգտումները: Մի իրավական պետության մեջ այդ պահանջների մեծագույն մասը ինքնին կարող է բավարարված լինել: Մյուս կողմից տեսնում ենք, որ հայերի զուտ ազգային պահանջները հոգևոր-կուլտուրական բնույթ ունեն: Միակ տերիտորյալ քաղաքական պահանջը կազմում է հանրագրության երկրորդ կետը՝ ինքնավարության կազմակերպումն Կովկասում, բայց դա էլ ծայրագավառի պահանջ է, ինչպես որ այդպիսին էր դաշնակցականների առաջադրած դեմոկրատական ֆեդերացիան:

Ավելացնենք, որ հայկական այս միջին չափավոր հոսանքից բացի կան նաև առանձին աշխարհիկ մտածողներ (Ս. Սպանդարյան և այլն), ինչպես նաև հայ հոգևորականությունը, որոնք հայ եկեղեցու ինքնավարական օրենքը

(1836 թ. մարտի 11-ի) պակասավոր համարելով հանդերձ, չեն գտնում ուղղելի կամ քննելի Պետական Դումայի, առհասարակ Ռուսաստանի օրենսդրական հաստատությունների կողմից: Այդ օրենքը, ասում են նրանք, չնորհված է ռուսաց կայսրից, ինչպես Ֆինլանդիային չնորհված է հատուկ ինքնավարություն, ուստի և նրա գոյությունը պայմանավորված է կայսրի և հայ եկեղեցու փոխադարձ համաձայնությամբ: Ուրիշ իշխանություններ իրավունք չունեն ձեռնամուխ լինելու այդ օրենքին: Նրա մեջ որևէ բան փոխելի է միայն հայ եկեղեցու համաձայնությամբ:

Ահա Ռուսաստանի հայերի զանազան հոսանքների քաղաքական և հասարարական դավանանքները: Քաղաքական ուրույն գոյության պահանջ չկա նրանց մեջ: Չկա և տերիտորիալ ազգային ավտոնոմիայի կամ ֆեդերացիայի պահանջ: Ինչպես Ս. Նազարյանն է ասել 50 տարի առաջ, «հայը քաղաքականապես ռուս է և ունի այն չահն ու վնասը, ինչ տերությունն ունի»: Կարծում ենք, որ մեր այս հոդվածից պարզ պիտի լինի, թե ինչու է հայը «քաղաքականապես ռուս»: Այն պատմական անցյալը, որ նա է ունեցել, ստիպել է նրան Ռուսաստանի սահմաններում փնտրել կյանքի և գույքի ապահովություն: Բայց այդ պատմական անցյալը այսօր թարմ իրականություն է արտասահմանյան հայերի համար: Ո՞ր խելագար ռուսահայը կարող է Պարսկաստանի և Թուրքիայի պետական սահմաններում փնտրել ազգային ուրույն ստորադաս քաղաքական գոյությունը: Ռուսահայը իր երկրի ապահովությունն և կարգ ու կանոնը, որքան էլ նրանք թերի լինեն, չի կարող փոխել Թուրքիայի «ազատության» հետ: Նա տնտեսապես և կուլտուրապես շատ է հեռացել Թուրքիայից և կապվել Ռուսաստանի հետ:

Մյուս կողմից հայությունը քաղաքական ուրույն ստորադաս գոյության գաղափար չի գտնդգտում Ռուսաստանում այն պատճառով, որ իր դարավոր և պատմական ծննդավայրում նա թույլ է քանակով: Երևանի նահանգը, որ նրա անցյալ քաղաքական անկախության շրջանում կազմել է պետության սիրտը, այժմ (1908 թ. հաշվով) ունի 512,183 հայ բնակիչ, կամ ամբողջ բնակչության 57,4%: Եթե Անդրկովկասում Երևանի, Գանձակի, Թիֆլիսի և Կարսի նահանգների որոշ մասերից (դուրս ձգելով ուրիշ ազգագրական մեծամասնություն ունեցող գավառները) հայկական տերիտորիա կազմելու ցանկություն ունենանք, ապա այդ տերիտորիայից դուրս պիտի մնան 300 հազարից ավելի հայեր կամ հայության 25%: Եվ հետո տերիտորյալ ինքնավարություն ունեցող հայությունը պիտի մնա կառչած անբերրի լեռների ու սարահարթերի, գուրկ ճանապարհներից և այնպիսի կենտրոններից, ինչպիսիք են Թիֆլիսն ու Բաքուն[*]:*

Ահա այս բոլոր պատճառներով տերիտորիալիզմը գրավչություն չունի հայերի մեջ և այսօր չի համապատասխանում նրանց գիտակցված չահերին: Կան հայ մտածողներ, որոնք ազգային հարցի լուծումը Ռուսաստանում չեն կապում երկրի դեմոկրատիզացիայի հետ, թեև դա համարում են նախապայմաններից մեկը: Նման մտածողները, ավելի շատ մարքսիստական բանակից, առաջադրում են ազգային կուլտուրական ավտոնոմիայի պահանջը: Սակայն

---

[*] *«Նոր Հոսանք», 1913, № 1–2. մեր հոդվածը՝ «Ազգային հարցը և դեմոկրատիան»:*

նույնիսկ այդ պահանջը ընդհանրացած չէ հայերի մեջ, թեև նրանք միշտ պայքարել են ու նեղվել հանուն կուլտուրայի: Ապագան ցույց կտա, թե որքան հաջող պահանջ է ազգային կուլտուրական-ավտոնոմիան: Համենայն դեպս նա մեզ թվում է հայությեան տենչերի միակ արտահայտիչը, նրանց կացությեան համապատասխան քաղաքական դավանանքը:

Երկու խոսք ևս: Ռուսահայերի հասարակական փիզիոնոմիան միակողմանի կլինի, եթե մենք չխոսենք նաև այն դերի մասին, որ նրանք կատարել են թուրքահայերի դատի նկատմամբ: Այդ կանենք ներկա հոդվածի հետագա և վերջին գլխում:

XI.

Տեսանք արդեն, որ ռուսահայերը, «քաղաքականապես ռուս» լինելով, իրանց մտահոգությունները ու ջանքերը կենտրոնացրել էին ազգային հոգևոր-կուլտուրական բարեմասնությունների զարգացման ու պաշտպանման վրա: Բայց նրանց պաշտպանության զենքը թույլ էր, բացառապես բարոյական և կախված հասարակական գիտակցությունից, այն ինչ հզորապես պաշտպանված է լինում հոգևոր կուլտուրան քաղաքական հարկադրող ուժի ներկայությամբ և ակնկալությամբ: Հայերը տեսնում էին, որ իրանք այդ ուժը չունեն, որ «քաղաքական անոթը», ինչպես արտահայտվում էր Ս. Նազարյանը, վերացել է ազգից և երբեք չի կարող ստեղծվել Ռուսաստանի սահմաններում: Իսկ եթե Ռուսաստանում անկարելի է «քաղաքական անոթի» տեր լինել, գուցե դա հնարավոր է մի այլ հորիզոնի տակ: Հայերը այդ թույլատրելի համարելով, իրանց աչքերը դարձնում էին դեպի Թուրքիա, մի երկիր, որի սահմաններում բուսել էին անկախ Հունաստան, Սերբիա, Ռումանիա և այլն: Այս մտայնությունը ռուսահայերի մեջ սկսեց զարկ ստանալ մանավանդ 1877–78 ռուս-թուրքական պատերազմից հետո: Թուրքահայաստանի ապագայի նկատմամբ ռուսահայերի մեջ սկսեց բողբոջել մի տեսակ քաղաքական միսսիանիզմ: Այդ երկրամասը պիտի հայ-հայրենիքը դառնար: Նա պիտի հովանավորություն տար հայ մտավորականին, որի միտքը ազատորեն արտահայտվելու վայր չէր գտնում: Նա պիտի ապաստարան լիներ սակավահող հայ գյուղացու համար, պիտի պաշտպաներ հայ քաղքենու առևտուրն ու արհեստը: Եվ ռուսահայերի համար թուրքահայերի ազատագրությունը դարձավ ժողովրդական չարժում: Խոսվում էր նրանց տառապանքների անունից, խոսվում էր հանուն եղբայրական սիրո և աջակցության, բայց յուրաքանչյուր այդպես խոսող ռուսահայ իր սրտի խորքում զուրգուրում էր այն հավատը, թե ազատագրված Թուրքահայաստանը խորթ անկյուն չի լինի և իր համար, որ այնտեղ անարգել կբարգավաճե հայ խոսքը, հայ կուլտուրան, որ ծանր ժամին դեպի նրա սահմանները կուղղե իր քայլերը հալածական հայը:

Սակայն ինչպես էին մտածում իրանց ճակատագրի մասին բուն թուրքահայերը: Նրանք 1863 թ. ստացել էին իրանց «Ազգային Սահմանադրությունը», մի պետական ակտ, որ չնորհում էր հայերին ազգային-կուլտուրական ավտոնոմիա, թեև առանց հարկադրական ազգային տուրքի դանձման իրավունքի և առանց պետական բյուջեից որոշած նպաստի: Թուրքահայերի մտածող դասը մեծ հույսեր էր դնում «Ազգային Սահմանադրության» վրա և են-

թարկված լինելով արևմտաեվրոպական քաղաքական ազդեցության (Ֆրանսիայի և Անգլիայի), սպասում էր, որ Թուրքիան պիտի վերածնվի և եվրոպականանա, որով և հայերի համար հնարավորություն պիտի ստեղծվի ապահով կյանք և տնտեսական բարգավաճում ունենալու, իսկ նրանց հոգևոր-կուլտուրական բարգավաճումը արդեն ապահովվում էր «Ազգային Սահմանադրության» գոյությամբ: Այս մտայնությունը հայերի մտածող դասին և հոգևորականությանը հեռու էր պահում ռուսական քաղաքականությունից: Ռուսական ներքին ռեժիմը և հայերի կուլտուրական ձգտումների դեմ գործադրած արգելքները հրապուրանք չէր ներշնչում դեպի Ռուսաստանը: Ինքը՝ Թուրք կառավարությունը, մանավանդ այդ կառավարության կրթված ներկայացուցիչները, աշխատում էին հայերին հեռու պահել Ռուսաստանի ազդեցությունից: Ահա ինչ է գրում 1869 թ. թուրք հայտնի պետական գործիչ և ռեֆորմատոր Ֆուադ փաշան իր քաղաքական կտակի մեջ. «Բ. Դուռը երբեք չպետք է թույլ տա այնպիսի ինտրիգներ, որոնց նպատակն է միությունն հաստատել հայերի և ուղղափառ եկեղեցու մեջ»: Ռուսաստանը ըստ Ֆուադի Թուրքիայի ավանդական թշնամին է. պետք է նրա դեմ լինել, միշտ զգոնակից մնալով Անգլիային: Անուշադրության մատնելով Թուրքիայի հպատակների բարոյական դավանանքի (կրոնի) խնդիրը, Ֆուադը խորհուրդ է տալիս խիստ ուշադիր լինել դեպի նրանց քաղաքական դավանանքը և խստապահանջ լինել, եթե նա դեմ է գնում թուրք պետության ամբողջականության: Բայց քաղաքական ռեպրեսիաներով չի կարելի թուրք պետականության կողմնակից դարձնել ոչ-թուրքերին, ուստի և նա խորհուրդ է տալիս իրականացնել քաղաքացիական և քաղաքական իրավունքների հավասարության սկզբունքը: «Այդտեղ ահա, – չարունակում է Ֆուադը, – սկսվում են մեզ համար բավական լուրջ դժվարություններ: Մեր քրիստոնյաները, ազատվելով այն լծից, որ նրանց հնազանդության մեջ էր պահում, չափից դուրս շտապում են իրանց նախկին տերերի տեղը բռնել: Մանավանդ հայերը այդ կողմից չափազանց ձգտում են ցույց տալիս: Արդար կլիներ չափավորել նրանց եռանդը, բանալով պետական ծառայության ասպարեզը միայն նրանց առաջ, որոնք անկեղծ կերպով կընդունեն մեր կայսրության միացնող սկզբունքները»):*

Այս դատողությունները հետևողական իրավահավասարության մասին չեն խոսում, բայց նրանք բնորոշ են այն կողմով, որ Թուրքիայի հեռատես պետական գործիչները զգում էին, որ իրանց հայրենիքի անկախ հարատևությունը կապված է եվրոպականացման և ժողովուրդների հավասար կացության հետ: Այս նույն միտքն էր ոգևորում ժամանակի ազդեցիկ թուրքահայերին, որոնք սպասում էին, թե Թուրքիան պիտի մի նոր Ավստրիա-Հունգարիա դառնա: Եվ խիստ բնորոշ է, որ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, 1876 թ. հուլիսի 6-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հրատարակում է մի կոչ, որի մեջ ասված է. «Ստույգ է թեև, որ Հայ ազգը մերթ ընդ մերթ գավառներու մեջ բարեխնամ Տերության կամաց հակառակ հարստահարությանց ենթակա եղած ալ է, հարստահարությունք՝ որոնք միայն մարմինը կվնասեն, և հեռի են այն տեսակ հարստահարություններեն՝ որոնք ոգին և մարմինը միանգամայն կվնասեն և ազգին գոյությանը կսպառնան»:

---

*) «Մշակ», 1896, № 143. «Ֆուադ փաշայի կտակը»:

Պետք է ուրեմն օժանդակել Թուրքիային: «Այս օժանդակությունն ընելով հայրենասեր Հայը, նույնիսկ յուր ազգային շահը պաշտպանած կլլա. վասն զի Օսմանյան երկիրը պաշտպանել՝ Հայաստան պաշտպանել ըսել է. նույնիսկ Հայուն կրոնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը և պատիվն ու կյանքը պաշտպանել ըսել է»[*]: Սակայն Թուրքիայի գավառական կացությունը այնպես չէր, որ այս խոսքերը պարարտ հող գտնեին: Ազգի ղեկավարները կարող էին գեղեցիկ ծրագիրներ որոճալ, բայց գավառացի հայը շտապում էր ռուս զորքերին ընդունել իբրև փրկիչների: Ազգի գլուխն ու մարմինը իրար ներդաշնակ չէին:*

Թուրքիան 1877–1878 թթ. պատերազմում պարտվեց և հայերը բռնեցին Ռուսաստանի փեշը, որ սա ազատություն չնորհե և իրանց: Այս քաղաքականության հիմքը դրին ռուսահայերը, որոնք գլուխ ունենալով Գր. Արծրունուն, 1876 թ. մի ուղերձ մատուցին Կովկասի փոխարքա Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչին, խնդրելով նրան, որ անուշադրության չմատնվի թուրքահայերի ծանր կացությունը: Պատերազմից հետո՝ հաշտության դաշնագրի կնքման շրջանում հրապարակ եկան և թուրքահայերը, գլուխ ունենալով վերը հիշած կոչի հեղինակ Ներսես պատրիարքին: Թուրքահայերի դիմումը Ռուսաստանին այն հետևանքն ունեցավ, որ 1878 թ. փետրվարի 19-ին Սան-Ստեֆանոյի անունով հայտնի դաշնագրի մեջ հատուկ հոդված մտցրվեց օգուտ հայերի: Այդ հոդվածը, ըստ կարգի 16-րդ, ունի հետևյալ բովանդակությունը. «Նկատելով որ ռուսաց զորաց Հայաստանի մեջ գրաված, բայց Թուրքիո վերադարձվելիք տեղերեն մեկնելը կընա կռիվներու և եկու տերությանց բարեկամական հարաբերություններուն վնաս բերող կնճիռներու ծնունդ տալ, Բ. Դուռը պարտավորություն հանձն կառնու Հայոց բնակած գավառներու մեջ տեղական պիտոյից պահանջած բարվոքումներն ու բարենորոգումներն առանց այլևս հապաղելու գործադրել, և քուրդերուն ու չերքեզներուն դեմ անոնց ապահովությունն երաշխավորել»: Սա հայանպաստ հոդվածի պաշտոնական խմբագրությունն է: Ինքը, արևելյան հարցի մեջ ահագին դեր խաղացած կոմս Ն. Պ. Իգնատիևը, հետևյալ բացատրությունն է տալիս այդ հոդվածի առիթով կանցլեր իշխ. Գորչակովին. «Հոդված XVI. կատարյալ բավարարություն պատճառեց այս հոդվածը հայերի ընդհանուր ցանկության: Առաջին անգամ Հայաստանի անունը արտասանված է միջազգային պայմանագրում, և այն պարտավորությունները, որ հանձն է առել Բ. Դուռը, կարող են հիմունք ծառայել, որ մենք մեր խնամակալության տակ առնենք Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության մեծագույն մասը: Այդ հոդվածը կապացուցանե Եվրոպային, որ Ռուսաստանը բացառապես սլավոններին և իր դավանակիցների մասին չէ հոգում, այլ որ նա, ղրկված մարդասիրությունից, նկատի է ունեցել ապահովել Թուրքիայի ողջ քրիստոնյա ազգաբնակչության բարօրությունը: Որովհետև թուրք լիազորները համառ ու ջերմ ծառանում էին մեր առաջարկի դեմ՝ հիշել էջմիածնի կաթողիկոսի անունը և անվանել նրան ծայրագույն գլուխ բոլոր հայերի, ապա ռուս լիազորները ավելի զգույշ դատեցին չպնդել դրա վրա: Իսկապես միջազգային ավելի մեծ նշանակություն տալը կաթողիկոսին կարող է հենց մեզ համար որոշ վարչական դժվարություններ ստեղծել Կովկասում և

[*] *«Մշակ», 1876, № 33:*

նույնիսկ հայերի մեջ պահպանել ցանկություններ և ճգտումներ, որ համապատասխան չեն մեր շահերին»[*]:

Կոմս Իգնատիևի այս բացատրությունը ի միջի այլոց ցույց է տալիս, որ հայերի նկատմամբ ներդաշնակություն չի եղել Ռուսաստանի արտաքին և ներքին քաղաքականությունների մեջ: Ռուսաստանի օգուտը պահանջում էր Արևելքում օգտագործել կաթողիկոսական ինստիտուտը, ուրեմն և զորացնել նրա միջազգային հեղինակությունը, բայց դա կարող էր դառնալ երկսայրի սուր Կովկասի սահմաններում, ուստի և ռուս կառավարությունը հետևողական քաղաքականություն չէր վարում, որով և հայերին միշտ պահում էր տարակուսանքի մեջ: Դիմելով նորից Սան-Ստեֆ. դաշն. 16-րդ հոդվածին, պիտի ասենք, որ նրա զորությամբ հայերի խնամակալը միմիայն Ռուսաստանն էր դառնում, սակայն այդ հոդվածը փոփոխության ենթարկվեց Բեռլինի վեհաժողովում և ըստ կարգի դառնալով 61-րդը, հետևյալ բովանդակությունն ընդունեց. «Բարձրագույն Դուռը կխոստանա առանց այլևս հապաղելու գործադրել այն բարվոքումներն ու բարենորոգումները, զոր տեղական պետքերը կպահանջեն Հայոց բնակած գավառներուն մեջ և անոնց ապահովություն երաշխավորել չերքեզաց ու քրդաց դեմ: Այս նպատակավ ձեռք առնված միջոցները պարբերաբար պիտի ծանուցանե տերության, որք անոնց գործադրությանը պիտի հսկեն»: Ահա այսպիսով հայերն ստացան վեց մեծ պետությունների խնամակալությունը, որը իրական շահ չբերեց նրանց, այլ միայն մի ավելորդ միջոց տվավ պետություններին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին և հայերի հաշվին ամրապնդելու իրանց դիրքը այդ երկրում: Եթե 61-րդ հոդվածը իրական օգուտ չբերեց հայերին, սակայն պատճառ դարձավ, որ եռանդով բանե նրանց քաղաքական միտքը և կորով ներշնչե մի ստրկացած ժողովրդի: 61-րդ հոդվածը քաղաքական շավղի վրա դրեց ոչ միայն թուրքահայերի մտածողությունը, այլև գուցե ավելի շատ ռուսահայերի: Վերջիններս չափավոր հասարակական դավանանք ունենալով Ռուսաստանում, սկսեցին խիզախ քաղաքական դատ վարել Թուրքիայում: Ապրելիով լինելով Ռուսաստանում, նրանք քաղաքականության երկրպագուներ էին Թուրքիայի նկատմամբ: Եվ ի՞նչ էր նրանց քաղաքականության էությունը, ինչպես էր նրանց գործելակերպը:

Մտավորականներ մատակարարել թուրքահայերին, որ ազատության քարոզ կարդան նրանց, կազմակերպեն նրանց այդ գաղափարի անունով: Զենք և նյութական միջոցներ մատակարարել թուրքահայերին, որ զորավոր լինի նրանց դիմադրական կորովը: Զինված խմբեր անցկացնել Թուրքիա, որ խրախուսեն հայերին, իրանց օրինակով վարակեն նրանց և պատժող բազուկ դառնան հայ ժողովրդի հարստահարիչների համար: Ապա գրավոր և բանավոր պրոպագանդ տանել Եվրոպայում, որ քաղաքակիրթ աշխարհը հետաքրքրվի հայերի կացությամբ և ստիպե դիպլոմատիային իրագործել իր բեռլինյան խոստումը: Սրա մեջ էր արտահայտվում հայերի քաղաքական գործունեությունը: Եվ այդ գործունեության վարիչներն էին երկու կազմակերպություն. Հնչակյան կուսակցությունը, որ հիմնվել էր 1887 թ. և Դաշնակցությունը, որ երևան էր եկել 1890 թ.: Այդ կազմակերպությունների կատարած գործը

[*] «Исторический Вестник», 1915, CX II, стр. 85.

միևնույն բովանդակությունն ուներ, չնայած որ առաջինի ծրագիրը մարքսիստական ֆրազեոլոգիայի մեծ դոզա էր պարունակում, իսկ վերջինի ծրագիրը պարզ հեղափոխական դեմոկրատիզմ:

Հայ ժողովուրդը չէր խնայում իր աջակցությունը այդ կազմակերպություններին, բայց և դրա համար իր թիկունքին էր առնում ռուս կառավարության հարվածները: Մի երկու պատկերացում, թե ինչպես էր Թուրքիայի շահերը իր սրտին մոտ ընդունում ռուս բյուրոկրատիան: 1890 թ. սեպտեմբերին 120 հոգով փորձեց Թուրքիա անցնել Ս. Կուկունյանը, սակայն նա իր ընկերներով շրջապատվեց Կաղզվանի մոտ ռուս զորքերով և ստիպված եղավ խմբի մի մասի հետ անձնատուր լինել առանց դիմադրության: 35 հոգի դատի տրվեցին, որոնցից 9 հոգի արդարացան, իսկ 26-ը դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի: Ինքը Ս. Կուկունյանը դատապարտվեց 20 տարով, 20 հոգի խմբից՝ յուրաքանչյուրը 15 տարով, 1 հոգի 12 տարով, իսկ 4-ը՝ 8 տարով յուրաքանչյուրը: Դատարանը հրաժարվեց Կուկունյանի ձեռնարկը համարել քաղաքական գործ, այլ դեպքի վրա նայեց իբրև քրեական հանցանքի վրա:

14 տարի հետո ավելի դժբախտ հետևանք ունեցավ մի ուրիշ հայրենասերի ձեռնարկ: Մենք ակնարկում ենք Թուման Թումյանի ողբերգական վախճանը: Այդ մարդը իր խմբով շրջապատվեց Օլթիի շրջանում ռուս սահմանապահ զորքերով և նրանց գլխավոր Բրկովի հրամանով բոլորը անխնա կոտորվեցին: Ջորս տասնյակ սպանված տվեց հայերի խումբը առանց մի գնդակ արձակելու ռուս զորքի դեմ, որովհետև դա կուսակցական հինավուրց դավանանք էր, որ հայերը կռիվ չեն վարում Ռուսաստանի դեմ, ուստի և դիմադրության փորձ չպիտի լինի:

Վերջապես մի՞թե այսօր ամեն ոք չգիտե, որ 1895–1896 թթ. հայերի սարսափելի կոտորածների ժամանակ ռուսական արտաքին գործերի մինիստր իշխ. Լոբանով-Ռոստովսկին ինքնագոհ խմաստություն էր ունեցել ասելու, թե Հայաստանը Ռուսաստանին հարկավոր է առանց հայերի …

Այսպես դատեց և գործեց ռուս բյուրոկրատիան, քանի նրա աչքերը հառած էին Մանջուրիային և Հեռավոր Արևելքին: Ռուս-ճապոնական պատերազմը և Ռուսաստանի պարտությունը բեկումն առաջացրին այս քաղաքականության մեջ:

Ռուսաստանը նորից սկսեց տենդորեն զբաղվել Մերձավոր Արևելքի խնդիրներով և հայերը նորից քաղաքական կարևորություն ստացան նրա աչքում: Նա առաջ մղեց Հայաստանի բարենորոգումների հարցը, բայց այստեղ տեսավ, որ իր անվտանգության տարիներում Թուրքիայում ամուր բազմել է մի ուրիշ ուժ, Գերմանիան, որը կամք չէր ցույց տալիս անօգնական թողնել Թուրքիային: Ռուսաստանը ստիպված եղավ զիջող և անպահանջկոտ լինել: Հայաստանի բարենորոգումների հարցը փակվեց 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրությամբ), որ եվրոպական ինսպեկտորներ էր տալիս այդ երկրի երկու շրջաններին: Այդ ինսպեկտորները օժտված էին որոշ վարչական իրավունքներով և պետք է քաղաքացիական տանելի կյանք հաստատեին երկրի մեջ, սակայն ծագեց եվրոպական պատերազմը և Թուրքիան չտապեց իրան ազատ հռչակել իր վրա վերցրած պարտավորութ-*

* *Տե՛ս ռուսական* «Оранжевая книга».

յուններից և Եվրոպա ճամփել հրավիրված ինսպեկտորներին: Թուրքիան ինքը խառնվեց եվրոպական պատերազմին և հիմա հայերը հույս են կապել, որ Ռուսաստանի և նրա դաշնակիցների հաղթությունը կլուծե Հայաստանի հարցը, որով «քաղաքական անոթ» պարգևելով այդ երկրին և նրա ժողովրդին: Այս հուսացումը դրդել է հայերին խոշոր զոհաբերություններ անել և իրանց բախտը կապել Ռուսաստանի հետ: Բայց հայերի այդ քաղաքականությունը իր հերթին արճակել է թուրքերի ձեռքը և նրանք այսօր զբաղված են հայերի բնաջնջման գործով …

Հայ ազգը որը ազգ է: Որը ու մենակ: Նա թվական աննշան ուժ է կազմում, իսկ դաժան պատմությունը միշտ պահում է նրա ստեղծագործող ոգին նկուն և երերուն վիճակի մեջ: Հողմահար ու հողմավար՝ նա ընթանում է իր պատմական ուղին, ճիգեր է թափում սեփական ոտքերի վրա կանգնել և իր ճակատագրի տնօրինողը լինել, սակայն արտաքին հանգամանքներն և ազդեցությունները ավելի գորավոր են հանդիսանում, քան նրա հավաքական ուժն ու կամեցողությունը … Յո՛ երթաս, ո՛վ պատմության նահատակ …

Դ. Անանուն

1915 թ. նոյեմբեր 23

ՀՏԴ : 050/070 (479.25)

Doi:10.54503/0135-0536-2022.3-289

ОБЗОРЫ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ (1910 г.)*

История армянской периодической печати всегда находилась в поле зрения различных исследователей, которые опубликовали много ценных работ и библиографий по этому вопросу. По инициативе отдела истории периодики и истории общественной мысли Института истории НАН РА издана двухтомная работа «История армянской периодической печати»[1].

Армянская периодическая печать зародилась (1794 г., Мадрас) и развивалась за пределами исторической Армении – в разных государствах, в разнотипных социально-политических и культурных условиях. Этот фактор важен при изучении истории армянской прессы, так как именно им было обусловлено становление, развитие или прекращение функционирования системы армянской прессы в том или ином регионе.

В Российской империи многоязычная периодическая печать находилась под пристальным вниманием властей: издательская деятельность строго контролировалась и подвергалась цензуре со стороны местных и столичных органов цензуры. Цензоры периодически составляли доклады о состоянии местной печати, особое внимание уделяя изданиям, выходящим на иноэтнических языках, в том числе и на армянском.

В данном материале мы представляем два документа, которые, дополняя друг друга, дают достаточно много информации о деятельности армянской периодической печати за 1910 г. Документы хранятся в Российском государственном историческом архиве (РГИА), в фонде под названием «Департамент духовных дел иностранных исповеданий Министерства внутренних дел» (ф. 821). Следует отметить, что подобные отчеты нередко готовились сотрудниками Главного управления по делам печати МВД и Управления по делам печати Тифлиса.

Первый документ – отчет сотрудника Управления по делам печати Тифлиса А. Калантара[2]: «Армянская периодическая печать на Кавказе к

* Представлена 13.VII. 2022 г., принята к печати 09. XI. 2022 г.

[1] *Հայ պարբերական մամուլի պատմություն (XVIII–XIX դարեր), հ. 1, Գահիրէ, 2006, Հայ պարբերական մամուլի պատմություն (1900–1922 թթ.), հ. 2, Երևան, 2017:*

[2] Артемий Иванович Калантаров – с 1891 г. служил в канцелярии тифлисского губернатора. С 1893 г. чиновник особых поручений в Тифлисской казенной палате, затем бухгалтер Сухумского казначейства. С 1899 г. в отставке. С 29 ноября 1908 г. младший член Кавказского комитета по делам печати. Служил до упразднения цензурного ведомства в апреле 1917 г. (Цензоры Российской империи, конец XVIII – начало XX века, биобиблиографический справочник. СПб., 2013, с. 191).

1 января 1911 года»; второй документ – отчет сотрудника Главного управления по делам печати МВД Г. Чарыхова[3]: «Обзор армянской периодической и неповременной печати в 1910/11 гг.».

Опубликованные документы отражают позицию российских властей в отношении деятельности армянской периодической печати как в России, так и за ее пределами. Они освещают политические взгляды армянских периодических изданий и их приемлемость для российских властей.

Документы могут представлять интерес не только для изучающих историю армянской периодической печати, но и для специалистов других областей, в частности, для политологов, поскольку в них говорится также о взаимоотношениях между армянскими политическими партиями и редакциями армянских изданий.

Представленные документы приведены в соответствие с современной орфографией русского языка, а также восстановлены встречающиеся в них сокращения. При необходимости сделаны комментарии.

СТЕПА ПЕТОЯН

АРМЯНСКАЯ ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ НА КАВКАЗЕ К 1 ЯНВАРЯ 1911 ГОДА

С отменой предварительной цензуры в 1905 году, количество органов армянской периодической печати на Кавказе чрезвычайно увеличилось и в настоящее время представляет довольно пеструю картину. В прежнее время Тифлис являлся почти единственным центром, где, как в фокусе, отражались все явления армянской общественной жизни и где, главным образом, сосредотачивалось издание всей армянской периодической печати. За последние же годы заметно усиление армянской периодической печати и в остальных, сравнительно мелких, пунктах армянской жизни, как например, Александрополь, Герусы и пр. Нижеследующие данные дают полную картину армянской периодической печати на Кавказе.

Вот список всех изданий:

в Тифлисе

1) «Мшак» (Работник), ежедневная газета
2) «Оризон» (Горизонт), ежедневная газета
3) «Сурандак» (Курьер), ежедневная газета
4) «Кайцер» (Искры), ежедневная газета

[3] Чарыхов Галуст Карпович (Карапетович) – с 9 мая 1908 г. по 1915(?) г. цензуровал сочинения на армянском языке при Санкт-Петербургском цензурном комитете. С 1910 г. член Московского комитета по делам печати. С 1911 г. командирован в Главное управление по делам печати для просмотра изданий на армянском (Ф. А р а к е л я н. Иноэтническая пресса в России. По материалам армянской печати. СПб., 2004, с. 218).

5) «Овит» (Долина), } еженедельные газеты
6) «Овив» (Пастырь), }
7) «Хата-Бала», } сатирические еженедельные
8) Приложение к Кайцер, } органы
9) «Нор Дпроц» (Новая школа), издание двухнедельное
10) «Тараз» (Мода), } журналы выходят раз или два
11) «Ахбюр» (Родник), } в месяц
12) «Аскер» (Колосья), ежемесячный журнал
13) «Лума» (Лепта), ежемесячный журнал
14) «Нор Дар» (Новый век), спорадически
15) «Гюхатнтес» (Сельский Хозяин), еженедельный журнал
16) «Гехарвест» (Искусство), иллюстративный сборник, два раза в год
17) «Ушарар» (Суфлер), спорадически
18) «Арор» (Плуг), ежемесячный журнал

в Александрополе

19) «Ахурьян» (река Арпачай), } три раза в неделю
20) «Жайр» (Скала), }

в Эривани

21) «Раздан» (древнее название реки Занги, издание спорадическое

в Герюсах [Горис]

22) «Гавар» (Провинция)[4], издание еженедельное

в Эчмиадзине

23) «Арарат», ежемесячный журнал

в Баку

24) «Бари Лур» (Благая Весть), еженедельно.

Перейдем к кратким характеристикам вышепоименованных изданий:

[4] А. Калантарян не включил в краткие характеристики армянской периодической печати газету «Гавар», так как в 1910 году она издавалась нерегулярно– последний номер вышел 5 декабря [*«Ղարաբաղ» (Շուշի), 29. I. 1912*]. А во втором документе Г. Чарыхов упоминает, что газета «Гавар» больше не издается. В отношении от 20 января 1911 г., отправленном вице-губернатором Елизаветпольской губернии в Главное управление по делам печати, читаем: «Разрешенная к изданию 24 октября 1909 года в городе Горис газета «Гавар» на армянском языке прекратила свое существование полтора месяца назад и более не выйдет» [РГИА**,** ф. 776, оп. 21, ч. 2 (1910 г.), д. 86, л. 3].

Филологический вестник 2022 № 3 Историко-филологический журнал

«Мшак» издается 38-ой год и является старейшей армянской газетой на Кавказе. Редактором ее состоит свыше 17 лет надворный советник Александр Айрапетович Калантар, агроном по специальности, издателем является группа из трех лиц – И. Тер-Маркосьян, А. Аракелян и А. Калантар.

Основанная в 1872 году доктором философии Гр. Арцруни газета эта за все время своего существования остается верной принципам своего основателя, именно: культурное преуспеяние армянской народности путем распространения среди читателей прогрессивных идей по всем вопросам общественного и политического характера. Глубоко ценя русскую культуру и гражданственность и являясь убежденной поборницей в деле ее распространения среди армян, газета «Мшак» всячески старалась приобщить армян к благам этой культуры. Ведя настойчиво и последовательно эту линию, «Мшак» нередко со страниц газет враждебного лагеря (особенно заграничных армянских) подвергался обвинению в роде того, что он субсидируется нашим правительством и т. д. Говоря короче, газета «Мшак» в армянской общественной жизни играла крупную культурную реформаторскую роль. Она всегда требовала света, культурного обновления. Будучи газетой либерального направления, «Мшак», тем не менее, однако не увлекался крайними течениями, даже во время возникновения в России, так называемого, освободительного движения, с его уродливыми формами и проявлениями. Тогда газета вела себя крайне осторожно.

Являясь непримиримой противницей деятельности политической организации «Дашнакцутюн», газета «Мшак» неоднократно выступала с резкой критикой против этой организации. Это – единственная из армянских газет, у которой хватило мужества открыто выступить в ту пору против столь сильной партии.

Здесь уместно заметить, что специальное образование редактора А. Калантара, известного в русской специальной литературе своими трудами в области сельского и молочного хозяйства, накладывает на газету особый отпечаток, являющийся ныне доминирующим в «Мшаке»: газета уделяет больше всего места вопросам школьным, сельскохозяйственным, кустарного труда в работе и т. п., всячески стремясь к популяризации этих отраслей знания и труда среди армян.

Мы, намеренно, несколько подробнее остановились на газете «Мшак», так как с ее именем связано, особенно тесно, развитие армянской общественной мысли у русских армян за последние 40 лет. Тираж газеты 3000 экземпляров.

«Оризон» является после «Мшака» самой крупной армянской газетой. Официальным редактором-издателем этой газеты считается некий С. Саакян, фактически же, ее ведут два известных армянских литератора А. Бабаханьян, известный под псевдонимом Лео, и поэт Ованнес Туманян. «Оризон» является наследницей тех ныне приостановленных многочисленных изданий, которые принадлежали армянс-

кой революционной партии «Дашнакцутюн». Но наследство это чисто, так сказать, внешнее. С этого момента, как во главе газеты стали Лео и Туманян, газета неоднократно на своих страницах заявляла, что она ничего общего не имеет с прежними редакциями и, действительно, за все время своего существования, она держится весьма корректного направления, посвящая все свои силы и внимание вопросам церковно-национальным, школьным и особенно литературным. Вокруг этой газеты сгруппировались все лучшие армянские литературные силы и те сравнительно умеренные лица, которые в силу своей умеренности откололись от прежних революционных партий и партийных изданий.

«Оризон» по всем крупным вопросам армянской жизни, и особенно по делам вокруг Эчмиадзина, ведет весьма ожесточенную полемику с «Мшаком», как и с некоторыми другими органами умеренного направления, но как ни странно это сказать, полемика эта должна считаться не принципиальной по своему существу, а скорее сведением личных счетов, смотря по личности, кто ведет эту самую полемику и вокруг кого она ведется. Тираж газеты – приблизительно 3000 экземпляров.

«Сурандак» – ежедневная газета руководствуется почетным гражданином А. Ерицяном, издателем ее состоит Чилингарьян, по профессии коммерсант. Газета эта издается всего второй год, и тираж ее весьма незначительный, хотя объем ее весьма обширный. Газета еще не приобрела себе подобающего положения в армянском обществе, но, несомненно, возникновение подобного армянского органа также следует считать, с правительственной точки зрения, явлением желательным. «Сурандак» почти во всех вопросах держится правого направления, не особенно часто встречающегося в инородческой печати, помимо того, он уделяет много места вопросам торгово-промышленным.

«Кайцер» – ежедневная маленькая газета, которая народилась сравнительно недавно под редакторством однофамильца редактора «Сурандака» Г. Ерицьяна. Газета эта, на подобие русских маленьких «копеечных» газет, рассчитана на распространение среди широких народных масс, но, по-видимому, особенным успехом не пользуется, ибо в начале января текущего года редакция принуждена была увеличить цену газеты с 1 коп. на 2 коп., заявляя, что к этому она вынуждена тем обстоятельством, что газета пока мало расходится. По направлению своему она является газетой либеральной, но больше всего уделяет внимания разным больным вопросам армянской жизни, как-то: церковным, школьным, делам вокруг Эчмиадзина и пр.

«Овив» и разновидность его «Овит» – издается на средства протоиерея Е. Ерзнкьяна, газета клерикальная, или вернее, орган местного духовенства. Исключительное внимание этой газеты сосредоточено вокруг Эчмиадзинских дел и интересов армянской церкви.

Газета постоянно нападает на Эчмиадзинскую братию, все ее статьи преимущественно полемического характера, часто написаны в страстном,

Филологические науки 2022 № 3 Историко-филологический журнал

боевом тоне, причем нередки нападки и на главу армянской церкви – Католикоса.

«Хата-Бала» и «Приложение к Кайцеру» – издаются отдельно А. Ерицьяном и Г. Ерицьяном и являются крупными армянскими юмористическими изданиями. В этих изданиях нередки удачные карикатуры из армянской общественной жизни, причем особенно подчеркиваются ее уродливые явления. Не ускользает от внимания и армянское духовенство. Нередко эти журналы касаются смешных сторон политической жизни иностранных государств, особенно турецкого и персидского.

«Нор Дпроц» – издается редакционной коллегией армянских педагогов Абегьяна, Газарьяна, Арутюньяна и Тер-Миракьяна. Это довольно солидный журнал специально по педагогике. Основная идея журнала – создать новую армянскую школу на началах современной педагогики и требований времени – проводится довольно последовательно. В журнале много заимствований из однородных русских и немецких изданий, с целью применить все современные методы преподавания и педагогики к армянским школам.

«Агбюр» – детский ежемесячный журнал, редактируемый Тиграном Назарьяном, дает довольно разнообразный переводный и самостоятельный материал для детского чтения. Издается 26 лет и является старейшим армянским иллюстрированным изданием.

«Тараз» – еженедельный иллюстрированный журнал моды, издается параллельно с «Агбюром», тем же Т. Назарьяном, свыше 20 лет, причем издание журнала ведется крайне неаккуратно, а в смысле моды почти ничего не дает, представляя из себя скорее иллюстрированный мелкий альманах с беллетристическим содержанием.

«Аскер» (Колосья) – специальный детский журнал, редактируемый супругами Лисициян, имеющий сравнительно широкое распространение среди армян. В журнале принимают участие главным образом выдающиеся армянские педагоги, нередко появляются и переводы с русских и европейских однородных журналов.

«Лума» – ежемесячный журнал, издается 15 лет протоиереем Гют Аганьянцем. Журнал этот не имеет широкого распространения среди армянского общества, и это, вероятно, потому, что журнал не имеет какой-либо определенной физиономии. В журнале преимущественно появляются статьи беллетристического и исторического характера.

Mayor (2009): A. Mayor, The Poison King. The Life and Legend of Mithradates, Rome's Deadliest Enemy, Princeton 2009.

Minns (1915): E. H. Minns, Parchments of the Parthian Period from Avroman in Kurdistan, JHS 35, 1915, 22–65.

Mitchell (2002): S. Mitchell, In Search of the Pontic Community in Antiquity, PBA 114, 2002, 35–64.

Mittag (2006): P. F. Mittag, Antiochos IV. Epiphanes. Eine politische Biographie (Klio Beih. N.F. 11), Berlin 2006.

Oelsner (1975): J. Oelsner, Randbemerkungen zur arsakidischen Geschichte anhand von babylonischen Keilschrifttexten, AoF 3, 1975, 27–45.

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

Panaino (forthcoming): A. Panaino, Mithridates, „King of Kings“ and the Iranian Background, in: D. Braund/A. Dan/H.-J. Gehrke (eds.), The Charisma of the King: New Insights into Mithridates VI Eupator's Rule and Legitimation of Rule.

Sachs/Hunger (1988): A. J. Sachs/H. Hunger, Astronomical Diaries and Related Texts from Babylonia, Vol. II. Texts from 652 B.C. to 165 B.C., Wien 1988.

Sachs/Hunger (1996): A. J. Sachs/H. Hunger, Astronomical Diaries and Related Texts from Babylonia, Vol. III. Texts from 164 B.C. to 61 B.C., Wien 1996.

Sandalgian (1917): J. Sandalgian, Histoire documentaire de l'Arménie des âges du paganisme (1410 av.–305 apr. J.-C.) II, Roma 1917.

Sarkisyan (1994): G. Sarkisyan, Eine Rekonstruktion der Artašesidendynastie Armeniens nach dem seleukidischen astronomischen Tagebuch BM 34791, AMI 27, 1994, 237–240.

Schippmann (1980): K. Schippmann, Grundzüge der parthischen Geschichte, Darmstadt 1980.

Schottky (1989): M. Schottky, Media Atropatene und Gross-Armenien in hellenistischer Zeit, Bonn 1989.

Shayegan (2011): M. R. Shayegan, Arsacids and Sasanids: Political Ideology in Post-Hellenistic and Late Antique Persia, Cambridge 2011.

Sommer (2005): M. Sommer, Roms orientalische Steppengrenze. Palmyra – Edessa – Dura-Europos – Hatra. Eine Kulturgeschichte von Pompeius bis Diokletian, Wiesbaden 2005.

Traina (2012): G. Traina, Tigran il Grande d'Armenia e la Giudea, in: G. Urso (ed.), Iudaea socia – Iudaea capta, Pisa 2012, 79–88. Traina (forthcoming): G. Traina, Tigran and Mithridates: two parallel „Kings of Kings“?, in: D. Braund/A.Dan/H.-J. Gehrke (eds.), The Charisma of the King: New Insights into Mithridates VI Eupator's Rule and Legitimation of Rule.

Van De Mieroop (2006): M. Van De Mieroop, A History of the Ancient Near East, ca. 3000–323 BC, revised edition Oxford 2006.

Will (1982): É. Will, Histoire politique du monde hellénistique (323–30 av. J.-C.), II, Nancy ^{2}1982.

Wiseman (1967): D. J. Wiseman, A Late Babylonian Tribute List?, BSOAS 30, 1967, 495–504.

Wolski (1980): J. Wolski, L'Arménie dans la politique du Haut empire parthe (env. 175–77 av. J.-C.), IA 15, 1980, 251–267.

Zadok (1985): R. Zadok, Répertoire géographique des textes cunéiformes. 8. Geographical Names According to New and Late Babylonian (TAVO Beih. B 7/8), Wiesbaden 1985.

ՀՏԴ : 929:78.071(479.25) Ռոբերտ Աթայան + 78(479.25)

ՌՈԲԵՐՏ ԱԹԱՅԱՆ *(հրատարակության պատրաստեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Լուսինե Սահակյանը), Երևան, հեղ. հրատ., 2021, 352 էջ*:*

Բանալի բառեր՝ Ռոբերտ Աթայան, Լուսինե Սահակյան, կոմիտասագիտություն, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, արխիվային վավերագրեր, նամականի:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «Ռոբերտ Աթայան» գիրքը (խմբագիր՝ Գուրգեն Գասպարյան)՝ նվիրված հայ երաժշտագիտության երախտավոր, կոմիտասագետ, կոմպոզիտոր, երաժշտա-հասարակական գործիչ և մանկավարժ Ռոբերտ Աթայանին (1915–1994), նաև՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյա հոբելյանին, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ պրոֆեսոր Աթայանը երկար տարիներ ոչ միայն դասավանդել է կոնսերվատորիայում, այլև ղեկավարել երաժշտագիտության տեսության ամբիոնը: Այսօր մեր՝ միջին և ավագ սերնդի գրեթե բոլոր երաժշտագետները նրա սաներն են: Անձամբ ինձ նա «Սոլֆեջիո» է դասավանդել Կոնսերվատորիայի առաջին կուրսում, իսկ մինչ այդ՝ 1987-ին, երբ ավարտում էի Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը, նա ավարտական քննական հանձնաժողովի նախագահն էր: Հենց այդտեղ էլ կայացավ մեր ծանոթությունը, որն ավարտվեց պրոֆեսորի կողմից իմ պատասխանի գերազանց գնահատականով…



Ռ. Աթայանի գիտական գործունեությունը սերտորեն չաղկապված է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հետ. նա 1948-ին ավարտել է ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի ասպիրանտուրան՝ սեկտորի 1944–1948 թթ. վարիչ, ականավոր երաժշտագետ Քրիստափոր Քուշնարյանի գիտական ղեկավարությամբ 1954-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայկական խազային նոտագրությունը» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ռ. Աթայանը կանգնած էր ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման ակունքներում: ՀՍՍՌ ԳԱ նախագահության որոշմամբ 1958-ի մայիսի 1-ին ստեղծվեց Արվեստի ինստիտուտը՝ երաժշտության, ճարտարապետության, թատրոնի և կինոյի, կերպարվեստի, կիրառական արվեստի սեկտորներով: Արժանահիշատակ է, որ երաժշտության սեկտորի հինգ աշխատակիցներից մեկը հենց Ռ. Աթայանն էր, ով աշխատեց հարազատ գիտական օջախում

** Ներկայացվել է 13. VII. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

մինչև ԱՄՆ տեղափոխվելը: Հենց այստեղ նա ստեղծեց իր կարևոր երաժշտագիտական աշխատությունները՝ «Արմեն Տիգրանյան. կյանքը, երաժշտական-հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը» (համահեղինակ՝ Մաթևոս Մուրադյան, 1955), «Հայկական խազային նոտագրությունը (ուսումնասիրության և վերծանության հարցեր)» (1959) և «Գուսան Հավասի (կյանքը և ստեղծագործությունը)» (1963) մենագրությունները, «Երաժշտության տարրական տեսություն» (համահեղինակ՝ Տիգրան Տեր-Մարտիրոսյան, 1980) դասագիրքը երաժշտական ուսումնարանների համար և այլն:

Գրախոսվող գրքի գաղափարը պատկանում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, ՀՀ գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) գիտական խորհրդի անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանին: Նա էլ գիրքը պատրաստել է հրատարակության, ծանոթագրել և հեղինակել առաջաբանը:

Լ. Սահակյանը երկար տարիներ զբաղվում է Կոմիտասի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրության հարցերով: 2007-ին Արվեստի ինստիտուտում նա հաջողությամբ պաշտպանեց «Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ Արաքսի Սարյան), որը 2010 թ. հրատարակվեց մենագրության տեսքով: Իր անդրանիկ մենագրության մեջ հեղինակը ներկայացրել է հայ երաժշտագիտության կարևոր բնագավառներից մեկի՝ կոմիտասագիտության կազմավորման, հետագա ծավալման և հաստատման փուլերը՝ մեկտեղելով և ի մի բերելով Կոմիտասի կյանքն ու գործը լուսաբանող հիմնական աշխատությունները: Հետագայում Լ. Սահակյանը հետևողականորեն շարունակեց իր պրպտումները կոմիտասագիտության ասպարեզում՝ հրատարակելով գիտական մի շարք արժեքավոր հոդվածներ և զեկուցումներով հանդես գալով Հայաստանում ու արտասահմանում (Ռուսաստան, Գերմանիա և այլն) գումարված միջազգային գիտական կոնֆերանսներում:

Երաժշտագետի՝ կոմիտասագիտական պրպտումների հանրագումարը դարձավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ 2019-ին՝ Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ հրատարակած «Կոմիտաս Վարդապետ» հոդվածների ժողովածուն, որտեղ ներառվեցին հեղինակի՝ տարբեր տարիների հրատարակած հայերեն և օտարալեզու հոդվածները:

2020-ին՝ կոմիտասագիտության մեջ ծանրակշիռ ներդրում ունեցող Ռոբերտ Աթայանի ծննդյան 105-ամյակի կապակցությամբ ծնվեց նրա վերաբերյալ ժողովածու ստեղծելու գաղափարը, որը, ինչպես խոստովանում է Լ. Սահակյանը՝ «Իմ մեջ արմատացրեց Տիգրան Մանսուրյանը: Կոմպոզիտորի արժեքավոր մասնագիտական խորհուրդները մեկնակետ դարձան այս աշխատության համար» (էջ 7): Իսկ աշխատության հուսալի հիմքը Ռ. Աթայանի արխիվի մանրազնին ուսումնասիրությունն էր, որը Լ. Սահակյանին սիրահոժար տրամադրեցին Ռ. Աթայանի ժառանգները. դուստրերը՝ Մարինե և Նազելի Աթայանները, թոռը՝ Արշակ Աթայանը և հարսը՝ Թամար Աթայանը:

Երկար տարիներ աշխատելով ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ Ռ. Աթայանն իր անգնահատելի նպաստն է բերել կոմիտասագիտության առաջընթացին ոչ միայն իր՝ կոմիտասագիտական մեծարժեք հետազոտություններով, այլև բացառիկ դեր կատարել Կոմիտասի ժառանգությունը Հայաստան տեղափոխելու և նրա «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության նախապատրաստման գործում: Ինչպես հայտնի է, 1949 թ. սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան օրը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունում Կոմիտասի «Երկերի ժողովածուի» ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային: Կոմիտասի ձեռագրերը Երևան տեղափոխելու նպատակով սկսվում է նամակագրություն ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության և տեսության սեկտորի վարիչ Ռուբեն Զարյանի և երգչուհի, դաշնակահարուհի, երաժշտագետ ու մանկավարժ Մարգարիտ Բաբայանի միջև, որի արդյունքում ստացվում է «Կոմիտաս» խնամատար հանձնաժողովի տրամադրության տակ գտնվող կոմիտասյան արխիվի նշանակալի մասը:

Մ. Բաբայանի հետ նամակագրությունը հետագայում չարունակում է Ռ. Աթայանը. այդ անտիպ նամակներն այսօր գտնվում է ԳԱԹ Մ. Բաբայանի ֆոնդում: Աթայանի ջանքերով հետագայում հրատարակվեց Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ն, որի 1–6 հատորների խմբագիրը հենց ինքն էր: Ցավոք, մնացյալ 7–14-րդ հատորները հրատարակվեցին հետմահու՝ Գևորգ Գյոդակյանի ջանքերով: Կոմիտասի «Երկերի ժողովածու»-ի ակադեմիական հրատարակությունը ոչ միայն բացառիկ իրադարձություն էր հայ ժողովրդի երաժշտական կյանքում, այլև ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող համազգային մեծ ու նշանակալի երևույթ:

Ռ. Աթայանի անձնական արխիվի ուսումնասիրության արդյունքում կուտակվում է մեծաքանակ նյութ: Ինչպես նկատում է Լ. Սահակյանը, «Այս գրքում փորձեցինք հավաքել Ռ. Աթայանի բազմոլորտ գիտական և երաժշտալուսավորական գործունեությունը ներկայացնող նյութերի մի ծաղկաքաղ» (էջ 8):

Գրախոսվող ժողովածուի կարևոր արժանիքներից մեկն այն է՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել Աթայանի ձեռքով գրված «Ինքնակենսագրություն» վերնագրված կենսագրությունը (էջ 13–17), որը լույս է սփռում երաժշտագետի գործունեության՝ մինչ օրս անհայտ էջերի վրա: Ռ. Աթայանի վաստակն օտարալեզու ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով այն ներկայացվել է նաև անգլերեն թարգմանությամբ (էջ 17–20):

Կարևոր նշանակություն ունեն Աթայանի հաշվետվությունները երաժշտահասարակական (էջ 20–21) և 1975–1985 թթ. գիտական գործունեության վերաբերյալ (էջ 21–26), ինչպես նաև՝ «Զեկուցումը ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի նիստում», որն ընթերցվել է 1984 թ. մայիսի 27-ին (էջ 26–27):

Ժողովածուի առանցքը «Ռոբերտ Աթայանի աշխատությունները» բաժինն է (էջ 28–182), որտեղ ներկայացված են Աթայանի՝ 1954-ին պաշտպանած թեկնածուական ատենախոսության «Կոմիտասի երաժշտագիտական գործունեությունը և խազաբանությունը» արժեքավոր հատվածը, Կոմիտասին («Նոթեր Կոմիտասի երաժշտական-ազգագրական աշխատանքի և ստեղծագոր-

ծուխյան մասին», «Ղարաբաղյան հորովելները Կոմիտասի գրառումներում», «Կոմիտասի չեքսպիրյան էջը», «Կոմիտասի նշանակությունը հայ արվեստում», «Կոմիտասը հայ ժողովրդական երգերի հավաքող»), հայ դասական կոմպոզիտորներին («Մակար Եկմալյանը և իր Պատարագը», «Ռոմանոս Մելիքյան», «Անուշավան Տեր-Ղևոնդյանի ստեղծագործությունը», «Աչոտ Սաթյանի երգերը», «Վարդան Սարգսյանի «Անուշը»»), ինչպես նաև երաժշտության տարբեր ճյուղերին («Հայ ժողովրդական և հոգևոր երաժշտություն», «Ժողովրդական երաժշտություն», «Հայ աշուղների երգերը», «Վաղ միջնադարյան հոգևոր երգեր», «Գործիքային երաժշտություն», «Միջնադարի հայ վարպետների երգերը»), երաժշտատեսական տարաբնույթ հարցերին («Հայերեն երաժշտական տերմինաբանության մասին», ««Ռաբիս» կոչվող երգերի մասին» և այլն) վերաբերող նրա հոդվածները, չհրատարակված զեկուցումների ու ելույթների տարբերակները:

Գրախոսվող ժողովածուի կոմիտասյան չունչն առկա է հաջորդ բաժնում ևս, որտեղ ի մի են բերված Կոմիտասի մասին Ռ. Աթայանի հավաքած նյութերը (էջ 183–242)՝ վկայականները, կոնդակները (էջ 183–189) և նամականին (էջ 189–242): Արժեքավոր նամականին բաղկացած է չորս բաժնից՝ ա) «Կոմիտաս Վարդապետի գրած նամակները», բ) «Կոմիտաս Վարդապետի ստացած նամակները», գ) «Կոմիտաս Վարդապետի վերաբերյալ այլ անձանց նամակները» և դ) «Ռ. Աթայանի գրած և ստացած նամակները»:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է Ռ. Աթայանի նամականին ամբողջացնել և հրատարակել առանձին հատորով:

Աթայանական «կոմիտասականի» կարևոր էջերից մեկն էլ ներկայացնում է Կոմիտասին նվիրված նրա՝ օտարալեզու ուսումնասիրությունները. Մոսկվայում 1964 թ. կայացած Մարդաբանական և ազգագրական գիտությունների VII միջազգային կոնգրեսում նրա՝ «Կոմիտասը հայ ժողովրդական երգերի հավաքող և ուսումնասիրող» ֆրանսերեն զեկուցումը (էջ 262–268), «Կոմիտասի կյանքը» գերմաներեն հոդվածը (էջ 268–273), «Կոմիտաս» ծավալուն ռուսերեն հետազոտությունը (էջ 273–285), ինչպես նաև Կոմիտասի 100-ամյակի կապակցությամբ անգլերեն հրատարակված «Կոմիտաս» արժեքավոր ուսումնասիրությունը, որտեղ ներառված են ինչպես նոտային օրինակներ, այնպես էլ՝ Կոմիտասի լուսանկարներն ու ինքնաձիմանկարները (էջ 286–313):

Լ. Սահակյանը ժողովածուում ներառել է նաև Ռ. Աթայանի մասին ժամանակակիցների՝ երջանկահիշատակ ականավոր երաժշտագետներ Ռաֆայել Ստեփանյանի և Գևորգ Գյոդակյանի տպագրած հոդվածները, ինչպես նաև՝ հատուկ այս ժողովածուի համար Դավիթ Ղազարյանի, Լիլիթ Երնջակյանի, Դավիթ Դերոյանի, Դանիել Երաժշտի և Արզաս Ոսկանյանի՝ հետաքրքիր ու ջերմ զգացումներով համակված հուշերը:

Գրախոսվող ժողովածուի աներկբա արժանիքներից է Ռ. Աթայանի գիտական աշխատությունների ու ստեղծագործությունների մատենագիտական ցանկը, որը կազմել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել Լ. Սահակյանը:

Ընթերցողը մեծ հետաքրքրությամբ է ծանոթանում Աթայանի անձնական արխիվից վերցված, լուսանկարներից կազմված պատկերաշարին:

Այսպիսով՝ Լ. Սահակյանի աշխատասիրությամբ և նրա կյանքի ընկերոջ՝ գնդապետ Մհեր Ավագյանի մեկենասությամբ լույս աշխարհ եկած «Ռոբերտ Ամթայան» ժողովածուն ոչ միայն հուշարձան է կոմիտասագիտության այունեըից մեկի՝ Ռ. Ամթայանի հիշատակին, այլև Լ. Սահակյանի հերթական խոնարհումը Մեծն Կոմիտասին: Ժամանակին ամերիկահայ կերպարվեստի ինքնատիպ դեմքերից մեկը՝ Քաջազունի Քեչեճյանը (գեղանկարչական աշխարհում հայտնի Քաջազը), նկատել է. «Եթէ նոյնիսկ Նիւ Եորք նկարեմ՝ երեւան կը ստացուի, եթէ ամերիկացի նկարեմ՝ հայ կը ստացուի ...»: Ու եթե վերաձևակերպենք Քաջազի միտքը, ապա կարող ենք վստահ արձանագրել՝ ինչի մասին գրում և հրատարակում է Լ. Սահակյանը, ստացվում է ԿՈՄԻՏԱՍ:*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և ավելի քան 230 հոդվածի: instart@sci.am, annaasatryan@gmail.com

* *Ա. Ղ ա ս յ ա ն. Քաջազի մշտավառ կանթեղը, Երևան, 2009, էջ 5:*

ՀՏԴ : 929:947.925 Հարությունյան + 947.925

ԿԼԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՌՈՒՍՆԵՐԸ (1941–1945 թթ.), *Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, 96 էջ +8 էջ լուս.*:*

КЛИМЕНТ АРУТЮНЯН. ГЕРОИ СОВЕТСКОГО СОЮЗА: РУССКИЕ ИЗ АРМЕНИИ (1941–1945 гг.). Ереван, Изд. «Эдит Принт», 2022, с. 96+8 рис.

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, ռուսներ, Հայրենական Մեծ պատերազմ, Խորհրդային Միության հերոսներ, մարտական ուղի, ազատագրել, արխիվ:

Վերջերս հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պ. գ. դ. Կլիմենտ Հարությունյանի հեղինակած «Խորհրդային Միության հերոս Հայաստանցի ռուսները (1941–1945 թթ.)» վերնագրով ռուսերեն մենագրությունը, որը բազմավաստակ պատմաբանի՝ Հայրենական Մեծ պատերազմին հայ ժողովրդի և Հայաստանում ծնված կամ ապրած այլ ազգությունների զավակների մասնակցությանը վերաբերող թվով 39-րդ մենագրությունն է: Գիրքը չարադրված է Ռուսաստանի Դաշնության ռազմածովային կենտրոնական արխիվի (Լենինգրադի մարզ, քաղաք Գատչինա) և ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ, քաղաք Պոդոլսկ) նորահայտ ու արժեքավոր փաստաթղթերի, ինչպես նաև համապատասխան գրականության և մամուլի նյութերի հիման վրա:



Աշխատությունն ունի համբագրական խորհուրդ, որի կազմի մեջ ընդգրկված են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ. Կարեն Խաչատրյանը, «Եվրասիական հետազոտությունների ինստիտուտի» Զարգացման հիմնադրամ Ռ.Ա.Կ. հայկական մասնաճյուղի տնօրեն Պավել Ավագյանը և ՀՀ վետերանների միավորման նախագահ, գնդապետ Սիմոն Եսայանը: Գիրքը հրատարակության են երաշխավորել ՀՀ պաշտպանության նախարարությանը կից բարձրագույն սպայական անձնակազմի հանճնաժողովի նախագահ Վլադիմիր Հայրապետյանը և «Հայաստանի ԴՕՍԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության նախագահի տեղակալ, գնդապետ Կարեն Ավագյանը:

---

* *Ներկայացվել է 23. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, 8 հերոսների մասին ակնարկներից, եզրակացությունից և գրքի հեղինակի մասին բաժնից:

Առաջաբանում, բացի օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունից, հակիրճ ներկայացվել է Հայաստանի տարածքում ռուսների բնակության, Ռուսաստանում հայերի հաստատման պատմությունը: Հավաստի տվյալներ են բերվում Հայրենական Մեծ պատերազմի նախօրյակին (1941–1945 թթ.) Խորհրդային Հայաստանի տարածքում ապրող ռուսների թվաքանակի և ռազմաճակատ զորակոչվածների ու մարտերում զոհվածների վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ պատերազմի նախօրյակին Խորհրդային Հայաստանի տարածքում ապրել են 51464 ռուս, որոնց 19.63 %-ը՝ 10107 մարդ, զորակոչվել է կարմիր բանակի շարքեր: Նրանցից 3444-ը (զորակոչվածների 34.07 %-ը) զոհվել են ռազմաճակատում:

Ձեռված են նաև Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, Հայաստանում ծնված կամ ապրած ու աշխատած ռուսների թիվը: Ըստ հեղինակի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 8 ռուս, որոնցից 5-ը ծնվել են Խորհրդային Հայաստանում, իսկ 3-ը՝ պատերազմի նախօրյակին ծառայել են Խորհրդային Հայաստանում: Բացի այդ, հեղինակը հիշատակել է նաև 5 ռուս հերոսի անուն, որոնց ընտանիքները պատերազմի ժամանակ ապրել են Խորհրդային Հայաստանում:

Առաջաբանից հետո Կ. Հարությունյանն առանձին-առանձին լուսաբանել է ինչպես Խորհրդային Հայաստանում ծնված 5 հերոսների, այնպես էլ պատերազմի նախօրյակին հանրապետությունում ծառայած մյուս 3 հերոսների կյանքն ու գործունեությունը:

Այդ 5 հերոսներից հեղինակն առաջինը ներկայացնում է գեներալ-լեյտենանտ Բորիս Ալեքսանդրի Վլադիմիրովին, ով ծնվել է 1905 թ. ապրիլի 14-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Նրա մայրը հայ էր, հայրը՝ ռուս: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին եղել է հրաձգային բրիգադի սպա, դիվիզիայի հրամանատար, աչքի է ընկել Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ, ակտիվորեն մասնակցել է Լեհաստանը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման, նաև գերմանական Շնայդեմյուլե քաղաքի գրավման մարտերին: 1945 թ. ապրիլի 6-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո գեներալ-լեյտենանտ Բ. Վլադիմիրովը շարունակել է զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի կազմում: Մահացել է 1978 թ. մայիսի 1-ին Մոսկվայում:

Հաջորդ ակնարկը նվիրվել է օդաչու Վալենտին Գեորգիևիչ Կոզլովին, ով նույնպես ծնվել է Ալեքսանդրապոլում 1917 թ. օգոստոսի 20-ին: Հայրենական Մեծ պատերազմին նա մասնակցել է սկզբից մինչև վերջ՝ որպես ռմբակոծիչ ինքնաթիռի օդաչու, կրտսեր լեյտենանտից հասել մայորի զինվորական աստիճանի: Վ. Կոզլովն աչքի է ընկել Մոսկվայի համար մղված ճակատամարտում, Ռժևսկ-Վյազեմսկայան ու Ռժևսկ-Սիչևսկայան մարտական գործողության, Լեհաստանի և Չեխոսլովակիայի ազատագրման ու Բեռլինի գրավման ժամանակ: 1945 թ. հունիսի 27-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Պատերազմից հետո՝ մինչև 1956 թ., ծառայել է ԽՍՀՄ ռազմա-

օդային ուժերի շարքերում: Մինչև իր մահը՝ 1993 թ. սեպտեմբերի 17-ը, ապրել ու աշխատել է ՌԴ Ստավրոպոլի երկրամասի Էսենտուկի քաղաքում:

Այնուհետև հանգամանորեն ներկայացվել է Խորհրդային Հայաստանի Գուգարքի շրջանի Վոսկրեսենովկա (1941 թ. մայիսի 5-ից՝ Լերմոնտովո) գյուղում 1922 թ. սեպտեմբերի 28-ին ծնված գրոհային օդաչու Եֆիմ Գրիգորի Ուղալցովի կենսագրությունը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նա ակտիվորեն մասնակցել է Կովկասի և Ղրիմի համար մղված ճակատամարտերին, Լենինգրադի հերոսամարտին, Մերձբալթիկայի ազատագրմանը, մարտական ուղին ավարտել է Արևելյան Պրուսիայում: Լենինգրադի և Ղրիմի համար մղված մարտերում կռվել է Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի գլխավորած 47-րդ գրոհային ավիացիոն գնդում: Ավագ լեյտենանտ Ե. Ուղալցովին Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1945 թ. մարտի 6-ի հրամանագրով: Պատերազմից հետո կապիտան Ուղալցովն աշխատել է «Աէրոֆլոտի» համակարգում՝ որպես «Ty-104» ինքնաթիռի հրամանատար: Զոհվել է ավիավթարի հետևանքով 1973 թ. դեկտեմբերի 7-ին:

Խորհրդային Հայաստանի Ստեփանավանի շրջանի Ալեքսանդրովկա (1939 թ. փետրվարի 22-ից՝ Մաքսիմ Գորկի) գյուղում է 1917 թ. փետրվարին ծնվել Իվան Իվանովիչ Բոնդարևը: Նա 1941 թ. հունիսի 22-ից Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է՝ Հյուսիս-արևմտյան, ապա 2-րդ Ուկրաինական և 1-ին Բելառուսական ռազմաճակատներում: Տանկի մեխանիկ-վարորդ, գվարդիայի ավագ սերժանտ Ի. Բոնդարևը հատկապես աչքի է ընկել Լեհաստանի ազատագրման մարտերում: ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1945 թ. փետրվարի 27-ի հրամանագրով արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Դժբախտաբար հերոս տանկիստը բախտ չունեցավ տեսնել բաղձալի հաղթանակը. զոհվել է 1945 թ. մարտի 4-ին լեհական Գրիֆիցե գյուղի համար մղված մարտում: Նրա հիշատակը վառ են պահում Հայաստանում. հայրենի գյուղի դպրոցը կոչվում է նրա անունով, իսկ դպրոցի բակում կանգնեցվել է խիզախ տանկիստի կիսանդրին:

Հայաստանում ծնված Խորհրդային Միության 5-րդ հերոսը Իվան Իվանովիչ Սեմյոնովն է: Ծնվել է 1920 թ. Կրասնոսելսկ (այժմ՝ Ճամբարակ) գյուղում: Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել է 1941 թ. հունիսի 22-ից՝ որպես հրետանավոր: Իր խիզախությամբ աչքի է ընկել Ուկրաինայի, ապա՝ Արևելյան Սլովակիայի ազատագրման համար մղված մարտերում: 1945 թ. մայիսի 23-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: 1945 թ. հոկտեմբերի 9-ին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության հրամանագրով Կրասնոսելսկի դպրոցը, որտեղ սովորել էր Ի. Սեմյոնովը, պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության պատվոգրով: Ըստ որոշ աղբյուրների՝ Ի. Ի. Սեմյոնովը 1948 թ. որպես կուլակի որդի զրկվել է հերոսի կոչումից: Այդ պատճառով էլ 1964 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Գիրք հերոսների մասին» աշխատության մեջ բացակայում է նրա անունը:

Այնուհետև Կ. Հարությունյանը ներկայացրել է Հայաստանում չծնված, բայց պատերազմից առաջ մեր հանրապետությունում ծառայած գեներալ-լեյտենանտներ Լեոնիդ Ալեքսանդրովիչ Կոլոբովի, Նիկոլայ Ալեքսեևիչ Վա-

սիլևի և կարմիրբանակային Կարպ Պետրովիչ Վարֆոլոմեևի կենսագրությունները: Առաջին երկուսը պատերազմի տարիներին եղել են դիվիզիայի հրամանատարներ, երրորդը՝ սակրավոր: Եթե Լ. Կոլոբովը և Ն. Վասիլևը Հայրենական Մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո չեն ծառայել Հայաստանում, ապա Կ. Պ. Վարֆոլոմեևը ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ հաղթանակից հետո ապրել ու աշխատել է Երևանում: Մահացել է Երևանում 1971 թ. մարտի 31-ին:

Եզրափակման մեջ հանրագումարի են բերվել ուսումնասիրության արդյունքները: Բացի այդ նշվել է, որ պատերազմի տարիներին Հայաստանում են ապրել Խորհրդային Միության հերոսներ՝ գեներալ-լեյտենանտ Իվան Ստեպանովիչ Կոլեսնիկովի, գնդապետ Նիկոլայ Վասիլևիչ Բոգդանովի, մայոր Իվան Նիկոլաևիչ Զապորոժսկովի, ավագ սերժանտ Ալեքսեյ Ֆյոդորովիչ Երոխինի և կրտսեր սերժանտ Ալեքսանդր Իվանովիչ Վլադիմիրովի ընտանիքները (Դիլիջան, Երևան, Վանաձոր և Արտաշատ քաղաքներում):

Եթե Խորհրդային Հայաստանում ծնված 5 հերոսների անունները հիշատակվել են հայ պատմագրության մեջ, ապա վերոհիշյալ 8 ռուս հերոսների անուններն առաջին անգամ են չրջանառության մեջ դրվում, և դա էլ հենց այս ուշագրավ աշխատության առավելությունն է: Գիրքը գեղեցիկ ու խոսուն ձևավորմամբ հրատարակել է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, այն նկարազարդ է, դրանում զետեղված են հեղինակի ու վերը նշված հերոսների, նրանց նվիրված հուշակոթողների լուսանկարները: Մենագրությունը հրատարակվել է Ռուս-հայկական մարդասիրական հիմնադրամի «Ժառանգություն և առաջընթաց» ծրագրի ֆինանսական աջակցությամբ:

Վերջում մեկ-երկու դիտողություն-նկատառում և ցանկություն հայտնենք. այսպես, էջ 67-ում նշված է, որ Կրասնոսելսկ գյուղը գտնվում է Հայաստանի Լոռու մարզում, այնինչ պետք է լինի Գեղարքունիքի մարզում: Աշխատանքը մեծապես կշահեր, եթե խմբագրական-սրբագրական առումով լիներ անթերի, ունենար հայերեն և անգլերեն ամփոփումներ, նաև հավելված, որտեղ տրված կլինեին Հայաստանում ապրած ու պատերազմում զոհված 3444 ռուս զինվորների անունները:

Ինչևէ. ընթերցողի սեղանին է դրվել հետաքրքիր ուսումնասիրություն, որի նյութը նորություն է Հայրենական Մեծ պատերազմին նվիրված հայ պատմագրության մեջ:

ՎՈԼՈԴՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մանկ. գ. թ., ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության հիմնահարցը հայ պատմագրության մեջ: Հեղինակ է 15 հոդվածի: gavolodya@yahoo.com

ՀՏԴ : 655.11(479.25) + 947.925

ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1828–1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ (հոդվածների ժողովածու) / *Հ. Կ. Սուքիասյան, Ս. Հ. Պետոյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021, 238 էջ*:*

Բանալի բառեր՝ Շուշի, Գորիս, գրաքննություն, «արգելված գրականություն», «մանր տպագրություն»:

Արևելահայ գրահրատարակչական գործի սկզբնավորման ու զարգացման պատմությունը մինչ օրս համակարգային ուսումնասիրության չի արժանացել: Թեմային առնչվող առանձին աշխատությունները [օրինակ՝ Գ. Լևոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը» (1946 թ.), Ռ. Իշխանյան, «Հայ գիրքը. 1912–1920» (1981 թ.), Վ. Մաղալյան, «Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում» (2012 թ.), Ա. Սաֆարյան, «Հայ գրահրատարակչական գործը Ռուսաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին» (2017 թ.) և այլն] հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել արևելահայ գրատպության ընդհանուր համակարգի մասին և լիովին չեն արտահայտում այն գործընթացներն ու գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդել են գրահրատարակչական գործի հիմնադրման ու զարգացման վրա, կամ էլ՝ հակառակը՝ դարձել են խոչընդոտ անհատ ձեռնարկատերերի գործունեության համար և ճակատագրական դեր են ունեցել տպարանների հետագա գործունեության հարցում:

Այս առումով հայ գրահրատարակչական գործի պատմության ուսումնասիրության մեջ նոր բովանդակություն են բերում Հ. Սուքիասյանն ու Ս. Պետոյանը «Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828–1920 թվականներին» հոդվածների ժողովածուով, որում զետեղված են հեղինակների՝ նախորդ տարիներին գիտական տարբեր ամսագրերում հրապարակված կամ էլ առաջին անգամ հրատարակվող հոդվածները:

Ժողովածուում ներառված է 13 հոդված. դրանց հերթագայությունը պայմանավորված է ուսումնասիրվող նյութի և դեպքերի ժամանակագրությամբ: Հոդվածների թեմատիկ աշխարհագրությունն ընդգրկում է Շուշի, Գորիս քաղաքները, որոշակի զուգահեռներ են արվում նաև Էջմիածնի ու Կովկասի փոխարքայության կենտրոն՝ Թիֆլիսի իրողություններին, երկու առանձին աշխատանք նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին տպագրված գրքերին ու, այսպես կոչված, «արգելված գրականությանը»:

Առաջին հայացքից թեմատիկայով իրարից տարբերվող հոդվածները իրականում անբաժանելի միասնություն են կազմում, քանի որ ընդհանուր

---

* *Ներկայացվել է 22. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

առմամբ ներկայացնում են արևելահայ գրահրատարակչական գործի շուրջ մեկդարյա պատմության զարգացման օրինաչափությունները՝ մանրավոր օրինակներով արտացոլելով ուսումնասիրվող ժամանակաշրջանի համայնապատկերը:

Ժողովածուն աչքի է ընկնում արխիվային հարուստ նյութով, ինչը տվյալ գրքի ամենակարևոր ու ամենաուժեղ հենասյուներից մեկն է: Հեղինակներն աղբյուրագիտական աշխատանքներ են կատարել Հայաստանի և Վրաստանի ազգային արխիվներում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, ՀՀ գրականության և արվեստի թանգարանում: Բազմաթիվ փաստաթղթեր առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, և դրանց մանրակրկիտ զննության շնորհիվ բացահայտվում են անցյալի անցքերի նոր իրողություններ, տրվում են մի շարք հարցերի պատասխաններ, փոխվում են հարացուցային պատկերացումները դարաշրջանի ու տարածաշրջանի գրահրատարակչական գործի մասին:

Փաստաթղթերի բավական մեծ քանակ հայագիտական դաշտ է բերվել օտարալեզու աղբյուրներից: Դրանց միջոցով հեղինակներին հաջողվել է առավել կոնկրետ պատասխաններ տալ բազմաթիվ խնդրահարույց հարցերի, հետագա հետազոտողների համար էլ բացվել են աղբյուրների ուսումնասիրման նոր ուղղություններ:

Նորովի և մանրազնին են քննվել արդեն իսկ շրջանառության մեջ մտած բազմաթիվ փաստաթղթեր, գիտական ուսումնասիրություններ, պարբերական մամուլում տպագրված նյութեր, որոնց համադրությամբ հեղինակներն առաջ են քաշել նոր հայեցակարգեր և եկել են նոր եզրահանգումների:

Մեթոդաբանական տեսակետից ժողովածուի մեջ աչքի է ընկնում հեղինակների ընդգծված մոտեցումն անձի գործոնի կարևորության նկատմամբ: Ակնհայտ է, որ հրատարակչական գործի զարգացումը պայմանավորված էր կոնկրետ անձերի նպատակասլացությամբ և գործարար հատկանիշներով, որոնք տվյալ ժամանակաշրջանում համընկնում էին հայ ժողովրդի մշակութալուսավորական նկրտումներին: Այս առումով կրկին խմաստավորվել և սահմանվել է մի շարք հայ գործիչների դերը գրահրատարակչական գործի պատմության մեջ: Այսպես, Այսրկովկասում Ներսես Ե. Աշտարակեցու գործունեության մասին խոսելիս ընդգծվում է նրա լայնախոհությունը տպագիր արտադրանքի նկատմամբ. «Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին չի խոչընդոտել բողոքական քարոզիչների նախաձեռնությամբ տպված գրքի միջոցով աշխարհաբար արևելահայերենի տարածմանը: Ի պաշտոնե լինելով Այսրկովկասի հայերեն գրքերի հոգևոր գրաքննիչ՝ նա ոչ միայն չի խոչընդոտել, այլև նպաստել է հայերեն գրքերի հրատարակմանը» (էջ 17):

Արժևորվում է Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի առանձնահատուկ մոտեցումը հրատարակչական գործի նկատմամբ. «Մետրոպոլիտը գրքերի տպագրության համար ոչ միայն օգտագործում էր իր անձնական միջոցներն ու ներդնում հսկայական ջանքեր, այլև ներգրավում էր ժամանակի գիտակ և կարող անձանց՝ Շուշիում հրատարակելու հանրամատչելի և բովանդակալից դասագրքեր» (էջ 109): Ժողովածուում զետեղված է նաև Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի տպարանի մասին նորահայտ վավերագիր, որն արժեքավոր է տեղեկույթի պարունակությամբ և ներկայացնում է տպարանի պատմության որոշ էջերը, հրատարակված գրքերի ու դրանց նկատմամբ գրաքննական մարմնի մոտեցումները (էջ 116–124):

Հայագիտության մեջ առաջին անգամ մանրամասն ուսումնասիրվում է Մահտեսի-Հակոբյանցների հրատարակչական գործունեությունը Շուշիում, քննվում են տպագրական նշանավոր հաստատության գործունեության առանցքային հարցերը, սահմանվում են Մահտեսի-Հակոբյանցների տպարանի տեղն ու դերը Շուշիի մշակութային և կրթական կյանքում ու արևելահայ տպագրության պատմության մեջ (էջ 125–153):

Ժողովածուի մեջ երեք հոդված նվիրված է Շուշիի Բազելյան բողոքական քարոզիչների հիմնադրած տպարանի և դրանում տպագրված գրքերի պատմությանը: Ուսումնասիրողը՝ Ս. Պետոյանը, բավականին ուշադիր ու հետևողական քննություն է կատարում թե՛ նախկինում լույս տեսած ուսումնասիրությունների և թե՛ նոր երևան եկած փաստերի միջև, համադրության սկզբունքով մի շարք հետևությունների գալիս, որոնք, ըստ էության, փոխում են տվյալ թեմայի մասին մինչ օրս ձևավորված մի շարք պատկերացումներ: Ասպարեզ են բերվում անհայտ փաստեր, որոնք ամրապնդում են հեղինակի առաջ քաշած տեսակետները: Մասնավորապես, բացահայտվել է, որ 1828 թ. Շուշիում բողոքական քարոզիչները հրատարակել են ոչ թե մեկ, այլ չորս գրքույկ: Փաստորեն, նախկինում ունեցած տեղեկությունը, թե Շուշիում տպագրված առաջին գրքույկը եղել է աչխարհաբարով լույս տեսած «Պատմություն Սուրբ Գրոց»-ը, խմբագրման կարիք ունի: Հենվելով ծանրակշիռ փաստերի վրա՝ Ս. Պետոյանը հայտնում է՝ առաջին գիրքը եղել է «Լերան քարոզը» (1828 թ.), որի օրինակները կամ չեն պահպանվել կամ էլ լրացուցիչ որոնման կարիք ունեն (էջ 37):

Մեկ այլ հոդվածում Ս. Պետոյանը նկատում է, որ նախկինում Բազելյան քարոզիչների տպարանի գործունեությունը պատշաճ չի ուսումնասիրվել, քանի որ դա դիտարկվել է քարոզչական գործիքակազմի ներքո: Այդուհանդերձ, ակնհայտ է նրա դերը հայերեն գրքերի տարածման գործում, քանի որ արտադրանքի մի մասը բաժանվել է անվճար, մի մասն էլ՝ վաճառվել մատչելի գներով: Փաստորեն, այս տպարանը շահույթ չի հետապնդել, իսկ գրքերի հրատարակման ժամանակ կարևորությունը տրվել է ավելի շատ բովանդակությանը, քան ձևին (էջ 67–68):

Բազելյան բողոքական քարոզիչներին նվիրված երրորդ հոդվածում Ս. Պետոյանը ներկայացրել է կրոնական այս ուղղության ղեկավարների տպագրական քաղաքականությունը և Շուշիի տպարանի դերը տվյալ համատեքստում: Ակնհայտ է դառնում, որ բողոքականների գրահրատարակչական գործունեությունն ուներ միջազգային կողմնորոշում, բազմալեզու էր: Հայկական գրքերի օրինակով ցույց է տրվում բողոքականների տպագրական գործունեության ցանցային բնույթը, որի համաձայն՝ հայերենով գրքեր տպագրվել են ոչ միայն Շուշիում, այլև Ռուսական կայսրության ու արտասահմանյան տարբեր քաղաքների տպարաններում (էջ 69–82): Ս. Պետոյանը հավելվածով ներկայացնում է 1828–1835 թթ. բողոքական քարոզիչների կողմից Շուշիում տպագրած գրքերի ցանկը՝ ճշգրտված և ծանոթագրված: Նկատենք, որ նման մատենագիտական ցանկ մինչ օրս չի եղել (էջ 83–91):

Շուշիի մշակութային-լուսավորական կյանքի ևս մեկ կարևոր հաստատության՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերության տեղական մասնաճյուղի գրադարան-ընթերցարանի գործունեությանը վերաբերող հոդվածում ներկայացված են կազմակերպության հիմնական առաքելությունը, գործառույթները, առաջադրած խնդիրներն ու նպատակին հասնելու միջոցները:

Ուշագրավ է այն եզրահանգումը, որ Շուշիի գրաղարան-ընթերցարանը տարածաշրջանի ու տվյալ ժամանակաշրջանի կազմակերպված և գործունեության բարձր մակարդակ ունեցող մշակութային հիմնարկներից մեկն էր: Հոդվածը հետաքրքրական է նաև «գրաղարան - գրահրատարակչական արտադրանք - ընթերցող» հաղորդակցական փոխհարաբերության տեսանկյունից, որով բացահայտվում են ուսումնասիրվող ժամանակահատվածի հետաքրքիր իրողություններ Շուշի քաղաքի և Ելիսավետպոլի նահանգի բնակչության սոցիալ-մշակութային կենսակերպի մասին (էջ 186–203):

Տեղական գրահրատարակչական գործի զարգացման պատմության համար բավականաչափ կարևոր ուսումնասիրություն է նաև Գորիսի «Սասուն» տպարանին նվիրված հոդվածը, որի հեղինակը՝ Հ. Սուքիասյանը, ուշիզ կապ է տեսնում տպարանի հիմնադրման և Սյունիք-Զանգեզուրի տարածաշրջանում կրթամշակութային կյանքի զարգացման ու գրագիտության տարածման մեջ: Ներկայացված են նաև տպարանի հիմնադրման ու գործունեության որոշ դրվագներ տարբեր պետական հասարակարգերում, արտադրանքի տեսակներն ու հրատարակված գրքերի բովանդակության համառոտագրերը (էջ 204–219):

Հ. Սուքիասյանի մյուս երկու աշխատանքները նվիրված են Հայաստանի առաջին Հանրապետության գրահրատարակչական ոլորտի իրողություններին և տպագրված այն գրքերին, որոնք մինչ օրս անհայտ են եղել մատենագիտական աշխարհում:

Հեղինակը նկատում է, չնայած ՀՀ կառավարությունը հայտարարել էր տպագրության և մամուլի հարցում ժողովրդավարական մոտեցումներ, սակայն միշտ չէ, որ հետևում էր իր պարտավորություններին: Հրատարակչական ոլորտի վերահսկողությունն ու խստությունները, հրատարակությունների տարածման արգելքը պայմանավորված էին քաղաքական գործոններով: Մի դեպքում առկա էր ներքաղաքական ճգնաժամ, որը ստիպում էր կառավարությանն ավելի հետևողական լինել տպարանների գործունեության նկատմամբ, մյուս դեպքում՝ արտաքին քաղաքական ճնշումներն էին, որոնք վտանգում էին հայոց պետականությունը, և, ըստ էության, իշխանության լծակներն ուղղված էին բոլշևիկների՝ պետությունը հիմքերից քանդելու քայլերը չեզոքացնելուն (էջ 220–231):

Հ. Սուքիասյանն արձանագրում է՝ հայկական մատենագիտական ցանկերը լիակատար չեն և անընդհատ լրամշակվում ու սրբագրվում են, քանի որ ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս նոր հրատարակություններ: Գրքագիտության մեջ ներդրում են նաև հեղինակի հայտնաբերած 6 գրքերը, որոնք տպագրվել են 1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետությունում (էջ 232–235):

Այս ժողովածուի մեջ ուշագրավ է նաև պատմաբան Խաչիկ Սամվելյանի անտիպ հոդվածը հայկական մամուլի դրաքննության մասին, որի առաջաբանն ու ծանոթագրությունները կազմել է Հ. Սուքիասյանը (էջ 170–185): Մամուլի պատմությունն ուսումնասիրողների համար նյութը պարունակում է կարևոր տեղեկություններ և այլ տեսանկյունից է լույս սփռում գրաքննական իրողությունների վրա:

Հայագիտության մեջ հայկական գովազդի պատմությունը սկսվել է ուսումնասիրվել վերջին տասնամյակում: Այս առումով կարևոր ուսումնասիրություն է «մանր տպագրությանը» վերաբերող հոդվածը: Չնայած հեղինակները թատերական ազդագրերն ու ծրագրերը դիտարկում են զուտ որպես

աղբյուրագիտական արժեք, հոդվածում առկա են նաև կարևոր հարցադրումներ, որոնք ուղենշային են դառնում հետագա հետազոտողների համար (էջ 154–169): Այսպիսով, հայկական փոքր ձևաչափի հրատարակչական արտադրանքն առաջին անգամ է դառնում գիտական ուսումնասիրության առարկա:

Հեղինակների ուշադրությունը պետք է հրավիրենք հետևյալ դիտարկման վրա:

Հայագիտության մեջ մշտապես ընդունված է եղել Ներսիսյան դպրոցի տպարանի ծննդյան թիվն ընդունել 1823 թվականը, ինչը պայմանավորված էր առաջին գրքի լույսընծայմամբ: Սակայն հոդվածներից մեկում, որպես հիմնադրման տարեթիվ, նշվում է 1819 թ.՝ հղում կատարելով Վ. Մաղալյանի աշխատությանը (էջ 6): Մեր կարծիքով՝ Վ. Մաղալյանի վարկածը[1], որը բխում է Ա. Երիցյանի «Պատմութիւն Ներսիսեան հայոց հոգեւոր դպրոցի որ ՚ի Թիֆլիզ 75-ամեայ գոյութեան (1824–1899 թթ.)» աշխատությունից, հստակ վկայությունների ու ապացույցների կարիք ունի, քանի որ առավելապես ենթադրական բնույթի է, և այս առումով պահանջում է նոր փաստերի առկայություն: Օրինակ՝ 1820 թ. հունվարի 9-ին դանիացի լեզվաբան Ռասմուս Ռասկը գրում է, որ Թիֆլիսի միակ տպարանը պատկանում է Ռուսաստանի նահանգային վարչությանը և ունի վատորակ ռուսերեն ու վրացերեն տառատեսակներ…[2]: Կարծում ենք, որ լոկ տպագրահաստոցի, «փայտեայ մամուլի» կամ տառատեսակների առկայությունը չի վկայում հայկական տպարանի գործունեության մասին:

Հ. Սուքիասյանի և Ս. Պետոյանի՝ «Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828–1920 թվականներին» վերնագրով հոդվածների ժողովածուն իրապես կարևոր ու արդիական աշխատություն է գիտական տարբեր շրջանակների համար: Գրահրատարակչության, պարբերական մամուլի, գրքի, լրագրության պատմությունն ուսումնասիրողները, անշուշտ, կգտնեն կարևոր տեղեկություններ, որոնք հետագայում կարող են հիմնաքարային դառնալ իրենց ուսումնասիրություններում: Ժողովածուն հարուստ է ծանոթագրություններով և հղումներով, որոնք նույնպես արժեքավոր են մասնագետների համար:

ՏԱՐՈՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բ. գ. թ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ զանգվածային հաղորդակցության միջոցների և լրագրության տեսություն, պատմություն: Հեղինակ է 1 մենագրության և 52 հոդվածի:
t5plus@yandex.ru

[1] *Վ. Մաղալյան. Հայկական գրատպությունը Թիֆլիսում (XIX դար – XX դարասկիզբ).– ՊԲՀ, 2013, №3, էջ 63:*

[2] Р. Раск. Письмо Расмусу Нюэрупу. Цит. по: Л. Чекин. Расмус Раск в Грузии. – Issues of linguistics. 2016. Тбилиси, 2017, с. 165–179.

ՀՏԴ : 929:39 (479.25) Լալայան + 39 (479.25)

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ. ԵՐԿԵՐ ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ, ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ,

(հատորը կազմ. և տպագր. պատրաստ. Ս. Գ. Հոբոսյանը), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2021, 694 էջ:*

Բանալի բառեր՝ Երվանդ Լալայան, «Երկեր», Սյունիք, Գեղարքունիք, Վայոց ձոր, ազգագրական և բանահյուսական նյութեր, հնագիտական ու ճարտարապետական հուշարձաններ, վիմագրեր:

Անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանը (1864–1931) ծնվել է Ալեքսանդրապոլում, ավարտել՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, սովորել՝ ժնևի համալսարանի հասարակագիտական բաժնում, որն ավարտելուց հետո աշխատել է Վիեննայի Մխիթարյանների մոտ և Փարիզի մարդաբանական դպրոցում: 1895 թ. վերադարձել է հայրենիք ու սկսել իր բանահավաքչական գործունեությունը:

Հայաստանի պատմաազգագրական շրջանների վերաբերյալ նրա հավաքած նյութերը տպագրվել են 1896–1916 թթ. իր խմբագրած «Ազգագրական հանդես»-ի 26 հատորներում: Հանդեսը հրատարակվում էր որոշակի համակարգով. յուրաքանչյուր գիրք հիմնականում բաղկացած էր Հայաստանի որևէ գավառը կամ Կովկասի հայաբնակ շրջանը ներկայացնող ստվարածավալ ու համակողմանի նկարագրությունից:

Նկատի ունենալով Ե. Լալայանի հավաքած ազգագրական ու բանահյուսական նյութերի մեծ արժեքը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը նախաձեռնել է նրա գրավոր ժառանգության ամբողջական հրատարակությունը: Նշենք, որ «Երկերը» նախապես որոշվել էր հրատարակել հինգ հատորով, որից չորսում նախատեսված էին «Ազգագրական հանդես»-ում տպագրված նյութերը, սակայն հետագայում որոշումը վերանայվեց, և դրանք կհրատարակվեն վեց հատորով: Հինգ հատորում կընդգրկվեն «Ազգագրական հանդես»-ում տպագրված նյութերը, իսկ վեցերորդում՝ Ե. Լալայանի՝ ազգագրության, բանահյուսության, պատմության, հնագիտության և մշակույթի այլ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք հրատարակվել են տարբեր պարբերականներում:

«Երկերի» չորրորդ հատորում զետեղված են Սյունիքի (Զանգեզուրի գավառ), Գեղարքունիքի (Նոր Բայազետի գավառ) և Վայոց ձորի (Շարուր–Դարալագյազի գավառ) նյութական ու հոգևոր մշակույթին վերաբերող նյու-

* *Ներկայացվել է 29. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

թերը, որոնք ժամանակին հավաքել են Ե. Լալայանն ու տեղի մտավորականները՝ նրա իսկ կազմած ծրագրով:

Ե. Լալայանն իր ուսումնասիրություններն սկսել է տեղագրությամբ ու վիճակագրական տվյալներով, անդրադարձել բնակավայրին ու բնակարանին, տնտեսական զբաղմունքներին, կենցաղային սովորություններին, ընտանեկան բարքերին, ուտեստին, տարազին, հավատալիքներին, տոներին և բանահյուսությանը: Հատուկ անդրադարձել է պատմական տեսությանը, որի համար օգտագործել է մատենագրական աղբյուրներ և ուսումնասիրություններ (Մ. Խորենացի, Փ. Բուզանդ, Ստ. Օրբելյան, Ղ. Ալիշան, Քաջբերունի և ուրիշներ): Ազգագրական նյութերը նա հավաքել է հետևյալ ծրագրով.

Բնակավայրեր. հանգամանորեն ներկայացրել է դրանց աշխարհագրական դիրքը, շրջակա լեռներն ու ջրային ռեսուրսները, կլիման, կենդանական ու բուսական աշխարհը, հանքերը, լանդշաֆտային առանձնահատկությունները, հուշարձանները: Նշանավոր դյուղերն ու վայրերը նկարագրել է առանձին, դրանցել է դրանց առնչվող բանահյուսական, ազգագրական, հնագիտական տվյալները, շրջակա հուշարձանները և այլն:

Բնակարան. մանրամասն նկարագրել է տներն ու օժանդակ կառույցները, չինարարական յուրահատկությունները, սենյակները, կահ-կարասին, կատարված փոփոխությունները: Ուշագրավ է հատկապես Սյունիքին բնորոշ ժայռափոր տների (քրատակեր) և Նոր Գորիսի նորակառույցների, հնի ու նորի, եվրոպականի և ասիականի համադրությունը:

Ձգեստ և զարդ. Ե. Լալայանը նշում է, որ փոքրիշատե ունևոր ընտանիքներում կանայք սովորաբար երկու ձեռք շոր էին ունենում՝ սովորական (լիավուր/տնամիջի) և տոնական (դանավուր/մարդամիջի): Նա նկարագրում է սեռատարիքային տարբեր խմբերի հագուստը, դրա ձևվածքը, գույնը, կտորի տեսակը, բաղադրիչները, հատուկ ուշադրություն է դարձրել գլխի հարդարանքին ու ոտնամաններին:

Ընտանեկան կյանք. մանրամասն և հաջորդաբար նկարագրում է ամուսնական տարիքը, աղջիկ ընտրելու, նշանադրության և հարսանյաց սովորությունների, պսակի և դրա հետ կապված արարողությունների, ծեսերի, հավատալիքների և նույնիսկ ծախսերի ամբողջ շղթան: Ամուսնությանը հաջորդում են տղաբերքի ու կնունքի, հիվանդության և բժշկության, մահվան, թաղման ու հիշատակի օրերի, հոգու և հանդերձյալ կյանքի մասին հավատալիքները, ծեսերն ու արարողությունները: Հատուկ ուշադրության են արժանացել ազգակցական, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց անունները:

Տոներ. Ե. Լալայանը հիմնականում անդրադարձել է կենցաղում առավել տարածված տոներին ու ծեսերին, դրանց հիմնական բաղադրիչներին՝ սրբավայր, ուխտագնացություն, նախնիների հիշատակ, խաղ, երգ, պար, ծիսական ուտեստ, մասնակիցների սեռատարիքային կազմ և այլն:

Պաշտամունքային համակարգ. մանրամասն անդրադարձել է լեռների, ջրերի, քարերի, կրակի, օջախի, բույսերի, կենդանիների, ֆիզիկական երևույթների, ոգիների պաշտամունքին, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից պահպանված ու քրիստոնեության միաճուլված կրոնական ծեսերին և հավատալիքներին:

Ազգագրական նյութերից բացի, Ե. Լալայանն առանձնակի կարևորել է հնագիտական ու ճարտարապետական հուշարձանները (Տաթև, Միծեռնավանք, Կեչառիս, Սևանա վանք, Գնդեվանք, Ցախաց քար, Նորավանք, Եղեգիս, Արատես և այլն)՝ նկարագրելով հուշարձանը, վիմագրերը և այլն: Նա առաջիններից էր, ով ձեռնամուխ եղավ վիմագրերի վերծանությանն ու հրատարակությանը: Նրա ընդօրինակած շատ վիմագրեր, որոնք չեն պահպանվել, այսօր ունեն սկզբնաղբյուրի արժեք և օգտագործվել են «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի՝ Սյունիքին, Գեղարքունիքին և Վայոց ձորին վերաբերող հատորներում:

Գիտական մեծ արժեք ունեն նաև Ե. Լալայանի հրատարակած լուսանկարներն ու չափագրությունները: 1904 թ. նա լուսանկարել է Վայոց ձորի նշանավոր վանական համալիրներն ու արձանագրությունները, սակայն մի ավազակախումբ ղրանց նեգատիվներն ու այլ նյութեր գողացել է: 1908 թ. նշանավոր լուսանկարիչ Դ. Երմակովի հետ նա դարձյալ մեկնել է Վայոց ձոր: Այդ լուսանկարները նա օգտագործել է իր կազմած «Հայկական արձանագրություններ» խորագրով ալբոմում, որը 1914 թ. արժանացել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի Քանանյան մրցանակին:

Չնայած գրանցած արժեքավոր ազգագրական նյութերին՝ Ե. Լալայանը հայոց հիմնական տնտեսական զբաղմունքներին՝ երկրագործական և անասնապահական մշակույթին անդրադարձել է հակիրճ ու սեղմ, հաղորդել ընդհանրական տեղեկություններ՝ թերևս կարևորություն չտալով իր ժամանակի հանրահայտ իրողությանը, որի հետևանքով հայոց տնտեսական կենցաղի հիմնական զբաղմունքների մասին պատկերացումները թերի են:

Ե. Լալայանի «Երկերի» չորրորդ հատորը, ինչպես և նախորդները, ունի ծանոթագրություններ, անձնանունների և տեղանունների ցանկեր, նաև լուսանկարներ, որոնք բավականին կհեշտացնեն հետազոտողների աշխատանքը: Այս հատորում ևս պահպանվել է հեղինակի ոճն ու լեզուն, կատարվել են միայն մանանակի չակումներ, հին ուղղագրությունը փոխարինվել է նորով, տպագրական ակնհայտ վրիպակներն ուղղվել են:

Ցանկալի կլիներ, որ Ե. Լալայանի «Երկերի» նախորդ, ինչպես նաև այս հատորն ունենար ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր, ուստի հուսով ենք՝ հաջորդ հատորներում այդ բացը կլրացվի:

Նշենք, որ Ե. Լալայանի խնդրո առարկա հատորը տպագրվել է բարերար Ռաֆիկ Կառլենի Սիմոնյանի հովանավորությամբ:

ԱՆԺԵԼԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց հավաքչական մշակույթը և նրա արդի դրսևորումները: Հեղինակ է շուրջ 20 հոդվածի: anjela.nersisyan.1969@mail.ru

ՀՏԴ : 929:891.981 Լևոնյան + 7(479.25)

ՀՍՍՀ ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉԸ. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ*



ՀՍՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ, արվեստաբան, բանասեր, պատմաբան, մատենագետ, հրատարակչական գործիչ, խմբագիր, պրոֆեսոր Գարեգին Լևոնյանը ծնվել է Ալեքսանդրապոլում (ներկայումս՝ Գյումրի) 1872 թ. նոյեմբերի 21-ին, նշանավոր գուսան Ջիվանու (Սերոբ Լևոնյան) ընտանիքում:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կարգադրությամբ Մոսկվայում կամ Պետերբուրգում սովորելու համար 1896 թ. երեք տարի ժամկետով էջմիածնի վանքի հաշվին Լևոնյանին թոշակ է նշանակվում: Նա մեկնում է Մոսկվա, իսկ երկու տարի անց՝ Պետերբուրգ, որտեղ 1898–1901 թթ. սովորում է Պետերբուրգի արվեստների կայսերական ակադեմիայում՝ աշակերտելով նկարիչներ Կորովինին ու Ռեպինին: Այս տարիներին նա ծանոթանում և սերտ բարեկամություն է հաստատում Ն. Մառի, Մ. Սարյանի, Հ. Արծաթպանյանի, Ն. Ադոնցի, Մոսկվայում ու Պետերբուրգում բնակվող հայ արվեստագետների, գրողների և բանասերների հետ:

1902-ին Լևոնյանը մանկավարժական աշխատանքի է հրավիրվում էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ մինչև 1906 թ. դասավանդում է գեղարվեստի պատմություն և նկարչություն՝ չարունակելով իր ուսումնասիրություններն ու հետազոտությունները վանքի հարուստ մատենադարանում:

1906-ին Լևոնյանը մեկնում է Լայպցիգ, իսկ 1907-ին՝ վերադառնում Թիֆլիս, 1910–1911 թթ. դասավանդում է Ներսիսյան դպրոցում, ապա տեղափոխվում Երևան՝ 1926–27-ին դասավանդելով Երևանի գեղարվեստական տեխնիկումում, իսկ կյանքի վերջին տարիներին՝ թատերական ինստիտուտում և պետական համալսարանում:

Գ. Լևոնյանն աշխատակցել է «Նոր դար», «Մշակ», «Հանդես գրական և պատմական», «Ազգագրական հանդես», «Անահիտ» պարբերականներին, հանդես է եկել Գ. Լ., Գոչ, Գրասեր, Ճռինչ, Շավարշ, Մեֆիստոֆել և այլ ծածկանուններով:

Մահացել է Երևանում 1947 թ. հոկտեմբերի 28-ին:

Ծանրակչիռ է Գարեգին Լևոնյանի ավանդը խորհրդահայ արվեստագիտության և գրականագիտության զարգացման գործում: Ողջ կյանքը նվիրելով հայ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքների ուսումնասիրությանը՝ Գ. Լևոնյանը քննության է առել արվեստի ու բանասիրության տարբեր ոլորտ-

---

* *Ներկայացվել է 23. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

ների՝ մինչ այդ բոլորովին չհետազոտված կամ մասնակիորեն հետազոտված հարցերը: Գ. Լևոնյանը երբեմն հանդես էր գալիս ոչ միայն որպես տվյալ բնագավառի առաջին ուսումնասիրող, այլև՝ տեսաբան (աշուղագիտություն, մատենագիտություն, կիրառական արվեստի պատմություն և այլն):

Հայ արվեստաբանության մեջ Գ. Լևոնյանն առաջիններն էր, ով փորձեց ի մի բերել հայ արվեստի պատմությունը: Մնայուն արժեքներ են «Արճանագործությունը և քանդակը պատմական Հայաստանում» (1937), «Պարարվեստը հին Հայաստանում» (1940) և «Թատրոնը հին Հայաստանում» (1941) աշխատությունները: Իսկ աշուղագիտական աշխատությունները՝ քսանամյա երիտասարդի «Հայ աշուղներ» անդրանիկ ուսումնասիրությունը (1892), «Հայ ժողովրդական և աշուղական երգերը և նրանց փոխհարաբերությունը», «Սայաթ-Նովա», «Աշուղները և նրանց արվեստը», դրեցին աշուղական արվեստի տեսության հիմքերը: Լևոնյանը գիտական հրատարակության է պատրաստել Սայաթ-Նովայի երգերի (1931, ընդարձակ առաջաբանով), Ջիվանու երգերի (1936) և «Հայ աշուղներ» (1937) ժողովածուները:

Իր բնույթով եզակի է «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունը (1946), որը ներկայացնում է հայ ժողովրդի ստեղծած գրքային-մատենային հարուստ մշակույթն ու գրատպության բարձր արվեստը (V–XIX դդ.):

Գ. Լևոնյանը կազմել և հրատարակել է դասագրքեր՝ «Հայկական վայելչագրություն և գեղագրություն» (1908) և «Գծագրություն և նկարչություն» (մաս 1–2, 1909):

Իսկ 23-ամյա Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» ծանրակշիռ ուսումնասիրությունը (1895) դեռևս ձեռագիր վիճակում արժանացել է «Սահակ-Մեսրոպյան» մրցանակի:

Լևոնյանի արժեքավոր հետազոտություններից են «Գառնիի հեթանոսական տաճարի առեղծվածը» (1941) և «Էջեր հայ երաժշտության պատմության» (1945) աշխատությունները: Իսկ «Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ» (1938) ուսումնասիրության մեջ անվանի արվեստաբանն անդրադարձել է Հովնաթանյան տոհմի տաղանդավոր ներկայացուցիչների արվեստին՝ պատմամատենագիտական փաստերով և վերլուծություններով ներկայացրել Հովնաթանյանների ստեղծագործությունը:

Անժխտելի են Լևոնյանի տպագիր ու անտիպ ժառանգության պատմամշակութային արժեքն ու գիտական նշանակությունը: Սակայն նրա ստեղծագործական, գիտական-հրապարակախոսական գործունեության պսակը դարձավ «Գեղարվեստ» գրական-գեղարվեստական-երաժշտական պատկերազարդ հանդեսը (1908, Թիֆլիս)՝ հայ առաջին արվեստաբանական պարբերականը, որտեղ տպագրվում էին արվեստի բոլոր ճյուղերի՝ ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, պարարվեստի ու թատերական արվեստի վերաբերյալ պատմական ու տեսական, ինչպես նաև գեղագիտության և արվեստի փիլիսոփայության, գրականագիտության հարցերին նվիրված հոդվածները:

Նկատենք՝ Գարեգին Լևոնյանը և Կոմիտասը դեռևս 1905 թ. ամռանը որոշել էին Էջմիածնում հրատարակել գեղարվեստական-գրական հանդես, որի երաժշտական բաժնի խմբագիրը պիտի լիներ Կոմիտասը, իսկ կերպարվեստինը՝ Գ. Լևոնյանը:

1906 թ. փետրվարի 25-ին Գ. Լևոնյանը նամակով դիմում է Գևորգյան ճեմարանի վարչությանը՝ ճեմարանում չորս տարի իր ծառայության վերաբերյալ տեղեկանք ստանալու խնդրանքով: Ստանալով տեղեկանքը և լրացնելով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ ամսագիր հրատարակելու իրավունք ստանալու խնդրանքով Գ. Լևոնյանն ու Կոմիտասը 1906 թ. փետրվարի վերջին դիմում են Երևանի նահանգապետին: Ամիսներ անց՝ 1906 թ. սեպտեմբերին, Երևանի նահանգապետը մերժում է Գ. Լևոնյանի և Կոմիտասի «Գեղարվեստ» խորագրով հանդես հրապարակելու համար ներկայացված խնդրագիրը՝ պատճառաբանելով, թե Կոմիտասն օտարահպատակ է, իսկ Վաղարշապատն էլ քաղաք չէ:

«Գեղարվեստում» Լևոնյանը հանդես էր գալիս և՛ որպես խմբագիր, և՛ որպես արվեստագիտական, բանասիրական, փիլիսոփայական և գեղագիտական ստվարածավալ ու արժեքավոր հոդվածների հեղինակ: Ինչպես նկատել է Թերեզա Գալստյանն իր «Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը» աշխատության մեջ (1979). «Գեղարվեստ» հանդեսը (1908–1922) հայ մամուլի պատմության զարդերից մեկն է, որը, ժամանակի մշակութային նշանակալից, դեռ ավելին՝ բացառիկ երևույթ լինելով, այժմ էլ պահպանել է իր արժեքն ու հմայքը: Իր գիտական ու գեղարվեստական բարձր մակարդակով և նրբաճաշակությամբ դաստիարակել ու կրթել է հայ մտավորականության լայն շրջանների գեղագիտական ու գեղարվեստական ճաշակը, հարստացրել ու ընդլայնել նրանց մտահորիզոնը՝ արվեստը, գրականությունն ու փիլիսոփայությունն ընկալելու ժամանակի ռուս և եվրոպացի առաջավոր մտավորականների մակարդակով»:

Եվ պատահական չէ՝ հայ արվեստագետներից Գ. Լևոնյանն առաջինն էր, ով Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից արժանացավ Հանրապետության արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը՝ ծննդյան 60 և գրական-մշակութային գործունեության 40-ամյակի առթիվ (1932):

Հ. Գ. Ի դեպ, ժամանակին մեծ ջանքեր գործադրելով՝ կարողացել ենք Երևանի Բայրոնի փողոցի 12-րդ շենքի վրա տեղադրել պայծառ մտավորականի հուշատախտակը (այդ մասին մանրամասն տե՛ս «Գիտություն», № 9, սեպտեմբեր, 2022 թ.):

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՏԴ : 929:902/904 Ավետիսյան + 947.925

ՊԱՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ
(Ծննդյան 65-ամյակի առթիվ)*

Լրացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, հնագետ Պավել Սեդրակի Ավետիսյանի 65-րդ տարեդարձը: Նա անուրանալի ներդրում ունի Հայաստանում հումանիտար ու հասարակական գիտությունների զարգացման գործում և առաջին հերթին իր մասնագիտության՝ հնագիտության ոլորտում: Մարդկային պարզ ու անմիջական խառնվածքը, կշռադատված ու փաստարկված խոսքը, նվիրումը իր գործին և մասնագիտությանը, երիտասարդական ջիղն ու ավյունը Պ. Ավետիսյանին դարձրել են սիրելի ու հարգված գործընկեր թե՛ իր հարազատ ինստիտուտում, թե՛, առհասարակ, ակադեմիական առավել լայն շրջանակներում: Գիտական անաչառությունն ու հստակ փաստերի վրա հիմնված սթափ մոտեցումները լավագույնս բնորոշում են Ավետիսյան–գիտնականին ու գիտության կազմակերպչին:

Պ. Ավետիսյանը ծնվել է 1957 թ. Թբիլիսիում, իսկ մանկությունն ու պատանեկությունն անցկացրել Թալինում: 1965–1975 թթ. սովորել է Երևանի Րաֆֆու անվան թիվ 36 միջնակարգ դպրոցում, 1975–1980 թթ.՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո՝ 1980–1981 թթ., Պ. Ավետիսյանը կարճաժամկետ աշխատում է «Գիտելիք» ընկերությունում, որից հետո նրա աշխատանքային կենսագրությունն անցնում է հնագիտական հաստատություններում՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Երևանի պետական համալսարանի հնագիտության և ազգագրության ամբիոն ու լաբորատորիա: 1993 թ. մինչ օրս Պ. Ավետիսյանն աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ 2006–2021 թթ. լինելով այդ ինստիտուտի տնօրենը, իսկ 2022 թ.՝ գիտական ղեկավարը: Միաժամանակ, տարիներ շարունակ նա հնագիտական առարկաներ է դասավանդում Երևանի պետական համալսարանում՝ նպաստելով մասնագիտական նոր սերնդի ձևավորմանը: Պ. Ավետիսյանի տնօրենության տարիներին հնագիտության և ազգագրության ինստիտուտը լուրջ նվաճումների է հասել, որոնց չնորհիվ հաստատությունը ձեռք է բերել միջազգային համբավ: Նրա գիտական ղեկավարությամբ իրենց թեկնածուական թեզերն են պաշտպանել երիտասարդ ու խոստումնալից մի շարք հնագետներ: Նշանակալի գիտակազմակերպչական գործունեության համար

---

* *Ներկայացվել է 24. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

Պ. Ավետիսյանը պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով (2011 թ.) և ընտրվել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2014 թ.):

Պ. Ավետիսյանի գիտական ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջինն ընդգրկում է 30 տարվա ընթացքում իրականացված տարբեր հնագիտական հուշարձանների պեղումների և հետախուզական աշխատանքների մասին գործնական հրապարակումները: Երկրորդ խումբը միավորում է այդ աշխատանքների արդյունքում ի հայտ եկած տեսական բնույթի ուսումնասիրությունները:

Իր գիտական գործունեության ընթացքում Պ. Ավետիսյանը մասնակցել է բազմաթիվ հնագիտական հուշարձանների՝ դամբանադաշտերի և բնակավայրերի հետազոտությանը: Այդ աշխատանքներն իրականացվել են ինչպես հայկական, այնպես էլ միջազգային արշավախմբերով: Հիմնական դաշտային հետազոտություններն ուղղված են եղել բրոնզի և երկաթի դարերի (մ. թ. ա. մոտ 3500–500 թթ.) հուշարձանների ուսումնասիրմանը, ինչը և կազմում է Պ. Ավետիսյանի գիտական հետաքրքրությունների առանցքը: Աշխատանքների հաջորդ թիրախը եղել է նոր քարի և պղնձի դարերի (մ. թ. ա. մոտ 6000–3500 թթ.) հուշարձանների հետազոտությունը:

Պ. Ավետիսյանն իր գործունեությունը սկսեց Արագածի լանջերի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների հետազոտությամբ: Մասնավորապես, նրա ղեկավարած առաջին պեղումներն իրականացան Մաստարայի ու Թալինի բրոնզի և երկաթի դարերի դամբանադաշտերում՝ 1980-ականներին: Ըստ էության, այս պեղումները ելակետ դարձան նրա հետագա գործունեության և գիտական աշխարհայացքի ձևավորման համար:

Պ. Ավետիսյանի տեսակետների զարգացման համար հատկապես կարևոր ասպարեզ դարձան Ագարակի բրոնզ-երկաթեդարյան հուշարձանի պեղումները, որոնք անցկացվեցին նրա ղեկավարությամբ 2000-ականներին: Բազմաշերտ ժայռափոր բնակավայրի և սրբավայրի հետազոտությունը էապես ընդլայնեց լանդշաֆտային հնագիտության վերաբերյալ առկա պատկերացումները:

Էական է Պ. Ավետիսյանի ներդրումը հայ-ամերիկյան «Արագած» ծրագրի աշխատանքներում 2000-ականների սկզբից մինչ օրս: Այդ ծրագրի միջոցով հայ հնագիտության պատմության մեջ առաջին անգամ կանոնավոր հետախուզական աշխատանքներ կատարվեցին ամփոփ մի տարածքում՝ Ծաղկահովտի գոգավորությունում, ինչպես նաև՝ պեղումներ այդ գոտու մի քանի կարևոր բնակավայրերում (Ծաղկահովիտ, Գեղարոտ և այլն):

Պ. Ավետիսյանի մասնակցությամբ իրականացված բրոնզ-երկաթեդարյան այլ հուշարձանների բազմաթիվ պեղումներից հատկապես հիշարժան են Լոռիբերդում, Արտաշավանում, Սիսիանում, Ծաղկասարում և Քարաշամբում կատարված աշխատանքները: Բրոնզ-երկաթեդարյան Հայաստանի հետազոտության գործում արժեքավոր է Արագած լեռնահամակարգի հուշարձանների վերաբերյալ ամփոփ մենագրությունը՝ «Արագածը և իր հարակից շրջանները» վերնագրով, որը լույս է տեսել Օքսֆորդում 2007 թ. (անգլերեն) և ներկայում հայ հնագիտության առավել հղվող աշխատանքներից է:

Կարևոր է նաև Պ. Ավետիսյանի ավանդը նոր քարի և պղնձի դարի հուշարձանների հետազոտության բնագավառում: Այստեղ, առաջին հերթին, պետք է

նշել 2004 թ. Գոդեձոր բնակավայրում նրա ղեկավարությամբ իրականացված հայ-ֆրանսիական արշավախմբի պեղումները: Բացի այդ, նա էական ներդրում ունի քննարկվող դարաշրջաններին վերաբերող այնպիսի հուշարձանների հետազոտման գործում, ինչպիսիք են Մասիս-բլուրը և Առատաչենը: Այս հետազոտությունները զգալիորեն լրացնում ու ամբողջացնում են Հայկական լեռնաշխարհում վաղ երկրագործական հանրույթների առաջացման և զարգացման օրինաչափությունների մասին ունեցած մեր պատկերացումները:

Ահա վերոհիշյալ դաշտային աշխատանքների հիման վրա էր, որ որոշարկվեցին Պ. Ավետիսյանի տեսական հետազոտությունների հիմնական թիրախները: Դրանցից ամենահիմնականը Հայաստանի վաղ անցյալի ժամանակագրության և փուլաբաժանման խնդիրն է: Մինչև 1980-ականների վերջերը Հայ հնագիտությունն առաջնորդվում էր անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանի՝ Հայաստանի բրոնզի և երկաթի դարերին նվիրված հայտնի աշխատությամբ, որը լույս էր տեսել դեռևս 1964 թ.: Այդ ուսումնասիրության հրապարակումից անցել էին տարիներ, կուտակվել էր մեծաքանակ նյութ, որի հիման վրա հայ հնագետների նոր սերունդը ստիպված էր վերանայել ժամանակագրության և փուլաբաժանման ավանդական սանդղակները: Առաջին փորձերն այս ուղղությամբ կատարվեցին 1990-ականներին՝ Պ. Ավետիսյանի անմիջական մասնակցությամբ: Հետագա հետազոտություններում նա խորացրեց և տեսական բարձր մակարդակի հասցրեց նշված խնդրի ուսումնասիրությունը: Այդ աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին նրա թեկնածուական («Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը», Երևան, 2003), ապա և դոկտորական («Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XXIV–IX դարերում. սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների», Երևան, 2014) ատենախոսություններում: Պ. Ավետիսյանն իր տեսակետները զարգացնում էր ռադիոածխածնային մեծաքանակ տվյալների հիման վրա, ինչպես և համապատասխան տեսական ու մեթոդաբանական հենք ստեղծելով: Հայ հնագիտության մեջ առաջին անգամ նա քննարկվող խնդիրը ներկայացնում էր դարաշրջանների ընդհանուր զարգացումների, սոցիալական միջավայրի փոխակերպման և հաջորդափոխության դրսևորումների համատեքստում, ինչը, բնականաբար, ավելի արժանահավատ է դարձնում ժամանակագրության ու փուլաբաժանման մասին առաջ քաշված տեսակետները: Մարքսիստական՝ զուտ էվոլյուցիոնիստական տեսությունների փոխարեն նա առաջարկում էր կիրառել ժամանակակից սոցիոլոգիական մեթոդները, որոնք հենթադրել են տալիս ոչ միայն մշակութային միջավայրերի տրամաբանական հաջորդականությունը, այլև՝ համակեցությունն ու խաչաձերումը: Այս ամենի արդյունքում Պ. Ավետիսյանը քննարկում է Հայկական լեռնաշխարհում կոմպլեքս հասարակության ձևավորման ու զարգացման խնդիրները, ցույց տալիս այն առանձնահատկությունները, որոնցով բնորոշվում է մեր տարածաշրջանը ընդհանուր հինարևելյան համատեքստում:

Հնագույն Հայաստանի անցյալի հիմնարար խնդիրների վերաբերյալ Պ. Ավետիսյանի հետազոտություններն աստիճանաբար հարցադրումների շեշտը տեղափոխում են մետահնագիտական դաշտ: Հայկական լեռնաշխարհի դիրքը հին աշխարհի և, մասնավորապես, հին Արևելքի համապատկերում ճշտելու համար հեղինակն անդրադառնում է «աշխարհ-համակարգային» տեսութ-

յանը, որի հիմնական դրույթների (սահման, բնագիծ, սահմանային գոտի, ֆրոնտիր, չվման գոտի) վերլուծությամբ նա հիմնավորում է այն թեզը, թե հնագույն աշխարհ-համակարգը մ. թ. ա. VII հազարամյակի առաջին կեսին կազմալուծվում է՝ սկիզբ դնելով ռեգիոնալ ընդգրկում ունեցող նոր պատմական համակարգերի, որոնց սերտաճման արդյունքում ասպարեզ էին մտնելու բրոնզեղարյան աշխարհ-համակարգերը:

Պ. Ավետիսյանի վերոհիշյալ ուսումնասիրություններին բնորոշ են առկա հնագիտական խնդիրների տեսականացումը, հստակ մեթոդաբանության և եզրույթաբանության կիրառումը, միջգիտակարգային ու միջմասնագիտական աշխատաոճը: Սրան գումարած, նրա հետազոտություններն առանձնանում են գիտական բարեխղճությամբ. դրանք հայ հնագիտությունը բարձրացնում են հիրավի միջազգային մակարդակի: Այդ մասին են վկայում Պ. Ավետիսյանի աշխատությունների հազարավոր հղումները ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում:

Սրտանց չնորհավորում ենք մեր ուսուցչի տարեդարձը և նորանոր ձեռքբերումներ մաղթում նրան: Այսօր մեր երկիրն ու պետությունը, իրավամբ, կարիք ունեն այնպիսի նվիրյալների, ինչպիսին է գիտնական, քաղաքացի և ավագ գործընկեր Պավել Ավետիսյանը:

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 3 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: arsen.bobokhyan@sci.am

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վոխտնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանագիտության և լեզվաբանության խնդիրներ: Հեղինակ է 100 հոդվածի:
torqdal@yahoo.com

ՀՏԴ : 929:891.981 Զանփոլադյան + 891.981

МАГДА ДЖАНПОЛАДЯН
(К 80-летию со дня рождения)*

Исполнилось 80 лет видному литературоведу, туманяноведу, специалисту по русско-армянским литературным взаимосвязям, теории художественного перевода, доктору филологических наук, профессору Магде Георгиевне Джанполадян. Ее заслуги в области филологии отмечены орденом М. Шолохова муниципальной академии Российской Федерации (2004), литературной премией им. Левона Мкртчяна, учрежденной Союзом писателей Армении и Российско-Армянским (Славянским) университетом (2010). В 2012 г. она была награждена памятной медалью Министерства науки и образования Республики Армения; в 2014 г. Союзом писателей России ей была вручена медаль М. Лермонтова. В том же 2014 г. ей была вручена государственная награда Республики Армения – медаль Мовсеса Хоренаци. В 2017 г. Союз писателей Армении наградил ее медалью «За заслуги в литературе», а в 2019 г. она стала обладательницей золотой медали Ереванского государственного университета.

М. Джанполадян родилась 24 ноября 1942 г. в Ереване, в потомственной интеллигентной семье. Ее дед Есаи Джанполадян был владельцем нахиджеванских солерудников, но приобрел известность как национальный деятель, благотворитель[1].

Окончив школу им. Шевченко в Ереване, М. Джанполадян выбрала специальность филолога-русиста и поступила на факультет русского языка и литературы Ереванского государственного университета (ЕГУ), выпускницей которого стала в 1964 г. В том же году поступила в аспирантуру по специальности «Армянская литера-тура», а в 1968 г. защитила кандидатскую диссертацию на тему «Ованес Туманян и народный эпос», которая в 1969 г. была издана на армянском языке к 100-летию Туманяна. Исследование это, по единодушному мнению специалистов, – таких, как Мкртич Мкрян, Арам Ганаланян, Эдвард Джрбашян, Левон Ахвердян – явилось весомым вкладом в современное туманяноведение. Так, А. Ганаланян среди прочих заслуг монографии особо отметил высокую

* Представлена 28. X. 2022 г., принята к печати 08. XI. 2022 г.

[1] Подробно см.: *Է. Ա վ ա գ յ ա ն. Էրիվանի հայրերն ու այրերը, Երևան, 2002, էջ 48–53,* Э. А в а к я н. Мозаика Еревана. Ереван, 2012, с. 65–68.

культуру полемики автора. А научный руководитель диссертации Э. Джрбашян подчеркнул, что молодому аспиранту удалось разобраться в сложностях и особенностях творческой лаборатории Туманяна и благодаря своему самостоятельному научному мышлению, эрудиции и отличной теоретической подготовленности глубоко проникнуть в исследуемый материал и достичь неопровержимых результатов. В этой работе впервые и на высоком научном уровне была подвергнута подробному анализу туманяновская обработка эпоса «Давид Сасунский», исследованы туманяновские переводы из русского и сербского эпосов, а также проанализированы статьи поэта о народном эпосе. Свою докторскую диссертацию «Средневековые армянские литературные памятники («Давид Сасунский», «Книга скорбных песнопений») в русских переводах и критике» М. Джанполадян защитила в 2007 г., а в 2008 г. ей было присвоено ученое звание профессора.

С 1967 г. по настоящее время, а это ни много ни мало пятьдесят пять лет (еще один юбилей!), Магда Георгиевна работает в ЕГУ. С 2002 по 2013 гг. она по совместительству работала и в Российско-Армянском (Славянском) университете: до 2009 г.– научным руководителем Центра культурных и литературных инициатив имени Левона Мкртчяна, а более 10 лет – и как преподаватель. Помимо основного своего предмета – истории армянской литературы, она в обоих вузах вела еще различные спецкурсы в бакалавратуре и магистратуре: «Образ Армении в русской литературе», «Перевод и стиль», «Вопросы теории и критики художественного перевода», «Русские поэты – переводчики армянской литературы», «Перевод: проблемы адекватности» и др. А в магистратуре армянского филологического факультета ЕГУ она еще вела спецкурс «Туманян и народное творчество».

Понятно, что, читая курс истории армянской литературы на русском языке, невозможно игнорировать такой важный фактор, как художественный перевод. Насколько русские переводчики сумели воссоздать литературные, эстетические особенности оригиналов и творческую индивидуальность, черты стиля армянских классиков – на этот вопрос исследователю приходится отвечать и себе, и своим студентам, представляя им творчество каждого армянского автора. Так параллельно (независимо от отдельных спецкурсов) М. Джанполадян приобщает студентов и к вопросам теории и практики художественного перевода.

В научных и литературных кругах М. Джанполадян снискала славу очень внимательного, дотошного, взыскательного редактора, наделенного безупречным художественно-эстетическим вкусом. Для нее нет и не может быть ничего маловажного и несущественного: каждая деталь и каждая подробность в ее видении должна выполнять свою функцию и находиться на своем месте, в гармоничном единстве с другими составляющими данного предложения и всего текста. Все, что кажется ей лишним и ненужным, неуместным (а лишним и ненужным ей кажется очень многое), она решительно вычеркивает. Видимо, именно эту ее

Филологический журнал 2022 № 3 Историко-филологический журнал

скрупулезность и взыскательность имел в виду академик Л. Мкртчян, с долей самоиронии и в полушуточной форме поблагодаривший ее за то, что, редактируя его книгу, она пощадила его и великодушно оставила в ней целых 465 страниц. Заметим, кстати, что по мнению Л. Мкртчяна, Магде Георгиевне принадлежат в армянском литературоведении лучшие страницы, посвященные вопросам анализа художественного перевода.

М. Джанполадян является автором ряда монографических исследований и сборников статей. Это, кроме названной монографии «Туманян и народный эпос», «Давид Сасунский» в русских переводах и критике» (2012), «Книга скорби» Нарекаци в русских переводах и критике» (2012), «Русская жизнь «Давида Сасунского»» (2015, на арм. яз.), «В мире Туманяна» (2018). В сборниках «Когда строку диктует чувство…» (2006) и «На свете лишь одна Армения…» (2022) помещена лишь небольшая часть ее статей, поскольку их общее число приближается к 180.

В эти сборники, конечно, не вошли острые статьи автора публицистического характера, но сегодня нельзя не вспомнить и о них. Статьи эти были написаны в 1990-е годы, когда после развала СССР в независимой Армении некоторые «патриоты» ополчились против всего русского – как языка, так и культуры; когда в начале 90-х был снесен памятник Чехову у школы, носящей его имя; когда чудом уцелел памятник Пушкину, а в 1998 году, за несколько дней до начала конференции по русскому языку в Институте им. В. Брюсова, был сброшен с постамента памятник Брюсову – великому другу армянского народа!.. Статьи эти, развенчивающие подобный «патриотизм», были опубликованы в русскоязычных газетах «Голос Армении», «Урарту», в армянской газете «Айастан».

Надо сказать, что полемичность и острота присущи и некоторым статьям автора на литературные темы и проблемы, о чем говорят сами названия этих статей, к примеру: «Шок от книги», «О переводах, закрывающих оригинал», «Кривое зеркало подстрочника» и др. Что касается научно-исследовательских, литературно-критических статей М. Джанполадян, то они печатались как в республиканской периодике и отдельных сборниках, так и в России и в зарубежье. Из российских публикаций назовем газету «Литературная Россия», журналы «Вопросы литературы», «Дружба народов», «Литературное обозрение», «Вестник Северо-Восточного федерального университета им. М. К. Аммосова»; научные сборники московского Института мировой литературы им. Горького, сборник «Памятные книжные даты». Изданы ее статьи и в Белграде (сербские научные издания «Кньижевне новине», «Кньижевност»), Торонто, Иерусалиме («Иерусалимский журнал»). Хотелось бы особо отметить такие аналитические статьи Магды Георгиевны, как «Школа высокого искусства» (о переводе Николая Любимова повести Н. Зарьяна «Давид Сасунский» по мотивам армянского эпоса),

Филологические науки 2022 № 3 Историко-филологический журнал

«Зимний вечер» век спустя», «Армянская тема в критическом наследии Станислава Рассадина», «Ованес Туманян в восприятии и оценке русских переводчиков (30–60-е гг. XX в.)», «Об Анатолии Якобсоне и его переводах из Ованеса Туманяна», «Русская критика о фольклоризме Туманяна», «О воссоздании поэтики эпоса «Давид Сасунский» в русском переводе сводного текста», «Наум Гребнев – переводчик армянской поэзии», «Образ Армении в русской поэзии XX века», «Сергей Есенин в мире армянских поэтов», «Критические оценки В. Брюсова армянской поэзии: век спустя», «Тема Геноцида армян в русской поэзии второй половины XX века», «Саят-Нова на русском языке», «Проблемы литературных воздействий и связей в трудах Эд. Джрбашяна» и др.

В центре научных интересов и пристрастий М. Джанполадян всегда находился Ов. Туманян – как своей неразрывной связью с народным творчеством, активной и плодотворной переводческой деятельностью, так и пристальным вниманием к его творчеству нескольких поколений русских поэтов-переводчиков. Пять десятилетий М. Джанполадян занимается основополагающими проблемами теории художественного перевода – на конкретных образцах переводов с армянского на русский и с русского на армянский. Ее аналитические исследования представляют собой исключительную важность и непреходящую научную ценность и являются большим и серьезным вкладом в современное литературоведение. Вполне понятно и естественно, что она в первую очередь обращалась к творчеству тех русских поэтов-переводчиков, которые проявляли интерес к армянской поэзии, переводили армянских поэтов. Так, М. Джанполадян посвятила отдельные статьи Валерию Брюсову, Самуилу Маршаку, Вере Звягинцевой, Марии Петровых, Елене Николаевской, Михаилу Дудину, Науму Гребневу. Есть у нее и статьи о переводческом искусстве Альберта Налбандяна, Нины Габриэлян и др. Примечательно, что сами переводчики давали высокую оценку ее анализу их переводов. Так, Николай Любимов, прочитав в журнале «Литературная Армения» ее статью о его переводе упомянутой повести Н. Зарьяна, писал ей: «Ваш анализ перевода поразил меня своей глубиной и тонкостью, свободой от «мудрствования» лжетеоретиков перевода. Вот такой конкретный анализ дает переводчику очень много и заставляет вернуться к своей работе и вновь продумать ее»; «…У меня было такое впечатление, что Вы – ясновидящая: Вы угадали все самые главные мысли и желания, руководившие мной, когда я переводил «Давида». Это – редкий случай полного взаимопонимания между переводчиком и критиком» (письмо хранится в архиве М. Д.). А в дарственной надписи на своей книге «Перевод – искусство» (М., 1982) Н. Любимов пишет: «Дорогой Магде – с требованием написать книгу о художественном переводе». А Наум Гребнев в одном из своих посланий М. Джанполадян заметил: «Вы – то немногое в Армении, в чем моя любовь обрела взаимность». Он же по другому поводу высказался сле-

Филологический журнал 2022 № 3 Историко-филологический журнал

дующим образом: «Даже если в Армении меня никто, кроме Вас, не ценил бы, мне этого было бы достаточно».

Важной страницей в творческой биографии М. Джанполадян являются русскоязычные книги, где она выступает как составитель и автор примечаний. Это первый антологический сборник западноармянской поэзии (в соавторстве с А. Шаруряном, Л., «Библиотека поэта», Большая серия, 1983), «Ов. Туманян. Избранное» (М., «Художественная литература», 1988), сборник стихов Даниела Варужана (Ереван, «Советакан грох», 1985) и др.

Нелишним считаем подчеркнуть, что именно по публикациям М. Джанполадян русскоязычные читатели ознакомились с образом Армении в русской поэзии 1970–1980 гг., а также с собранными воедино откликами русских писателей и поэтов о Геноциде армян. Столь же важна ее большая статья «Тема Геноцида армян в русской поэзии второй половины XX века», опубликованная в 2016 г. У исследователя немало также публикаций, в которых армянские писатели, в частности, Х. Абовян и Ов. Туманян, предстают в оценке русской критической и литературоведческой мысли.

В заключение хотелось бы присоединиться к всеобъемлющей оценке Кима Бакши, которую он выразил, надписав свою книгу «Под синевой небес: повести и рассказы», подаренную Магде Георгиевне: «Дорогая Магда, спасибо Вам за Вашу верность великим поэтическим ценностям».

СУСАННА ОВАНЕСЯН

Д. филол. н., ведущий научный сотрудник отдела древней и средневековой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской культуры и классической армянской литературы, туманяноведение. Автор 15 монографий и более 200 статей и публикаций. sushovh@mail.ru

ՀՏԴ : 929:891.981 Չոլաքյան + 39(479.25)

ՀԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԻ (ՄԱՐՏԱ) ՉՈԼԱՔՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



Բնավորությամբ անչափ համեստ, հայագիտության բազմաթիվ բնագավառներ (մանկավարժություն, ազգագրություն, բանագիտություն, լեզվաբանություն, բարբառագիտություն, գրականագիտություն, պատմագրություն, սփյուռքագիտություն, հուշագրություն և այլն) ընդգրկող իր արժեքավոր հետազոտությունների քանակով՝ չափազանց «անհամեստ» Հակոբ Չոլաքյանը դարձավ 75 տարեկան:

Բազմավաստակ հայագետ-մանկավարժը ծնվել է 1947 թ. հոկտեմբերի 16-ին Սիրիայի Քեսապի շրջանի Գարատուրան գյուղում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Ազգային Մեսրոպյան և Քեսապի Հայ ավետարանական նահատակաց նախակրթարաններում: Միջնակարգ-երկրորդական ուսումն Այնճարի (Լիբանան) Հայ ավետարանական երկրորդական վարժարանում ստանալուց հետո՝ 1968-ին, նույն վարժարանում անցել է մանկավարժական աշխատանքի:

1969–1970 թթ. Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող լինելով՝ Հ. Չոլաքյանը 1970-ին ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Անսահման է Չոլաքյանի հայրենապաշտությունն ու բնապաշտությունը, իսկ նման աշխատասիրություն ու ձգտումներ ունեցող սփյուռքահայ ուսանողի կերպարը խորհրդային մտածողությամբ համակուրսեցիներիս համար անսովոր ու ինչ-որ տեղ անընկալելի, թերևս, նաև ուղենշային երևույթ էր: Երեք տարվա իր ուսանողական կյանքն անցկացրեց գերծանրաբեռնված ու գերհագեցած: Հ. Չոլաքյանը ոչ միայն հասցնում էր մասնակցել Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպված արշավներին, հիանալ հայոց բնաշխարհով ու հայկական ճարտարապետական հուշարձաններով, այլև «ազատ ժամերին» հանդիպել 1946-ին հայրենադարձված իր հայրենակից քեսապցիներին, նրանցից ձայնագրել ազգագրական և բանահյուսական նմուշներ, նույնիսկ ժողովրդական երգերը նոտագրել տալ Կոմիտասի անվան կոնսերվատորիայում:

Ինչ խոսք, այդ աշխատանքը նրան հոգեհարազատ էր, քանզի դեռևս 1969–1970 թթ.՝ Բեյրութի Հայկազյան քոլեջի հայագիտական ամբիոնի մասնավոր ուսանող եղած ժամանակ, նա զբաղվել էր բանահավաքչական աշխա-

* Ներկայացվել է 12. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:

տանքով և հասցրել նույնիսկ հավաքած նյութերից տպագրել իր ուսուցչապետ Գրիգոր Շահինյանի «Ահեկան» պարբերականում:

Երեք տարի սովորելով ԵՊՀ-ում և այդ ընթացքում հնգամյա կուրսի բոլոր քննությունները փայլուն հանձնելով՝ Հ. Զոլաքյանը 1973-ին բանասերի և հայոց լեզվի ու գրականության ուսուցչի որակավորմամբ վերադառնում է Այնճար: 1973–1976 թթ. նա աշխատում է տեղի Հայ ավետարանական, Բեյրութի Երվանդ Տեմիրճյան և Ազգային Խանամիրյան վարժարաններում: 1976 թ. Բեյրութում սկսված քաղաքացիական կռիվների պատճառով տեղափոխվում է Սիրիա և աշխատանքի անցնում Հալեպի Քարեն Եփփե ճեմարանում՝ միաժամանակ դասավանդելով Հալեպի Մխիթարյան վարժարանում ու Մխիթարյան հայագիտական ամբիոնում: 1996-ից Զոլաքյանը դասախոս է աշխատում նաև Հալեպի Համազգայինի հայագիտական հաստատությունում:

Սիրիայում սկսված իսլամիստ ծայրահեղականների ձեռնարկած քաղաքացիական պատերազմի և Հալեպի գնդակոծությունների պատճառով 2012-ին Հ. Զոլաքյանը ստիպված ընտանիքով տեղափոխվում է հայրենի Քեսապ՝ ծննդավայր Գարատուրան գյուղ, իսկ 2014 թ. մարտի 21-ին՝ Թուրքիայի հովանավորությունը վայելող հակապետական ծայրահեղ խմբավորումների՝ Քեսապ ներխուժումից հետո, նա վերջնականապես հաստատվում է Երևանում:

Թվում է՝ 67-ամյա բազմավաստակ մանկավարժ-հայագետը, իր վրա կրելով Բեյրութի, Հալեպի և քեսապյան պատերազմների հետևանքով եռակի արտագաղթի ճակատագիրը, Երևան է վերադարձել՝ վաստակած հանգիստը Մայր հայրենիքում վայելելու համար: Բայց եթե ոմանց համար ընդունելի և ինչ-որ տեղ նաև հաճելի կարող է հնչել «Ակուրս մաղել եմ, մաղն էլ պատից կախել եմ» առածը, ապա Զոլաքյանի նման պրպտուն միտք ու անհանգիստ բնավորություն ունեցող մշակի համար դա ոչ թե անելիքի ավարտն էր ազդարարում, այլ նոր սկիզբը, քանի որ նրա և՛ «ակուրն» է անսպառ, և՛ «մաղելիքը»՝ անվերջանալի:

Եվ քանի որ 2002-ին Հ. Զոլաքյանն իր աշակերտ, պ. գ. թ. Գևորգ Յազըճյանի պարտադրմամբ իր իսկ գրանցած նյութերի հիման վրա ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել էր գիտական թեզը[1] և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ուստի Հայաստան տեղափոխվելուց հետո ինստիտուտի տնօրինությունը վաստակաշատ գիտնական-մանկավարժին անմիջապես աշխատանքի է ընդունում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող: Իսկ 2016 թ.՝ Քեսապին նվիրված ծանրակշիռ դոկտորական ատենախոսությունը[2] պաշտպանելուց հետո, նրան տրվում է առաջատար, այնուհետև՝ մի քանի տարի անց, գիտական աննախադեպ գործունեության համար՝ գլխավոր գիտաշխատողի պաշտոն:

ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնը ևս 2014 թ. սիրով հրավիրում է Մայր բուհի իրենց նախկին սանին՝ արդեն բազմավաստակ

[1] *Անտիոքի մերձակա Ռուճի հովիտի հայերը (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), հրատ. «Ռիթէչըրտ եւ Թինա Գարոլան» հրատարակչական հիմնադրամի, թիւ 2, Անթիլիաս, 2006, 260 էջ:*

[2] *Հ. Զ ո լ ա ք յ ա ն. Քեսապ, հ. Ա, Հալէպ, 1995, 572 էջ, հ. Բ, Հալէպ, 1998, 568 էջ, հ. Գ, Հալէպ, 2004, 672 էջ:*

լեզվաբան, սփյուռքահայ դպրոցական և բուհական տասնյակ դասագրքերի հեղինակ Հ. Զոլաքյանին՝ համատեղությամբ դասավանդելու արևմտահայերեն: Համատեղությամբ նա մի քանի տարի աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի ավան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնում:

Միայն 2014–2022 թթ. հայրենիքում իր երկրորդ շնչառությունը ստացած Զոլաքյանը հրատարակում է ազգագրական, լեզվաբանական, հուշագրական և այլ կարգի ավելի քան 16 գիրք:

Բեղուն և բազմաշնորհ է 75-ամյա Հ. Զոլաքյանի վաստակը՝ տարբեր բնագավառներ ընդգրկող շուրջ 60 գիրք, պարբերականներում տպագրված բազում հոդվածներ, մեծ արձագանք գտնող համացանցային տարաբնույթ գրառումներ, ակնարկներ, զանազան օգտաշատ հարցազրույցներ, գիտական և մանկավարժական զեկուցումներ ... Ժողովուրդը նման տաղանդաշատ մարդկանց համար ասում է. «Աստված որ մեկին տալիս է, էլ չափ ու սահման չի ճանաչում»:

Բացի աստվածատուր բանաստեղծական շնորհքից, Զոլաքյանը մանկավարժության այն եզակի նվիրյալներից է, ով ուսուցչություն-դասախոսությունը զուգակցել է իր իսկ պատրաստած դպրոցական և բուհական դասագրքերի հրատարակությամբ: Նրա հեղինակած դպրոցական դասագրքերը ավելի քան երեք տասնամյակ է՝ կիրառվում է Սփյուռքի տարբեր գաղութների հայկական նախակրթարանների ու միջնակարգ և երկրորդական դպրոցներում:

Բերիո թեմի ազգային առաջնորդարանի հովանավորությամբ Հ. Զոլաքյանի պատրաստած գունատիպ «Հայերէնի դասագիրքս»՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (1990–1993) 6 գրքերի շարքերը՝ ուսուցչի համար համապատասխան ուղեցույցներով, բովանդակությամբ, մեթոդով, ձևով ու նպատակներով նորություն էին ոչ միայն հայկական սփյուռքում, այլև Հայաստանում: Իսկ միջնակարգ և երկրորդական կարգերի համար Զոլաքյանի պատրաստած գրականության և լեզվի «Անդաստան» ձեռնարկի Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ (2009–2014) 6 գրքերի շարքերում լեզվագիտությունն ու գրականությունը համընթաց ընթանում են մինչև 12-րդ կարգ:

Հայրենիքում Զոլաքյան մանկավարժը բուհերի բանասիրական ֆակուլտետի ուսանողների համար իրար հետևից հրատարակում է ավանդական ուղղագրության ու արևմտահայերենի քերականության նվիրված մի շարք ձեռնարկներ՝ «Աւանդական ուղղագրութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ)» (2016), «Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Ա. գիրք» (2017), «Արեւմտահայերէնի կանոնակարգման հարցեր (Չթեքուող խօսքի մասեր)» (2018), «Գործնական արեւմտահայերէն» (2018), «Արեւմտահայերէնի քերականութիւն (կանոնակարգ եւ խնդիրներ), Բ. գիրք» (2019) և այլն:

Ճիշտ է, Հ. Զոլաքյանի առաջին գիրքը՝ «Այսպէս սկսաւ գարունը» (1970), քնարականությամբ լեցուն պոետիկ հոգու առաջին, բայց հասուն ճիչն էր, այնուամենայնիվ, բանաստեղծությունների ժողովածուի լույս ընծայումից հետո 23-ամյա Զոլաքյանը մտածված իր մեջ լռեցրեց բանաստեղծին և գիտակցաբար դարձավ ավելի քան մեկ հազարամյակ առաջ՝ IX–XI դդ. լայնածավալ գաղթի հետևանքով Միջերկրականի ափամերձ Անտիոքի տարածաշրջանի

Քեսապի շրջանում հանդրվանած հայությեան նյութական և բանավոր մշակութային ժառանգության ժողովրդական մատենագիրը: Եվ պատահական չէ, որ Հ. Զոլաքյանի հրատարակած գրքերի գերակշիռ մասը շուրջ 3 տասնյակ կազմում են հենց այդ տարածաշրջանի հայության պատմա-ազգագրական և բանասիրական աշխատությունները՝ «Քեսապի ժողովրդական երգարուեստը», «Միջ-գաւառական Անեքթոտներ», «Քեսապ, Ա, Բ, Գ հատորներ», «Քեսապի բարբառը», «Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը. պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն», «Ցամքած Աղբիւրը Նորէն Կը Բխի (Սարգիս Գապաղեանի պատումը Մուսա Լերան հերոսամարտի մասին)», «Քեսապի երեք Օրերը (21–23 Մարտ, 2014)», «Քեսապի նիւթական մշակոյթը» և այլն:

Սիլյուքագիտության համար արժեքավոր են Արևելքի հայկական գաղթօջախներին նվիրված Զոլաքյանի ուսումնասիրությունները, հատկապես՝ հայկական դպրոցների հուշամատյանները՝ «Յիսնամեակ Քարէն Եփիճ ազգային ճեմարանի» (1947–1997), «Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի» (1927–2007), «Ոսկեմատեան Քուէյթի ազգային վարժարանի» (1961–2011), «Տարեգրութիւն Հալէպի Հայ աւետարանական Բեթէլ վարժարանի» (1923–2013):

Զոլաքյանը ստվարածավալ երկու հատորով ներկայացրել է սիրիահայ դպրոցի պատմությունը՝ նկարագրելով նաև շուրջ 110 հայաբնակ վայրերում գործող 240 ամենօրյա և դրանց կից՝ կիրակնօրյա, երեկոյան, դիշերային, արհեստի ու ամառային դպրոցները [«Սուրիահայ Դպրոցի Պատմութիւն, հ. Ա, հ. Բ» (2021)]:

Մանկավարժական և բանասիրական բազմաբնույթ գործունեության առընթեր՝ գրականությունն ու գրականագիտությունը միշտ Զոլաքյանի առօրյայի մասն են կազմել: Սիլյուքում Զոլաքյանը եղել է հայ գրողների հոբելյանական հանդիսությունների փնտրված ատենաբանը: Նա իր ելույթներով, հոդվածներով ու մենագրություամբ հանրությանն է ներկայացրել գրական որոշ շրջանակների (Սիրիա, Կ. Պոլիս, Արցախ) հայ գրականության առօրյան [«Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը» (1990)]:

Եթե Հ. Զոլաքյանի ու նրա հրատարակած գրքերի մասին շուրջ 80 հոդվածներ, գրախոսություններ են գրվել ու գնահատանքի խոսքեր ասվել, այնուամենայնիվ, ինձ չհաջողվեց վաստակաշատ ու բազմաշնորհ մանկավարժ-հայագետի վաստակը ըստ արժանվույն գնահատելու վերաբերյալ Սիլյուքի տարատեսակ կառույցների և միությունների կամ հայկական ազդեցիկ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից որևէ փաստ ու վաստաթուղթ գտնել:

Դրան հակառակ, Մայր հայրենիքը, բարձր գնահատելով սիլյուքահայ բազմավաստակ մտավորականի մանկավարժական և գիտական գործունեությունը, Հ. Զոլաքյանին 2010 թ. պարգևատրում է ՀՀ վարչապետի Պատվո հուշամեդալով, իսկ 2011-ին՝ ՀՀ նախագահի Մովսես Խորենացի շքանշանով:

Որքան էլ հաճելի ու պատվաբեր լինեն հայրենի պետությունից ստացած պարգևները՝ Զոլաքյանի համար ամենամեծ կոչումը «ՈՒՍՈՒՑԻՉ ԸԼԼԱԼՆ է»: Իր 54 տարիների ուսուցչությունը համարում է իր ամենամեծ պարգևն ու նվաճումը:

Այս տարվա գարնան վերջին 75-ամյա Հ. Զոլաքյանը Մայր բուհում իր ուսուցչական գործունեությունը դադարացնելու վերաբերյալ հայտարարություն էր արել: Այդուհանդերձ, նա այն եզակի մանկավարժ-գիտնականներից է, որի հանգիստը հայությանը, հայկական կրթօջախներին ու գիտությանը մինչև վերջին շունչը ծառայելն է:

Ավելի քան կեսդարյա իմ կուրսընկեր և գործընկեր Հ. Զոլաքյանն այժմ էլ գիտական աշխատանքային գործունեությանը զուգահեռ՝ առկա և առցանց եղանակով չարունակում է մանկավարժական բուռն գործունեություն ծավալել: Նա լեզվի ուսուցման մեթոդական ու գործնական աշխատանքներ է վարում Սիկյուռքի հայկական մի շարք դպրոցների ուսուցչական խմբերի հետ, նրանց հետ անցկացնում տիպար դասեր, ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ մասնակցելով նաև հայոց լեզվի ուսուցմանը, հայեցի դաստիարակությանն ու հայ դպրոցին նվիրված գիտաժողովներին, հանդես գալով ուսուցման զանազան հարցերին նվիրված հոդվածներով:

Ծննդյան 75-ամյակի կապակցությամբ չնորհավորենք բազմավաստակ հայագետ-մանկավարժ Հակոբ Զոլաքյանին ու ցանկանանք՝ այսուհետ ևս երիտասարդական ավյունով չարունակի իր ազգանվեր գործունեությունը՝ ի նպաստ արևմտահայերենի պահպանման և հայ մշակույթի ու գիտության զարգացման:

ԱՐՄԵՆ Շ. ՍԱՐԳՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության պատմության և տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ բանահավաքչություն, գրականություն և բանահյուսության փոխառնչության հարցեր, երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ, մանկական զվարճախոսություններ, հայ ժողովրդական պատումներ: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 90 հոդվածի: armensargg@gmail.com

ՀՏԴ : 929:891.981 Գասպարյան + 891.981

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*

Լրացավ վաստակաշատ գրականագետ, գրաքննադատ, հայտնի չարենցագետ, հայ գրականության լավագույն գիտակ Դավիթ Գասպարյանի ծննդյան 75-ամյակը:

Դ. Գասպարյանը ծնվել է 1947 թ. հոկտեմբերի 18-ին Երևանում, ուսուցչի ընտանիքում: Դպրոցն ավարտել է 1965-ին և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունք, որից հետո՝ 1971-ից, աշխատանքի է անցել ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնում: Այստեղ էլ բացահայտվել են նրա ստեղծագործական կարողությունները: Կազմել է նորագույն շրջանի հայ գրականության տարեգրություն, որը զետեղվել է «История советской многонациональной литературы. Летопись 1917–1967 гг.» (М., 1974), *այնուհետև «Սովետահայ գրականության տարեգրություն. 1957–1975» (Երևան, 1975) գրքերում:*

1974 թ. պաշտպանել է «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը 1940–1970-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը և հրատարակել «Սովետահայ պոեզիայի տաղաչափությունը» (Երևան, 1979) աշխատությունը, որն արժանացել է բարձր գնահատանքի: Դրանից հետո գրականագետը զբաղվել է նորագույն շրջանի՝ հատկապես 1920–1930-ական թվականների գրականության պատմության ուսումնասիրությամբ և հրատարակել «Եղիշե Չարենցը և 1920-ական թթ. սովետահայ պոեզիան» (Երևան, 1983) աշխատությունը, իսկ մեկ տարի անց պաշտպանել դոկտորական ատենախոսություն: Ավելորդ չէ նշել, որ գրականագիտության ասպարեզում ամենաերիտասարդ տարիքում գիտության դոկտորի աստիճանի հասած մասնագետն է: Այնուհետև նրա մասնակցությամբ և խմբագրությամբ լույս տեսավ «Սովետահայ պոեզիայի պատմություն» (Երևան, 1987) գիրքը:

Դ. Գասպարյանը գրականության ինստիտուտ ընդունվեց որպես լաբորանտ, այլ աշխատանքի անցավ որպես գիտության գծով փոխտնօրեն: 1989–1991 թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմում որպես գաղափարախոսական բաժնի վարիչի տեղակալ, 1995–1998 թթ.՝ որպես ԵՊՀ հրատարակչության տնօրեն, 1999-ից՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ արտասահմանյան գրականության և գրականության տեսության ամբիոնի դասախոս, 2001–2005 թթ.՝ նույն ամբիոնի վարիչ: 1992-ից աշխատանքի է հրավիրվել նաև Կրթության ազգային ինստիտուտ (մինչև 2004 թ.՝ Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ,

* *Ներկայացվել է 26. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

կրթության բարեփոխման ինստիտուտ), որտեղ մինչև 2018 թ. աշխատել է որպես կաբինետի վարիչ, գլխավոր մասնագետ: 2020 թվականից ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն շրջանի հայոց պատմության բաժնի առաջատար գիտաշխատող է:

1993–2018 թթ. դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում: Եղել է գանազան գիտական, մասնագիտական, խմբագրական խորհուրդների անդամ: Նրա ղեկավարությամբ բազմաթիվ երիտասարդ մասնագետներ դարձել են գիտության թեկնածուներ: Այս ընթացքում խմբագրել է «Քննադատական տարեգիրք» հանդեսը (1985–1990) ու «Հայոց լեզու և գրականություն» (2000–2017) ամսագիրը:

Դ. Գասպարյանն արժանացել է Մովսես Խորենացի (2015), Երախտագիտություն (2017) մեդալների, Ակսել Բակունց ոսկե հուշամեդալի, Արվեստի վաստակավոր գործչի (2011) պատվավոր կոչման, ՀԳՄ Միքայել Նալբանդյանի (1984) և Նիկոլ Աղբալյանի անվան (2010) մրցանակների, պարգևատրվել է Մշակույթի (2007, 2012) և Կրթության ու գիտության (2007, 2014) նախարարությունների Ոսկե հուշամեդալով: Արժանացել է նաև տարբեր պարգևների, պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Ուր էլ եղել և ինչ էլ արել է Դ. Գասպարյանը, նրա ուշքն ու միտքը եղել են իր հոդվածներն ու գրքերը: Մի նոր ստեղծագործական ալիք նրան համակեց 1985 թվականից հետո, երբ հանրային կյանքում հաղթեցին ազատամտության գաղափարները: Այս ընթացքում նա ուսումնասիրեց գրական և կուսակցական արխիվները, կուտակեց արտակարգ հարուստ նյութ, ճչտեց ու ճշգրտեց գրողների կյանքին ու գործունեությանը վերաբերող կենսագրական, գրական-ստեղծագործական փաստեր, հրապարակեց սկզբնաղբյուրներ, բնագրեր, տպագրեց հոդվածներ և լույս ընծայեց գրքեր՝ «Հայ խորհրդային գրականության պատմական զարգացման ուղին: Վերելքներ և անկումներ» (Երևան, 1989), «Պոեզիան և կյանքի ճշմարտությունը» (Երևան, 1990), «Ողբերգական Զարենցը» (Երևան, 1990), «Հայրենիք և ճակատագիր» (Երևան, 1991), «Փակ դռների գաղտնիքը: Զարենցը, Բակունցը և մյուսները» (Երևան, 1994): Այս գրքերն ունեցան իրենց գործնական նշանակությունը եոխորհրդային շրջանի գրականագիտական միտքը ձևավորելու գործում: Իսկ դա նշանակում էր ազատագրվել կարծրատիպերից և նոր հայացքով թարմացնել գրականագիտությունն ու գրական քննադատությունը:

Այս շրջանակի մեջ պետք է դիտել նրա հրապարակումներն ու մենագրությունները՝ նվիրված Զարենցին, Բակունցին, Մահարուն և այլ գրողների: Հատկապես Զարենցի ժառանգության ուսումնասիրության և հրապարակման գործում նա մեծ ներդրում ունի: Շարունակելով չարենցագիտության լավագույն ավանդույթները (Հարություն Սուրխաթյան, Սուրեն Երզնկյան, Սիմոն Հակոբյան, Ալմաստ Զաքարյան, Էդվարդ Ջրբաշյան, Սուրեն Աղաբաբյան և ուրիշներ) և լիարժեք օգտագործելով նոր ժամանակների գաղափարական ազատության հնարավորությունները՝ նա ձգտեց ստեղծելու Զարենցի ամբողջական կերպարը: Հեղափոխական Զարենցի կողքին նախ՝ տեսավ ողբերգական Զարենցին, ապա՝ ձգտեց նրա կյանքի ու գործունեության լիարժեք բացահայտմանը: Հրապարակեց Զարենցի անտիպ ժառանգության երկու գիրք՝ «Նորահայտ էջեր» (Երևան, 1996), «Գիրք մնացորդաց» (Երևան, 2012, լրացված՝ 2017), «Զարենցի հետ: Հուշեր»-ի երկու գիրք (Երևան, 1997, 2008), ուսումնասիրություններ՝ «Եղիշե Զարենց: Հայոց բանաստեղծության մայրաքա-

ղաքը» (Երևան, 1996), «Չարենցյան ասույթներ» (Բեյրութ, 1997): Գրեց «Եղիշե Չարենցի հավատաքննությունը կամ Բանաստեղծի վերջին աղոթքը» դրամատիկ երկը (Երևան, 2003), լույս ընծայեց գրողի «Ընտիր երկեր»-ի քառահատորյակը (Երևան, 2012–2015): Հիմա էլ «Տիգրան Մեծ» հրատարակչությունում տպագրական ընթացքի մեջ է նրա «Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը» հիմնարար աշխատությունը, որը նրա նախատեսած եռահատորյակի առաջին գիրքն է: Հաջորդ հատորները նվիրվելու են գրողի ստեղծագործության և արվեստի վերլուծությանը: Գրականության ինստիտուտի և Չարենցի տուն-թանգարանի համագործակցությամբ սկսել է 13 հատորով Չարենցի երկերի գիտական նոր հրատարակության կազմակերպական և խմբագրական աշխատանքները:

Բակունցին են նվիրված «Ժառանգություն: Բնագրեր: Ուսումնասիրություն» (Երևան, 1999), «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց: Մեղադրական գործ № 4131» (Երևան, 1999), «Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 2009) գրքերը: Գուրգեն Մահարուն նվիրված բազմաթիվ հոդվածներից հետո լույս ընծայեց «Գուրգեն Մահարի: Կյանքը և ստեղծագործությունը» (Երևան, 2013) մենագրությունը: Նոր փաստերով ու բացահայտումներով Գասպարյանը նորոգեց այս հեղինակների կյանքի ու գրական ճանապարհի պատկերը: Ուսումնասիրություններ է նվիրել Թումանյանի, Տերյանի ստեղծագործական առանձին էջերի լուսաբանմանը:

Այս շարքի մեջ պետք է դիտել նաև նրա «XX դար: Հայ գրողներ» մատենաշարով լույս տեսած մենագրությունները՝ նվիրված Պարույր Սևակին (Երևան, 2001), Համո Սահյանին (Երևան, 2003) և Վահագն Դավթյանին (Երևան, 2007): Շարքը շարունակվում է «XXI դար: Հայ գրողներ» մատենաշարով. լույս են տեսել «Հոգու հայելի» (2017) և «Հրե վարդ» (Երևան, 2018) մենագրությունները՝ նվիրված ժամանակակից բանաստեղծությանը:

Դ. Գասպարյանը հայ գրականության համակողմանի ուսումնասիրող է: Այս տեսակետից նշանակալի են նրա «Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն» (Երևան, 2009), «Հայկական ապագայապաշտություն» (Երևան, 2009), «Բանք հայոց» (Երևան, 2017) մենագրությունները և «Հայկական Վերածնունդ» ուսումնասիրությունը («Հայկական հայագիտական հանդես», Բեյրութ, 2017, թիվ 37):

Այս շարքում պետք է դիտել նաև նրա հոդվածների ժողովածուները՝ «Բանաստեղծության ոգին» (Երևան, 1980), «Ժամանակ և չարժամ» (Երևան, 1984), «Հելիկոնի աստղը» (Երևան, 1988), «Երկնային չուշան» (Երևան, 2004), «Քննադատությունն ընդդեմ քննադատության» (Երևան, 2017), ինչպես նաև «Հայ գրականություն» մատենաշարի վեց գրքերը (Երևան, հ. 1–4, 2000–2010, հ. 5–6, 2016–2017): Գասպարյանի ստեղծագործական կերպարն ամբողջական դարձնելու համար ասենք, որ մասնակցել է հայկական հանրագիտարանների, «Հովհաննես Թումանյան» (2020) հանրագիտարանի աշխատանքներին, գրել բազմաթիվ բառահոդվածներ:

Զբաղվել է նաև համաշխարհային գրականությամբ՝ Լերմոնտով, Ուիթմեն, Մայակովսկի, Եսենին, Բուլգակով, Այթմատով, Դոմբաձե, Մարկես, Սարոյան: Նրա առաջաբաններով ու խմբագրությամբ լույս են տեսել «Ամերիկահայ անգլիագիր բանաստեղծներ» (Երևան, 2010) և Դավիթ Խրդյանի «Ճանապարհ տնից» (Երևան, 2015) գրքերը:

Կազմել, խմբագրել է բազմաթիվ գրքեր, գրել առաջաբաններ, որոնցից կառանձնացնենք միայն հմտությամբ և ճաշակով իրականացված հայ քնարերգության «Ոսկե շղթա» ընտրանին, որը կարճ ժամանակի ընթացքում ունեցավ երկու հրատարակություն (Երևան, 2014, 2019):

Առանձին էջ է Դ. Գասպարյանի գիտակրթական գործունեությունը: Տարիներ շարունակ, ինչպես ՀՀ-ում, այնպես և Արցախում, Վրաստանի հայկական դպրոցներում վարել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, մանկավարժների օգոստոսյան խորհրդակցություններ, գրել է մեթոդական ուղեցույցներ, ուսուցչի ձեռնարկներ, կազմել ծրագրեր: 1993 թվականից ավագ դպրոցի նախ՝ 10-րդ, ապա՝ 11–12-րդ դասարանների «Հայ գրականություն», 2011 թվականից՝ 7–9-րդ դասարանների «Գրականություն» գործող դասագրքերի հեղինակն է, որոնք ունեցել են մի քանի վերահրատարակություն: Կապված լինելով դպրոցի հետ՝ գիտեմ, որ այդ դասագրքերը սիրով են ընդունվում և՛ աշակերտների, և՛ ուսուցիչների կողմից:

Դ. Գասպարյանը 1300-ից ավելի հոդվածների հեղինակ է, որոնք ունեն ոչ միայն գրականագիտական, քննադատական, տեսական, գիտակրթական ուղղվածություն, այլև անդրադարձ են կրթական, մշակութային, հանրային, ազգային տարբեր խնդիրների: Կյանքի մեջ լինելը, խոսքի զորությունը կյանքի ճշմարտությամբ ստուգելը նրա ստեղծագործական խառնվածքի անբաժան մասն է:

Ահա այսպես իր վաստակած 75-ամյակն է նշանավորում գրականագետ Դ. Գասպարյանը, որի մասին ժամանակին իրենց գնահատող խոսքն են ասել բազմաթիվ անվանի գրողներ, մշակութային գործիչներ, և նրանց մեջ՝ Հովհաննես Շիրազը, Համո Սահյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Սուրեն Աղաբաբյանը, Գևորգ Բրուտյանը, Պողոս Մնացականյանը, Ռաֆայել Իշխանյանը, Հակոբ Կարապենցը, Վարագ Առաքելյանը, Ռեգինա Ղազարյանը, Գևորգ Էմինը, Վահե Օշականը, Պեպո Սիմոնյանը, Լևոն Խեչոյանը և շատ ուրիշներ ... Գնահատության նախադրյալն աշխատանքն է, իսկ նա լի է նոր ծրագրերով:

Հաջողություն մաղթենք Դավիթ Գասպարյանի առաջիկա գործունեությանը և սպասենք նոր ձեռքբերումների:

ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Բ. գ. դ., ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականություն, սփյուռքահայ գրականություն: Հեղինակ է 2 գրքի և 60-ից ավելի հոդվածի:
aristakesyanr@yahoo.com

ՀՏԴ : 929:891.981 Բաղդասարյան + 891.981

ՌՈԲԵՐՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



Բանասիրական գիտությունների դոկտոր, գրականագետ, լեզվաբան, արձակագիր, հրապարակախոս Ռոբերտ Անդրանիկի Բաղդասարյանը ծնվել է Երևանում 1947 թ. սեպտեմբերի 20-ին. մի ընտանիքում, որի ակունքներն ու արմատներն Արևմտյան Հայաստանից են, իսկ ծնողները՝ Վանից և Նոր Նախիջևանից (Դոնի Ռոստով): Եվ բնական ու ներդաշնակ էր նրա հետաքրքրությունը ոչ միայն մայրենի հայոց լեզվի ու գրականության, մշակույթի և պատմության նկատմամբ, այլ նաև նվիրվածությունը ռուսաց լեզվին ու գրականությանը, ռուսական մշակույթին, որոնք դարձան իր մասնագիտական գործունեության և հոգևոր զարգացման անկյունաքարերից մեկը:

Ռ. Բաղդասարյանն անցել է քաղաքացու և անձի ձևավորման բոլոր փուլերը. Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտն ավարտելուց հետո նշանակվել է աշխատանքի Լոռվա հեռավոր գյուղերից մեկում՝ Ղաչաղանում (այժմ՝ Արևածագ)՝ որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, ապա զորակոչվել է խորհրդային բանակ՝ ծառայելով Ռուսաստանում՝ Լենինգրադի մարզի Վիբորգ քաղաքի զորամասերից մեկում: Վերադառնալով հարազատ Երևան՝ եռանդով սկսել է կեսդարից ավել աշխատանքային գործունեությունը:

Ինստիտուտում ուսման տարիներին նրան դասախոսել են հայտնի գրականագետներ և լեզվաբաններ՝ Տ. Հախումյանը, Զ. Յասինսկայան, Մ. Մկրտչ-Ավակովան, Վ. Զիտունին, Ռ. Մանուչարյանը և այլք, որոնք նկատել էին իրենց չնորհալի ուսանողի պրպտուն միտքը, խոր գիտելիքները, գիտական ջիղը, կանխագուշակել նրա ապագա հետազոտությունների ուղիներն ու հեռանկարները, մեծ հույսեր կապել՝ որպես ապագա գրականագետի և գործընկերոջ՝ բուհական համակարգում:

Ռ. Բաղդասարյանի ուսանողական և հետագա տարիները ցույց տվեցին, որ նա մեծ հետաքրքրություն է տածում հիմնականում Հայաստանի ու Ռուսաստանի գրական-մշակութային և պատմահասարակական հարաբերությունների խնդիրներին:

XX դարի, մասնավորապես՝ խորհրդային ժամանակաշրջանի, հայ-ռուսական գրական կապերը լրջորեն հետազոտող գիտնականը հարստացրել է գրականագիտությունը և գրաքննադատությունը բազմաթիվ գիտական հոդվածներով, մի շարք հետաքրքիր գիտական մենագրություններով՝ «Նիկոլայ Տիխոնովը և Հայաստանը» (1995), «Անտոկոլսկին և Հայաստանը» (2004), «Կարեն Միքայելյան. ստեղծագործությունը և ավանդը ռուս-հայկական գրա-

---

* *Ներկայացվել է 22. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

կան-մշակութային փոխադարձ կապերում» (2010) և այլն: Նրա գիտական ու ստեղծագործական ակտիվում է ավելի քան երկուհարյուր հոդված՝ հայկական և ռուսական պարբերականներում:

Ռ. Բաղդասարյանի գրականագիտական ամենամեծ վաստակը կարելի է համարել «Կարեն Միքայելյան. ստեղծագործությունը և ավանդը ռուս-հայկական գրական-մշակութային փոխադարձ կապերում» գիրքը. այն գրավեց ոչ միայն հայ և ռուս բանասեր մասնագետների ուշադրությունը, այլև առաջացրեց լայն հասարակության հետաքրքրությունը և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում: Մենագրությունն առաջինն ու միակն է հայ և ռուս գրականագիտության մեջ, որտեղ բազմակողմանի ներկայացված է 1937-ին բռնադատված անվանի հայ արձակագիր, թարգմանիչ, գրական-մշակութային գործիչ, մոսկվաբնակ, ծագումով ազուլիսցի Կարեն Սարգսի (ռուսական միջավայրում՝ Գերասիմ Սերգեյի) Միքայելյանի հարուստ կյանքը, գրական-հասարակական ու հայրենասիրական բեղմնավոր գործունեությունը: Միքայելյանի բարեկամների և գործընկերների թվում էին Տերյանը, Զարենցը, Բրյուսովը, Տիխոնովը, Անտոկոլսկին և այլք: Կ. Միքայելյանի՝ լուսահոգի կրտսեր զավակը՝ մի շարք հայտնի խորհրդային ֆիլմերի հեղինակ, կինոռեժիսոր Սերգեյ Միքայելյանը, անմիջապես արձագանքեց ջերմ շնորհակալական նամակով իր նշանավոր հոր մասին գրված գրքի հեղինակին. «Հարգելի Ռոբերտ Անդրանիկի, չատ շնորհակալ եմ Ձեզ: Մեծ հետաքրքրությամբ և ալեկոծված սրտով կարդացի ձեր գիրքը. հրաշալի, մանրակրկիտ, իմաստուն և մեծ աշխատանք: Կարդալուց հետո իմ մանկության հիշողությունները, ցրված տեղեկություններ-րը, հորս կյանքի ինձ քիչ հայտնի տարիները միացվեցին և Ձեր շնորհիվ ձեռք բերեցին հզոր, համարձակ, տաղանդավոր գրող-հայրենասերի կերպարը»:

Ռ. Բաղդասարյանի գիտական հետաքրքրությունները դուրս են գալիս բուն բանասիրության բնագավառից: Նա զբաղվել է նաև հայ ժողովրդի պատմության, մասնավորապես՝ Մեծ եղեռնի ուսումնասիրությամբ: Գիտնականի գրչին է պատկանում 2003 թ. լույս տեսած «Ցեղասպանությունը և Ռուսաստանի հայ մտավորականությունը» ծավալուն մենագրությունը: Այս աշխատանքով գիտնական-բանասերը իրեն դրսևորեց նաև որպես բանիմաց պատմաբան՝ ընթերցողին ծանոթացնելով ռուսահայ մտավորականության ականավոր ներկայացուցիչներ Գ. Զանչիևի, Ա. Ջիվելեգովի, Գ. Զալղուչյանի և այլոց մշակութային-հասարակական ու ազգային-հայրենասիրական գործունեությանը հայերի ցեղասպանության տարիներին, ներկայացնելով նաև սեփական տեսակետներն ու մոտեցումները նշված գործիչների և դաժան դարաշրջանի վերաբերյալ:

Գիտնականն այսօրվա Հայաստանում ոչ միայն ճանաչված գրականագետ է, այլև՝ ռուսաց լեզվի ու ռուս գրականության լավագույն մասնագետներից մեկը: Տարբեր տարիներին նա դասավանդել է ռուսաց լեզու, գրականություն, գրականագիտության տեսություն, հայ-ռուսական գրական կապերի հատուկ դասընթացներ մի շարք բուհերում, այդ թվում՝ իր alma mater*-ում, եղել է ռուս գրականության գծով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի մասնագիտացված գիտխորհրդի անդամ, ընդդիմախոսել թեկնածուական և դոկտորական բազմաթիվ թեզեր:*

Ռ. Բաղդասարյանը նաև ստեղծագործական միությունների անդամ է. 1981-ից՝ ԽՍՀՄ/Հայաստանի ժուռնալիստների միության, 2013-ից՝ Հայաստանի գրողների միության:

Համուտ գիտնական ու ակտիվ քաղաքացի Բաղդասարյանը պատկանում է այն մարդկանց չարքին, ով խորապես տեղյակ է ժամանակակից հայկական, ռուսական և համաշխարհային քաղաքական ու գրական-հասարակական զարգացումներին, հայ իրականության ընթացիկ խնդիրներին: Դրա մասին են վկայում նրա՝ խորհրդատու, երբեմն սուր հարցադրումներով հոդվածները տեղական և ռուսաստանյան մամուլում՝ վկայելով նրա հրապարակախոսական տաղանդի մասին («Литературная газета», «Литературная Армения», «Գոլոս Արմենիի», «Գրական թերթ», «Նորք», «Գարուն» և այլն): Նրա՝ վառ, արտահայտիչ, գեղարվեստական և լրագրողական՝ միայն իրեն բնորոշ ոճով գրված հոդվածներն ու ակնարկները Սայաթ-Նովայի, Իսահակյանի, Թումանյանի, Տերյանի, Զարենցի, Պուշկինի, Նեկրասովի, Գորկու, Բրյուսովի, Գրոդեկու, Տիխոնովի, Անտոկոլսկու, Էրենբուրգի, Բուլգակովի և գրականության այլ երևելիների մասին գրավել են գրքասեր շրջանակները, արժանացել գրականագետների ուշադրությանը:

Ռ. Բաղդասարյանը նաև հետաքրքիր գրող է «փոքր արձակի» ժանրում, որի ռուսալեզու՝ ուրույն, լակոնիկ և պարզ պատմվածքներն ու նովելները ժողովածուների տեսքով տպագրվել են Երևանում [«Ժամանակի ծամածռություններ» (2012), «Մայրամուտին» (2013), «Ունայնություն ունայնությանց» (2014), «Ղաչաղան. Լոռվա նոթեր» (2016) և այլն] ծանոթացնելով XX դ. երկրորդ կեսի հայ իրականության, երևանցիների կյանքի հետ, նրբորեն նկարագրելով մարդկային ճակատագրերը, հարաբերությունները, հույզերը, մտորումները: Այդ գործերը նույնպես գտել են իր չնորհակալ ռուսալեզու ընթերցողին …

Գիտնականի ուղին արժանապատիվ, արդյունավետ և արգասավոր է, լի հաջողված ուսումնասիրություններով: Նրա կյանքն այնքան բովանդակալից է, որ կարելի է ասել. դեռ շատ բան առջևում է …

Երկու տասնամյակից ավել Ռ. Բաղդասարյանն իր գիտահետազոտական գործունեությունը հաջողությամբ համատեղում է ՀՀ ազգային ժողովի աշխատակազմում պատասխանատու, բարձր գնահատված աշխատանքով. պարգևատրվել է ԱԺ նախագահի շնորհակալագրով (2005, 2012 թթ.):

Ռ. Բաղդասարյանը ընտանիքին նվիրված անճնավորություն է. հոգատար ամուսին, երեք զավակի հայր, երեք թոռան պապ: Նրա հետաքրքրասիրությունների շարքում են լուսանկարչությունը, գեղանկարչությունը …

Ցանկանք վաստակաշատ հոբելյարին ստեղծագործական նորանոր հաջողություններ, քաջ առողջություն ու արևշատություն:

ՄԻՔԱՅԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Բ. գ. դ., Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-ռուսական գրական-մշակութային և հասարակական-քաղաքական հարաբերությունների ուսումնասիրություն: Հեղինակ է ավելի քան 20 մենագրության, բազմաթիվ հոդվածների ու հրապարակումների:
russiancentre@brusov.am

ՀՏԴ : 929:891.981 Գյուրջինյան + 800

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ
(Ծննդյան 60-ամյակի առթիվ)*

Լեզվաբան Դավիթ Սևանի Գյուրջինյանը ծնվել է 1962 թ. օգոստոսի 26-ին Երևանում:

1979 թ. ոսկե մեդալով ավարտել է Կամո (այժմ՝ Գավառ) քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը, 1984 թ. գերազանցությամբ՝ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մայրենի լեզվի և գրականության ֆակուլտետը: Ավարտելուց հետո եղել է հայոց լեզվի ամբիոնի փորձնակ-հետազոտող, սկսել է աշխատել թեկնածուական ատենախոսության վրա, որն ընդմիջվել է 1985–1986 թթ., երբ ծառայել է խորհրդային բանակում:

1988–1995 թթ. դասախոսել է Հարազատ բուհում: 1989 թ. պրոֆ. Պ. Բեդիրյանի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Նախդիրների բառակազմական արժեքը հայերենում» թեմայով, և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1993 թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հայտարարած «Երիտասարդ գիտնականներ» մրցույթին ներկայացրել է հայերենի բառակազմական իմաստաբանությանը նվիրված ուսումնասիրություններ և ճանաչվել հաղթող:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով 1993 թ. որպես հայերենի դասախոս աշխատանքի է անցել Սբ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ աշխատելով շուրջ 25 տարի: Տարիների ընթացքում «Էջմիածին» հանդեսում լույս են տեսել Դ. Գյուրջինյանի՝ երկու տասնյակից ավելի լեզվաբանական հոդվածները: Դրանցից մի քանիսն ամփոփվեցին «Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն» թեմայով ժողովածուում (Սբ. Էջմիածին, 2002): 2015 թ. Սբ. Էջմիածնում հրատարակվեց Դ. Գյուրջինյանի «Հայոց լեզու. խոսքարվեստի դասագիրք» ինքնատիպ աշխատանքը, որը համալսարանական տեսական-գործնական դասընթացի հաջողված դասագիրք է մեզանում:

1995–2020 թթ. Դ. Գյուրջինյանն աշխատել է Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում՝ դասավանդելով ժամանակակից հայերեն, լեզվաբանության ներածություն, խոսքի մշակույթ, ոճաբանություն, գրաբար: Այս համալսարանում 1999 թ. հայերենի դասերին գործածվում է իր և Ն. Հեքեքյանի հեղինակած «Հայոց լեզու. գործնական աշխատանքների

* Ներկայացվել է 29. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:

ձեռնարկ» գիրքը, որն ունեցել է ութ հրատարակություն. երկարակեցությունը ձեռնարկի հաջողվածության վկայությունն է:

Դ. Գյուրջինյանի գիտամանկավարժական գործունեության մեջ պետք է առանձնացնենք հատկապես հայերենի դպրոցական դասագրքերի ստեղծումը: 2006–2007 թթ. առ այսօր գործածության մեջ են հանրակրթական դպրոցի 5-րդ և 6-րդ դասարանների մայրենիի դասագրքերը (հեղինակային խմբի ղեկավար), 2008 և 2009 թթ.՝ 3-րդ և 4-րդ դասարանների մայրենիի դասագրքերը (համահեղինակությամբ՝ Ն. Հեքեքյանի): Այս դասագրքերն աչքի են ընկնում ինքնատիպությամբ, գրավչությամբ, հայերենի ուսուցման նոր մոտեցումներով: Դասագրքերից զատ ստեղծվել են աշխատանքային տետրեր, ուսուցչի ձեռնարկներ, թելադրության նյութերի ժողովածու, ընթերցարաններ, պաստառներ: Դպրոցականների սիրելի գրքերից է Դ. Գյուրջինյանի կազմած ընթերցանության «Մատենիկ» գիրքը, որը հրատարակվել է նաև արևմտահայերեն: Ուսուցիչներն իրենց աշխատանքի ընթացքում գործածում են Դ. Գյուրջինյանի և Ն. Հեքեքյանի ստեղծած այլընտրանքային հայոց լեզվի դասագրքերը 7-րդ և 10-րդ դասարանների համար:

Մինչ այդ Դ. Գյուրջինյանը մասնակցել է հայերենի հարցարանների ժողովածուների ստեղծմանը: Դրանից առաջինը՝ «Հայոց լեզվից 50 հարցարան», գրվել է Պ. Բեդիրյանի և տողերիս հեղինակի հետ (Երևան, 1992): 1997 և 1998 թթ. լույս են տեսել հայոց լեզվի հարցարանների ժողովածուներ Դ. Գյուրջինյանի ղեկավարությամբ:

Կարևոր է հայերենագետի բերած նպաստը ուսումնական բառարանագրությանը. 2001 թ. լույս են տեսել «Հայերեն բառարան-տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր», 2003 թ.՝ «Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ», 2005 թ.՝ «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու» բառարանները, որոնք իրենց տեսակով նոր են, կազմված ամենայն բծախնդրությամբ և հետևողականությամբ: Այս բառարանները հետագայում բազմաթիվ հրատարակություններ ունեցան և մեծապես նպաստեցին հայերենի կանոնարկմանը: 2000 թ. լույս տեսավ «Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատուն» (համահեղինակությամբ՝ Ն. Հեքեքյանի):

Վերջին տարիներին մեկը մյուսի հետևից լույս տեսան Դ. Գյուրջինյանի կազմած ուսումնական յոթ բառարանները, որոնք նոր էջ են բացում հայ ուսումնական բառարանագրության մեջ: Շարքից առանձնացնենք հատկապես «Հայերենի հականիշների բառարանը» (Երևան, 2020): Սա եզակի աշխատանք է. բառարանում ընդգրկված բոլոր հականիշները (700 զույգ) ցուցադրվում են միևնույն նախադասության (գեղարվեստական խոսքի) շրջանակում, որի շնորհիվ առավել ընդգծված է երևում հականիշների ոճական արժեքը:

Բնագրային նմուշներով են տրված նաև հոմանիշների ու դարձվածքների բառարանները, մասամբ՝ պատկերազարդ բացատրական բառարանը, յուրատիպ՝ ուղղագրական և բառակազմական բառարանները:

Հայ բառարանագրության մեջ նորույթ է «Բարեկիրթ հայերենի բառարանը», որտեղ տրված են հայերեն բարեկիրթ խոսքում հաճախ գործածվող այն բառերը, բառաձևերը, բառակապակցությունները ու արտահայտությունները,

որոնք անհրաժեշտ են տարբեր իրավիճակներում հասակակիցների, մտերիմների կամ անծանոթ մարդկանց հետ հաղորդակցվելու համար: Սա հայերենի խոսքային վարքականոնի բառարան է և օգտակար կարող է լինել անխտիր բոլորին:

Հայ գիտահանրամատչելի գրականության լավագույն նմուշներից է Դ. Գյուրջինյանի «Զարմանալի հայերեն» գիրքը (Երևան, 2020): Զրույցների այս գրքում ընդգրկված են այսօրվա հայերենում հաճախ գործածվող այն բառերը, որոնց «կենսագրությունն» սկսվում է հին հայերենից՝ գրաբարից: Հեղինակն ամենայն բծախնդրությամբ ուսումնասիրել է հին հայերենի բառային կազմի համաժամանակյա իմաստները, հետևել լեզվի զարգացման ընթացքում դրանց կրած տարժամանակյա փոփոխություններին և արձանագրել արդի լեզվավիճակում դրսևորած իմաստներն ու նշանակությունները, որոնք հաճախ հեռացել են նախնական իմաստից ու արժեքից և ներկայանում են բոլորովին նոր իմաստներով: Գրքի կարևոր արժանիքներից են ոչ միայն լեզվական նյութի ղիպուկ ընտրությունը, այլև այն մատուցելու բանասիրական համոզչությունը, հեղինակի ինքնատիպ ոճը: Այստեղ ըստ ամենայնի դրսևորվել են Դ. Գյուրջինյան լեզվաբանի, հետազոտողի և մանկավարժի լավագույն հատկանիշները:

Դ. Գյուրջինյանը սերտ համագործակցել է Հայաստանի աստվածաշնչային ընկերության հետ (2011–2013 թթ. եղել է հրատարակչական-խմբագրական բաժնի տնօրենը), հրատարակության է պատրաստել Նոր Կտակարանի և Սաղմոսագրքի իմաստային թարգմանությունները, որոնք քանիցս հրատարակվել են բազմահազար օրինակներով (ավանդական ուղղագրությամբ՝ նաև Թեհրանում), խմբագրել է «Աստվածաշնչի հանրագիտարանը», «Աչակերտի Աստվածաշունչը» և այլն, գրաբար Աստվածաշնչի ստվարածավալ համաբարբառի պատասխանատու խմբագիրն է:

Լեզվաբանի գիտական հետաքրքրությունները բավական ընդարձակ են. ընդգրկում են հայերենագիտության տարբեր բաժինները: Ունի տասնյակից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում (Ստամբուլ, Բեյրութ, Թեհրան, Թբիլիսի, Մոսկվա): Վերջին տարիներին լեզվաբանն ուսումնասիրում է հայերեն տառանունները, հայ բաղադրիչով բարդությունները և հայերենի լեզվանունները՝ գիտական պարբերականներում հրապարակելով բազմաթիվ ուշագրավ հոդվածներ:

Լեզվաբան Դ. Գյուրջինյանը գործուն մասնակցություն ունի Հայաստանի գիտական, կրթական ու հասարակական կյանքին. մասնակցել է գիտաժողովների, կրթական համաժողովների, կազմակերպել է ուսուցիչների վերապատրաստումներ Հայաստանում և Իրանում (Թեհրան, Սպահան), հանդես է գալիս գրախոսականներով, հրապարակում գիտական դիմանկարներ, զանգվածային լրատվամիջոցներում ու սոցցանցերում տարիներ շարունակ իրականացնում է լեզվաքարոզչություն, վարում հայերենի լեզվական-ուսուցողական դասերի շարքեր (դրանից մեկը 2019 թ. ամփոփվեց «Հանուն մեր նյարդերի» գրքույկում):

2018 թ. հունիսի 11-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ: Դ. Գյուրջինյանը հայերենի՝ ՀՀ պետական լեզվի շահի ջերմ պաշտպանն է եղել նաև մինչ այդ պաշտոնին նշանակվելը: Նրա ղեկա-

վարումյամբ Լեզվի կոմիտեի անձնակազմը հետամուտ է հայերենի մաքրության, անաղարտության պահպանմանը, նրա գործառական ոլորտների հստակեցմանը, ռադիո-հեռուստատեսային հաղորդումների և մամուլի լեզվի կանոնիկ դրսևորումներին՝ ի շահ պետական լեզվի հարատևության՝ որպես ազգային անվտանգության փրկօղակի:

Ստեղծագործական նորանոր վերելքներ մաղթենք մեր ժամանակների վաստակաշատ հայագետին. Դ. Գյուրջինյանը դեռ ասելիք ունի հայերենագիտությանը:

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի պատմություն, դրաբար, հայոց լեզվի տեսություն, բառագիտություն, բառարանագրություն: Հեղինակ է 20 գրքի և շուրջ 200 հոդվածի: lingualal51@mail.ru

070(479.25) «Մշակ»

«ՄՇԱԿ» ԹԵՐԹԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՄՇԱԿԸ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶՈՒԳԱՀԵՌԱԿԱՆՆԵՐՈՒՄ»*

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը Հայաստանի ազգային գրադարանի աջակցությամբ 2022 թ. հունիսի 14–16-ին կազմակերպել էր միջազգային գիտաժողով (առկա և հեռավար) «Մշակը» պատմության զուգահեռականներում» խորագրով՝ նվիրված «Մշակ» թերթի հիմնադրման 150-ամյակին:

Մասնակցության հայտ էին ներկայացրել հինգ տասնյակից ավելի հետազոտողներ, գիտաժողովին ներգրավված էին մասնակիցներ Բելգրադի «Ազգակ» օրաթերթից, Երևան քաղաքի պատմության թանգարանից (ԵՊԹ), Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Երուսաղեմի Հայոց պատրիարքարանից (ԵՀՊ), կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնից (ԿԳՄՄՆ ՊԺԳԿ), Հայաստանի ազգային արխիվից (ՀԱԱ), Հայաստանի ազգային գրադարանից (ՀԱԳ), «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունից (ՀՀՀ), Հայկական ճարտարապետության ուսումնասիրող հիմնադրամից (ՀՃՈՒՀ), Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից (ՀՑԹԻ), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից (ԳԱԱ ԱԻ), ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից (ԳԱԱ ԼԻ), ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանից (ԳԱԱ ՀԳԳ), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից (ԳԱԱ ԳԻ), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտից (ԳԱԱ ՊԻ), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ և Թամար Մանուկյան» մատենադարանից (ԷՄ), Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանից (ՍՊՊՀ) և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանից (ՎՊՀ):

Գիտաժողովը մեկնարկեց հունիսի 14-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Գիտաժողովի մասնակիցներին բացման և ողջույնի խոսքեր հղեցին ԳԱԱ ՊԻ տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը և ԳԱԱ ՊԻ Հայ պարբերական մամուլի հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը: Իրենց ելույթներում նրանք ընդգծեցին նման գիտաժողովի կարևորությունը և արդիականությունը, ներկայացրեցին «Մշակի» անցած ուղին, ունեցած դժվարությունները՝ չեչտադրելով «Մշակի» և Գրիգոր Արծրունու անուրանալի նշանակությունը հայ ժողովրդի կյանքի լուսաբանման գործում:

Գիտաժողովի բացմանը ելույթ ունեցավ նաև Գ. Արծրունու արյունակից, անվանի երաժիշտ, երգահան Վահան Արծրունին, ով իր ելույթում մանրամասներ ներկայացրեց Գ. Արծրունու տոհմի մասին:

---

* *Ներկայացվել է 01. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում լիագումար նիստին լսվեց ԳԱԱ թղթակից անդամ, արվ. գ. դ., պրոֆ. Հենրիկ Հովհաննիսյանի (ԳԱԱ ԱԻ) «Գրիգոր Արծրունին՝ թատերական քննադատ» զեկույցը:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքերը շարունակվեցին երեք մասնախմբային նիստերում, որոնք զուգահեռաբար ընթացան ԳԱԱ ՊԻ նիստերի դահլիճում և գրադարանում, աշխատանքային երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն:

Առաջին մասնախմբային նիստն աշխատում էր «Պատմություն» խորագրի ներքո՝ ՊԻ նիստերի դահլիճում (14–15 հունիսի): Առաջին նիստում (նախագահող՝ Էդիկ Մինասյան) լսվեցին պ. գ. դ., պրոֆ. Էդիկ Մինասյանի (ԵՊՀ) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը «Մշակի» էջերում», պ. գ. դ. Սուրեն Սարգսյանի (ԳԱԱ ՊԻ) «Մկրտիչ Փորթուգալյան – «Մշակ» առնչությունները», Ալբերտ Խաչատյանի (ԳԱԱ ՊԻ) «Մշակը» արևմտահայ մամուլի մասին», պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյանի (ԳԱԱ ՊԻ) «Բաքվի հայերի 1918 թ. կոտորածների արձագանքները «Մշակ» լրագրում», պ. գ. թ., դոցենտ Մարիա Բրուտյանի (ՎՊՀ) «Հայ-թուրքական պատերազմի 1919–1921 թթ. արձագանքները «Մշակի» հրապարակումներում» (հեռավար), մանկ. գ. թ. Ռաֆայել Աբրահամյանի (անհատ հետազոտող, ՌԴ) «Материалы к генеалогии Григора Арцруни» *(հեռավար) զեկույցները:*

Երկրորդ նիստում (նախագահող՝ Մարիամ Հովսեփյան) լսվեցին բ. գ. թ. Արմեն Մանուկյանի (ԳԱԱ ԳԻ) «Մշակ» լրագիրը Րաֆֆու գնահատմամբ», Քրիստինե Գասպարյանի (ՎՊՀ) «Մշակը» արևմտահայերի ազգային սահմանադրության մասին» (հեռավար), պ. գ. թ. Արմեն Կարապետյանի (ԳԱԱ ՊԻ) «Համիդյան կոտորածների արձագանքները «Մշակի» էջերում», բ. գ. թ. Մարիամ Հովսեփյանի (ԳԱԱ ՊԻ) «Արևմտահայերի կոտորածները և «Մշակը» (1915 թ.)», պ. գ. թ. Քնարիկ Ավագյանի (ԳԱԱ ՊԻ) «Մշակը» ԱՄՆ-ի հայերի և ԱՄՆ-ի մասին», Ներսեհ աբեղա Ալոյանի (ԵՀՊ) «Ծերենցը գաղթականության մասին և «Մշակի» արձագանքը», պ. գ. թ. Վարդիթեր Գրիգորյանի (ՀԱԱ) «Մշակի» վերաբերյալ փաստաթղթերը Հայաստանի ազգային արխիվում» զեկույցները:

Երրորդ նիստում (նախագահող՝ Համո Սուքիասյան) լսվեցին տ. գ. թ. Տիգրան Զարգարյանի (ԳԱԱ ՀԳԴ) «Մշակի» էլեկտրոնային մատենագիտական շտեմարանը», պ. գ. դ., պրոֆ. Վահան Մելիքյանի (ԳԱԱ ՊԻ) «Հայ ժողովրդական կուսակցության և «Մշակի» վերաբերմունքը Հայաստանի անկախացման գործընթացներին (1918 թ. ապրիլ-մայիս)», բ. գ. դ., պրոֆ. Դավիթ Պետրոսյանի (ԵՊՀ) «Գրիգոր Արծրունին և համալսարանի գաղափարը», պ. գ. թ., դոցենտ Համո Սուքիասյանի (ԳԱԱ ՊԻ) «Մշակը» Հայաստանի անկախացման և իշխանության մարմինների ձևավորման մասին (1918 թ. մայիս-հուլիս)», բ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Մուշեղյանի (ԳԱԱ ԳԻ) «Անդրեաս Արծրունին և «Մշակը», բ. գ. թ, դոցենտ Ֆլորա Առաքելյանի (անհատ հետազոտող, ՌԴ) «Արխիվային փաստաթղթեր «Մշակի» հրապարակման մասին (Ռուսաստանի պետական պատմական արխիվ)» (հեռավար), «Ազդակ» օրաթերթի լրագրող Սիլվա Գարավարդանյանի (Լիբանան) «Մշակի» ներոյժը հայ ինքնության ամրագրման առումով» (հեռա-

վար), Սուսաննա Հարությունյանի (ԵՊԹ) «Մշակը» երևանցիների մասին (1870–80-ական թթ.)», Էմմա Աբրահամյանի (ՀՃՈՒՀ) «Վիմագրագիտական պրպտումներ «Մշակի» էջերում» զեկույցները:

Չորրորդ նիստում (նախագահող՝ Ֆելիքս Մովսիսյան) լսվեցին պ. գ. դ., պրոֆ. Ֆելիքս Մովսիսյանի (ՎՊՀ) «Մշակ» թերթը Իսպանիայում կառլոսյան պատերազմների մասին», պ. գ. թ. Վահե Սարգսյանի (ԳԱԱ ՊԻ) «Ջավախեցու (Ղազարոս Տեր-Գրիգորյան) հուշագրությունը «Մշակի» մասին և հրապարակումները «Մշակում» (1899–1903, 1908 թթ.)», պ. գ. թ. Հասմիկ Ամիրջանյանի (ԳԱԱ ՊԻ) «Արևմտահայության դրության լուսաբանումը «Մշակ» լրագրում (1909–1911 թթ.)», պ. գ. թ. Կարեն Մկրտչյանի (ԳԱԱ ՊԻ) «Պարսկահայ գաղթօջախը «Մշակ» լրագրում», պ. գ. թ. Արփինե Բաբլումյանի (ԳԱԱ ՊԻ) «Արևմտահայերի արտագաղթի հիմնահարցը և «Մշակը» (1880–1914 թթ.)», Լիլիթ Քոսյանի (ԳԱԱ ՊԻ) «Մշակը» հայ գաղթականության մասին (1890-ական թթ.)», պ. գ. թ. Նարինե Երանոսյանի (ԳԱԱ ՊԻ) «Եգիպտահայերը «Մշակ» լրագրում», պ. գ. թ. Ռոբերտ Թաթոյանի (ՀՅԹԻ) «Մշակի» անդրադարձներն արևմտահայության թվաքանակի հարցին (1912–1913 թթ.)» զեկույցները:

Հինգերորդ նիստում (նախագահող՝ Անի Փիլենկճյան) լսվեցին պ. գ. թ. Անի Փիլենկճյանի (ԳԱԱ ՊԻ) «Կիլիկիան եւ կիլիկեցիները «Մշակի» էջերուն (Ա. Աչխարհամարտի տարիներուն)», Ջեննի Թամալյանի (ԳԱԱ ՊԻ) «Վիրահայերի ինքնությունը և «Մշակը» (1918–1921 թթ.)», բ. գ. թ., դոցենտ Տարոն Դանիելյանի (ՎՊՀ) «Խորեն քահանա Խանզադյանը՝ «Մշակի» թղթակից», Զոյա Ջաուինյանի (ՎՊՀ) «Կ. Պոլսի «Պարզասէր հայուհեաց» ընկերության գործունեությունը «Մշակում» (հեռավար), պ. գ. թ. Մկրտիչ Դանիելյանի (ԳԱԱ ՊԻ) «Հայրենասէրների միութիւն» – «Մշակ» առնչությունները» զեկույցները:

Երկրորդ մասնախմբային նիստը կայացավ «Բանասիրություն» խորագրի ներքո՝ ՊԻ դրադարանում (14 հունիսի): Նիստում (նախագահող՝ Սուսաննա Հովհաննիսյան) լսվեցին բ. գ. դ., դոցենտ Հայկանուշ Մեսրոպյանի (ԳԱԱ ԼԻ) «Լեզվի հարցերը «Մշակ» լրագրում», բ. գ. թ., դոցենտ Նաիրա Համբարձումյանի (ԳԱԱ ԳԻ) «Գրիգոր Արծրունին, «Մշակը» և կանանց հարցը», բ. գ. թ. Դոնարա Մկրտչյանի (ՍՊՊՀ) «Մշակի» նամականին» (հեռավար), բ. գ. թ. Մայա Գրիգորյանի (ԷՄ) «Մշակի» և «Արարատի» բանավեճերի պատմությունից (1870–1890-ական թթ.)», բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի (ԳԱԱ ԳԻ) «Մշակ» – Հովհաննես Թումանյան աղերսները», Էլմիրա Մարգարյանի (ՀՀՀ) «Հովհաննես Թումանյանի առնչությունները Գրիգոր Արծրունու և «Մշակի» հետ», բ. գ. թ. Մարինե Սարգսյանի (ԳԱԱ ԳԻ) «Վահան Տերյանի հրապարակախոսությունը «Մշակում», Քրիստինա Աբրահամյանի (ԳԱԱ ԳԻ) «Հովհաննես Հովհաննիսյանը և «Մշակը» զեկույցները:

Երրորդ մասնախմբային նիստն ընթացավ «Մշակույթ» խորագրի ներքո՝ ՊԻ դրադարանում (15 հունիսի): Նիստում (նախագահող՝ Աննա Ասատրյան) լսվեցին արվ. գ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանի (ԳԱԱ ԱԻ) «Քրիստափոր Կարա-Մուրզան՝ «Մշակի» երաժշտական թղթակից», Աշխեն Ջուլֆալակյանի (ԿԳՄՄՆ ՊԺԳԿ) «Կրթական խնդիրները «Մշակ» լրագրում

(1870-ական թթ.)», արվ. թ. Մարգարիտա Քամալյանի *(ԳԱԱ ԱԻ) «Մշակը» և Վարդգես Սուրենյանցը», Արմեն Ասատրյանի (ԿԳՄՄՆ ՊԺԳԿ) «Հուշարձանների պահպանության հարցերը «Մշակի» հրապարակումներում», Հայկանուշ Ղազարյանի (ՀԱԳ) «Մշակը» գրաղարանային հարցերի մասին», Ստյոպա Պետոյանի (ԳԱԱ ՊԻ) «Րաֆֆու «խենթի» առաջին հրատարակությունը և «Մշակը» զեկույցները:*

Յուրաքանչյուր նիստի ավարտին զեկուցողները պատասխանեցին մասնակիցների հարցերին, տեղի ունեցան քննարկումներ:

Գիտաժողովը ավարտվեց հունիսի 16-ին ՀԱԳ-ում, ուր տեղի ունեցան «Մշակի» հիմնադրման 150-ամյակին նվիրված ցուցադրության բացումը և գիտաժողովի ամփոփումը: Գիտաժողովի արդյունքներն ամփոփեցին Աշոտ Մելքոնյանը, Ալբերտ Խառատյանը, Սուսաննա Հովհաննիսյանը, Համո Սուքիասյանը:

Կարդացված զեկուցումները կհրատարակվեն «Մշակը» պատմության զուգահեռականներում» վերտառությամբ ժողովածուում:

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ

947.925

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1908–1922 ԹԹ.»*

2022 թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի (ՊԻ) նոր պատմության բաժինը կազմակերպել էր միջազգային գիտաժողով՝ «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» խորագրով, որը տեղի ունեցավ ինստիտուտի նիստերի դահլիճում: Մասնակցության հայտ էին ներկայացրել չորջ երկու տասնյակ հետազոտողներ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունից, այլև ԱՄՆ-ից: Գիտաժողովին ներգրաված էին մասնակիցներ ՊԻ-ից, Երևանի պատմության թանգարանից (ԵՊԹ), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից (ԱԻ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից (ՀՊՄՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հայագիտական հետազոտությունների ինստիտուտից, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամից (ՀՑԹ), ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից (ԳԻ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից (ՀԱԻ), նաև անկախ հետազոտողներ:

Գիտաժողովի մասնակիցներին բացման և ողջույնի խոսքեր հղեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՊԻ տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը և ՊԻ նոր պատմության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Ռուբեն Սահակյանը: Իրենց ելույթներում նրանք նշեցին նմանատիպ գիտաժողովների կարևորությունն ու արդիականությունը, քանի որ ստեղծված աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում անհրաժեշտ է դասեր քաղել պատմությունից՝ խուսափելով անցյալի սխալներից: Ուշագրավ է, որ չորջ մեկ դար առաջ հայոց պետականության ու հայության առաջ ծառացած խնդիրները և աշխարհաքաղաքական իրադրությունը գրեթե նույնական են:

Գիտաժողովը բաղկացած էր երեք նիստերից: Առաջին նիստի (նախագահող՝ պ. գ. դ. Ռուբեն Սահակյան) ընթացքում զեկուցումներով հանդես եկան՝ ԵՊԹ հնագույն և միջնադարյան պատմության բաժնի վարիչ Անժելա Տերյանը՝ «Հնագույն Կիլիկիա (մ. թ. ա. II–I հազարամյակներում)», ԱԻ գիտաշխատող Կարոլինա Սահակյանը՝ «Օսմանյան տարեգիր Ջևդեթ փաշայի անդրադարձը Կիլիկիային», պ. գ. դ. Ռուբեն Սահակյանը՝ «ՀՅԴ նախաքայլերը Կիլիկիայում հաստատվելու համար», անկախ հետազոտող Մարիամ Հերզնյանը՝ «Ապատեղեկատվության տարածման հոգեբանական հետևանքները ցեղասպանությունների ժամանակ (Կիլիկիայի 1908–1922 ջարդերի օրինակով)», ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոցենտ Էդգար Հովհաննիսյանը՝ «Կիպրոսում Կիլիկիայի հայ գաղթականների հաստատման գործընթացը 1909–1922 թթ.», ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Համլիկ Ամիրջանյանը՝ «Ադանայի 1909 թ. կոտորածների արտացոլումն «Արարատ» ամսագրում», ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստի-

---

* *Ներկայացվել է 02. XI. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

տուտի կրտսեր գիտաշխատող Անի Ոսկանյանը՝ «Աղանայի նահանգի հայերի տնտեսական վիճակը 1909 թ. կոտորածից առաջ և հետո», ԱԻ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանը՝ «1909 թ. Աղանայի կոտորածների վերաբերյալ պաշտոնական և այլընտրանքային մեկնաբանությունները արդի թուրք պատմագրությունում», ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ., պրոֆ. Սուրեն Սարգսյանը՝ «Հայակիլիկիայի ինքնավարության հիմնախնդիրը՝ հայկական հարցի բաղկացուցիչ մաս» (հեռավար):

Երկրորդ նիստում (նախագահող՝ պ. գ. թ. Հասմիկ Ամիրջանյան) հանդես եկան՝ ԱՄՆ-ից անկախ հետազոտող Նաթան Պետրոսեանը՝ «Կիլիկիան եւ քեմալական չարժումը» (հեռավար), ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ. Անի Փիլչենկճեանը՝ «Տէր Յարութիւն քահանայ Եսայեանի նամակները կիլիկահայ գաղթականութեան մասին», ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ, Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ, պ. գ. դ., պրոֆ. Սամվել Պողոսյանը՝ «Կիլիկիայի ազատագրումը հայկական լեգեոնի ուժերով», ՀՅԹ հետազոտող Հեղինե Հովհաննիսյանը՝ «Ռուբեն Հերյանը և հայկական լեգեոնի անդամերի մասնակցությունը որբահավաքին», ՊԻ ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Արմենուհի Ղամբարյանը՝ «Կիլիկիան և Միացյալ Հայաստանն ԱՄՆ մերձարևելյան քաղաքականության շրջանակներում (1919–1920 թթ.)», ԳԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Պետրոս Դեմիրճյանը՝ «Հաճընի 1920 թ. ութամսյա դյուցազնամարտի և հայության ճակատագրի արտացոլումը Սարգիս Վահագնի «Հաճընը սիրուն» նոր վեպում» զեկուցումներով:

Երրորդ նիստի (նախագահող՝ ՊԻ նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Գեղամ Հովհաննիսյան) ընթացքում լսեցին ՊԻ առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գայանե Մախմուրյանի՝ «Ֆրանս-թուրքական գաղտնի բանակցությունները Կիլիկիայում զինադադար հաստատելու և Սևրի պայմանագրի մասին (1920 թ. մայիս-հունիս ամիսներին)», ՀԱԻ առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Վերժինե Սվազլյանի՝ «Կիլիկիայի հայերի ինքնապաշտպանական մարտերը ըստ ականատես վերապրողների վկայությունների» (հեռավար), ՀՊՄՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Խաչատուր Ստեփանյանի՝ «Կիլիկիայի հայության քաղաքական դրությունը 1921 թ.՝ ըստ Հ. Յ. Դաշնակցության պատմության կենտրոնական արխիվի վավերագրերի», ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ, դասախոս Մարիամ Թովակյանի՝ «Կիլիկիան Ֆրանս-թուրքական հարաբերությունների դինամիկայի համատեքստում 1920–1922 թթ.» (հեռավար) և պ. գ. թ. Գեղամ Հովհաննիսյանի՝ «Կիլիկիայում և նրա շուրջը ծավալած վերակազմյալ հնչակյանների գործունեությունը 1908–1921 թթ.» զեկուցումները:

Յուրաքանչյուր նիստի վերջում զեկուցողները պատասխանեցին մասնակիցների հարցերին, տեղի ունեցան քննարկումներ: Գիտաժողովում կարդացված զեկուցումները կհրատարակվեն «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» վերտառությամբ ժողովածուում:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց պ. գ. դ. Ռ. Սահակյանը:

ՆԻՆԵՏԱ ԱԴԱՄՅԱՆ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ՝ ՊԲՀ-Ի ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թվականից ՊԲՀ-ում տպագրվելիք հոդվածները հարկ է ուղարկել https://pmbh.sci.am/ *հասցեով:*

К СВЕДЕНИЮ АВТОРОВ – ОБ ИЗМЕНЕНИИ АДРЕСА ЭЛЕКТРОННОГО САЙТА ИФЖ

С 2023 года статьи для публикации в ИФЖ следует посылать по адресу https://pmbh.sci.am/

FOR THE INFORMATION OF THE AUTHORS ABOUT THE CHANGE OF THE ELECTRONIC WEBSITE ADDRESS OF THE HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

From 2023, the articles to be published in the journal should be sent to https://pmbh.sci.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 155-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ռուբեն Սահակյան – Սարգիս Մեհրաբյան (Խանասորի Վարդան).....3
Արարատ Հակոբյան – Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական գնահատականը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցերին 30
Անուշ Հարությունյան – Էթնիկ դասակարգման սկզբունքները՝ ըստ 1926 թ. առաջին համամիութենական մարդահամարի (Խորհրդային Հայաստանի օրինակով) 47
Վարդան Ալեքսանյան – Եկեղեցին Հայաստանի ներքին ինքնավարության վերականգնման ժամանակաշրջանում (IX դարի առաջին կես) …….....62

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ
ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Դավիթ Գասպարյան – Եղիշե Չարենցի արտասահմանյան ուղևորությունը (1924, 21 նոյեմբեր – 1925, հունիսի սկիզբ).....85
Թադևոս Խաչատրյան – Աշխարհի պատկերն ըստ Հովհաննես Թումանյանի….....113
Արիադնա Հարությունյան – Ղունկիանոս Կարնեցու «Աշխատութեան վրայ» բանաստեղծությունը 133

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիկտոր Կատվալյան – Հադրութի բարբառի մասին.....144
Գուրգեն Խաչատրյան – Երկխոսությունները «Սասնա ծռեր» էպոսում …….....155

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հենրիկ Հովհաննիսյան – Պիգմալիոնի առասպելը և գեղարվեստական ստեղծագործության կյանքը…….....166

ԱՋԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սուրեն Հոբոսյան – Լոռեցի առակախոս Հոբոսը (ժամանակը, միջավայրը և բարքերը).....182

Անի Սարատիկյան – Որոշ դիտարկումներ դեղաբույսերի և գրավոր աղբյուրներում դրանց հիշատակությունների շուրջ (ըստ Սյունիքի դաշտային-ազգագրական նյութերի) 194

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Երվանդ Գրեկյան – 5.2 հազար տարի մեզանից առաջ կլիմայական իրադարձությունը և Հայկական լեռնաշխարհը.....203

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Համո Սուքիասյան – Գարեգին Լևոնյանի անտիպ ինքնակենսագրությունները (ծննդյան 150-ամյակի առթիվ).....234
Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանունի «Հայերը Ռուսաստանում» վերնագրով հոդվածը 245
Ստյոպա Պետոյան – Ակնարկ հայ պարբերական մամուլի մասին (1910 թ.) (ռուս.) 289
Արամ Քոսյան – Բաբելոնյան «Աստղագիտական օրագրերը» Տիգրան Մեծի մասին..304

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աննա Ասատրյան – Ռոբերտ Աթայան 315
Վոլոդյա Գասպարյան – Կլիմենտ Հարությունյան. Խորհրդային Միության հերոս հայաստանցի ռուսները (1941–1945 թթ.).....320
Տարոն Դանիելյան – Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828–1920 թվականներին (հոդվածների ժողովածու).....324
Անժելա Ամիրխանյան – Երվանդ Լալայան. Երկեր վեց հատորով, հատոր չորրորդ.....329

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Աննա Ասատրյան – ՀՍՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչը. Գարեգին Լևոնյան 332

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Արսեն Բոբոխյան, Տորք Դալալյան – Պավել Ավետիսյան (ծննդյան 65-ամյակի առթիվ) 335
Սուսաննա Հովհաննիսյան – Մագդա Ջանփոլադյան (ծննդյան 80-ամյակի առթիվ) (ռուս.) 339
Արմեն Շ. Սարգսյան – Հակոբ Աբրահամի (Մարտա) Չոլաքյան (ծննդյան 75-ամյակի առթիվ) 344
Ռուզան Արիստակեսյան – Դավիթ Գասպարյան (ծննդյան 75-ամյակի առթիվ) 349
Միքայել Ամիրխանյան – Ռոբերտ Բաղդասարյան (ծննդյան 75-ամյակի առթիվ) 353
Լալիկ Խաչատրյան – Դավիթ Գյուրջինյան (ծննդյան 60-ամյակի առթիվ) 356

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Ստյոպա Պետոյան – «Մշակ» թերթի հիմնադրման 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով՝ «Մշակը» պատմության զուգահեռականներում».....360
Նինետա Ադամյան – Միջազգային գիտաժողով՝ «Կիլիկիայի հայությունը 1908–1922 թթ.» ……364

Ի գիտություն հեղինակներին՝ ՊԲՀ-ի էլեկտրոնային կայքէջի հասցեի փոփոխման մասին ……366

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

К 155-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ САРГИСА МЕГРАБЯНА

Рубен Саакян – Саргис Меграбян (Ханасори Вардан)…….3
Арарат Акопян – Историографическая оценка академика Ашота Иоаннисяна вопросов русской ориентации армянского народа ……30
Ануш Арутюнян – Принципы классификации народностей по данным первой всесоюзной переписи населения 1926 г. (на примере Советской Армении) ……...47
Вардан Алексанян – Церковь в период восстановления внутренней автономии Армении (первая половина IX века) ……62

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

К 125-ЛЕТИЮ СО ДНЯ
РОЖДЕНИЯ ЕГИШЕ ЧАРЕНЦА

Давид Гаспарян – Зарубежная поездка Егише Чаренца (1924, 21 ноября – 1925, начало июня) ……...85
Тадевос Хачатрян – Образ мира по Ованесу Туманяну ……..113
Ариадна Арутюнян – Стихотворение «О труде» Лункианоса Карнеци……133

ЛИНГВИСТИКА

Виктор Катвалян – О Гадрутском диалекте ……144
Гурген Хачатрян – Диалоги в эпосе «Сасунские храбрецы» ……155

ИСКУССТВОВЕДЕНИЕ

Генрик Оганисян – Миф о Пигмалионе и жизнь художественного творения……...166

ЭТНОГРАФИЯ

Сурен Обосян – Балагур Обос из Лори (время, среда деятельности и нравы) ……...182
Ани Саратикян – Некоторые наблюдения о лекарственных растениях и их упоминания в письменных источниках (по сюникским полевым этнографическим материалам) ……..194

ОБСУЖДЕНИЯ

Ерванд Грекян – Климатическое событие 5.2 тысяч лет назад и Армянское нагорье ……..203

ПУБЛИКАЦИИ

Амо Сукиасян – Неопубликованные автобиографии Гарегина Левоняна (к 150-летию со дня рождения) ……..234
Анушаван Закарян –Статья Давида Анануна «Армяне в России»……..245
Степа Петоян – Обзоры армянской периодической печати (1910 г.) (на русск. яз.)…..289
Арам Косян – Вавилонские «Астрономические дневники» о Тигране Великом ….304

РЕЦЕНЗИИ

Анна Асатрян – Роберт Атаян ……315
Володя Гаспарян – Климент Арутюнян. Герои Советского Союза: русские из Армении (1941–1945 гг.) …….320
Тарон Даниелян – Книгопечатание в Восточной Армении в 1828–1920 гг. (сборник статей) ……..324
Анжела Амирханян – Ерванд Лалаян. Сочинения в шести томах, том четвертый…329

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Анна Асатрян – Первый заслуженный артист АрмСССР: Гарегин Левонян ……...332

НАШИ ЮБИЛЯРЫ

Арсен Бобохян, Торк Далалян – Павел Аветисян (к 65-летию со дня рождения) ……335
Сусанна Ованесян – Магда Джанполадян (к 80-летию со дня рождения) (на русск. яз.) ……..339
Армен Ш. Саргсян – Акоп Абраами (Марта) Чолакян (к 75-летию со дня рождения).……344
Рузан Аристакесян – Давид Гаспарян (к 75-летию со дня рождения) ……..349

Микаел Амирханян – Роберт Багдасарян (к 75-летию со дня рождения) ……353
Лалик Хачатрян – Давид Гюрджинян (к 60-летию со дня рождения) ……..356

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Степа Петоян – Международная научная конференция, посвященная 150-летию основания газеты «Мшак»: «“Мшак” в параллелях истории»……360
Нинетта Адамян – Международная научная конференция «Киликийская Армения 1908–1922 гг.» ……364

———————

К сведению авторов – об изменении адреса электронного сайта ИФЖ ……366

CONTENTS

HISTORY

TO THE 155TH ANNIVERSARY OF SARGIS MEHRABIAN'S BIRTH

Ruben Sahakyan – Sargis Mehrabian (Khanasori Vardan)..……..3
Ararat Hakobyan – Historiographical assessment by academician Ashot Ioannisyan on the issues of the Russian orientation of the Armenian people ……30
Anush Harutyunyan – Principles for determining nationality according to the First All-Union population census of 1926 (On the example of the Soviet Armenia) ……..47
Vardan Alexanyan – Armenian church in the period of restoration of the internal autonomy of Armenia (First half of the 9th century) ……..62

LITERATURE

TO THE 125TH ANNIVERSARY OF EGHISHE CHARENTS' BIRTH

David Gasparyan – Eghishe Charents’ foreign journey (November 21, 1924 – beginning of June, 1925) ……85
Tadevos Khachatryan – Image of the world according to Hovhannes Tumanyan ……...113
Ariadna Harutyunyan –The poem “On Labor” by Ghunkianos Karnetsi ……133

LINGUISTICS

Viktor Katvalyan – About the Hadrut dialect ……144
Gurgen Khachatryan – Dialogues in the epic “The Daredevils of Sassoun” ……...155

ART

Henrik Hovhannisyan – The Pygmalion myth and the perpetuity of a work of art ……..166

ETHNOGRAPHY

Suren Hobosyan – The folk storyteller Hobos from Lori (Period and environment of his activity and morals) ……182
Ani Saratikyan – Some observations on medicinal plants and their references in written sources (According to Syunik ethnographic materials) ……194

DISCUSSIONS

Yervand Grekyan – The 5.2 KA BP climate event and the Armenian Highland …….....203

PUBLICATIONS

Hamo Sukiasyan – Unpublished autobiographies of Garegin Levonyan (to the 150th anniversary of birth).....234
Anushavan Zakaryan – Article by David Ananun “Armenians in Russia” ……..245
Styopa Petoyan – Reviews of Armenian periodical press (1910) (in Russ.).....289
Aram Kosyan – Babylonian “Astronomical Diaries” about Tigran the Great.....304

REVIEWS

Anna Asatryan – Robert Atayan…….....315
Volodya Gasparyan – Kliment Harutunyan: Heroes of the Soviet Union, Russians from Armenia (1941-1945).....320
Taron Danielyan - Book printing in the Eastern Armenia from 1828 to 1920 (collection of articles).....324
Angela Amirkhanyan – Yervand Lalayan: Works in six volumes, volume 4.....329

OUR HONOURED SCHOLARS

Anna Asatryan – The first honored artist of the Armenian SSR: Garegin Levonyan……332

OUR JUBILEES

Arsen Bobokhyan, Tork Dalalyan – Pavel Avetisyan (to the 65th anniversary of birth) ……..…….335
Susanna Hovhannisyan – Magda Janpoladyan (to the 80th anniversary of birth) (in Russ.) ……...339
Armen SH. Sargsyan – Hakob Abraham (Marta) Cholakyan (to the 75th anniversary of birth) ……..344

Ruzan Aristakesyan – Davit Gasparyan (to the 75th anniversary of birth)……..349
Mikayel Amirkhanyan – Robert Baghdasaryan (to the 75th anniversary of birth)……...353
Lalik Khachatryan – Davit Gyurjinyan (to the 60th anniversary of birth) …….356

SCIENTIFIC LIFE

Styopa Petoyan – International scientific conference dedicated to the 150th anniversary of founding the newspaper “Mshak”: “Mshak” in the parallels of history” ” ….360
Nineta Adamyan – International scientific conference “Cilician Armenia 1908–1922”…364

For the information of the authors about the change of the electronic website address of the historical and philological journal 366

Հայերեն բաժնի խմբագիրներ	Թամար Զաքարյան Լիանա Օհանյան
Ռուսերեն բաժնի խմբագիր	Կարինե Ալեքսանյան
Հայերենի սրբագրիչ	Աղավնի Շահինյան
Անգլերենի խմբագիր	Հարություն Խուդանյան
Համակարգչային ձևավորում և էջադրում	Գոհար Հովհաննիսյան

Редакторы армянского отдела	Тамар Закарян Лиана Оганян
Редактор русского отдела	Карине Алексанян
Корректор армянского отдела	Агавни Шагинян
Редактор английского отдела	Арутюн Худанян
Компьютерный дизайн и пагинация	Гоар Оганнисян

Editors of Armenian segment	Tamar Zakaryan Liana Ohanyan
Editor of Russian segment	Karine Aleksanyan
Proofreader of Armenian segment	Aghavni Shahinyan
Editor of English segment	Harutyun Khudanyan
Computer design and pagination	Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайт журнала: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official site of the journal: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

---

Հրատ. պատվեր № 1174
Ստորագրված է տպագրության 11.07.2022 թ.:
Տպագրական 22,25 մամուլ: Թուղթ № 1, 70x100:
Տպաքանակը՝ 250:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1174
Подписано к печати 11.07.2022 г.
Печ. 22,25 л. Бумага № 1, 70x100.
Тираж −250.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.